

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել [Գրքամոլ](#) [Նախաձեռնության](#) կողմից:

Բոլորի կողմից սիրված [Գրքամոլ](#)-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:



Մի ելի՝ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք ներկայացնելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլ.- հասցեին [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com): Ծնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.


URL: [www.grqamol.am](http://www.grqamol.am), e-mail: [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com)



ԱՐԿԱՅԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՈՒԻԼԿԻ  
ԶՈԼԻՆՁ



ԼՈՒՍՆԱՔԱՐ



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1985

ՉՄԴ-84. 4 Մք

Ք 761

84(3)  
Ք 761

Ռուսերենից թարգմանեց Վահան Բ. Վարդանյանը

**ՔՈՒԻՆՁ ՈՒ. ՈՒ.**

Ք 761 Լուսնաբարս Վեպ. դպր. բարձր տարիքի համարս  
(Ռուս. թարգմ. Վ. Բ. Վարդանյանը:— Ծր. Սովետ  
գրող, 1985.—592 էջ, նկ.

Ռիլկի Քուինզը անգլիացի գրող է, սուր սյուժեով վեպերի հեղի-  
նակ, դետեկտիվ ժանրը սկզբնավորողներից մեկը: Նրա ստեղծա-  
գործությունների մեծ մասի գեղարվեստական ոճաձևերն են գաղտ-  
նիքը պարզելը, հանցագործությունը բացահայտելը, դեպքերի բարդ  
կժիկները քանդելը:

«Լուսնաբարս» վեպը, որ առաջին անգամ է ներկայացվում հայ  
ընթերցողին, հետաքրքիր է իր դետեկտիվ սյուժեով, «էկզոտիկայի»  
և հոգեբանական շեղումների աարերով:

Ք 4803020000 (295) 295

134 86 «Տ»

ՉՄԴ 84.4 Մք

© Москва «Атомиздат», 1981.

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1985



ՆԱԽԵՐԳ



ՍԵՐԻՆԳԱՊԱՏԱՄԻ  
ԳՐՈՂԸ

1799

ՆԱՄԱԿ ՏՈՂՄԱԿԱՆ  
ԱՐԽԻՎԻՉ



## I

Այս ստղերը գրում են Հնդկաստանից՝ Անգլիայում ապրող իմ ազգականներին, որպեսզի բացատրեմ, թե ինչու ես չուզեցի բարեկամաբար սեղմել իմ զարմիկ Ջոն Հեռնկաստլի ձեռքը: Այդ հարցի նկատմամբ իմ լուսթյունը սխալ են մեկնաբանել մեր գերդաստանի անդամները, որոնց բարի կարծիքից չեմ ուզում զրկվել: Խնդրում եմ, որ նրանք եզրակացություններ չանեն այնքան ժամանակ, քանի դեռ չեն կարդացել իմ պատմածը: Աղնիվ խոսք եմ տալիս, որ ստույգ ու բացարձակ ճշմարտությունը կգրեմ:

Իմ զարմիկի և իմ միջև թաքնված անհամաձայնությունն առաջացավ այն մեծ իրադարձության ժամանակ, որին երկուսս էլ մասնակցում էինք, — 1799 թվականի մայիսի 4-ին գնեցրալ Բերդի հրամանատարությունը Սերինգապատամի վրա գրահեղիս:

Որպեսզի հանցամանքները լրիվ հասկանալի լինեն, ես պետք է դիմեմ պաշարմանը նախորդած շրջանին և Սերինգապատամի սլալատում պահվող թանկարժեք քարերի ու ոսկու կույտերի մասին մեր ճամբարում պատվող պատմություններին:

Ամենաանհավատալի պատմութիւններէց մեկը վերաբերում է դեղին ալմաստին, մի իր, որն այնքան հայտնի է Հնդկաստանի տարեգրութիւններում:

Ավանդութիւններէց հնազույնն ասում է, որ այդ քարը զարդարել է Լուսնի հնդկական շարձեռնանի աստու ճակատը: Մասամբ իր առանձնահատուկ գույնի շնորհիվ, մասամբ էլ այն ավանդազրույցի շնորհիվ, թե այդ քարն, իբր, ենթարկվում է իր զարդարած աստվածութեան ազդեցութեանը և նրա փայլն ավելանում ու պակասում է լուսնի լրման ու նվազման հետ մեկտեղ, նա ստացել է այն անունը, որով մինչև հիմա էլ հայտնի է Հնդկաստանում՝ Լուսնաքար: Լսել եմ, որ նման անհավատութիւնն ժամանակին եղել է և՛ հին Հունաստանում, և՛ Հռոմում, սակայն դա վերաբերել է ոչ թե աստվածութեանը նվիրված ալմաստին (ինչպես Հնդկաստանում), այլ ցածր կարգի կիսաթափանցիկ մի քարի, որը ենթակա է լուսնի ազդեցութեանը և ճիշտ նույն ձևով էլ նրանից ստացել է իր անունը, որով և այն մինչև օրս հայտնի է մեր ժամանակի հանքաբաններին:

Դեղին ալմաստի արկածներն սկսվում են մեր թվարկութեան տասնմեկերորդ հարյուրամյակից:

Այդ ժամանակաշրջանում մահմեդական նվաճող Մահմուդ Ղազնևին խուժեց Հնդկաստան, տիրեց Սոմնաթ սրբազան քաղաքին ու բնագրավեց այն նշանավոր տաճարի գանձերը, որը մի քանի հարյուրամյակ հրապուրել էր հնդիկ ուխտագնացներին և համարվել Արևելքի հրաշք:

Այդ տաճարում երկրպագվող բոլոր աստվածութիւններից միայն Լուսնի աստվածը խուսափեց մահմեդական հաղթողների ազահութիւնից: Ճակատին դեղին ալմաստ ունեցող չաղճված կուռքը, ևրիք բրահմանների պահպանութեամբ, վերցվեց ու փոխադրվեց Հնդկաստանի՝ իր նշանակութեամբ Երկրորդ սրբազան քաղաքը՝ Բենարես:

Այնտեղ, նոր մեհյանում՝ թանկագին քարերով զարդարված ապարանքում, ոսկի սյուների վրա հանգչող կամարների տակ տեղավորվեց Լուսնի աստվածը, որը նորից դարձավ լաշտամուճքի առարկա: Այն գիշեր, իբր մեհյանի կառու-

ցումն ավարտվեց, Վիշնու հիմնարկիչը հրազում երևաց երեք բրահմաններին: Նա իր շունչը ներշնչեց կուռքի ճակատը զարդարող ավաստին, և բրահմանները ծնկի իջան նրա առաջ ու երեսները ծածկեցին հաղուստով: Վիշնուն հրամայեց, որպեսզի երեք քուրմերը Լուսնաքարը պահպանեն օր ու գիշեր, մինչև աշխարհի վերջը: Բրահմանները խոնարհվեցին աստվածային կամքի առաջ: Վիշնուն դժբախտութիւն գուշակեց այն հանդուգն արարածի համար, ով կհամարձակվի չիրել սրբազան քարին, և նրա բոլոր սերունդների համար, որոնց կանցնի քարը նրանից հետո: Բրահմանները կարգադրեցին այդ գուշակութունը ոսկի տառերով գրել տաճարի դռների վրա:

Անցնում էին դարեր՝ դարերի ետևից, և երեք բրահմանների հաջորդները սերնդ-սերունդ օր ու գիշեր պահպանում էին թանկարժեք Լուսնաքարը: Անցնում էին դարերն իրար ետևից, մինչև որ մեր թվարկութեան տասնութերորդ դարի սկզբում գահ բարձրացավ Աուրանգզեբը՝ Մեծ Մողոլների դինաստիայից: Նրա հրամանով Բրահմային երկրպագողների տաճարները վերստին մատնվեցին կողոպուտի ու քայքայման, չորսձեռնանի աստծու մեհյանը պղծվեց սուրբ կենդանիների սպանութեամբ, կուռքերը շարդուփշուր արվեցին, իսկ Լուսնաքարը հափշտակեց Աուրանգզեբի զորահրամանատարներից մեկը:

Ի վիճակի չլինելով ուժով վերադարձնելու իրենց կորցրած գանձը՝ երեք պահապան քրմերը, զգեստափոխված, հետևում էին նրան: Մի սերնդին փոխարինում էր մյուսը. սրբապղծութիւն կատարած գինվորը մեռավ ահավոր մահով. Լուսնաքարը, իր հետ անեծք բերելով, մի ապօրինի տիրոջից անցնում էր մյուսին, և, չնայած բոլոր պատահականութիւններին ու փոփոխութիւններին, երեք պահապան քրմերի հաջորդները շարունակում էին հետևել իրենց գանձին, սպասելով այն օրվան, երբ Վիշնու հիմնարկիչի կամքը իրենց կվերադարձնի սրբազան քարը: Այդպես շարունակվեց մինչև տասնութերորդ դարի վերջին թվականը: Լիմաստն անցավ Սերինգապատամի սուլթան Տիպպուի տնօրինութեան տակ, որը այդ քարը որպես զարդ զետեղեց իր գաշույնի կոթի վրա և պահեց իր դինապուլատի ամենաթանկ գանձերի մեջ, նույնիսկ այդ ժա-

մանակ (հենց սուլթանի պալատում) երեք պահապան քրմերը շարունակում էին գաղտնի պահպանել այնաստը: Տիպպուի շքախմբի մեջ կային երեք օտարերկրացիներ, որոնք իրենց տիրակալի վստահությանն էին արժանացել մահմեդական հավատ ընդունելով (գուցե՝ առերես). ըստ լուրերի՝ հենց դրանք էլ զգեստափոխված քրմերն էին:

### III

Այսպես էին մեր ճամբարում Լուսնաբարի ֆանտաստիկ պատմությունն անում: Դա յուրջ տպավորություն չէր թողել մեզնից ոչ մեկի վրա, բացի իմ դարմիկից. հրաշալիքի նկատմամբ սերը նրան ստիպել էր հավատալ այդ առասպելին: Սերինգապատամի վրա գրոհելուց առաջ, գիշերը նա շատ անմիտ ձեռով նեղացավ ինձնից ու մյուսներից այն բանի համար, որ մենք հեքիաթ էինք համարել այդ պատմությունը: Մի շատ հիմար վեճ ծագեց, և թշվառական Հեռնկասուլը էլ չհամբերեց: Իրեն հատուկ պարծենկոտությամբ հայտարարեց, որ եթե անգլիական բանակը գրավի Սերինգապատամը, ապա մենք այնաստը կտեսնենք իր մատին: Այս ելույթն ընդունվեց բարձրաձայն հռչոցով, և բանը դրանով էլ ավարտվեց, ինչպես կարծում էինք բոլորս:

Հիմա թույլ տվեք ինձ դառնալ գրոհի օրվան:

Ես ու իմ վարմիկը բաժանվեցինք գրոհի հենց սկզբում: Ես նրան շտեսա, երբ մենք անցնում էինք գետը, նրան շտեսա, երբ անգլիական դրոշը կանգնեցրինք առաջին ճեղքման տեղում, նրան շտեսա, երբ անցանք խրամատը և, յուրաքանչյուր քայլը նվաճելով, մտանք քաղաք: Միայն մթնշաղին, երբ քաղաքն արդեն մերն էր և գնեհրալ Բերդն ինքը սպանվածների կույտի տակ գտավ Տիպպուի դիակը, ես հանդիպեցի Հեռնկասուլին:

Երկուսս էլ գործուղված էինք այն ջոկատը, որը գնեհրալի հրամանով ուղարկվել էր կասեցնելու մեր հաղթանակին հաջորդած կողոպտան ու անկարգությունները: Զինվորներն անձնատուր էին լինում ահավոր սանձարձակությունների և, որ ալիլի վատ է, խուժել էին պալատի պահեստարանները, թալանել ոսկին ու թանկարժեք քարերը: Ես իմ դարմիկին

հանդիպեցի պահեստարանների առջևի բակում, ուր մեկը եկել էինք մեր զինվորների մեջ կարգ ու կանոն հաստատելու համար: Ես անմիջապես տեսա, որ կրակոտ Հեռնկասուլը ծայր աստիճան բորբոքված է ահավոր կոտորածից, որին մենք ստիպված էինք եղել մասնակցել: Իմ կարծիքով՝ նա ընդունակ չէր կատարելու իր պարտականությունը:

Պահեստարաններում տիրում էր եռուզեռ ու շփոթ, բայց բռնություն դեռ չէի տեսել: Զինվորներն իրենց խայտառակում էին շատ խաղաղ ձևով, եթե կարելի է այդպես արտահայտվել: Բավական էր կողոպուտը թուլանար մի տեղում, երբ «Իսկ ո՞վ է գտել Լուսնաքարը» բացականչությունը ստիպում էր, որ այն բորբոքվեր մեկ ուրիշ տեղում: Մինչ ես ապարդյուն փորձում էի կարգուկանոնը վերականգնել, բակի հակառակ ծայրում լսվեց մի ահավոր աղաղակ, և ես անմիջապես վազեցի այնտեղ՝ վախենալով որևէ նոր սանձարձակությունից:

Ես մոտեցա բաց դռանը և դեմ առա երկու մեռած հնդիկների մարմիններին, որ ընկած էին շեմին: (Հագուստից ճանաչեցի, որ պալատական սպաներ էին):

Վերստին լսված աղաղակն ինձ ստիպեց շտապել այն սրահը, որը, ինչպես պարզվեց, զինապալատն էր: Երրորդ հնդիկը, մահացու վիրավոր, հոգեվարքի զղաձգումների մեջ թավալվում էր թիկունքով դեպի ինձ կանգնած մարդու ոտքերի առաջ: Այս մարդը շրջվեց այն պահին, երբ ես ներս էի մտնում, և ես Ջոն Հեռնկասուլին տեսա մի ձեռքում՝ ջահ, մյուսում՝ արյունոտ դաշույն: Երբ նա շրջվեց իմ կողմը՝ դաշույնի կոթի վրա ամրացված քարը փայլատակեց հուրհրատող կայծի պես: Մեռնող հնդիկը բարձրացավ ծնկների վրա, մատնացույց արեց Հեռնկասուլի ձեռքի դաշույնը և, խոխոսացնելով իր մայրենի լեզվով՝ «Լուսնաքարի անեծքը բեզ վրա ու քո սիրունիների վրա»-- անշնչացած ընկավ գետնին:

Նախքան ես կհասցնեի որևէ բան ասել՝ ետևիցս եկող զինվորները խուժեցին պալատ: Իմ զարմիկը խելագարի պես նետվեց նրանց ընդառաջ: —

— Աղաթե՛ք սրահը, — գոռաց նա ինձ, — և սպահակներ կարգեք դռան մոտ:

Երբ Հեռնկասուլը ջահով ու դաշույնով հարձակվեց զին-

վորներին վրա, սրանք նահանգեցին: Ես իմ ջոկատից երկու հազար տարի մարդու պահակ կանգնեցրի դուան մտա: Գիշերվա մնացած բոլոր ժամերին իմ զարմիկին այլևս չհանդիպեցի:

Կողոպուտը վաղ առավոտյան դեռևս շարունակվում էր, և գեներալ Բերդը հրապարակորեն հայտարարեց, որ հանցանքի վայրում բռնված ամեն մի գող, ով էլ որ նա լինի, կկախվի: Զինվորական ոստիկանապետի ներկայություներն ապացուցում էր, որ գեներալ Բերդը չի կատակում, և այդ հրամանը լսող բաղնիքյան մեջ ես դարձյալ հանդիպեցի Հեննկաստին:

Բարևելիս նա սովորականի նման ձեռքը մեկնեց ինձ:

Ես շարողացա ձեռք տալ նրան:

— Նախ ինձ պատասխանեք,— ասացի ես,— ո՞վ սպանեց հնդիկին զինապալատում և ի՞նչ էին նշանակում նրա վերջին բռները, երբ նա մատնացույց արեց ձեր ձեռքում գտնվող դաշույնը:

— Հնդիկը, կարծում եմ, մեռավ մահացու վերքից,— պատասխանեց Հեննկաստը:— Իսկ թե ինչ էին նշանակում նրա վերջին բռները, ապա ես էլ գիտեմ այնքան, որքան և դուք:

Ես սեևտուն նայեցի նրան: Նախօրյակին նրան համակած կատաղություներ բուխրովին շիջել էր: Որոշեցի արդարանալու հնարավորություն տալ նրան:

— Դուք ուրիշ ոչինչ չունե՞ք ինձ ասելու,— հարցրի ես: Նա պատասխանեց.

— Ոչինչ:

Ես թիկունքով շրջվելյի դեպի նա, և այդ պահից մենք այլևս չենք խոսել իրար հետ:

#### IV

Խնդրում եմ հիշել, որ իմ զարմիկի մասին այստեղ գրվածը սամբոլյայում (Եթե միայն անհրաժեշտ չլինի այդ հանգամանքները հրապարակել) նախատեսվում է միայն մեր բնառանձիքի անդամների համար: Հեննկաստը այնպիսի բան չէր ասել, որը մեր գնդի հրամանատարին գիմեղու առիթ տար ինձ: Այնպես առնչությամբ իմ զարմիկին շարունակում են ձեռ առնել նրանք, ովքեր հիշում են նրա կրակոտ բռնկումը:

գրոհից առաջ. բայց նա լուռ է, հավանաբար, շնորհակալ  
այն հանգամանքները, որոնցում ես նրան տեսել եմ զինապա-  
լատում: Լուրեր են պատվում, թե նա մտադիր է ուրիշ գունդ  
փոխադրվել. հավանաբար նրա համար, որպեսզի ինձնից հե-  
ռու լինի:

Դա ճիշտ է, թե չէ, բայց ես նրա մեղադրողը դառնալ չեմ  
կարող մի շատ հիմնավոր պատճառով: Եթե ես ամբողջ վե-  
րաշարադրյալը հրապարակեմ, ապա, ներքին համոզվածու-  
թյունից բացի, ոչ մի ապացույց չեմ ունենա: Ես ոչ միայն  
չեմ կարող ապացուցել, որ նա սպանել է դուան մոտ կանգ-  
նած երկու հնդիկներին, այլև չեմ էլ կարող պնդել, որ նա  
սպանել է երրորդին, շենքի ներսում, որովհետև ես իմ աչքով  
չեմ տեսել:

Ճիշտ է, ևս լսել եմ մեծնող հնդիկի ասածները, բայց, եթե  
ինձ առարկեն, թե զրանք մահառաջի դառանցանքներ են  
եղել, ինչպե՞ս կարող եմ հերքել: Թող թե այս, թե այն կող-  
մի մեր ազգականներն իրենք կարծիք կազմեն ամբողջ վերը  
ասվածի մասին ու որոշեն՝ հիմնավո՞ր է, թե ոչ այն նող-  
կանքը, որը ես հիմա էլ տածում եմ այդ մարդու նկատմամբ:


Թեև չեմ հավատում արմատի՝ վերաբերյալ հնդկական  
ֆանտաստիկ առասպելին, բայց պետք է խոստովանեմ, որ  
ինքս էլ ազատ չեմ որոշ սնահավատությունից: Համոզմունք  
է դա, թե խաբուսիկ ենթադրություն՝ միևնույն է, ես գտնում  
եմ, որ հանցագործությունն իր հետ բերում է պատիժ: Ես ոչ  
միայն հավատացած եմ Հեռնկաստլի մեղավոր լինելու մեջ,  
այլև չեմ էլ կասկածում, որ նա կզղջա, եթե արմատը թողել  
է իր մոտ, և որ կզղջան նաև ուրիշները՝ վերցնելով այդ ար-  
մատը, եթե նա դա տա նրանց:



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ՄԱՍՆ  
ԱՌԱՋԻՆ



ԱՆՄԱՍՏԻ  
ԿՈՐԶԵԼԸ

1848



## ԳԵՊՔԵՐ՝

որ պատմել է Գարբիել Ռեստեբերը՝  
լեզի Ջուլիա Վերինգերի ծառայապետը

## Գ Լ ու խ Է

Բացեք «Ռեստինզոն Կրուզոյի» առաջին մասը հարյուր քսանիններորդ էջում, և կգտնեք հետևյալ խոսքերը.

«Հիմա տեսնում եմ, թեև բավականաչափ ուշ, որքան անխոհեմ է որևէ գործ ձեռնարկել, չհաշվելով նրա բոլոր ծախսերը և չկշռադատելով՝ արդյո՞ք դա մեր ուժերից վեր չէ»:

Երեկ էր, որ ես բացեցի իմ «Ռեստինզոն Կրուզոն» հենց այդ էջում: Իսկ արդեն այսօր առավոտյան, 1850 թվականի մայիսի 21-ին, ինձ մոտ եկավ միլիզիի քրոջ տղան՝ միստր Ֆրենկլին Բլեկը, և այսպիսի խոսակցություն սկսեց ինձ հետ:

— Բեռտերեջ,— ասաց միստր Ֆրենկլինը,— ես ընտանեկան որոշ գործերով եղա մեր փաստաբանի մոտ, և մենք, յու-

միջիալոց, խոսեցինք հնդկական արմատի կորչելուց, որ պատահել է Յորքշիրում, մորաքրոջս տանը: Փաստաբանը ենթադրում է, ինչպես նաև ես, որ այդ ամբողջ պատմությունը պետք է գրառել՝ ի շահ ճշմարտության, և որքան շուտ՝ այնքան լավ:

Դեռևս շհասկանալով նրա մտադրությունը և համարելով, որ հանուն խաղաղության ու անդորրության միշտ պետք է փաստաբանի կողմը լինել, ասացի, թե ես էլ ճիշտ այդպես եմ մտածում:

Միստր Ֆրենկլինը շարունակեց.

— Ինչպես ձեզ հայտնի է, արմատի կորուստն արդեն կասկածի ստվիթ է գցել անմեղ մարդկանց անվան վրա: Անմեղների հիշատակը կարող է տուժել նաև հետագայում, քանզի շկան գրավոր փաստեր, որոնց կարողանային դիմել մեզնից հետո ապրողները: Անտարակույս է, որ մեր տոհմական այդ տարօրինակ պատմությունը պետք է անել և, ինձ թվում է, Բեռտերեջ, ես ու փաստաբանն այդ անելու ճիշտ ձևը գտել ենք:

Նրանք, անկասկած, շատ լավ էին մտածել, բայց ես դեռ չէի հասկանում, թե այդ ամենը ինչ կապ ունի ինձ հետ:

— Մենք պետք է պատմենք հայտնի դեպքերը, — շարունակեց միստր Ֆրենկլինը: — Կան մարդիկ, որոնք հաղորդակից են այդ դեպքերին և կարող են հաջորդաբար շարադրել դրանք: Ահա թե ինչու է փաստաբանը մտածում, որ հերթով բոլորս պետք է գրենք լուսնաբարի պատմությունը, որքան դա թույլ է տալիս մեր անձնական իրազեկությունը, և ոչ այլելին: Պետք է սկսենք նրանից, թե ինչ ձևով է արմատն ընկել իմ քեռի Հեռնկաստլի ձեռքը, երբ նա սրանից հիսուն տարի առաջ ծառայելիս է հղել Հնդկաստանում: Այդ պատմության սկիզբն արդեն կա. դա տոհմական հին ձեռագիր է, որտեղ ականատեսը շարադրում է բոլոր էսկան մանրամասնությունները: Այնուհետև պետք է պատմել, թե արմատն ինչպես է Լրկու տարի առաջ ընկել Յորքշիրում ապրող մորաքրոջս տունը և ինչպես դրանից տասներկու ժամ հետո անհետացել է: Բեռտերեջ, ոչ ոք ձեզնից լավ չգիտե, թե այդ ժամանակ ինչ է կատարվել տանը: Հեռնկաստլ, հենց դուք էլ պետք է գրիչ վերցնեք ու սկսեք պատմել:

Ահա այսպիսի արտահայտութիւններով ինձ հաղորդեցին, թէ ես ինչ մասնակցութիւն պետք է ունենամ լաւմաստի շարադրյալ պատմութիւն մեզ: Եթէ ձեզ համար հետաքրքիր է իմանալ, թէ ես ինչպէս վարվեցի այս պարագայում, ապա թույլ տվեք հաղորդել, որ ես արեցի այն, ինչ, հավանաբար, դուք կանեիք իմ փոխարեն: Ես համեստորեն հայտարարեցի, որ ինդիրն իմ ուժերից վեր է, մինչդեռ ինքս ինձ մտածեցի, թէ՛ կարողանալն, իհարկէ, կկարողանամ, եթէ միայն ինքս ինձ թույլ տամ բացվել: Միտոր Յրենկլինը դեմքիս վրա, կարծեմ, կարդաց իմ գաղտնի մտածումները: Նա շուտեց հավատալ իմ համեստութիւնը և պնդեց, որ ես ինձ տրամադրեմ բացվել հարկ եղածին պէս:

Միտոր Յրենկլինի գնալուց անցել էր երկու ժամ: Նա դեռ չէր հասցրել թիկունքն ինձ անել, որ ետ դնացի դեպի իմ գրասեղանը՝ սկսելու պատմութիւնը: Եվ ահա, չնայած իմ բոլոր ունակութիւններին, նստած եմ անօգնական և վերոհիշյալ Ռոբինզոն Կրուզոյի նման ավելի ու ավելի եմ համոզվում, որ անխոհեմութիւն է որեւէ բան ձեռնարկել՝ առանց նախապէս դրա ծախսերը հաշվելու և առանց նախապէս ծանր ու թեթև անելու՝ ուժդ պատում է, թէ չէ: Ինդրում եմ, ուշադրութիւն դարձրեք, որ ես պատահաբար գրքի հենց այդ էջը բացեցի այն օրվա նախօրյակին, երբ այնքան թեթևամտորէն համաձայնվեցի սկսել այժմ արդեն ձեռքիս եղած գործը: Եվ թույլ տվեք հարցնել՝ մի՞թէ դա կանխագուշակութիւն չէր:

Ես սնահավատ չեմ. կյանքումս շատ գրքեր եմ կարդացել, կարելի է ասել, յուրատեսակ գիտնական եմ: Թէև յոթնամասունս լրացել է, բայց հիշողութիւնս լավ է, ոտքերս էլ ամուր են: Այսպիսով, իմ կարծիքը ամենևին էլ սղետի կարծիք չէ, իսկ ես գտնում եմ, որ «Ռոբինզոն Կրուզոյի» նման գիրք երբեք չի եղել ու չի էլ գրվի: Շատ տարիներ եմ զիմել այդ գրքին (սովորաբար՝ այն բոպեններին, երբ ծխամորճս եմ բաշել), և նա իմ հավատարիմ բարեկամն ու խորհրդատուն է եղել այս երկրային կյանքի բոլոր դժվարութիւններում: Եթէ տրամադրութիւնս վատ է՝ գնում եմ «Ռոբինզոն Կրուզոյի» մօտ: Եթէ ինձ խորհուրդ է հարկավար՝ «Ռոբինզոն Կրուզոյի» մօտ: Անցած-գնացած ժամանակներում, երբ կինս շփոխեց բուրս ձանձրացրել է ինձ, հիմա էլ, երբ շփոխեց գուրս եմ զոտ

տալիս բաժակին, դարձյալ «Ռոբինզոն Կրուզոյի» մոտ եմ  
զնում: Կյանքումս վեց բոլորովին նոր «Ռոբինզոն Կրուզո» եմ  
քրքրել: Իր վերջին ծննդյան օրը նշելիս միլիոնին ինձ նվիրեց  
յոթերորդ օրինակը: Այն ժամանակ այդ առիթով ես հարկ  
եղածից ավելին կոնծեցի, և «Ռոբինզոն Կրուզոն» նորից ուշ-  
քի բերեց ինձ: Գիրքն արժե շորս շիլինգ վեց պենս, երկ-  
նագույն կազմ ունի. ու հետն էլ վրադիր մի նկար:

Բայց թե սա, կարծես, արմատի պատմությունն սկսելու  
եման չէ, այո՞: Ես ասես թափառում եմ ու փնտրում աստված  
գիտե, թե ինչ, աստված գիտե, թե որտեղ: Մենք, ձեր թույլ-  
տվությամբ, մի նոր թուղթ կվերցնենք ու նորից կսկսենք, իմ  
խորին հարգանքը հավաստելով:

## Գլուխ II

Միլեդիի մասին ասել եմ սրանից մի քանի տող առաջ:  
Կորած արմատը երբեք մեր տանը չէր լինի, եթե այն նվիր-  
ված շիններ միլեդիի դատերը. իսկ միլեդիի դուստրը այդ  
նվերը չէր կարողանա ստանալ, եթե միլեդին տանջանքներով  
ու տառապանքներով լույս աշխարհ բերած շիններ նրան:  
Բայց եթե սկսելու լինենք միլեդիից, ապա հարկադրված կլի-  
նենք սկսել հեովից, իսկ դա, թույլ տվեք ասել, ներկայանում  
է որպես մեծ մխիթարություն, երբ ձեր ձեռքին այնպիսի դործ  
կա, ինչպիսին իմ ձեռքին է:

Եթե դուք ինչ-որ չափով ծանոթ եք բարձր հասարակությա-  
նը, ապա, հավանաբար, լսել եք Հեռնկաստը երեք չքնաղ օրի-  
որդների մասին՝ միսս Ադելաիդայի, միսս Կարոլինայի և միսս  
Ջուլիայի: Վերջինս երևք բույրերից ամենափոքրն է և, իմ  
կարծիքով, ամենալավը, ևս դատելու հնարավորություն ունե-  
ցել եմ, ինչպես հիմա կհամոզվեք: Ես ծառայության մտա  
նրանց հոր՝ ծեր լորդի մոտ (փա՛ռք աստծու, նա ոչ մի կապ  
չունի արմատի պատմության հետ. հրեք ոչ ցածր, ոչ էլ  
բարձր խավում չիմ հանդիպել այդքան երկար լիզու և կատա-  
ղի բնավորություն ունեցող մարդու), ասում եմ՝ ծառայու-  
թյան մտա ձեր լորդի մոտ որպես նրա երեք ազնիվ դուստ-  
րերի պատժ, երբ տասնհինգ տարեկան էի: Այնտեղ ապրեցի  
այնքան ժամանակ, մինչև միսս Ջուլիան ամուսնացավ հան-

գրեցյալ սրբ Զոն Վերինդերի հետ: Հոյակապ մարդ էր, միայն պետք էր, որ որևէ մեկը դեկափարեր նրան և, մեր մեջ ասած, պտել էր այդպիսի մեկին. նա գիրացավ, աշխուժացավ և սկսեց երջանիկ ու բարօր ապրել այն օրվանից, երբ միլեդին նրան հեղեցի տարավ պսակվելու, մինչև այն օրը, երբ միլեդին ընդունեց նրա վերջին շունչը և ընդմիշտ փակեց նրա աչքերը:

Սոոացա ասել, որ ես նորապսակի՝ հետ տեղափոխվեցի նրա մոտանու տունն ու կալվածքը:

«Սրբ Զոն,— ասաց միլեդին,— ես շեմ կարող յուր գնալ առանց Գաբրիել Բևտտերեջի»:

«Միլեդի,— պատասխանեց սրբ Զոնը,— ես էլ չեմ կարող առանց նրա յուր գնալ»:

Այս ձևով էր նա միշտ խոսել միլեդիի հետ. և այս ձևով էլ ես ծառայության մտա նրա մոտ: Ինձ համար միևնույն էր, թե ուր կգնայի, միայն թե շրածանվեի իմ տիրուհուց:

Տեսնելով, որ միլեդին հետաքրքրվում է տնտեսությամբ, ֆերմայով ու նման բաներով, ես ինքս սկսեցի գրանով հետաքրքրվել, առավել էս, որ աղքատ Ֆերմերի յոթերորդ որդին էի: Միլեդին ինձ կարգեց կառավարչի օգնական. ես ջանում էի, ինչքան որ կարող էի, և պաշտոնս բարձրացվեց: Մի քանի տարի անց, եթե չեմ սխալվում՝ երկուշաբթի օրը, միլեդին ասում է ամուսնուն.

«Սրբ Զոն, քո կառավարիչը հիմար ծերուկ է: Լավ կենսաթոշակ տուր նրան և նրա փոխարեն նշանակիր Գաբրիել Բևտտերեջին»:

Երեքշաբթի օրը սբր Զոնը պատասխանում է նրան.

«Միլեդիի կառավարիչը լավ կենսաթոշակ ստացավ, իսկ Գաբրիել Բևտտերեջը ստացավ նրա պաշտոնը»:

Դուք քանիցս լսել եք ոչ երջանիկ ապրող ամուսինների մասին: Ահա դրա բոլորովին հակադիր օրինակը: Թող սա լինի նախադրույացում ոմանց և խրախուսանք՝ այլոց համար: Իսկ ես այդ միջոցին կշարունակեմ իմ պատմությունը:

Կասեք, թե սկսեցի առօր-փառօր ապրել: Պատասխանատու և պատվավոր պաշտոն էի գրադեցնում, ունեի իմ սեփական առանձնատունը, առավոտները շրջում էի կալվածքները, կեսօրին հաշվետվություն էի կազմում, երեկոյան

ծխամորճ էի քաշում և «Ռորինդոն Կրուզո» կարգում, էլ ի՞նչ կարող էի կամենալ՝ ինձ երջանիկ համարելու համար: Հիշե՛ք, թե Ադամն ինչի կարիք ուներ, երբ մենակ էր ապրում դրախտում, և եթե չեք դատապարտում Ադամին, ապա մի դատապարտեք նաև ինձ:

Կինը, որի վրա բեկոեցի ուշադրութունս, տնտեսությամբ էր զբաղվում իմ առանձնատանը: Անունը Սելինա Գորբի էր: Կին ընտրելու հարցում ես համաձայն եմ Ուիլյամ Կորբետի հետ: Տեսե՛ք, որ կինը լավ ծամի ուտելիքը ու հաստատուն քայլվածք ունենա, և սխալ չեք գործի: Սելինա Գորբին հարկ եղածին պես ամեն ինչ ուներ և այս, և այն տեսակեսից, և զա եղավ պատճառներից մեկը, որ ամուսնացա նրա հետ: Ես մի ուրիշ հիմք էլ ունեի, որին կարողացա հանգել: Երբ նա դեռ ամուսնացած չէր՝ ես պետք է նրան աշխատավարձ վճարեի ու պահեի: Իմ կինը դառնալով՝ Սելինան ինձ պետք է ծառայեր ձրի: Ահա, թե ինչ տեսանկյունից նայեցի այդ հարցին: Խնայողութուն՝ սիրո խառնուրդով: Սա ես միլեդիին շարադրեցի պատշաճ ձևով, այնպես, ինչպես շարադրել էի ինքս ինձ:

«Ես մտածել եմ Սելինա Գորբի մասին, — ասացի, — և ինձ թվում է, միլեդի, ինձ վրա ավելի էժան կեստի ամուսնանալ նրա հետ, քան նրան պահել ու կերակրել որպես սպասուհու»:

Միլեդին լիաթոք ծիծաղեց ու պատասխանեց, թե չգիտե ինչից ավելի շատ դայրանա՝ իմ արտահայտվելու ձևի՞ց, թե՞ իմ կանոններից: Ենթադրում եմ՝ դա նրան ծիծաղելի թվաց այն պատճառով, ինչը դուք չեք կարող հասկանալ, եթե ազնվատոհմ տիկին չեք: Զհասկանալով ոչինչ, բացի այն, որ ես Սելինային առաջարկութուն անելու թույլտվութուն ունեմ, դնացի ու առաջարկեցի: Իսկ ի՞նչ ասաց Սելինան: Աստված իմ, ինչքան քիչ էր ճանաչում կանանց, եթե այդպիսի հարց եք տալիս: Հասկանալի է, նա ասաց «այո»:

Երբ մոտեցավ հարսանիքի ժամանակը և սկսեցին խոսել, թե հարկ է, որ նոր ֆրակ կարել տամ, ես մի փոքր վախեցա: Հարցրի ուրիշ տղամարդկանց, թե իրենք ինչ են դպացել, երբ իմ վիճակում են եղել, և բոլորն էլ խոստովանեցին, որ պտահադրութունից մեկ շաբաթ առաջ շատ-շատ են ուզե-

ցիւ հրաժարվել զրանից: Ես մի փոքր հետո գնացի. աշխատեցի հրաժարվել: Անշուշտ, ոչ ձրի: Գիտեի, որ նա ձրի ձեռք չի քաշի ինձնից: Փոխհատուցել կնոջը, երբ տղամարդը հրաժարվում է նրանից, այդպիսի բան նախատեսում են անգլիական օրենքները: Օրենքներին ենթարկվելով և ամեն ինչ մի լավ ծանր ու թեթև անելով, Սելինա Գորիին ատաջարկեցի փետրաներքնակ և հիսուն շիլինգ փոխհատուցում: Գուցե չհավատաք, մինչդեռ դա զուտ ճշմարտութուն է. նա, այնքան հիմարն էր, որ հրաժարվեց:

Հասկանալի է, զրանից հետո ոչինչ չէր մնում անել: Ես նոր ֆրակ կարեցի, ամենաէժանը, և ընդհանրապես շատ էժան պրծա. թեև մենք երջանիկ զույգ չէինք, բայց թե դժբախտ էլ չէինք: Կիսով չափ մեկն էինք, կիսով չափ՝ մյուսը: Թե դա ինչպես եղավ՝ չեմ հասկանում, միայն թե մենք միշտ խանգարում էինք իրար: Եթե ես ուզում էի աստիճաններով վեր բարձրանալ՝ կինս ներքև էր իջնում. իսկ երբ կինս էր ուզում ներքև իջնել՝ ես վերև էի գնում: Որքան որ կարող եմ դատել՝ այսպիսին է ամուսնական կյանքը:

Աստիճանների վրա հինգ տարվա թյուրիմացութուններից հետո իմաստնազույն նախաինամությանը հստիկ եղավ մեզ ազատել իրարից՝ կնոջս կանչելով: Մնացի իմ փոքրիկ Պենելոպեի հետ. ուրիշ երեխաներ չունեի: Դրանից հետո շատ շանցած՝ մեռավ սըր Ջոնը, և միլեդին մնաց իր փոքրիկ զբոստեր՝ միսս Ռեչելի հետ. նա ուրիշ երեխաներ չունեի: Ուրեմն ես վատ հոմ նկարագրել միլեդիին, եթե ձեզ պետք է բացատրել, որ փոքրիկ Պենելոպեն մեծացել է իմ բարի տիրուհու աչքի առաջ, ուղարկվել է դպրոց, դարձել է փութկոտ աղջիկ, իսկ մեծանալուց հետո կարգվել միսս Ռեչելի ազախին:

Իսկ ես կառավարչի սաշտոնը վարեցի մինչև 1847 թվականի ծննդյան օրը, երբ փոփոխութուն կատարվեց իմ կյանքում: Այդ օրը միլեդին բարեհաճեց զալ իմ առանձնատունը՝ մի բաժակ թեյ խմելու: Խոսակցութունն սկսեց ասելով, թե ձեր լորդի մոտ որպես պած ընդունվելուց ի վեր ես հիսուն տարուց ավելի ծառայության մեջ եմ եղել իր՝ միլեդիի մոտ. և այս ասելուց հետո ինձ նվիրեց իր գործած բրդե մի հիանալի ժիլետ՝ ինձ ձմռան ցրտից սպասպանելու համար:

Ես ընդունեցի այդ հոյակապ նվերը՝ չիմանալով, թե ինձ



ցույց տրված պատվի համար երախտագիտութեան ինչպիսի խոսքեր ասեմ իմ տիրուհուն: Բայց, ի մեծ զարմանս իմ, պարզվեց, որ ժիւեար ոչ թի պատիվ է, այլ կաշառք: Ուրեմն, միլեդին նկատել էր, նախքան դա ինքս կզգայի, որ տարի-քիս առաջանալուն համեմատ ես նահանջ եմ ապրել, և իմ առանձնատունն էր եկել շողոմելով ինձ համոզելու (եթե այսպիսի արտահայտութեան կարելի է օգտագործել), որ հրաժարվեմ կառավարչի պաշտոնից և կյանքիս մնացած օրերն անցկացնեմ հանգիստ, լինելով ծառայապետ իր տանը: Ինչքան որ կարող էի ընդդիմացա հանգիստ ապրելու վիրավորական առաջարկին: Բայց տիրուհիս գիտեր իմ թույլ կողմը. նա այդ բանը ներկայացրեց որպէս լավութեան՝ հենց իր համար: Մեր վեճն ավարտվեց նրանով, որ ես խելքը թացրած պառավի պես աչքերս սրբեցի իմ նոր գործված ժիւեարով ու ասացի, թե կմտածեմ:

Միլեդիի գնալուց հետո ես խիստ հուզվեցի ու որոշեցի դիմել մի միջոցի, որը դժվարին ու չկանխատեսված պարագաներում երբեք չէր դավաճանել ինձ: Միւսերի ծխամորձս ու ձեռքս առա «Մոբինգոն Կրուզոն»: Հինգ րոպե էլ չէր անցել, որ ես բացեցի այդ արտաստվոր գիրքը, և ինձ ներկայացավ հետևյալ մխիթարական տողը (էջ հարյուր հիսունութ). «Մենք այսօր սիրում ենք այն, ինչ ատում ենք վաղը: Ես անմիջապէս տեսա, թե ինչպէս պետք է վարվեմ: Այսօր դեռ ուզում եմ մնալ կառավարչի պաշտոնում, բայց վաղը, հիմնվելով «Մոբինգոն Կրուզոյի» վրա, բոլորովին ուրիշ բան կցանկանամ: Բավական է պատկերացնեմ վաղվա օրը ու վաղվա իմ տրամադրութեանը՝ և ամեն ինչ լավ կլինի: Այս ձևով հանգըստացնելով ինձ՝ այդ գիշեր քնեցի որպէս լեզի Վերինդերի կառավարիչ, իսկ առավոտյան արթնացա որպէս նրա ծառայապետը: Ամեն ինչ բավականաչափ լավ ստացվեց, և եամեն ինչ՝ «Մոբինգոն Կրուզոյի» ողորմածութեամբ:

Ազգիկա՝ Պենելոպեն, հենց այս պահին ուսիս վրայով նայեց՝ տեսնելու համար, թե ինչքան եմ գրել: Նա նկատեց, որ ամեն ինչ գրված է հիանալի և բոլոր տեսակետներից արդարացի: Բայց մի առարկութեան արեց: Նա ասում է, թե մինչև հիմա գրել եմ բոլորովին էլ ոչ այն, ինչ հարկ էր, որ գրեի: Ինձ խնդրել են արմատի պատմութեան անել, մինչդեռ ես

իմ սեփական պատմութիւնն եմ շարագրում: Տարօրինակ է, չեմ կարող բացատրել, թե ինչու է այդպես ստացվել: Կուզեի իմանալ՝ մի՞թե պարոնայք գրողներն ինձ նման իրենք իրենց խառնում են իրենց պատմութիւններին: Եթե այդպես է՝ կարեկցում եմ նրանց: Բայց, ի միջի այլոց, դարձյալ այն չէ: Ի՞նչ անեմ հիմա: Որքան գիտեմ՝ ոչինչ: միայն թե դուք չկորցնեք ձեր համբերութիւնը, իսկ ես երրորդ անգամ նորից կսկսեմ:

### Գ Լ ու խ III

Այն հարցը, թե ինչպես պետք է սկսել պատմութիւնը, աշխատեցի վճռել Երկու եղանակով: Առաջինը, գլուխս բորեցի, դա ոչնչի չհանգեցրեց: Երկրորդը, խորհրդակցեցի աղջկաս՝ Պենելոպեի հետ, որը և բուլորովին նոր միտք տվեց ինձ:

Պենելոպեն գտնում է, որ ես պետք է սկսեմ հենց այն օրից, երբ լուր ստացանք, թե մեզ մոտ է գալիս միստր Տրենկլին Բլեկը: Երբ դուք այս ձևով մտովի կանգ առնեք որևէ ամիս-ամսաթվի վրա, զարմանալի բան, ձեր հիշողութիւնն անմիջապէս կընտրի բուլոր հարկավոր պարագաները: Միակ զծվարութիւնը ամիս-ամսաթիվը հիշելն է: Բայց Պենելոպեն առաջարկեց այդ անել ինձ համար, թերթելով իր սեփական օրագիրը, որ նրան սովորեցրել էին պահել դպրոցում, և որը նա շարունակում էր վարել առ այսօր: Իր օրագրից օգտվելով՝ իմ փոխարեն պատմութիւնը գրելու առաջարկիս ի պատասխան Պենելոպեն բռնկեց և մուլեղնած հայացքով նկատեց, որ իր օրագիրը նախատեսված է միայն իր համար և աշխարհում ոչ մի կենդանի արարած չի իմանա, թե մեզն ինչ է զբված: Երբ հարցրի, թե ինչո՞ւ, Պենելոպեն պատասխանեց.

— Այնպես, հայրիկ:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ այստեղ սիրային ինչ-որ բաներ կան:

Սկսելով ըստ Պենելոպեի պլանի՝ խնդրում եմ թույլ տաք հիշատակել, որ 1848 թվականի մայիսի 24-ին, շորեքշաբթի առավոտյան, ինձ կանչեցին միլեգիի առանձնասենյակը:

— Գաբրիել, — ասաց միլեգին, — ահա մի նորութիւն,

որը ձեզ կզարմացնի: Բլեկն արտասահմանից վերադարձել է: Այժմ նա հյուրընկալված է Լոնդոնում՝ հոր մոտ, իսկ վաղը մեկ ամսով կզա մեզ մոտ և մեզ հետ կանցկացնի Ռեչելի ծննդյան օրը:

Ծթե ձեռքիս գլխարկ լինեք, ապա միայն միլեդիի հանդուպ տածած հարգանքը կխանգարեք այն վեր-վեր գցելուն: Ես միստր Ֆրենկլինին չէի տեսել այն պահից ի վեր, որ նա, դեռ փոքր տղա, մեզ հետ ապրել էր այս տանը: Նա (որքան հիշում եմ) բոլոր առումներով ամենասիրելի տղան էր նրանցից, որոնք կրկն է հոլ էին խաղացել կամ լուսամուտների ապակիներ կոտրել: Մեր խոսակցությանը ներկա միսս Ռեչելը նկատեց, որ ինքը նրան հիշում է որպես տիկնիկների ամենաարյունարբու բռնակալի ու տանջարարի և ամենադաժան կառապանի, որը իր կոպիտ սանձերով ուժասպառ անելու աստիճան ըշում էր աղջիկներին:

— Բավական է հիշեմ Ֆրենկլին Բլեկին, — եզրափակեց միսս Ռեչելն իր խոսքը, — որ սկսեմ խիստ գայլանալ ու հոգնածությունից մեռնել:

Դուք, բնականաբար, կհարցնեք, իսկ ինչո՞ւ միստր Ֆրենկլինն իր բոլոր տարիները, սկսած այն ժամանակից, երբ փոքր տղա էր, մինչև այն ժամանակը, երբ տղամարդ էր դարձել, անցկացրել էր հայրենիքից դուրս: Պատասխանում եմ, որովհետև նրա հայրը դժբախտություն էր ունեցել իննելու մի դուքսական տիտղոսի մերձավորագույն ժառանգը և չէր կարողանում իրավաբանորեն ապացուցել այդ:

Ահա, երկու խոսքով, թե դա ինչպես էր եղել:

Միլեդիի ավագ քույրն ամուսնացել էր նշանավոր միստր Բլեկի հետ, որը հռչակված էր ինչպես իր հսկայական հարբստությամբ, այնպես էլ ինչ-որ դուքսի հետ ունեցած իր դասական գործերով: Քանի՞ տարի նա ձանձրացրեց իր հայրենիքի դատարաններին, պահանջելով, որ դուքսը վտարվի կալվածքից, իսկ նքա տիտղոսը տրվի իրեն, քանի՞-քանի փաստարանների հարստացրեց նա, ինչքան բոլորովին անմեղ մարդկանց ստիպեց գժտվել՝ իրար հետ բռնած զրադի պատճառով՝ իրավացի՞ է ինքը, թե՛ չէ: Մեռավ նրա կինը, մեռան նրա երկու երեխաները՝ նախքան դատարանները կորուչեին իրենց դաները փակել նրա առաջ և այլևս փող չպո-

կիւ նրանից: Երբ ամեն ինչ վերջացել էր և դուքսը մնացել էր իր տեղում, միստր Բլեկը մտածեց, որ հայրենիքից՝ նրա արածի հսմար վրիժ լուծելու միակ եղանակը իր որդուն հաստիարակելու պատվից Անգլիային գրկելն է:

«Այն բանից հետո, որ մեր հայրենական հաստատություններն արեցին ինձ հետ, բացատրում էր նա, — ինչպե՞ս կարող եմ ապավինել մեր հայրենական հաստատություններին»:

Մրան ավելացրեք և այն, որ միստր Բլեկը չէր սիրում սղաներին (այդ թվում և իր տղային), և դուք կհամաձայնվեք, որ դա կարող էր միայն մի ձևով վերջանալ: Միստր Ֆրենկլինը դուրս բերվեց Անգլիայից և ուղարկվեց այն հաստատությունները, որոնց կարող էր ապավինել նրա հայրը, այնպիսի մի հրաշալի երկիր, ինչպիսին Գերմանիան է. միստր Բլեկն ինքը, տեսեք, շատ հանգիստ մնաց Անգլիայում, որպեսզի պատլամենտում գործի հօգուտ իր հայրենակիցների և որպեսզի պամֆլետ գրի դուքսի գործի մասին, մի պամֆլետ, որն առ այսօր էլ չի ավարտել:

Ահա, փառք աստծու, սա շարադրված է: Ոչ ես, ոչ էլ դուք չպետք է գլուխ կոտրենք միստր Բլեկ-ավագի հաշվով: Թողնենք նրան՝ իր դքսության հետ, և դիմենք այլմաստին:

Այժմստր մեզ վերադարձնում է միստր Ֆրենկլինի մոտ, որը մեր տան մեջ այժմստի հայտնվելու պակաս մեղավորը դարձավ:

Մեր սիրելի տղան, արտասահման մեկնելով, մեզ շնորհացավ: Ժամանակ առ ժամանակ գրում էր՝ երբեմն միլեդիին, երբեմն՝ միսս Ռեչելին, երբեմն էլ՝ ինձ: Իր մեկնելուց առաջ ինձնից վերցրել էր մի կծիկ պարան, մատիտ սրելու դանակ՝ լորս բերանով, և յոթ շիլինգ վեց պենս, որը ես ետ չեմ ստացել և ստանալու էլ հույս չունեմ: Նա ինձ ավելի շատ գրում էր դարձյալ պարտք վերցնելու համար. սակայն միլեդիից լսել էի, որ նա մեծանալուց ի վեր ապրում է արտասահմանում: Ուսանելով այն ամենը, ինչ կարող էին նրան ուսուցանել գերմանական հաստատությունները, նա մեկնել էր Ֆրանսիա, իսկ այնուհետև՝ Իտալիա. ույստեղ նրան դարձրել էին, որքան կարող էի հասկանալ, համակողմանի հանճար: Նա մի քիչ գրում էր, մի քիչ նկարում, մի քիչ երգում էր, նվագում

ու հորինում, ամեն պարագայում, ինչքան որ գիտեմ, փոխ առնելով, ինչպես որ ինձնից էր փոխ առնում: Նրա մոր կարողութունը (տարեկան յոթ հարյուր ֆունտ) մնացել էր նրան, երբ նա արդեն շախատհաս էր, և նրա միջով անցել էր այնպես, ինչպես կանցնեն մաղի միջով: Որքան շատ փող էր ունենում նա, այնքան ավելի շատ էր դրա կարիքն զգում. միստր Ֆրենկլինի գրպանը ծակ էր, և այդ ծակը երբեք հնարավոր չէր լինում կարել: Նրա ուրախ տրամադրությունն ու անկաշկանդ լինելն ամենուրեք լավ ընդունելություն էին ապահովում նրա համար: Նա ապրում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ, և նրա հասցեն միշտ (ինչպես ինքն էր ասում) այսպիսին էր. «Եվրոպա, ցպահանջ»: Երկու անգամ որոշել էր վերադառնալ Անգլիա և տեսնվել մեզ հետ, և երկու անգամ էլ (ներողություն եմ խնդրում) ինչ-որ կին ետ էր պահել նրան: Երրորդ փորձը հաջողվել էր. դա արդեն ձեզ հայտնի է միլիդիի՝ ինձ ասածներից. մայիսի 25-ի հիւնդաբթի օրը մենք պետք է օրոշին անգամ տեսնեինք, թե ինչ տղամարդ էր դարձել մեր սիրելի տղան: Նա լավ տոհմից էր, խիզախ բնավորություն ուներ և, մեր հաշվով, կլիներ քսանհինգ տարեկան, ոչ ավելի: Այժմ դուք նույնքան գիտեք միստր Ֆրենկլինի Բլեկին, որքան և ես՝ միստր Ֆրենկլին Բլեկի մեզ մոտ գալուց առաջ:

Հինգշաբթի օրը ամառային հիանալի եղանակ էր. միլիդիին ու միսս Ռեշելը, շապասելով, որ միստր Ֆրենկլինը կհսօրից շուտ կժամանի, նախաճաշելու զնացին հարևանությամբ ապրող ինչ-որ բարեկամների մոտ:

Նրանց մեկնելուց հետո ես զնացի աչքի անցկացնելու մեր հյուրի համար պատրաստված ննջարանը և տեսա, որ այնտեղ ամեն ինչ կարգին է: Այնուհետև, լինելով ոչ միայն ծառայապետ, այլև միլիդիի բուֆետապանը (իմ սեփական խնդրանքով, իմացած եղեք. ինձ համար հաճելի չէր, որ ինչ-որ մեկը տիրանար հանդուցյալ սրբ Ջոնի մառանի բանալիներին),— այնուհետև, ասում եմ, հանեցի մեր լատուրյան նշանավոր կլարետը ու դրեցի մինչև կեսօր ամառվա տրևի տակ տաքանալու Մտածելով, որ ինքս էլ կարող եմ ամառվա տաք արևի տակ նստել (որովհետև, եթե դա լավ է հին կլարետի համար, ապա լավ է նաև հին ոսկորների համար), վերց-

րի ծղոտե աթոռը, որպեսզի դուրս դամ ներքին բակ, երբ ինչ կանգնեցրեց մի կամացուկ թմբկահարութիւն, որ լսվեց միլիզիի սենյակներէ առջևի սանդղավանդում:

Սանդղավանդի շուրջը պտտվելով՝ տեսա սպիտակ քաթանե բլուզով ու շալվարով երեք թխամորթ հնդիկներէ, որոնք նայում էին տանը:

Երբ ավելի մոտիկից ուշադիր նայեցի՝ նկատեցի, որ յուրաքանչյուրի վզից փոքրիկ թմբուկ էր կախված: Նրանց առջև կանգնած էր մի փոքրիկ, նիհար, խարտյաշ անգլիացի տղա՝ տոպրակը ձեռքին: Մտածեցի, որ այդ մարդիկ թափառաշրջիկ աճպարարներ են, իսկ տղան այդ տոպրակի մեջ կրում է նրանց արհեստի դործիքները: Նրանցից մեկը, որ անգլերեն էր խոսում և, պետք է խոստովանեմ, շատ կիրթ շարժուձևեր ունէր, հաստատեց իմ մտածածը. նա տանտիրուհու ներկայութեամբ իր աճպարարութիւնները ցուցադրելու թույլտվութիւն խնդրեց:

Ես մտայ ծերուկ չեմ, սիրում եմ հաճույքները և չեմ կարող մարդուն շհավատալ սոսկ այն պատճառով, որ նրա մաշկը իմից ավելի թուխ է: Բայց մեզնից ամենալավերն ունեն իրենց թուլութիւնները, իսկ իմ թուլութիւնն այն է, որ երբ բնատահեկան արծաթեղենով զամբլուղը հանված ու դրված է մառանում՝ սեղանի վրա, ես անմիջապէս այդ զամբլուղն եմ հիշում՝ տեսնելով թափառաշրջող օտարերկրացուն, որի շարժուձևերն իմից լավն են: Այդ պատճառով էլ ես հնդիկին ասացի, որ տիրուհին տանը չէ, և նրան ու ընկերներին կարողադրեցի հեռանալ: Ի պատասխան՝ նա ճարպկորեն խոնարհվեց, ու նրանք գնացին: Ես, իմ կողմից, վերադարձա դեպի իմ աթոռը ու տեղավորվեցի բակի արևոտ կողմում, ընկզմվելով, եթե ճիշտն ասելու լինենք, ոչ թե քնի, այլ դրան շատ մոտիկ մի վիճակի մեջ:

Ինձ արթնացրեց աղջիկս՝ Պեննիուպեն, որն այնպէս էր սլացել ինձ մոտ, ասես տունը հրդեհված լինելու ինչ եք կարծում, ի՞նչն էր նրա հայտնվելու պատճառը: Նա, դիտել ինչ, պահանջեց, որպեսզի երեք աճպարար հնդիկներն անմիջապէս ստտիկանատուն տարվեն այն պատճառով, որ նրանք, իբր լմացիկ են միտար Զրենկլին Բլեկլի Լոնդոնից մեզ մոտ դալը և մտադիր են եղել վնաս հասցնել նրան:

Միստր Յրենկլիների անունն ինձ սթափեցրեց: Բացեցի աշ-  
շերս և աղջկաս ստիպեցի բացատրվել:

Պարզվեց, որ Պենելոպեն հենց նոր էր վերադարձել մեր  
բարապանի պահակատնակից, ուր գնացել էր նրա աղջկա հետ  
փոքր-ինչ շաղակրատելու: Երկու աղջիկները տեսել էին, թե  
ինչպես իմ կողմից վաճառված հնդիկները գնացել են աղայի  
ուղեկցութեամբ: Զգիտեմ ինչու, դուխները մտցնելով, որ այդ  
օտարերկրացիները վատ են վարվում աղայի հետ, երկու աղ-  
ջիկները շարժվել են մեր տունը ճանապարհից բաժանող կեն-  
դանի ցանկապատի ներքին կողմի երկարութեամբ, և սկսել են  
նայել, թե ինչ են անելու հնդիկները: Իսկ նրանք սկսել են  
տարօրինակ բաներ անել:

Սկզբում նրանք բոլոր կողմերից տնտղել էին ճանապար-  
հը, հավաստիանալու համար՝ մենակ են իրենք, թե ոչ: Հետո  
երեքն էլ դեմքով շրջվել էին դեպի մեր տան ճակատային մա-  
սը և սկսել էին ուշադիր նայել: Այնուհետև խոսքի էին բռնվել  
իրար հետ ու վիճել իրենց մայրենի լեզվով, ինչ-որ կասկա-  
ծանքով նայելով միմյանց աչքերի մեջ: Հետո շրջվել էին  
անդլիացի աղայի կողմը, մի տեսակ սպասելով, որ նա կօգ-  
նի իրենց: Իսկ հետո դիտալոր հնդիկը, որ անգլիերեն է խոսել,  
կարդադրել է աղային.

— Ձեռքդ պարզիր:

Իմ դուստր Պենելոպեն, պատմութեան այս տեղը հասնե-  
լով, բացականչեց, որ ինքն ուղղակի չի հասկանում, թե ինչ-  
պես պատահեց, որ այս սաբսափիլի խոսքերը լսելիս իր սիր-  
տը դուրս չթռավ կրծքից: Մեղքս ինչ թարցնեմ, մտածեցի, որ  
դրան կարող է խանգարած լինել կորսւտը: Բայց բարձրա-  
ձայն միայն մի բան փնթփնթացի.

— Վա՛հ, մարմնովս սարսուռ է անցնում:

(Nota bene: կանայք սիրում են այդպիսի փոքրիկ խրա-  
խուսանքները):

Երբ հնդիկը պահանջել է՝ «Ձեռքդ պարզիր», աղան մի  
քայլ ետ է գնացել, դուխն օրորել է ու պատասխանել, որ չի  
ուզում: Այդ ժամանակ հնդիկը հարցրել է (բոլորովին չգայ-  
րանալով), չի՞նք թե ուզում է, որ իրեն նորից Լանդոն ուղար-  
կեն ու թողնեն այնտեղ, որտեղ գտել են շուկայում դատարկ  
զամբյուղի մեջ քնած, քաղցած, բրջոտ ու անօթևան: Դա

կարծես հարցը վճռել է: Տղան դժկամությամբ ձեռքը պարզել է: Հնդիկը մի շիշ է հանել թևի տակից ու նրանից թանաքի նման ինչ-որ մի սև բան է լցրել տղայի ափի մեջ: Այնուհետև, տղայի դիտին ձեռք տալով ու նրա վերևում օդում ինչ-որ նշաններ անելով, ասել է.

— Նայի՛ր:

Տղան անշարժացել է տեղում ու կանգնել արձանի պես՝ նայելով իր ափի մեջ լցված թանաքին...

Պենելուպեի արած պատմության մեջ հնդիկների այդ բոլոր արարքները մինչև հիմա պարզապես աճպարարություններ ու թանաքի անտեղի վատնում էին թվացել ինձ: Ուզեցի նորից աչքերս փակել, բայց Պենելուպեի հաջորդ խոսքերն անմիջապես փախցրին քունս:

Հնդիկները նորից ուշադիր զննել են ճանապարհը, և նրանց ղեկավարը տղային ասել է.

— Օտար երկրից եկած անզլիացուն տեսնո՞ւմ ես:

Տղան պատասխանել է.

— Ես նրան տեսնում եմ:

Հնդիկն ասել է.

— Ա՞յս, թե մեկ ուրիշ ճանապարհով է այսօր գալու անզլիացին:

Տղան պատասխանել է.

— Այս և ո՛չ մեկ ուրիշ ճանապարհով է այսօր գալու անզլիացին:

Մի փոքր լուելուց հետո հնդիկը մի նոր հարց է տվել.

— Այն բանը անզլիացու մո՞տն է, թե ոչ:

Նույնպես կարճատև լռությունից հետո տղան պատասխանել է.

— Մտան է:

Այդ ժամանակ հնդիկը տվել է շորթորդ և վերջին հարցը.

— Անզլիացին, իր խոստացածի պես, իրիկնադեմին այստեղ կլինի՞:

Տղան պատասխանել է.

— Չեմ կարող ասել:

Հնդիկը հարցրել է, թե ինչո՞ւ:

Տղան պատասխանել է.



— Հոգեծեցի Աշքերս մշուշվում են, և դա ինձ խանգարում է: Այսօր այլևս ոչինչ չեմ կարող տեսնել:

Սրանով հարցերն ավարտվել են: Հնդիկն իր լեզվով ինչ-որ բան է ասել իր երկու ուղեկիցներին, մատնացույց անելով տղային ու քաղաքը, սրտեղ (ինչպես հետո իմացանք) իրենք կանգ էին առել: Այնուհետև նորից տղայի դիւսավորվում նշաններ անելով՝ փչել է նրա ճակատին. տղան ցնցվել է ու արթնացել: Դրանից հետո բոլորը գնացել են քաղաք, և աղջիկներն այլևս նրանց չեն տեսել:

Ասում են, թե ամեն ինչից էլ կարելի է խրատակամ և դրակացության հանգել, եթե միայն մարդ ձգտի այդ առեւել: Իսկ ի՞նչ եզրակացության կարելի է հանգել այս ամենից:

Ես մտածեցի, որ, առաջին, դիւսավոր աճալարարը դարպասի մոտ սպասուհիների խոսակցությունից լսել է միստր Ֆրենկլինի ժամանելու մասին և փող վատտակելու հնարավորություն է տեսել: Երկրորդ, որ նա, նրա ընկերներն ու տղան մտադիր են եղել (փող աշխատելու նպատակով) թափառել ինչ-որ տեղ մոտերքում, մինչև որ միլիդին տուն կգա, իսկ հետո վերադառնալ և նրա համար գուշակել միստր Ֆրենկլինի ժամանումը: Երրորդ, որ Պենելոպեն տեսել է նրանց աճալարարությունների փորձը, այնպիսին, ինչպիսին ունենում են իրենց պիեսը փորձող դերասանները: Չորրորդ, որ վատ չի լինի, եթե ես այս երեկո աչքս սեղանատան արծաթեղենի վրա պահեմ: Հինգերորդ, որ լավ կլինի Պենելոպեն հանգստանալ թողնի, որ հայրը նորից ննջի արեւի տակ:

Սա շատ ողջամիտ եզրակացություն թվաց ինձ: Եթե դուր գոնե մի քիչ ճանաչում եք երիտասարդ կանանց, ապա չեք դարձանա, լսելով, որ Պենելոպեն համաձայն չէ ինձ հետ: Ըստ աղջկաս ասածների՝ բանը շատ լուրջ է եղել: Նա ինձ հիշեցրեց հնդիկի երրորդ հարցը՝ «Այն բանը անգլիացու մո՞տ է, թե ոչ»:

— Օ՛, հայրիկ,— ձեռքերը կողմերի վրա տարածելով՝ բացականչեց Պենելոպեն:— Դրա հետ կատակ չանեք: Ի՞նչ է նշանակում այն բանը:

— Կհարցնենք միստր Ֆրենկլինից, հոգյակս,— ասացի ես,— եթե կարող ես սպասել մինչև միստր Ֆրենկլինի գալը:

Ես աչքով արեցի, դրանով ասելով, թե կատակում եմ:

Բայց Պենելոպեն ասածներս ընդունեց ամենայն լրջությամբ, նրա մտահոգված տեսքը գրգռեց ինձ:

— Դա որտեղի՞ց կարող է իմանալ միտտը Ֆրենկլինը, — ասացի ես:

— Հարցրեք նրանից, — պատասխանեց Պենելոպեն: — Եվ կտեսնեք, արդյո՞ք նա զվարճալի է համարում դա:

Պարթևական վերջին նետն ինձ վրա արձակելով, աղջիկս հեռացավ:

Նրա գնալուց հետո որոշեցի իսկապես հարցնել միտտը Ֆրենկլինից, թեկուզև Պենելոպենին հանգստացնելու համար: Այդ նույն օրը նրա հետ ունեցած իմ խոսակցության մասին դուք կիմանաք համապատասխան տեղում, բայց քանի որ շնամ սղոմ գրգռել ձեր հետաքրքրասիրությունը, ուստի խնդրում եմ թույլ տաք, նախքան առաջ անցնելը, անմիջապես նախադրուշացնել ձեզ, որ աճյաբարաների վերաբերյալ իմ ու նրա խոսակցության մեջ կատակի նշույլ անգամ չի եղել: Ի մեծ բարմանս իմ, միտտը Ֆրենկլինին էլ Պենելոպեի նման լուրջ ընդունեց այդ լուրը: Թե որքան լուրջ՝ կհասկանաք, երբ իմանաք, որ, նրա կարծիքով, այն բանը նշանակել է Լուսնաբար:

#### Գ Լ Ո Ւ Յ IV

Ինձ համար, արդարև, ամոթ է ձեր ուշադրությունն դրա՝ դեցնել ինձնով և իմ ծղոտի աթոռով: Քնկոտ ծերունին արևկող ետնաբակում՝ այնքան էլ հետաքրքիր բան չէ, ես դա շատ լավ գիտեմ: Բայց պատմությունը պետք է իր հաջորդականությունում զնա, և դուք ստիպված եք ևս մի քիչ հապալել ինձ հետ մեկտեղ՝ սպասելով միտտը Ֆրենկլին Բլեկի ժամանելուն:

Աղջկաս հեռանալուց հետո դեռ չէի հասցրել նորից քնել, երբ ինձ արթնացրեց ասիսեների ու սկուտեղների շխկշխկոցը ծառաների սենյակում. դա նշանակում էր, որ ճաշը պատրաստ է: Ես իմ սենյակում եմ ճաշում և ծառայանոցի ընդհանուր ճաշի հետ գործ չունեմ, այս իսկ պատճառով էլ ինձ մնում էր միայն բարի ախորժակ ցանկանալ բոլորին և նորից հարմար տեղավորվել իմ աթոռին: Նոր էի այդ նպատակով ոտքերս երկաբել, երբ վազելով մի ուրիշ կին եկավ: Այս ան-

զամ ոչ թե իմ աղջիկը, այլ՝ Նանսին, որ աման լվացող էր։  
Ես փակեցի նրա ճանապարհը և նկատեցի, որ, երբ նա ինձ  
խնդրում էր բաց թողնել իրեն, նրա դեմքը մոռալ էր, իսկ  
այդպիսի բանը ես, սկզբունքորեն, որպես ծառաների գլխա-  
վոր, երբեք բաց չեմ թողնում առանց քննության։

— Այդ ինչու՞ էք վեր կացել փախել սեղանից։ Ի՞նչ է պա-  
տահել, Նանսի։

Նանսին փորձեց զուրս պրծնել առանց պատասխանելու,  
բայց ես բռնեցի նրա ախանջից։ Նա շատ անուշիկ, հաստիկ,  
չահել աղջիկ է, իսկ ես սուլորություն ունեմ այդպիսով ցույց  
տալ իմ բարեկամական ուշադրությունը ջահել աղջիկների  
նկատմամբ։

— Ռոզաննան դարձյալ ուշացել է ճաշից, — պատասխա-  
նեց նա, — և ինձ ուղարկել են նրա կտեից։ Այս տանը բոլոր  
դժվար գործերն ինձ վրա են ընկնում։ Բողեք ինձ, միտոր  
Բետտերեջ։

Ռոզաննան մեր երկրորդ աղախինն էր։ Քանի որ ես կա-  
րեկցանք էի զգում մեր երկրորդ աղախինի նկատմամբ (հիմա  
կիմանաք, թե ինչու) և Նանսիի դեմքից տեսնում էի, որ նա  
վազելով կգնա ու նախատական խոսքերով կհարձակվի իր  
ընկերուհու վրա, մի բան, որ հանգամանքներն ամենևին էլ  
չէին պահանջում, մտքովս անցավ, որ ես հիմա աչառ եմ, ոչ  
մի գործ չունեմ և որ ինքս կարող եմ դնալ Ռոզաննայի կտե-  
վից, նրան հասկացնելով, որ այսուհետև ամբողջ ճշտապահ լի-  
նի Գիտեի, որ նա համբերություն մը կլօի սաածներս։

— Որտե՞ղ է Ռոզաննան, — հարցրի։

— Անշուշտ, ավազներում, — պատասխանեց Նանսին,  
զլսխն օրորելով։ — Նա, այ թե ինչ, նորից վատ է զգում և  
զուրս գալու, թարմ օդ շնչելու թույլտվություն է խնդրել։ Նա  
ինձ համբերությունից հանում է։

— Ետ դարձիր գնա, սիրելիս, — սուսցի ես։ — Նա ինձ  
համբերությունից չի հանում, և ես կգնամ նրա կտեից։

Նանսին (նա շատ լավ ակորժակ ունի) գոհ մնաց։ Երբ  
նա գոհունակ տեսք ունի՝ սիրունիկն է. այդ ժամանակ ես  
շոյում եմ նրա կզակը։ Ես անբարո բան չէ, դա ուղորու-  
թյուն է։

Եվ ահա վերջին ճեռնափայտս ու գնացի ավազները։

Չէ, այսպես շարունակվել չի վարող: Ցավում եմ, որ դարձ-  
յալ ուշացնում եմ ձեզ, բայց դուք պետք է անպայման ուն-  
կընդրեք ավագների պատմութիւնը և Ռոզաննայի պատմու-  
թիւնը հենց այն պատճառով, որ արմատի գործը սերտորեն  
կապված է դրանց հետ: Որքա՞ն եմ ջանում առանց շեղվելու  
տե՛նել իմ պատմութիւնը և որքա՞ն վատ է դա ինձ հաջողվում:  
Բայց ի՞նչ արած: Այնքա՞ն ցավալիորեն են մարդիկ ու իրերն  
իրար խառնվում այս աշխարհում և ձեր ուշադրութիւնը հրա-  
վիրում իրենց վրա: Դա ընդունենք հանգիստ, պատմենք հա-  
կիրճ, և մենք, խոստանում եմ ձեզ, շուտով կթափանցենք  
զաղտնիքի խորքը:

Ռոզաննան (իրերից առաջ անձնավորութեան մասին խո-  
սել պահանջում է սովորական քաղաքավարութիւնը) միա-  
նոր աղախինն էր մեր տանը: Նկարագրածս ժամանակից չորս  
ամիս առաջ միլիոնի եղել էր լոնդոնում, այցելել ուղղիչ հաս-  
տատութիւն, որի նպատակն էր թույլ շտալ, որ բանտի:  
ազատ արձակված հանցագործ կանայք նորից վերագտնալ  
վատ կյանք վարելուն: Կին բանտապետը, տեսնելով, որ միլի-  
ոնի հետաքրքրվում է այդ հաստատութեամբ, նրան մատնա-  
ցույց է արել Ռոզաննա Սպիրման անունով մի աղջկա և շա-  
րագրել մի շատ արևոտ պատմութիւն, որն այստեղ կրկնե-  
լու արիւթիւն չունեմ, որովհետև չեմ սիրում ինքս ինձ  
հուզել անտեղի, և, հավանաբար, դուք նույնպէս չեք սիրում:  
Երկու խոսքով ասեմ, որ Ռոզաննա Սպիրմանը գող էր եղել,  
բայց ոչ այնպիսին, ինչպիսին նրա՞նք են, որ ամբողջ գրա-  
սենյակներով գործում են Միտիում և գողանում ոչ թե կյան-  
քում մեկ անգամ՝ ծայրահեղ կարիքից մղված, այլ թալա-  
նում են հաղարարի մարդկանց. այս պատճառով էլ նա ըն-  
կել էր ոստիկանութեան ձեռքը, նրան բանտ էին նստեցրել,  
խսկ հետո ուղղիչ տուն ուղարկել: Ռոզաննայի մասին բան-  
տապետն այն կարծիքին էր (չնայած աղջկա նախկին արարք-  
ներին), թե դա մի աղջիկ է, որպիսիք քիչ են, և նրան սոսկ  
առիթ է պետք, որպեսզի ցույց տա, որ ինքն արժանի է ամեն  
մի բարի մարդու կարեկցանքին: Միլիոնի (այնքան բարի մի  
մարդ, որի նմանը գտնելը դժվար է) ասաց բանտապետին.

— Ռոզաննա Սպիրմանն այդ առիթը կգտնի ինձ մտտ  
ծառայելիս:

Մի շարաթ հետո Ռոզաննա Սպիրմանը մեր տուն մտավ որպէս երկրորդ աղախին: Այս աղջկա պատմութիւնը, միսս Ռեչելից ու ինձնից բացի, ուրիշ ոչ ոքի չէր հաղորդվել: Միլիդին, որ իրեն թույլ էր աւելիս շատ հարցերի շուրջը խորհրդակցել ինձ հետ, խորհրդակցեց նաև Ռոզաննայի առիթով: Վերջին ժամանակներս ընդօրինակելով հանգուցյալ սըր Զոնի՝ միլիդիի հետ միշտ համաձայնվելու սովորութիւնը, ես անկեղծօրէն նրա հետ համաձայնվեցի նաև Ռոզաննա Սպիրմանի հարցում:

Հազվադեպ է ավելի լավ առիթ ներկայանում, քան այն, որ ներկայացել էր խեղճ աղջկան: Սպասավորներից ոչ ոք չէր կարող երեսով տալ նրա անցյալը, որովհետև ոչ ոք այն չգիտեր: Նա ոռճիկ էր ստանում ու բոլորի հետ հավասար արտոնութիւններից օգտվում, և միլիդին էլ ժամանակ առ ժամանակ մտերմիկ խոսքով խրախուսում էր նրան: Սակայն նա էլ, պետք է ասել, ցույց տվեց, որ արժանի էր այդպիսի սիրալիր վերաբերմունքի: Թեև աղջիկն ամենևին էլ շատ լավ առողջութիւն չունէր և երբեմն-երբեմն ուշաթափ էր լինում (այս մասին ասել եմ վերևում), այնուամենայնիվ իր գործը կատարում էր համեստօրէն ու անտրտունջ, խնամքով ու լավ, բայց սպասուհիների շրջանում մտերիմներ ձեռք չէր բերել. բացի իմ դուստր Պենելոպից, որը սովորաբար սիրալիր էր Ռոզաննայի հետ, թեև այնքան էլ շատ մոտիկ չէր հետը:


Զգիտեմ ինչու այդ աղջիկը նրանց դուր չէր գալիս: Նա չունէր այն գեղեցկութիւնը, որը նախանձ առաջացներ ուրիշների մեջ. նա տան բոլոր աղջիկներից ամենաանհրապույցն էր և, ի լրումն դրա, մի ուսը մյուսից բարձր էր: Կարծում եմ ծառաներին ամենից շատ դուր չէին գալիս նրա լուակայութիւնն ու մեկուսանալու հակումը: Նա կարգում կամ գործ էր անում ազատ ժամերին, երբ ուրիշները զրուցում էին իրար հետ: Իսկ երբ հասնում էր բակից դուրս գալու նրա հերթը՝ նա, տասից ինի դեպքում, հանգիստ դնում էր գլխարկը և զբոսնելու զնում մենակ: Նա երբեք չէր գծովում, երբեք չէր նեղանում. միայն համառօրէն ու շատ քաղաքավարի իրեն հեռու էր պահում բոլորից: Դրան ալիւլացրեք, որ ամենայն անբարետեսութեամբ հանդերձ, նրա մեջ կար ինչ-որ մի բան, ուր նրան նմանեցնում էր ոչ թե աղախինի, այլ ազնվազարձ

տիրուհու Գուցի դա գրանորվում էր նրա ճանի մեջ, գուցէև դեմքի մեջ: Միայն կարող եմ ասել, որ մնացած կանայք դա հկատել էին հենց առաջին օրվանից, Լրբ նա ծառայութեան էր անցել մեր տանը, և պնդում էին (բոլորովին անարդարացիորեն), թե մոզանեա Սպիրմանը երևակայում է իրեն:

Մոզանեայի պատմութեանն անելով՝ հիշատակեմ նրա մի տարօրինակութեանը, որից ինձ համար շատ հեշտ կլինի անցնել ավազների պատմութեանը:

Մեր տունը գտնվում է Յորքշիրի ամիին, հենց ծովի մոտ: Մեր մոտերքում գրոսանքի հիանալի տեղեր կան՝ բոլոր ուղղութեաններով, բացի մեկից: Իմ կարծիքով դա շատ անդուր գրոսանք է: Մի քառորդ մղոն գնում ևս եղնինների տիրուր անտառի միջով և, անցնելով ցածր ժայռերի արանքով, հայտնվում ես մեր ամբողջ ամիի ամենամեկուսի և անհրապույր ծովախորշում:

Այստեղ ավազարւորներն իջնում են գետի ծով և ավարտվում երկու սրածայր ժայռերով, որոնք դեմ-դիմաց դուրս են ցցված ջրից: Մեկը կոչվում է Հյուսիսային, իսկ մյուսը՝ Հարավային ժայռ: Այդ երկու փոքրիկ ժայռերի միջև բնկած են յորքշիրյան ամբողջ առափնյայի ամենասարսափելի երերուն ավազները: Տեղատվութեան ժամանակ ինչ-որ բան է կատարվում դրանց խորքում, ստիպելով, որ ավազների ամբողջ մակերևույթը շատ արտասովոր ձևով երեւա: Դրա համար էլ տեղի բնակիչները դրանք անվանել են Երերուն ավազներ: Սովախորշի ելանցքի մոտ կես մղոն ձգվող մեծ ծանծաղուտը գտնում է օվկիանոսի ճնշումը: Սև ձմռանը, լին ամռանը ծովի ալիքներն ասես մնում են ծանծաղուտի մյուս կողմում և օտրը ծովախորշ է թափանցում մի մեծ ալիքով, անազմուկ ողողելով ավազները: Հավատացիտեմ եմ ձեզ՝ խուլ և ահալոր տեղ է: Ոչ մի նազակ չի համարձակվում մտնել այդ ծովախորշը: Քորս Զոլլ կոչվող մեր ձկնորսական գյուղի նրեխաներն այստեղ խողալու շին գալիս երբեք: Թռչուններն անգամ, ինչպես ինձ թվում է, հեռու են թռչում Երերուն ավազներից: Որպեսզի երկտասարդ կինը իր հանդստի ժամերին, հնարավորութեան ունենալով ընտրել տասը հաճելի գրոսանքներից ուղածը և միշտ գտնել ուղեկիցներ, որոնք սլատրաստ կլինեին գնալու իր հետ, եթե նա միայն ասեր՝ «Գնանք»—



գերագասեր ալուսիսի տեղը և աշխատեր կամ կարդար ալստեղ բուրբոմին մենակ— դա, հավատացնում եմ ձեզ, ամենայն հավանականութիւնից վեր է: Սակայն, բացատրեք ինչպես կուզեք. դա Ռոզաննա Սպիրմանի նախասիրած տեղն էր: Միայն մեկ, թե երկու տնգամ էր նա գնացել Քոբս Հուլ, մեր կողմերում ունեցած միակ ընկերուհու մոտ, որի մասին ձեզ կպատմեմ հետագայում: Հիմա ևս գնում եմ այդ տեղը՝ աղջրկան ճաշի կանչելու: Եվ դա բարեհաջող կերպով մեզ վերադարձնում է դեպի պատմութեան սկիզբը ու նորից տանում ավազների կողմը:

Աղջկան եղենիների անտառում չպատահեցի: Երբ ավագաբլուրների արանքներով հասա ամի, տեսա նրան՝ ծղոտի փորրիկ գլխարկով և մոխրագույն հասարակ թիկնոցով, որ միշտ երում էր իր անճոռնի ուսը հնարավորին շատ թաքցնելու համար: Նստած էր մենակ և նայում էր ծովին ու ավազներին:

Երբ մտայնա՝ Ռոզաննան ցնցվեց ու շրջվեց թիկունքով իմ կողմը: Ես որպես ծառայապետ սկզբունքորեն միշտ քննութեան և նախարկում այն, թե ինչու ուղիղ իմ երեսին չեն նա-

յում. Ես նրան շրջեցի իմ կողմը և տեսա, որ լալիս է: Իմ թաշկինակը, մեկը այն վեց հրաշագեղ թաշկինակներից, որ ինձ նվիրել էր միլեդին, գրված էր գրպանումս: Հանեցի և ասացի Ռոզաննային.

— Գնանք, սիրելիս, նստենք իրար հետ՝ ափին արևն տեղ: Նախ կսրբեմ ձեր աչքերը, իսկ հետո կհամարձակվեմ հարցնել, թե ինչու եք լաց լինում:

Նրբ հասնեք իմ տարիքին՝ կլմանաք, որ նստելը շատ ավելի ժամանակ է խլում, քան այժմ ձեզ թվում է: Մինչ Ես տեղավորվում էի՝ Ռոզաննան աչքերը սրբեց իր թաշկինակով, որը իմից շատ ավելի վատն էր՝ էժանադին, բատիստե: Աղջիկը շատ ընկճված էր երևում և շատ դժբախտ, բայց հենց որ Ես կարգադրեցի՝ նա հնազանդորեն նստեց կողքիս: Եթե կամենում եք շատ շուտ մխիթարել որևէ կնոջ, նրան նրստեցրեք ձեր ծնկներին: Ես հիշեցի այս ոսկի օրերը, բայց Ռոզաննան նանսի չէ, ահա թե ինչ:

— Հիմա ասացեք, սիրելիս, — շարունակեցի Ես, — ի՞նչն է ձեր լացի պատճառը:

— Անցած տարիները, միստր Բետտերեջ, — հանգիստ պատասխանեց Ռոզաննան: — Որտեղից-որտեղ մեկ էլ տեսար հիշում եմ անցած կյանքս:

— Բավ է, բավ է, սիրելիս, — ասացի Ես: — Ձեր անցած կյանքն ամբողջութամբ շտկված է: Դուք պետք է մոռանաք այն:

Նա բռնեց սերթուկիս դարձածալը: Ես փնթի ծերուկ եմ և երբ ուզում եմ, խմում՝ թափում եմ վրաս՝ կեղտոտում շոքերս: Սպասուհիներից մերթ մեկը, մերթ մյուսը ժամանակ առ ժամանակ մաքրում է շոքերս: Նախօրյակին Ռոզաննան սերթուկիս դարձածալի կեղտաբիծը հանեց ինչ-որ մի նոր բաղադրանքով, որը հանում է ամեն մի կեղտաբիծ: Յուրը դուրս եկավ, բայց մի մուգ կետ մնաց մահուդի վրա: Աղջիկը մատնացուցց արեց այդ տեղը և գլուխն օրորեց:

— Կեղտաբիծը հանված է, — ասաց նա, — բայց տեղը դեռ երևում է, միստր Բետտերեջ, տեղը երևում է:

Մարդու համար այնքան էլ հեշտ չէ իր սեփական սերթուկի առիթով անսպասելիորեն արված դիտողությունը պատասխանել: Այդ աղջկա մեջ ինչ-որ մի բան այդ պահին ինձ



ստիպեց առանձնապէս խղճալ նրան: Նա մուգ շագանակագույն գեղեցիկ աչքեր ուներ, թեև ինքը գեղեցիկ չէր ընդհանրապէս, և ինձ նայում էր իմ երջանիկ ծերութեան հանդեպ ու իմ անվան հանդեպ մի տեսակ հարգանքով, որպէս մի բանի, որին ինքը երբեք հասնել չի կարող. և իմ ծերունական սիրտը կարեկցանքով լցվեց մեր երկրորդ աղախնի հանդեպ: Քանի որ նրան մխիթարելու ընդունակ չէի զգում ինձ, ապա մնում էր միայն մի բան անել՝ նրան տանել ճաշելու:

— Օգնեցեք վեր կենամ,— ասացի ես:— Դուք ուշացել եք ճաշից, Ռոզաննա, և ես եկել եմ ձեր ետեկից:

— Դուք, միստր Բետտերեզ,— ասաց նա:

— Ձեր ետեկից ուղարկել էին Նանսիին,— շարունակեցի ես,— բայց մտածեցի, որ ձեր հասցեին ուղղված փոքրիկ կշտամբանքն ավելի լավ կընդունեք ինձնից:

Փոխանակ օգնելու, որ կանգնեմ, խեղճ աղջիկը կամացուկ սեղմեց ձեռքս: Նա աշխատում էր զսպել արցունքները ու կարողացավ, և դա ինձ դուր եկավ:

— Շնորհակալ եմ, միստր Բետտերեզ,— ասաց նա:— Այսօր ճաշել չեմ ուզում, թույլ տվեք ավելի շատ նստեմ այստեղ:

— Ինչո՞ւ եք սիրում այստեղ լինել,— հարցրի ես:— Ի՞նչ է ձեզ ստիպում մշտապէս այս տխուր տեղը գալ:

— Ինչ-որ մի բան ինձ քաշում բերում է այստեղ,— ասաց աղջիկը, մատով նախշեր գծելով ավազի վրա:— Ես աշխատում եմ չգալ այստեղ՝ բայց չեմ կարողանում: Երբեմն...— կամացուկ ավելացրեց նա, ասես վախենալով իր սեփական երեւակայութունից,— երբեմն, միստր Բետտերեզ, ինձ թվում է, թե այստեղ ինձ սպասում է իմ գերեզմանը:

— Ձեզ սպասում է տապակած ոչխարի միսը և խոզածարսով պուդինգը,— ասացի ես:— Հիմա ևեթ գնացեք ճաշելու: Ահա թե ինչ է ստացվում, Ռոզաննա, երբ սոված փորին փիլիսոփայում ես:

Ես խոսում էի խիստ, իսկապէս զայրանալով (իմ տարիքում) մոտալուտ մահից խոսող քսանհինգամյա կնոջ վրա:

Նա, կարծես, ասածներս չէր լսում: Ձեռքը դրեց ուսիս և չթողեց որ վեր կենամ:

— Ինձ թվում է, այս տեղը կախարդել է ինձ,— ասաց

նաւ— Ես այս տեղը երազում տեսնում եմ ամեն գիշեր, սրտ մասին եմ մտածում, երբ նստում եմ կար անելու: Դուք գիտեք, միստր Բետտերեջ, որ ես շատ երախտապարտ եմ. դուք գիտեք, որ ես աշխատում եմ արժանի լինել ձեր բարութեանն ու իմ նկատմամբ միլիոնի վստահութեանը: Բայց երբեմն ինքս ինձ հարցնում եմ՝ արդո՞ք չափից ավելի հանգիստ ու լավ չէ այստեղի կյանքն ինձ նման մի կնոջ համար այն բանից հետո, որ ապրել եմ էս: Սպասավորների շրջանում ես ինձ ավելի մենակ եմ զգում, քան երբ այստեղ եմ, գիտակցելով, որ ես նրանց նման չեմ: Միլեդին չգիտեմ, ուղղիչ տան պետք չգիտեմ, թե ազնիվ մարդիկ ինքնին ինչ ահա՛վոր կըշտամբանք են ինձ եման մի կնոջ համար: Մի նախատեք ինձ, սիրելի, բարի միտոր Բետտերեջ: Ես իմ դործը կատարում եմ, այնպես չէ՞: Խնդրում եմ, միլիոնի շատեք, թե ես դժգոհ եմ: Ես գոհ եմ ամեն ինչից: Երբեմն հոգիս անհանգիստ է, ահա բոլորը... — Նա ձեռքը վերցրեց ուսիցս և հանկարծ մատնացույց արեց ավազները: — Նայեցեք, — ասաց նա, — դարմանալի չէ՞, արդո՞ք: Մարսափելի չէ՞ արդո՞ք: Ես մի քսան անգամ տեսել եմ սա, բայց և սա նորութուն է ինձ համար, կարծես սրանից առաջ երբեք չեմ տեսել այս բոլորը:

Ես նայեցի այնտեղ, ուր մատնացույց էր անում նա: Սկզբի էր մականթացութունը, և ահա՛վոր ավազն սկսել էր ցնցվել: Նրա դարձնազույն զանգվածը դանդաղորեն բարձրանում էր, իսկ մի փոքր անց ամբողջութեամբ ցնցվեց:

— Գիտե՞ք ինչի նման է սա, — նորից ուս բռնելով, ասաց Ռոզաննան: — Գիտե՞ք, թե ինչ է թվում. թվում է, թե մի հարյուր մարդ շնչահեղձ է լինում այս ավազի տակ. մարդիկ ջանում են դուրս գալ մակերես, բայց ավելի ու ավելի են սուղվում նրա ահա՛վոր խորխորատը: Մի քար գցեք, միստր Բետտերեջ... Մի քար գցեք, և նայենք, թե ավազն ինչպես այն կբաշի իր մեջ:

Ա՛յ քեզ խելագար խոսքեր: Ահա թե ինչպես է քաղցած ստամոքսը ներգործում անհանգստացած հոգու վրա: Իմ պատասխանն արդեն (ճիշտ է, խիստ, բայց, հալատացնում եմ ձեզ, այդ խնդ՞ աղջկա օգտին) լեզվիս վրա էր, երբ այն անակնկալ կերպով կասեցրեց ավազաբլուրներին ետևից լրավող մի ձայն, որ, անունս տալով, կանչում էր ինձ:

— Բիտտերե՛ջ,— գոռում էր այդ ձայնը։— Որտե՞ղ եք։

— Այստե՛ղ եմ,— ի պատասխան գոռացի ես, չհասկա-  
նալով, թե ով կարող էր լինել կանչողը։

Ռողաննան վեր թռավ տեղից և սկսեց նայել այն ուղղու-  
թյամբ, որտեղից լսվում էր ձայնը։ Ես էլ արդեն պատրաստ-  
վում էի վեր կենալու, բայց այդ պահին ինձ վախեցրեց ազ-  
ջըկա դեմքի անակնկալ փոփոխությունը։

Նրա դեմքը ծածկվեց այնպիսի մի սքանչելի վարդադույ-  
նով, որպիսին առաջնորում երբեք չէի տեսել նրա մոտ, նա  
կարծես ոտքից-գլուխ փայլեց անխոս և ուրախ դարձանքից։

— Այդ ո՞վ է,— հարցրի ես։

Ռողաննան իմ հարցը կրկնեց։

— Օ՛ր։ Այդ ո՞վ է,— կամացուկ ասաց նա, ալիւլի շուտ՝  
ինքն իրեն, բան ինձ հետ խոսելով։

Ես շրջվեցի ու նայեցի այն կողմը։ Ավազաբլուրները՝ ետե-  
վից հայտնվեց մի երիտասարդ՝ փայլուն աչքերով, բաց  
դարչնագույն հրաշալի կոստյումով, նույնպիսի ձեռնոցներով  
ու լայնեզր զլխարկով, մերակի մեջ վարդ և դեմքին այնպիսի  
մի ժպիտ, սրբ կարող էր ի պատասխան նույնիսկ Սրերուն  
ավաղները ժպիտն առաջացնել։ Մինչ ևս կհասցնեի ոտքի  
կանգնել՝ նա թռավ ինձ մոտ ավաղի վրա, օտարերկրացու սո-  
վորությունը փաթաթվեց վզոյս և այնքան ամուր, որ քնչ  
մնաց շունչս փչելի։

— Սիրելի Բիտտերե՛ջ,— ասաց նա,— ևս ձեզ պարտք  
եմ յոթ շիլլինգ և վեց պենս։ Հիմա պետե՛ք, թե ով եմ ես։

— Տե՛ր աստված, փրկի՛ր մեզ ու ողորմյա։

Դա միտար Զրենկլին Բլեկն էր, որ մեր սպասածից շորտ  
ժամ շուտ էր ժամանել։

Նախքան կհասցնեի որևէ խոսք ասել՝ տեսա, որ միտար  
Ֆրենկլինը դարձանքով Ռողաննային է նայում։ Նրա օրինա-  
կին հետևելով՝ ես նույնպես նայեցի աղջկան։ Սա առաջվա-  
նից ալիւլի շուտ կարմրեց, թերևս այն պատճառով, որ նկա-  
տեց միտար Ֆրենկլինի հայացքը. հետո շրջվեց և հանկարծ,  
ինձ համար միանգամայն անհատկահալի շփոթալթյամբ, հե-  
ռացավ մեղմից, հրամեշտ շտալով երիտասարդ ջինսպենեին  
և ոչ մի խոսք չտեսելով ինձ, մի բան, որ ամենևին նման չէր

նրան. նրանից ավելի քաղաքավարի ու բարեկիրթ ազախին զժվար էր գտնել:

— Ի՞նչ տարօրինակ աղջիկ է,— ասաց միստր Ֆրենկլին-նրո:— Կուզեի իմանալ, թե ինչ զարմանալի բան գտավ իմ մեջ:

— Ենթադրում եմ, սըր,— պատասխանեցի ես, ծաղրելով մեր երիտասարդ ջենտլմենի մայրցամաքային դաստիարակութունը,— նրան զարմացրեց ձեր արտասահմանյան փայլը:

Ես այստեղ մեջ բերեցի միստր Ֆրենկլինի անփույթ հարցը և իմ հիմար պատասխանը ի մխիթարություն և խրախուսանք բոլոր հիմար մարդկանց, բանդի նկատել եմ, որ սահմանափակ մարդկանց համար մեծ մխիթարություն է այն բանի գիտակցումը, որ իրենցից խելոքներն էլ, տոթի ղեպքում, իրենցից ավելի լավ չեն վարվում: Ոչ արտասահմանյան զարմանալի դաստիարակություն ունեցող միստր Ֆրենկլինի մտքով, ոչ էլ իմ մտքով, որ տարիքս առել եմ և փորձ ու բնածին խելք ունեմ, շանցավ, թե ինչ էր նշանակում Ռոզաննա Սպիրմանի անհասկանալի շփոթությունը: Դեռ ավադարչուրների ետևում չէր անհետացել աղջկա մոխրագույն թիկնոցը՝ մենք արդեն դադարել էինք նրա մասին մտածելուց: Իսկ ի՞նչ էր նշանակում դա,— բնականաբար կհարցնեք դուք: Կարդացեք, իմ լավ բարեկամ, համբերությամբ, և, զուցե, խղճաբ Ռոզաննա Սպիրմանին, այնպես, ինչպես ես խղճացի նրան, երբ իմացա ամբողջ ճշմարտությունը:

## Գ Լ Ո Ւ Յ V

Երբ մենք մենակ մնացինք՝ ես նախ և առաջ ավազի վրայից վեր կենալու հրրորդ փորձը կատարեցի: Միստր Ֆրենկլինը չթողեց:

— Այս շարագուշակ տեղը մի առավելություն ունի,— ասաց նա,— մենք այստեղ մենակ ենք: Մի՛ վեր կացեք, բնատեղեք, ես մի բան պետք է ասեմ ձեզ:

Մինչ նա խոսում էր՝ հս նայում էի նրան և աշխատում էի նմանություն գտնել իմ հիշողության մեջ մնացած տղայի և

իմ առջև կանդնած տղամարդու միջև։ Տղամարդն ինձ շփոթեցրել էր։ Որքան էլ նայում էի՝ այնուամենայնիվ հազիվ էի կարողանում ճանաչել տղայի կարմիր այտերը, ինչպես և նրա մանկական նկարը։ Այժմ միտքը Ֆրենկլինի դեմքը գունատ էր, իսկ կզակը, ի դարմանս և ի հիասթափությունն իմ, ծածկված էր շաղանակագույն խուճուճ մորուքով ու բեղերով։ Նրա աշխույժ խոսակցությունը շատ հաճելի էր ու զրավիչ, ես դրան համաձայն եմ, բայց այն չէր կարող համեմատվել նրա հրեմենի անկաշկանդ վարվեցողության հետ։ Եվ մի բան էլ, որ ավելի վատ էր. նա խոստացել էր դառնալ բարձրահասակ, և խոստումը չէր կատարել։ Նա ճկուն էր, վայելչագեղ և ամրակաղմ, բայց միջին հասակից մի երկու մատ պակաս էր։ Մի խոսքով, նա բուլտրովին ի դերև էր հանել իմ սպասումները։ Տարիները նախկինից ոչինչ չէին թողել նրա մեջ, բացի շիտակ, պարզ հայացքից։ Դրանով ես նորից ճանաչեցի մեր սիրելի սղային և դրանով էլ եղբայրակեցի իմ զննումները։

— Բարի եք եկել հարազատ վայրերը, միտքը Ֆրենկլին։— Շատ ավելի հաճելի է տեսնել, որ մեր սպասածից մի քանի ժամ ավելի շուտ եք եկել։

— Ես շուտ գալու պատճառ եմ ունեցել, միտքը Բետտերեջ,— պատասխանեց միտքը Ֆրենկլինը։— Կասկածում եմ, որ վերջին երեք-չորս օրում, Բետտերեջ, Լոնդոնում հետևել են ինձ, և ես ոչ թե վերջին զնացքով, այլ առավոտյան զնացքով եմ եկել, որովհետև կամեցել եմ խույս տալ շարագուշակ արտաքինով մի օտարերկրացուց։

Այս խոսքերը չափազանց զարմացրին ինձ, Կալթակի արագությամբ մտքովս անցան երեք աճպարարները և Պեննյոպեի ենթադրությունները, որ նրանք կարող են ինչ-որ վնաս հասցնել միտքը Ֆրենկլին Բլեկին։

— Ո՞վ է ձեզ հետևել, սրբ, և ինչո՞ւ,— հարցրի ես։

— Ինձ պատմեք այն երեք հնդիկների մասին, որ այսօր եղել են ձեզ մոտ,— իմ հարցին ուշադրություն չդարձնելով՝ շարունակեց միտքը Ֆրենկլինը։— Գուցե, Բետտերեջ, իմ օտարերկրացին և այն երեք աճպարարները ազգակիցներ են։

— Իսկ դուք ինչպե՞ս իմացաք աճպարարների մասին, սրբ,— հարցրի ես, հարցին պատասխանելով հարցով։

Ես հասկանում եմ, որ դա շատ վատ խոսելաձև էր։ Բայց

չէ՞ որ դուք շատ բան չիք սպասում մարդկային խեղճ անձնավորությունից, հետևաբար շատ բան մի սպասեք նաև ինձնից։

— Ես տեսա Պենելոպեին, — շարունակեց միստր Ֆրենկլինը, և նա ինձ պատմեց։ Ձեր աղջիկը խոստանում էր լավիկը դառնալ, Բեատրիչը, և իր խոսքը կատարել է։ Պենելոպեն փոքրիկ կհանչներ ունի ու փոքրիկ ոտքեր։ Մի՞թե հանգուցյալ միսիս Բեատրիչն այս անգնահատելի առավելություններն ունեցել է։

— Հանգուցյալ միսիս Բեատրիչը բազմաթիվ պակասություններ է ունեցել, սրբ, — ասացի ես։ — Դրանցից մեկը, եթե թույլ կտաք հիշատակել, այն էր, որ նա միշտ շեղվում էր։ Նա ավելի շուտ նման էր ճանձի, քան կնոջ. նա չէր կարողանում որևէ բանի վրա կենտրոնանալ։

— Նա ինձ շատ կսազեր, — նկատեց միստր Ֆրենկլինը։ — Ես նույնպես ոչ մի բանի վրա չեմ կարողանում կենտրոնանալ։ Բեատրիչը, դուք առաջվանից ավելի սրամիտ եք դարձել։ Ձեր աղջիկն այդ մասին ասաց, երբ ես նրան հանգամանորեն հարցուփորձում էի աճպարարներից։ «Հայրիկը ձեզ ամեն ինչ կպատմի, սրբ, նա իր տարիքի համեմատ դարձանալի մարդ է և շտեսնված է արտահայտվում», — Պենելոպեի սեփական խոսքերն են. այս ասելիս նա սքանչելիորեն շիկնեց։ Ձեզ չափազանց հարգելով հանդերձ, ես ինձ չզսպեցի և... Ի դեպ, դա դատարկ բան է. ես Պենելոպեին գիտեմ նրա երեսա ժամանակից, և նա ինձ համար չի վատացել... Եկեք լրջորեն խոսենք։ Ի՞նչ էին անում այստեղ աճպարարները։

Ես այնքան էլ գոհ չէի իմ աղջկանից. ո՞չ նրա համար, որ միստր Ֆրենկլինին թույլ էր տվել համբուրել իրեն. դա միստր Ֆրենկլինին կարելի է, այլ նրա համար, որ ինձ ստիպել էր այս հիմար պատմությունն անել։ Սակայն ուրիշ ճար չկար, ստիպված էի ամեն ինչ հանգամանորեն վերապատմել։ Իմ խոսելուն համեմատ միստր Ֆրենկլինի աշխուժությունը կորչում էր։ Նա նստել էր հոնքերը կիտած ու մորուքն էր ձգձգատում։ Երբ վերջացրի՝ նա կրկնեց այն երկու հարցը, որ զբլխավոր աճպարարը տվել էր տղային, հավանաբար նրա համար, որպեսզի դրանք լավ տպավորեր իր հիշողության մեջ։

— «Ա՛յս, թե մեկ ուրիշ ճանապարհով է այսօր գալու անգլիացիներն: Այն բանը անգլիացու մո՞տ է, թե ոչ»: Ենթադրում եմ,— ասաց միստր Ֆրենկլինը՝ գրպանից հանելով կնքված մի փոքրիկ ծրար,— թե ինչ է նշանակում այն բանը, այն բանը, Բետտերեջ— նշանակում է իմ քեռի Հեռնկաստլի նշանալիոր արմաստը:

— Տե՛ր իմ աստված, սըր,— բացակասնչեցի ես:— Ինչպե՞ս է ձեր ձեռքն ընկել մեղսագործ գնդապետի արմաստը:

— Մեղսագործ գնդապետն իր կտակում արմաստը նվիրել է իր քրոջ աղջիկ Ռեչելին՝ սրա ծննդյան օրվա առթիվ,— պատասխանեց միստր Ֆրենկլինը,— իսկ հայրս, որպես մեղսագործ գնագապետի կտակակատար, ինձ հանձնարարեց այդ նվերը բերել այստեղ:

Նթե Երերուն ավագներն անձայն ուշադող ծովը հանկարծ իմ աչքի առաջ ցամաքի վերածվեր, շեմ կարծում, թե ինձ ավելի շատ կգարմացներ, քան միստր Ֆրենկլինի ասածը:

— Գնդապետն արմաստը կտակել է միսս Ռեչելին, — բացակասնչեցի ես:— Ձեր հայրն էլ, սըր, գնդապետի կտակակատարն է: Ինչով ուզում եք կարող եմ գրազ գալ, միստր Ֆրենկլին, որ ձեր հայրը նույնիսկ ունեկիով չէր կամենա դիպչել գնդապետին:

— Լա՛վ ասացիք, Բետտերեջ: Ի՞նչ վատ բան կարելի է ասել գնդապետի մասին: Նա պատկանել է ձեր ժամանակին և ոչ թե իմ: Ինձ պատմեք, ինչ որ գիտեք նրա մասին, իսկ ես ձեզ կպատմեմ, թե հայրս ինչպես դարձավ նրա կտակակատարը, և հետո էլի որոշ բաներ: Իմ քեռի Հեռնկաստլի և նրա արմաստի մասին մի քանի նոր և ոչ այնքան լավ բաներ իմացա Լոնդոնում և կուղերի իմանալ՝ կհաստատե՞ք դրանք, թե ոչ: Դուք հիմա նրան անվանեցիք «մեղսագործ»: Իմ հին բարեկամ, փոքրիկ ձեր հիշողությունը և ինձ ասացեք՝ ինչո՞ւ:

Տեսնելով, որ նա լուրջ է խոսում, նրան պատմեցի այն բոլորը, ինչ որ գիտեի:

Ահա այստեղ միայն ու միայն ձեզ համար արվող իմ պատմության իսկությունը: Ուշադիր եղեք, թե չէ դուք բոլորովին կշփոթվեք, երբ մենք խորանանք այդ պատմության մեջ: Գլխից դուրս գցեք երեխաներ, ճաշ, նոր գրիարկ և ամե-

նայն բան: Աշխատեցե՞ք մոռանալ քաղաքականութիւնը, ձիերը, Սիթիի բորսային կուրսը և ձեր ակումբի անախորժութիւնները: Հույս ունե՞մ՝ չե՞ք բարկանա իմ համարձակութեան վրա. ես սա գրում եմ միայն նրա համար, որպեսզի շարժեմ ձեր հետաքրքրութիւնը, սիրելի ընթերցող: Աստված իմ: Մի՞թե ես ձեր ձեռքին չեմ տեսել մեծագույն հեղինակներին և մի՞թե չգիտեմ, թե ինչպիսի հեշտութեամբ է շեղվում ձեր ուշադրութիւնը, երբ այն ձեզնից խնդրում է գիրքը և ոչ թե մարդ:

Վերևում արդեն հիշատակել եմ Միլեդիի հոր՝ կատաղի բնավորութիւն և Երկար լեզու ունեցող ծեր լորդի մասին: Նա ընդամենը հինգ երեխա է ունեցել: Նախ՝ Երկու որդի, հետո, բավականաչափ երկար ժամանակ անց, կինը իրար ետևից երեք աղջիկ է ծնել նրա համար. ինչպէս արդեն հիշատակվել է, իմ տիրուհին եղել է երեքից ամենափոքրն ու ամենալավը: Երկու որդիներից մեծը՝ Արթուրը, ժառանգել է հոր տիտղոսն ու կայքը: Երկրորդը, բարեծնունդ Ջոնը, ստացել է մի հրաշալի կարողութիւն, որ նրան թողել է մի ազգական, և մտել է զինվորական ծառայութեան:

Վատն է այն թուշուք, որը կեղտոտում է իր սեփական բուշնը: Հեռնկաստիների ազնիվ գերդաստանը ես համարում եմ իմ բուշը և շնորհ կհամարեմ, եթե ինձ թույլ շտան բարեծնունդ Ջոնին վերաբերող մանրամասնութիւնների մեջ մըտնել: Խորապէս համոզված եմ, որ նա աշխարհում երբևէ եղած մեծագույն սրիկաներից մեկն է: Նա ծառայութիւնն սկսել է գվարդիական գնդում: Նա պետք է այդտեղից հեռանար նախքան կյանար իր քսաներկու տարին. թե ինչ պատճառով՝ լուր է: Զինվորական խիստ կարգապահութիւնը բարեծնունդ Ջոնի ճաշակով չէր եղել: Նա մեկնել էր Հնդկաստան՝ վառողի հոտ քաշելու և տեսնելու, թե արդո՞ք այնտեղ էլ խիստ է: Ինչ վերաբերում է քաջութեանը, ապա պետք է արժանին հատուցել նրան և արդարացի լինել, նա ցլաշան, կովարար աքաղաղի և վայրենու խառնուրդ էր: Հեռնկաստը մասնակցել էր Սերինգապատամի գրավմանը: Գրանից հետո շատ չանցած նա փոխադրվել էր մեկ ուրիշ գունդ, իսկ հետագայում՝ նաև մի երրորդ գունդ: Այստեղ ստացել էր գընդապետի աստիճան, արևահարվել էր և վերագարձել Անգլիա:



Նա վերադարձել էր այնպիսի համբավով, որ նրա առջև փակվել էին բոլոր հարազատների դռները. միլեդին (որ նոր էր ամուսնացել) առաջինը հայտարարեց (հասկանալի է, իր ամուսնու համաձայնությամբ), որ իր եղբայրը երբեք չի մտնի իր տունը: Թեև գնդապետի անվան վրա շատ բծեր կային, ևս կճիշատակեմ միայն մեկը, որ նրա վրա թողել էր Լուսնաքարը:

Ասում են, թե նա, շնայած իր խիզախությանը, ոչ ոքի չէր խոստովանում, թե ինչ ճանապարհով էր տիրացել հնդկական այդ թանկարժեք քարին: Նա երբեք չէր փորձել վաճառել այժմաստը, փողի կարիք չունենալով և դրա մասին շատ ծեծելով (դարձյալ պետք է արդարացի լինել նրա նկատմամբ): Նա ոչ որի չէր նվիրել այն և ոչ մի կենդանի արարածի ցույց չէր տալիս: Ոմանք ասում էին, թե իբր վախենում է, որ դրա պատճառով ղեկավարությունը կարող է անախորժությունների մեջ գցել իրեն. ոմանք էլ (որ չգիտեին այդ մարդու բնավորությունը) պնդում էին, թե նա վախենում է, որ, ալմաստը ցույց տալով, կարող է կյանքով վարձահատույց լինել դրա համար:

Այս վերջին խոսակցությունների մեջ, կարող է պատահել, ինչ-որ շափով ճշմարտություն կար: Թեև չի կարելի ասել, թե նա վախենում էր, բայց թե Հնդկաստանում իրոք երկու մասհափորձ էր կատարվել նրա վրա, և բոլորը հաստատ համոզված էին, որ Լուսնաքարն էր պատճառը: Երբ գնդապետը վերադարձել էր Անգլիա, և բոլորն սկսել էին նրանից խուսափել, դա դարձյալ վերագրվել էր Լուսնաքարին: Գնդապետի կյանքի գաղտնիքը նրան խանգարում էր ամեն բանում, այն նրան վտարել էր հայրենակիցների միջավայրից: Տղամարտիկ նրան չէին թողնում իրենց ակումբները. կանայք (իսկ նրանք քիչ չէին), որոնց հետ նա ուզում էր ամուսնանալ, մերժում էին նրան. ընկերներն ու ազդակաճները, փողոցում նրան հանդիպելիս, հանկարծ դառնում էին կարճատես:

Մեկ ուրիշն այդպիսի դժվարին կացության մեջ կաշխատեք արդարանալ մարդկանց առջև: Բայց զիջելը, նույնիսկ, երբ ինքը իրավացի չէր, և երբ ամբողջ հասարակությունը ծառայեց էր իր դեմ, բարեձնունդ Ձոնի սովորության մեջ չկար: Նա ալմաստը իր մոտ էր պահում Հնդկաստանում, կա-

մենալով ցույց տալ, որ ստանձամ լինելուց չի վախենում: Նու  
ալմաստը իր մոտ պահեց Անգլիայում, համենալով ցույց տալ,  
որ արհամարհում է հասարակական կարծիքը: Ահա ձեզ այդ  
մարդու դիմանկարը, ինչպես կատվի վրա. բնավորություն՝  
ամեն ինչին հակառակ գնացող, և դեմք, թեև գեղեցիկ, բայց  
դիվային արտահայտությունք:

Ժամանակ առ ժամանակ նրան վերաբերող բաղմատե-  
սակ լուրեր էին հասնում մեզ: Պատմում էին, թե իբր սիսել է  
ափիոն ծխել և հին գրքեր հավաքել. իբր ինչ-որ տարօրինակ  
քլմիական փորձեր է կատարում. իբր Նոնդոնի ամենակաս-  
կածելի ետնախորշերում հարբում ու ղվարճանում է ամենա-  
ցածր մարդկանց հետ: Այս բոլորով հանդերձ, գնդապետը  
միայնակ, արատավոր, խորհրդավոր կյանք էր վարում. մի  
անգամ, միայն մի անգամ եմ ես նրան երես առ երես տեսել՝  
նրա Անգլիա վերադառնալուց հետո:

Այժմ նկարագրածս ժամանակից մի երկու տարի առաջ և  
իր մահից մեկուկես տարի առաջ գնդապետը հանկարծ եկավ  
Լոնդոն՝ միլեդիի տուն: Դա միսս Ռեչելի ծննդյան օրն էր, հու-  
նիսի քսանմեկը, և ի պատիվ այդ օրվա, սովորականի պես,  
հյուրեր էին հավաքվում: Սպասավորը եկավ ինձ տասց, թե  
ինչ որ պարոն է կամենում ինձ տեսնել:

Նախասրահ մտնելով՝ տեսա գնդապետին, նիհարած, ծե-  
րացած, հյուժված ու բրջատ, բայց առաջվա պես հանդուգն ու  
չար:

— Գնացեք բրջոս մոտ, — ասաց նա, — և դեկուցեք, որ  
եկել եմ շնորհավորելու իմ քրոջ աղջկա ծննդյան օրը:

Նա արդեն մի քանի անգամ նամակով փորձել էր հաշտ-  
վել միլեդիի հետ, միայն նրա համար (հաստատ համոզված  
եմ դրանում), որպեսզի անախորժություն պատճառեր նրան:  
Բայց մեր տուն նա եկել էր առաջին անգամ: Ըս ուզում էի  
նրան ասել, թե միլեդիի մոտ հյուրեր կան: Բայց նրա դեմքի  
դիվային արտահայտությունը վախեցրեց ինձ: Գնացի նրա՝  
գնդապետի, հանձնարարությունը հաղորդելու և, իր իսկ  
ցանկությունքով, թողեցի, որ պատասխանի սպասի: Նախա-  
սրահում: Սպասավորները, հեռու կանգնած, աչքները չուկ էին  
նրա վրա, ասես նա բայցող դժոխային մերենա լինե՞ր՝ լցված  
վառարով ու կտորակով, պատրաստ պայթելու ամեն րոպե:

Միլեդին նույնպէս գերդաստանին հատուկ տաքարյունություն ունի, միայն թե՛ մի քիչ, ո՞չ ավելի:

— Գնդապետ Հեռնկատուին հաղորդեցեք, — ասաց նա, երբ նրան հայտնեցի իր եղբոր հանձնարարությանը, — որ միսս Վերինդերը զբաղված է, իսկ ես շեմ ուզում նրան տեսնել:

Ես աշխատում էի միլեդիին համոզել, որ ավելի քաղաքավարի պատասխան տա, իմանալով, որ գնդապետը չի երկրպագում այն զսպվածութունը, որին սովորաբար ենթարկվում են ջենտլմենները: Բոլորովին անօգուտ: Գերդաստանին հատուկ տաքարյունությունն անմիջապես իջավ իմ գլխին:

— Երբ ինձ պետք է ձեր խորհուրդը, — ասաց միլեդին, — գիտեք, որ ինքս եմ այն հարցնում: Հիմա ես ձեզ շեմ հարցնում:

Այս հանձնարարութեամբ իջա ներքև, այն փոփոխված ձևով հաղորդելու համարձակութեան վերցնելով ինձ վրա:

— Միլեդին և միսս Ռեչելը ցավում են, որ զբաղված են, գնդապետ, — ասացի ես, — և խնդրում են ներել, որ իրենք ձեզ տեսնելու պատիվը չեն ունենա:

Սպասում էի, որ նա կբռնկի նույնիսկ այսպիսի քաղաքավարութեան դեպքում, որ ես հաղորդեցի միլեդիի պատասխանը: Ի վարմանս իմ՝ այդպիսի բան տեղի չունեցաւ. զքնդապետն ինձ վախեցրեց՝ դա բնական հանգստութեամբ ընդունելով: Նրա մոխրագույն, փալլուն աչքերը մի սլահ հասկեցին վրաս. նա ծիծաղեց, ոչ բարձրաձայն, ինչպէս ուրիշ մարդիկ, այլ քթի տակ, կամացուկ և սարսափելի շարութեամբ:

— Շնորհակալ եմ, Բեռտերեզ, — ասաց նա: — Ես շեմ մտառնա քրոջս աղքկա ծննդյան օրը:

Այս ասելով՝ նա շրջվեց կրունկի վրա ու դարս եկավ անից:

Երբ մեկ տարի անց նորից եկավ միսս Ռեչելի ծննդյան օրը, լսեցինք, որ գնդապետը ծանր հիվանդացել է: Կես տարի հետո, այսինքն՝ նկարագրածս ժամանակից կես տարի առաջ, միլեդին նամակ ստացավ մի շատ հարգելի քահանայից: Նամակը ընտանեկան երկու զարմանալի նօրություն էր հաղորդում: Նախ, որ գնդապետը մահվան մահճում ներել է իր

բրոջը. երկրորդ, որ նա ներել է նաև մնացած բուրբին և շատ խրատական մահ ընդունել: Ինքս (չնայած եպիսկոպոսներին ու քահանաներին) ոչ կեղծ հարգանք եմ տածում եկեղեցու նկատմամբ, բայց համոզված եմ, որ բարեծնունդ Ջոնը մըշտուպես եղել է սատանայի իշխանութեան տակ և որ այդ նողկալի մարդու կյանքում վերջին նողկալի արարքը եղել է այն (ներողութուն եմ խնդրում), որ խաբել է քահանային:

Ահա միտար Ֆրենկլինին արածս պատմութեան էութիւնը: Ես նկատեցի, որ պատմութիւնս շարունակելուն համեմատ նա ավելի ու ավելի ուշադիր է լսում և որ այն հաղորդումը, թէ ինչպես քույրը գնդապետին չէր ընդունել քրոջ աղջկա ծննդեան օրը, ըստ երևույթին, նպատակին դիպած կրակոցի պես զարմացրեց միտար Ֆրենկլինին: Թեև նա այդ բանը շխոստովանեց, բայց ես նրա դեմքից բավականաչափ պարզ աեսա, թէ ինչպես դա անհանգստացրեց նրան:

— Բեատերեջ, դուք պատմեցիք այն ամենը, ինչ որ գիտեիք,— նկատեց նա:— Այժմ հերթը իմն է: Բայց, նախքան պատմելը, թէ ինչպիսի հայտնագործութիւններ եմ արել Լոնդոնում և ինչպես եմ խառնվել արմաստի հետ կապված այս գործի մեջ, կուզեի իմանալ հետևյալը: Իմ հին բարեկամ, ձեր դեմքից երևում է, որ դուք կարծես այնքան էլ չեք հասկանում, թէ ուր է տանում մեր զբոսը: Արդ՞յո՞ք ինձ խաբում է ձեր դեմքը:

— Ոչ, սըր,— պատասխանեցի ես:— Իմ դեմքը, զոնե սովյալ պահին, ճշմարտութիւնն է ասում:

— Ուրեմն,— ասաց միտար Ֆրենկլինը,— կաշխատեմ, նախքան մեր շարունակելը, ձեզ համոզել, որ կիսեք իմ տեսակետը: Տեսնում եմ երեք շատ լուրջ հարց՝ կապված իմ պարմուհի Ռեշելի ծննդեան օրը գնդապետի արած նվերի հետ: Ուշադիր լսեք ինձ, Բեատերեջ, և մատների վրա հաշվեք, եթէ դա ձեզ կօզնի,— ասաց միտար Ֆրենկլինը, որոշ բավականութիւն գտնելով իր սեփական հեռատեսութիւնը ցուցադրելու մեջ, մի բան, որն ինձ հիշեցրեց անցած ժամանակները, երբ նա փոքրիկ տղա էր:— Հարց առաջին. արդ՞յո՞ք գնդապետի արմաստը դավադրութեան առարկա է եղել Շնդկաստանում: Հարց երկրորդ. արդ՞յո՞ք դավադրութիւնը գնդապետի արմաստի ետեից դնացել է Անգլիա: Հարց երրորդ. արդ՞յո՞ք

Վերապահանք խմացել է, որ դավադրութիւնը հետեւել է այժմստին, և արդյո՞ք նա միտումնաւոր կերպով չէ անախորժութիւններն ու վտանգը ժառանգութեան թողել իր քրոջը՝ անմեղ դստեր միջոցով: Ահա թե ինչ էմ ուզում խմանալ, բեռտերիչ: Զվախենաք:

Նրա համար հեշտ էր ինձ նախադգուշացնել այն ժամանակ, երբ ես արդեն վախեցած էի:

Եթե նա իրավացի է, ապա հանկարծ մեր անզլիական խաղաղ տունն է խուժել հնդկական սատանայական այժմստը, իսկ նրա հետ մեկտեղ՝ դավադրութիւնը կենդանի խարդավանների, սրտնց մեղ վրա բաց է թողել մեռելի վրիժառութիւնը: Ահա թե ինչպիսին էր մեր վիճակը, որ պատկերացավ ինձ միտար Ֆրենկլինի վերջին ասածների մեջ: Լաված բան է արդյոք՝ տասնիններորդ հարյուրամյակում, նկատեցեք, առաջադիմութեան դարում, բրիտանական սահմանադրութեան ըրարներինց օգտվող երկրում: Ոչ ոք երբեք այդպիսի բան չի լսել, հետևաբար և ոչ ոք չի կարող հավատալ գրան: Այնուամենայնիվ, ես կշարունակեմ իմ պատմութիւնը:

Երբ դուք կվախենաք այն աստիճան, ինչ աստիճան վախեցա ես, այդ վախը գրեթե անխուսափելիորեն կանդրադառնա ձեր ստամոքսի վրա և ձեր ուշադրութիւնը կշեղվի, դուք կսկսեք շուռումուռ գալ: Ես առանց ձայն հանելու անհանգիստ շարժվեցի՝ ավագի վրա նստած: Միտար Ֆրենկլինը նկատեց, թե ինչպես էի կռվում անհանգստացած ստամոքսիս հետ կամ, եթե կուզեք, ոգու հետ, իսկ դա նույն բանն է,— և, կանգ առնելով հենց այն պահին, երբ նա պատրաստվում էր սկսել իր պատմութիւնը, կտրուկ հարցրեց ինձ.

— Զեղ ի՞նչ պատահեց:

Ի՞նչ էր պատահել ինձ: Նրան շատացի, իսկ ձեզ կասեմ թաքուն: Ես ուզեցի ծխամորձս ծխեցնել և «Ռոբինզոն Կրուզոն» կարդալ:

## Գ Լ ո լ խ V I

Ոչինչ չասելով իմ ցանկութիւնների մասին, միտար Ֆրենկլինին հարգալից լսեցրեցի շարունակել: Միտար Ֆրենկլինը

լինելը պատասխանեց. «Շուտումու մի եկեք, Բեատերեջ» — և շարունակեց:

Մեր երիտասարդ ջննտլմենի առաջին բառերն ինձ պարզաբանեցին, որ մեզ սագործ զնդապետին և ալմաստին վերաբերող հայտնագործութիւնն ինքը արել է (մեզ մոտ գալուց առաջ) Հեմստեզում իր հոր փաստաբանին այցելելիս: Միստր Ֆրենկլինը, երբ իրենք ճաշից հետո երկուսով նստած են եղել, բերնից թոցրել է, որ հայրը իրեն հանձնարարել է միսս Ռեչելին նվեր տանել սրա ծննդյան օրվա առթիւ: Խոսքի մեջ փաստաբանը միստր Ֆրենկլինին ասել է, թե ինչ նվեր է դա և ինչպես են բարեկամական հարաբերութիւններ ստեղծվել հանդուցյալ գնդապետի և միստր Բլեկ-ավազի միջև: Այդ հանգամանքներն այնքան արտասովոր են, որ կասկածում եմ, թե կարող եմ դրանք իմ լիզվով հաղորդել: Գերազատում եմ միստր Ֆրենկլինի հայտնագործութիւնը շարադրել իր խի բառերով:

— Հիշում եք այն ժամանակները, Բեատերեջ, — տասց նա, — երբ հայրս փորձում էր ապացուցել իր իբավունքները այդ շարաբաստիկ դքսութիւն նկատմամբ: Հենց այդ ժամանակ էլ Հնդկաստանից վերադարձել է իմ քեռի Հեմստեզումը: Հայրս իմացել է, որ նրա մոտ ինչ-որ թղթեր կան, որոնք կարող են օգտակար լինել իր դատավարութիւն համար: Գնացել է զնդապետի մոտ՝ պատրվակելով, թե եկել է շնորհավորելու նրա Անգլիա ժամանելու Բայց գնդապետին խաբելն այնքան էլ հեշտ չէր: «Ձեզ ինչ-որ բան է հարկավոր, — ասել է նա, — հակառակ դեպքում, դուք չէիք փորձի ինձ մոտ գալով՝ վտանգել ձեր անունը»: Հայրս հասկացել է, որ իրեն այլևս ոչինչ չի մնում անել, քան անկեղծորեն խոստովանել ամեն ինչ. անմիջապես ասել է, որ թղթեր են պետք իրեն: Գնդապետը խնդրել է մտածելու համար մի օր ժամանակ տալ իրեն: Պատասխանն ստացվել է չափազանց տարօրինակ նամակի ձևով, որն իր բարեկամ փաստաբանը ցույց տվեց ինձ: Գնդապետն սկսել էր նրանից, որ ինքը հորս կարիքն ունի և նրան առաջարկում է բարեկամական ծառայութիւն՝ ծառայութիւն գիմացի: Պատերազմի պատահականութիւնները (նրա սեփական արտահայտութիւնն է) իրեն դարձրել են աշխարհի ամենամեծ ալմաստներից մեկի տերը, և ինքը հիմք

ունի կարծելու; որ ոչ ինքը, ոչ էլ իր թանկարժեք քարը ապահովաթյան մեջ չեն լինի ոչ մի տան մեջ, աշխարհի ոչ մի մասում, Եթե ինքը այդ քարը թողնի իր մոտ Այս հանդամանքն իրեն հարկադրում է ալմաստը պահպանության հանձնել մեկ ուրիշ մարդու: Այդ մարդն անձամբ ոչ մի վտանգը ենթակա չէ: Նա կարող է թանկարժեք քարը պահպանության հանձնել ցանկացած տեղում, ինչպես, օրինակ, բանկիրի կամ ոսկերիչի, որո՞ք թանկարժեք իրերի պահպանման հատուկ գանձատուն ունեն: Իսկ նա ինքն անձամբ ոչ մի անելիք չի ունենա: Նա (կամ անձամբ, կամ էլ հուսալի հավատարմատարի միջոցով) ամեն տարի վաղօրոք պայմանավորված հասցեով, վաղօրոք պայմանավորված օրերին գնդապետից կատանա սովորական ծանուցագրով մի նամակ, որ ինքը դեռ կհնդսնի է: Այն դեպքում, եթե պայմանավորված օրը նամակ չտացվի, գնդապետի լուսթյունը կարող է հաստատ նշան լինել այն բանի, որ ինքը սպանված է: Այդ դեպքում, բայց ոչ այլ կերպ, ալմաստի հետագա բախտի վերարերջալ որոշակի հրահանգները, որ կնքված են ու պահվում են նրա հետ մեկտեղ, պետք է բացվեն ու ճշգրտորեն կատարվեն: Եթե հայրս համաձայնի ընդունել այդ տարօրինակ հանձնարարությունը, ապա գնդապետի թղթերը կդրվեն նրա արամագրության տակ: Ահա թե ինչ էր պարունակում նամակը:

— Իսկ ի՞նչ արեց ձեր հայրը, սըր,— հարցրի ես:

— Ի՞նչ արեց,— կրկնեց միտոր Ֆրենկլինը:— Ասեմ, բն ինչ արեց: Նա գործադրեց գնդապետի նամակը գնահատելու մի շատ լավ եղանակ, որը կոչվում է ողջամտություն: Նա հայտարարեց, որ այդ ամենը կատարյալ հիմարություն է: Հնդկաստանում կատարած իր ճանապարհորդությունների ժամանակ՝ հնդապետը ինչ-որ տեղ ինչ-որ մի անպետ ապուկու կտոր է գտել, որը և ալմաստի տեղ է ընդունել: Իսկ ինչ վերարերում է սպանվելու երկյուղին և իր կյանքն ու այդ ապակու կտորը պահպանելու համար նախադաշնություններ ձեռնարկելուն, ապա այժմ տասնիններորդ հարյուրամյակին է, և յուրաքանչյուր ողջախոհ մարդ բավական է, որ դիմի ստիկանությունը և... Հայտնի է, որ գնդապետն արդեն շատ տարիներ էր, ինչ ափիոն էր օգտագործում, և եթե թանկարժեք թղթերը ձեռք բերելու միակ եղանակն այն էր, որ ավիո-

նի հետեանքով առաջացած գառանցանքը որպէս փաստ ընդունվեր, ապա հայրս միանգամայն պատրաստ էր հաճույքով ստանձնելու այդ ծիծաղելի պատասխանատուութիւնը, բա՛ն որ այն ոչ մի հողս չէր բերում իր հետ: Ալմաստը և կնքված հրահանգները դրվել են բանկիրի գանձատունը, իսկ զնդուպետի նամակները, որոնք պարբերաբար հաղորդում էին, որ նա ողջ է, ստանում և բացում էր մեր ընտանիքի փաստաբան, հորս հավատարմատար միստր Բրեֆը: Ոչ մի խելաչի մարդ այսպիսի կացութեան մեջ չէր կարող ուրիշ կերպ նայել այս դործին: Մեզ հալանահան է թվում միայն այն, Բեռտերը, որ, մեր սեփական կենսափորձի համաձայն, մենք էլ ենք խորհրդավորին և արտասովորին հավատում միայն այն ժամանակ, երբ դրանց մասին կարդում ենք լրագրում:

Ինձ համար պարզ դարձավ, որ միստր Ֆրենկլինը հնքը զնդապետի վերաբերյալ իր հոր կարծիքը համարում է հապճեպ ու սխալ:

— Իսկ զուր ի՞նչ կարծիք ունեք այդ դործի մասին, սքր,— հարցրի ես:

— Թույլ տվեք նախ զնդապետի հետ կապված պատմութիւնը վերջացնեմ,— պատասխանեց միստր Ֆրենկլինը:— Անգլիական մտքի համար բնորոշ է սիստեմի բացակայութիւնը, և ձեր հարցը, իմ հին բարեկամ, դրա օրինակն է: Երբ մենք դադարում ենք մեքենաներ սարքելուց, մենք (մտավոր առումով) ամենաանփութ ժողովուրդն ենք ամբողջ աշխարհում:

«Ահա թե ինչ բան է արտասոհմանյան դաստիարակութիւնը,— մտածեցի ես:— Նա, թերևս, Ֆրանսիայում է սովորել ծիծաղել իր սեփական ազգի վրա»:

Մինչդեռ միստր Ֆրենկլինը շարունակում էր ընդհատված պատմութիւնը.

— Հայրս ստացավ հարկավոր թղթերը և այդ պահից ի վեր այլևս չտեսավ իր աներորդուն: Ամեն տարի վաղօրոք պայմանավորված օրերին վաղօրոք պայմանավորված նամակն ստացվում էր զնդապետից և բացվում փաստաբան Բրեֆի կողմից: Ես տեսա այդ նամակներն մի ամբողջ կույտ: Դրանք բոլորն էլ միևնույն հակիրճ գործարար տրտահայտութիւնն էին պարունակում, «Սքր, սա ձեզ կհավաս-



տի, որ ևս դեռ ողջ եմ, թող արձատր մնա նախկին տեղում: Զոն Հեռնկաստը»: Ահա այն բողոքը, ինչ նա գրում էր, և դա շատ խնամքով ստացվում էր նշանակված օրը: Բայց մի ութ ամիս սրանից առաջ նամակի ձեռն առաջին անգամ փոխվեց: Այժմ այն ասում էր. «Սըբ, ասում են, թե ես մեռնում եմ: Եկեք ինձ մոտ և օգնեք ինձ կազմելու կտակս»: Փաստաբան Բրեֆը գնացել է և զնդապետին գտել քաղաքամերձ փոքրիկ առանձնատանը (սրան կից հողերով), որտեղ զնդապետը մեռնակ ապրում էր այն օրից ի վեր, որ հեռացել էր Հնդկաստանից: Նա պահում էր շներ, կատուներ ու թռչուններ՝ ընկերակցության համար: Բայց նրա հետ չկար ոչ մի մարդ արարած, եթե չհաշվենք կողո-զնացող սպասուհուն, որը անտեսություն էր հոգում և բժշկին: Կտակը շատ պարզ էր կազմված: Գնդապետը իր կարողություն մեծ մասը ծախսել էր քիմիական փորձերի վրա: Նրա կտակը սպառվում էր երեք կետով, որ նա թելադրել էր անկողնում, դեռևս միտքը սթափ և հիշողությունը տեղը: Առաջին կետում նա ապահովում էր իր կենդանիների պահպանումն ու խնամքը: Երկրորդ կետով փորձառական քիմիայի ամբիոն էր հիմնվում հյուսիսային համալսարաններից մեկում: Երրորդում զնդապետը կուսնաքարը որպես նվեր կտակում էր իր դարմուհուն՝ իր բոլոր ազըրկան՝ սրա ծննդյան օրվա առթիվ, այն պայմանով, որպեսզի հայրս լինեք նրա կտակակատարը: Սկզբում հայրս հրաժարվեց: Բայց մի փոքր մտածելուց հետո՝ տեղի տվեց. մասամբ վստահ լինելով, որ կտակակատարի պարտականությունը ոչ մի հոգս չի պատճառի իրեն, մասամբ էլ փաստաբանի կողմից Ռեչելի օգտին արված ակնարկի պատճառով, թե, այնուամենայնիվ, արձատր կարող է ինչ-որ բան արժենալ:

— Սըբ, զնդապետը չի՞ ասել, — հարցրի ես, — թե ինչ պատճառով է ինքը արձատր կտակել միսս Ռեչելին:

— Նա ոչ միայն ասել է, այլև դա բացատրել է իր կտակում, — պատասխանեց միտքը Ֆրենկլինը: — Ես վերցրել եմ քաղվածքը, որը հիմա կտեսնեք: Մի շտապեք, Բետտերեջ: Ամեն ինչ պետք է հերթով ընթանա: Գուր լսեցիք զնդապետի կտակի մասին, հիմա պետք է լսեք, թե ինչ եղավ նրա մահից հետո: Չկականությունները պահանջեցին, որպեսզի

նախֆան կտակի ներկայացուցիչը արմատաբ գնահատելի: Քուրբ  
ոսկերիչները, որոնց դիմեցին այդ նպատակով, անմիջապես  
հաստատեցին գնդապետի հայտարարությունը, թե դա աշ-  
խարհի ամենախոշոր արմատներից մեկն է: Ճշգրիտ գնա-  
հատությունը բավականաչափ լուրջ դժվարություն ներկա-  
յացրեց: Քարի մեծությունը նրան դարձրել էր ֆենոմեն ալ-  
մաստների մեջ, գույնը նրան դասել էր հույժ առանձնահա-  
տուկ քարերի շարքը և, ի լրումն դրա, պարզվեց, որ քարը  
թիրութուն ունի՝ բիժ հենց կենտրոնում: Նույնիսկ այս թե-  
րությամբ հանդերձ արմատը ամենացածր դնով արժեք  
բաժն հազար ֆունտ: Պատկերացրեք հորս զարմանքը. նա քիչ  
մնաց հրաժարվեք կտակակատարի պարտականությունից, քիչ  
մնաց մեր ընտանիքի ձեռքից բաց թողնելը այդ հոյակապ  
թանկարժեք քարը: Այդ գործի հարուցած հետաքրքրությունը  
նրան զրդեց բացելու արմատի հետ մեկտեղ սահմանը կրնե-  
ված հրահանգները: Փաստաբանը այդ հրահանգներն ինձ  
ցույց տվեց այլևայլ թղթերի հետ մեկտեղ և, իմ կարծիքով,  
դրանք տալիս են գնդապետի կյանքին սպառնացող դավադ-  
րության բանալին:

— Հետևապես դուք, սըր, կարծում եք, — ասացի ես, — որ  
դավադրություն եղե՞լ է:

— Հորս գերազանց ողջախոհությունը շունենալով, — պա-  
տասխանեց միտար Ֆրենկլինը, — կարծում եմ, որ գնդապետի  
կյանքն իրոք վտանգի տակ է եղել, ինչպես որ ինքն ասում էր:  
Կնքված հրահանգը բացատրում է, թե, այնուամենայնիվ, ին-  
չու է նա հանդիստ մեռել իր անկողնում: Նրա բռնի մահվան  
դեպքում (այսինքն՝ այն դեպքում, եթե նշանակված օրը սպա-  
մանավորված նամակը չստացվեք նրանից) հայրս պետք է  
կուսնաքարը գաղտնի ուղարկեք Ամստերդամ՝ նշանավոր  
հղիբողի, որպեսզի սա այն բաժաններ չորս կամ վեց տոան-  
ձին քարերի: Այդ բարերը պետք էր վաճառել ցանկացած  
դնով, իսկ ստացված փողն օգտագործել փորձատական քի-  
միայի այն տմբիտներ հիմնելու վրա, որի մասին հետո գնդա-  
պետը հիշատակել է իր կտակում: Այժմ, Բեռտեբեջ, ապա մի  
լարեք ձեր սուր միտքը և պատկերացրեք, թե ինչ եղբակա-  
ցության են հանգեցնում գնդապետի ցուցումները:

Նա անմիջապես լարեցի միտքս, Բայց միտար Ֆրենկլինին

հատուկ էր անգլիական դանդաղկոտությունը, և նա ամեն ինչ իրար խառնեց մինչև որ ասաց, թե ինչը պետք էր տեսնել:

— Նկատի ունեցեք,— ասաց միստր Ֆրենկլինը,— որ ադամանդի ամբողջականությունը հմտորեն կախման մեջ էր դրվել գնդապետի կյանքը պահպանելուց: Նա չէր գոհացել նրանով, ինչ ասել էր թշնամիներին, որոնցից երկյուզ էր կրում. «Ապանեք ինձ՝ և դուք ավելի մոտիկ շեք լինի արմաստին, քան հիմա եք: Այժմ ասան անտեղ է, որտեղից դուք չեք կարող այն վերցնել. բանկիրի գանձատանը»: Սրա փոխուրեն ասել էր. «Ապանեք ինձ՝ և այդ արմաստը կդադարի նախկին արմաստը լինելուց. նրա նույնությունը կոչնչանա»: Ի՞նչ է ասում սա:

Այս խոսքի վրա, ինչպես ինձ թվաց, ինձ լուսավորեց օտարերկրացիներին հատուկ հրաշալի խորաթափանցություն բռնկումը:

— Գիտեմ,— ասացի ես:— Այդ նշանակում է, որ քարի ղինը կիջնի և շարագործները հիմար վիճակի մեջ կբնկնեն:

— Ամենևին ոչ,— ասաց միստր Ֆրենկլինը:— Նա դա իմացել էմ: Բիծ ունեցող արմաստը՝ բաժանված առանձին քարերի, ավելի թանկ կարժենա, քան ամբողջականը, այն պարզ պատճառով, որ շորս-վեց սքանչելի ադամանդները պետք է ավելի թանկ արժենան, քան մի խոշոր քարը, որ բիծ ունի: Եթե շահի նպատակ հետապնդող հասարակ գողությունը լիներ դավադրության նպատակը, ապա գնդապետի հրահանգները վճռականորեն արմաստը է՛լ ավելի գրավիչ կդարձնեին գողերի համար: Իրա համար կարելի էր ավելի շատ փող ստանալ, իսկ վաճառելն էլ շատ ավելի հեշտ կլինեեր, եթե այն Ամստերդամի վարպետների ձեռքով անցած լիներ:

— Տե՛ր աստված, սրբ,— բացականչեցի ես:— Իսկ ո՞րն է հղել դավադրությունը:

— Հնդիկների նյութած դավը, որոնց օրոհ պատկանել է արմաստը,— ասաց միստր Ֆրենկլինը:— Հիմնված է հին հնդկական ինչ-որ սնահավատության վրա: Այսպիսին է իմ կարծիքը՝ հաստատված ընտանեկան մի փաստաթղթով, որն այս պահին ինձ մոտ է:

Այժմ ես հասկացա, թե ինչու երեք հնդիկ աճապարարների

հայտնվելը մեր տան մոտ. ուշադրութեան. արժանի. հանդա-  
մանք է թվացել միտար Ծրենկլիինին:

— Ես չեմ ուզում իմ կարծիքը ձեզ պարտադրել, — շարու-  
նակեց միտար Ծրենկլիինը: — Հին հնդկական սնահավատու-  
թեան ընտրյալ սպասավորների վերաբերյալ միտքը, ընտրու-  
յալներ, որ, շնայած բոլոր դժվարութեաններին ու վտանգնե-  
րին, իրենց նվիրել են սրբազան թանկարժեք քարը վերա-  
դարձնելու խնդրին և սպասում են առաջին հարմար առիթին,  
կարծում եմ միանգամայն ներդաշնակ է արևելյան ցեղերի  
համբերատարութեան և արևելյան կրօնների ազդեցութեան  
մասին մեր իմացածին: Ես վառ երևակայութեամբ ունեցող  
մարդ եմ, և մտազործը, հացթուխն ու հարկային տեսուչը  
միակ ճշմարտանման իրականութեանը չեն թվում ինձ: Թող  
իմ կուսակցությունը զնահատվի ինչպես հարմար է. անցնենք միակ  
գործնական հարցին, որը վերաբերում է մեզ: Արդյո՞ք Լուս-  
նաքարի հետ կապված դավադրութեանը կշարունակի մնալ  
նաև գնդապետից հետո: Եվ արդյո՞ք գնդապետն այդ մասին  
գիտեր, երբ նվեր էր թողնում իր զարմուհուն, նրա ծննդյան  
օրվա առթիվ:

Ես սկսում էի հասկանալ, որ այդ բանը այժմ ամենից  
շատ վերաբերում է միլիդիին և միտս Ռեչելին: Այժմ միտար  
Ծրենկլիինի ասած ոչ մի խոսքը չէր վրիպում իմ ուշադրու-  
թեանից:

— Լուսնաքարի պատմութեանն իմանալուց հետո, — շար-  
ունակեց նա, — ես այնքան էլ չէի ուզում այն բերել այս-  
տեղ, — բայց միտար Բրեքին ինձ հիշեցրեց, որ վերջապես  
ինչ-որ մեկը պետք է քեզուս ժառանգութեանը հանձնի մո-  
րաբերոջ աղջկան, և որ ես դա կարող եմ անել ճիշտ այնպես,  
ինչպես և ամեն մի ուրիշ մարդ: Երբ ես բանկից վերցրի ալ-  
մաստը՝ թվաց թե փողոցում ինչ-որ մի քրջոտ թխամորթ  
մարդ հետևում է ինձ: Գնացի հորս մոտ իրերս վերցնելու և  
այնտեղ գտա մի նամակ, որն անսպասելիորեն ինձ պահեց  
լոնդոնում: Այժմաստը վերցրած վերադարձա բանկ և նորից  
տեսա այդ քրջոտ մարդուն: Այսօր առավոտյան նորից ալ-  
մաստը բանկից վերցնելով՝ այդ մարդուն հանդիպեցի երրորդ  
անգամ, խուլս տվի նրանից և ցերեկային գնացքի փոխարեն  
մեկնեցի առավոտյան գնացքով (նախքան նա կկարողանար իմ

հետքը գտնել)։ Ահա ես այստեղ եմ ալմաստով, և երկուսս էլ ողջ և անվնաս ենք։ Եվ ո՞րն էր առաջին նորութիւնը, որ լսեցի։ Լսեցի, որ այստեղ են եղել թափառաշրջիկ երեք հնդիկները, և որ Լոնդոնից իմ այստեղ գալը և այն, որ պետք է ինձ մոտ լինեի, նրանց խոսակցութեան ղլխավոր ատարկան են եղել այն ժամանակ, երբ նրանք կարծել են, թե իրենք մեկնակ են։ Չեմ ուզում նկարագրել, թե ինչպէս են նրանք թանաք լցրել տղայի ափի մեջ և հրամայել, որ տեսնի մեկ ուրիշ տեղում գտնվող մարդուն։ Այս բանը, որ ես հաճախ եմ տեսել Արևելքում, թե իմ, թե ձեր կարծիքով պարզապէս անպարարութիւն է և ոչ ավելիք։ Հարցը, որ այժմ մենք պետք է վճռենք, հետևյալն է՝ արդյո՞ք ես սխալմամբ մեծ նշանակութիւն չեմ տալիս սարգ պատահականութեանը, թե՞ մենք խսկապէս ապացուցներ ունենք, որ հնդիկները գտել են Լուսնաբարի հետքը հենց այն պահից, երբ այն վերցվել է բանկից։

Բայց ոչ հա, ոչ ես, կարծես, մտադիր չէինք զբաղվել այդպիսի հետազոտութեամբ։ Մենք նայեցինք իրար, հետո մակընթացութեանը, որ ավելի ու ավելի էր ծածկում երեքուն ավազները։

— Ի՞նչ եք մտածում, — հանկարծ հարցրեց միսոր Ֆրենկլինը։

— Մտածում եմ, սրբ, — սլատասխանեցի ես, — որ կուզեի ալմաստը շարտել երեքուն ավազի մեջ և դրանով մեկընդմիջտ լուծել հարցը։

— Եթե ձեր գրպանում բավականաչափ փող կա Լուսնաբարի դիմաց վճարելու համար, — պատասխանեց միսոր Ֆրենկլինը, — ապա ասացեք, Բետտերեջ, և ես ալմաստը վնաստեմ ավազի մեջ։

Հետաքրքիր է նշել, թե ինչպէս ամենադատարկ կատակն անդամ կարող է թեթևացնել ձեզ, երբ անհանգիստ է ձեր հոգին։ Մեզ շատ զվարճայի թվաց միսս Ռեչլի օրինական սեփականութիւնը ոչնչացնելու և միսոր Բլեկին որպէս կտակակատարի ահավոր անախորժութիւններ պատճտելու միտքը, թեև հիմա չեմ կարող հասկանալ, թե ինչ ծիծաղելի բան կար այստեղ։

Միսոր Ֆրենկլինն առաջինը նորից փերագարձով խոսույ-

ցության առարկային: Նա գրուածից հանեց մի ծրար, բացեց  
և ինձ մեկնեց մեջք գրված թուղթը:

— Բևտտերեշ,— ասաց նա,— մենք պետք է ի շահ իմ  
մտրաբրոշ քննարկենք այն հարցը, թե ինչն է գնդապետին  
ստիպել սա ժառանգութեան թողնել իր դարմուհուն: Մտաբե-  
րեցեք լեզի Վերինդերի վերաբերմունքը իր եղբոր նկատմամբ  
այն ժամանակից ի վեր, որ եղբայրը վերադարձել էր Անգլիա,  
մինչև այն պահը, երբ նա ձեզ ասաց, թե կհիշի ջրոջ աղջկա  
ծննդյան օրը: Եվ կարդացեք սա:

Նա ինձ տվեց գնդապետի կտակից արված քաղվածքը:  
Այժմ դա գրված է իմ առջև, և ես այն կարտագրեմ ձեզ հա-  
մար:

«... Երրորդ և վերջինը, նվիրում և կտակում եմ իմ դար-  
մուհի Ռեչել Վերինդերին, իմ քույր աչրի Զուլիա Վերինդերի  
միակ աղջկան (այն դեպքում, եթե նրա մայրը, անվանյալ  
Զուլիա Վերինդեր, ողջ լինի իմ մահից հետո Ռեչել Վերինդեր  
անվանյալի հաջորդ ծննդյան օրը) ինձ պատկանող և Արեւել-  
քում լուսնաբար անունով հայտնի դեղին ալմաստը, այն  
պայմանով, որ նրա մայրը, անվանյալ Զուլիա Վերինդըլը,  
ողջ լինի հիշյալ օրը: Եվ իմ կտակակատարին հանձնարա-  
բում եմ կամ անձամբ, կամ էլ որևէ վստահելի միջնորդի մի-  
ջոցով, որին նա կրնարի, արմաստը հանձնել իմ վերոհիշյալ  
գարմուհի Ռեչելի ձեռքը, իմ մահից հետո նրա ծննդյան առա-  
ջին իսկ օրը և, եթե հնարավոր է, իմ քույր, վերոհիշյալ Զու-  
լիա Վերինդերի ներկայութեամբ: Եվ ես կամենում եմ, որ-  
պեսզի իմ վերոհիշյալ ջրոջը ճշգրիտ պատճենի միջոցով հա-  
ղորդվի իմ կտակի երրորդ ու մերջին կետը, որ ես արմաստը  
նվիրում եմ նրա դուստր Ռեչելին ի նշան այն բանի, որ լիո-  
վին ներում եմ այն մնասի համար, որ նրա արարքները հասց-  
րել են իմ անվանը, և հատկապես ի ապացույց այն բանի, որ  
ևս, ինչպես վայել է մեռնողին, ներում եմ ինձ որպես սպա-  
չի ու ջենտլմենի այն ժամանակ հասցված վիրավորանքը, երբ  
նրա ծառան, նրա կարգադրութեամբ ինձ ներս շթողեց նրա  
դստեր ծննդյան օրը»:

Դրան հետևում էր ցուցում, թե ինչպես վարվել, եթե կտա-  
կարարի մահվան պահին միտղիին կամ միսս Ռեչելը ողջ չեն  
լինի. այսինքն, ծրարված հրահանգի համաձայն, արմաստը

պետք էր ուղարկել Հոլանդիա: Դրա վաճառքից ստացված փողերը, ինչպես նաև երկրորդ կետում հիշատակված փողերը, նախատեսվում էին հյուսիսային համալսարաններից մեկի քիմիկոսների ամբիոնի համար:

Ես թուղթը վերադարձրի միտար Ֆրենկլինին, բոլորովին չիմանալով, թե ինչ պատասխանեմ նրան: Մինչև այդ պահը ես մտածում էի, ինչպես ձեզ հայտնի է, թե զնդապետը մեռել է նույնքան մեղսագործ ձեռով, ինչպես և ապրել է: Չեմ կարող ասել, թե նրա կտակի պատճենն ինձ ստիպեց փոխել այդ կարծիքը. կասեմ միայն, որ այդ պատճենը տատանման մեջ դրեց ինձ:

— Դե, — հարցրեց միտար Ֆրենկլինը, — այժմ երբ կարդացել եք զնդապետի սեփական խոսքերը, ի՞նչ կարող եք ասել սրան: Լուսնաքարը մորաքրոջս տուն բերելով ես կորուրեն ծառայում եմ զնդապետի վրիժառույթյանը, թե՞ արդարացնում եմ նրան որպես զոչացած քրիստոնյայի:

— Մանր է պատկերացնելը, սրբ, — սլատասխանեցի ես, — որ նա մեռել է նողկալի վրիժառույթյունը հողում և նողկալի խաբույթյունը շուրթերին: Ընդամարտույթյունը միայն աստծուն է հայտնի: Ինձ մի հարցրեք:

Միտար Ֆրենկլինը կտակից կտրված քաղվածքը պատում ու տրորում էր ձեռքերի մեջ, ասես հույս ունենալով այդ ձեռքով ճշմարտությունը կորզել նրանից: Միևնույն ժամանակ նա զարմանալիորեն փոխվել է: Ուրախ և աշխույժ երիտասարդից այժմ դարձել էր լուսկյաց, լուրջ ու մտախոհ:

— Այդ հարցը երկու կողմ ունի, — ասաց նա. — օբյեկտիվ և սուբյեկտիվ: Որի՞ց սկսենք:

Նա ոչ միայն ֆրանսիական, այլև գերմանական դատարակություն էր ստացել: Մինչև այժմ նա գտնվում էր, ինչպես եթազրում էի, դրանցից առաջինի աղդեցություն տակ: Իսկ հիմա (որքան որ կարող էի հասկանալ) դրան փոխարինել էր երկրորդը: Իմ կյանքի կանոններից մեկն է հետևյալը՝ երբեք չնշել այն, ինչը ես չեմ հասկանում: Այս լնտրեցի օբյեկտիվ և սուբյեկտիվ էությունների միջև ընկած միջինը: Պարզ ասած՝ աչքերս շոճեցի և ոչ մի խոսք չստացի:

— Մի նվիրական իմաստ քաղենք այս բոլորից, — ասաց

միտոր Ֆրենկլինը:— Ինչո՞ւ է քեռիս արժաստը կտակել Ռե-  
չելին: Ինչո՞ւ չի կտակել մորաքրոջս:

— Դա, անշուշտ, դժվար չէ կոահել, սրբ,— պատասխա-  
նեցի հս:— Գնդապետ Հեռնկատուը շատ լավ գիտեր, որ մի-  
լեզին չի կամենա որևէ ժառանգություն ընդունել իրենից:

— Բայց նա որտեղի՞ց գիտեր, որ Ռեչելը նույնպես չի  
հրաժարվի:

— Աշխարհում կա՞ մի երիտասարդ աղջիկ, սրբ, որը կա-  
րողանար դիմանալ Լուսնաբարի պես նվերն ընդունելու պայ-  
թակցությանը:

— Դա սուրչեկտիմ տեսակետ է,—ասաց միտոր Ֆրենկ-  
լինը:— Դա մեծ պատիվ է բերում ձեզ, Բեատերեջ, որ դուք  
ընդունակ եք սուրչեկտիմ տեսակետի: Բայց զնդապետի կտա-  
կի մեջ կա ևս մեկ ուրիշ գաղտնիք, որը մինչև հիմա պար-  
զաբանված չէ. ինչո՞ւ է նա իր քարը Ռեչելին նվիրում նրա  
ծննդյան օրը միայն այն անհրաժեշտ պայմանով, որպեսզի  
նրա մայրը ողջ լինի:

— Ես չեմ կամենում արտատվորել հանգուցյալին, սրբ,—  
պատասխանեցի հս,— բայց եթե նա միտումնավոր կերպով  
հոգսեր է ժառանգություն թողել քրոջը և վտանգ՝ նրա աղջը-  
կա միջոցով, ապա այդ ժառանգության անխուսափելի պայ-  
մանը պետք է լինե՞ր այն, որպեսզի քույրը կենդանի լինե՞ր և  
ապրե՞ր իր համար պատրաստված տառապանքները:

— Օ՛: Ահա թե ինչպիսի դիտավորություններ ևք վերա-  
դրում նրան: Դա դարձյալ սուրչեկտիմ մեկնաբանություն է:  
Բեատերեջ, դուք Գերմանիայում ևղե՞լ եք:

— Ոչ, սրբ: Իսկ ձեր մեկնաբանությունը, թույլ տվեք  
իմանալ:

— Իսկ ինչո՞ւ դուք չեք մտածում,—նկատեց միտոր  
Ֆրենկլինը,— որ զնդապետի նպատակը գուցե եղել է ոչ թե  
քրոջ աղջկան օգուտ տալը, որին նա երբևէ չի տեսել նույ-  
նիսկ, այլ այն, որ քրոջն ապացուցի, թե ինքը ներել է նրան,  
և ապացուցի շատ սիրալիր կերպով՝ նրա աղջկան տրված  
նվերի միջոցով: Սա բոլորովին այլ բացատրություն է ձերի  
համեմատությամբ, Բեատերեջ, և բխում է օբյեկտիվ տեսա-  
կետից: Ինչպես տեսնում եք, մի մեկնաբանությունը կարող է  
արդարացի լինել նույնքան, որքան և մյուսը:



Բանը հատցնելով այսքան հաճելի և հանգստացուցիչ եզրակացութեան, միտար Ծրենկլիներ, ըստ երևույթին, որոշեց, որ ինքը կատարել է իրենից պահանջվող ամեն ինչ: Նա երեսնիվայր փովեց ավազի վրա ու հարցրեց, թե ինչ պետք է անի ինքը հիմա:

Նախքան արտասահմանյան դատարձարանութունների դիմելը, նա իրեն դրսևորեց այնքան խելոք ու հեռատես և ամբողջ ժամանակ այն աստիճան բարձր էր թվում ինձնից այդ հարցում, որ ևս ամենևին պատրաստ չէի անակնկալ փոփոխութեանը, երբ նա, զենքը ցած դնելով, հանկարծ օգնութեան համար դիմեց ինձ: Միայն հետագայում միսս Ռեչելից իմացա (առաջին մարդը, որ արել էր այդ հայտնագործութիւնը), որ միտար Ծրենկլիների մեջ կատարվող տարօրինակ փոփոխութիւններն ու անցումները գալիս էին արտասահմանյան դատարարակութիւնից: Այն հասակում, երբ մենք բոլորս առավել ընդունակ ենք մեր զունավորումն ընդունելու որպէս ուրիշ մարդկանց զունավորման արտացոլում, նրան ուղարկեցին արտասահման, և նա ալնտեղ սպրեց մերթ մի երկրում, մերթ մյուս երկրում և վերջնականապէս ոչ մի զունավորման շենթարկվեց: Սրա հետեանքով նա վերադարձավ իր բնավորութեան բազմատեսակ կողմերով, որոնք շատ, թե քիչ հակասում էին իրար, ասես թե նա ամբողջ կյանքն ապրել էր մշտապէս ինքն իր հետ անհամաձայնութեան մեջ: Նա կարող էր լինել և՛ գործարար մարդ, և՛ ծուլ, բթամիտ և խելացի, միևնույն ժամանակ վճռականութեան և անզորութեան օրինակ: Նա ուներ և՛ ֆրանսիական, և՛ գերմանական, և՛ իտալական կողմեր. հրեմն նույնիսկ կարելի էր նկատել նաև սկզբնական՝ անգլիական հիմքը, մի տեսակ ասելով՝ «Ահա ես, ինչպէս տեսնում եք, խղճալիորէն ազավազված եմ, բայց և այնպէս ինչ-որ բան մնացել է իմ մեջ»: Միսս Ռեչելը սովորաբար ասում էր, թե իտալական կողմը հաղթում էր այն գեպրեքում, երբ նա անսպասելիորէն իջեցնում էր ձեռքերը և իր սովորական դուրեկան հնազանդութեամբ խնդրում ձեռք իր վրայից վերցնել պատասխանատւութիւնը և այն դնել ձեռք ուսերի վրա: Գուր անարդար շէր լինի նրա նկատմամբ, կարծում եմ, եթե եզրակացնէք, որ իտալական կողմը հաղթել է նաև հիմա:

— Դուք ինքներդ պետք է վճուեք, սըր,— ասացի ևս,—  
Բե ինչ պետք է անել հիմա. անշուշտ, ո՛չ ես:

Միստր Չրենկլիֆնը, ըստ երևույթին, շքեկալեց առածնե-  
րիս ամբողջ ուժը. նրա դիրքը նրան խանգարում էր որևէ բան  
տեսնել, բացի գլխավերեում գտնվող երկնքից:

— Ես չեմ կամենում առանց պատճառի վախեցնել մո-  
րաբրոջս,— ասաց նա,— բայց միաժամանակ չեմ կամենում  
նաև նրան թողնել առանց պատշաճ նախադգուշացման: Բեա-  
տերեջ, ասացեք երկու խոսքով, եթե դուք իմ փոխարեն լի-  
նեիրք, ի՞նչ կանեիր:

Նս պատասխանեցի մեկ բառով.

— Կսւլասեիր:

— Պատրաստ եմ ամբողջ հոգով,— ասաց միստր Չրենկ-  
լիֆնը.— Բայց շա՞տ երկար:

Սկսեցի բացատրել միտքս:

— Որքան հասկանում եմ, սըր,— ասացի ևս,— որևէ մե-  
կը պետք է այդ անիծյալ արմատը միսս Ռեչելին հանձնի  
նրա ծննդյան օրը, և այդ բանը դուք կարող եք անել ճիշտ  
այնպես, ինչպես մեկ ուրիշը: Շատ լավ: Այսօր մայիսի  
բսանհինգն է, իսկ ծննդյան օրը հունիսի քսանմեկն է: Մեր  
տրամադրության տակ գրեթե չորս շաբաթ կա: Սպասենք ու  
տեսնենք, թե ինչ կլինի այդ ժամանակամիջոցում, հետո կամ  
կնախադգուշացնենք միլեդիին կամ ոչ՝ նայած հանգամանք-  
ներին:

— Հիանալի՜ է, Բեատերեջ,— բացականչեց միստր  
Չրենկլիֆնը.— Բայց ի՞նչ անենք արմատը մինչև ծննդյան  
օրը:

— Նույնը, ինչ որ արել է ձեր հայրը, սըր,— պատասխա-  
նեցի ևս.— Ձեր հայրը ամլաստր դրել է Լոնդոնի բանկում,  
իսկ դուք դրեք Չրիզինհոլի բանկում:

Չրիզինհոլը մեր մոտակա քաղաքն է, և նրա բանկը նույն-  
քան հուսալի է, որքան և Անգլիական բանկը:

— Ես ձեր փոխարեն, սըր,— ավելացրի ևս,— նախքան  
տիկիկներին վերադառնալը, արմատը կվերցնեի և ձի նըս-  
տած ուղղակի կգնայի Չրիզինհոլ:

Ինչ-որ բան ձեռնարկելու հնարավորությունը, և այն էլ ձի  
նստած, միստր Չրենկլիֆնին ստիպեց անմիջապես ոտքի ել-



նել: նա վեր թռալ տելից և առանց ձևականութեան ստիպեց, որ ես էլ վեր կենամ:

— Բեատիբեշ, դուք ոսկի եք, և ոչ թե մարդ,— ասաց նա:— Գնանք, և կարգադրեք անմիջապես թամբել ձեր ունեցած ձիերից ամենալավը:

Այստեղ, փառք ասածու, արատասհմանչան ամբողջ փայլելի տակից վերջապես երևաց անդլիսկան հիմբը: Դա նույն միտար Ֆրենկլինն էր, որին ես հիշում էի, որը ձիով ճանապարհորդելու մտքից առաջիկա պես աշխուժացավ և ինձ հիշեցրեց հին բարի ժամանակները: Ձի՞ թամբեմ նրա համար: Ես նրա համար տասներկու ձի կթամբելի, միայն թե նա կարողանար բոլորի վրա միանգամից նստել ու սլանալ:

Մենք շտապ վերադարձանք տուն, շտապ կարգադրեցինք թամբել եղած բոլոր ձիերից ամենաարագընթացը, և միտար Ֆրենկլինն արագորեն սլացավ անխճյալ սլմտաբը բանկի դանձարիղը դեհլու: Նրբ լուեց նրա ձիու սմբակների զսվլումը և ես նորից մենակ մնացի, քիչ էր մնում ինքս ինձ հարցնե՞լ արդյո՞ք այս բոլորը երազում չեմ տեսել:

Մինչ ես այդպիսի շփոթութեան մեջ էի և խիստ կարիք ունեի առանձնանալու, որպեսզի կարգի բերեի զգացմունքներս, ինձ ընդառաջ եկավ աղջիկս՝ Պենելոպեն, ճիշտ և ճիշտ ինչպես նրա հանգուցյալ մայրն էր ինձ պատահում աստիճանների վրա, և անմիջապես պահանջեց, որպեսզի իրեն հաղորդեմ միստր Ֆրենկլինի հետ ունեցած իմ խոսակցութունը: Այս հանգամանքներում մնում էր միայն մի բան՝ մարիչով անմիջապես հանգցնել Պենելոպեի հետաքրքրասիրութիւնը: Նրան պատասխանեցի, որ ես ու միստր Ֆրենկլինը զրուցում էինք օտարերկրյա քաղաքականութիւնից և հասանք այնտեղ, որ երկուսս էլ պինդ քննեցինք արևի տակ: Փորձեք այսպիսի պատասխան տալ, երբ ձեր կիներ կամ դուստրը անտեղի հարցով կաշեն ձեզնից, և հավատացած եղեք, որ կնոջական բնական հեղությամբ նրանք կհամբուրեն ձեզ և առաջին իսկ հարմար առիթով նորից կկաշեն ձեզնից:

Մոտենում էր Երեկոն, և միլեդին ու միսս Ռեչելը վերադարձան:

Հարկ չկա ասելու, թե որքան զարմացան նրանք, երբ լսեցին, որ միստր Ֆրենկլին Բլեկը ժամանել է և նորից ինչ-որ տեղ մեկնել ձեռով: Հարկ չկա նաև ասելու, որ նրանք անմիջապես անտեղի հարցեր տվին և՛ որ «օտարերկրյա քաղաքականութիւնն» ու արևի տակ խոր քունը պիտանի չէին նրանց համար: Զկարողանալով որևէ այլ բան հորինել, ասացի, որ միստր Ֆրենկլինի՝ վաղ առավոտյան գնացքով ժամանելը միայն ու միայն պետք է վերագրել նրա որևէ քմահաճույքի: Երբ ինձ հարցրին, միթե նրա ձեռով մեկնելը նույնպէս քմահաճույք է, պատասխանեցի. «Այո, ճիշտ այդպէս», — և, կարծես, շատ հնարամտորեն օձիքս ազատեցի:

Պատվով դուրս գալով այս վիճակից՝ ես էլ ավելի ծանր կացութեան մեջ ընկա, երբ վերադարձա իմ սենյակը: Եկավ Պենելոպեն (կնոջական բնական հեղությամբ) համբուրելու ինձ և (կնոջական բնական հետաքրքրասիրութեամբ) նոր հարց տալու: Այս անգամ նա միայն կամեցավ իմանալ, թե ինչ է պատահել մեր երկրորդ աղախնին՝ Ռոզաննա Սպիրմանին:

Միստր Ֆրենկլինին և ինձ նրերուն ավազներում թողնելով, Ռոզաննան, ինչպես պարզվեց, տուն էր վերադարձել շատ անհասկանալի արամագրությամբ: Նրա դեմքը (եթե հավատանք Պենելոպին) փոխվում էր ծիածանի գույնների պես: Նա առանց պատճառի մերթ ուրախ էր, մերթ տխուր: Նա առանց շունչ քաշելու մի հարյուր հարց էր տվել միստր Ֆրենկլինի Բլեկի մասին և անմիջապես Պենելոպեի վրա բարկացել էր, որ սա ենթադրել էր, թե իբր անծանոթ ջենտլմենը կարող էր հետաքրքրած լինել իրեն: Տեսել էին, թե ինչպես նա, ժպտալով՝ միստր Ֆրենկլինի անունն էր գծել իր աշխատանքային արկղի հատակին: Նրան տեսել էին արցունքն ալքերին, հայելու մեջ իր անճոռնի ուսը զննելիս: Արդյո՞ք առաջնորդում նա ճանաչել էր միստր Ֆրենկլինին: Բուրբուրովին հնարավոր չէ: Արդյո՞ք նրանք իրար մասին որևէ բան լսել էին: Դարձյալ հնարավոր չէ: Ես կարող էի վկայել, որ միստր Ֆրենկլինի շարմանքն անկեղծ էր, երբ նա տեսավ, թե ինչպես է աղջիկն իրեն նայում: Պենելոպեն կարող էր վկայել, որ աղջկա հետաքրքրասիրությունն անկեղծ էր, երբ նա հարցուփորձում էր միստր Ֆրենկլինից: Մեր խոսակցությունը բավականաչափ տխուր էր մինչև այն պահը, երբ աղջիկս հանկարծ ավարտեց այն, անելով մի շատ անհեթեթ ենթադրություն, որպիսին ես չէի լսել իմ ամբողջ կյանքում:

— Հայրիկ,— ամենայն լրջությամբ ասաց Պենելոպեն,— միայն մի բացատրություն է մնում՝ Ռոզաննան առաջին իսկ հայացքից սիրահարվել է միստր Ֆրենկլին Բլեկին:

Գուք լսել եք առաջին իսկ հայացքից սիրահարվող երիտասարդ լքնաղ աղջիկների մասին և դա շատ բնական եք համարել: Բայց որ ուղիղ տնից եկած ազախներ, տղեղ արտաբինով և անճոռնի ուսով, առաջին հայացքից սիրահարվեր իր տիրուհու մոտ հյուր եկած ջենտլմենի՞ն: Այս անհեթեթության նման որևէ բան ցույց տվեք որևէ վեպում, եթե կարող եք: Ես ծիծաղեցի արցունքոտիլու աստիճան: Չգիտեմ ինչու, Պենելոպին սրա համար բարկացավ ինձ վրա:

— Առաջներում ես չեմ նկատել, որ դուք դաժան լինեք, հայրիկ,— հեղությամբ ասաց նա ու հեռացավ:

Աղջկա խոսքերն ասես սառը ջուր լցրին գլխիս: Ինքս ինձ վրա կատաղեցի նրա համար, որ հուզվեցի, երբ նա արտա-

բերեց գրանք, բայց թե դա իրոք այդպես էր: Եթե թույլ կտաք՝ կրօնիկներ մեր պատմութեան առարկան: Ափսոսում հմ, որ հարկադրված եմ գրել այդ մասին, և ոչ առանց պատճառի, ինչպես կտեսնեք հետագայում:

Մութն ընկավ և արգեն հնչեց զանգը, որն ազդարարում էր, թե ժամանակն է հագնելու ու գնալ ճաշի, երբ միստր Ֆրենկլինը վերջապես վերադարձավ Ֆրիդրիկհոլցի: Ես ինքս տաք շուր տարա նրա սենյակը, սպասելով այս արտասովոր երկարատև բացակայությունից հետո լսել որևէ արկածի մասին: Բայց, ի մեծ հիասթափություն ինձ (հավանաբար նաև ձեզ), ոչ մի բան չէր եղել: Նա հնդիկներին չէր պատահել ոչ այնտեղ գնալու ճանապարհին, ոչ էլ վերադառնալիս: Նա էտնաբարր հանձնել էր բանկ, պարդապես ասելով, որ այդ քարը շատ թանկ է, և, ստացականը գրպանը դրած, եկել էր նստիչի իջա, զգալով, որ այժմստի հետ կապված առավոտյան մեր բոլոր տաղնապաներից հետո այս վերջաբանը շատ վիրավորական է:

Թե ինչպես անցավ միստր Ֆրենկլինի հանդիպումը մոտաքրոջ և նրա աղջկա հետ՝ չգիտեմ:

Ես շատ բան կտալի այդ օրը սեղան սպասարկելու համար: Բայց տան մեջ գրավածս դիրքի պատճառով ճաշի սեղանը սպասարկել (բացառյալ ընտանեկան մեծ տոնախմբությունները) կնշանակեր նվաստացնել իմ արժանապատվությունը մյուս ծառաների աչքում. առանց այդ էլ միլեդին գոնում էր, որ բավականաչափ հակված եմ դրան. կարիք չկայ նաև առիթ փնտրել դրա համար: Այդ երեկո «վերին մարզերից» ինձ լսւրեր բերեցին Պենելոպես և մի ծառա: Պենելոպեսն ասաց, որ միսս Ռեչելը երբևէ այդքան խնամքով չի գրադվել իր սանրվածքով և երբևէ այդքան ուրախ ու լավ չի երևացել: Մտան տեղեկացրեց, որ բարձրագիւր անձանց ներկայությամբ հարգալից լրջութեան պահպանելը և ճաշի ժամանակ միստր Ֆրենկլին Ռեչելին սպասավորելը երկու շատ անհամատեղելի բաներ են, որպիսիք ինքը երբևէ տեսել է իր պարտականությունները կատարելիս: Ուշ երեկոյան լսեցինք, թե ինչպես նրանք խաղում էին և զուետներ երգում: Միստր Ֆրենկլինը բարձր էր վերցնում, միսս Ռեչելը՝ էլ ավելի բարձր, իսկ միլեդին գաշնամուրի վրա, նրանց ետևից հա-

նելով, ինչպես որսի ժամանակ, այսպես առած առտուհիք ու ցանկապատերի վրայով, բարեհաջող օգնում էր նրանց, այնպես որ հաճելի էր նրանց լսել սանդղավանդում՝ բաց լուսամուտներից: Էլ ավելի ուշ ժամի ես միտար Ծրենկլիների համար ծխասենյակ տարա սողայաչուր ու վիսկի և տեսա, որ միսս Ռեչելը նրա գլխից դուրս է մղել ավաստը:

— Անգլիա վերադառնալուս պահից ի վեր տեսածս բոլոր աղջիկներից ամենահամայինն է:— Ահա այն բոլորը, որ կարողացա լսել նրանից, մինչ աշխատում էի խոսակցութունը դարձնել ավելի լուրջ բաների շուրջը:

Կեսգիշերին մոտ օգնականիս (ծառա Սամյուելի) հետ մեկտեղ սովորականի պես շրջեցի տան շուրս բոլորը, որպեսզի փակեմ բոլոր դռները: Երբ բոլոր դռներն արդեն փակված էին, բացառությամբ սանդղավանդի վրա բացվող կողքի դռան, Սամյուելին ուղարկեցի քնելու, իսկ ինքս անկողին մտնելուց առաջ դուրս եկա թարմ օդ շնչելու:

Խաղաղ ու տոթ գիշեր էր, երկնքում փայլում էր լիալուսինը: Այնքան խաղաղ էր, որ երբևմն-երբեմն շատ թույլ ու խուլ լսում էի ծովի աղմուկը, երբ ամպերի ծովային ճանրում էր մեր փոքրիկ ծովախորշի մոտի ավազոտ ափը: Սանդղավանդում մութ էր. բայց լուսնի պայծառ լույսը լուսավորում էր պատի երկարությամբ դեպի անկյունը ձգվող ավազածածկ անցուղին: Նախ նայելով երկնքին, իսկ հետո այն կողմ, տեսա մի մարդու ստվեր, որ լուսնի լույսի տակ ընկնում էր գետնին՝ տան անկյունից:

Լինելով ծիր ու փորձված՝ շճայնեցի անծանոթին, բայց քանի որ ես, դժբախտաբար, նաև ծեր ու ծանրաշարժ էի, ավազը խստախտաց ոտքերիս տակ ու մատնեց ինձ: Նախքան ես կամացուկ կհասնեի անկյունը, ինչպես որ մտադիր էի, լոնցի իմ քայլերից ավելի թեթև ոտնաձայներ (և, ինչպես ինձ թվաց, ոչ մեկ զույգ ոտքերի), որոնք հասչապ հեռանում էին: Երբ հասա անկյունը, փախտականները, ովքեր էլ նրբանք լինեին, արդեն անհետացել էին ճանապարհի մյուս կողմի թփուտներում, և պարտեզի այդ մասի խիտ ծառերի ու կանաչների մեջ հնարավոր չէր նրանց տեսնել: Նրանք կարող էին թփուտներից մեր ցանկաօլտնի վրայով հեշտությամբ դուրս գալ ճանապարհը: Եթե մի քառասուն տարով ջահել

վնեի, գուցեն հասցնեի բռնել նրանց, նախքան նրանք կփախչեն մեր սլարտեղից: Իսկ հիմա վերագարձա, որպէսզի նրանց բռնելու ուղարկեմ իմ ոտքերից ավելի ջահել մի զույգ ոտքեր: Ոչ ոքի շանհանգստացնելով, Սամյուելն ու ես վերցրինք հրացանները, սլտավեցինք տան շուրջը, տրնտղեցինք թփուտները: Համոզվելով, որ մեր տիրույթներում թաքնված մարդ չկա՝ վերագարձանք: Անցնելով այն ճանապարհով, որտեղ ստվերներ էի տեսել, հանկարծ նկատեցի, որ ինչ-որ բան է փալում լուսնի լուսավորած ավազի վրա: Այդ առարկան բարձրացնելով՝ տեսա, որ սրվակ է՝ թանձր, հաճելի հոտով, թանաքի պէս սև հեղուկով լցված:

Սամյուելին ոչինչ շատացի: Բայց, հլղելով, թե ինչ էր ասել Պենելոպեն աճաբարների մասին և այն մասին, թե ինչպես էին նրանք թանաքը լցրել տղայի ափի մեջ, անմիջապէս գլխի ընկա, որ ես փախցրել եմ երեք հնդիկներին, որոնք թրև են գալիս տան մոտերքում և աշխատում են իրենց հեթանոսական եղանակով իմանալ, թե այս դիշեր որտեղ է գտնվում արմասը:

## Գ Լ ու յս VIII

Մի պահ դադար տանք այստեղ:

Օգնութեան կանչելով իմ հիշողութեաններն ու Պենելոպեի օրագիրը, տեսնում եմ, որ մենք կարող ենք կանգ չառնել միտար Ֆրենկլին Բլեկի ժամանելու և միաս Բեյլի ծննդյան օրվա արանքում: Այդ ժամանակի մեծ մասն անցավ՝ իր հետ չբերելով հիշատակութեան արժանի ոչ մի բան: Ձեր թույլտվութեամբ և Պենելոպեի օգնութեամբ ես այստեղ կհիշատակեմ միայն մի քանի դեպքեր, որպեսզի հետո շարունակեմ անել յուրաքանչյուր օրվա պատմութեանը, մինչև կհասնենք այն ժամանակին, երբ լուսնաբարը համընդհանուր ուշադրութեան առարկա դարձավ մեր տանը:

Սկսեմ հաճելի բուրոդ թանաքի սրվակից, որ դիշերը գտա ավազածածկ անցուղու վրա:

Հաջորդ առավոտ (ամսի քսանվեցին) այդ կախարդական սրվակը ցույց տվի միտար Ֆրենկլինին և նրան հաղորդեցի



այն, ինչ արդին ձեզ պատմել եմ: Նա որոշեց, որ հնդիկները ոչ միայն հետևել են ավաստին, այլև հիմարութուն են ունեցել հավատալու իրենց կախարհությանը. այս ասելով նա նկատի ուներ տղայի գլխավերևում արվող շարժումները, նրա ափի մեջ թանաք լցնելը և այն հույսը, թե հրեխան կտեսնի բուրբուլին ուրիշ տեղում գտնվող մարդկանց ու առարկաները: Միստր Ֆրենկլինն ինձ ասաց, որ մեզ մոտ էլ, այնպես, ինչպես Արևելքում, կան մարդիկ, որոնք զբաղվում են այդպիսի տարօրինակ աճալարարությամբ (սակայն առանց թանաքի), և որ մենք ֆրանսիական անուն ենք տվել դրան՝ «պայծառատեսության» նման մի բան:

— Հավատացե՛ք,— ասաց միստր Ֆրենկլինը,— հնդիկները համոզված են, թե մենք ավաստը թողել ենք այստեղ, և իրենց պայծառատես տղային հետները բերել են, որպեսզի նա, հենց որ իրենք տուն մտնեն, իրենց ցույց տա դեպի ավաստը տանող ճանապարհը:

— Սըր, դուք ենթադրում եք, որ նրանք կկրկնե՞ն իրենց փորձը,— հարցրի ես:

— Դա կախված է նրանից, թե ինչ կարող է ասել տղան: Եթե նա կարող է տեսնել Ֆրիդինհոլի բանկի հրկաթե սեյֆում գտնվող ավաստը, ապա հնդիկները մի որոշ ժամանակ մ'ը շին անհանգստացնի իրենց այցելութուններով: Եթե նա չկարողանա այդ բանն անել, ապա մի քանի գիշեր էլ չի անցնի, և մենք թփուտներից նրանց փախցնելու նոր առիթ կունենանք:

Ես սպասում էի, որ այդպես էլ կլինի, բայց, տարօրինակ բան. այդ դեպքը իրոք այլևս չկրկնվեց:

Արդյո՞ք աճալարարները քաղաքում լսել էին, որ միստր Ֆրենկլինին տեսել են բանկում, և դրանից հղրակացրել էին, թե տղան իրոք ավաստը տեսել է այնտեղ, որտեղ այժմ գտնվում է այն (մի բան, որին ես րացարձակապես շեմ հավատում), թե դա սոսկ զուգադիպութուն էր, միայն թե մինչև միսս Ռեչելի ծննդյան օրն ընկած շաբաթների ընթացքում ոչ մի հնդիկի ստվեր չերևաց մեր տան մոտերքում: Աճալարարները մնում էին մեր կողմերում, զբաղվում էին իրենց արհեստով, իսկ միստր Ֆրենկլինն ու ես սպասում էինք, թե ինչ կլինի, որոշելով ժամանակից շուտ շանհանգստացնել այդ

խորդավաններին՝ նրանց ցույց տալով մեր կասկածները Երկու կողմերի վարկելակերպի մասին այս հաշվետվութեամբ էլ վերջանում է այն ամենը, ինչ առայժմ կարող եմ ասել հնդիկների մասին:

Ամսի քսանինին միսս Ռեչելը և միսոր Ֆրենկլինը ժառանգական անցկացնելու մի նոր եղանակ մտածեցին, ժամանակ, որը, հակառակ դեպքում, չէին իմանա, թե ինչ անեն: Պատճառներ կան առանձնահատուկ ուշադրութուն դարձնելու նրանց գրաված գբաղմունքի վրա, քանի որ այն կապ ունի ավելի ուշ տեղի ունեցածի հետ:

Ընդհանրապես՝ տերերը վյանքում մի շատ անհարմար օտորջրյա քար ունեն՝ իրենց սեփական պարապութունը: Նրանց կյանքը մեծ մասամբ անցնում է որևէ գբաղմունք որոնելու մեջ. և հետաքրքիր է տեսնել (հատկապես, եթե նրանք հակում ունեն որևէ մտավոր բանի նկատմամբ), թե ինչպես նրանք շատ հաճախ կուրորեն հարձակվում են պարզապես զգվելի որևէ առարկայի վրա: Տասից իննի դեպքում նրանք սկսում են կամ տանջել որևէ մեկին, կամ փշացնել որևէ բան և այդ անելիս հաստատ համոզված են, թե կըրթում են իրենց միտքը, այն դեպքում, երբ նրանք պարզապես միայն իրարանցում են առաջացնում տան մեջ: Ես տեսել եմ (ափսոսանքով պետք է ասեմ), որ տիկնայք էլ, ճիշտ տղամարդկանց պես, օրինակ, ամեն օր գբոսանքի են գնում հաբերի գատարկ տուփերով, և որսում են մտից, բղիղ, սարդ ու գորտ, խակ տուն վերսդառնալուց հետո գնդասեղ են խրում այդ գծբախտների մեջ կամ կտրատում են նրանց առանց փորք-ինչ խղճի խայթ զգալու: Գուր տեսնում եք, թե ինչպես ձեր պարոնը կամ օրիորդը խոշորացնող ապակու միջով գննում է սարգի ներսը, կամ աստիճանների վրա պատահում եք անգլուխ գորտի. խակ երբ գարմանում եք, թե ինչ է նշանակում այդ զգվելի դաժանութունը, ձեզ ասում են, թե երիտասարդ պարոնը կամ երիտասարդ օրիորդը բնական գիտութունների հակում ունի: Երբեմն էլ դարձյալ նկատում եք, թե ինչպես նրանք ժամեր շարունակ, անհեթեթ հետաքրքրասիրութունից մղված, որևէ սուր գործիքով փշացնում են գեղեցիկ ծաղիկները, աշխատելով իմանալ, թե ինչից են սարքված դրանք: Մի՞թե, եթե այդ իմանաք, դրանց գույնն

ավելի կգեղեցկանա, կամ բույրը ավելի հաճելի կլինի: Բայց թե խեղճերը պետք է ժամանակ անցկացնեն, հասկանո՞ւմ եք, պետք է ժամանակ անցկացնեն: Դուք ցեխոտվել եք կամ ցեխից բլիթներ եք թխել, երբ փոքր երեխա եք եղել, իսկ երբ մեծացել եք՝ կեղտոտվում եք գիտությունների մեջ, սարդեր եք կտրատում ու ծաղիկներ փշացնում: Երկու դեպքում էլ ամբողջ գաղտնիքն այն է, որ ձեր խեղճ պարապ գլուխը մտածելու բան չունի, իսկ ձեր խեղճ պարապ թաթիկներն անելիք չունեն: Եվ վերջանում է նրանով, որ դուք սկսում եք ներկերով փշացնել կտավը՝ և ամբողջ տունը լցնել դրանց հստով: Կամ կեղտոտ ջրով լցված ապակու արկղիկի մեջ սկսում եք շերեփուկներ աճեցնել, որոնցից բոլոր տնեցիների սիրտը խառնում է. կամ սկսում եք այս ու այնտեղից քարակտորներ ջոկջկել ու հավաքել, դրանք ցանելով տնային մթերքների վրա, կամ սկսում եք զբաղվել լուսանկարչությամբ, կեղտոտելով ձեր մատները և անիմա կերպով աղավաղելով տան բոլոր մարդկանց ու յուրաքանչյուրի կերպարանքը: Իհարկե, դժվար է այն մարդկանց բանը, որոնք զլխներին կտուր ունենալու, ուտելիք ու հագուստ ունենալու համար պետք է աշխատեն: Բայց այն ամենածանր աշխատանքը, որ երբևէ կատարել եք, համեմատեցեք այն պարապության հետ, որ մարդկանց ստիպում է փշացնել ծաղիկներն ու փորփրել սարդերի փորոտիքը, և շնորհակալ հղեր ձեր բխտավոր աստղից, որ ձեր գլուխը պետք է որևէ բան մտածի, ձեր ձեռքերը պետք է որևէ բան անեն:

Հաճույքով պիտի ասեմ, որ միստր Ֆրենկլինն ու միսս Ռեչելը ոչ ոքի չեն տանջել: Նրանք սահմանափակվել են նրանով, որ իրարանցում են ստեղծել և, պետք է պատշաճը հատուցել նրանց, միայն մի դուռ են փշացրել:

Միստր Ֆրենկլինի ունիվերսալ հանճարը, որ կեղտոտվում էր ամեն ինչի մեջ խառնվելով, կեղտոտվելով հասավ այսպես կոչված «ղեկորատիվ դեղանկարչության»: Նա մեղ հաղորդեց, որ հայտնագործել է ներկը բացելու նոր բաղադրություն. թե այն ինչպես էր պատրաստվում՝ ես չգիտեմ: Իսկ թե ինչով էր աչքի ընկնում այդ բաղադրությունը, կարող եմ ձեզ ասել մեկ բառով՝ գարշահոտություն: Քանի որ միսս Ռեչելն անսպասելի ուղում էր փորձել այդ նոր բաղադրու-

թյունը, միստր Ֆրենկլինը ներկանյութերի համար մարդ-  
ուզարկեց Լոնդոն և բաղադրությունը պատրաստեց այնպի-  
սի փնջով, որ շներն անգամ փոշտում էին սենյակ մտնելիս:  
Միսս Ռեչելի վրա գուզնոց կապելով և զլիսին շոր փաթաթե-  
լով, նրան ստիպեց նկարազարդել իր իսկ սեփական փոքրիկ  
հյուրասենյակը, որը, անգլերեն բառը չլինելու պատճառով,  
կոչվում էր «բուլուար»: Սկսեցին դուան ներսի կողմից: Միս-  
տրը Ֆրենկլինը պեմզայով մտրեց վրայի ամբողջ սքանչելի  
լարը և պատրաստեց այն, ինչ ինքն անվանում էր «մակերես»՝  
աշխատանքի համար»: Այնուհետև միսս Ռեչելը միստր Ֆրենկ-  
լինի ցուցումով ու նրա օգնությամբ այդ մակերեսը պատեց  
նախշերով ու նկարներով՝ գրիֆոններով, թռչուններով, ծա-  
ղիկներով, կուպիդոններով և նման այլևայլ բաներով, վերց-  
ված իտալացի նշանավոր գեղանկարչի նկարներից, որի  
անունը չեմ հիշում, այն գեղանկարչի, որ աշխարհը հեղեղել  
էր մագոննաներով և սիրահարվել հացալվաճառուհուն: Այդ  
աշխատանքը չափազանց հոգսաշատ էր ու շատ կեղտոտ:  
Բայց մեր օրիորդն ու երիտասարդ ջենտլմենը, կարծես, չէին  
հոգնում դրանով զբաղվելիս: Երբ նրանք ձի նստած չէին  
դրոսնում, հյուրեր չէին ընդունում, սեղան չէին նստում, չէին  
երգում, ուրեմն կողք-կողքի, մեղունների պես ժրագանորեն  
դուռն էին փչացնում: Այն ո՞ր բանաստեղծն է ասել, թե սա-  
տանան միշտ էլ որեէ վնասակար բան կհնարի նույնիսկ պա-  
րուպ ձեռքերի համար: Եթե նա միլեդիի ծառայապետի պաշ-  
տոնն զբաղեցնեց և միսս Ռեչելին տեսներ վրձինը ձեռքին, իսկ  
միստր Ֆրենկլինին՝ ներկերի բաղադրությամբ, չէր կարողա-  
նա սրանից ավելի ճշմարիտ որեէ բան գրել նրանց մասին:

Հաջորդ օրը, որն արժի հիշատակել, հունիսի չորսն էր,  
կիրակի:

Այդ երեկո մենք ծառաների սենյակում առաջին անգամ  
քննարկեցինք ընտանեկան մի հարց, որը, ինչպես և դուան  
նկարազարդումը, կապ ունի այն բանի հետ, ինչը դեռ կա-  
տարվելու է:

Տեսնելով, թե ինչպիսի բավականություն են գտնում միստր  
Ֆրենկլինն ու միսս Ռեչելը իրար մոտ լինելով և թե ինչ հրա-  
շալի դույզ կլինեք դա բոլոր տեսակետներից, մենք, բնակա-  
նարար, ենթադրեցինք, որ նրանք, դուռը նկարազարդելուց բա-



ցի, մի ուրիշ բանով էլ կզբաղվեն. մեղնից ոմանք ասում էին, թե ամառը շանցած՝ տանը հարսանիք կլինի: Ոմանք էլ (իմ գլխավորությամբ) համաձայնվում էին, որ, շատ հավանական է, միսս Ռեչերն ամուսնանա, բայց կտակածում էին (այժմ շարադրվիլիք պատճառներից ելնելով), որ նրա փեսացուն միսսը Ֆրենկլին Բլեկը կլինի:

Իսկ որ միսսը Ֆրենկլինը սիրահարված էր՝ նրան տեսնողներից ոչ ոք չէր կասկածում: Դժվարը միսս Ռեչերին հասկանալն էր: Թույլ տվեք ինձ ձեզ նրա հետ ծանոթացնելու պատիվն ունենալ. դրանից հետո ձեզ կթողնեմ նրան հասկանալը, եթե կարողանաք:

Հունիսի քսանմեկին լրանում էր մեր երիտասարդ օրիորդի տասնութ տարին: Եթե ձեզ դուր են գալիս թխահերները (որքան լսել եմ՝ վերջին ժամանակներս նրանք մոդայից դուրս են հեկել արիստոկրատական աշխարհում) և եթե դուք մի

առանձին նախապաշարմունք շունք հասակի նկատմամբ, ապա կասեմ, որ դուք միսս Ռեչելի պես լավ աղջիկ չեք տեսել երբեք: Նա փոքր էր ու ճկուն, բայց շտհանված կառուցվածք ուներ ոտքից գլուխ: Տեսնելով, թե նա ինչպես է նստում, ինչպես կանգնում և, հատկապես, ինչպես է քայլում, ամեն մի ողջամիտ մարդ կհավաստիանար, որ մարմնի նրբագեղությունը (եթե ինձ կներեք այս արտահայտություն համար) նա պարտական է կառուցվածքին և ոչ թե զգեստին: Ես երբևէ չեմ տեսել, որ մեկ ուրիշը նրա պես սև մազեր ունենա: Աչքերը շատ հարմար են մազերին. քիթը, պետք է խոստովանեի, բավականաչափ փոքր է: Բերանն ու կզակը (միստը Ծրենկլինի բառերով ասած) աստվածներին վայել համեղ պատաններ են, իսկ գեմքի գույնը (նույն անժիտելի հեղինակության համաձայն) նույնքան շաղուցիչ էր, որքան արևը, այն մեծ առավելությունը, որ նրան նաչելը միշտ հաճելի էր: Այս ամբողջ ասվածին ավելացրեք, որ նա ուղիղ էր նեախ պես, հպարտ էր, համարձակ, աղնվական, որ նա զուլայլ, մետաղի պես զրնգուն ձայն ուներ, և ժպիտ ուներ, որն այնքան հաճելիորեն հայտնվում էր աչքերում, նախքան կերևար շուրթերի վրա, — և ահա ես ձեզ տվի նրա ամբողջ պատկերը, նկարագրեցի, ինչքան որ կարող էի:

Իսկ ինչպիսի՞ն էր միսս Ռեչելի բնավորությունը: Մի՞թե այդ հմայիչ կակը թերություն չուներ: Նա ուներ ճիշտ նույնքան թերություն, որքան և դուք, աիկին, ոչ ավելի, ոչ պակաս:

Լրջորեն ասած, իմ նազանի, իմ լավ միսս Ռեչելը, անհամար հմայքներ ու թովչանքներ ունենալով հանդերձ, ուներ մի թերություն, և խիստ անաչատությունն ինձ ստիպում է խոստովանել այդ: Նա շատ ուրիշ աղջիկներից տարբերվում էր նրանով, որ ուներ իր սեփական համոզմունքները և այնքան քմահաճն էր, որ հակասակ էր գնում նույնիսկ նորաձևություններին, եթե նորաձևությունները հակասում էին իր ճաշակին: Անկախությունն այդ պարապ բաներում դեռևս ապեելի էր, բայց կարևոր գործերում նա (ինչպես մտածում էինք ևս ու միլեզին) շատ հեռուն էր գնում: Նա դատում էր այնպես, ինչպես իրենից երկու անգամ տարիքով մեծ սակավաթիվ կանայք են դատում. երբեք խորհուրդ չէր հարցնում,

երբեք վաղօրոք չէր ասում, թե ինչ է մտադիր անել, երբեք իր գաղտնիքն ուրիշի, նույնիսկ մարը չէր վստահում: Մեծ ու փոքր գործերում, մարդկանց հետ, որոնց նա սիրում էր, և մարդկանց հետ, որոնց ատում էր (թե մեկը, թե մյուսը հավասար ուժով), միսս Ռեչելը միշտ վարվում էր իր ձեռով, հույսը միայն իր վրա դնելով և՛ ուրախության, և՛ տխրության ժամանակ: Հաճախ նա լսել միլիոնից:

«Ռեչելի լավագույն բարեկամն ու ամենակատաղի թշնամին ինքն է»:

Մի բան էլ ավելացնեմ դրան ու վերջացնեմ: Իր ամբողջ գաղտնապահությունը հանդերձ, իր ամբողջ քամահանությունը հանդերձ, նրա մեջ կեղծիքի նշույլ անգամ չկար, ես չեմ հիշում, որ նա գոնե մեկ անգամ իր խոսքը դրժած լինի: Չեմ հիշում, որ նա երբեք «ոչ» ասի, մտածելով՝ «այո»: Իսկ փոքր հասակում քանի՛-բանի անգամ է այդ բարի հոգին իր վրա վերցրել ընկերուհու մեղքը և սլաժի ենթարկվել նրա այս կողմ այն զանցանքի համար. երբ դա ի հայտ է եկել և նրան հարցաբնեի են՝ ոչ որ և երբեք խոստովանություն չի լսել նրանից: Բայց ոչ ոք չի լսել նաև, որ նա ստած լինի: Նա ուղիղ նայում է ձեր դեմքին, տարուբերում իր համառ զույսը և ուղղակի ասում.

«Չեմ ասի»:

Վերստին պատժված լինելով, նա համաձայնվում էր ներողություն խնդրել իր կուպիտ «չեմ ասի»-ի համար, բայց, չնայած նրան չոր հացի ու ջրի վրա էին թողնում, այնուամենայնիվ չէր ասում, թե ով է մեղավոր: Ինքնակամ էր, շարիհը դուրս ինքնակամ էր երբեմն, համաձայն նաև գրան. բայց, այսուհանդերձ, նրանից լավ մարդ չկար աշխարհում: Գուցե դուք ինչ-որ հակասություն գտնեք այստեղ: Այդ դեպքում թույլ տվեք մի խոսք ասեմ ձեր ականջին: Քսանդորոս ժամ շարունակ ուշադիր ուսումնասիրեք ձեր կնոջը: Եթե այդ ժամանակամիջոցում դուք ձեր բարի ընկերուհուն չեք բռնի որևէ հակասության մեջ, ապա, ասոված ձեզ հետ, ձեր ունեցածը ոչ թե կին է, այլ իսկական հրեշ:

Ես ձեզ ծանոթացրի միսս Ռեչելի հետ, և դա մեզ մոտեցնում է ամուսնություն վերաբերյալ այդ օրիորդի տեսակետների հարցին:

Հունիսի տասներկուսին տիրուհիս միսս Ռեչելի ծննդյան օրվան ներկա լինելու հրավեր ուղարկեց Լոնդոն՝ մի շենտմենի: Ինչպես ենթադրում էի, այդ բախտավոր մահկանացուին էր տրված աղջկա սիրտը: Ինչպես և միստր Ֆրենկլինը, նա էլ աղջկա զարմիկն էր՝ մորաքրոջ տղան: Նրա անունը միստր Գոդֆրի էբլուայթ էր:

Միլեդիի երկրորդ քույրը (չվախենաք, այս անգամ շատ շենք իտրանա ընտանեկան պատմության մեջ) — ասում եմ միլեդիի երկրորդ քույրը սիրո հարցում հիասթափություն էր սպրեել, իսկ հետո, ցանկանալով ինչ ուզում է լինի անպայման ամուսնանալ, համարձակվել էր դիմել, ինչպես ասում են, «անհավասար ամուսնության»: Ամբողջ ընտանիքը խիստ վրդովվեց, երբ բարձրատոհմիկ Կարոլինան անպայման ուղեց դառնալ Ֆրիզինհոլյան բանկիր միստր էբլուայթի կինը: Մա շատ հարուստ էր ու հույժ բարոյական և լույս աշխարհ բերեց մի հսկայական ընտանիք. այս բոլորն առայժմ նրա օգտին է խոսում: Բայց նա մտածել էր բարձր դիրք գրավել, և սա նրա դեմ է խոսում: Սակայն ժամանակն ու արդի լուսավորության առաջադիմությունը շտկեցին գործը, և անհավասար ամուսնությունը բարեհաջող անցավ: Հիմա բոլորս լիբերալներ ենք (միայն թե դուք չկարողանաք ինձ ճանկոտել, եթե ես ձեզ ճանկոտեմ), իմ ի՞նչ գործն է՝ դուք պառլամենտում եք, թե ոչ, աղբահավաք եք, թե դուրս: Մա ժամանակակից հայացք է: Իսկ ես հետևում եմ ժամանակակից հայացքին: Էբլուայթները ապրում էին Ֆրիզինհոլի շրջակայքում՝ առջևում մեծ գրոսայգի ունեցող մի գեղեցիկ տան մեջ: Շատ արժանավոր մարդիկ էին, շատ հարգված ամբողջ օկրուգում: Այս էջերում մենք չափից դուրս շատ ուշադրություն չենք նվիրի նրանց, բացառյալ միստր Գոդֆրիի, միստր էբլուայթի երկրորդ որդու, որը, ձեր թույլտվությամբ, կառևոր տեղ կգրավի այստեղ, քանի որ կապ ունի միսս Ռեչելի հետ:

Իր ամբողջ փայլով, խելքով և ընդհանրապես լավ հատկություններով հանդերձ միստր Ֆրենկլինը, իմ կարծիքով, հաղիվ թե կարողանար միստր Գոդֆրիին նահապեղել մեր օրիորդի աչքում:

Նախ, միստր Գոդֆրին շատ ավելի բարձրահասակ էր՝



սովելի քան վեց ոտնաչափ. երեսի գույնը սքանչելի էր, սոլիտակ, շառագույն, դեմքը հարթ էր ու կրոր, լավ սափքըրված, գլխին՝ վուշե երկար հրաշալի մազեր, որ անփութորեն թափվում էին ծոծրակին: Բայց ինչո՞ւ եմ ջանում նկարագրել նրան: Եթե երբևէ եղել եք Լոնդոնի կանանց բարեգործական կոմիտեի անդամ, ապա դուք էլ միտար Գոդֆրի էբլուայթին նույնքան լավ եք ճանաչում, որքան որ ես: Նա մասնագիտությամբ փաստարան էր, հակումներով՝ կնամոլ, և սեփական ընտրությամբ՝ բարեգութ սամարացի: Բարեգործ կանայք և շքավոր կանայք առանց նրա չլա գնալ չէին կարող: Ջրավոր ծննդկաններին օգնող մայրական ընկերություններում, աղքատ կանանց փրկող սուրբ Մազթաղիների ընկերություններում, հույժ համառ ընկերություններում, որոնք ձրգտում էին խեղճ տղամարդկանց փոխարեն աշխատանքի տեղավորել խեղճ կանանց, թողնելով, որ տղամարդիկ իրենք իրենց համար ճանապարհ հարթեն, ինչպես որ կարող են, — նա փոխնախագահ էր, դիրեկտոր, անդամ: Որտեղ կանանց կոմիտեն է, այնտեղ միտար Գոդֆրին, լայնեզր գլխարկը ձեռքին, զսպում է ժողովի թեժությունը և սիրասուն կանանց տանում է փշածածկ գործարար ուղիով: Ես ենթադրում եմ, որ դա Անգլիայում երբևէ ծնված ամենակատարյալ բարեգործն է (ոչ մեծ կարողություններ):

Բարեգործական միտինգներում դժվար էր գտնել արցունք ու փող կորգելու հմտություններ նրան հավասար որևէ հոգևոր: Դա ավարտուն հասարակական դործիչ էր: Վերջին անգամ, երբ Լոնդոնում էի, տիրուհիս երկու բավականություն պատճառեց ինձ, նա ինձ ուղարկեց թատրոն՝ դիտելու մի պարուհու, որը գլխահան էր անում բոլորին, և էկստեր-ձուլ՝ լսելու միտար Գոդֆրիին: Պարուհին հանդես էր գալիս նվագախմբի հետ: Զենտյմենը հանդես էր գալիս թաշկինակով և մի բաժակ ջրով: Ոտքերով ներկայացմանը՝ հրմշտոց է, լեզվով ներկայացմանը՝ նույնպես: Եվ այս ամենով հանդերձ՝ ամենահեղ և ոչ պահանջկոտ մարդն էր, որպիսին երբևէ հանդիպել եք: Նա սիրում էր բոլորին: Եվ բոլորն էլ սիրում էին նրան: Ի՞նչ հեռանկար ուներ միտար Ֆրենկլինը, ի՞նչ հեռանկար ուներ սովորական անունով և սովորական ընդունակություններով որևէ մեկը այսպիսի մարդու կողքին:

Ամսի տասնչորսին ստացվեց միսոր Գոգֆրիի պատասխանը:

Նա ընդունել էր իմ տիրուհու հրավերը՝ շորեքշարթիից (ծննդյան օրից) մինչև ուրբաթ երեկոյան, երբ կանանց բարեգործական կոմիտեի պարտականութունները իրեն կատիպեն քաղաք վերադառնալ: Նա նամակի մեջ դրել էր բանաստեղծութուններ այն բանի առթիվ, որ ինքը նրբորեն անվանել էր իր զարմուհու «ծննդյան օր»: Ինձ հաղորդեցին, որ միսս Ռեչելը, միանալով միսոր Ֆրենկլինին, հաշի ժամանակ ծաղրում է այդ բանաստեղծութունները, և Պենելոպեն, որ միսոր Ֆրենկլինի կողմն էր, ցնծությամբ ինձ հարցրեց, թե ես ինչ եմ մտածում այդ առթիվ:

— Միսս Ռեչելը քեզ, հոգյակս, սխալ կարծիքի է հանգեցրել, — պատասխանեցի ես, — ըստ հոտատութունը դա շի հասկանա, իսկ իմ քիթը խարել այնքան էլ հեշտ չէ: Սպասիր մինչև միսոր էբլուայթի բանաստեղծութուններից հետո կհայտնվի ինքը միսոր էբլուայթը:

Աղջիկս պատասխանեց, որ միսոր Ֆրենկլինը կարող է իր բախտը փորձել նախքան բանաստեղծութուններից հետո բանաստեղծի հայտնվելը: Պետք է խոստովանել, որ իրոք միսոր Ֆրենկլինը ամեն հնարավոր բան անում էր միսս Ռեչելի բարեհաճութունը ձեռք բերելու համար:

Թեև նա երբևէ տեսածս ամենաթունդ ծխողներից մեկն էր, այնուամենայնիվ, անմիջապես զցեց սիգարները, երբ ինչ-որ առիթով միսս Ռեչելն ասաց, թե ինքը չի կարող տանել ծխախոտի հոտը, որով ներծծվում է իր շրջազգեստը: Այս անձնուրաց արարքից հետո շատ վատ էր քնում միսոր Ֆրենկլինը և, զրկվելով ծխախոտի հանդստացնող ներգործությունից, որին սովորել էր, ամեն առավոտ նախաճաշելու էր իջնում այնքան վատ արամազրությամբ ու հլուծված տեսքով, որ միսս Ռեչելն ինքը նրան խնդրեց, որ նորից սկսի ծխել: Բայց ոչ: Նա չկամեցավ նորից վերադառնալ այն բանին, ինչը կարող էր թեկուզ բուսական անբավականություն հարուցել ազգիս մեջ. ինքը վճռականորեն կկռվի իր սովորության դեմ և վաղ թե ուշ միայն կամքի ուժով ու համբերությամբ կվերադարձնի իր հանդիսս բունը: Կարող եք ասել, որ այդպիսի նվիրվածությունը (ինչպես և խոստում էին ներքևում՝ ծառա-

ների սենյակում) չէր կարող պատշաճ ազդեցութիւն չգործել միսս Ռեշելի վրա, մի նվիրվածութիւն, որին աջակցում էր նաև դռան ամենօրյա նկարազարգումը: Այս բոլորը շատ լավ, բայց միսս Ռեշելի ննջասենյակում կախված էր միստր Գողֆրիի լուսանկարը, որը նրան պատկերում էր բարեգործական միտինգում խոսելիս՝ խանդավառութեամբ սեփական պերճախոսութեամբ, և աչքերով, որոնք ամենասքանչելի ձևով ձեր գրպանից հանում են փողերը: Ի՞նչ կարող էր ասել սրան: Ամեն առավոտ, ինքը Պենելոպեն է ինձ խոստովանել, տղամարդու պատկերը նայում էր, թե ինչպես էին սանրում միսս Ռեշելի մազերը: Շուտով նա ինքը անձամբ իրականում կնայի դրան, — այսպիսին էր իմ կարծիքը:

Հունիսի տասնվեցին տեղի ունեցավ մի դեպք, որը, իմ կարծիքով, էլ ավելի պակասեցրեց միստր Ֆրենկլինի հաջողութեան հասնելու հնարավորութիւնները:

Մի անձանոթ պարոն, որ անգլերեն էր խոսում օտարերկրացու առողանութեամբ, այդ առավոտ եկավ մեր տուն և կամեցավ գործով տեսնել միստր Ֆրենկլինին: Այդ գործը պամաստին չէր կարող վերաբերել հետևյալ երկու պատճառով. նախ, միստր Ֆրենկլինը նրա մասին ոչինչ չստաց ինձ. երկրորդ, նա այդ մասին հաղորդեց (օտարերկրացու մեկնելուց հետո) միլեդիին: Սա, ըստ երևույթին, այդ մասին ակնաբակել էր նաև աղջկան: Ինչ ուզում է լինի, պատմում էին, որ այդ երեկո դաշնամուր նվագելիս միսս Ռեշելը միստր Ֆրենկլինին խիստ դիտողութիւններ էր անում այն մարդկանց առիթով, որոնց հետ սա հաղորդակցվել էր, և այն վարվելաձևի առթիվ, որ նա յուրացրել էր արտասահմանում: Հաջորդ օրը առաջին անգամ շնկարազարդեցին դուռը: Կասկածում եմ, որ մայրցամաքում միստր Ֆրենկլինի թույլ տված ինչ-որ մի անդգույշ արարք (կանանց կամ էլ դրամական պարտքի նկատմամբ) անախորժութիւններ է առաջացրել Անգլիայում: Բայց բոլորը սոսկ ենթադրութիւններ են: Տվյալ դեպքում ոչ միայն միստր Ֆրենկլինը, այլև միլեդին էլ անտեղյակութեան մեջ թողեց ինձ:

Ամսի տասնյոթին ամպը, ըստ երևույթին, նորից ցրվեց: Նրանք նորից սկսեցին աշխատել դռան վրա և առաջվա նման լավ ու բարի լինկերներ էին թվում: Եթե հալատանք Պենելո-

պելին, ապա միտար Ֆրենկլինը օգտվել էր հաշտութունից և առաջարկութուն արել միսս Ռեչելին, բայց ոչ համաձայնութուն էր ստացել, ոչ էլ մերժում: Աղջիկս հավատացած էր (ըստ սրտը նշանների, որոնցով ավելորդ եմ համարում ձեզ ձանձրացնել), որ իր օրիորդը խուսափել էր միտար Ֆրենկլինի առաջարկից, հրաժարվելով հավատալ դրա լրջությանը, իսկ հետո թաքուն ամուսնացել էր, որ այդպես էր վարվել նրա հետ: Թեև Պենելոպեին թույլատրված էր շատ ավելի մոտիկ լինել իր երիտասարդ օրիորդի հետ, քան սովորաբար թույլատրվում է աղախիններին, քանի որ սրանք գրեթե մանուկ հասակից իրար հետ էին դաստիարակվել: Բայց ես, այնուամենայնիվ, շատ լավ գիտեի միսս Ռեչելի զուսպ բնավորությունը և չէի կարող հավատալ, որ նա այդ աստիճան անկեղծ կլիներ: Այն, ինչ այդ պահին ասաց ինձ աղջիկս, կարծում եմ, ավելի շատ իր ցանկությունն էր, քան իրականում լսածը:

Ամսի տասնինին մի նոր դեպք տեղի ունեցավ: Մեզ մոտ էր գալիս բժիշկը: Նրան հրավիրել էին բուժելու մի անձնավորություն, որին ես արդեն առիթ եմ ունեցել ձեզ ներկայացնելու այս էջերում՝ մեր երկրորդ աղախին Ռոզաննա Սպիրմանին:

Այդ խեղճ աղջիկը, որ ինձ տարակուսանք էր պատճառել երեբուն ավազներում, դեռ քանի՜-քանի անգամ էլ զարմացրեց այն ժամանակամիջոցում, որի մասին գրում եմ: Պենելոպեի այն կարծիքը, թե Ռոզաննան սիրահարված է միտար Ֆրենկլինին (այս բանը աղջիկս իմ հրամանով խիստ գաղտնի էր պահում), առաջվա նման անհեթեթ էր թվում ինձ: Բայց պետք է խոստովանեմ, որ մեր երկրորդ աղախին վարմունքը դարձել էր ուղղակի խորհրդավոր, եթե շասենք՝ ավելին:

Աղջիկը, օրինակ, միշտ դեմ-դիմաց հանդիպում էր միտար Ֆրենկլինին, շատ հնարամտորեն ու հանգիստ հարմարեցնելով այդ բանը: Սա աղջկա վրա ուշադրություն էր դարձնում ոչ ավելի, քան կատվի վրա. նրա մտքով էլ չէր անցնում գոնե մեկ անգամ նայել Ռոզաննայի տգեղ դեմքին: Խեղճ աղջրկա ախորժակը, որ առանց այն էլ շատ մեծ չէր, կորել էր բուլորովին: Իսկ աչքերն առավուտյան ցույց էին տալիս անբության ու արցունքների հետքերը: Մի անգամ Պենելոպեն մի

վափկանկատ հայտնագործություն կատարեց, որի մասին մենք ոչ ոքի չսասցինք. նա Ռոզաննային տեսավ միստր Ֆրենկլինի զարդասեղանի մոտ, երբ աղջիկը գողունի հանում էր այն վարդը, որ միսս Ռեչելը Ֆրենկլինին տվել էր կոճկամերի մեջ կրելու համար, և դրա տեղը դնում էր ճիշտ նույնպիսի մի վարդ, որ իր ձեռքով էր քաղել: Դրանից հետո նա մի երկու անգամ հանդգնորեն պատասխանեց իրեն տվելի զգուշ պահելու իմ բարեկամական խորհրդին, և, որ է՛լ ավելի վատ է, նա այնքան էլ հարգալից չէր այն սակավաթիվ ղեպքերում, երբ միսս Ռեչելը պատահականորեն խոսում էր հետը:

Միլեդին նկատել էր այդ փոփոխությունը և ինձ հարցրեց, թե ես ինչ եմ մտածում այդ մասին: Աշխատեցի պաշտպանել աղջկան, պատասխանելով, որ, իմ կարծիքով, նա այնքան էլ առողջ չէ, և ավարտվեց նրանով, որ ամսի տասնիննին ուղարկեցին բժիշկ կանչելու, ինչպես որ հիշատակված է վերևում: Սա ասաց, թե աղջիկը նյարդային խանգարվածություն ունի, և ակնարկեց, որ հազիվ թե արժե օգտվել նրա ծառայություններից: Միլեդին առաջարկեց օդափոխության համար աղջկան ուղարկել մեր հեռավոր ֆերմաներից մեկը: Ռոզաննան արցունքն աչքերին աղաչում էր, որ իրեն թույլ տան մնալ այստեղ, և ես, դժբախտաբար, միլեդիին խորհուրդ տվի մի որոշ ժամանակ էլ փորձել նրան: Ինչպես ցույց տվին իրադարձությունները, և ինչպես դուք շուտով կտեսնեք, ես չէի կարող ավելի վատ խորհուրդ տալ: Եթե հնարավոր լիներ նաչիլ ապադայի խորքը, ես իմ սեփական ձեռքով մեր տնից դուրս կհաննի Ռոզաննա Սպիրմանին:

Ամսի քսանին մի գրություն ստացվեց միստր Գոդֆրիից: Նա մտածում էր գիշերել Ֆրիդինհոլում, կարիք ունենալով ինչ-որ մի դործի շուրջը խորհրդակցելու հոր հետ: Հաջորդ օրը, կեսօրից հետո, նա և նրա երկու ավագ քույրերը պետք է ձիով մեզ մոտ գային ճաշից շատ առաջ: Գրության հետ մեկտեղ ուղարկվել էր ճենապակե մի շքեղ զարդասուսփ որպես նվեր միսս Ռեչելին՝ սիրով և ամենայն լավագույնի մտաթանքներով՝ զարմիկից: Միստր Ֆրենկլինը նրան նվիրեց մի հասարակ մեղալիոն, որը զարդատուփից երկու անգամ էժան արժեր: Եվ, այնուամենայնիվ, աղջիկս՝ Պենելոպեն (դե այդ-

պիսին է կանանց համառությունը), գտնում էր, որ ես հաջողութուն կունենաւ :

Փառք աստծու, վերջապէս հասանք ծննդյան օրվա նախօրյակին: Խոստովանեցեք, որ այս անգամ ես ձեզ առաջնորդել եմ ոչ այնքան շատ դանդաղելով ճանապարհին: Եվ աշխուժացեք՝ ես ձեզ կուրախացնեմ մի նոր գլխով, որը ձեզ ուղիղ կտանի պատմութեան բուն խորքը:

## Գ Լ Ա Լ Խ IX

Հունիսի բանմեկին, ծննդյան օրը, եղանակն առավոտից ամպամած էր ու փոփոխական, բայց կեսօրին մոտ երկինքը լրիվ պարզեց:

Մենք՝ ծառաներս, այդ էրջանիկ օրը, սովորութեան համաձայն, սկսեցինք միտս Թեղիլին փոքրիկ նվերներ մատուցելով, իսկ ես ճառ ասացի, մի ճառ, որ ամեն տարի արտասանում եմ որպէս ծառաների գլխավորը: Այդ բանում ես հետևում եմ պառլամենտը բացելիս թագուհու գործադրած մեթոդին. այսինքն՝ ամեն տարի ասում եմ գրեթէ նույնը: Իմ ճառին (ճիշտ այնպէս, ինչպէս և թագուհու ճառին) մինչև այն արտասանելը սպասում են անհամբերութեամբ, որպէս մի բանի, որպիսին առաջներում երբեք չեն յսել: Իսկ երբ պարզվում է, որ այն ամենն էլ նոր չէ, ունկնդիրները, թեև մի քիչ փնթփնթում են, բայց հուսադրվում են որևէ նոր բան լսել գալիք տարում: Հեշտ է կառավարել և՛ պատլամենտում, և՛ խոհանոցում. ա՛հ թե ինչ եզրակացութեան պետք է հանդել դրանից:

Նախաճաշից հետո միտար Զրենկիլիը Լուսնաբարին վերաբերող դադոնի դրույց ունեցավ ինձ հետ. ժամանակն էր այն վերցնելու Զրիգինհուլի բանկից և հանձնելու անձամբ միտս Թեղիլին:

Փորձել էր նա դարձյալ սեր բացատրել իր զարմուհուն ու մերժվե՞լ էր, թե՞ երկարատև անքնությունն էր ավելացրել տարբրինակ հակասութուններն ու անվճարակտնութունը՝ ես չգիտեմ: Միայն թե միտար Զրենկիլիը ծննդյան օրն առավոտյան իրեն դրսևորեց իր համար շատ աննպաստ կերպով:

քսան թուպի ընթացքում քսան անգամ փոխեց արմաստի վերարերյալ իր մտադրությունը: Ես իմ կողմից ելնում էի մեզ հայտնի հասարակ փաստերից: Չէր կատարվել այնպիսի մի բան, որը մեզ զրգեր արմաստի առիթով անհանգստացնել միլիոնին, իսկ միտք Ֆրենկլինը օրհնքով պարտավոր էր արմաստը հանձնել իր գարմուհուն. այսպիսին էր գործի վերարերյալ իմ կարծիքը, ու թեև միտք Ֆրենկլինը քանի՜ քանի անգամ փոխեց իր վճիռը, այնուամենայնիվ, նա ի վերջո ստիպված էր համաձայնվել ինձ հետ: Որոշեցինք, որ նա լենչից հետո ձիով կգնա Ֆրիզինհոլ ու կբերի արմաստը, ամենայն հավանականությամբ, միտք Գոպֆրիթի ու նրա բուլբերի ուղեկցութեամբ:

Այսպիսի որոշում ընդունելով, մեր երիտասարդ ջենտլմենը նորից գնաց միաս Ռեչելի մոտ:



Նրանք ամբողջ առավոտն անցկացրին դուռը նկարազար-  
դելով: Պեննելոպեն, նրանց կողքին կանգնած, ներկերն էր խառ-  
նում նրանց ցուցումով, իսկ միլեդին, երբ մոտեցավ երկրորդ  
նախաճաշի ժամը, մերթ մտնում էր սենյակ, մերթ դուրս գա-  
լիս՝ թաշկինակը քթին դրած (նրանք այդ օրը չափից դուրս  
շատ էին օգտագործել միստր Ֆրենկլինի պատրաստած բա-  
ղադրութունը), և ապարդյուն աշխատում էր նկարիչների  
կարել աշխատանքից: Միայն ժամը երեքին նրանք հանեցին  
գոգնոցները, ազատ արձակեցին Պեննելոպեն, որ սաքից զր-  
լուխ ներկտավել էր, և մաքրեցին իրենց շորերը: Բայց նրանք  
հասել էին իրենց ուզածին՝ ծննդյան օրն ավարտել էին դուռը,  
և շատ էին հայտնաբերում իրենց աշխատանքով: Գրիֆոնները,  
Վուպիդոնները և մնացած բաները, ճիշտն ասած, շատ գեղե-  
ցիկ էին աչքի համար, բայց դրանք այնքան շատ էին, այն-  
քան էին պարուրված ծաղիկներով ու խորհրդանշաններով և  
այնքան անբնական դիրքում էին ներկայացված, որ այդ կու-  
պիդոնները, այն բանից հետո, երբ դուք բավականութուն  
էիք ունեցել նայելու դրանց, շատ տհաճ կերպով ժամեր շա-  
րունակ մխրձվում էին ձեր հիշողության մեջ: Եթե ավելացնեմ,  
որ առավոտյան աշխատանքն ավարտելուց հետո Պեննելոպի  
սիրար խառնեց սև խոհանոցում, ապա դա ներկերի բաղա-  
դրության դեմ իմ ունեցած կանխակալ վերաբերմունքից չէ,  
որ կասեմ: Ոչ, ոչ: Չորանալուց հետո այն զաղարել էր հոտ  
արձակելուց. իսկ եթե արվեստը այդպիսի զոհեր է պահան-  
ջում, ապա, թեև Պեննելոպեն իմ հարազատ դուստրն է, ես կա-  
սեմ՝ թող արվեստը ստանա այդ զոհը:

Միստր Ֆրենկլինը հասցնեպորեն մի բան ճաշակեց ու մեկ-  
նեց Ֆրիզինհոլ՝ բերելու իր դարմուհիներին (ինչպես ինքն  
էր ասել միլեդին), բերելու Լուսնաքարը (ինչպես հայանի  
էր միայն իրեն և ինձ):

Քանի որ դա այն հանդիսավոր օրերից մեկն էր, երբ ես  
պետք է տեղ գրադեցնեի բուֆետի մոտ և կարգադրութուններ  
անեի ճաշի ժամանակ, ապա ես միստր Ֆրենկլինի բացակա-  
յության մտքերս զրադեցնելու բան ունեի: Գինի պատրաս-  
տելով և ստուգելով կին ու աղամարդ այն ծառաներին, որոնք  
պետք է սպասարկեին ճաշի ժամանակ, ես, նախքան հյուրերը  
կղային, գնացի իմ սենյակը մտքերս ամփոփելու: Խօրը ներս



քաշելով, դուք գիտեք թե ինչ, աչքի անցկացրի այն գիրքը, որի մասին արդեն հիշատակելու առիթ ունեցել եմ այս էջերում: Հանգստացա հոգով ու մարմնով: Ինձ սթափեցրեց (ոչ թե քնից, այլ մտածմունքից) սմբակների դոփյուներ, և ես գնացի դիմավորելու հեծելախումբը, որը բաղկացած էր միստր Ֆրենկլինից, նրա զարմիկից ու երկու զարմուհիներից, որոնց ուղեկցում էր ծեր միստր էբլուայթի ձիավոր ծառան:

Միստր Գոդֆրին ինձ շատ զարմացրեց նրանով, որ մի առումով նման էր միստր Ֆրենկլինին. տրամադրությունն ընկած էր: Նա սովորականի պես սիրալիր սեղմեց ձեռքս և քաղաքավարությամբ գոհունակութուն հայտնեց՝ իր հին բարեկամ Բետտերեջին ողջ և առողջ տեսնելու համար: Բայց նա մի տեսակ մոռաց էր, մի բան, որը ես ոչնչով չէի կարող բացատրել, և, հրբ հարցրի հոր առողջությունը, բավականաչափ կարճ պատասխան տվեց.

— Ինչպես միշտ, Բետտերեջ:

Բայց դրա փոխարեն երկու միաս էբլուայթներն ուրախ էին տասը հոգու շափ, և դա լի ու լի վերականգնեց հավասարակշռությունը: Նրանք գրեթե նույնքան բարձրահասակ էին, որքան իրենց եղբայրը, հաղթանդամ, դեղնամազ, կարմրերեօ օրիորդներ էին՝ առատ միս ու արյունով. նրանք առողջություն ու խնդություն էին ճառագայթում: Խեղճ ձիերն ուղղակի կրում էին նրանց տակ, և հրբ նրանք, օգնության չսպասելով, ցած թռան թամբից, հավատացնում եմ, դետնի վրա ցատկոտեցին ռետինե զնդակների պես: Այն ամենը, ինչ ասում են միաս էբլուայթները, սկսվում է մեծատառ «Օ»-ով, այն ամենը, ինչ անում են նրանք՝ ուղեկցվում է աղմուկով: Նրանք հոհում ու ճշում էին տեղի-անտեղի, ամենաշնչին իսկ առիթով: «Բլրլաններ»՝ ահա թե ինչպես անվանեցի նրանց:

Այդ ջահել օրիորդների սարքած աղմուկից օգտվելով, ես նախասրահում թաքուն մի երկու խոսք փոխանակեցի միստր Ֆրենկլինի հետ:

— Բարեհաջող բերեցիք այժմատը, սրբ:

Նա գլխով արեց և մատը դիպրեց իր սերթուկի կրծքագրպանին:

— Հնդիկներին տեսա՞ք:

— Ոչ մեկին:

Դրանից հետո նա հարցրեց, թե որտեղ է միլեդին ե, լսելով, որ փոքր հյուրասենյակում է, ուղիղ գնաց այնտեղ։ Նա մի րապի էլ չէր մնացել այդ սենյակում, երբ հնչեց զանգը, և Պեննելուպեն միաս Ռեչելին զհկուցեց, որ միստր Ֆրենկլին էլեկը կամենում է խոսել իր հետ։

Ղյառից կես ժամ անց նախասրահով անցնելիս ես հանկարծ կանդ առա մեկսվածի պես, բացականչութունների պայթյուն լսելով փոքր հյուրասենյակից։ Չեմ կարող ասել, թե վախեցա։ այդ բացականչութուններում իմ ականջին հասավ երկու միաս էքլուայթների սիրելի «Յ»-ն։ Սակայն ներս ժտա (ճաշի մեղրսնրչալ կարգադրութունների իմանալու պատրվակով), շրջեցի տեսնեմ, թե արդյո՞ք որևէ լուրջ բան չի պատահել։

Սեղանի մոտ հմայվածի պես կանգնած էր միաս Ռեչելը՝ գնդապետի շաբաբատիկ սլամասը ձեռքին։ Նրա երկու կողմում շոբել էին «բլբլաններ», աչքերով լափելով թանկարժեք բարը և հիացմունքից բացականչելով ամեն անգամ, հրբ մի նոր շոզ էր արձակում այմաստը։ Սեղանի հակառակ ծայրում կանգնած էր միստր Գոդֆրին։ Նա մեծ երեխույի պես ծափ էր ըարկում և ծոր սալով կրկնում.

— Աննմա՛ն է։ Աննմա՛ն է։

Միստր Ֆրենկլինը նստել էր զարդատուփի առջև, ձգձգատում էր մորուքն ու տաղնապալի նայում լուսամտի կողմը։ Իսկ լուսամտի մոտ, ուր նայում էր նա, թիկունքն ամբողջ հաշարակությանը դարձրած, կանգնել էր նրա հայեցողության առարկան՝ միլեդին, զնդապետի կտակից արված քաղվածքը շեղում բռնած։

Երբ ես միլեդիից ուղեցի իմանալ, թե ճաշի վերաբերյալ ինչ կարգադրութուններ է ուղում անել, նա շրջվեց, և ես նրա ճակատին տեսա առհմական ծալքը, իսկ բերանի անկյուններում երևաց առհմական դայրույթը։

— Իմ սենյակն անցեք մի կես ժամ հետո, — պատասխանեց նա։ — Բան ունեմ ձեզ ասելու։

Այնուհետև նա դուրս եկավ հյուրասենյակից։ Պարզ էր, որ նրան տիրում էին նույն կասկածները, որ միստր Ֆրենկլինին և ինձ համակել էին նրբրուն սվաղներում ունեցած մեր գրույցի ժամանակ։ Ի՞նչ էր նշանակում զնդապետի կտակը։ Այն,

որ միլեդին դաժանորեն և անարդար էր վարվել իր եղբոր հետ, թե՛ նրա եղբայրն ավելի վատն էր, քան ինքը մտածում էր նրա մասին: Լուրջ հարց պետք է վճռեր միլեդին այն միջոցին, երբ նրա դուստրը, գնդապետի բնավորության մասին ոչինչ չիմանալով, կանգնել էր՝ նրա նվերը ձեռքին:

Նախքան ես, իմ հերթին, կհասցնեի դուրս գալ սենյակից, միտս Ռեչելը, որ միշտ ուշադիր էր եզել իր ծննդյան օրից իրենց տանը գտնվող ծիր ծառայի նկատմամբ, կանգնեցրեց ինձ:

—Նայեցեք, Գաբրիել,—ասաց նա և շողարձակող ալմաստը մոտեցրեց լուսամտից ընկնող արևի ճառագայթին:

Աստված իմ, իսկապես ալմաստ է: Գաշտակացարի ճշի մեծությամբ: Նրանից ճառագայթող փայլը նման էր լիալուսնի ցուրին: Երբ նայում էիք քարին՝ նրա ոսկեշող խորքը ձեր աչքերն իրեն էր ձգում այնպես, որ դուք այլևս ուրիշ ոչինչ չէիք տեսնում: Նրա խորությունն անսահման էր թվում. այդ քարը, որ դուք կարող էիք պահել բութ մասի և ցուցամատի արանքում, թվում էր, թե անհատակ է երկնքի նման: Սկզբում այն արևի տակ էր. հետո մենք փակեցինք լուսամուտների փեղկերը, և այն մթության մեջ շողշողաց իր սեփական լուսնափայլով: Զարմանալի չէ, որ միտս Ռեչելը հմայված էր. զարմանալի չէ, որ նրա զարմուհիներն անվերջ բացականչում էին: Ալմաստն ինձ էլ այն աստիճան կախարդեց, որ ես էլ բարձրաձայն բացականչեցի «Օ՛», ինչպես «բլբլաննեչը»: Միայն միտս Գոդֆրին պահպանեց իր ինքնատիրապետումը: Նա գրկեց իր քույրերի մեջքը և, ներողամտաբար նայելով մերթ ալմաստին, մերթ ինձ, ասաց.

—Աձուխ է, Բևատերեջ: Հասարակ աձուխ է, իմ լավ բարկամ:

Ենթադրում եմ, որ նա ինձ լուսավորելու նպատակով ասաց այդ Բայց դրանով նա ինձ չիղեցրեց ճաշի մասին: Ես օրորալով գնացի ներքև՝ իմ սպասախմբի մոտ: Երբ դուրս էի գալիս՝ միտս Գոդֆրին նկատեց.

—Սիրելի, ծեր Բևատերեջ: Ես անկեղծ հարգանք եմ տածում նրա նկատմամբ:

Այդ պահին, երբ նա իր տրամագրության այդ զեղումով սպասվում էր ինձ, գրկել էր իր քույրերին ու քնքշորեն նայում

էր միտս Ռեշելին. ահա թի սիրո ինչպիսի պաշար կար նրա մեջ: Միտտը Ֆրենկլինը իսկական վայրենի էր նրա համեմատությամբ:

Կես ժամ անց, ինչպես ինձ հրամայված էր, ես մտա միլեդիի սենյակը:

Այն, ինչ այդ երեկո տեղի ունեցավ տիրուհուս և իմ միջև, կրկնությունն էր այն բանի, ինչ Նրերուն ավագներում տեղի ունեցավ միտտը Ֆրենկլինի և իմ միջև, միայն այն տարբերությամբ, որ ես ոչինչ չասացի աճարարների մասին, քանի որ ստացիմ ոչ մի բան ինձ առիթ չէր տալիս այդ հրաշքով վախեցնելու միլեդիին: Երբ ինձ ազատ արձակեցին՝ ես չէի կարող շնկատել, որ միլեդին գնդապետի մղումները համարում էր ամենավատը, որպիսին դրանք կարող էին լինել, և նա որոշեց առաջին իսկ հարմար առիթի դեպքում դատերը զրկել լուսնաքարից:

Վերագտնալով ծառաների սենյակը, ես հանդիպեցի միտտը Ֆրենկլինին: Նա կամեցավ իմանալ, թե արդյոք ես չե՞մ տեսել իր զարմուհի Ռեշելին: Ոչ, ես չէի տեսել: Չէի՞ կարող իրեն տեսել, թե որտեղ է զարմիկ Գոդֆրին: Ոչ, չէի կարող. բայց սկսեցի կասկածել, որ զարմիկ Գոդֆրին պետք է զարմուհի Ռեշելից հեռու չլինի: Ըստ երևույթին, միտտը Ֆրենկլինի կասկածները նույնպես նույն ուղղությամբ էին գնացել: Նա ուժգին ձգեց իր մորուքը ու փակվեց գրագրարանում, դուրը ծածկելով այնպիսի շրխկոցով, որը շատ բազմանշանակ էր:

Ինձ այլևս չկարեցին ճաշի նախապատրաստությունից մինչև սր հյուրերին ընդունելու համար զգեստափոխվելու ժամանակը հասալ: Դեռ չէի հասցրել սպիտակ ժիլետս հագնել, երբ հայտնվեց Պենելոպեն՝ ասես սանրելու համար այն մի քանի մազը, որ մնացել էր գլխիս, և շտկելու փողկապիս կապը: Աղջիկս շատ ուրախ էր, և ես տեսա, որ ինչ-որ բան է ուզում ասել ինձ: Նա համբուրեց ճաղատա.

— Նորութուններ, հայրիկ: Միտս Ռեշելը մերժել է նրան:

— Ո՛ւմ, — հարցրի ես:

— Կանանց կոմիտեի անդամին, — պատասխանեց Պենելոպեն: — Կեղտոտ խորամանկ: Ես նրան ասում եմ այն բանի համար, որ նա աշխատում է դուրս մղել միտտը Ֆրենկլինին:

Եթե այդ պահին կարողանայի ազատ շունչ քաշել, ապա.

հավանաբար, կբողոքեի նշանավոր բարեգործի հասցեին արվող այդպիսի անվայելուչ արտահայտութիւնների դեմ: Բայց այդ պահին աղջիկս իմ փողկապն էր կապում, և նրա զգացմունքի ամբողջ ուժը փոխանցվել էր իր մատներին: Կյանքումս երբեք այդքան մոտ չէի եղել խեղդվելուն:

— Ես տեսա, թե ինչպես նա միսս Ռեշելին տարավ ծաղկանոց, — շողակբատում էր Պենելոպեն, — և պահվեցի սրատերև թփուտի ետևում, որպեսզի նայեմ, թե ինչպես են վերադառնալու: Նրանք գնացին ձեռք-ձեռքի տված, ու երկուսն էլ ծիծաղում էին: Բայց վերադարձան առանձին-առանձին, մահուց ավելի մոայլ, և տարբեր կողմեր նայելով, այնպես որ հնարավոր չէր սխալվել: Կյանքումս երբեք այսքան ուրախ չեմ եղել, հայրիկ: Ուրեմն կա աշխարհում գոնե մի կին, որը կարող է բնդդիմանալ միսսը Գոդֆրի էրլուայթին: Իսկ եթե ես լեղի լինեի՝ կլինեի երկրորդը:

Ես նորից ուղեցի բողոքել: Բայց այդ ժամանակ աղջիկս վերցրեց խողանակը, և նրա մատների ամբողջ ուժն անցավ այնտեղ: Եթե դուք ճաղատ եք, ապա կհասկանաք, թե նա ինչպես ճանկոտեց ինձ: Եթե ճաղատ չեք՝ բաց թողեք այս տողերը և փառք տվեք աստծուն, որ ձեր գլխի մաշկը խոզանակից պաշտպանելու ինչ-որ բան ունեք:

— Միսսը Գոդֆրին կանգ առավ սրատերև թփուտի մյուս կողմում, — շարունակեց Պենելոպեն: — «Արդյոք հաճո՞ է ձեզ, — ասաց նա, — որ մնամ ձեզ մոտ, իբրև թե ոչինչ չի եղել»: Միսս Ռեշելը կայծակի արագութեամբ շրջվեց նրա կողմը: «Գուք ընդունել եք մորս հրավերը, — ասաց նա, — և այստեղ եք նրա հյուրերի հետ: Եթե չեք ուզում բամբասանքների տեղիք տալ, հասկանալի է, որ կմնաք այստեղ»: Միսս Ռեշելը մի քանի քայլ արեց, իսկ հետո կարծես փոքր-ինչ մեղմացավ: — «Գոդֆրի, մոռանանք կատարվածը, — ասաց նա, — և մնանք զարմիկներ»: Հեռանալուց առաջ նա ձեռքը մեկնեց Գոդֆրիին. սա համբուրեց, մի բան, որը ես անպարկեշտութուն կհամարեի: Գոդֆրին մի քիչ կանգնած մնաց՝ գլուխը կախ գցած ու կրունկով դանդաղորեն փորփրելով ավաղը. կյանքումս երբեք նրանից ավելի շփոթված մարդ չէի տեսել: «Վատ է, — ատամների արանքից ասաց նա, երբ շտկվեց ու գնաց դեպի տուն: — Շատ վատ է»: Եթե դա նրա կարծիքն էր իր մասին, ապա նա

միանդամայն իրավացի էր: Անշուշտ, ավելի վատ լինել չէր կարող: Մինչդեռ, հայրիկ, ստացվեց այնպես, ինչպես որ վաղուց ձեզ ասել եմ,—բացականչեց Պենելոպեն, մի վերջին անգամ ինչքան որ ուժ ունեւ խողանակով ճանկատելով ինձ:— Ախր իսկականը միստր Ֆրենկլինն է:

Ես վերցրի խողանակն ու բերանս բացեցի, որպեսզի նկատողություն անեմ, որին, խոստովանեցեք, միանգամայն արժանի էին աղջկա ստածներն ու վարձուները: Բայց դեռ մի բառ էլ չէի ասել, երբ անիվների աղմուկ լսվեց: Սկսել էին ժամանել հյուրերը: Պենելոպեն նույն պահին փախավ: Ես հազա ֆրակս ու հայելու մեջ նայեցի ինձ: Գլուխս կարմիր էր խեցզետնի պես: Բայց մնացած տեսակետներից հափնված էի երեկոյան արարողության համար միանգամայն պատշաճ ձևով: Հասցրի նախասրահ մտնել ճիշտ ժամանակին, որպեսզի զեկուցեմ առաջին երկու հյուրերի մասին: Դուք նրանցով առանձնապես հետաքրքրվելու կարիք չունեք: Դրանք բարեգործի հայրն ու մայրն էին՝ միստր և միսիս էքլուայթները:

## Գլուխ X

էքլուայթներից հետո իրար ետևից եկան հյուրերը՝ մինչև վերջին հրավիրվածը, Տանտերերի հետ մեկտեղ եղավ քսանչորս մարդ: Աքանչելի տեսարան էր, ելր բոլորը սեղան նստեցին և Ֆրիզինհոլի ունկտորը, որ զարմանալի գեղեցիկ ձայն ունեւր, վեր կացավ ու աղոթք կարդաց:

Ձեզ շեմ ձանձրացնի հյուրերի նկարագրությամբ, նրանցից ոչ մեկին երկրորդ անգամ չեք հանդիպի, գոնե պատմության իմ մասում, բացառությամբ՝ երկու հոգու:

Այս վերջինները նստած էին միսս Ռեչելի երկու կողմում, որը, որպես տոնակատարության թագուհի, բնականաբար համընդհանուրի ուշադրության առարկան էր: Այս անգամ նա սովորականից ավելի այն կենտրոնն էր, որին իրենց հայացքներն էին սեղում ներկա գտնվողները, որովհետև (ի թարուն սնրավականութուն միլեդիի) նրա կրծքին շողում էր Լուսնաբարը, որ սովեր էր գցում մնացած բոլոր նվերների վրա: Լուսնաբարը նրան տրվել էր առանց շրջանակի, բայց ամեն

ինչի վարպետ այդ միտար Ֆրենկլինը հասցրել էր իր ճարպիկ մատնեքի և արծաթե լարի օգնությամբ այն կրծքազարդի պես ամրացնել նրա սպիտակ շրջադգեստին։ Անշուշտ, բոլորը հիանում էին ալմաստի հսկայական մեծությամբ ու գեղեցկությամբ։ Քայց միայն երկուսը ոչ այնքան սովորական ինչոր բան ասացին. դրանք այն երկու հյուրերն էին, որոնց մասին հիշատակել եմ, նստած միսս Ռեչելի աջ ու ձախ կողմում։

Ձախ կողմի հյուրը միտար Կանդին էր, Ֆրիզինհոլլյան բժիշկը։

Դա մի հաճելի, շուտ մտերմացող փոքրիկ մարդ էր, սակայն, պետք է խոստովանել, մի թերութուն ուներ. նա սիրում էր տեղի-անտեղի հիանալ իր կատակներով և բավականաչափ թեթևամտորեն խոսակցության բռնվել անծանոթների հետ։ Հավարություններում նա անընդհատ սխալներ էր անում և առանց որևէ ետին մտքի մարդկանց կովեցնում իրար հետ։ Մակայն, ախտորոշելիս նա շատ ավելի զգույշ էր և, ղեկավարվելով բնադրով (ըստ նրա թշնամիների), իրավացի էր լինում այնտեղ, որտեղ առավել ողջամիտ բժիշկները սխալներ էին թույլ տալիս։ Այն, ինչ նա ալմաստի մասին ասաց միտս Ռեչելին, ամեն անգամվա պես ասվեց առեղծվածի կամ կատակի ձևով, նա օրիորդին խնդրում էր (ի շահ գիտության) թույլ տալ իրեն ալմաստը տանել տուն և այրել։

—Միսս Ռեչել, նախ մենք այն կտաքացնենք այսքան աստիճան,—ասում էր բժիշկը,—հետո կենթարկենք օդի ներգործության ու կամաց-կամաց կգոլորշիացնենք լավաստը և ձեզ կազատենք այդքան թանկարժեք քարը պահպանելու հոգսերից։

Միլեդին լսում էր այնպիսի մի մտահոգ արտահայտությամբ, ասես կամենում էր, որ բժիշկն այդ ասելի լրջորեն և որպեսզի նրան հաջողվեր դիտության օգտի համար իր ալմաստը զոհաբերելու ցանկություն հարուցել միսս Ռեչելի մեջ։

Օրիորդի աջ կողմը նստած մյուս հյուրը հնդիկ նշանավոր ճանապարհորդ միտար Մերտուետն էր, որը, կյանքը վտանգի ենթարկելով, զգեստափոխված հասել էր այնտեղ, որտեղ ղեռնա ոչ մի եվրոպացու ոտք չէր մտել։

Դա երկարահասակ, նիհարավուն, թուխ, լուակյաց մարդ էր՝ հոգնած, բայց շատ համառ, ուշադիր հայացքով։ Լուրեր էին

պատվում, թե նրան ձանձրացրել է մեր կողմերում մարդկանց մեջ վարած սովորական կյանքը և որ նա արևելքի վայրենի երկրների կարտան է քաշում: Եթե չհաշվենք արմաստի առիթով միսս Ռեչելին ասածը, ապա ճաշի ամբողջ ժամանակամիջոցում նա հազիվ թե հինգ-վեց բառ արտաբերեց կամ էլ հազիվ մի բաժակ գինի խմեց: Լուսնաքարը միակ առարկան էր, որ ինչ-որ շահով հետաքրքրել էր նրան: Այդ քարի համբավը, ըստ երևույթին, նրան էր հասել վաղուց, երբ նա ճանապարհորդում էր Հնդկաստանի անծանոթ մարզերում: Սևեռուն նայելով այդ քարին, նա այնքան երկար լռեց, որ միսս Ռեչելն սկսեց շփոթվել, և վերջապես իր սովորական անտարբերությունը ասաց նրան.

— Եթե դուք երբևէ Հնդկաստան գնաք, միսս Վերինդեր, ձեր քեռու նվերը ձեզ հետ չվերցնեք: Հնդկական արմաստը կրոնական պաշտամունքի առարկա է Հնդկաստանում: Ինձ հայտնի է մի քաղաք և այդ քաղաքում կանգնած մի տաճար, որտեղ ձեր կյանքը հինգ րոպե էլ չէր տևի, թե դուք այս զարդով հայտնվեիք այնտեղ:

Միսս Ռեչելը, ապահովության մեջ լինելով Անգլիայում, հիացմունքով էր լսում այն վտանգի մասին, որն իրեն կսպառնար Հնդկաստանում: Բլբլաններն ավելի շատ էին հիացած. նրանք մի կողմ գցեցին դանակներն ու պատառաքաղները և բարձրաձայն բացականչեցին.

— Օ՛, ինչքան հետաքրքիր է:

Միլեդին անհանգիստ շարժում արեց նստած տեղում ու փոխեց խոսակցությունը:

Ճաշկերույթի ընթացքին համեմատ ես կամուց-կամաց նկատում էի, որ այս տոնակատարությունը ամենևին էլ նախորդների նման հաջող չէր:

Այժմ վերհիշելով ծննդյան օրը և այն, ինչ տեղի ունեցավ հետո, ես գրեթե պատրաստ եմ մտածելու, որ անիծյալ արմաստը տխրությունը էր համակել բոլորին: Ես գինի էի հյուրասիրում նրանց և, լինելով արտոնյալ անձնավորություն, սեղանի շուրջը հետևում էի այն ուտելիքներին, որ քիչ էին վերցնում հյուրերը, ու կամացուկ ասում էի նրանց.

— Փորձեք, խնդրում եմ, գիտեմ, որ ձեզ դուր կգա:

Տասից իննը փորձում էին, հարգելով ձեր Բետտերեյին,



բայց ամեն ինչ իզուր էր: Խոսակցութիւնը չէր ստացվում, և նույնիսկ ես ինձ լավ չէի գգում: Իսկ երբ որևէ մեկը մի խոսք էր ասում, ապա միշտ ինչ-որ տեղին չէր ստացվում: Օրինակ, միտար Կանդին՝ բժիշկը, սովորականից շատ ավելի անսպասելի բաներ ասաց: Ահա ձեզ մի նմուշ, և դուք կհասկանաք, թե ես ինչ կարող էի զգալ բուֆետի մոտ կանգնած, ևս, որ ամբողջ հոգով հաջողութիւն էի ցանկանում տոնախմբութիւնը:

Ճաշկերույթին ներկա տիկիներն էլ մեջ էր պրոֆեսորի այրի հարգարժան միտա Տրիդհոյը: Այս բարի տիկինը անվերջ իր հանգուցյալ ամուսնուց էր խոսում, երբեք կողմնակի մարդկանց չասելով, որ նա արդեն լավագույն աշխարհում է զբաղւում: Ես ենթադրում եմ, որ նա հավատացած էր, թե ամեն ինչ քիչ թե շատ կրթված անգլիացի պարտավոր է այդ իմաստը: Խոսակցութեան դադարներին մեկի ժամանակ ինչ-որ մեկը խոսեց մի շոր ու բավականաչափ տհաճ ատարկայից՝ մարդու մարմնի կառուցվածքից: Բարի միտա Տրիդհոյն անմիջապես սկսեց խոսել իր հանգուցյալ ամուսնուց, չհիշատակելով, որ նա մեռած է: Անատոմիան, ըստ նրա, եղել է պրոֆեսորի ազատ ժամերի սիրելի զբաղմունքը: Դժբախտաբար, միտար Կանդին, որ նստած էր նրա դեմոլոգեմ ու ոչինչ չգիտեր հանգուցյալ ջենտլմենի մասին, լսեց տիկնոջը: Կրկնելով շփոթից դուրս քաղաքավարի՝ նա օգտվեց այդ առիթից, որպեսզի տեղնուտեղը պրոֆեսորին իր ծառայութիւններն առաջարկի անատոմիական ժամանցների գծով:

—Վերջերս մի քանի հիանալի կմախք է ստացվել վիրարուժական ակադեմիայում,— բարձրաձայն, ուրախ ասաց միտար Կանդին:—Պրոֆեսորին խորհուրդ եմ տալիս, տիկին, տեսնել զրանք, երբ ազատ ժամանակ ունենա:

Այնպիսի լուսթյուն տիրեց, որ կարելի էր գնդասեղի ընկնելու: ձայնը լսելու Հյուրերը, պրոֆեսորի հիշատակի նկատմամբ ունեցած հարգանքից հլնելով, մեռելային լուսթյուն էին պահպանում: Այդ ժամանակ ես կանգնած էի միտա Տրիդհոյի աթոռի ետևում, հռենոսյան գինի մատուցելով նրան: Նա գլուխը կախ գցեց ու ցածրաձայն արտաբերեց.

—Իմ սիրելի ամուսինը վախճանված է:

Դժբախտաբար միտար Կանդին չլսեց նրա ասածը և, ամե-

նկվին չկասկածելով ճշմարտութեան վրա, առաջվանից ավելի բարձրաձայն ու քաղաքավարի շարունակեց.

— Գուցե պրոֆեսորին հայտի չէ՞, որ նա ակադեմիայի անդամի տոմսով կարող է ամեն օր լինել այնտեղ, բացի կիրակի օրերից, ժամը տասից մինչև չորսը:

Միսիս ՏրիգՆոլը դեմքը թաղեց կրծքի ժանյակների մեջ և է՛լ ավելի ցածրաձայն կրկնեց հանդիսավոր բառերը.

— Իմ սիրելի ամուսինը վախճանված է:

Ես աչքով էի անում սեղանի մյուս կողմում կանգնած Կանդիին: Միսս Ռեշելը թևով հրում էր նրան: Միլեդին անարտահայտելի հայացքներ էր նետում նրա վրա: Բոլորովին անօգուտ:

Սա շարունակում էր նույն բարեհոգութեամբ, որը ոչ մի կերպ ճնարավոր չէր կանգնեցնել.

— Ես շատ ուրախ կլինեի պրոֆեսորին ուղարկելու իմ բարտը, եթե ինձ ասեիր նրա հասցեն:

— Նրա հասցեն, սրբ, գերեզմանն է,— ասաց միսիս ՏրիգՆոլը, հանկարծ համբերությունից դուրս գալով և խոսելով այնպիսի զայրույթով, որ բաժակները ղնզնզացին:— Պրոֆեսորը վախճանվել է տասը տարի առաջ:

— Տե՛ր ասոված,— ասաց միսսր Կանդին:

Բացառությամբ բլբլանների, որոնք հոհոում էին, այնպիսի մի տխրություն իջավ ամբողջ հասարակության վրա, ասես բոլորը պատրաստ էին գնալու պրոֆեսորի հուկից և նրա նման կոչելու գերեզմանից:

Բայց բավական է միտքը Կանդիի մասին: Մնացած հյուրերը նույնքան ոչ պատշաճ էին պահում իրենց, որքան և բժիշկը: Երբ հարկ էր խոսել՝ չէին խոսում, իսկ երբ սկսում էին խոսել, աղա՛ բոլորովին անպատեհ: Միտքը Գոգֆրին, որ սովորաբար այնքան պերճախոս էր ամբիոնի վրա, վճռականապես չէր կամենում իրեն զրսիտել մասնավոր հասարակության մեջ: Ստղկանոցում կրած պարտությունից հետո ջղայնացած էր նա, թե շփոթված՝ չեմ կարող ասել: Նա իր ամբողջ պերճախոսությունը պահել էր իր կողքին նստած տիկնոջ՝ մեր ընտանիքի անդամի ականջների համար: Տիկինը նրա կոմիտեի մասնակիցն էր, հույժ արժանավոր մի անձնավորություն՝ զգված ամրակներով և շամպայնի նկատմամբ մեծ հակումով.

ինչպես հասկանում եք, նա սիրում է շոր շամպայն և այն էլ մեծ քանակությամբ:

Սա կանգնել էի նրանց թիկունքում՝ բուֆետի մոտ, և կարող եմ վկայել, որ հասարակությունը զրկվեց մի շատ խրատական խոսակցությունից, որը ևս լսում էի՝ հանելով խցանները, կտրատելով ոչխարի միսը և այլևայլ բաներ անելով: Բե որոշակի ինչ էին ասում բարեգործական աշխատանքների մասին՝ շլახցի Բայց երբ սկսեցի ականջ դնել՝ նրանք արդեն դադարել էին ծննդաբերող կանանց ու աղքատությունից փրկվող կանանց մասին դատողություններ անելուց և անցել էին առավել լուրջ հարցերի: Կրոնը (ինչպես հասկացա նրանց խոսակցությունից, խցանները հանելիս ու միսը կտրատելիս) նշանակում է սեր: Իսկ սերը նշանակում է կրոն: Իսկ երկիրը փոքր-ինչ խաբխուլ երկիրք էր: Իսկ երկիրնրը փոքր-ինչ նորոգված գետին էր: Գետնի վրա ապրում են բավականաչափ արատավոր մարդիկ, բայց դրա փոխարեն, դա քավելով, երկնքում բոլոր կանայք կլինեն ընդարձակ կոմիտի անդամներ, մի կոմիտե, որտեղ ոչ ոք երբեք չի գծովում, իսկ տղամարդիկ, ինչպես կարգադրիչ հրեշտակներ, կկատարեն կանանց կարգադրությունները: Սքանչելի՛ է: Սքանչելի՛ է: Բայց ինչո՞ւ միստր Գոդֆրին մնացած հասարակությանը զրկեց այդքան հետաքրքիր գրույցից:

Գուցե կարծում եք, թե միստր Ֆրե՞նկլինն աշխատեց աշխուժացնել հասարակությունը և հաճելի դարձնել երեկոն:

Ամենևին ո՛չ: Նա լրիվ սթափվել էր և շատ ուրախ տրամադրություն մեջ էր. կասկածում եմ, որ Պենելոպեն նրան հաղորդած լիներ, թե ծաղկանոցում ինչպես էին վարվել միստր Գոդֆրիի հետ: Բայց, ինչից էլ որ նա խոսում էր, տասից իննի դեպքում անհարմար թեմա էր ընտրում կամ զիմում էր ո՛չ նրան, ում որ պետք էր, և վերջացավ նրանով, որ ոմանց վիրավորեց, ոմանց՝ մտահոգեց: Նրա արտասահմանյան դաստիարակությունը՝ նրա այդ ֆրանսիական, գերմանական ու իտալական կողմերը, որոնց մասին վերևում հիշատակել եմ, շատ անբարենպաստ ձևով դրսևորվեց միլեդիի հյուրընկալ սեղանի շուրջը:

Ի՞նչ էք մտածում, օրինակ, նրա այն դատողության մասին, թե որքան հեռու կարող է գնալ ամուսնացած կինը ուրիշ

տղամարդու նկատմամբ ունեցած իր համակրանքի մեջ, Այս ամենը նա ֆրանսիական սրամտությամբ բացատրում էր Ֆրիդլինճուլի առաջնորդական տեղապահի շամուսնացած մորաքրոջը: Ի՞նչ կարող էք ասել, երբ նա, գերմանական կողմի վրա թեքվելով, հողատերերից մեկին՝ անասնաբուծության գծով մի մեծ հեղինակության, որը ցույցերի բազմացման բնագավառի իր փորձառությունից էր խոսում, հայտարարեց, թե փորձառությունը, խիստ առած, ոչինչ չարժե և ցույցեր աճեցնելու պատշաճ եղանակն այն է, որ մարդ խորասուզվի ինքն իր մեջ, զարգացնի օրինակելի ցույլի գաղափար և այդպիսի եղանակով լույս աշխարհ բերի նրան: Եվ, վերջապես, ի՞նչ կարծիքի եք դուք նրա հետևյալ պոռթկումի մասին. երբ մեր կոմսությունն պատգամավորը, պանիր ու սալաթ ուտելիս, բորբոքվել է Անգլիայում դեմոկրատիզմի տարածման առիթով և արտաբերել է այս խոսքերը՝ «Եթե մենք զրկվենք մեր իրավունքների հնադարյան պաշտպանությունից, միստր Բլեկ, ապա թույլ տվեք հարցնել՝ ի՞նչ կմնա մեզ», — միստր Ֆրենկլինը պատասխանել է իտալական տենտակչունից:

— Սրբ, մեզ կմնա երեք բան՝ սեր, երաժշտություն և սալաթ:

Միստր Ֆրենկլինը իր այդօրինակ արարքներով ոչ միայն սարսափի մատնեց այդ ամբողջ հասարակությանը, այլև, երբ ի վերջո դրսևորվեց նրա անգլիական կողմը, նա կորցրեց իր արտահայտման փայլը և, բժշկական մասնագիտությանը վերաբերող խոսակցության անցնելով, այնպես ծաղրեց բոլոր բժիշկներին, որ կարողացավ կատաղեցնել բարեհոգի, փոքրիկ միստր Կանդիին:

Նրանց վեճն սկսվեց այն բանից, որ միստր Ֆրենկլինը հարկադրված էր խոստովանել (մոռացել էմ, թե ինչ առիթով), որ վերջին ժամանակներս ինքը տառապում է անքնությունամբ: Այս խոսքի վրա՝ միստր Կանդին ասաց, որ նրա նյարդերը քայքայվել են և որ նա անհապաղ պետք է սկսի բուժվել: Միստր Ֆրենկլինը պատասխանեց, որ բուժվելն ու խավարում խարխափելը, իր կարծիքով, նույն բանն են: Միստր Կանդին, պատասխանելով դիպուկ հարվածով, ասաց, որ միստրը Ֆրենկլինը ինքն է խարխափելով քուն որոնում խավարում, և միայն բժշկությունը կարող է նրան օգնել գտնելու այն: Միստր Ֆրենկլինը, հարվածը ետ մղելով, իր կողմից ասաց,



Մինչ որչ կ'առնենք ասել «Ահա ինչ, տերս, խորհրդանշաններն  
արդեն գտախ կ'ըստախ հասարակութիւնը»

որ ինքը շատ է լաել, թե ինչպես է մի կույրը առաջնորդում մյուսին, իսկ հիմա առաջին անգամ իմացավ, թե ինչ է նշանակում դա: Այսպես, խիստ ու դիպուկ վիճեցին Նրանք, ու երկուսն էլ բորբոքվեցին, հատկապես միստր Կանդին, իր մասնագիտությունը պաշտպանելով, այն աստիճան իրեն կորցրեց, որ միլիդին ստիպված եղավ միջամտել և արգելեց վեճը շարունակել: Անհրաժեշտությունից բխող այս հարկադրյալ հրամանը վերջնականապես ի չիք դարձրեց հյուրերի աշխուժությունը: Ժամանակ առ ժամանակ խոսակցություն էր ծայր առնում մերթ այստեղ, մերթ այնտեղ, մեկ-երկու րուպեով. բայց դրա մեջ ոչ կյանք կար, ոչ կրակ: Սատանան (կամ ավաստը) իշխում էր բոլոր հյուրերի վրա, և բոլորը թեթևություն զգացին, երբ իմ տիրուհին վեր կացավ և տիկիններին նշան արեց, որ տղամարդկանց թողնեն գինու սեղանի շուրջը:

Նոր էի ես գրաֆինները շարել ծեր միստր էրլուայթի առջև (սրբ փոխարինում էր տանտիրոջը), երբ պատշգամբում լավեցին ձայներ, որոնք այն աստիճան վախեցրին ինձ, որ ես նույն պահից զրկվեցի իմ նրբակիրթ շարժուձևից: Ես ու միստր Ֆրենկլինը իրար նայեցինք. դա հնդկական թմբուկի ձայնն էր: Ես պատրաստ էի երգվելու, որ աճպարարները մեզ մոտ էին վերադարձել Լուսնաքարը մեր տանը հայտնվելուն պես:

Երբ նրանք արդեն շրջանցում էին սանդղավանդի անկյունը՝ ես շտապեցի այնտեղ, որպեսզի քշեմ նրանց: Բայց, դժբախտաբար, բլբլաններն ինձնից առաջ անցան: Նրանք, ինչպես հրավառություն երկու հրթիռ, դուրս վաղեցին սանդղավանդ, անպայման կամենալով տեսնել հնդիկների ամպարարությունները: Մյուս տիկինները հետևեցին նրանց, և վերջապես դուրս եկան նաև տղամարդիկ: Մինչ դուք կհասցնեիք ասել «մեղա քեզ, տեր», խարդավաններն արդեն գլուխ էին տալիս հասարակությանը, իսկ բլբլանները համբուրում էին դուրեկան տղային:

Միստր Ֆրենկլինը կանգնեց միսս Ռեչելի կողքին, իսկ ես՝ սրա ետևը: Ախր մեր կասկածները, երևի, իրավացի էին, մինչդեռ միսս Ռեչելը կանգնել էր հնդիկների առջև, և նրա զգեստի վրա շողշողում էր Լուսնաքարը:

Չեմ կարող ասել, թե ինչ աճպարարություններ էին անում

նրանք և ինչպես էին անում: Արտնեղած անհաշող ճաշկերույթից և շղայնացած խարզավանների վրա, որոնք ճիշտ մամանակին եկել էին սեփական աչքով տեսնելու սլմաստը, ես, խոստովանում եմ, բոլորովին ինձ կորցրիւ Առաջին բանը, որ հիշում եմ, հնդիկ ճանապարհորդ միստր Մերտուետի հայտնվելն էր բեմի վրա: Շրջանցելով կանգնած և նստած հյուրերի կիսաընդհատը, նա հտեի կողմից հանգիստ մոտեցավ աճպարարներին ու հանկարծ սկսեց նրանց հետ խոսել իրենց իսկ մայրենի լեզվով:

Եթե նա սվինով էլ խոցած լիներ հնդիկներին՝ չեմ կարծում, թե նրանք ավելի շատ վախենային և նույն արագութեամբ շրջվեին նրա կողմը, ինչպես որ հիմա նրա բերանից դուրս թռած առաջին բաւերը լսելիս: Մեկ րոպե անց արդեն նրանք շատ քաղաքավարի ու խոնարհ զուլխ էին տալիս նրան: Անհայտ լեզվով մի քանի խոսք փոխանակելով նրանց հետ, միստր Մերտուետը հեռացավ նույնբան հանգիստ, ինչպես որ եկել էր: Գլխավոր աճպարարը, որ թարգմանչի դեր էր կատարում, նորից շրջվեց դեպի հանդիսականները: Ես նկատեցի, որ այդ մարդու սրճագույն դեմքը մոխրագույն էր դարձել այն բանից հետո, որ միստր Մերտուետը խոսել էր հետը: Նա զուլխ տվեց միլեդիին ու նրան հայտարարեց, թե ներկայացումն ավարտված է: Խիստ հիասթափված բլբլանները բարձրաձայն ճշացին՝ «Օ՛»։ զա հասցեագրված էր միստր Մերտուետին, որը դադարեցրել էր ներկայացումը: Գլխավոր աճպարարը խոնարհաբար ձեռքը դրեց կրծքին ու երկրորդ անգամ ասաց, թե ներկայացումն ավարտված է: Տղան, լայնեզր գրելարկը ձեռքին, սկսեց հերթով մոտենալ բոլորին: Տիկիներն անցան հյուրասրահ, իսկ տղամարդիկ (բացառութեամբ միստր Ֆրենկլինի ու միստր Մերտուետի) վերադարձան իրենց գինու սեղանի մոտ: Ես սպասավորներից մեկի հետ գնացի հնդիկների կտակից, որպեսզի նրանց դուրս բերեմ դաստակերտից: Այգու միջով վերադառնալիս ծխախոտի հոտ զգացի և տեսա, որ միստր Ֆրենկլինն ու միստր Մերտուետը (վերջինս սիգար էր ծխում) դանդաղ ետ ու առաջ են քայլում ծառերի արանքում: Միստր Ֆրենկլինն ինձ նշան տրեց, որ միանամ իրենց:

—Սա,— ասաց միստր Ֆրենկլինը, ինձ ներկայացնելով

նշանավոր ճանապարհորդին, — Գարրիել Բետտերիչն է, մեր գերդաստանի հնամենի ծառան ու բարեկամը, որի մասին քիչ առաջ ձեզ ասում էի: Խնդրում եմ նրան կրկնեք այն ամենը, ինչ հիմա ասացիք ինձ:

Միստր Մերտուետը սիգարը հանեց բերանից և իր սովորական հոգնած տեսքով հենվեց ծառին:

— Միստր Բետտերիչ, — սկսեց նա, — այս երեք հնդիկները նույնպիսի աճաբարարներ են, ինչպես ես և դու:

Նոր անակնկալ: Հասկանալի է, որ ես ճանապարհորդից հարցրի, թե արդյո՞ք սրանից առաջ ինքը չի հանդիպել այդ հնդիկների հետ:

— Երբեք, — պատասխանեց միստր Մերտուետը, — բայց ես գիտեմ, թե ինչ են հնդկական աճաբարարությունները: Այն ամենը, ինչ դուք այսօր տեսաք, դրանց սոսկ շատ վատ և անհարմար նմանակումն են: Եթե իմ երկարամյա ու մեծ փորձն ինձ չի խաբում, այդ մարդիկ բարձր կաստայի բրահմաններ են: Ես նրանց ասացի, որ իրենք այն մարդիկ չեն, որպիսին իրենց ներկայացնում են, և դուք տեսնում եք, թե դա ինչպես շփոթեցրեց նրանց, թեև հնդիկները շատ հմտորեն կարողանում են թաքցնել իրենց զգացմունքները: Նրանց վարվելակերպի մեջ ինչ-որ գաղտնիք կա, որը ես չեմ կարող բացատրել. նրանք կրկնակի մեղանչել են իրենց կաստայի առջև. նախ՝ անցնելով ծովը. այնուհետև՝ զգեստափոխվելով ազատնալով աճաբարարներ: Այն երկրում, որտեղ նրանք ապրում են, դա ահավոր հանցագործություն է: Պետք է շատ լուրջ պատճառ լինի դրա համար և ոչ բոլորովին սովորական արևն արդարացում, որպեսզի նրանք հայրենիք վերադառնալուց հետո հնարավորություն ունենան նորից բնգունվելու իրենց կաստայի մեջ:

Ես դարձանիքից համբաստել էի: Միստր Մերտուետը շարունակում էր ծխել իր սիգարը: Միստր Ֆրենկլինը, ինչպես ինձ թվաց, խուսանավելով իր բնավորության գանազան կողմերի միջև, վերջապես խզեց լուսնությունը:

— Միստր Մերտուետ, ես չեի համարձակվի ձեզ անհանգիստացնել մեր ընտանեկան գործերով, որոնք չեն կարող ձեզ հետաքրքրել և որոնց մասին ինքս բավականաչափ զովորմամբ եմ խոսում մեր անային շրջանակներից դուրս: Բայց



ձեր ասածից հետո ինձ պարտավոր եմ համարում, ի շահ լեզի Վերինդերի ու նրա դստեր, պատմել այն, ինչը, թերևս, կարող է առեղծվածը հասկանալու հնարավորություն տալ ձեզ։ Ծս ձեզ հետ խոսում եմ զաղտնի և, համարձակվում եմ հուսալ, որ դուք այդ շեք մոռանա։

Այս նախաբանից հետո նա հնդիկ ճանապարհորդին հաղորդեց այն ամենը, ինչ ինձ պատմել էր Երեբուն ավազներում։ Նույնիսկ անվրդով Մերտուետն այն աստիճան հետաքրքրվեց այդ պատմությունում, որ թողեց իր սիգարը հանդի։

— Ի՞նչ է այս ամենի մասին ասում ձեր փորձը, — վերջում հարցրեց միստր Ֆրենկլինը։

— Իմ փորձը հուշում է, — պատասխանեց ճանապարհորդը, — որ իմ ամբողջ կյանքի ընթացքում ես այնքան մոտիկ չեմ եղել մահին, ինչպես դուք այն ժամանակ, միստր Քլեկ, իսկ դա շատ բան է ասում։

Հասավ միստր Ֆրենկլինի զարմանալու հերթը։

— Մի՞թե դա այդքան լուրջ է, — հարցրեց նա։

— Իմ կարծիքով՝ այո, — պատասխանեց միստր Մերտուետը, — Ձեր այս պատմածից հետո ես չեմ կարող կասկածել, որ կաստաչի օրենքի այդ խախտման պատճառն ու արգարացումը Լուսնաբարի վերադարձն է իր տեղը՝ հնդկական կուռքի ճակատին, ինչի մասին որ ձեզ ասել եմ։ Այդ մարդիկ հարմար առիթին կապասին կատվի համբրությունում ու զրանից կօգտվեն վազրի կատաղությունում։ Թե դուք ինչպես եք ազատվել նրանցից՝ ես չեմ կարողանում հասկանալ, — ավելացրեց նշանավոր ճանապարհորդը, վերստին ծիւնելով իր սիգարն ու սևեռուն նայելով միստր Ֆրենկլինին։ — Դուք այժմ ասող վերցրած երթևեկել եք այստեղ ու Լոնդոնում, և դեռ ո՞ղջ եք։ Աշխատենք բացատրել դա։ Ենթադրում եմ, որ երկու անգամ էլ դուք արմատի համար Լոնդոնի բանկն եք գնացել օրը ցերեկով։

— Այո, — պատասխանեց միստր Ֆրենկլինը։

— Եվ այդ ժամանակ շա՞տ ժողովուրդ կար փողոցներում։

— Շատ։

— Անշուշտ, դուք նշել էիք լեզի Վերինդերի մոտ դալու ժամը։ Այստեղից մինչև կայարան ամաչի տարածություն է։ Դուք ժամանել եք նշանակված ժամին։

—Ոչ, ես եկել եմ նախատեսված ժամանակից շուրս ժամ շուրս:

— Թույլ տվեք այդ առթիվ շնորհավորել ձեզ: Ե՛րբ այժմաստք տարաք այստեղի բաներ:

— Բանկ տարա այստեղ գալուց մեկ ժամ հետո և այն բանից երեք ժամ առաջ, երբ ինձ սպասում էին տեսնել այստեղ:

— Թույլ տվեք նորից շնորհավորել ձեզ: Քարք ետ բերեցիք մենա՞կ:

— Ոչ, Եկա իմ զարմիկի ու զարմուհիների հետ:

— Թույլ տվեք երրորդ անգամ շնորհավորել ձեզ: Եթե երբևէ ձեր մտքով անցնի զնալ քաղաքակրթության սահմաններից դուրս, միտքը Բլեկ, ինձ իմաց տվեք, ու ես կդամ ձեզ հետ: Գուք բախտավոր մարդ եք:

Այդ ժամանակ միջամտեցի ես: Իմ անզլուական հայացքները շէին հաշտվում այդպիսի բաների հետ:

— Մի՞թե դուք, սրբ, ուզում եք ասել, — բացականչեցի հս, — որ հնդիկներն արմաստին տիրելու համար կյանքից կզրկեին միտքը Ֆրենկլինին, եթե նա այդ հնարավորությունը տար նրանց:

— Գուք ծխո՞ւմ եք, միտքը Բետտերեջ, — հարցրեց ճանապարհորդը:

— Միչք մ եմ, սրբ:

« - Շե՛ք եք զնահատում ձեր ծխամորճի մեջ եղած մոխիրը:

— Ամենևին չեմ զնահատում, սրբ:

— Այն երկրում, որտեղից եկել են այդ մարդիկ, մարդկային կյանքը զնահատում են նույնքան քիչ, ինչքան դուք՝ ձեր ծխամորճի մոխիրը: Եթե հազար կյանք ընկած լիներ նրանց և արմաստը վերադարձնելու միջև, և եթե նրանք մտածեին, որ կարող են անպատիժ կերպով սպանել այդ մարդկանց, ապա բոլորին կսպանեին: Կաստան զոհաբերելը լուրջ բան է Հնդկաստանում, կյանքը զոհաբերելը ոչինչ չարժե:

Այդ առթիվ իմ կարծիքն արտահայտելով, ասացի, որ դա գողերի ու մարդասպանների խումբ է: Միտքը Մերտուեան արտահայտեց իր կարծիքը, թե դա զարմանալի ժողովուրդ է: Միտքը Ֆրենկլինը ոչ մի կարծիք չարտահայտեց, այլ մեզ վերադարձրեց գործարար խոսակցություն:

—Նրանք չուսնաքարը տեսան միսս Վերինգերի շրջազգեստի վրա,—ասաց նա։—Ի՞նչ պիտի անենք հիմա։

—Այն, ինչ սպառնում էր անել ձեր քեփին,—պատասխանեց միստր Մերտուետը։—Գնդապետ Հեռնկաստը հասկանում էր, թե ինչ մարդկանց հետ գործ ունի ինքը։ Վաղն ալմաստը հուսալի պահապաններով կուղարկեք Ամստերդամ։ Կկարգադրեք, որ մեկի փոխարեն կես դյուժին ադամանդ սարքեն դրանից։ Այդ ժամանակ դա արդեն սրբազան Լուսնաքար չի լինի, և վտանգն էլ կանցնի։

Միստր Ֆրենկլինը շրջվեց իմ կողմը։

—Ճար շունենք,—ասաց նա։—Վաղը ևեթ պետք է խոսենք լեզի Վերինգերի հետ։

—Իսկ ինչպե՞ս վարվենք այսօր, սրբ,—հարցրի ես։—Իսկ եթե հնդիկները վերադառնա՞ն։

Նախքան միստր Ֆրենկլինը կհասցնեի խոսել, ինձ պատասխանեց միստր Մերտուետը։

—Հնդիկները չեն համարձակվի այսօր վերադառնալ,—ասաց նա։—Նրանք երբևք ուղիղ ճանապարհով չեն գնա, էլ չեն ասում այնպիսի մի գործի մասին, ինչպիսին սա է, երբ ամենափոքրիկ սխալն անգամ կարող է կործանարար լինել նրանց նպատակի համար։

—Իսկ եթե այդ խարդավանները ձեր կարծածից ավելի համարձակ գտնվե՞ն,—պնդում էի ես։

—Այդ դեպքում արձակեք շներին,—ասաց միստր Մերտուետը։—Բազում մեծ շներ ունե՞ք։

—Երկու շուն կա, սրբ։ Ցյաշուն և խուզարկու շուն։

—Դրանք բավական են։ Այս դեպքում, միստր Բետտերեչ, ցլաշունն ու խուզարկու շունը մի մեծ առավելություն ունեն նրանց, հավանաբար, չի տանջի մարդկային կյանքի անձեռնմըխելիության վերաբերյալ ձեր խղճմտանքը։

Սրբ նա իր այդ վերջին ոգևորությունը պարպեց ինձ վրա՝ հյուրասրահից մեզ հասան դաշնամուրի հնչյուններ։ Նա գցեց իր սիգարն ու թևանցուկ արեց միստր Ֆրենկլինին, որպեսզի վերադառնա տիկիններին մոտ։ Նրանց հտնից տուն գնալիս նկատեցի, որ երկինքն արագորեն ծածկվում է ամպերով։ Միստր Մերտուետը նույնպես դա նկատեց։ Նա ինձ նայեց իր սովորական ծաղրանքով և ասաց։

— Այս գիշեր հնդիկնձրը զոնտերի կարիք կունենան, միասր  
Բետտերեջ:

Նրա համար հեշտ էր կատակելը: Բայց թե ես նշանավոր  
ճանապարհորդ չէի և իմ կյանքի ուղին անցել էի առանց անդր-  
ժովյան զանազան երկրներում գողերի ու մարդասպանների  
մեջ կյանքս վտանդի ենթարկելու: Մտա իմ փոքրիկ սենյակը,  
տեղավորվեցի իմ բազկաթոռի մեջ, ամբողջովին քրտնած, և  
հուսահատությամբ ինքս ինձ հարցրի՝ ի՞նչ պետք է անել հի-  
մա: Հողեկան աշապիսի տագնապալի վիճակում ոմանք դողե-  
րոցքի կհասցնեին իրենց: Ես բոլորովին այլ կերպ վերջացրի:  
Վառեցի ծխամորձս ու բացեցի «Ռոբինզոն Կրուզոն»:

Հինգ րոպե շանցած աչքովս ընկավ այս զարմանալի տեղը,  
էջ հարյուր վաթսունմեկ.

«Վտանգի սարսափը տասը հաղար անդամ ավելի սար-  
սափելի է, քան աչքի համար տեսանելի վտանգն ինքը, և մենք  
գտնում ենք, որ անհանգստության ծանրությունը շատ ավելի  
մեծ է, քան մեզ անհանգստացնող դժբախտությունը»:

Սրանից հետո Ռոբինզոն Կրուզոյին չհավատացող մարդու  
կամ ուղեղի մի ծալքն է պակաս, կամ էլ նա մշուշված է անձնա-  
պաստանությունը: Չարժե սպացուցներ ծախսել նրա վրա,  
ավելի լավ է դրանք պահել առավել դյուրահավատ հոգի ունե-  
ցող մարդու համար:

Ես վաղուց արգեն ծխել էի երկրորդ ձխամորձը և շարու-  
նակում էի հիանալ այդ զարմանալի գրքով, երբ Պենելոպեն (որ  
թե՛ էր մատուցում) ինձ մոտ եկավ հյուրասենյակից բերած  
լուրերով: Նա մենակ էր թողել զուգերգ կատարող բլբլաններ-  
ին. բառերն սկսվում էին «Օ»-ով, և երաժշտությունը հա-  
մապատասխանում էր բառերին: Նա նկատել էր, որ միլեզին  
սխալներ է անում վիստ խաղալիս, մի բան, որ առաջնե-  
րում մենք չենք նկատել: Նա տեսել էր, որ նշանավոր ճա-  
նապարհորդը քնել էր մի անկյունում: Նա լսել էր, թե ինչ-  
պես միտար Ֆրենկլինը ընդհանրապես կանանց կոմիտենե-  
րի հաշվով ծաղրել էր միտար Գոգֆրիին, իսկ միտար Գոգֆրիին  
էլ նրան ստարկել էր շատ ավելի խիստ, քան վայել էր իր  
շարժումների մեղմությամբ հայտնի ջենտլմենին: Նա նկա-  
տել էր, թե ինչպես միսս Ռեշելը, հավանաբար, փորձելով  
հանգստացնել միսս Տրիդհոյին, լուսանկարներ էր ցույց

տվել նրան, իսկ իրականում թաքուն կերպով այնպիսի հայացքներ էր նետել միստր Ֆրենկլինի վրա, որոնցում ոչ մի խելոք սպասուհի չէր կարող սխալվել երբեք: Վերջապես Պենելոպեն տեսել էր, թե ինչպես միստր Կանդին, բժիշկը, որ խորհրդավոր կերպով անհետացել էր հյուրասրահից, իսկ այնուհետև խորհրդավոր կերպով վերադարձել, գաղտնի խոսակցության էր բռնվել միստր Գոդֆրիի հետ: Մի խոսքով, գործերը շատ ավելի լավ էին գնում, քան մենք իրավունք ունեինք սպասելու, դատելով ըստ ճաշկերույթի: Եթե մենք կարողանայինք գոնե մի ժամ էլ դիմանալ, ապա ծերուկ ժամանակի տեղ կհասցնեք նրանց կառքերը և մեզ բուրոսովին կազատեք հյուրերից:

Ամեն ինչ անցողիկ է այս աշխարհում, նույնիսկ «Ռոբինզոն Կրուզոյի» հանդիսացնող ներգործությունն էլ անցավ, երբ վերջապես ինձ մենակ թողեց Պենելոպեն: Ես նորից անհանգստացա ու որոշեցի անձրևն սկսվելուց առաջ մի պտույտ գործել տան շուրջը: Փոխանակ հետս մի ծառա վերցնեի, որը մարդկային քիթ ուներ, ու, հետևաբար, որն էլ չնախատեսված դեպքում՝ ոչ օգտակար քիթ, ես մի խուզարկու շուն վերցրի հետս: Արդեն կարելի էր հուսալ, որ նրա քիթն անպայման կըզգար օտարին: Մենք պտտվեցինք տան շուրջը և դուրս եկանք ճանապարհի վրա. վերադարձանք այնպես, ինչպես որ զնացել էինք՝ դատարկաձեռն, ոչ մի տեղ թաքնված մարդ չգրտնելով: Ես նորից շրթա հագցրի շան վզին և, թփուտաների միջով վերադառնալիս, հանդիպեցի մեր երկու ջենտլմեններին, որոնք իմ կողմն էին գալիս հյուրասրահից: Դրանք միստր Կանդին և միստր Գոդֆրին էին. նրանք (ինչպես Պենելոպեն էր ինձ հաղորդել) դեռ շարունակում էին գրուցել իրար հետ, կամացուկ ծիծաղելով ինչ-որ մի զվարճալի բանի վրա: Ես զարմացա, որ այդ երկու հոգին մտերմացել էին, բայց, հասկանալի է, անցա նրանց մոտով, իբր չնկատելով:

Կառքերի ժամանումն ասես պտտճառ եղավ, որ անձրև սկսվեք: Այնպես թափվեց, որ կարծես մտադիր էր տեղալ ամբողջ գիշեր: Բացառությամբ բժշկի, որին բաց երկանիվ կառքն էր սպասում, մնացած ամբողջ հասարակությունը շատ հարմար ձևով տալն մեկնեց կառքերով: Ես միստր Կանդինն ասացի, որ վախենում եմ ինքը ստեփ-գլուխ ջուր կարի, իսկ

նա ինձ պատասխանեց, որ դարձանում է, թե ինչպես է, որ այս տարիքիս եմ հասել ու չգիտեմ, որ բժշկի մաշկն անջըրանցիկ է: Նա, ծիծաղելով իր կատակի վրա, մեկնեց բաց կառքով՝ անձրևի տակ, և այդպիսով մենք աղաավեցինք մեր հյուրերից: Այժմ մնում է վերահաս գիշերվա պատմութունն անել:

## Գ Լ ու խ X I

Երբ հյուրերից վերջինը մեկնեց՝ ևս վերադարձա սրահ, որտեղ Սամյուելը պատատակի սեղանիկի մոտ սողայաջրով բրենդի էր պատրաստում: Հյուրասենյակից եկան միլեդին ու միսս Ռեշելը՝ երկու երիտասարդ ջենտլմենների ուղեկցությամբ: Միսսը Գոդֆրին սողայաջրով բրենդի խմեց, միսսը Յրենկլիինը ոչինչ շուգեց խմել: Նա նստեց. սաստիկ հոգնած տեսք ունեք: Այդ հանդիսավոր օրը տեղի ունեցած խոսակցությունը, թերևս, տանջել էր նրան:

Միլեդին, որ շրջվեց մեզ բարի գիշեր ասելու, սևեռուն նայեց մեղսագործ գնդապետի նվերին, որը շողշողում էր գրասեր զգեստի վրա:

—Ռեշել, — ասաց նա, — գիշերը որտե՞ղ ևս դնելու քո ավմաստը:

Միսս Ռեշելը շատ ուրախ տրամադրություն մեջ էր, այնպիսի տրամադրություն մեջ, երբ մարդ ուզում է անվերջ գատարկ բաներ ասել ու համառոտն պաշտպանել դրանք որպես խելացի ասվածներ, մի բան, որ դուք, գուցե, նկատել եք ջահել օրիորդների մոտ, երբ ուժեղ զգացողություններով լի օրվա վերջին գրգռված են նրանց նյարդերը: Սկզբում նա հայտարարեց, թե չգիտե որտեղ գնի ավմաստը: Հետո ասաց. «Հասկանալի է, մյուս խրերի հետ մեկտեղ կդնեմ վարդասեղանի վրա»: Հետո հասկացավ, որ ավմաստը կարող է ինքն իրեն իր լուսնային սահմուկուն լույսով շողշողալ մթան մեջ ու գիշերը վախեցնել իրեն: Հետո հիշեց հնդկական փոթորիկ պահարանի մասին, որը գրված էր իր հյուրասենյակում, և նույն պահին որոշեց հնդկական ավմաստը պահել հնդկական պահարանիկում, որպեսզի նույն երկրի երկու հրաշալի ստեղ-

ծագործություններին հեարազորություն տա հիանալու իրարով: Միլեդին, որ համբերությամբ լսում էր այս ամբողջ անհեթեթությունը, ընդհատեց դատերը.

— Հողջակս, քո հնդկական պահարանիկը չի փակվում:

— Աստված իմ, մայրիկ,— բացականչեց միսս Ռեշելը: — Մի՞թե մենք հյուրանոցում ենք գտնվում, մի՞թե մեր տանը գողեր կան:

Այս քմահաճ պատասխանի վրա ուշադրություն չդարձնելով, միլեդին բարի գիշեր մաղթեց ջննտմեններին, հետո շրջվեց միսս Ռեշելի կողմը ու համբուրեց նրան:

— Գուցե տաս ե՞ս պահեմ քո ավաստը,— ասաց նա:

Միսս Ռեշելն այս խոսքերն ընդունեց այնպես, ինչպես տասը տարի առաջ կընդուներ նոր տիկնիկից բաժանվելու առաջարկը: Միլեդին հասկացավ, որ այդ երեկո նրան համոզել չի լինի:

— Առավոտյան վեր կենալուն պես արի ինձ մոտ, Ռեշել,— ասաց նա,— բան ունեմ քեզ պատմելու:

Այս ասելով՝ միլեդին դանդաղորեն դուրս եկավ սենյակից, մտքերի մեջ խորասուզված և, ամենայն հավանականությամբ, ոչ շատ դո՛հ իր մտածումների ընթացքից:

Նրանից անմիջապես հետո հրածեղտ տվեց նաև միսս Ռեշելը: Նախ սեղմեց միսսը Գոգֆրիի ձեռքը, որ կանդնած էր սրահի մյուս ծայրին և պատի վրայի նկարն էր դնում: Հետո շրջվեց միսսը Ֆրենկլինի կողմը, որը դեռ լուռ ու հոգնած նստած էր անկյունում:

Թե ինչ խոսեցին իրար հետ՝ չեմ կարող ասել: Բայց, կանգնած լինելով կաղնեփայտե մեծ շրջանակի մոտ, որի մեջ հայելի էր դրված, նրանում տեսա, թե ինչպես միսս Ռեշելը նընջարան գնալուց առաջ կորսածից գողտուկ հանեց միսսը Ֆրենկլինի նվիրած մեղալիտնը և նրան ցույց տվեց այնպիսի մի ժպիտով, որն, իհարկե, ամենևին էլ ոչ սովորական ինչ-որ բան էր նշանակում: Այս հանգամանքը ինչ-որ շափով թուլացրեց իմ նախկին հավատը, և ես սկսեցի մտածել, որ Պենելոպեն, թերևս, իրավացի է իր օրիորդի վզացմունքների հաբցում:

Հենց որ միսս Ռեշելը դադարեց նրա տեսողությունը շրայնելուց, միսսը Ֆրենկլինը նկատեց նաև ինձ: Լինելով միշտ

փոփոխական, նա արդեն հասցրել էր փոխել հնդիկների մասին ունեցած իր կարծիքը:

— Բեռտերեջ, — ասաց նա, — ես գրեթե պատրաստ եմ Լնթադրելու, որ այգում զրուցելիս շափեց ավելի մեծ նշանակութունն եմ տվել միստր Մերտուետի ասածներին: Ինչ իմանաս, արդյո՞ք նա հեքիաթներ չի ասել մեզ, որ այնքան սիրում են հրամցնել ճանապարհորդները: Մի՞թե իրոք մտադիր եք շնորհն արձակել:

— Կարձակեմ նրանց վզակապերը, սըր, — պատասխանեցի ևս, — ու կթողնեմ, որ ուզածի շափ վազվզեն գիշերը, եթե օտարի հոտ առնեն:

— Գե լավ, — ասաց միստր Ֆրենկլինը: — Վաղը կտեսնենք, թե ինչ ենք անելու հետո: Բեռտերեջ, ես ամենևին էլ մտադիր չեմ առանց լուրջ պատճառի վախեցնել մորաքրոջս: Բարի գիշեր:

Երբ նա գլխով արեց ինձ և մոմը վերցրեց, որպեսզի վերև գնա, այնքան հոգնած ու գունատ թվաց, որ համարձակվեցի նրան խորհուրդ տալ գիշերը հանգիստ քնելու համար սոգայով բրենդի խմել: Միստր Գոդֆրին, որ սենյակի մյուս ծայրից մոտեցավ մեզ, ինձ պաշտպանեց: Նա շատ մտերմական ձևով սկսեց միստր Ֆրենկլինին համոզել, որ քնելուց առաջ որևէ բան խմի: Սա այս հստիգամանքը հիշատակում եմ, որովհետև այդ օրը իմ տեսածից ու լսածից հետո ինձ համար հաճելի էր նկատել, որ մեր երկու ջենտլմեններն առաջվա պես լավ հարաբերության մեջ են: Նրանց բանակազուր (որ լսել էր Պենելոպեն հյուրասենյակում) և միսս Ռեչելի բարեհաճության համար մրցակցությունը, ըստ երևույթին, լուրջ գժտության չէին հասցրել: Բայց թե նրանք երկուսն էլ լավ բնավորություն ունեին և աշխարհիկ մարդիկ էին: Իսկ բարձր կոշման մարդիկ այն արժանապատվությունն ունեն, որ երբեք իրար հետ այնպես չեն կռվում, ինչպես ոչ ազնվական մարդիկ:

Միստր Ֆրենկլինը հրաժարվեց բրենդիից և միստր Գոդֆրիի հետ գնաց վերև, քանի որ նրանց սենյակներն իրար կողքի էին, բայց, հավանաբար, զարմիկը սանդղահարթակում համոզել էր նրան կամ, ամեն անգամվա պես, փոխվել էր նրա տրամադրությունը:





— Գուցեն գիշերն ուղենամ խմել,— ձայն տվեց նա,—  
բրենդի ուղարկեք իմ սենյակը:

Ես բրենդի ու ջուր ուղարկեցի Սամյուելի հետ, իսկ հետո  
դուրս եկա շների վզակապերն արձակելու: Երկուսն էլ քիչ  
մնաց խելագարվեին զարմանքից, որ գիշերվա այս պահին  
բաց էին թողել իրենց, և լակոտների պես թռչում էին վրաս:  
Սակայն շուտով անձրևը ստուեցրեց նրանց խանդավառությու-  
նը. նրանք մի քիչ ջուր լակեցին և նորից մտան իրենց բույնը:  
Տուն վերագտնուալիս եղանակը լավանալու նշաններ նկատեցի  
երկնքում, սակայն առայժմ անձրևը թափվում էր առաջվա  
պես և ոտքերիս տակ ճողփում էր ցեխը:

Ես ու Սամյուելը սչքի անցկացրինք ամբողջ տունը և,  
սուլորականի պես, փակեցինք բոլոր դռները: Այս անգամ ամեն

ինչ ստուգեցի անձամբ և ոչ մի բան չվստահեցի իմ օգնակա-  
նիին: Ամեն ինչ ամուր, շատ ամուր փակած էր, երբ ի վերջո  
գիշերվա ժամը մեկին ես անկողին մտա ու հանգիստ տվի  
իմ ծեր ոսկորներին:

Այդ օրվա հոգսերը թերևս իմ ուժերից վեր էին: Ինչ ուզում  
է լինեք, բայց այդ գիշեր ես վարակվել էի միստր Ֆրենկլինի  
հիվանդությամբ: Արևն արդեն ծագում էր, երբ վերջապես  
քնեցի: Ամբողջ ժամանակ, քանի դեռ չէի քնել, տանը մեռե-  
լային լուսթյուն էր տիրում: Չնչին իսկ աղմուկ չկար, բացի  
անձրևի թափոցներից ու լուսադեմին բարձրացած քամուց, որ  
շրշում էր ծառերի մեջ:

Յոթն անց կեսին արթնացա ու բացեցի լուսամուտը: Արե-  
վոտ հրաշալի օր էր: Ժամացույցը խփեց ութը, և ես դուրս  
եկա, որպեսզի շներին կապեմ, երբ կնոջական շրջազգեստի  
շրշյուն լսեցի իմ ետևում, աստիճանների վրա:

Շրջվեցի. իմ հտևից խելագարի պես աստիճաններով ներ-  
քե էր վազում Պենելոպեն:

— Հայրի՛կ, — գոռում էր նա: — Ի սեր աստծու, վերև  
գնացեք: Ալմաստը կորել է:

— Երևի խելքդ թոցրե՞լ ես, — հարցրի ես:

— Կորել է, — կրկնեց Պենելոպեն: — Կորել է, և ոչ ոք չգիտե,  
թե ինչպես: Գնացեք տեսեք:

Նա ինձ իր ետևից քարշ տվեց մեր օրիորդի հյուրասենյա-  
կը, որի ետևում իր ննջարանն էր: Այնտեղ, ննջարանի շեմին,  
կանգնած էր միսս Ռեչելը՝ գրեթե նույնքան սպիտակ, որքան  
սպիտակ էր նրա պենյուարը: Հնդկական պահարանիկի եր-  
կու փեղկերը բաց էին կրնկի վրա: Դարակներից մեկը դուրս  
էր քաշված մինչև վերջ:

— Տեսեք, — ասաց Պենելոպեն: — Ես ինքս տեսա, թե ինչ-  
պես երկկ միսս Ռեչելն ալմաստը դրեց այս դարակի մեջ:

Ես մոտեցա պահարանիկին. դարակը դատարկ էր:

— Դա ճի՞շտ է, միսս, — հարցրի ես:

Հայացքով, որը նման չէր նրա սովորական հայացքին, և  
ձայնով, որը նման չէր նրա ձայնին, միսս Ռեչելը պատաս-  
խանեց աղջկաս պես.

— Ալմաստը կորել է:

Այս բաներով, նա գնաց իր ննջարանն ու կտակից փակեց դուռը:

Մենք դեռ չգիտեինք, թե ինչ ենք անելու, երբ ներս մտավ միլեդին. նա իմ ձայնը լսել էր աղջկա հյուրասենյակում ու հարցրել էր, թե ինչ է պատահել: Ալմաստի կորստյան լուրը շշմեցրել էր նրան: Նա անմիջապես մոտեցավ աղջկա ննջարանին ու պահանջեց ներս թողնել իրեն: Միսս Ռեչելը ներս թողեց նրան:

Հրդեհի արագությամբ տանը համակած տագնապը ամենից առաջ հասավ երկու ջենտլմեններին:

Միստր Գոդֆրին առաջինը դուրս եկավ իր սենյակից: Երբ նա լսեց, թե ինչ է պատահել, զարմացած ձեռքերն իրար զարկեց, մի բան, որն այնքան էլ շատ չէր խոսում նրա հոգեկան կարծրության օգտին: Միստր Ֆրենկլինը, որի խորաթափանցությունը հավատում էի, հուսալով, թե մի խորհուրդ կտա մեզ, նույնքան անճարակ գտնվեց, որքան և իր զարմիկը, երբ իր հերթին լսեց այդ լուրը: Սպասվածին հակառակ, նա վերջապես լավ բունն առել էր, և այդ անսովոր երանելի վիճակը, ինչպես նա ինքն էր առում, մի տեսակ ապուշացրել էր նրան: Սակայն, երբ միստր Ֆրենկլինը մի բաժակ սուրճ խմեց, որ, արտասահմանյան սովորության համաձայն, միշտ խմում էր նախաճաշից մի քանի ժամ առաջ, գուլթը պարզեց, սկսեց իր բնածին ողջամտությունը դրսևորել. նա վճռականորեն ու լսելիամտորեն հետևելու միջոցները ձեռնարկեց:

Սկսեց նրանից, որ ուղարկեց ծառաներին կանչելու և նրանց կարգադրեց ներքևի բոլոր դռներն ու լուսամուտները (բացառությամբ շքամուտքի դռան, որը նա բացել էր) թողնել այնպես, ինչպես որ դրանք եղել էին նախօրյակին փակելիս: Հետո նա իր զարմիկին և ինձ առաջարկեց հետագա քայլերի ձեռնարկելուց առաջ հավաստիանալ, թե արդյոք որևէ տեղ չի բնկել ալմաստը, օրինակ, պահարանիկի ետևը կամ սեղանի տակ, որի վրա պահարանիկն էր դրված: Երկու տեղում փնտրելով և ոչինչ չգտնելով, Պենելոպին հարցուփորձեց ձեռքով և ավելին չիմանալով, քան նա արդեն ասել էր ինձ, միսս Գոդֆրինն առաջարկեց հարցուփորձել միսս Ռեչելին և Պենելոպեին ուղարկեց, որ թակի նրա ննջարանի դուռը:

Թակոցի վրա դուրս եկավ միլեդին և դուռը ծածկեց իր

ետեից: Մեկ բոպե անց լսեցինք կողպեքի մեջ պատվող բա-  
նալու ձայն. միսս Ռեչելը ներսից փակեց դուռը: Խիստ տա-  
րակուսած ու դառնացած տիրուհիս մտտեցավ մեզ:

— Այժմաստի կորուստը խիստ ցնցել է Ռեչելին, — ասաց  
նա ի պատասխան միտոր Ֆրենկլինի: — Նա, չգիտեմ ինչու,  
նույնիսկ ինձ հետ չի ուղում խոսել դրանից: Այժմ դուք  
մատածել անգամ չեք կարող նրան հարցաքննելու մասին:

Միսս Ռեչելին վերաբերող այս հաղորդումով սաստկացնե-  
լով մեր տարակուսանքը, մի փոքր ջանք գործադրելուց հետո  
միլիդին վերագտավ իր սովորական հանգստությունը և կա-  
րողացավ գործել սովորական վճուպահությամբ:

— Կարծում եմ, որ ոչինչ չի մնում անել, քան ոստիկան  
կանչել, — ճանգիստ ասաց նա:

— Իսկ ոստիկանությունը ամենից առաջ, — շարունակեց  
միտոր Ֆրենկլինը, — պետք է բռնի երեկ այստեղ ներկայա-  
ցում տվող հնդիկ աճաբարտներին:

Միլեդին և միտոր Գոդֆրին (որոնք գիտեին այն, ինչ  
հայտնի էր միտոր Ֆրենկլինին և ինձ) երկուսն էլ ցնցվեցին,  
և զարմանք արտահայտվեց նրանց դեմքերին:

— Հիմա բացատրելու ժամանակ չկա, — շարունակեց միտ-  
որ Ֆրենկլինը: — Միայն կարող եմ ձեզ ասել, որ այժմասաց  
գողացել են հենց հնդիկները: Ինձ տվեք դատավորներից մե-  
կին ուղղված հանձնարարական նամակ, — դիմեց նա միլեդի-  
ին: — պարզապես նրան ասացեք, որ ես գործում եմ ձեր օգտին  
ու ձեր ցանկությամբ. և թույլ տվեք ինձ անմիջապես հանա-  
պարհ ընկնել: Գողերին բռնելու մեր հնարավորությունը կախ-  
ված է անսեղի ոչ մի բոպե շկորցնելու ձեր ջանքերից:

(Nota bene: Միտոր Ֆրենկլինի ֆրանսիական, թե անգլի-  
ական կողմն էր հիմա, միայն թե դա խելամիտ կողմն էր:  
Հարցն այն էր, թե արդյո՞ք երկար կտևի դա):

Նա թանաք, գրիչ ու թուղթ դրեց մորաբրոջ առջև, որը  
(ինչպես ինձ թվաց) ոչ այնքան հաճույքով դրեց նամակը:  
Ի՞նչ հնարավոր լինե՞ր անուշադրության մատենել բասն հազար  
ֆունտ արժեքող առարկայի կորուստը, ապա, ենթադրում եմ,  
(դատելով ըստ իր հանգուցյալ եզրոր մտտին միլեդիի կարծի-  
քի և ըստ եզրոր նվերի նկատմամբ նրա անվատահուժյան),

նա մեծ բավականությամբ թույլ կտար, որ Լուսնաբարը տանող գողերն անհետանային:

Ես միտար Ֆրենկլինի հետ գնացի ախոռ և այս առիթից օգտվեցի, որպեսզի հարցնեմ, թե ինչպես կարող էին հնդիկները (որոնց վրա ես կասկածել էի նույնքան համոզված, որքան և նա) տուն մտնել:

— Նրանցից մեկը կարող էր՝ սրահ մտնել, երբ հյուրերը ցրվում էին, — ասաց միտար Ֆրենկլինը: — Այն ժամանակ, երբ մորաքույրս ու Իեհչիլը սրողում էին, թե սրտեղ դնեն այմաստր, նա, հնարավոր է, պահված է եղել բաղմոցի տակ: Բավական էր, որ նա սպասեր մինչև լուսթյուն տիրեր տանը, հետո մտնենար պահարանիկին և այնտեղից վերցնելու այմաստր:

Այս ասելով, նա ձայն տվեց ծառային, որ դարպասը բացեն, և ձի նստած սլացավ:

Դա իրոր միակ խելացի բացատրությունն էր: Բայց ինչպե՞ս էր գողը հասցրել դուրս գալ տնից: Երբ առավոտյան գրեթե շրամուտքի դուռը բացելու, տեսա այն փակ էր կողպերով ճիշտ այնպես, ինչպես թողել էի երեկ երեկոյան: Իսկ մընացած դռներն ու լուսամուտները պարզորոշ ցույց էին տալիս վիճակը. մինչև այժմ մնում էին փակ: Իսկ շնե՞րը: Ենթադրեմք գողը փախել է վերևի հարկի լուսամուտից դուրս թռչելով, բայց ինչպե՞ս կարող էր իույս տալ շներին: Գուցե հետք թունավոր մի՞ս էր վերցրել նրանց համար: Նոր էր այս բանը մտքովս անցել, երբ անկյունից դուրս թռան շները՝ թաց կանաչների վրա թավալվելով, այնքան աշխույժ և սողոջ, որ մեծ դժվարությամբ դսպեցի նրանց ու նորից կապեցի: Որքան ավելի շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի քիչ գոհացուցիչ էր թվում ինձ միտար Ֆրենկլինի բացատրությունը:

Մենք նախաճաշեցինք. դի ինչ էլ որ պատահեր տանը, գողություն թե սպանություն, միևնույն է, մարդիկ պետք է նախաճաշեն: Նախաճաշից հետո միլեդին մարդ ուղարկեց ինձ կանչելու, և ես ստիպված եղա նրան պատմել հնդիկների ու նրանց խոսակցության վերաբերյալ այն ամենը, ինչ որ մինչև այժմ թաքցնում էի: Շատ արիասիրտ կին լինելով՝ նա շատով ուշքի եկավ այն սարսափից, որ հարուցել էր իմ հաղորդածը: Թվում էր, թե նա շատ ավելի անհանգստացած է աղ-

չրկա վիճակով, քան այդ հեթանոս խարդավանքներով ու նրանց դավադրութեամբ:

— Գիտե՞ք ինչ տարօրինակ աղջիկ է Ռեչելը և ինչքան նըման չէ իր հասակակիցներին, — ասաց ինձ միլիդին: — Բայց նա դեռ էրբեք իրեն այնքան տարօրինակ չէր սլահել և երբեք այնքան մոլեգին չէր եղել, ինչպես հիմա: Ալմաստի կորուստըն ասես նրան զրկել է բանականությունից: Ո՞վ կարող էր մտածել, որ այդ սարսափելի քսրն այսքան կարճ ժամանակամիջոցում այդպես կհամայն նրան:

Իհարկե, դա տարօրինակ էր: Միսս Ռեչելն ամենևին էլ չէր խելագարվում զանազան դարդերի ու թանկագին իրերի համար, ինչպես շատ ուրիշ երիտասարդ աղջիկներ: Մինչդեռ նա, ասես անսփոփելի վշտով համակված, փակվել էր իր ննջարանում: Արդարությունը պահանջում է ավելացնել, որ միայն նա չէր, որ դուրս էր ընկել իր սովորական հունից: Օրինակ, միսսը Գոգֆրին, որ մասնագիտությամբ միտթարող էր րնդհանրապես, թվում էր, թե նույնպես չգիտեր ինչ աներ: Բոլորովին մենակ մնալով և հնարավորություն չունենալով փորձել, թե վշտացած կանանց միտթարելու հմտությունը որքան օգուտ կբերեր միսս Ռեչելին, նա անհանդուստացած աննպատակ թափառում էր տանը և այգում: Նա չէր կարողանում վճռել, թե ինքն ինչպես պետք է վարվի մեր գլխին եկած փորձանքից հետո. մտահոգված աղգականներին ազատի՞ իր ներկայությունից, թե՞ մնա, որպեսզի ուժերը ներածին շափ օգնություն ցույց տա նրանց: Ի վերջո նա ընտրեց վերջինը, համարելով, որ այսպիսի ոչ սովորական հանգամանքներում այսպես ավելի մարդկային և վայելուչ կլինի իր կողմից: Մարդը ստուգվում է հանգամանքներում, և հանգամանքները ցույց տվին, որ միսսը Գոգֆրին շատ ավելի թույլ է, քան ես կտրծում էի: Իսկ սպասուհիները, բացառությամբ Ռոզաննայի, սկսել էին փսփոսալ անկյուններում, երբեմն-երբեմն վախեցած ցնցվելով. թույլ սեռի սովորական վարմունք, երբ որևէ անսովոր բան է պատահում տանը: Խոստովանում եմ, որ ինքս էլ չի անհանդուստացած, իմ տրամադրությունն էլ լավ չէր: Անիծյալ Լուսնաբարն ամեն ինչ տակնուվրա էր արել մեր տան մեջ:

Ժամը տասնմեկից մի փոքր առաջ միսսը Ֆրենկլինը վե-

բաղարձամբ: Դատելով նրա տեսքից՝ նրա վճռակահուսթյունը գուրշիացել էր ուսերին իջած պատասխանատվության ծանրության տակ: Նա մեր մոտից գնացել էր քառաբազմ, իսկ վերադարձրել էր քայլելով: Երբ մեկնում էր՝ թվում էր, երկաթից է: Երբ վերադարձավ՝ բամբակ էր դարձել:

— Եվ ի՞նչ, — հարցրեց Միլեդին, — ուստիկաններ կգա՞ն:

— Այո, — պատասխանեց միստր Ֆրենկլինը, — ասացին, որ գալիս են մեր ետևից: Ձեր տեղական ոստիկանության պալատը տեսուչ Սիգրեը և նրա երկու օգնականները: Մաքուր ձևականություն է: Ոչ մի հույս չկա:

— Ինչպե՞ս: Մի՞թե հնդիկները հասցրել են անհետանալ, սըր, — հարցրի ես:

— Անտեղի նեղացված խեղճ հնդիկները իզուր բանտ էին նետվել, — պատասխանեց միստր Ֆրենկլինը: — Նրանք անմեղ են նորածին երեխաների պես: Իմ այն ենթադրությունը, որ նրանցից մեկը պահված է եղել տանը, ինչպես նաև իմ մյուս բոլոր ենթադրությունները, հօգս ցնդեցին ծխի պես: Ապացուցվեց, — ավելացրեց միստր Ֆրենկլինը, կրքոտությամբ ընդգծելով իր սխալը, — որ դա ուղղակի հնարավոր չէ ֆիզիկապես:

Գործերի այս նոր ընթացքի մասին հաղորդումով դարձացնելով մեզ, մեր ջենտլմենը, մորաբորջ խնդրանքով, նստեց ու բացատրեց իր մթին ճառը:

Պարզվեց, որ նրա բնավորության վճռական կողմը դիմացել էր մինչև Ֆրիզինհոյ: Նա պարզորոշ կերպով ամեն ինչ շարադրել էր դատավորին, իսկ դատավորն անմիջապես ուղարկել էր ոստիկաններ կանչելու: Ձեռք բերած առաջին իսկ տեղեկություններից իմացվեց, որ հնդիկները չեն էլ փորձել դուրս գալ քաղաքից: Հետագա տեղեկությունները պարզեցին, որ երեքին՝ տղայի հետ մեկտեղ, նախօրյակին տեսել են Ֆրիզինհոյ վերադառնալիս, երեկոյան ժամը տասնմեկին, իսկ դա (հաշվի առնելով ժամանակն ու տարածությունը) ապացուցում էր, որ նրանք ետ էին վերադարձել մեր տան մոտ ներկայացում տալուց անմիջապես հետո: Էլ ավելի ուշ, կեսգիշերին, ոստիկանությունը, որ խուզարկություն էր կատարում նրանց կանգ առած տանը, նորից տեսել էր այդ երեքին ու աղային: Կեսգիշերից հետո ես ինքս էի բարեհաջող փակել

տան դռները: Հնդիկների օգտին խոսող ավելի հասակ ապա-  
ցույց լինել չէր կարող: Գտնաւորն ասաց, որ առայժմ նրանց  
դեմ ուղղված կասկածանքի նշույլ անգամ չկա: Բայց քանի  
որ հնարավոր է, որ ոստիկանութեան գալով քննութեանն  
առարարներին վերաբերող որևէ հայտնագործութեան հան-  
դեցնեն, ինքը կձերբակալի նրանց որպէս խարդախանների ու  
շրջմոլիկների և որոշ ժամանակ կալահի փակի տակ, մտածելով,  
որ կարող են մեզ պետք գալ: Նրանք, շիմանալով խախտել  
են ինչ-որ որոշում, դրանով իսկ առիթ տալով իրենց ձերբա-  
կալութեան համար, սա ասլացուցում է, որ արդարադատու-  
թեանն էլ կարող էս քո օգտին դարձնել, եթէ իմանաս, թե ինչ-  
պէս: Հարգարժան դատավորը միլիդիի հին բարեկամն էր, և  
հաջորդ առավոտ, դատարանը բացվելուն պէս, հնդիկները  
կալանաւորվեցին:

Այսպիսին էր միստր Ֆրենկլինի պատմածը Ֆրիդինհոլի  
դեպքերի մասին: Կորսված ավաստի գաղտնիքի հնդկական  
բանալին, դատելով ըստ ամենայնի, կոտորվել էր մեր ձեռքում:  
Եթէ աճապարներն անմեղ էին, ապա ո՞վ էր Լուսնաքարը հա-  
նել միսս Ռեչիլի պահարանիկից:

Տասը րոպէ անց, անսպասելի թեթևութեան պատճառելով  
մեզ, ժամանեց տեսուչ Միգրը: Նա հաղորդեց, որ անցավ  
սանդղավանդում արևի տակ նստած (անշուշտ, խաւա-  
կան կողմով դեպի վերև) միստր Ֆրենկլինի մոտով, որը նա-  
խապես, երբ իրենք անցնում էին, նախապուշացրեց, թէ ա-  
մեն մի հետաքննութեան անօգուտ կլինի. հայտարարեց նախ-  
քան այդ հետաքննութեանն սկսվելը:

Այն վիճակում, որի մեջ գտնվում էինք, Ֆրիդինհոլի ոս-  
տիկանութեան տեսուչից ավելի լավ ոստիկան դժվար էր կա-  
մենալ: Միստր Միգրը բարձրահասակ էր ու ներկայանալի,  
գինվորական ձգվածութեամբ, ղեկավարի հաճելի ձայնով ու  
վճռական հայացքով, վերեւից մինչև ներքև շարված գեղեցիկ  
կոճակներով մտնելիքը հայտնու առջին: «Ես հենց այն մարդն եմ, որ  
ձեզ պետք է»,—գրված էր նրա դեմքին: Իրեն ուղեկցող ոս-  
տիկանական երկու ցածր աստիճանավորների հետ վարվում  
էր ամենայն խստութեամբ, որը կարող էր ձեզ անմիջապէս  
համոզել, որ իր հետ չի կարելի կատակել: Նա սկսեց ամբողջ  
տունը ներսից ու դրսից ղննելով. այդ ղննութեան արդյունքը



ցուց տվեց, որ գողերը չէին կարող դրսից մեզ մոտ թափանցել և որ, հետևաբար, գողութունը կատարել է տնից որևէ մեկը: Չեզ էմ թողնում դատելու, թե ինչ վիճակի մեջ ընկան ծառաները, երբ այս պաշտոնական հայտարարությունը հասավ նրանց ականջին: Տեսուչը սրոշեց, որ զննությունը կըսկըսի բուդուարից, իսկ հետո կհարցաքննի ծառաներին: Միևնույն ժամանակ նա իր ենթականներից մեկին կանգնեցրեց սասիճանների վրա, որոնք տանում էին դեպի ծառաների նընջարանները, հրամայելով տանը գտնվողներից ոչ մեկին չթողնել այնտեղ, մինչև նոր կարգադրություն:

Այս վերջին հրամանը լսելով՝ մարդկային ցեղի թույլ կեսի ներկայացուցչուհիները վերջնականապես իրենց կորցրին: Նըրանք դուրս թռան իրենց անկյուններից ու սլացան վերև, միսս Ռեչելի սենյակը, այս անգամ իրենց հետ տանելով նաև Ռոզաննա Սպիրմանին, հարձակվեցին տեսուչ Սիգբեի վրա և բոլորը միանման մեղավոր տեսքով սկսեցին պահանջել, որպեսզի նա ասի, թե իրենցից որ մեկի վրա է կասկածում:

Տեսուչն իրեն չկորցրեց. նա վճռական աչքերով նայեց նըրանց և իր զինվորական ձայնով ահաբեկեց.

— Հե՛յ դուք, կնանիք, հապա մի ներքև գնացեք նորից, բոլորդ մինչև վերջին մարդը: Ես ձեզ այստեղ չեմ հրավիրել... Հապա մի տեսեք, — հանկարծ ընդհատեց ինքն իրեն, մատնանշելով միսս Ռեչելի նկարազարդած դռան վրա հենց կողպեքի տակին եղած բիծը. — Տեսեք, թե ինչ են արել ձեր շրջապեստները: Կորե՛ք այստեղից:

Ռոզաննա Սպիրմանը, որ բոլորից ավելի մոտիկ էր նրան ու դռան վրայի բծին, առաջինը հնազանդվելու օրինակ տվեց և անմիջապես վերադարձավ իր գործին: Մնացածները հետևվեցին նրան: Տեսուչն ավարտեց սենյակի զննումը և, ոչնչի չհասնելով, ինձ հարցրեց, թե ո՞վ է առաջինը նկատել կորուստը: Առաջինը այն տեսել էր իմ դուստրը: Մարդ ուղարկեցին դատերս կանչելու:

Տեսուչը սկզբում փոքր-ինչ խիստ վարվեց Պեննելոպեի հետ:

— Երիտասարդուհի, ուշադիր լսեք ինձ և հիշեցեք, որ դուք պետք է ճիշտ պատասխան տաք:

Պեննելոպեն անմիջապես բորբոքվեց.

— Ինչ առէլ շեն սովորեցրել, և եթե հայրս կարող է կտն-  
զնէլ այսանդ ու լսել, թե ինչպես իր աղջկան մեղադրում եք  
ստի ու գողութեան մեջ, շեն թողնում իր սեփական սենյակը  
մտնի, խնամ են բարի անունը, միակ հարստութունը աղքատ  
աղջկա, ապա նա այնպիսի բարի հայր չէ, ինչպիսին ևս չքան  
համարել եմ:

Իմ տեղին սուած խոսքը արդարադատութեանն ու Պենե-  
լոպեին ավելի հաճելի հարաբերութունների մեջ դրեց: Հար-  
ցերն ու պատասխանները հարթ ընթացան, շափարովեցին  
այնպիսի մի բանով, որի մասին արժեք հիշատակելու Աղջիկս  
տեսել էր, թե ինչպես միսս Թեչելը արմատը երեկոյան պա-  
հել էր պահարանիկի դարակում: —

Առաջնայան ժամը ութին ինքը թեյի բաժակը ձեռքին մը-  
տել էր միսս Թեչելի մօտ, տեսել, որ դարակը բաց է ու դա-  
տարկ, և ունմիջսպես տաղնայ չէր բարձրացրել: Գրանով էլ  
սովարտվել էին Պենեյոպեի ցուցմունքները:

Այնուհետև անսուշը միսս Թեչելի հետ խոսելու թույլտը-  
վութեան ինդրեց: Պենեյոպեն դռան արանքով հաղորդեց նրա  
խնդրանքը: Պատասխանը ստացվեց նույն ճանապարհով:

— Ես տեսուշին անելու բան չունեմ. ևս ոչ որի տեսնել չեմ  
կարող:

Մեր փորձառու ուսուցիչներ, այսպիսի պատասխան լսելով,  
կարծես, զարմացավ ու վիրավորվեց: Ես նրան բացատրեցի,  
որ մեր օրիորդը վատառողջ է, և խնդրեցի մի փոքր սուտակ  
և օրիորդի հետ տեսնել ավելի ուշ: Գրանից հետո մենք նո-  
ւրից իջանք ներքև և, նախատրահով անջնելիս, հանդիպեցինք  
միսսը Գողֆրին ու միսսը Ֆրենկլինին:

Տանը հյուրընկալւած երկու ջենտլմեններին հարց տրվեց,  
բն չե՞ն կարող արդէոք յույս սիրել այդ գործի վրաս նրանք  
երկուսն էլ ոչինչ չգիտեին: Գիշերը կասկածելի արմուկ տե՞լ  
էին նրանք: Անձրե՞ն աղմուկից բացի, ուրիշ ոչինչ չէին լսել:  
Եսկ ևս, որ նրանցից շատ ավելի ուշ էի քնել, ոչինչ չէի՞ լսել:  
Աչինչ: Վերջապես հարցաքննութեանից աղատված՝ միսսը  
Ֆրենկլինը շնչաց ինձ:

— Այս մարդը մեզ ոչ մի օգուտ չի տա: Տեսուշ Սիգրիդ  
ալանակ է:

Աղատված միսսը Գողֆրին իր հերթին շնչաց ինձ:

— Ինչպես երեւում է՝ իր գործը լավ գիտեւ Բեռտերեջ, ես մեծ հույսեր եմ կապում նրա հետ:

Ինչքան զլուխ՝ այնքան խելք, ինչպես ինձնից շատ առաջ ասել է ինչ-որ մի հին իմաստուն:

Հետո տեսուչը իմ և աղջկաւ ուղեկցութեամբ վերստին գր-նաց բուրուար: Նրա նպատակն էր հաւատարեանալ, թե արդ-յո՞ք դիշերովա ընթացքում չի վերադաստովորվել կահույքը. սենյակում կատարած նրա առաջին խուզարկութեանը, ըստ երևույթին, ոչինչ չէր տվել նրան:

Մինչ մենք աթոռների ու սեղանների արանքներն էինք նայում, ննջարանի դուռը հանկարծ բացվեց: Միսս Ռեչելը, որ հրաժարվել էր բուրդի տեսնել, ի դարմանս մեր, ինքուր եկավ մեզ մոտ: Նա աթոռի վրայից վերցրեց ծղուտի գլխարկը և այս-պիսի հարցով դիմեց Պեննետային.

— Այսօր առավոտյան միսսը Ֆրենկլին Բլեկը ձեզ ուղար-կե՞լ է ինձ մոտ:

— Ուղարկել է, միսս:

— Նա կամեցել է խոսել ինձ հետ, այնպես չէ՞:

— Ժիշտ այդպես, միսս:

— Հիմա որտե՞ղ է նա:

Ներքեից ձայներ լսելով, ես դուրս նայեցի լուսամտոցի ու տեսա երկու երիտասարդ ջենտլմեններին, որ ետ ու առաջ էին քայլում սանդղավանդում: Պատասխանելով աղջկաւ փո-խարեն՝ ես ասացի.

— Միսսը Ֆրենկլինը սանդղավանդում է, միսս:

Այլևս ոչ մի բան չասելով, ուշադրութեամբ շարձնելով տե-սուլի վրա, որը փորձեց խոսակցութեան բռնվել իր հետ, մա-հու չափ գունատ ու տարօրինակ կերպով խորասուզված իր մտքերի մեջ, նա դուրս եկավ սենյակից և իջավ սանդղավանդ՝ զարմիկների մոտ:

Ես ոչ բավականաչափ պատշաճ հարգանք ցուցաբերեցի, խախտեցի քաղաքավարութեանը, բայց եթե նույնիսկ բանք իմ կյանքին էլ վերաբերեր, միևնույն է, այդ գեպքում էլ չէի կարողանա ինձ զսպել և լուսամտոցի շնայել, երբ միսս Ռե-չելը հանդիպեց ջենտլմենների հետ: Նա մոտեցավ միսսը Ֆրենկլինին, ասես շնկատելով միսսը Գոգֆրիին, որը մի կողմ քաշվեց ու նրանց թողեց երկուսով: Միսս Ռեչելը, ըստ երևույ-

թին, ջղագրգռուված էր խոսում միտքը Ֆրենկլինի հետ: Դա կարճ տևեց և (դատելով ըստ միտքը Ֆրենկլինի դեմքի, որը ես տեսնում էի լուսամտափեղ) խիստ զարմացրեց նրան: Մինչ նրանք կանգնած էին երկուսով՝ սանդղավանդում երևաց միլեզին: Միսս Ռեչելը նկատեց նրան, արագ-արագ ինչ-որ բան ասաց միտքը Ֆրենկլինին և հանկարծ շրջվեց ու հեռացավ, նախքան մայրը կկարողանար մոտենալ իրեն: Միլեզին ինքը զարմանալով և տեսնելով միտքը Ֆրենկլինի անսովոր պարմանքը, խոսեց նրա հետ: Միտքը Գոգֆրին մոտեցավ նրանց և նույնպես խոսքի բռնվեց: Միտքը Ֆրենկլինը նրանց հետ քայլեց սանդղավանդում, հավանաբար նրանց հաղորդելով այն, ինչ պատահել էր. երկուսն էլ, մի քանի քայլ անելուց հետո, հավանաբար խիստ զարմացած, մեխվածի պես կանգ առան միանդամից: Ես դեռ չէի հասցրել այդ բոլորը նկատել, երբ հանկարծ վերստին կրնկի վրա բացվեց հյուրասենյակի դուռը: Միսս Ռեչելն արագորեն անցավ իր ննջարանը՝ շատ տխուր ու զայրացած, կատաղությամբ փայլող աչքերով ու վառվույց այտերով: Տեսուչը նորից փորձեց կանգնեցնել նրան: Սա ննջարանի դռան մեջ շրջվեց նրա կողմը:

— Ես ձեր ետևից մարդ չեմ ուղարկել, — բորբոքված բացականչեց նա: — Դուք ինձ հարկավոր չեք: Իմ արմատը կորել է: Ոչ ձեզ և ոչ էլ աշխարհում որևէ մեկին չի հաջողվի գտնել այն:

Այս ասելով՝ նա սենյակ մտավ ու հենց նրա քթի առաջ շրիկացրեց դուռը: Պենելոպեն, որ բոլորից մոտ էր կանգնած դռանը, լսեց, թե ինչպես Ռեչելը մենակ մնալուն պես սկսեց հեկեկալ:

Մի պահ՝ կատաղություն, հաջորդ պահին՝ արցունքներ. ի՞նչ կարող էր նշանակել սա:

Ես տեսուչին ասացի, որ այդ բոլորը միայն ցույց է տալիս, թե արմատի կորուստը ինչ աստիճան է ջղագրգռել միսս Ռեչելին: Մտածելով ընտանիքի պատվի մասին, ես դառնությամբ տեսնում էի, որ իմ երիտասարդ տիրուհին իրեն կորցրել է (թեկուզև ոստիկանական սպայի մոտ) ներսուլություն խնդրեցի, ինչպես որ կարող էի: Բայց հոգուս խորքում շատ ավելի էի մտահոգված միսս Ռեչելի տարօրինակ խոսքերով ու վերաբերմունքով, քան դա կարելի է բառերով արտահայտել: Նրն-

չարանի դռանը նրա ասածներէի վրա հիմնվելով՝ սոսկ կարող էի եզրակացնել, որ սոստիկանութիւն կանչելը սարսափելի վիրավորել է նրան և որ սանդղավանդում միտար Ֆրենկլինի արտահայտած դարմանքի պատճառը եղել է այն, որ այդ աստիճանի վրէժնէր շատ խիստ կերպով իր կարծիքն էր ասել նրան՝ որպէս սոստիկանութիւն կանչողի: Եթէ այս ենթադրութիւնը ճշմարիտ էր, ապա ինչո՞ւ, իր ամաստից գրկվելով, միտս Ռեչելը չէր ուզում, որ տանը լինեն հենց այն մտարդիկ, որոնք պարտավոր էին գտնել ամաստը: Եվ նա ինչպե՞ս կարող էր իմանալ, որ Լուսնաքարը կրքեք չի գտնվի:

Տվյալ իրավիճակում տանը ոչ ոքից հնարավոր չէր սպասել այս հարցերի պատասխանները:

Բուդուարի ամբողջ կահույքը հանգամանորեն ստուգելուց և ոչինչ չգտնելուց հետո մեր փորձառու խուլարկուն դիմեց ինձ, հարցնելով՝ ծառաներն իմացե՞լ են, թէ գիշերը որտեղ է գրվելու ամաստը:

— Ես գիտեի, սրբ,— պատասխանեցի ես:— Սպասավոր Սամյուելը նույնպէս գիտեր, որովհետեւ նա սրահում էր այն ժամանակ, երբ խոսում էին, թէ գիշերը որտեղ պահեն ամաստը: Գիտեի աղջիկս, ինչպէս ինքն արդէն ձեզ ասել է: Նա կամ Սամյուելը կարող էին այդ մասին հայտնած լինել որոշ ծառաների, կամ էլ ուրիշ ծառաներ կարող էին այդ խոսակցութիւնը լսած լինել սրահի կողքի դռնից, որը կարող էր բացված լինել հետին մուտքի սանդղակի վրա: Ինչպէս ինձ թվում է, տանը բոլորը կարող էին իմանալ, թէ անցած գիշեր որտեղ է գրված եղել ամաստը:

Իմ պատասխանը չափազանց ընդարձակ դաշտ էր ներկայացնում տեսուչի կասկածների համար, և նա աշխատեց նեղացնել այն, ինչգրելով, որ ես բնութագրեմ մեր ծառաներին:

Ես անմիջապէս մտածեցի Ռոզաննա Սպիրմանի մասին: Բայց հիմա նրան հիշատակելն անտեղի կլիներ, և հետո՝ չէի կրնում կասկած հարուցել խեղճ աղջկա նկատմամբ, որի ազնվութիւնը բոլորովին անտարակուսելի էր եղել մեզ մոտ նրա գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում: Ուղղիչ տան վերակացուն նրա մասին այդ օրերին ասել էր, որ նա անկեղծորեն զղջացել է և արժանի է լիակատար վստահութեան: Եթէ սոստիկանական սպան Ռոզաննային կասկածի տակ առնելու

պատճառ դառնի, միայն այդ ժամանակ ես պարտավոր եմ նր բան ասել, թե ինչ ճանապարհով էր այդ աղջիկը ծառայութեան մտել միլիդրի մոտ:

— Մեր բոլոր ծառաները հիանալի վկայական ունեն,— պատասխանեցի ես,— և բոլորն էլ արժանացել են իրենց տիրուհու վստահութեանը:

Այս ամենից հետո միայն մի բան էր մնում միտքը Սիգրե վին՝ անձամբ զբաղվել այդ գործով և անձամբ ստուգել մեծ ծառաների ինչ համբավի տեր լինելը:

Նրանց հարցաքննեցին իրար հետևից, և նրանցից ոչ մեկը չկարողացավ որևէ բան բացահայտել, թեև նրանք, հատկապես կոնայր, շատ բան ասացին և սաստիկ դժգոհեցին իրենց սենյակների վրա դրված արգելքից:

Հետաքննութեան հաջորդ և վերջին քայլը գործը հասցրեց, ինչպես ասում են, ճգնաժամի Ոստիկանական սպան զբույց ունեցավ (որին ես ներկա գտնվեցի) միլիդրի հետ: Նրան հայտնելով, որ ալմաստը թերևս հափշտակել է տանը գտնվողներից որևէ մեկը, նա ծառաների սենյակներն ու սնդուկները խուզարկելու թույլտվութիւն խնդրեց: Իմ բարի տիրուհին, լինելով մեծահոգի և բարեկիրթ կին, շուզեց թույլ տալ, որ մեզ հետ վարվեն որպես զոզերի:

— Ես հրրեք չեմ համաձայնվի այդ ձևով փոխհատույց լինել այն ամենի համար, ինչ ես պարտական եմ իմ տանն ապրող հավատարիմ ծառաներին:

Ոստիկանական սպան գլուխ տվեց և այնպիսի մի հայացք պցեց ինձ վրա, որը պարզորոշ ասում էր. «Էլ ի՞նչ կարիք կար ինձ կանչելու, եթե այս ձևով կապում եք իմ ձեռքերը»:

Որպես ծառայապետ, ես անմիջապես զգացի, որ մենք, արգարև, մեր տիրուհու մեծահոգութիւնը շարաշահելու իրավունք չունենք:

— Մտանց շնորհակալ ենք ձերդ պայծառափայլութիւնը,— ասացի ես,— բայց խնդրում ենք թույլ տաք վարվել այնպես, ինչպես հարկ է այս գործում, և ինքներս ենք տալիս մեր բանալիները: Երբ Գարրիել Բեռտերեջը օրինակ տա,— ասացի ես, դուան մոտ կանգնեցնելով տեսուչ Սիգրեին,— մնացած ծառաները, հավատացնում եմ ձեզ, կհետևեն նրան: Ահա ամենից առաջ իմ բանալիները:

Միլեդին բռնեց ձեռքս և արցունքն աչքերին շնորհակալություն հայտնեց, Աստված իմ, ինչ ասես, որ այդ պահին շէտ աս տեսուչ Սիգրեին ծեծելու իրավունք ունենալու համար:

Ինչպես և ասացի, մնացած ծառաները հետևեցին իմ օրինակին, հասկանալի է, շատ դժկամորեն, բայց և այնպես ինձ հետ համաձայնվելով: Արժեք տեսնել կանանց, երբ ոստիկանները նրանց իրերն էին քրքրում: Խոհարարուհին այնպես էր նայում, ասես ուզում էր տեսուչին ողջ-ողջ տապակել թավաչի մեջ, իսկ մյուս կանայք ասես պատրաստվում էին տապակվելուն պես ուտել նրան:

Խուզարկությունն ավարտվեց, իսկ ավաստի հետքն անգամ, անշուշտ, չգտնվեց: Տեսուչ Սիգրելը գնաց իմ սենյակը խորհրդածելու, թե ինչ ձեռնարկի դրանից հետո: Նա և օգնակասններն արդեն մի քանի ժամ է, ինչ մեր տանն էին և ոչ մի քայլ առաջ չէին շարժվել այն հարցում, թե ով և ինչպես էր գողացել Լուսնաքարը:

Մինչ ոստիկանական տեսուչը խորհրդածում էր մենակության մեջ, ինձ կանչեցին միստր Ֆրենկլինի մոտ գրադարան: Ի զարմանս իմ, ես դեռ չէի հասցրել դռան բռնակին դիպչել, երբ այն հանկարծ ներսից բացվեց և սենյակից դուրս եկավ Ռոզաննա Սպիրմանը:

Գրադարանն առավոտյան ավելի ու հավաքել էին և դրանից հետո ոչ առաջին, ոչ էլ երկրորդ աղախինը այդ սենյակը մտնելու կարիք չուներ: Ես տեղնուտեղը կանգնեցրի Ռոզաննա Սպիրմանին և նկատողություն արեցի տնային կարգապահությունը խախտելու համար:

— Ի՞նչ ունեիր այս ժամին գրադարանում, — հարցրի ես:

— Միստր Ֆրենկլին Բլեկը վերևում կորցրել էր մատանին, — ասաց Ռոզաննան, — և ես գնացի այն նրան հանձնելու: Աղչկա այտերն այրվում էին:

Նրբ գրադարան մտա՝ միստր Ֆրենկլինը սեղանի մոտ նստած ինչ-որ բան էր գրում: Ներս մտնելուն պես նա ինձնից ձեռք խնդրեց կայարան մեկնելու համար: Նրա ձայնի առաջին իսկ հնչյունը ցույց տվեց, որ նորից հաղթել է նրա վճռական կողմը: Բամբակի վերածված մարդն անհետացել էր, և նորից իմ առջև նստած էր երկաթե մարդը:

— Դուք Լոնդոն եք դնում, սրբ, — հարցրի ես:

— Գնում եմ Լոնդոն հեռագրելու, — պատասխանեց միստր Ֆրենկլինը: — Մորաբորոշս համողեցի, որ մեզ պետք է օգնի տեսուչ Միգրելից ավելի խելացի մեկը, և հորս հեռագիր ուղարկելու թույլտվութուն ստացա նրանից: Նա ճանաչում է ոստիկանութան պետին, իսկ ոստիկանապետը կարող է ամաստի գաղտնիքը պարզելու ընդունակ մի մարդ ընտրել: Ի դեպ՝ գաղտնիքների մասին, — ձայնն իջեցնելով՝ ավելացրեց միստր Ֆրենկլինը. — նախքան ձեր ախոռ գնալը, ես պետք է երկու խոսք ասեմ ձեզ: Բայց առայժմ այդ մասին ոչ ոքի շատեք: Կամ Ռոզաննա Սպիրմանի գլուխը կարդին վիճակում չէ բոլորովին, կամ, վախենում եմ, նա Լուսնաբարի մասին ավելի շատ բան գիտե, քան հարկ էր, որ իմանար:

Երևի չեմ կարող ասել, թե ավելի շատ ինչ պատճառեցին ինձ այդ խոսքերը՝ վա՞խ, թե դառնութուն: Եթե ավելի երիտասարդ լինեի, այդ մասին կխոստովանեի միստր Ֆրենկլինին: Բայց երբ ծերանում ես՝ ձեռք ես բերում մի սքանչելի սովորութուն. այն դեպքում, երբ չգիտես, թե ինչպես վարվես՝ պետք է յուս:

— Թագաննան այստեղ էր բերել այն մատանին, որ ձեռքիցս ընկել էր իմ ննջարանում, — շարունակեց միստր Ֆրենկլինը: — Ես շնորհակալութուն հայտնեցի և, հասկանալի է, սպասում էի, որ նա կգնա: Դրա փոխարեն նա կանգնեց իմ սեղանի դեմ-դիմաց և շատ տարօրինակ ձևով աչքերը հառեց վրաս. կիսավախեցած, թե կիսամտերմական՝ շկարողացա զանազանել «Տարօրինակ է այդ արմաստի հարցը, սըր», — հանկարծ անսպասելիորեն ասաց նա: Ես պատասխանեցի՝ «Այո» և սպասեցի, թե ինչ կլինի հետո: Երդվում եմ պատվովս, Բեռտերեջ, ինձ թվում է, թե նա, թերևս, խելքը թոցրել է: Նա ասում է. «Այժմաստը շեն գտնի, սըր, այնպես չէ՞: Չէ, չեն գտնի նաև այն վերցնողին. ես երաշխավորում եմ դրա համար»: Նա դիտով արեց ինձ ու ժպտաց: Մինչ ես կհասցնեի հարցնել, թե ինչ է նշանակում այդ բոլորը, դռան ետևում լսվեցին ձեր քայլերը: Նա, հավանաբար, վախեցավ, որ դուք իրեն կգտնեք այստեղ: Ինչ որ է, նա կերպարանափոխվեց և դուրս եկավ սենյակից: Ի՞նչ կարող է նշանակել սա:

Ես չլի կարող նույնիսկ այդ ժամանակ այդ աղջկա պատմութունն անել նրան: Լեխր դա պարզապես կնշանակեր աղ-



չբկան մեղադրել այդ գողութեան մեջ: Բացի դրանից, նույնիսկ հնթադրելով, որ ես ամեն ինչ անկեղծորեն կպատմեի նրան, և ընդունելով, որ արմատը Ռոզաննան է գողացել, միևնույն է, պատճառը, թե ինչու այդ աղջիկն իր գաղտնիքը բացելու համար աշխարհի բոլոր մարդկանցից հենց միստր Ֆրենկլինին էր ընտրել, կմնար չբացահայտված:

— Ես չեմ համարձակվի այդ խեղճ աղջկան մեղադրել սոսկ նրա համար, որ ես թեթևամիտ է ու շատ տարօրինակ ձևով է խոսում,— շարունակեց միստր Ֆրենկլինը:— Մինչդեռ, եթե ես տեսուչին ասել է այն, ինչ ինձ է ասել, ապա ինչքան էլ սա հիմար լինի, վախենում եմ, որ...

Նա կանգ առավ՝ խոսքը կիսատ թողնելով:

— Ավելի յավ կլինի, սրբ,— պատասխանեցի ես,— Լիքն առաջին իսկ հարմար առիթի դեպքում այդ մտայն տեսմ միջդրին: Միջդրին բարեկամաբար է վերաբերվում Ռոզաննային, և շատ հնարավոր է, որ այդ աղջիկը սոսկ շփոխի ավելի ազատ է և անխոհեմ: Երբ տանը որեկ անախորժություն է, սրբ, սպասուհիները սիրում են միշտ մտալ կողմից նայել գործին. դա ինչ-որ կշիռ է հաղորդում այդ խեղճերին՝ իրենց իսկ աչքում: Եթե որեկ մեկը հիվանդ է, ապա ամենայն հավանականությամբ նրանք կսկսեն գուշակել, թե հիվանդը կմեռնի, իսկ Լիքն թանկարժեք բան է կորել՝ նրանք կհայտարարեն, թե այն արդեն երբեք չի գանվի:

Գործի նկատմամբ այսպիսի տեսակետը, կարծես, շատ թեթևացրեց միստր Ֆրենկլինին. նա ծալեց հեռագիրը և ընդհատեց խոսակցությունը: Միտեղանի երկանիվ կառքը լծելու կարգադրություն անելու համար ախոռ գնալիս մտա ծառաների սենյակը, որտեղ այդ պահին նրանք ճաշում էին: Ռոզաննա Սպիրմանը նրանց մեջ չէր: Հարցնելով, թե որտեղ է նա, իմացա, որ հանկարծ վատ է դրացել և գնացել իր սենյակը մի փոքր պառկելու:

— Տարօրինակ է: Երբ քիչ առաջ տեսա նրան՝ բուշորովին առողջ էր թվում,— նկատեցի ես:

Պենելոպեն դուրս եկավ իմ ետևից:

— Հայրիկ, այդպիսի մի խոսք,— ստաց նա,— դրանով էլ ավելի Ռոզաննայի գեմ կհանեք ծառաներին: Եկե՛ք աղջիկը մեռնում է միստր Ֆրենկլին Բլեկի կարստից:

Սա արդեն Ռոզաննայի տարօրինակությունների մեկ այլ բացատրությունն էր: Եթե Պենելոպին իրավացի էր, ապա դա նշանակում էր, որ աղչիկը պատրաստ է դուրս տալու ամեն ինչ, միայն թե միտոր Ֆրենկլինը խոսակցության բռնվեր իր հետ:

Ես անձամբ էի հետևում պոսին լծելուն: Այժմ մեզ շրջապատող գաղտնիքների և անհայտությունների դժոխային ցանցում, հերավի, մխիթարական էր նայել, թե ինչպես էին իրար հասկանում, ներդաշնակվում ճարմանդներն ու փոկերը: Երբ տեսնում եք, թե ինչպես են լծում պոսին՝ դա արդեն այնպիսի բան է, որ կասկածի ենթակա չէ: Իսկ սա, թույլ տվեք ձեզ տեսել, արդեն այնպիսի բան է տանը, որտեղ բոլորին բղկտում են կասկածները:

Երկանիվ կառքով շքամուտքի դռանը մոտենալիս տեսա ոչ միայն միտոր Ֆրենկլինին, այլև միտոր Գոգֆրիին և տեսուչ Սիգրեին, որոնք աստիճանների վրա ինձ էին սպասում:

Տեսուչի խորհրդածությունները (այն բանից հետո, երբ նրան շնաջողվեց արմատք գտնել ծառաների սենյակներում ու սնդուկներում), ըստ երևույթին, նոր եզրակացության էին հանգեցրել նրան: Գեռես համոզված լինելով, որ տանը զբոսնելուներից ինչ-որ մեկն է գողացել արմատք, մեր փորձառու խուզարկուն այժմ այն կարծիքին էր, որ դողը գործել է հնդիկների հետ խոսքը մեկ արած, և առաջարկեց հետաքննությունը փոխադրել Ֆրիդինհոլի բանտ՝ աճաբարարների մոտ: Այս նոր որոշման մասին իմանալով, միտոր Ֆրենկլինն առաջարկեց տեսուչին ետ տանել քաղաք, որտեղից կարելի կլիներ նույնքան հեշտությամբ հեռագրել Լոնդոն, որքան մեր կայսրանից: Միտոր Գոգֆրիին, որ շարունակում էր նույն համառությամբ հավատալ և չափից դուրս ուզում էր ներկա գտնվել հնդիկների հարցաքննությանը, տեսուչի հետ Ֆրիդինհոլ մեկնելու թույլտվություն խնդրեց: Ոստիկաններից մեկը պետք է մնար տանը՝ շնախատեսված պարադայի համար: Մյուսը տեսուչի հետ վերադառնում էր քաղաք: Այսպիսով կառքի բոլոր շորս տեղերը դրադված էին:

Սանձերը ձեռքը վերցնելուց առաջ միտոր Ֆրենկլինը մի քանի քայլ մի կողմ տարավ ինձ, որպեսզի ոչ ոք չկարողանար մեզ լսել:

— Ես լռեցոն հեռացիր չեմ ուզարկի, — ասաց նա. — մինչև շտեմբուհ, թե ինչ կատարվի հնդիկների հարցաքննութ-  
յան 1 Ես, ճիշտն ասած, համոզված եմ, որ այդ բթամիտ ու-  
տիկանը պարզապես ոչինչ չի հայտնաբերի և ուղղակի աշխա-  
տում է ժամանակ շահելու Այն միտքը, թե ծառաներից որևէ  
մեկը դաշնակցել է հնդիկների հետ, իմ կարծիքով, զուտ ան-  
հեթեթություն է: Մինչև իմ վերադառնալը ուշադիր հետևեցեք  
տանը, Բեստերեջ, և աշխատեցեք որևէ բան իմանալ Ռոզան-  
նա Սպիրմանից: Ձեր արժանապատվության համար ստորա-  
ցուցիչ կամ ազդեալ նկատմամբ խիստ որևէ բան չեմ խնդրում  
ձեզից. ես միայն խնդրում եմ, որ դուք գործի դնեք ձեր ամ-  
բողջ դիտողականությունը: Այս ամենը մենք մտաբերոջս կը-  
նեղակայեցնենք որպես մի շատ հասարակ բան, բայց գործը  
շատ ավելի լուրջ է, քան զուր, զուր, ևնթադրում եք:

— Խոսքը վերաբերում է քսան հազար ֆունտի սըր, —  
ասացի ես, մտածելով արմատի արմերի մասին:

— Կարևորը Ռեյչլին հանգստացնելն է, — լրջորեն պատա-  
սխանեց միտքը Ֆրենկլինը: — Ես շատ եմ անհանգստանում  
նրա համար:

Նա հանկարծ հեռացավ ինձնից, կարծես ուղտի էր դադա-  
րեցնել հետագա խոսակցությունը: Ինձ թվաց՝ ես հասկացա, թե  
ինչու նա վախեցավ, որ ինքը կարող է մասնել միտք Ռեյչլի  
կողմից իրեն ասված խոսքերի գաղտնիքը:

Այսպիսով նրանք մեկնեցին Ֆրիլինհոլ:

Ճաշից կես ժամ առաջ երկու երիտասարդ ջենտլմենները  
վերադարձան Ֆրիլինհոլից, տեսուչ Սիդլերի հետ պայմանա-  
վորվելով, որ նա մեկ մտա կվերադառնա հաջորդ օրը: Նրանք  
ճանապարհին եղև չէին քաղաքի մտակալքում ապրող հնդիկ  
ճանապարհորդ միտքը Մերտուեռի մտա: Միտքը Ֆրենկլինի  
խնդրանքով ճանապարհորդը շատ սիրով համաձայնվեց թարգ-  
մանիչ լինել այն երկու հնդիկների հարցաքննության ժամա-  
նակ, որոնք բոլորովին անգլերեն չգիտեին: Հանդամանորեն  
ու խնամքով կատարված հարցաքննությունը արդյունք չբեր-  
վեց. տճպարարներին մեր ծառաներից որևէ մեկի հետ դավա-  
դրություն կազմելու մեջ կասկածելու բացարձակապես ոչ մի  
հիմք չկար: Այս եզրակացությանը հանգելով, միտքը Ֆրենկլի-

նը հետագիր ուղարկեց Լոնդոն. և դրանով գործը ավարտվեց մինչև վաղվա օրը.

Բայց բավական է ծննդյան օրվան հաջորդ՝ ծ օրվա պատմությունն անենք: Այն ժամանակ ոչ մի շող չլուսավորեց մեզ: Միայն մի երկու օր հետո մշուշը կարծես սկսեց մի փոքր ցրվել: Բե ինչպես և ինչ արդյունքով՝ հիմա կիմանաք:

## Պ Լ ու խ X I I

Անցավ հինգշաբթի օրվա գիշերը, և ոչինչ տեղի չունեցավ: Ուրբաթ օրվա առավոտը երկու նորություն բերեց:

Առաջինը. հացավաճառի գործակատարը հայտարարեց, որ ինքը նախորդ օրը իրիկնագնամին հանդիպել է Ռոզաննա Սպիրմանին, երբ սա, թանձր քողը երեսին, Ֆրիդին՝ ոչ էր գրնում ճահճի միջով անցնող արահետով: Տարօրինակ է, որ մեկ ուրիշին կարող էին ընդունած լինել Ռոզաննայի փոխարեն, որի ուսը շափից ավելի նկատելի էր դարձնում իրին. սյդ մարդը հաստտապես սխալվել էր, որովհետև Ռոզաննան, ինչպես ձեզ հայտնի է, ամբողջ ուրբաթ օրը հիվանդ պառկած էր վերևում գտնվող իր սենյակում:

Երկրորդ նորությունը բերեց փոստատարը: Հարգարժան միտար Կանգին նորից մի անհաջող սուր խոսք թոցրեց բերանից, էրբ ծննդյան օրը երեկոյան անձրևի տակ ճանապարհ ընկնելիս ինձ ասաց, թե բժշկի մաշկը անջրանցիկ է: Այդ երեկո նա մրտեց և այժմ պառկած էր տաքության մեջ: Փոստատարի պատմածների համաձայն, նա դառացանքի մեջ անհեթեթյուններ էր դուրս տայիս նույնքան հեշտ ու արագ, ինչպես որ առողջ ժամանակ, երբ գիտակցությունը տեղն էր: Բոլորս խղճում էինք փոքրիկ բժշկին, բայց նրա հիվանդության համար հատկապես՝ ափսոսում էր միտար Ֆրենկլինը՝ միսս Ռեյչելի պատճառով: Նախաճաշի ժամանակ, երբ ես գտնվում էի սենյակում, միլիգրին ասած նրա խոսքերից կարելի էր հասկանալ, որ եթև Լուսնաբարի զազանիրը չլուծվի, ասպա միսս Ռեյչելը կարիք կունենա ամենալավ բժշկի խորհրդին, որպիսին մենք կկարողանանք գտնել:

Նախաճաշից հետո շատ շանցած ստացվեց միտար Բլեկ

ավագի պատասխան հեռագիրը: Այն հաղորդում էր, որ ինքը՝  
Բլեկ ավագը, իր ոստիկանապետ ընկերոջ օգնութեամբ գտել  
է հենց այն մարդուն, որը կարող է մեզ օգնել: Նրա անունը  
խուզարկու Կաֆ է. իսկ լոնդոնից նրա ժամանմանը կարելի էր  
սպասել առավոտյան գնացքով:

Ոստիկանական նոր աստիճանավորի անունը կարգալուծ՝  
միտք Ֆրենկլինը ցնցվեց: Նա, կարծես, լոնդոնում եղած ժա-  
մանակ խուզարկու Կաֆի մասին զանազան հետաքրքրական  
անեկդոտներ էր լսել իր հոր փաստաբանից:

— Ես սկսում եմ հուսալ, որ մենք շուտով կտեսնենք մեր  
անհանգստությունների վերջը, — ասաց նա: — Եթե լսածս  
պատմությունների նույնիսկ կեսը ճշմարիտ է, ապա Անգլիա-  
յում ոչ ոք չի կարող համեմատվել խուզարկու Կաֆի հետ, երբ  
գործը վերաբերում է գաղտնիք բացահայտելուն:

Բոլորս հուզված էինք և անհամբեր էինք դարձել, երբ  
մոտեցավ այդ նշանավոր ու տաղանդավոր մարդու հայտնե-  
րվելու ժամանակը: Տեսուչ Սիգրևը, նշանակված ժամին մեզ  
մոտ վերադառնալով և իմանալով, որ լոնդոնյան խուզարկուին  
են սպասում, անմիջապես փակվեց առանձին սենյակում և  
թուղթ, թանաք ու գրիչ վերցրեց, որպեսզի հաշվեհալություն  
գրի, որ, անկասկած, կպահանջեն իրենից: Ես ինքս էի ուզում  
խուզարկուին դիմավորել կայարանում: Բայց միլեդրի կառքի  
ու ձիերի մասին հնարավոր չէր մտածել նույնիսկ միտք Կաֆի  
համար, իսկ երկանիվ կառքը մի փոքր ավելի ուշ հարկավոր  
էր միտք Գոդֆրիի համար: Սա շատ էր ամոսոսում, որ հար-  
կադրված է իր մտաբերոջը թողնել այսպիսի մի տազնաւալի  
ժամանակ, և սիրահոծար մեկնելու ժամը հետաձգեց մինչև  
վերջին գնացքը, որպեսզի իմանա լոնդոնյան հմուտ խուզար-  
կուի կարծիքն այդ գործի մասին: Բայց ուրբաթ օրը երեկոյան  
նա անպայման սխտոք է լինեք լոնդոնում, որովհետև կանանց  
կոմիտեն ինչ-որ լուրջ դժվարությունների պատճառով նրա  
խորհուրդների կտրիքն ունեք շաբաթ օրը առավոտյան:

Մոտենում էր խուզարկուի ժամանելու պահը, և ես դուրս  
եկա, որպեսզի դարաւասի մոտ սպասեմ նրան:

Երբ մոտեցա սլոնակատանը՝ կայարանից մի կառք եկավ.  
նրանից իջավ ալեխառն մազերով մի տարեց մարդ. նա այն-  
ճան նիհար էր, ուր թվում էր, թե վրան ոչ մի գրամ միս չկա:

Նա սև, վայելուչ զգեստով էր, սպիտակ փողկապով: Գեմքը սուր էր կացնի նման, իսկ մաշկն այնքան դեղին էր, չոր ու դունտ, որ ասես աշնան տերև լիներ: Նրա պողպատե բացմոխրագույն աչքերում, երբ դրանք հանդիպում էին ձեր աչքերին, հայտնվում էր մի շատ անմխիթար արտահայտություն. դրանք ասես ձեզնից սպասում էին ավելին, քան հայտնի էր ձեզ: Նրա քայլվածքը դանդաղ էր, ձայնը մելամաղձոտ. երկար, չոր մատները ճանկերի նման կեռ էին: Նա նման էր քահանայի, թաղման բյուրոյի կապալառուի: Նման էր ում ասես, միայն թե ո՛չ նրան, որ ինքն էր: Տեսուչ Սիգրևի ավելի մեծ հակապատկեր, քան խուզարկու Կաֆն էր, և ավելի սակավ հանգստացուցիչ արտաքինով ոստիկան (անհանգստացած ընտանիքի համար) չէիք կարողանա գտնել, ինչքան էլ փնտրեիք:

— Սա՞ է լեդի Վերինդերի տունը, — հարցրեց նա:

— Ճիշտ այդպես, սըր:

— Ես խուզարկու Կաֆն եմ:

— Համեցեք այստեղ:

Տուն գնալու ճանապարհին ես ասացի անունս և նշեցի ընտանիքում գրավածս դիրքը, որպեսզի նրան հնարավորություն տամ խոսելու այն գործի մասին, որ պատրաստվում էր նրան հանձնարարել միլեդին: Սակայն հա մի բառ անգամ չասաց այդ մասին: Նա հիանում էր զրոսայգիով, նկատեց, որ ծովի օդը շատ թարմ է ու հաճելի: Մտքումս զարմացա, թե այդ ինչո՞վ է նշանավոր խուզարկու Կաֆը այդպիսի համբավի արժանացել: Տուն հասանք երկու անժամոթ շների նման, որոնք կյանքում առաջին անգամ իրար հետ կապվել էին նույն շղթայով:

Հարցնելով, թե որտեղ է միլեդին և իմանալով, որ շերմոցում է, զնացինք տան հտեում գտնվող այգին և ծառային ուղարկեցինք, որ զեկուցի նրան: Մինչ մենք սպասում էինք, խուզարկու Կաֆը բաղեղով պատուտակված կամարի միջով տնոցեց մեր վարդանոցը և ուղիղ մտավ այնտեղ, առաջին անգամ հետաքրքրության նման ինչ-որ բան արտահայտելով: Ի զարմանս այգեպանի և ի դժգոհություն իմ, պարզվեց, որ այդ նշանավոր ոստիկանը իմացությունների շտեմարան է վարդերի աճեցման արվճառում:





Կարծիք իջով ալիւտան մտպերով մի տարւց մարդ, Նա տնքան Նի-  
հար էր, որ թվում էր, թե վրան ոչ մի գրամ միս չկու

Լավ նկարագիր ունիւր այդ մարդը, որը պետք է փնտրեր միսս Ռեչելի ալմաստը և գտներ այն թոցնող գողին:

— Դուք, կարծեմ, սիրում եք վարդեր, սրբ,— նկատեցի ես:

— Որևէ բան սիրելու ժամանակ չունեմ,— պատասխանեց խուզարկու Կաֆը:— Բայց, երբ ազատ բոլոր եմ ունենում, միշտ նվիրում եմ վարդերին, միսսը Բետտերեջ: Ես կյանքս սկսել եմ դրանց մեջ, հորս վարդանոցում, և կյանքս կավարտեմ դրանց մեջ, եթե կարողանամ: Այո՛: Մի գեղեցիկ օր, աստժու օգնութեամբ, ես այլևս գողեր չեմ բռնի ու կփորձեմ վարդեր խնամել: Իմ ծաղկեթմբերի միջև, պարոն այգեպան, խոտածածկ անցուղիներ կլինեն:

Խուզարկուի վրա, ըստ երևույթին, տհաճ տպավորութիւն էին թողել ավազով ծածկված մեր անցուղիները:

— Ձեր մասնագիտութեան տեր մարդու համար, սրբ, դա բավական տարօրինակ ճաշակ է,— համարձակվեցի նկատել ես:

— Եթե ձեր շուրջը նայեք, իսկ դա քչերն են անում,— ասաց խուզարկու Կաֆը,— կտեսնեք, որ մարդու ճաշակը մեծ մասամբ ամենևին չի բռնում նրա զբաղմունքին: Ցույց տվեք ինձ երկու բան, որ ավելի հակադիր լինեն, քան վարդը ու գողը, և ես նույն պահին կփոխեմ իմ ճաշակը, եթե դեռես ուշ չէ իստարիքում: Դուք չե՞ք գտնում, որ Դամասկոսի վարդը գեղեցիկ ֆոն է գրեթե բոլոր առավել քնքուշ տեսակների համար, պարոն այգեպան... Ըհ, այդպես էլ կարծում էի... Ահա գալիս է տիկինը: Լեդի Վերինդեմոն է:

Կաֆը նրան ավելի շուտ տեսավ, քան նկատեցինք ես ու այգեպանը, թեև մենք գիտեինք, թե որ կողմը պետք է նայել, իսկ նա՝ ոչ: Ես սկսեցի նրան շատ ավելի դիտողունակ համարել, քան առաջին հայացքից թվացել էր ինձ:

Խուզարկուի արտաքինը, թե գործը, որի համար նա եկել էր, կամ և՛ մեկը, և՛ մյուսը կարծես փոքր-ինչ շփոթեցրին միլեդիին: Կյանքումս առաջին անգամ տեսա, թե ինչպես նա շիմացավ, ինչ ասի կողմնակի մարդուն: Խուզարկու Կաֆն անմիջապես նրան հանեց դժվարին կացութիւնից: Հարցրեց, թե իրեն կանչելուց առաջ գողութեան հետ կապված գործն արդեն մեկ ուրիշի շէի՞ն հանձնարարել, և իմանալով, որ ուրիշ մարդ է հրավիրված եղել, որը դեռ հիմա էլ գտնվում է տանը,



նախ և առաջ նրա հետ զրուցելու թույլտվութիւն խնդրեց: Միլեդիին գնաց դեպի տուն: Տեսուչը մինչ կհետևեր միլեդիին, հրաժեշտ տալիս հայհոյեց ավազով ծածկված անցուղիները:

— Միլեդիին համոզեք, թող փորձի խտածածկ անցուղիները, — ասաց նա այգեպանին, մի թթու հայացք նետելով ավազին:

Թե ինչու տեսուչ Միգրևի հասակը շատ ավելի ցածրացավ, երբ նրան ներկայ ցրին Կաֆին, հանձն չեմ առնում բացատրել: Ես միայն կարող եմ հիշատակել այդ փաստը: Նրանք հեռացան միասին և շատ երկար նստեցին փակված, ոչ մեկին ներս չթողնելով իրենց մոտ: Երբ դուրս եկան՝ տեսուչը հուզված էր, իսկ խուզարկուն հորանջում էր:

— Միտոր Կաֆը կամենում է տեսնել մինս Վերինդերի հյուրասենյակը, — ասաց Միգրևը, շափից դուրս հանդիսավոր կերպով և մեծ ոգևորութեամբ դիմելով ինձ: — Նա, գուցե, կկամենա մի քանի հարց տալ: Խնդրում եմ, ուղեկցեք նրան:

Մինչ այսպիսի կարգադրութիւններ էին անում ինձ՝ ես ճայեցի նշանավոր Կաֆին: Նշանավոր Կաֆն իր հերթին տեսուչին էր նայում այնպիսի մի հանգիստ սպասումով, որը ես արդեն նկատել էի: Հանձն չեմ առնում պնդել, թե նա ինչ-որ մի հիմարութիւն էր սպասում իր գործընկերոջից, բայց կասկածում եմ, որ դա հենց այդպես էր:

Ես նրանց տարա վերև: Խուզարկուն ուշադիր զննեց հնդկական պահարանիկը և պտտվեց ամբողջ բուզուարի շուրջը, տալով այնպիսի հալցեր (միայն երբեմն տեսուչին և անընդհատ ինձ), որոնց նպատակը, ենթադրում եմ, հավասարապես անհասկանալի էր երկուսիս համար էլ: Վերջապես նա հասազ դրոսան մոտ և հայտնվեց մեզ ծանոթ նկարազարդ դրոսան դիմաց: Նա իր շոր մատը դրեց կողպեթի տակ գտնվող այն փոքրիկ բրձի վրա, որ տեսուչ Միգրևն արդեն նկատել էր, երբ դիտողութիւն էր անում սենյակում խոնված սպասուհիներին:

— Շատ ափսոս, — ասաց խուզարկու Կաֆը: — Այդ ինչպե՞ս է եղել:

Նա հարցեր տվեց ինձ: Ես պատասխանեցի, որ սպասուհիներն այս սենյակում խոնվել էին նախորդ օրը առավոտյան և որ այս փորձանքի պատճառը նրանց շրջազգեստներն են:

— Տեսուչ Միգրևը նրանց հրամայեց դուրս գալ, սըր, —

ավելացրի ես,— որպեսզի նրանք էլ ավելի մեծ փորձանք շքերեին:

— Ճիշտ է,— ասաց տեսուչն իր դինվորական ձայնով,— Ես նրանց կարգադրեցի հեռանալ: Սա արել են շրջազգեստները, միտոր Կաֆ, սա արել են շրջազգեստները...

— Դուք նկատե՞լ եք, թե ում շրջազգեստն է դա արել,— հարցրեց խուզարկու Կաֆը, շարունակելով դիմել ոչ թե իր ծառայակցին, այլ ինձ:

— Ոչ, սրբ:

Դրանից հետո նա դիմեց տեսուչ Սիգրևին ու հարցրեց.

— Իսկ դուք, ենթադրում եմ, նկատել եք դա:

Տեսուչը, կարծես, հանկարծակիի եկավ, բայց շտապեց սթափվել:

— Ես չեմ կարող հիշողութիւնս ծանրաբեռնել,— ասաց նա,— դրանք դատարկ բաներ են, միանգամայն դատարկ բաներ:

Խուզարկու Կաֆը նայեց Սիգրևին, ինչպես նայել էր վարդանոցում ավազով ծածկված անցուղիներին, և իր սովորական մելամաղձոտութիւնամբ սուաջին անգամ մեզ զգացնել տվեց, թե ինչի է ընդունակ ինքը:

— Անցած շաբաթ ես մի զաղտնի հետաքննություն էի կատարում, սյարոն տեսուչ,— ասաց նա:— Հետաքննության մի ծայրին սպանություն էր, իսկ մյուս ծայրին՝ սփոթցի վրայի թանաքի բիծը, որը ոչ ոք չէր կարողանում բացատրել: Այս կեղտոտ աշխարհի կեղտոտ ծակածուկերում կատարած բոլոր թափառումներին բնթացքում ևս դեռ չեմ հանդիպել այնպիսի մի բանի, որը կարելի լինէր դատարկ բան անվանել: Նախքո՛ւ այդ դործում ևս մեկ քայլ անելու՝ մենք պետք է տեսնենք այն շրջազգեստը, որը թողել է այս բիծը, և, երևի, պետք է իմանանք, թե երբ է շորացել այս ներկը:

Տեսուչը, բավականաչափ մոռյաղոթմ ընդունելով այս դիտողութիւնը, հարցրեց, թե պե՞տք է կանչել կանանց: Խուզարկու Կաֆը մի պահ մտածելուց հետո խորը շունչ քաշեց ու տարուբերեց գլուխը:

— Ոչ, մենք նախ կզբաղվենք ներկով: Ներկի հարցը երկու բառ կպահանջի՝ այո կամ ոչ. դա երկար չի տևի: Կնոջական շրջապագեստի հարցը երկար է: Երեկ առավոտյան ո՞ր ժամին են



սպասուհիները եղել այս սենյակում... Ժամը տասնմեկին: Տանը որևէ մեկը գիտե՞, թե ներկը առավոտյան ժամը տասնը-մեկին չո՞ր է եղել, թե թաց:

— Միլեդիի քրոջ տղան՝ միստր Ֆրենկլին Բլեկը գիտե,—  
ասացի ես:

— Նա այստե՞ղ է:

Միստր Ֆրենկլինը գտնվում էր շատ մոտիկ և սպասում էր հարմար առիթի, որ իրեն ներկայացնեն նշանավոր Կաֆին: Կես րոպե անց նա արդեն սենյակում էր և հետևյալ ցուցմունքն էր տալիս.

— Այս դուռը նկարազարդել է միսս Վերինդերը՝ իմ հսկողությամբ, իմ օգնությամբ և իմ հայտնագործած բողաղրությամբ: Այդ բողաղրությունը, ինչ ներկերի հետ էլ որ այն օգտագործվի, շորանում է տասներկու ժամ հետո:

— Սըր, դուք հիշո՞ւմ եք, երբ է ավարտվել այն տեղը, որի վրա այժմ բիծ կա,— հարցրեց խուզարկուն:

— Շատ լավ եմ հիշում,— պատասխանեց միստր Ֆրենկլինը:— Այդ տեղն ավարտվել է վերջում: Մենք պետք է ավարտեինք՝ մինչև անցած շորեքշաբթի, և ես ինքս այն ավարտեցի կեսօրից հետո ժամը երեքին մոտ, կամ դրանից մի փոքր հետո...

— Այսօր ուրբաթ է,— ասաց խուզարկու Կաֆը, դիմելով տեսուչ Սիգրևին:— Ետ վերադառնանք, սրբ: Չորեքշաբթի ժամը երեքին այս տեղն ավարտված էր: Բողաղրությունը պետք է շորանար տասներկու ժամ հետո, այսինքն՝ հինգշաբթի առավոտյան ժամը երեքի մոտերքում: Դուք այստեղ հետաքննություն եք կատարել առավոտյան ժամը տասնմեկին: Տասնմեկից հանեք երեք՝ կմնա ութ: Այս ներկն արդեն ութ ժամ չոր է եղել, պարոն տեսուչ, երբ դուք ենթադրել եք, որ կնոջական շրջազգեստ է քսվել դրան:

Առաջին դաժան հարվածը միստր Սիգրևի համար: Եթե նա կասկածած չլիներ խեղճ Պենելոպեի վրա՝ ես կխղճայի նրան:

Ներկի հարցը վճռելով՝ խուզարկու Կաֆը այդ պահից ըսկըսած կարծես մոռացավ մասնագիտության գծով իր ընկերոջը և սկսեց դիմել միստր Ֆրենկլինին՝ որպես առավել հուսալի օգնականի:



— Շատ հնարավոր է, որ դուք գաղտնիքը պարզելու բանալի տվիք մեզ, սրբ,— ասաց նա:

Այս բառերը դեռևս էին պոկվել նրա շուրթերից, երբ ննջասենյակի դուռը կրնկի վրա բացվեց և անսպասելիորեն մեր առջև հայտնվեց միսս Ռեչելը: Նա խոսակցության բռնվեց խուզարկուի հետ, ասես շնկասելով կամ ուշադրութուն չդարձնելով այն բանի վրա, որ նա բոլորովին անծանոթ էր իրեն:

— Դուք ասացիք,— հարցրեց նա, մատնացույց անելով միսսր Ֆրենկլինին,— որ նա՞ է գաղտնիքի լուծման բանալին ձեզ տվել:

— Սա միսս Վերինգերն է,— շշնջացի ես խուզարկուի ահանջին:

— Շատ հնարավոր է, միսս, որ այս ջննտմենն է,— տրտաբերեց խուզարկին, իր պողպատե մոխրագույն աչքերով ու-

շաղիր ուսումնասիրելով իմ օրփորդի դեմքը,— մեր ձեռքը բանալի տվել:

Ռեչելը մի պահ շրջվեց և միտար Ֆրենկլինին նայելու փորձ կատարեց: Ասում եմ «փորձ կատարեց», որովհետև նույն պահին նորից շրջվեց, նախքան իրենց աչքերը կհանդիպեն: Ըստ երևույթին ինչ-որ բան տարօրինակ ձևով անհանգստացրել էր նրա մտքերը: Նա կարմրեց, հետո նորից գունատվեց: Գունատության հետ միաժամանակ մի նոր արտահայտություն հայտնվեց դեմքին, մի արտահայտություն, որը վախեցրեց ինձ:

— Պատասխանելով ձեր հարցին, միսս,— ասաց խուզարկուն,— իմ հերթին, ձեզնից թույլտվություն եմ խնդրում մի հարց տալու ձեզ: Այստեղ, ձեր դռան վրա, բիծ կա: Ձեզ հայտնի՞ է, թե երբ է այդ բիծն արվել կամ ով է արել:

Նրան պատասխանելու փոխարեն միսս Ռեչելը շարունակում էր իրենն ասել, կարծես խուզարկուն ոչինչ չէր հարցրել իրենից կամ ինքը ոչինչ չէր լսել:

— Դուք ոստիկանական նոր սպա՞ն եք:

— Ես խուզարկու Կաֆն եմ, միսս, խուզարկու ոստիկանությանից:

— Ի՞նչ եք կարծում, արժե՞, որ դուք երիտասարդ աղջկա խորհուրդը լսեք:

— Շատ ուրախ կլինեմ լսելու, միսս:

— Ուրեմն ձեր պարտականությունը կատարեք ինքներդ և մի թույլ տվեք, որ ձեզ օգնի միտար Ֆրենկլինի Քլեկը:

Նա այս խոսքերն ասաց այնքան դադաղած, այնպիսի կատաղությամբ, ձայնի մեջ և դեմքի արտահայտության մեջ միտար Ֆրենկլինի նկատմամբ անբարյացկամության այնպիսի արտառոց պայթյունով, որ թեև ես շատ փոքր հասակից գիտեի նրան, թեև միլիդիից հետո բոլորից շատ նրան էի սիրում ու հարգում, կյանքումս առաջին անգամ ամոթ զգացի միսս Ռեչելի համար:

Խուզարկու Կաֆն իր անշարժ հայացքը չէր կտրում նրա դեմքից:

— Շնորհակալ եմ, միսս,— ասաց նա:— Դուք ոչինչ չգիտե՞ք այդ բժի մասին: Դուցե ինքնե՞րդ եք պատահմամբ քսվել ներկին:

— Այդ բժի մասին ես ոչինչ չգիտեմ:

Այս պատասխանը տալով, նա շրջվեց մեղնից ու նորից փակվեց իր ննջարանում: Այս անգամ ես էլ լսեցի, ինչպես դրբանից առաջ Պեննելոպին էր լսել, որ նա մենակ մնալուն պես հեկեկաց: Ես չհամարձակվեցի նայել խուզարկուին և նայեցի միստր Ֆրենկլինին, որը բոլորից մոտիկ էր կանգնած ինձ: Տեղի ունեցածը, կարծես, նրան շատ ավելի էր դառնացրել, քան ինձ:

— Ես ձեզ ասել եմ, որ անհանգստանում եմ նրա համար, — շշնջաց միստր Ֆրենկլինը: — Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչու:

— Միսս Վերինդերի վատ արամադրութ՛յան պատճառը, կարծեմ, կորած ավմաստն է, — նկատեց խուզարկուն: — Դա թանկարժեք իր է... Շատ բնական է:

Այն ներողութ՛յունը, որ երեկ նրա փոխարեն հորինեցի ես (երբ նա իրեն կորցրեց տեսուչ Միգրևի ներկայութ՛յամբ), այսօր նրա փոխարեն հայտնեց մի մարդ, որը նրա կյանքում այնպիսի մասնակցութ՛յուն չուներ, ինչպես ես, որովհետև նրա համար կողմնակի մարդ էր: Սառը դող անցավ մարմնովս, թե ինչու՞ ես այ՛՛ ժամանակ չգիտեի. կարծում եմ, այդ պահին, թերևս, առկայժեց առաջին կասկածը՝ կապված այն նոր մտքի (և այն էլ սարսափելի մտքի) հետ, որը խուզարկու Կաֆի մեջ ծաղեւ էր սոսկ այն բանի հիման վրա, ինչ նա նկատել էր միսս Ռեչելի մեջ և միաժամանակ նրանից լսել իրենց առաջին տեսակցութ՛յան ժամանակ:

— Երիտասարդ աղջիկներն լեզուն իր առանձնաշնորհներն ունի, սըր, — շարունակեց խուզարկուն, գիմելով միստր Ֆրենկլինին: — Մոռանանք տեղի ունեցածը և ուղղակի գործի անցնենք: Ձեր շնորհիվ մենք գիտենք, թե երբ է շորացել ներկը: Հիմա մնում է իմանալ, թե վերջին անգամ երբ են այդ գուռը տեսել առանց բժի: Դուք, համենայնդեպս, գլուխ ունեք ձեր ուսերին, և հասկանում եք, թե ես ինչ եմ ասում:

Միստր Ֆրենկլինն աշխատեց հանգստանալ և, քանք գործադրելով, վանեց միսս Ռեչելի հետ առնչվող իր մտածումները:

— Կարծես՝ հասկանում եմ: Որքան ավելի ճշգրտորեն որոշենք ժամանակը, այնքան ավելի կփոքրացնենք որոնումների դաշտը:

— Ճիշտ արդպես, սըր, — պատասխանեց խուզարկուն: —

Դուք ձեր աշխատանքին նայել եք շորեքշաբթի օ՞րը, այն ավարտելուց հետո՞:

Միստր Ֆրենկլինը գլուխը տարուրերեց ու պատասխանեց.

— Չեմ հիշում:

— Իսկ դո՞ւք, — դիմեց խուզարկու Կաֆը ինձ:

— Ես նույնպես չեմ կարող ասել, սըր:

— Չորեքշաբթի երեկոյան ո՞վ է վերջինը եղել այդ սենյակում:

Ենթացրում եմ միսս Ռեչելը, սըր:

— Կամ, թերևս, ձեր դուստրը, Բետտերեջ, — միջամտեց միստր Ֆրենկլինը:

Նա շրջվեց դեպի միստր Կաֆը ու բացատրեց, որ իմ դուստրը միսս Վերինդերի աղախինն է:

— Միստր Բետտերեջ, խնդրեք, որ այստեղ գա ձեր դուստրը... Սպասեցեք, — ասաց խուզարկուն, ինձ տանելով լուսամուտի մոտ, որտեղ ոչ ոք չէր կարող մեզ լսել: — Տեսուչ Միգրերը, — շշնջումով շարունակեց նա, — ինձ մանրամասն զեկույց է ներկայացրել այն մասին, թե ինչպես է ինքը վարել գործը: Ի միջիայլոց, նա, իր իսկ, խոստովանությամբ, րարկացրել է բոլոր ծառաներին, իսկ ինձ համար շատ կարևոր է նրանց հանգստացնել: Իմ կողմից ողջունեք ձեր գտները ու բոլոր մնացածներին և նրանց ասացեք, որ, առաջին, դեռևս ապացույցներ չունեմ, որ ալմաստը գողացված է. ես միայն գիտեմ, որ ալմաստը կորել է: Եվ, երկրորդ, ծառաներին ուղղված իմ խնդրանքը պարզապես այն է, որ նրանք ինձ օգնեն:

Իմանալով, թե կին ծառաների վրա ինչ ազդեցություն է գործել տեսուչ Միգրերի կողմից նրանց սենյակների վրա գրված արգելքը, ես շտապեցի հարցնել.

— Կարո՞ղ եմ ես, միստր Կաֆ, մի երրորդ բան ևս ասել կանանց: Կարո՞ղ եմ նրանց հաղորդել, որ դուք հրամայեցիք ողջունել իրենց և ասել, որ իրենք ազատորեն կարող են վերուվար անել աստիճաններով և իրենց սենյակները մտնել, երբ կկամենան:

— Կարող եք, — ասաց խուզարկուն:

— Դա անմիջապես բոլորին կհանգստացնի, սըր, — նկատեցի ես, — սկսած խոհարարուհուց, վերջացրած աման լվացողով:

— Գնացեք և այդ արեք սնմիջապես, միատր Բեռտերեջ:

Սա դա արեցի հինգ րոպեից էլ պակաս ժամանակամիջոցում: Միայն մի դժվարութիւնն առաջացավ: Երբ հաղորդեցի, որ իրենք կարող են ազատորեն իրենց սենյակները մտնել, տփպված եղա գործադրել իմ ամբողջ իշխանութիւնը, որպեսզի սպասավոր կանանց հտ պահեմ որպես կամավոր վկաներ իմ Պենեյլոպեի հտեից վերև սլանալու փորձերից, վկաներ, որոնք շերմորեն ցանկանում էին օգնել խուզարկու Կաֆին:

Պենեյլոպեն, ըստ երևույթին, դուր էր եկել խուզարկուին: Փոքր ինչ պակասեց նրա շորութիւնը, և դեմքի վրա հայտնվեց ճիշտ այնպիսի արտահայտութիւն, որպիսին կար այն ժամանակ, երբ նա ծաղկանոցում նկատել էր մուսկատի սպիտակ վարդը: Ահա իմ դատեր ցուցմունքը, որ նրանից վերցրել էր խուզարկուն: Նա, ինչպես ինձ թվում է, այդ ցոցմունքը տվել էր շատ սիրալիք, չէ որ նա ամբողջովին ինձ է քաշել: Մայրական ոչինչ չկա նրա մեջ: Փառք աստծու, մայրական ոչինչ չկա նրա մեջ:

Պենեյլոպեն ցուցմունք էր տվել, որ դռան նկարադարդումը իրեն շատ է հետաքրքրել, քանի որ ինքը օգնել է ներկերը խառնելուն. ինքը նկատել է կողպերի ներքևի մասը, որովհետև այն նկարադարդն են վերջում. մի քանի ժամ անց տեսել է, որ այդ մասում բիծ չկա. դա եղել է գլշեր՝ ա ժամը տասներկուսին: Այդ ժամին իր երիտասարդ տիրուհուն ննջարանում հրաժեշտ տալիս ինքը լսել է ինչպես է բուդուարում խփել ժամացույցը. ինքն այդ ժամանակ բռնած է եղել նկարադարդած դռան բռնակը. իմացել է, որ ներկը դեռ չի շորացել (քանի որ օգնել է ներկերը խառնելուն, ինչպես արդեն ասվել է վերևում). այդ պատճառով էլ հատկապես աշխատել է շղիպչել դռանը. կարող էր երդվել, որ շրջազգեստի փեշը հավաքած է եղել և սր այդ ժամանակ դռան վրա բիծ չի եղել. չէր կարող երդվել, թե իր շրջազգեստը պատահականորեն չի քսվել դռանը, երբ ինքը դուրս գալիս է եղել. հիշում է, թե ինչ շրջազգեստ է եղել հագին, որովհետև այն եղել է նոր, միսս Ռեչելի նվերը. իր հայրը նույնպես հիշում է և նույնպես կարող է դա հաստատել. ինքը կարող է բերել այդ շրջազգեստը, որ այն երեկո եղել է իր հագին, և հիմա ևեթ կգնա կրերի:

Շրջազգեստը հարկ եղավ երկար զննել, որովհետև շատ



լայն էր, և պարզվեց, որ նրա վրա ոչ մի տեղ ոչ մի բիծ չկա:

Հետո խուզարկուն սկսեց հարցաքննել ինձ, թե արդյո՞ք մեր տանը չկան մեծ շներ, որոնք կարող են սենյակ մտնել և պոչով քսմսել ներկը: Լսելով, որ դա անհնարին է, նա ուղարկեց խոշորացույց բերելու և փորձեց բիծը զննել դրա օգնութեամբ: Ներկի վրա մարդկային ձեռքի հետքեր չկային: Բոլոր տեսանելի նշանները ցույց էին տալիս, որ ներկը քսմսվել է ինչ-որ շրջադգեստից: Նա, ում հագին եղել է այդ շրջադգեստը, դատելով ըստ Պենելոպեի և միստր Ֆրենկլինի ցուցմունքների, այդ բիծն անելու համար պետք է սենյակում դրսևած լիներ հինգշաբթի օրը կեսգիշերի և առավոտյան ժամը երեքի արանքում:

Հետաքննությունը այս կետին հասցնելով, խուզարկու Կաֆր հիշեց, որ դեռևս սենյակում է գտնվում տեսուչ Սիգրեքը, և, որպես խրատ իր ծառայակցի համար, հետևյալ ձևով ամփոփեց այն բոլորը, ինչ որ գիտեր:

— Ձեր այդ դատարկ բաները, պարոն տեսուչ,— ասաց նա,— մատնանշելով բիծը,— բավականաչափ կարեոր են դարձել ձեր՝ վերջին անգամ տեսնելուց հետո: Այն վիճակում, որ այժմ գտնվում է հետաքննությունը, այս բիծը պետք է հանգեցնի երեք հայտնագործության: Հարկ է, առաջին, իմանալ այդ ներկին քսված հագուստ կա՞ այս տան մեջ, թե ոչ: Երկրորդ, պարզել, թե ում է պատկանում այդ հագուստը: Երրորդ, բացատրություն ստանալ այդ անձնավորությունից՝ ինչո՞ւ է նա կեսգիշերի և առավոտվա ժամը երեքի միջև ընկած ժամանակամիջոցում եղել այդ սենյակում: Եթե այդ անձնավորությունը չկարողանա գոհացուցիչ բացատրություն տալ, այդ դեպքում դուք կարող եք հեռուներում շփնտրել այժաստը հափշտակած ձեռքը: Դա ես կանեմ ինքս, ձեր թույլատվութեամբ, իսկ ձեզ այլևս չեմ կտրի ձեր պարտականություններից: Տեսնում եմ, որ այստեղ է գտնվում ձեր ենթականերից մեկը: Նրան թողեք ինձ մտո՞ւ պատեհ առիթի համար, և թույլ տվե՛ք ձեզ բարի լույս մաղթել:

Խուզարկուի նկատմամբ տեսուչ Սիգրեքի հարգանքը մեծ էր, բայց իր իսկ նկատմամբ հարգանքը է՛լ ավելի մեծ էր: Նըշանավոր Կաֆից շատ դիպուկ խոցված լինելով՝ նա հարվածը հակադարձեց ոչ պակաս ճարպկութեամբ:

— Մինչև հիմա ես ձեռնապահ եմ մնացել իմ կարծիքը հայտնելուց, — ասաց տեսուչը ամենևին չփոխված նույն մարտական տոնով: — Այժմ, հետաքննությունը թողնելով ձեր ձեռքում, ինձ մնում է նկատել, որ ճանճը շատ հեշտ է փիղ դարձնել: Մնացեք բարի:

— Նաև շատ հեշտություններ կարող են ճանճը բուրբուրովին նկատել այն մարդիկ, որոնք չափից դուրս բարձր են գուլաները տնկում:

Այսպիսի արտահայտություններ պատասխանելով իր ծառայակցի հաճոյախոսությունը, խուզարկու Կաֆը շրջվեց ու մտտեցավ լուսամուտին:

Միստր Ֆրենկլինն ու ես սպասում էինք, թե ինչ կլինի հետո: Խուզարկուն, ձեռքերը գրպանը դրած, կանգնած նայում էր լուսամուտին և ինքն իրեն կամացուկ սուլում «Ամռան վերջին վարդը վառ» երգի եղանակը:

Ավելի ուշ նկատեցի, որ միստր Կաֆը, քաղաքավարության կանոնները մոռանալով, սկսում էր սուլել միայն այն ժամանակ, երբ նրա միտքը լարված գործում էր, վայրկյան առ վայրկյան նրան մոտեցնելով միայն իրեն հայտնի ինչ-որ նրպատակի: «Ամռան վերջին վարդը վառ» երգը, ըստ երևույթին, օգնում էր նրան ու քաջալերում: Այն, հավանաբար, ինչ-որ բանով համապատասխանում էր նրա բնավորությանը, նրան հիշեցնելով սիրելի վարդերը. և նա այդ երգը սուլում էր ամենաթախծոտ եղանակով:

Լուսամուտի մոտ մի երկու բույե կանգնելուց հետո խուզարկուն հասավ սենյակի մեջտեղը և կանգ առավ խոր մտածմունքի մեջ ընկած, հայացքը հառելով միսս Ռեչելի ննջարանին: Ընդամենը մի քանի վայրկյան հետո սլոպովեց, գլխով արեց, կարծես ասելով. «Այդպես ավելի լավ կլինի», — և, դիմելով ինձ, իմ տիրուհու հետ մի բույե խոսելու ցանկություն հայտնեց, երբ դա հարմար կլինի միլեդիի համար:

Այս հանձնարարությունը սենյակից դուրս գալիս լսեցի, թե ինչպես միստր Ֆրենկլինը հարց տվեց խուզարկուին և կանգ առավ դռան մեջ՝ լսելու պատասխանը:

— Դուք գեռես չե՞ք կոահում, — հարցրեց միստր Ֆրենկլինը, — թե՞ ով է գողացել արմաստը:

— Ալմաստը ոչ ոք չի գողացել,— պատասխանեց միստր Կաֆր:

Գործի նկատմամբ եղած այսպիսի անսովոր հայացքը երկուսիս էլ տարակուսանքի մեջ գցեց, և մենք երկուսս էլ սկսեցինք թախանձագին խնդրել, որ նա մեզ բացատրի, թե ինչ է ուզում դրանով ասել:

— Մի քիչ սպասեցեք,— պատասխանեց խուզարկո՞ւմ:— Շղթայի ոչ բոլոր օղակներն են հավաքված:

### Գ Լ ու խ X I I I

Ես միլեդիին գտա իր աշխատասենյակում: Նա ցնցվեց, և դեմքին դժգոհություն արտահայտվեց, երբ զեկուցեցի, որ միստր Կաֆր ցանկանում է խոսել իր հետ:

— Մի՞թե պարտավոր եմ ընդունել նրան: Դուք չե՞ք կարող փոխարինել ինձ, Գաբրիել:

Դա անհասկանալի թվաց ինձ և, երևի, տարակուսանք արտահայտվեց դեմքիս վրա: Միլեդին բարեհաճեց բացատրել:

— Վախենում եմ, որ նյարդերս փոքր-ինչ խանգարված լինեն,— ասաց նա,— Լոնդոնյան այդ ոստիկանի մեջ, չգիտեմ ինչու, ինձ զզվանք ներշնչող ինչ-որ բան կա: Կանխազգում եմ, որ նա խառնակություն կառաջացնի մեր տանը ու փորձանք կբերի: Մեծ հիմարություն է, և շատ անսովոր ինձ համար, բայց այդպես է:

Ես չգիտեի, թե ինչ պատասխանեմ միլեդիի այդ ասածներին: Որքան ավելի էի հետևում խուզարկու Կաֆին, այնքան սա ավելի էր դուր գալիս ինձ: Միլեդին իմ ներկայությամբ արտահայտվելուց հետո անմիջապես ինքն իրեն հավաքեց. ինչպես ձեզ արդեն ասել եմ, նա ի ծնե մեծ արիություն տեր կին էր:

— Եթե նրա հետ տեսնվելն անհրաժեշտ է՝ ապա ոչինչ անել չեմ կարող,— ասաց նա,— բայց ես չեմ կարող ինձ թույլ տալ մեկուսի խոսել նրա հետ: Այստեղ բերեք նրան, Գաբրիել, և քանի դեռ նա այստեղ կլինի՝ մնացեք նաև դուք:

Այն ժամանակից ի վեր, երբ իմ տիրուհին դեռ ջահել աղջիկ էր, առաջին անգամ տեսա, որ նա անձնատուր լինելու ինչ-որ հրևակայությունների: Ես վերադարձա բուզուար: Միստր Ֆրենկլինը դուրս եկավ այգի՝ միստր Գոդֆրիի մոտ, որի մեկ-

նելու ժամանակը մոտենում էր: Խուզարկու Կաֆը և ես ուղիղ գնացինք իմ տիրուհու սենյակը:

Հավատացնում եմ, նրան տեսնելուն պես միլեդին փոքր-ինչ գունատվեց: Մակայն ուրիշ ոչ մի բանով շմատնեց իր տրամադրությունը և խուզարկուից հարցրեց, թե արդյո՞ք նա որևէ բան շունի իմ սենյակում գտնվելու դեմ: Իր բարությանը համապատասխան՝ միլեդին ավելացրեց, որ ես ոչ միայն հին ծառան եմ, այլև հուսալի խորհրդատուն, և որ տնային գործերի վերաբերող ամեն ինչում ինքը սովոր է ինձ հետ խորհրդակցել: Խուզարկուն քաղաքավարությամբ պատասխանեց, որ իմ ներկայությանը նայում է որպես օգնության, որովհետև ինքը որոշ բաներ պետք է ասի ծառաների մասին ընդհանրապես, և այդ տեսակետից իմ փորձառությունն արդեն օգտակար է եղել իր համար:

Միլեդին մատնացույց արեց երկու աթոռ, և մենք անմիջապես նստեցինք խորհրդակցելու:

— Այդ գործի վերաբերյալ ես իմ կարծիքն արդեն ունեմ,— սկսեց խուզարկու Կաֆը:— Խնդրում եմ ձեզ, միլեդի, թույլ տաք, որ այն առայժմ մնա իմ մեջ: Իսկ հիմա ես պետք է ասեմ, թե ինչ գտա վերևում, միաս Վերինդերի հյուրասենյակում, և որոշեցի, ձեր թույլատվությամբ, միլեդի, դրանով ըզբաղվել առաջին հերթին:

Նա պատմեց դռան վրա եղած բծի մասին և իր եզրակացության մասին, որը քիչ առաջ, միայն թե սակավ հարգալից արտահայտություններով, հաղորդել էր տեսուչ Սիդրեին:

— Մի բան կասկածից վեր է,— վերջում ավելացրեց նա,— արմաստը կորել է պահարանիկի դարակից: Կասկածից վեր է նաև մեկ ուրիշ բան. դռան ներկի հետքերը պետք է լինեն այստան մեջ որևէ մեկին պատկանող հագուստի վրա: Եվս մի քայլ անելուց առաջ մենք պետք է գտնենք այդ հագուստը:

— Դա, հավանաբար, կհանգեցնի նրան, որ գողը կգտնվի,— հարցրեց իմ տիրուհին:

— Ներեցեք, միլեդի, ես չեմ ասում, թե արմաստը գողացված է: Այժմ միայն ասում եմ, որ արմաստը կորել է: Եթե ներկոտած հագուստը գտնվի, ապա կարող է գտնվել նաև արմաստը:

Միլեդին նայեց ինձ:

— Գա ձեզ հասկանալի՞ է,— հարցրեց նա:

— Խուզարկու Կաֆր հասկանում է, միլեդի,— սլատասխանեցի ես:

— Ի՞նչ ձևով եք մտադիր գտնել ներկոտած զգեստը,— նորից դիմելով խուզարկուին՝ հարցրեց տիրուհիս:— Ամոթ է ասելը, բայց թե շատ տարիներ ինձ մոտ ապրող իմ բարի ծառաների սնդուկներն ու սենյակներն արդեն խուզարկել է առաջին քննիչը: Ես չեմ կարող և չեմ ուզում թույլ տալ, որ նրանց վիրավորեն երկրորդ անգամ:

(Այ քեզ տիրուհի՛: Այ քեզ կի՛ն, միակը տասը հազարից):

— Հենց այդ մասին էլ ուզում էի խոսել ձերդ ողորմածության հետ,— արձագանքեց խուզարկուն:— Առաջին քննիչը շատ վնաս է հասցրել հետաքննությունը, ծառաներին հասկացնել տալով, որ ինքը կասկածում է նրանց վրա: Եթե ես նրանց առիթ տամ մտածելու, որ նրանց վրա կասկածում են երկրորդ անգամ, հայտնի չէ, թե դեռ ինչպիսի խոչընդոտներ կհարուցեն նրանք, հատկապես կանայք: Մինչդեռ նրանց սնդուկները նորից պետք է խուզարկություն ենթարկվեն: Այն պարզ պատճառով, որ այն ժամանակ ավմաստն են փնտրել, իսկ հիմա ներկոտած զգեստն են փնտրելու: Ես միանգամայն համաձայն եմ ձեզ հետ, միլեդի, որ պետք է խնայել ծառաների զգացմունքները: Բայց միանգամայն հավատացած եմ նաև, որ ծառաների հանդերձապահարանները պետք է խուզարկության ենթարկվեն:

Մենք, ըստ երևույթին, դանվում էինք փակուզու մեջ: Գա միլեդին ասաց ավելի նուրբ արտահայտություններով, քան ես:

— Այդ դժվարությունը լուծող մի ծրագիր եմ հղացել,— ասաց խուզարկու Կաֆր:— Եթե դուք, միլեդի, համաձայնվեք դրան, ես մտադիր եմ ծառաներին բացատրել, թե ինչն-ինչոց է...

— Կանայք անմիջապես կենթադրեն, թե նորից կասկածում են իրենց վրա,— ընդհատեցի նրան:

— Չեն ենթադրի, միտքը Բեատրիկեյ,— սլատասխանեց խուզարկուն,— չեն ենթադրի, եթե ես նրանց ասեմ, որ խուզարկելու եմ բոլոր նրանց հանդերձապահարանները (սկսած միլեդիից), ովքեր շորեքշաբթի օրը զիշերել են տանը: Սա հասարակ ձևականություն է,— ավելացրեց նա, աչքի պոչով

նայելով իմ տիրուհուն,— բայց սպասուհիները բանն այնպես կհասկանան, թե իրենց դասում են տղերին հավատար, և, հետաքննությանը խանգարելու փոխարեն, պատիվ կհամարեն աջակցել:

Սա պետք է խոստովանելի, որ նա իրավացի էր: Միլեդին, երբ նրա վարմանքն անցավ, նույնպես խոստովանեց դա:

— Գուք համոզված եք, որ այդպիսի խուզարկությունը հարկավոր է,— հարցրեց նա:

— Դա դեպի նպատակը տանող ամենակարճ ուղին է այն բոլորից, որպիսիք ես տեսնում եմ, միլեդի:

Տիրուհիս վեր կացավ, որպեսզի զանգահարի աղախնուն:

— Գուք ծառաների հետ կխոսեք իմ հանդերձապահարանի բանալիները ձեր ձեռքում բռնած:

Խուզարկու Կաֆն անսպասելի հարցով կանգնեցրեց նրան.

— Ավելի լավ չի՞ լինի, եթե մենք նախապես համոզվենք, որ տանը գտնվող մյուս տիկիներն ու ջենտլմենները համաձայն են դրան:

— Տանը գտնվող միակ մյուս տիկինը միսս Վերինդերն է,— զարմանքով պատասխանեց իմ տիրուհին.— Միակ ջենտլմենները իմ քույրերի որդիներն են՝ միսսը Բլեկը և միսսը Էրլուայթը: Հավատացած եմ, որ նրանք շեն առարկի:

Սա միլեդիին հիշեցրի, որ միսսը Գոդֆրին մեկնում է: Չէի հասցրել այս բառերն արտաբերել, երբ միսսը Գոդֆրին ինքը դուռը թակեց՝ հրաժեշտ տալու համար. նրանից անմիջապես հետո եկավ նաև միսսը Ֆրենկլինը, որ պատրաստվում էր նրան ճանապարհել մինչև կայարան: Միլեդին նրանց բացատրեց մեր դժվար կացությունը: Միսսը Գոդֆրին անմիջապես վրձուց հարցը: Նա լուսամուտից ձայն տվեց Սամուելին, որպեսզի սա նորից վերև բարձրացնի իր ճամպրուկը, իսկ հետո անձամբ բանալին հանձնեց խուզարկու Կաֆին:

— Իմ իրերը կարող եք ինձ՝ Լոնդոն ուղարկել,— ասաց նա,— երբ հետաքննությունն ավարտված կլինի:

Խուզարկուն բանալիները վերցրեց՝ պատշաճ ձևով ներդրություն խնդրելով:

— Ցավում եմ, որ դատարկ ձեռքանությունն պատճառով հոգսեր եմ պատճառում ձեզ, բայց թե տերերի օրինակը խուզարկություն հետ կհաշտեցնի նաև ծառաներին:

Միստր Գոդֆրին մեծ հուզմունքով հրաժեշտ ավեց միլե-  
դիին, խնդրելով իր հարգանաց հավաստիքը միսս Ռեչելին  
հաղորդել այնպիսի արտահայտութիւններով, որոնք ապացու-  
ցում էին, որ ինքը որպէս վերջնական մերժում չի ընդունում  
ներա «ոչը» և մտադիր է առաջին իսկ հարմար առիթի  
դեպքում նորից նրա ձեռքը խնդրել: Միստր Ֆրենկլինը, իր  
զարմիկի ևտեից դուրս գալով, խուզարկուին հաղորդեց, որ  
իւր բոլոր իրերը պատրաստ են զննութեան և որ իրեն պատկա-  
նող ամենայն բան երբեք չի փակվում: Խուզարկու Կաֆր իր  
երախտագիտութիւնը հայտնեց: Նկատի ունեցեք, որ այս  
ժրագիրը չափազանց պատրաստակամութեամբ ընդունեցին  
ինչպէս միլեդիին, այնպէս էլ միստր Ֆրենկլինն ու միստր Գոդ-  
ֆրին: Մնում էր, նախքան ծառաներին կանչելն ու ներկոտած  
զգեստի որոնումները սկսելը, ստանալ միայն միսս Ռեչելի  
համաձայնութիւնը:

Խուզարկուի նկատմամբ միլեդիի անբացատրելի զզվանքը,  
կարծես, է՛լ ավելի ուժեղացավ նրանց հեռանալուց հետո:

— Եթե ես ձեզ ուղարկեմ միսս Վերինդերի բանալիները, —  
ասաց նա, — ապա, ենթադրում եմ, դուք առայժմ ուրիշ ոչինչ  
չեք պահանջի ինձնից:

— Ներողութիւն եմ ինդրում, միլեդի, — ասաց միստր  
Կաֆր: — Սկսելուց առաջ կուզենայի աչրի անցելացնել սպիտա-  
կեղենի գիրքը, որտեղ գրանցվում է հագնելու սպիտակեղենը:  
Կարող է պատահել, որ ներկոտած հագուստը սպիտակեղեն է:  
Եթե այդ որոնումները ոչնչի չհանգեցնեն՝ կխնդրեմ ինձ տեղե-  
կութիւններ տալ տանը գտնվող ամբողջ սպիտակեղենի և  
լվանալու հանձնված ամբողջ սպիտակեղենի մասին: Եթե որեւէ  
իւր սլակասի, ապա կարելի կլինի ենթադրել, որ հենց նրա վրա  
էլ մնացել է ներկը, և որ այդ իրը երեկ կամ այսօր միտում-  
նավոր կերպով պահել է այն անձնավորութիւնը, որին դա  
պատկանում է: Տեսուչ Սիգրերը, — ավելացրեց Կաֆր՝ շրջվե-  
լով իմ կողմը, — բժի վրա սպասուհիների ուղարկութիւնն է  
հրավիրել այն ժամանակ, երբ նրանք հինգշաբթի առավոտյան  
հավաքված են եղել սենյակում: Գուցե դա էլ, միստր Բետտե-  
րեջ, լինի տեսուչ Սիգրերի բազմաթիվ սխալներից մեկը:

Միլեդիին ինձ կարողորեց զանգահարել ու հրամայել, որ  
բերեն սպիտակեղենի գիրքը: Նա մեզ հետ մնաց այնքան

ժամանակ, մինչև որ բերեցին այն. նա մտածում էր, որ գիրքը  
զննելուց հետո խուզարկու Կաֆը կարող է նորից որևէ բան  
հարցնել:

Սպիտակեղենի գրանցման գիրքը բերեց Ռոզաննա Սպիր-  
մանը: Այդ աղջիկը նախաճաշի էր եկել խիստ գունատված ու  
անտրամադիր, բայց, ըստ երևույթին, բավականափ լավ էր  
զգում երևկվա վատառողջութունից հետո, որ արդեն կարող  
էր գործ անել: Խուզարկու Կաֆը ուշադիր զննեց մեր երկրորդ  
աղայինուն. նրա դեմքը, երբ նա ներս մտավ, և նրա անճոռնի  
ուսը, երբ նա դուրս եկավ:

— Ուրիշ որևէ բան ունե՞ք ինձ ասելու, — անհամբերու-  
թյամբ հարցրեց միլեդին, ցանկանալով հնարավորին չափ շուտ  
աղատվել խուզարկուի ներկայութունից:

Նշանավոր Կաֆը բացեց գիրքը, մի կես րոպեի շափ զննեց  
այն ու նորից փակեց:

— Համարձակվում եմ, միլեդի, միայն մի հարցով անհան-  
գըստացնել ձեզ, — ասաց նա: — Երիտասարդ կինը, որ այստեղ  
բերեց այս գիրքը, նույնքան վաղուց է ծառայում ձեզ մոտ,  
ինչպիս և մնացած ծառանե՞րը:

— Ինչո՞ւ եք հարցնում:

— Որովհետև, երբ նրան տեսել եմ վերջին անգամ, նա  
գողության համար գտնվում էր բանտում:

Դրանից հետո ոչինչ չէր մնում անել, քան նրան ասել  
ամբողջ ճշմարտությունը: Տիրուհիս ամեն կերպ գովեց Ռոզան-  
նայի լավ վարքագիծը իր տան մեջ և հիշատակեց, որ նրա  
մասին շատ լավ կարծիքի է եղել ուղղիչ տան վերակացուն:

— Հուսով եմ, որ նրա վրա չեք կասկածում, — վերջում  
շատ լրջորեն ավելացրեց միլեդին:

— Ես արդեն ձեզ ասել եմ, միլեդի, որ մինչև այժմ տանը  
ոչ մեկին գողության մեջ չեմ կասկածում:

Այդ պատասխանից հետո միլեդին վեր կացավ, որպեսզի  
վերև գնա միսս Ռեչելի բանալիները բերելու: Միտր Կաֆը  
կանխեց ինձ, շտապելով դուռը բացել նրա առջև և խոնարհ  
զուլս տալ: Միլեդին, նրա մոտով անցնելիս, դողաց:

Սպասեցինք, սպասեցինք, բայց բանալիները չէին երևում:  
Խուզարկու Կաֆն ինձ հետ չէր խոսում, նա իր մեղամաղձոտ  
դեմքը դարձրել էր դեպի լուսամուտը, նիհարավուն ձեռքերը



խոթել գրպանները և ինքն իրեն կամացուկ սուլում էր «Ամռան վերջին վարդը վառ»:

Վերջապես ներս մտավ Սամյուելը, բայց ոչ թե բանալիներով, այլ մի թղթակտորով, որ բերել էր ինձ համար: Ես դըժվարությամբ, մի կերպ դրեցի ակնոցս, զգալով, որ խուզարկուի ախուր աչքերը սևեռուն նայում են ինձ:

Թղթակտորի վրա միլեդիի ձեռքով մատիտով գրված էր հրեք տող: Նա ինձ հաղորդում էր, որ միսս Ռեչլեր կտրականապես հրաժարվեց իր հանդերձարանը ցույց տալուց:

Ես հասկացա, թե ինչու միլեդին իր աղջկա այդպիսի պատասխանից հետո շուգեց հանդիպել խուզարկու Կաֆի հետ: Եթե ես շատ ծեր չլինեի ու կարողանայի պատանու պես ամաչել, ապա, ինձ թվում է, կկարմրեի այն մաքից, որ պետք է նրա հետ բացատրվեմ:

— Միսս Վերինդերի բանալիների մասի՞ն է,— հարցրեց խուզարկուն:

— Օրիորդը չի համաձայնվում իր հանդերձարանը խուզարկելուն:

— Հա՛:

Նրա ձայնը ենթարկված չէր այնպիսի կատարյալ կարգապահության, ինչպես որ դեմքը: Երբ նա ասաց «Հա՛», ապա դա ասվեց այնպիսի մարդու ձայնով, որը լսել էր ա՛յն, ինչ որ սպասում էր լսել:

Դա և՛ բարկացրեց, և՛ վա՛հեցրեց ինձ. թե ինչո՞ւ՝ չեմ կարող ասել, բայց դա այդպես էր:

— Հարկ կլինի խուզարկությունից հրաժարվե՞լ,— հարցրի ես:

— Այո,— պատասխանեց Կաֆը,— հարկ կլինի խուզարկությունից հրաժարվել, որովհետև ձեր օրիորդը չի համաձայնում դրան ենթարկվել այնպես, ինչպիսի որ ուրիշներն են ենթարկվում: Մենք կամ պետք է ստուգենք տանը եղած ամբողջ հագուստը, կամ էլ ոչինչ չստուգենք: Առաջին իսկ գնացքով կոնդոն ուղարկեք միստր էբլուայթի ճամպրուկը, իսկ սպիտակեղենի դիրքը, իմ սղջույններով ու շնորհակալությամբ, վերադարձրեք այն բերսդ երիտասարդ կնոջը:

Նա գիրքը դրեց սեղանին և, գրպանի դանակը հանելով, սկսեց եղունգները մաքրել:

— Դուք ձեր սպասումների մեջ, կարծեմ, շատ շխաբվեցիք,— ասացի ես:

— Այո,— պատասխանեց խուզարկու Կաֆը,— շատ շխաբվեցի:

Ես աշխատեցի ստիպել, որ նա բացատրի:

— Միսս Ռեչեյի ինչի՞ն է պետք ձեզ խոչընդոտ հարուցելը,— հարցրի ես:— Կարծեմ, նրա շահերը պահանջում են, որ նա ձեզ օգնի:

— Մի քիչ սպասեցեք, միստր Բետտերեջ, մի քիչ սպասեցեք:

Ինձնից ավելի խելոքները կարող էին հասկանալ նրա ասածի իմաստը, Կամ էլ Ռեչեյի հետ ինձնից ավելի քիչ կապված մարդը կարող էր տեսնել, թե ինչ է ակնարկում նա: Նրա նկատմամբ միլիգրիի զզվանքը կարող էր նշանակել (ինչպես հետագայում արդեն հասկացա), որ նա տեսնում էր, թե ինչ էր ուզում ասել խուզարկուն:

— Ի՞նչ պիտի անենք հիմա,— հարցրի ես:

Խուզարկու Կաֆը վերջացրեց եղունգների մաքրելը, մեկամազձոտ հետաքրքրությամբ մի պահ նայեց դրանց և պահեց իր զրպանի դանակը:

— Գնանք այգի,— ասաց նա,— վարդերին նայելու:

## Գ Լ Ո Ւ Խ XIV

Միլիգրիի աշխատասենյակից այգի տանող ամհնակարճ ճանապարհն անցնում էր ձեզ հայտնի թփուտի միջով: Որպեսզի հետագա դեպքերն ավելի լավ հասկանաք, ես պետք է ավելացնեմ, որ թփուտի անցուղին միստր Ֆրենկլինի սիրած զբոսատեղին էր: Երբ նա անհետանում էր տնից և ոչ մի տեղ հնարավոր չէր տեսնել, նրան սովորաբար գտնում էինք այդտեղ:

Պետք է խոստովանել, ընթերցող, ես բավականաչափ համառ ծերուկ եմ: Որքան խուզարկու Կաֆը համառորեն ինձնից թաքցնում էր իր մտքերը, ես այնքան համառորեն աշխատում էի թափանցել դրանց մեջ: Երբ թեքվեցինք դեպի թփուտը, փորձեցի նրան խաբել ուրիշ ձևով:

— Այժմյան իրավիճակում, — ասացի նս, — եթե ձեր փոխարենն ես լինեի՝ փակուղու մեջ կընկնեի:

— Այժմյան իրավիճակում, — պատասխանեց Կաֆր, — եթե դուք իմ փոխարենն լինեիք, կհանգեիք այնպիսի եզրակացութեան, որը կվերացնէր ամեն մի կասկած: Ասայժմ այդ եզրակացութեանը թողնենք մի կողմ, միտար Բետտերիչը: Ես ձեզ այստեղ բերեցի ո՛չ նրա համար, որպէսզի ինձ հալածեք որպէս փորսուղի. ես ձեզ այստեղ բերեցի, որպէսզի որոշ տեղեկութեաններ ստանամ ձեզնից: Իհարկե, դուք դրանք կարող էիք ինձ հաղորդել նաև տանը: Բայց թե դուներն ու ունկնդիրները փոխադարձաբար քաշում են իրար, և իմ մասնագիտութեան մարդիկ առողջութեան համար օգտակար հակում ունեն թարմ օդի նկատմամբ:

Անիմաստ էր այդ մարդուն խարելը: Ես զիջեցի և սկսեցի, ինչքան որ կարող էի, համբերութեամբ սպասել, թե ինչ կլինի հետո:

— Չթափանցենք ձեր օրիորդի վարմունքի պատճառների մեջ, — շարունակեց խուզարկուն, — միայն ավստասանք, որ նա հրաժարվում է ինձ օղնել, որովհետև, այդպէս վարվելով, նա հետաքննութեանը դարձնում է ավելի դժվարին, քան այն կարող էր լինել: Հիմա մենք պետք է աշխատենք առանց նրա լուծել բժիշկադոսիքը, որը, հավատացե՛ք խոսքիս, նաև արմատի դաղտնիքն է: Միտար Բետտերիչը, ես որոշել եմ ծառաների սնդուկները խուզարկելու փոխարեն տեսնել նրանց և հետազոտել նրանց մտքերն ու արարքները: Սակայն, նախքան դրան ձեռնամուխ լինելը, կուզեի երկու հարց տալ ձեզ: Դուք դիտողունակ մարդ եք. ասացե՛ք, այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ արմատաւր կորել է, դուք որե՛կ տարօրինակութեան շե՛ք նկատել ծառաներից որե՛կ մեկի մեջ, բացի, հասկանալի է, շատ բնական վախից ու հուզմունքից: Որե՛կ առանձնահատուկ գծուցութեան չի՞ եղել նրանց միջև: Օրինակ, որե՛կ մեկը բողբոջի անսպասելիորեն չի՞ բարկացել: Կամ հանկարծ չի՞ հիվանդացել:

Սա հիշեցի երեկ ճաշի ժամանակ Ռոզաննա Մաիրմանի հանկարծակի հիվանդանալը, բայց չէի հասցրել պատասխանել, երբ խուզարկուն հայացքը հռոնց թփուտին և ինքն իրեն փնթփնթաց:

— Ըհը՛:

— Ի՞նչ եղավ,— հարցրի ես:

— Նորից մեջքիս ուսմատիզմը բռնեց,— բարձրաձայն պատասխանեց խուզարկուն, ասես կամենալով, որ մեզ լսի մի երրորդ անձնավորութուն:— Երևի եղանակը փոխվելու է:

Ովս մի քանի քայլ՝ և մենք հայտնվեցինք տան մոտ: Շեշտակի շրջվելով դեպի աջ՝ գուրս եկանք սանդղավանդ և աատիճաններով իջանք ներքևի այգին: Խուզարկու Կաֆը կանգ առավ րոյց տեղում, որտեղից ամեն ինչ լավ երևում էր մեծ հեռավորութունից:

— Անհավատալի է, որ այդ երիտասարդ աղջիկը, Ռոզաննա Սպիրմանը, իր արտաքինով, երկրպագու ունենա,— ասաց նա,— բայց այդ աղջկա շահերից ելնելով ես պետք է հիմա ձեզնից հարցնեմ՝ զուցե, խեղճը, մնացածների օրինակին հետևելով, երկրպագո՞ւ է գտել:

Ի՞նչ էր նշանակում նրա այդ հարցը տվյալ պարագայում: Պատասխանելու փոխարեն աչքերս շոնեցի նրա վրա:

— Բանն այն է, որ, երբ մենք անցնում էինք թփուտների մոտով, նրանց մեջ թաքնվեց Ռոզաննա Սպիրմանը,— ասաց խուզարկուն:

— Այն ժամանակ, երբ գուք ասացիք «ըհը՞»:

— Այո, երբ ասացի «ըհը»: Եթե նա երկրպագու ունի, ապա այդպիսի վարմունքը ոչինչ էլ չի նշանակում: Իսկ եթե ոչ, ապա, տանը տիրող այժմյան իրավիճակում, դա շափազանց կասկածելի է, և, որքան էլ ափսոսում եմ, ես հարկազրված կլինեմ գործել համապատասխան ձևով:

Ի՞նչ կարող էի ասել նրան: Գիտեի, որ միտքը Ֆրենկլինը սիրում է գրոսնել թփուտներում. գիտեի, որ նա ամենայն հավանականությամբ, կայարանից վերադառնալիս կանցնի այս ճանապարհով. գիտեի, որ Պենելոպեն քանիցս այստեղ տեսել է մեր երկրորդ աղախնին և միշտ ինձ հավատացրել է, որ Ռոզաննան ուղում է գրավել միտքը Ֆրենկլինի ուշադրութունը: Եթե զուտրս իրավացի է՝ Ռոզաննան կարող էր միտքը Ֆրենկլինի վերադարձին այստեղ սպասած լինել հենց այն ժամանակ, երբ խուզարկուն նրան նկատել էր: Ես կանգնած էի զժվարին ընտրության առջև. կամ հիշատակել Պենելոպեի

երևակայությունները որպես իմ սեփականը, կամ թողնել, որ խեղճ աղջիկը տառապեր հետևանքներից, շատ լուրջ հետևանքներին, հարուցելով խուզարկուի կասկածները: Զուտ աղջկան կատմամբ կարեկցանքից (երզվում եմ պատվովս, հոգովս, դուտ աղջկան կատմամբ կարեկցանքից) ես անհրաժեշտ բացատրություններ տվի խուզարկուին և ասացի, որ Ռոզանան միտար Ֆրենկլինն Բլեկին սիրահարվելու խենթություն է ունեցել:

Տեսուչ Կաֆր երեք շէր ծիծաղում: Միայն սակավաթիվ գեպքերում, երբ որևէ բան զվարճալի էր թվում, նրա շուրթերի անկյունները թեթևակի ծոմավում էին, և վերջը Դբանք Թեթևակի ծոմավեցին նաև հիմա:

— Ավելի լավ չէ՞ր լինի, եթե ասեիք, որ նա անճոռնի և սպասուհի ծնվելու խենթություն է ունեցել, — հարցրեց նա:— Միտար Ֆրենկլինի արտաքինով և վարմունքով չենտվճեն սիրահարվելը, ինձ թվում է, այնքան էլ մեծ խենթություն չէ, որ արև է աղջիկը: Սակայն ևս ուրախ եմ, որ բանը պարզվեց: Միրտո գիտեսակ թեթևանում է, երբ գոնե որևէ առեղծված լուծվում է: Այո, ես սա գազտնի կպահեմ, միտար Բետտերեջ: Ես սիրում եմ խնայել մարդկային թուլությունները, թեև իմ մասնագիտության մեջ այնքան էլ հաճախակի չէ այդպիսի առիթներ կայանում: Կարծում եք միտար Ֆրենկլինն Բլեկը չի՞ կասկածում, որ այդ աղջիկը հակում ունի իր նկատմամբ: Հավատացեք, նա շատ շուտ կիմանար այդ հակումի մասին, եթե աղջիկը լավիկը լիներ: Տղեզ աղջիկների համար կյանքը դժվար է այս աշխարհում. հուսանք, որ նրանք հատուցում կըստանան այն... Բայց դուք հրաշալի այգի ունեք, և ինչ լավ է խնամված փոքրիկ մարգագետինը: Տեսեք, թե որքան ավելի գեղեցիկ են թվում ծաղիկները, երբ նրանց շրջապատում է կանաչը և ոչ թե ավազը... Ոչ, շնորհակալ եմ, ես վարդ չեմ սյուկի: Միրտո ցավում է, երբ դրանք պոկում են ցողուննելից, ցավում է ճիշտ այնպես, ինչպես ձեր սիրտն է ցավում, երբ ինչ-որ բան կարդին չէ ծառաների շրջանում... Երբ հայանի դարձավ, որ արմատը կորել է, դուք որևէ անսովոր բան չընկատեցի՞ք ծառաների մեջ:

Մինչև հիմա ես ինձ շատ ազատ էի պահում խուզարկու Կաֆի հետ: Բայց շոգոմությունը, որով նա երկրորդ անգամ նույն հարցով դիմեց ինձ, ստիպեց զգուշանալ: Ընդուն ասած,

ինձ ամենևին էլ չէր ուրախացնում նրա հետաքննություններին օգնելու միտքը, եթե այդ հետաքննությունները նրան, որպէս խոտերի մէջ սողացող օձի, տանում էին դեպի իմ ընկեր ծառաները:

— Ոչինչ չեմ նկատել, — ասացի, — բացի այն, որ բոլորս էլ շփոթվեցինք, ներառյալ նաև ես:

— Օ՛, — ասաց խուզարկուն: — Եվ դուք այլևս ինձ ասելու ոչինչ չունե՞ք:

Պատասխանեցի անվրդով տեսքով (ինքս ինձ շոյում եմ այդ մտքով).

— Ոչինչ:

Խուզարկու Կաֆի տխուր աչքերը սևևոուն հաւվեցին երեսիս:

— Միտար Բետտերեջ, — ասաց նա, — թույլ տվեք սեղմել ձեր ձեռքը: Դուք չափից դուրս շատ եք դուր գալիս ինձ:

Թե ինչու նա իր համակրանքը ինձ հայտնելու համար ընտրեց հենց այս բոսիկն, երբ խարեցի նրան, չեմ կարող հասկանալ: Բայց, հասկանալի է, ես փոքր-ինչ գոռոզացա, լրջորեն գոռոզացա, ոչ վերջապէս խարեցի նշանավոր Կաֆին:

Մենք սուն վերադարձանք: Կաֆը խնդրեց հարցաքննության համար առանձին սենյակ հատկացնել իրեն, իսկ հետո տանը ասրոզ ծառաներին այնտեղ ուղարկել իրար ետևից, նրանց կոչմանը համապատասխան կարգով, առաջինից մինչև վերջինը:

Ես խուզարկու Կաֆին բերեցի իմ սեփական սենյակը, իսկ հետո բոլոր ծառաներին հավաքեցի նախասրահում: Ռոզաննա Սպիրմանը եկավ մյուսների հետ մեկտեղ, այնպիսին, ինչպիսին որ միշտ էր: Նա իր տեսակի մեջ ոչ պակաս փորձառու էր, քան խուզարկուն իր տեսակի, և, կարծում եմ, թփուտներին մեջ լսել էր, թե ինչպես էր Կաֆն ինձ հարցուփորձում ընդհանրապէս ծառաների մասին, նախքան իրեն՝ Ռոզաննային, տեսնելը: Բայց սրա դեմքից կռահել անգամ հնարավոր չէր, որ ինքը հիշում է այնպիսի մի տեղի գոյությունը, ինչպիսին մեր թփուտն է:

Ես սպասուհիներին իրար ետևից ուղարկում էի խուզարկուի մոտ, ինչպես որ կարգադրված էր ինձ: Խոհարարուհին առաջինը մտավ դատաստանատուն, այլ խոսքով՝ իմ սենյակը:

նա քիչ մնաց այնտեղ: Երբ դուրս եկավ՝ այսպիսին էր եզրակացութիւնը:

— Խուզարկու Կաֆը տխուր մարդ է, սակայն խուզարկու Կաֆը իսկական ջենտլմեն է:

Նրանից հետո գնաց Միլեդիի սպասուհին: Սա շատ ավելի երկար մնաց: Երբ դուրս եկավ՝ այսպիսին էր նրա եզրակացութիւնը:

— Եթե խուզարկու Կաֆը չի հավատում օրինավոր կնոջ խոսքերին, ապա գոնե կարող է շարտահայտել իր կարծիքը:

Հետո գնաց Պենելոպեն: Մնաց մեկ-երկու բոպե, ոչ ավելի: Նրա զեկույցը.

— Հայրիկ, խուզարկու Կաֆը շատ մեղք է. նա, թերևս, երիասարդ հասակում դժբախտ է եղել սիրո մեջ:

Պենելոպեից հետո գնաց ավագ սպասուհին: Միլեդիի սպասուհու նման նա էլ բավականաչափ երկար մնաց: Եզրակացութիւնը.

— Ես միլեդիի մոտ աշխատանքի եմ անցել ո՛չ նրա համար, որպեսզի ինչ-որ ոստիկան երես առ երես կասկածի ինձ վրա:

Հետո գնաց Ռոզաննա Սպիրմանը: Մնաց բոլորից շատ: Ոչ մի եզրակացութիւն. մեռելային լուծիւն և մահու շտի գունատ շուրթեր: Սպասավոր Սամյուելը գնաց Ռոզաննայից հետո: Մնաց մեկ-երկու բոպե: Զեկույցը.

— Նա, ով միտար Կաֆի կոշիկներն է մաքրում, պետք է որ սմաչի:

Աման լվացող նանսին գնաց վերջինը. մնաց մեկ-երկու բոպե: Զեկույցը.

— Խուզարկուն սիրտ ունի, նա, միտար Բետտերեշ, աշխատող խեղճ աղջկան չի ծաղրում:

Ամեն ինչ ավարտվելուց հետո գնացի դատաստանատուն, որպեսզի իմանամ, արդյո՞ք որևէ նոր կարգադրութիւն չի արվի ինձ. տեսա, որ խուզարկուն նայում է լուսամուտից դուրս և «Ամռան վերջին վարդը վառ» երգն է սուլում:

— Որևէ բան իմացա՞ք, սըր,— հարցրի ես:

— Եթե Ռոզաննա Սպիրմանը խնդրի դուրս գալ տնից,— ասաց խուզարկուն,— թույլ տվեք խեղճ աղջկան, բայց նախապես ինձ իմաց տվեք:

Շատ լավ կլիներ, եթե ես ոչինչ ասած չլինեի Ռոզաննայի և միստր Ֆրենկլինի մասին: Պարզ էր, որ խեղճ աղջիկը կասկած էր հարուցել խուզարկու Կաֆի մեջ, շնայած ես ամեն կերպ ջանացել էի թույլ շտալ այդ բանը:

— Հուսով եմ, դուք շեք գտնում, որ Ռոզաննան մասնակից է ալմաստի կորչելուն,— համարձակվեցի ասել ես:

Կաֆի մեկամաղձոտ շուրթերի անկյունները ծոմովեցին, և նա սևեռուն նայեց երեսիս:

— Կարծում եմ, ավելի լավ կլինի ձեզ ոչինչ չասել, միստր Բևտտերեջ,— ասաց նա,— հակառակ դեպքում, ձեր տրամադրությունը, թերևս, կարող է ընկնել:

Սկսեցի կասկածել. արդյո՞ք այն ժամանակ այգում ինձ հաջողվել էր խարել նշանավոր Կաֆին: Ի թիվևություն ինձ, մեզ ընդհատեց դուան թաղոցը, և լուր ստացվեց խոհարարուհուց. Ռոզաննա Սալիմանը դուրս գալու թույլտվություն է խնդրում, ամեն անդամվա պես նույն պատճառով՝ գլուխը ցավում է, ուզում է թարմ օդ շնչել:

Խուզարկուի արած նշանով՝ ես ասացի.

— Ռոզեթ թող գնա:

— Որտե՞ղ է ծառաների համար նախատեսված ելքի դուռը,— անմիջապես հարցրեց նա, երբ մենակ մնացինք:

Ես ցույց տվի:

— Փակեք ձեր սենյակի դուռը,— ասաց խուզարկուն,— և եթե որեէ մեկն ինձ հարցնի, ասացեք, որ այստեղ նստած մտածում եմ:

Նա դարձյալ ծոմոց իր շուրթերի անկյունները և անհետացավ:

Մենակ մնալով՝ շատ ուժեղ հետաքրքրություն զգացի, և դա ինձ գրդեց, որ անձամբ ինքս զբաղվեմ որոնումներով:

Պարզ էր, որ խուզարկու Կաֆի մեջ կասկածներ էին հարուցել հարցաքննության ժամանակ ծառաների տված պատասխանները: Իսկ երկու սպասուհիներ (բացի Ռոզաննայից), որ մյուսներից ավելի երկար էին մնացել հարցաքննությանը, միլիդիի աղախինը և տան աղախինը, դժբախտ աղջկա ամենակատաղի հալածողներից էին: Այս եղրակացությունը հանգելով, ես, իրր պատահականորեն, մտա ծառաների սենյակը, տեսա, որ այնտեղ զբաղված են թեյ խմելով, և անմի-



ջապէս ինքս էլ նստեցի: (Ի դեպ, բամբաստող կնոջը թէյ խմեցնելը նույնն է, ինչ որ հանդշող լամպի մեջ նավթ լցնելը):

Թեյի սեղանի շուրջը դաշնակից գտնելու իմ հույսը ի դերն շեղավ: Կես ժամ էլ չէր անցել, և ես գիտեի այնքան, որքան խուզարկուն ինքր:

Ո՛չ միլեդիի աղախինը, ո՛չ էլ տան առաջին աղախինը չէին հավատացել Ռոզաննայի երեկվա հիվանդութիւնը: Այդ երկու սատանաները (ներողութիւն եմ խնդրում, բայց ուրիշ ինչպե՞ս անվանեմ այդ շար կանանց) հինգշաբթի օրը կեսօրից հետո մի քանի անգամ թաքուն բարձրացել էին վերև, փորձելով բացել Ռոզաննայի դուռը, և, ամեն անգամ դուռը փակ դտնելով, թակել ու պատասխան չէին ստացել, ականջ էին դրել ու ներսից ոչ մի ձայն չէին լսել:

Նոր աղջիկն իջավ թէյ խմելու և նորից վատառողջութեան պատճառով ուղարկվեց անկողնում պառկելու, փերոհիշչայւ երկու սատանաները նորից փորձեցին բացել նրա դուռը և այն փակ գտան, ուղեցին նայել բանալու անցքով՝ տեսան խցված էր, դռան տակին լույս նկատեցին կեօզիշերին, և կրակի ճարճատյուն լսեցին առաւելության ժամը շորսին: Այս բոլորը նրանք պատմեցին Կաֆին, որը փոխանակ շնորհակալ լինեք, որ աղջիկներն ուղում են օգնել իրեն, նրանց նայեց խոժոռ ու կասկածելի հայացքով, բացեիրաց ցուլց տալով, որ չի հավատում ոչ մեկին, ոչ էլ մյուսին: Այստեղից էլ այս երկու կանանց անբարենպաստ կարծիքը խուզարկուի մասին: Այստեղից էլ (ինչպես նաև թեյախմութիւն աղղեցութեամբ) այն ազատութիւնը, որ նրանք պատրաստ են տալ իրենց լեզվին՝ կապված իրենց նկատմամբ խուզարկուի ոչ ջինտլմենական վերաբերմունքի հետ:

Քանի որ ես արդեն նկատել էի նշանավոր Կաֆի խորամանկումները և գիտեի, որ նա մտադիր է թաքուն հետեւել Ռոզաննային, երբ սա դուրս կգա դբոսնելու, ինձ համար պարզ դարձավ, որ նա միտումնավոր կերպով երկու աղախիններին ցուլց շտվեց, թէ որքան լրջորեն էին օգնել նրանք իրեն: Բավական է այդպիսի կանանց ցուլց տաու, որ վստահութեան արժանի ես համարում իրենց ցուցմունքները, և նրանք այնքան կպարծենան դրանով, այնքան բաներ կասեն,

որ անմիջապես Ռոզաննա Սպիրմանին կստիպեն զգուշ լինել:

Սա տնից դուրս եկա: Սամազա Երեկոն զարմանալիորեն լալն էր: Սա սաստիկ խղճում էի դժբախտ աղջկան և ընդհանրապես շատ անհանգստացած էի գործի այժմյան ընթացքի համար: Դեպի թիուտը գնալիս հանդիպեցի Ֆրենկլինին՝ իր սիրած ծառուղում: Նա վաղուց վերադարձել էր կայարանից և հասցրել էր խորհրդակցել միլեդիի հետ: Տիկինը նրան պատմել էր, թե միսս Ռեչելն անհասկանալիորեն հրաժարվել է թույլ տալ, որ իր հանդերձարանը ստուգեն և դրանով այնպիսի վհատության է մատնել իրեն՝ Ֆրենկլինին, որ ինքը, թվում էր, թե այլևս չէր համարձակվում օրիորդից խոսել: Ընտանեկան բնավորութունը նրա մեջ այդ երեկո առաջին անգամ դրսևորվեց իր ամբողջ ուժով:

— Դե, Բեատերեչ,— ասաց նա,— ինչպե՞ս է ձեզ դուր գալիս գաղանիքի և կասկածանքի այս մթնոլորտը, որի մեջ այժմ բոլորս դռնվում ենք: Հիշո՞ւմ եք այն տոավոտը, ևրբես ժամանեցի, բերելով Լուսնաբարը: Աստված իմ, որքա՞ծ եմ ախտսում, որ այդ քարը ավաղների մեջ շարտեցինք:

Այս բռնկումից հետո նա շուղեց խոսակցությունը շարունակել՝ մինչև որ հանգստացավ: Մենք մի երկու րոպե լուռ գնում էինք կողք-կողքի, իսկ հետո նա ինձ հարցրեց, թե ինչ եղավ խուզարկու Կաֆը: Միստր Ֆրենկլինին հնարավոր չէր խարել պատասխանելով, թե, իբր, խուզարկուն նստած է իմ սենյակում ու մտածում է: Սա նրան պատմեցի ամեն ինչ, ինչպես որ եղել էր, հատկապես հիշատակելով այն, ինչ միլեդիի աղախինը և տան աղախինը հաղորդել էին Ռոզաննա Սպիրմանի մասին:

Միստր Ֆրենկլինի պայծառ միտքը նույն ակնթարթուս տեսավ, թե ինչի էին վերածվել խուզարկուի կասկածները:

— Դուր, կարծեմ, այսօր առավոտյան ինձ ասացիք,— խոսեց նա,— թե խանութպաններից մեկը հավատացնում էր իբր տեսել է ինչպես երեկ Ռոզաննան օտքով Ֆրիդլինհուլ և գնացել, երբ մենք Ընթացրում էինք, թե նա հիվանդ պատկաս է իր սենյակում:

— Այո, սրբ:

— Նթե մորաքրոջս աղախինը և մյուս կինը ճիշտ և:

ասում, ուրեմն խանութպանը իրոք հանդիպել է նրան: Հիվանդութունը մեզ խաբելու պատրվակ է եղել: Նա գաղտնի կերպով քաղաքում լինելու ինչ-որ մի հանցավոր պատճառ է ունեցել: Ներկոտված զգեստը, ըստ երևույթին, նրանն է, իսկ ժամը շորսին նրա սենյակում կրակ է արվել այդ զգեստը այրելու համար: Այժմաստը գողացել է Ռոզաննա Սպիրմանը: Ես հենց հիմա կգնամ ու կասեմ մորաքրոջս, թե ինչպիսի ընթացք է ստացել գործը:

— Ոչ, դեռ սպասեք, սըր,— լսվեց մի մեկամաղձոտ ձայն մեր թիկունքում:

Մենք արագորեն շրջվեցինք, և մեր դեմ-դիմաց հայտնվեց խուզարկու Կաֆը:

— Իսկ ինչո՞ւ,— հարցրեց միսոր Ֆրենկլինը:

— Որովհետև, սըր, եթե դուք ասեք միլեդիին, ապա միլեդին այդ մասին կհաղորդի միսս Վերինդերին:

— Ենթադրենք, թե կհաղորդի: Հետո ի՞նչ:

Միսոր Ֆրենկլինն այս արտասանեց անսպասելի կրքոտությամբ ու ջղազրգուծյամբ, ասես խուզարկուն սաստիկ վիրավորած լիներ նրան:

— Իսկ դուք ինչ եք կարծում, սըր,— հանգիստ ասաց խուզարկու Կաֆը,— արդյո՞ք այդ հարցն ինձ տալը խոհեմություն է, և այն էլ այս պահին:

Մի պահ լռություն տիրեց: Միսոր Ֆրենկլինը մոտեցավ խուզարկուին: Երկուսն էլ սևեռուն նայեցին իրար: Միսոր Ֆրենկլինը խոսեց առաջինը՝ ձայնը իջեցնելով նույնքան անակնկալ կերպով, ինչպես որ բարձրացրել էր:

— Կարծում եմ, միսոր Կաֆ, ձեզ հայտնի է,— ասաց նա,— որ դուք մի շատ փափկանկատ հարց եք շոշափում:

— Առաջին անգամ չէ, թերևս հազարերորդ անգամ է, որ ես փափկանկատ հարցեր եմ շոշափում,— պատասխանեց սա իր սովորական անտարբերությամբ:

— Ուզում եք ասել, որ ինձ արգելո՞ւմ եք կատարվածի մասին մորաքրոջս ասել:

— Ուզում եմ ասել, սըր, ես այս գործը կթողնեմ, եթե դուք, նախքան իմ թույլ տալը, կատարվածի մասին հաղորդեք լեդի Վերինդերին կամ որևէ մեկ ուրիշի:

Նրա ասածը լճոեց հարցը: Միստր Ֆրենկլինին ոչինչ չէր մնում անել, քան հնազանդվել. նա զայրույթով շրջվեց ու հեռացավ:

Ես սրտի դողով էի լսում նրանց, շիմանալով, թե ում վրա կասկածեմ և ինչ մտածեմ հիմա: Բայց, շնայած իմ շփոթությանը, երկու բան պարզ էր ինձ. առաջինը, որ օրիորդն էր, չգիտես ինչու, պատճառ դարձել այն կծու խոսքերին, որ նրանք ասել էին իրար: Երկրորդ, որ նրանք լրիվ հասկացել էին իրար՝ նախապես ոչ մի կարծիք չփոխանակելով:

— Միստր Բետտերեջ,— ասաց խուզարկուն,— դուք շատ մեծ հիմարություն եք արել իմ բացակայությունը: Դուք ինքներդ եք հարցաքննություն կատարել: Այսուհետև, թերևս, դուք այնքան բարեհաճ կլինեք, որ կսկսեք հարցաքննություն կատարել ինձ հետ մեկտեղ:

Նա ինձ թեանցուկ արեց և տարալ՝ այն ճանապարհով, որով այստեղ էր եկել: Պետք է խոստովանեմ, որ թեև ես արժանի էի նրա կշտամբանքին, այնուամենայնիվ մտադիր չէի օգնել նրան Ռոզաննա Սպիրմանի համար ծուղակներ սարքելու գործում: Ռոզաննան գող էր, թե ոչ, դա օրինական էր, թե ոչ՝ ինձ համար միևնույն էր. ես խղճում էի նրան:

— Ի՞նչ եք ուզում ինձնից,— հարցրի ես, ձեռքս դուրս բաշելով ու կանգ առնելով:

— Միայն փոքրիկ տեղեկություններ այս շրջակայքի մասին,— պատասխանեց խուզարկուն:

Ես չէի կարող հրաժարվել խուզարկու Կաֆի աշխարհագրական պաշարը լրացնելուց:

— Մովափից դեպի տուն տանող որևէ ճանապարհ կա՞ այս կողմում,— հարցրեց Կաֆը:

Այս ասելով, նա մատնացուցց արեց Լոլենիները, որոնց հետևում ընկած էին Երեբուն ավազները:

— Այո,— պատասխանեցի ես,— այստեղ ճանապարհ կա:

— Յուրջ տվեք ինձ:

Ամռան երեկոյի մթնշաղում Երկուսով՝ խուզարկուն և ես, կողք-կողքի քայլեցինք դեպի Երեբուն ավազները:

Կաֆը, մտածմունքների մեջ թաղված, ձայն չհանեց, մինչև որ մտանք եղենինների անտառակը: Այստեղ նա սթափվեց, ինչպես այդ կաներ վճիռ ընդունած մարդը, և նորից սկսեց խոսել:

— Միստր Բետտերեշ, — ասաց նա, — քանի որ դուք ինձ պատիվ արեցիք և ինձ հետ մեկտեղ, ինչպես ասում են, լծվեցիք նույն սաչլին ու քանի որ ես մտածում եմ, թե դուք կարող եք ինձ օգտակար լինել դեռ մինչև այս երեկոյի վերջանալը, իրարից դադանիք պահելու ոչ մի անհրամեշտություն չեմ աեսնում և մտադիր եմ իմ կողմից անկեղծության օրինակ տալ ձեզ: Գուք որոշել եք ինձ չհաղորդել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող էին վնասել Ռոզաննա Սպիրմանին, քանի որ նա ձեզ մոտ իրեն լավ է պահել և քանի որ դուք անկեղծորեն խզճում եք նրան: Այս մարդասիրական մղումները մեծ պատիվ են բերում ձեզ, բայց տվյալ դեպքում դրանք բոլորովին անօգուտ են: Ռոզաննա Սպիրմանին չնչին խակ վտանգ չի սպառնում, նույնիսկ եթե ես նրան մեղադրեմ որպես ավաստի կորստյան մասնակցի, այն հանցանշանների հիման վրա, որոնք նույնքան ակնհայտ են ինձ համար, ինչքան որ ձեր քիթը:

— Ուզում եք ասել, թե միլիդին նրան չի՞ հետապնդի դատական կարգով:

— Ուզում եմ ասել, որ միլիդին չի կարողանա հետապնդել նրան, — պատասխանեց խուզարկուն: — Ռոզաննա Սպիրմանը սոսկ գործիք է մեկ ուրիշի ձեռքին, և հանուն այդ մեկ ուրիշի Ռոզաննա Սպիրմանը կներվի:

Նա լուրջ էր ասում, դա անտարակուսելի էր: Սակայն նրա նկատմամբ ինչ-որ մի կասկած խլրտաց իմ հոգում:

— Չե՞ք կարող ասել այդ մեկ ուրիշի անունը, — հարցրի ես:

— Իսկ դուք չե՞ք կարող, միստր Բետտերեշ:

— Ոչ:

Հանկարծ խուզարկու Կաֆը կանգ առավ և մելամաղձոտ կարեկցանքով նայեց ինձ:

— Ինձ համար միշտ հաճելի է խնայել մարդկային թու-

լությունները, — ասաց նա: — Իսկ այս պահին, միտոր Բեռտերեշ, ձե՛զ խնայելու շատ մեծ ցանկություն եմ զգում: Դուք էլ այդ նույն հիանալի պատճառով Ռոզաննա Սպիրմանին խնայելու շատ մեծ ցանկություն եք զգում, ճիշտ չէ՞: Ասացե՛ք, վերջերս նա նոր սպիտակեղեն չի՞ կարել իր համար:

Բե ինչու նա այդպես անսպասելիորեն մեջ բերեց այդ տարօրինակ հարցը, ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ: Բայց, շտեմնելով, թե ճշմարտությունն ինչով կարող էր վնասել Ռոզաննային, պատասխանեցի, որ աղջիկը մեզ մոտ ծառայության էր ընդունվել սպիտակեղենի շատ աղքատիկ պաշարով, և որ միլեդին, ի վարձատրություն նրա լավ վարքազծի (ես շեշտեցի վերջին բառերը) մի երկու շաբաթ առաջ նոր սպիտակեղեն նվիրեց նրան:

— Որքա՛ն ողորմելի է այս աշխարհը, — ասաց խուզարկուն: — Մարդկային կյանքը թիրախի սեւ մի բան է, որի վրա անվերջ կրակում է դժբախտությունը և միշտ գիպչում է նպատակակետին: Եթե շիներ այդ նոր սպիտակեղենը, ապա մենք հեշտությամբ Ռոզաննայի իրերի մեջ կգտնեինք մի նոր կոֆտա կամ շրջազգեստ և այդպիսով նրան կբռնեինք հանցանքի մեջ: Դուք հետևում եք իմ մտքերին, այնպես չէ՞: Ինքներդ եք հարցաքննել սպասուհիներին և գիտեք, թե նրանցից երկուսը ինչ հայտնագործություններ են արել Ռոզաննայի դռան մոտ: Երևի գիտեք, թե երեկ ինչով է զբաղվել աղջիկը այն բանից հետո, երբ վատ է զգացել իրեն: Չե՞ք կարող կռահել: Օ՛, աստված իմ: Դա նույնքան պարզ է, որքան այ, այնտեղ, ծառերի ետևում երևացող լույսի շերտը: Հինգշաբթի առավոտյան ժամը տասնմեկին տեսուչ Սիգրեր՝ մարդկային թուլությունների այդ կույտը, բոլոր կանանց մատնացույց է անում դռան վրայի բիծը: Ռոզաննան հիմք ունի ևնթազրելու, որ հետքը թողել է իր սեփական հագուստը. նա առաջին իսկ հարմար առիթից օգտվում է, որպեսզի զնա իր սենյակը, բլծ է գտնում իր կոֆտայի կամ շրջազգեստի վրա, կամ էլ միևնույն է, թե ինչի վրա, հիվանդ է ձևանում, դնում է քաղաք, կտոր է առնում նոր շրջազգեստի կամ կոֆտայի համար, հինգշաբթի գիշերը իր սենյակում կարում է մենակ, կրակ է անում (ոչ նրա համար, որպեսզի այրի). երկու ուրիշ սպասուհիներ հետևում են դռան մոտ, և աղջիկը գիտե, որ

ծխի հոտը կմատնի իրեն, և հետո էլ՝ որտե՞ղ կարող է պահել մոխրակույտը. կրակ է անում, ասում եմ, որպեսզի լվանա, շորացնի ու արդուկի փոխած շրջադեպտը, իսկ կեդատովածը թաքցնում է (հավանաբար՝ իր վրա) և ահա հիմա, հենց այս պահին արշաւատում է այն ոչնչացնել մեր առջև ընկած այս մեկուսի տիին ինչ-որ մի հարմար տեղում: Այսօր երեկոյան տեսա, թե ինչպես նա ձկնորսական դյուղում մտավ մի տնակ, որտեղ և, գուցե, ևս ու դուր էլ մտնենք մինչև տուն վերադառնալը: Նա այդ տնակում մնաց որոշ ժամանակ և այնտեղից դուրս եկավ, ինչպես ինձ թվաց, թիկնոցի տակ ինչ-որ բան պահած: Կնոջ ուսերին գցած թիկնոցը՝ զթասրբտուֆյան խորհրդանիշը, շատ մեղքեր է թաքցնում: Ես տեսա, ինչպես նա տնակից դուրս գալուց հետո ավի երկարությամբ զնաց դեպի հյուսիս... Մի՞թե ձեր ծովափն այդքան գեղատեսիլ է համարվում, միտքը Բևտտերել:

Ես «այո» ասացի այնքան կարճ, որքան որ կարող էի:

— Ծաշակները տարբեր են լինում,— ասաց խուզարկու Կաֆր:— Իմ կարծիքով, չկա մի ծովային տեսարան, որն ավելի բիշ դուր գար ինձ: Եթե անհրաժեշտ լիներ, բո՛ղոք հետևեիք մեկ ուրիշ մարդու, զնալով այս ավի երկարությամբ, և եթե այդ մարդը հանկարծ Լոս Անջես, ապա դուք չէիք գտնի ոչ մի տեղ, որի Լոսում կարողանայիք թաքնվել: Ինձ մնում էր ընտրել երկուսից մեկը. կամ, որպես կասկածի ենթակա, բանտ նստեցնել Ռոզաննային, կամ թողնել, որ նա գործի իր հայեցողությամբ: Նկատի ունենալով սպտճառները, որոնց բացատրությամբ չեմ ուզում ձեզ ձանձրացնել, ևս կգերադասեի դիմել ամեն տեսակ զոհարեթությունների, բան տազնապ առաջացնել մի անձնավորության մեջ, որի անունը ես ու դուք չենք տա: Ես տուն վերադարձա, որպեսզի խնդրեմ ձեզ ինձ ավի հյուսիսային ծայրը տանել մեկ ուրիշ ճանապարհով: Ավազը ինձ հայտնի լավագույն խուզարկու շներից մեկն է. նա հիանալի կերպով ձեզ տանում է հետքերով: Եթե վերադարձի ճանապարհին չպատահենք Ռոզաննա Սպիրոսնին, ապա, քանի դեռ լույս է, ավադը մեզ կարող է ասել, թե որտեղ է եղել նա: Ահա ավազը: Ինձ ներեցեք, եթե ձեզ խորհուրդ տամ զնալ լուռումունջ և թողնել, որ ես առաջ աճեցնեմ:

Եթե բժիշկներին հայտնի է խուզարկուական տենդ անու-

նով հիվանդություն, սպա այս սշահին աշդպիտի մի հիման-  
գություն պատահեց ձեր խոնարհ ծառային: Եւ: շարկու Կաթիլ  
ավաղաբըլուրների արանքով իջավ դեպի ամի: Ես ուժգին բա-  
րախող սբաով հետեւեցի նրան և հետվից սպասում էի, թե  
ինչ կլինի հետո:

Եւ նայելով՝ տեսա, որ կանգնած եմ այն նույն տեղում,  
որտեղ Ռոզաննա Սպիրմանն ինձ հետ խոսում էր այն օրը,  
երբ, Լոնդոնից ժամանած լինելով, հանկարծ մեր առջև հայտ-  
նւղեց միսար Ֆրենկլինը: Մինչ հաշուցքս հետեւում էր խուզաշ-  
կուին, մտքերս, կամքիս հակառակ, գնացել էին դեպի այն,  
ինչ այն ժամանակ տեղի ունեցավ իմ ու Ռոզաննայի միջև:  
Հավատացնում եմ, ևս գրեթե զգում էի, թե ինչպես խեղճ աղ-  
ջիկը իբևն ասված սիրալիր խոսքերիս համար երախտագի-  
տությունը սեղմեց ձեռքս: Հավատացնում եմ, որ ևս գրեթե  
լսում էի, թե ինչպես նրա ձայնն ինձ ստում էր, որ նրերուն  
ավաղները, իր կամքին հակառակ, չզում են իրեն, գրեթե  
տեսնում էի, ինչ ինչպես նրա դեմքը փալկեց, երբ նա հան-  
կարծ նկատեց ավաղաբըլուրների հետեւից անակնկալորեն դուրս  
եկած միսար Ֆրենկլինին: Թախիծս գնալով ուժեղանում էր, և  
ես է՛լ ավելի անհանգստացա, երբ մտքերիցս կտրվելու հա-  
մար շուրջս նայեցի:

Իրիկնային վերջին լույսն արագորեն մարում էր, և ինչ-որ  
չարագուշակ լուսնություն էր իջնում այդ ախար տեղի վրա:  
Օվկիանոսի ալիքներն առանց շնչին իսկ ձայն հանելու ամի  
էին վաղու: ծովախորշի մյուս կողմում: Իսկ հենց ծովա-  
խորշում ջուրը կապարագույն էր և անշարժ: Կեղտոտ տիղմի  
դեղնաճերմակ ծվենները պատել էին նրա մակերևույթը: Տիղ-  
մըն ու փրփուրը հաղիվ նկատելիորեն փալկվում էին այն  
տեղերում, որտեղ վերջին լույսը դեռ ընկնում էր նրանց վրա՝  
հյուսիսից ու հարավից ծովում բարձրացող երկու մեծ ժայ-  
ռերի արանքում: Սկսվում էր մակընթացությունը, և, մինչ ևս  
կանդնած սպասում էի, նրերուն ավաղների ամբողջ գորշ  
տարածությունն սկսեց կնճռոտվել ու զողալ. դա միակ շար-  
ժումն էր այդ զգվելի վայրում:

Իս տեսա, թե ինչպես խուզարկուն ցնցվեց, երբ նկատեց  
ավաղների երեբալը: Մի երկու րոպե դրանց նայելուց հետո  
ես շրջվեց ու նորից մտտեցավ ինձ:





— Ահա Կնոջական ճևորեր, միսոր Բեռտերիչ, — նկատեց խուզարկու  
Կաֆր:

— Նենգ ասեղ է սա, միստր Բետտերեջ,— ասաց նա,—  
Ոռզաննա Սպիրմանի ոչ մի հետք չկա ամբողջ ափին, որտեղ  
էլ որ նայելու լինե՛ք:

Նա ինձ ավելի մոտ տարավ ափին, և ինքս տեսա, որ մի-  
այն իմ ու նրա հետքերն էին երևում ավազի վրա:

— Այստեղից ո՞ր կողմի վրա է գտնվում ձկնորսական  
գլուղը,— հարցրեց խուզարկու Կաֆր:

— Քորս Ղուլը,— պատասխանեցի ես (այսպես էր կոչ-  
վում գլուղը),— այստեղից հարավ է ընկած:

— Ես տեսա, թե ինչպես այսօր երևեոյան աղջիկը Քորս  
Ղուլից ափի երկարութեամբ գնում էր դեպի հյուսիս,— ասաց  
խուզարկուն:— Հետևաբար, նա գնում էր դեպի այդ վայրը:  
Քորս Ղուլը այն հրվանդանի մյուս կողմո՞ւմ է գտնվում:  
Չե՞նք կարող ափով գնալ այնտեղ, քանի որ ջուրը հիմա ցա-  
ձըր է:

Ես երկու հարցին էլ դրական պատասխան տվի:

— Ներեցեք, եթե խնդրե՛մ, որ արագ բացե՛ք,— ասաց  
խուզարկուն:— Ես պետք է մթնելուց առաջ գտնեմ այն տե-  
ղը, որտեղ աղջիկն իջել է ափից:

Մենք, երեք, մի երկու հարյուր քայլ էինք գնացել Քորս  
Ղուլի ուղղութեամբ, երբ հանկարծ խուզարկու Կաֆր շոքեց,  
ասես թե աստծուն աղոթելու անակնկալ ցանկութեամբ զգաց:

— Կարելի է որոշ բան տեսլ ձեր ծովային տեսարանի  
օշոտին,— նկատեց նա:— Ահա կնոջական հետքեր, միստր  
Բետտերեջ: Դրանք անվանենք Ռոզաննայի հետքեր, քանի  
դեռ հակառակն ապացուցող անհերքելի փաստեր չենք գտել:  
Հետքերը սրբված են, նկատեցե՛ք՝ սրբված են միտումնավոր  
կերպով, կասե՛ի ես: Ախ, խեղճ աղջիկ, նա էլ ինձ նման շատ  
լավ գիտե սովազի դավաճանական հատկութեանները: Բայց  
արդյո՞ք շափից ավելի հապճեպորեն չի սրբել հետքերը: Ահա  
մեկը գալիս է Քորս Ղուլից, իսկ մյուսը գնում է այն կողմ:  
Ծիշտ չէ՞, նրա կոշիկի ծայրը ուղիղ ցույց է տալիս ջուրը: Եվ  
արդյո՞ք երկու կրունկների դրոշմվածքներ չե՛մ տեսնում աչ-  
նուհետև ափի երկարութեամբ, ինչպես նաև ջրի մոտերքում:  
Ես չե՛մ ուզում ձեր զգացմունքները վիրավորել, բայց վախե-  
նում եմ, որ Ռոզաննան խորամանկն է: Նա կարծես մտադիր  
է ե՛ւ, յ գնալ դեպի այնտեղ, որտեղից մենք հիմա հեռացանք,

ավագի վրա շթողնելով հետքեր, որոնցով կարելի լինել գտնել իրեն: Չենթադրե՞նք, արդյոք, նա գնացել է ջրի միջով, մինչև որ հասել է մեր թիկունքում գտնվող ժայռերի ցցվածքին, և վերագարծել է նույն ճանապարհով, իսկ հետո նորից գնացել է փի երկարությամբ, որտեղ գեռ մնացել են երկու կրոնկների հետքերը: Այո, կարող ենք այդպես մտածել: Դա համապատասխանում է իմ այն ենթադրությանը, որ աղջիկը սնակից գուրս գալիս ինչ-որ բան է ունեցել թիկնոցի տակ: Այ, ո՛չ նրա համար, որպեսզի ոչնչացնի դա. ախր այդ դեպքում անտեղի կլինեին այդ բոլոր ջանքերը՝ թույլ չտալ ինձ գտնելու այն տեղը, որտեղ ավարտվել էր իր շոքազայությունը: Այլ նրա համար, որպեսզի դա պահի այստեղ. ահա, կարծում եմ, առավել ճիշտ ենթադրությունը: Գուցե սնակը մտնելուց հետո կիմանա՞նք, թե ինչ է տարել նա:

Իմ խուզարկուական տենդը հանկարծ անհետացավ:

— Ես ձեզ հարկավոր չեմ,— ասացի ես:— Ի՞նչ օգուտ կարող եմ տալ ձեզ:

— Որքան ավելի շատ եմ ճանաչում ձեզ, միտքը Ռեստե-րեջ.— ասաց խուզարկուն,— այնքան ավելի շատ առաքինություններ եմ գտնում ձեր մեջ: Համեստություն՝ մի օ՛, աստված իմ: Ինչքա՞ն հազվագեպ են համեստ մարդիկ պատահում այս աշխարհում և ինչքա՞ն շատ են այդ հազվագեպ առաքինությունները ձեր մեջ: Եթե ես մենակ մտնեմ տնակ, ապա տանտերերը հազիվ թե պատասխանեն իմ առաջին հարցին: Իսկ եթե ձեզ հետ գնամ՝ ինձ կներկայացնի հարգելի հարևանս, և անկաշկանդ զրույց կսկսվի: Այսպես եմ ես պատկերացնում այս գործը. իսկ ինչպե՞ս եք պատկերացնում դուք:

Ուզածիս պես շուտ հաջող պատասխան չգտնելով, աշխատեցի ժամանակ շահել, հարցնելով, թե որ տնակն է ուզում ինքը մտնել:

Երբ խուզարկուն ինձ նկարագրեց տեղը՝ անմիջապես ճանաչեցի Յոլանդ անունով ձկնորսի տնակը, որտեղ նա ապրում էր կնոջ և երկու չափահաս երեխաների՝ տղայի ու աղջկա հետ: Եթե դուք մի փոքր ետ նայեք՝ կհիշեք, որ Ռոզաննա Սպիրմանին առաջին անգամ ձեր ուշադրությանը ներկայացնելիս հիշատակել եմ, որ Երբերուն ավագներում լինելիս նա երբեմն այցելում էր Քորս Հոլլում գտնվող իր բարեկամնե-

րին: Եվ այդ բարեկամները Չորանդներն էին՝ հարգված, արժանավոր մարդիկ, որոնք պատիվ էին բերում ամբողջ օկրուցին: Նրանց հեռու Ռոզնանայի ծանոթութունը սկսվել էր, հիշան ասած, նրանց կաղ աղջկանից, որին Կաղոտն Լյուսի էին անվանել հարեանները: Հաշմանդամ աղջիկները, ըստ երևույթին, իրար նկատմամբ համակրանքով էին համակվել: Ինչ էլ որ լիներ, Յուրանդներն ու Ռոզաննան թեև հաղվաղելու էին հանդիպում, այնուամենայնիվ միշտ ջերմ, մտերմական հարաբերությունների մեջ էին: Եվ այն, որ խուզարկու Կաֆը աղջկան հետեւել էր մինչև նրանց առանձնատունը, ինչ ստիպեց նորովի վերարկվել իրեն օջիւկու նրա խնդրանքին: Ռոզաննան գնացել էր այնտեղ, որտեղ հաճախ էր լինում, և սպասուցել, որ նա եղել էր ձկնորսի ու նրա ընտանիքի շրջապատում, նշանակում էր սպասուցել, որ նրա այդ այցելութունն մեջ ոչ մի հանցավոր բան էլ թաքնված չէր: Հետևաբար, խուզարկու Կաֆի խնդրանքը կատարել նշանակում էր ծառայություն մատուցել աղջկան և ոչ թե վնաս հասցնել:

Գնացինք Քորս Լոլլ և, քանի գեռ բոլորովին չէր մթնել, հետքեր տեսանք ավազների վրա:

Երբ հասանք տնակին, սարգվեց, որ ձկնորսը որդու հետ գնացել է ձուկ բռնելու, իսկ Կաղոտն Լյուսին, միշտ թույլ ու շուտ հոգնող, հանգստանում էր վերևի իր նեշասենյակում: Եվ միտի Յուրանդը մեղ ընդունեց խոհանոցում՝ մենակ: Երբ լսեց, որ խուզարկու Կաֆը Լոնդոնում նշանավոր անձնավորություն է, մի շիշ հուանդական ջին դրեց սեղանին, մի դույզ նոր ծխամորձ դրեց և աչքը չէր կտրում խուզարկուից, ասես թե չէր կշտանում նրան նայելուց:

Նա հանգիստ նստել էր մի անկյունում, ոչ առանց հետաքրքրության սպասելով, թե խուզարկուն ինչպես խոսակցությունը կըրջի գեպի Ռոզաննա Սպիրմանը: Այլուայլ բաներից խոսակցություն սկսելու նրա սովորական վարվելաձևը դրսևորվեց նաև այս դեպքում: Սկսեց թագավորական գերդաստանից, մեթոդիստներից ու ձկան գնից և այս բոլորից անցավ (իր սովորական մելամաղձոտ ու ծածկամիտ շարժուձևով) Լուսնաքարի կորչելուն, մեր ավագ աղախնու գագազելուն և Ռոզաննա Սպիրմանի հետ աղախինների դաժան վարվելուն: Այսպիսով, հասնելով գլխավոր առարկային, նա ինքն

իր մասին ասաց, թե ավմաստի կորչելու մասին տեղեկություններ է հավարում մասամբ նրա համար, որպեսզի գտնի այն, մասամբ էլ նրա համար, որպեսզի Ռողաննային արդարացնի մեր տանը գտնվող նրա թշնամիների անարդար կասկածանքներից: Մեր գալուց քառորդ ժամ անց բարի միսիս Յոլանդը համոզված էր, թե զրուցում է Ռողաննայի ամենալավ բարեկամի հետ և խուզարկու Կաֆին հորդորում էր ուժ առնել հոլանդական շշից՝ մի փոքր սրտապնդվելու և աշխուժանալու համար:

Հաստատ համոզված լինելով, որ խուզարկուն անտեղի ժամանակ է վատնում միսիս Յոլանդի հետ, ևս նստած լսում էի նրանց խոսակցությունը դրեթե այնպես, ինչպես ժամանակին դերասաններին էի լսել թատրոնում: Նշանավոր Կաֆր դարմանալի համբերություն ցուցաբերեց՝ վհատորեն բախտը փորձելով այս ու այն ձևով և, այսպես ասած, բախտի բերմամբ կրակոցներ արձակելով իրար ետևից՝ գուցեև դիպչի նպատակակետին: Ամեն ինչ՝ ի պատիվ Ռողաննայի, ոչինչ՝ ի վնաս նրա— ահա թե ինչպես ավարտվեց դա, որքան էլ որ ջանաց խուզարկուն: Միսիս Յոլանդը խոսում էր անդադար և իր բոլոր գաղտնիքները վստահեց խուզարկուն: Երբ մենք նայեցինք ժամացույցին և վեր կացանք, մտադիր լինելով հրածեշտ տալ, Կաֆր մի վերջին փորձ կատարեց:

— Հիմա ես ձեզ բարի գիշեր կհաղթեմ, տիկին,— ասաց նա,— և հրածեշտ տալով կասեմ՝ ձեր խոնարհ ծառան անկեղծորեն բարին է կամենում Ռողաննա Սպիրմանին: Բայց, ասոված իմ, նա չպեսք է մնա այստեղ: Նրան խորհուրդ եմ տալիս հեռանալ այստեղից:

— Ողորմած տեր, ախր նա ինքը դնում է այստեղից,— բացականչեց միսիս Յոլանդը:

Ռողաննա Սպիրմանը լքում է մեզ: Ականջներս սրեցի: Ինձ տարօրինակ թվաց, որպեսզի ավելին չասեմ, որ այդ աղջիկը շէր նախազգուշացրել ոչ միլիգրիմ, ոչ էլ ինձ: Սըրբուտմո կասկած առաջացավ. չլինի՞ խուզարկու Կաֆի վերջին կրակոցը նպատակակետին դիպալ: Սկսեցի կասկածել՝ արդո՞ք շատ անվնաս էր իմ մասնակցությունն այս դործին, ինչպես ինքս էի մտածում: Գուցե խուզարկուն ազնիվ կնոջը ստիպել էր խոսք Սպանել բերանից իր կեղծ հնարանք-

Ներքի ցանցի մեջ խճճելով նրան: Բայց իմ պարտքն էր, որպես բարի բողոքականի, հիշել, որ կեղծիքի հայրը սատանան է, և որ սատանան ու շարիքը երբեք իրարից հեռու չեն լինում: Ինչ-որ վատ բան զգալով՝ ուղևցի տանել խուզարկուին: Սակայն նա նույն պահին նստեց և հուանդական շշից մի վերջին կում անելու թուլլովություն խնդրեց: Միսիս Յուլանդը նստեց նրա դիմաց ու լցրեց նրա բաժակը: Ես, շատ անհանգստացած, գնացի դեպի դուռը և ասացի, որ, երևի, պետք է հրաժեշտ տամ իրենց, մինչդեռ անվերջ դանդաղում էի ու չէի հեռանում:

— Ուրեմն, Ռոզաննան մտադիր է թողնել իր տեղը, — հարցրեց խուզարկուն: — Իսկ ի՞նչ է անելու թողնելուց հետո... Տխո՛ւր է... տխուր: Չէ որ խեղճ աղջիկը, ինձնից ու ձեզնից բացի, ուրիշ ոչ ոք չունի աշխարհում:

— Ունի, — առարկեց միսիս Յուլանդը: — Նա, ինչպես ձեզ արդեն ասել եմ, այստեղ եկավ այսօր երեկոյան և աղջկաս՝ Լյուսիի ու ինձ հետ մի քիչ նստելուց ու զրուցելուց հետո վերևում՝ Լյուսիի սենյակում, մենակ մնալու թուլլովություն խնդրեց: Դա մեր տան միակ սենյակն է, որտեղ թանաք ու գրիչ կա: «Ես պետք է նամակ գրեմ մի ընկերոջ, — ասաց նա, — իսկ դա շեմ կարող անել մեր տանը, որտեղ ինձ հետեւում են մյուս սպասուհիները»: Թե ում էր հասցեագրված այդ նամակը՝ շեմ կարող ձեզ ասել. միայն, թերևս, պետք է որ շատ երկար լինե՞ր՝ դատելով ըստ այն ժամանակի, որ նա մնաց այնտեղ՝ վերևում: Երբ ներքև իջավ՝ ես նամականիշ առաջարկեցի: Բայց նրա ձեռքին նամակ չկար, և նա նամականիշը շվեբրեց: Խեղճը, ինչպես ձեզ հայտնի է, մի փոքր գաղտնապահ է իր հարցում և իր արարքների հարցում: Բայց նա ինչ-որ տեղ մի մտերիմ ունի, հաստատ բան եմ ասում ձեզ, և հենց այդ մտերիմի մոտ էլ գնում է, ասածս լավ հիշե՛ք:

— Ծո՛ւտ է գնալու, — հարցրեց խուզարկուն:

— Հենց որ կարողանա, — պատասխանեց միսիս Յուլանդը:

Այդ ժամանակ ես նորից հեռացա դռնից: Որպես միլեգիի ծառայակետ՝ ես չէի կարող թույլ տալ, որ իմ ներկայությամբ շարունակվեր մեր սպասուհու գնալուն կամ լզնալուն վերաբերող այդպիսի անպատշաճ խոսակցությունը:

— Գուք, թերևս, սխալվում եք Ռոպաննա Սպիրմանի հարցում, — ասացի ես: — Նթե նա կամենար թողնել իր տեղը, ապա ամենից առաջ այդ մասին կհաղորդեր ինձ:

— Սխալվո՞ւմ եմ, — ճշաց միտիս Յուլանդը: — Ընդամենը մեկ ժամ առաջ նա ճանապարհի համար մի քանի բան գնեց ինձնից, միտոր Բետտերեչ, այ հենց այս սենյակում... Հա, ի դեպ, Ռոպաննայի և նրա փոցերի մասին, — ինքն իրեն ընդհատեց անտանելի կիևը, սկսելով քրքրել գրպանը: — Ինչ-որ բան կա ծանրացալ խզճիս վրա... Տուն վերադառնալուց հետո ձեզնից որևէ մեկը կտեսնի՞ նրան:

— Մեծագույն հաճույքով ձեր հանձնարարությունը կհաղորդեմ խեղճ ազջկտն, — պատասխանեց խուզարկու Կաֆը, նախքան ես կհասցնեի որևէ խոսք ասել:

Միտիս Յուլանդը գրպանից հանեց մի քանի շիլինգ ու վեց պենսանոց մի գրամ և, ափի մեջ սլահած, մի առանձին խնամքով ու ափսոսանքով հաշվեց իրար ետևից: Նա այդ փողերը մեկնեց խուզարկուին, թեև դեմքից երևում էր, որ ինքը այնքան էլ շատ չի ուզում բաժանվել դրանցից:

— Կարո՞ղ եմ ձեզ խնդրել, որ այս փողերը, իմ խոնարհ բարենների հետ, հանձնեք Ռոպաննային, — ասաց միտիս Յուլանդը: — Նա անպայման ուզեց ինձ վճարել այն մի քանի բաների դիմաց, որ այսօր երեկոյան պետք կգան իրեն, իսկ փողի համար մենք միշտ ուրախ ենք, այդ հարցում շեմ վիճում: Բայց, այնուամենայնիվ, մի տեսակ լավ շեմ զգում, որ ծանր աշխատանքով հավաքած փողերը վերցրի խեղճ ազջրկանից: Եվ, ճիշտն ասած, շեմ կարծում, թե ամուսնուս համար, երբ նա վաղն առավոտյան վերադառնա, հաճելի կլինի լսել, որ էս փող եմ վերցրել Ռոպաննա Սպիրմանից: Խնդրում եմ, Ռոպաննային ասացեք, որ ուրախությամբ իրեն եմ նվիրում այն իրերը, որ նա գնել է ինձնից: Փողերը սեղանին մի թողեք, — ասաց միտիս Յուլանդը, հանկարծ դրանք դնելով խուզարկուի առջև, ասես իր մատներն այրելիս լինեին, — թե չէ, հիմա դժվար ժամանակներ են, մարդկային մարմինը թույլ է, մեկ էլ տեսար՝ ուզեցի նորից գրպանս դնել գրանք:

— Գնանք, — ձայն տվի Կաֆին: — Ես այլևս շեմ կարող սպասել. պետք է տուն վերադառնամ:

— Հիմա կհետևեմ ձեզ, — պատասխանեց խուզարկու Կաֆը:

Ես Երկրորդ անգամ մտանցա դռանը, և Երկրորդ անգամ էլ, որքան աշխատեցի, չկարողացա անցնել շեմը:

— Փողը վերադարձնելը փափկանկատ բան է, տիկին,— լսեցի խուզարկուի ձայնը:— Դուք, Երևի, առանց այն էլ էժան եք սովել նրան:

— Էժան,— ասաց միսիս Յուլանդը,— ինքներդ դատեցեք:

Նա վերցրեց մոմը և խուզարկուին տարավ խոհանոցի մի անկյունը: Եթե բանը նույնիսկ իմ կյանքին էլ վերաբերեր, ես չէի կարող ինձ դուպել ու չզնալ այդ կնոջ Լաևիցի: Անկյունում բարձրանում էր բազմատեսակ ջարդոնի մի մեծ կույտ, մեծ մասամբ՝ հին մետաղի, որ տարբեր ժամանակներում ձկնորսը հավաքել էր ջրասույզ եղած նավերից ու դեռ չէր հասցրել վաճառել: Միսիս Յուլանդը ձեռքը մտցրեց այդ ջարդոնի մեջ և այնտեղից հանեց թիթեղյա մի հին արկղիկ՝ կափարիչով և կախելու համար նախատեսված օղակով. սև լաքով պատած այգյախի արկղները նավերում օգտագործվում են աշխարհագրական ու ծովային քարտեզների համար՝ սրբանք իսնավությունից պահպանելու նպատակով:

— Ահա,— ասաց միսիս Յուլանդը:— Երբ այսօր եկավ Ռոզաննան, նա ճիշտ այսպիսի մի արկղիկ ընտրեց: «Սա շատ հարմար է,— ասաց նա,— իմ թևքածալերի և օձիքների համար, որպեսզի չձմրթվեն ճամպրուկում»: Մեկ շիշինդ և ինը պենս, միստր Կաֆ: Մեռնեմ, թե սուտ եմ ասում, նույնիսկ կես պեննի ավելի չվերցրի:

— Ե՛տ էժան է,— ծանր հառաչելով արտաբերեց խուզարկուն:

Նա արկղիկը ծանրութեթե արեց ափի մեջ: Երբ նայում էր արկղիկին՝ ականջիս հասավ «Ամռան վերջին վարդը վառ» եղանակը: Ոչ մի կասկած չկար. նա ինչ-որ նոր բան էր գտել ի վնաս Ռոզաննա Սպիրմանի, գտել հենց այն տեղում, որտեղ, ինչպես էս համոզված էի, նրա անունը վտանգված չէր. և այդ բոլորը՝ իմ միջոցով: Թողնում եմ, որ դուք դատեք իմ գզացումների և այն մասին, թե որքան անկեղծորեն զղջացի, որ օգնել էի միսիս Յուլանդի հետ միստր Կաֆի ծանոթությանը:

— Բավական է,— ասացի ես,— մեր գնալու ժամանակն է:

Ինձ վրա ամենևին ուշադրություն չդարձնելով, միսիս Յո-



լանդը նորից ձեռքը մտցնեց ջարդոնի մեջ և այս անգամ մի շան շղթա հանեց այնտեղից:

— Տեսեք, ինչքան ծանր է, սըր,— ասաց նա խուզարկուին:— Մենք այսպիսի երեք շղթա ունեինք, և Ռոզաննան վերցրեց երկուսը: «Հոգյակս, ձեր ինչի՞ն են պետք այս շղթաները»— ասում եմ ես: «Իրար կկցեմ ու կկապեմ ճամպուռիքս»,— ասում է նա: «Պարանն ավելի էժան կլինի»,— ասում եմ ես: «Իսկ շղթան ավելի հուսալի է»,— ասում է նա: «Մի՞թե ճամպուռկները շղթայով են կապում»,— ասում եմ ես: «Օ՛, միսիս Յոլանդ, մի առարկեք,— ասում է նա,— ինձ զիջեք շղթաները»: Տարօրինակ աղջիկ է, միստր Կաֆ: Ոսկի հոգի ունի և հարազատ քրոջ պես սիրում է իմ կյուսիին, բայց միշտ էլ տարօրինակություններ է ունեցել: Ես էլ դրանք տվեցի նրան: Երեք շիլինգ և վեց պենս: Աղնի՛վ խոսք, միայն երեք շիլինգ և վեց պենս, միստր Կաֆ:

— Յուրաքանչյուրի՞ համար,— հարցրեց խուզարկուն:

— Երկուսի համար,— պատասխանեց միսիս Յոլանդը:— Երեք շիլինգ վեց պենս՝ երկուսի համար:

— Զրի՛ եք տվել, տիկին,— գլուխն օրորեց խուզարկուն,— ձրի՛ եք տվել:

— Ահա այդ փողերը,— ասաց միսիս Յոլանդը, վերադանալով արծաթի կույտի մոտ, որ դիզված էր սեղանին և ասես նրա կամքին հակառակ ձգում էր նրան.— Ռոզաննան միայն այդ արկղիկն ու շղթաները գնեց: Մեկ շիլինգ ինք պենս և երեք շիլինգ վեց պենս՝ ընդամենը հինգ շիլինգ և հինգ պենս: Խոնարհաբար ողջունեք նրան և ասացեք, որ խիղճս թույլ չի տալիս խեղճ աղջկանից վերցնելու իր խնայողությունները, երբ դրանք կարող են հարկավոր լինել հենց իրեն:

— Իսկ իմ խիղճը, տիկին, թույլ չի տալիս վերադարձնել փողերը,— ասաց խուզարկու Կաֆը:— Դուք առանց այն էլ, կարելի է ասել, այդ իրերը նվիրել եք նրան, իրոք, նվիրել եք:

— Դա ձեր անկեղծ կարծի՞քն է, սըր,— հարցրեց միսիս Յոլանդը փայլելով:

— Դրանում ոչ մի կասկած չի կարող,— պատասխանեց խուզարկուն:— Հարցրեք միստր Բետտերեջին:

Ինձ հարցնելու կարիք չկար: Նրանք միայն մի բառ դուրս քաշեցին ինձնից.

— Մնացե՞ք բարի:

— Թող գրողի ծոցը կորչեն զրանք, այդ փողերը, — հանկարծ բացականչեց միսիս Յուլանդը:

Այս ասելով նա, կարծես կորցնելով ինքնատիրապետումը, թոցրեց արծաթի կուլտն ու արագորեն զրեց գրպանը:

— Տեսնել շեմ կարող, որ փողը թափված է և ոչ ոք չի վերցնում: — Անտանելի կինը հանկարծ շրմփաց աթոռին, աչնպիսի մի արտահայտությունը նայելով խուղարկու Կաֆին, կարծես ասում էր. «Փողերը նորից իմ գրպանում են, հապա մի փորձե՛ք հանել այստեղից»:

Այս անգամ ես ոչ միայն մոտեցա շեմին, այլև անցա այն, հաստատապես քայլերս ուղղելով դեպի տուն: Բացատրո՞ք, ինչպես ուզում եք, բայց ես զգում էի, որ նրանցից մեկը կամ երկուսը միասին մահացու կերպով վիրավորել էին ինձ: Դեռ մի քանի քայլ էլ չէի արել, երբ լսեցի, որ խուղարկուն հասնում է հտեկիցս:

— Միստր Բետտերեջ, շնորհակալ եմ այս ծանոթություն համար, — ասաց նա: — Իսկ ձկնորսի կնոջը պարտական եմ բոլորովին նոր զգացումով: Միսիս Յուլանդը մտահոգություն պատճառեց ինձ:

Լեզվիս վրա մի կծու պաստախան կար: Բանն այն է, որ ես նեղացած էի նրանից այնպես, ինչպես ինքս ինձ վրա էի նեղանում: Բայց երբ նա խոստովանեց, որ մտահոգված է, ես սկսեցի կասկածել, իրո՞ք ես մեծ վնաս եմ պատճառել: Այդ պատճառով էլ լուռ սպասում էի, թե հետո ինչ կասի:

— Այո, — ասես մտքերս կարդալով՝ խոսեց խուղարկուն: — Փոխանակ օգնելու, որ հետքը գտնեմ,՝ դուք, միստր Բետտերեջ, Ռոզաննայի նկատմամբ կարեկցանք տածելով (ձեզ համար, թերևս, մխիթարական լինի սա լսել), դուք, ընդհակառակը, ինձ շեղել եք այդ ուղուց: Այդ աղջկա գործողություններն այսօր, անշուշտ, բավականաչափ պարզ են: Նա երկու շղթաները ամբարցրել է արկղիկի օղակից. այդ արկղիկը մտցրել է ջրի կամ ավազի մեջ. շղթայի մյուս ծայրն ամբարցրել է ծայրի տակ գտնվող ինչ-որ տեղի, որը միայն իրեն է հայտնի: Ռոզաննան արկղիկը այնտեղ կթողնի այնքան ժամանակ, մինչև որ ավարտվի այժմ կատարվող հետաքննությունը, իսկ հետո, ազատ ժամանակ, նորից կկարողանա հա-

նել թաքստոցից, երբ որ ինքը կամենայ Մինչև այստեղ ամեն ինչ միանդամայն պարզ է: Բայց,— ավելացրեց խուզարկուն՝ ձայնի մեջ անհամբերութեան մի շեշտ դրած, որը ես առաջին անգամ էի նկատում այս ամբողջ ժամանակամիջոցում,— հարցն այն է, թե, սատանան տանի, ի՞նչ է պահել այդ արկղիկի մեջ:

Ինքս ինձ մտածեցի՝ «Լուսնաբարը»: Բայց բարձրաձայն միայն հարցրի.

— Մի՞թե չեք կռահում:

— Դա արմատը չէ,— պատասխանեց նա:— Կյանքիս ամբողջ փորձը ոչ մի արժեք չի ունենա, եթե արմատը վերցրած լինի Ռոզաննա Սպիրմանը:

Երբ սա լսեցի՝ ինձ նորից սկսեց ցնցել խուզարկուական տենդը, և ես, այդ նոր հանելուկով հետաքրքրված, այն աստիճան կորցրի ինձ, որ առանց մտածելու բացակահանեցի.

— Ներկոտված հագո՛ւստը:

Հանկարծ խուզարկու Կաֆը կանգ առավ մթության մեջ և իր ձեռքը դրեց իմ ձեռքի վրա:

— Երբ որևէ բան են դցում ձեր Երերուն ավազների մեջ, նորից վերև բարձրանո՞ւմ է, թե ոչ,— հարցրեց նա:

— Երբեք,— պատասխանեցի:— Մանր բան լինի, թե թեթև՝ Երերուն ավազները ամեն ինչ, և այն էլ ընդմիշտ, քաշում են իրենց մեջ:

— Ռոզաննա Սպիրմանը դա գիտե՞:

— Նույնքան լավ, որքան և ես:

— Ուրեմն, բավական էր, որ նա ներկոտված հագուստը փաթաթեր քարի վրա, կապեր և ուղղակի զցիր Երերուն ավազների մեջ,— ասաց խուզարկուն:— Այն պահելու ամենևին հարկ չկա. մինչդեռ նա, անկասկած, պահել է: Ուրեմն, հարց է ծագում,— ավելացրեց խուզարկուն, շարունակելով սուռչ գնալ.— արդյո՞ք ներկոտված շրջագրեստը կամ կոֆտան, կամ որևէ այլ առարկա, այնպիսի մի բան են, որն անպայման պետք է պահպանել: Միտք Բետտերեջ, եթե ոչինչ շխանգարի, ես վաղը պետք է Ֆրիդլինձոլ մեկնեմ և իմանամ, թե Ռոզաննան ինչ է գնել քաղաքում, երբ թաքուն կտոր է առել ներկոտած ղգեստի փոխարեն նորը կարելու համար: Այս իրավիճակում տնից դուրս գալը վտանգավոր է, բայց է՛լ

աՎելի վտանգավոր է կուրորեն գործել շարունակելը: Ներեցեր, որ տրամադրութիւնս տեղը չէ. ես կորցրել եմ հարդանքը իմ նկատմամբ. ես թույլ եմ տվել, որ Ռոզաննա Սպիրմանը փակուղու մեջ դնի ինձ:

Երբ մենք վերադարձանք՝ ծառաները նստած ընթրում էին: Առաջին մարդը, որին պատահեցինք բակում, այն ոստիկանն էր, որ տեսուչ Սիգրեր թողել էր խուզարկուի տրամադրութիւն տակ: Միտար Կաֆը նրանից հարցրեց՝ վերադարձե՞լ է Ռոզաննա Սպիրմանը: Այո: Ե՞րբ: Գրեթէ մեկ ժամ առաջ: Ի՞նչ է արել: Բարձրացել է վերև գլխարկն ու թիկնոցը հանելու, իսկ հիմա հանգիստ ընթրում է մնացած ծառաների հետ:

Ուրիշ ոչինչ չասելով՝ խուզարկու Կաֆը գնաց դեպի ետևի դուռը, աՎելի ու աՎելի կորցնելով հարգանքը իր նկատմամբ: Մթութիւնն մեջ անցնելով մուտքի մոտով՝ նա շարունակում էր գնալ ու գնալ, թեև ես ձայն էի տալիս նրան. հետո կանգ առաւ ուռննու ճուղիներից հշուսված դարպասադռնակի մոտ, որը տանում էր այգի: Երբ մոտեցա նրան, որպեսզի հստ բերեմ, տեսա, որ նա ուշադիր նայում է այն հարկի լուսամուտին, որտեղ ննջարաններն էին:

Վերև նայելով՝ ես էլ իմ հերթին տեսա, որ նրա դիտման առարկան միսս Ռեչելի սենյակի լուսամուտն էր, և որ կրակն առկայծելով ետ ու առաջ էր շարժվում այնտեղ, ասես ինչ-որ մի արտասովոր բան էր կատարվում սենյակում:

— Դա, կարծես, միսս Վերինդերի ննջասենյակն է:

Ես դրական պատասխան տվի և նրան հրավիրեցի ինձ մոտ ընթրելու:

Խուզարկուն տեղից շարժվեց, փնթփնթալով, թե ինքը սիրում է թարմ օդ շնչել երեկոները: Թողեցի, որ նա հիանա բնութիւնս: Վերադառնալիս՝ դռնակի մոտ լսեցի «Ամռան վերջին վարդը վառ» մեղեդին: Խուզարկու Կաֆը նոր հայտնագործութիւն էր արել: Եվ այս անգամ նրան օգնել էր օրիորդի լուսամուտը:

Այս վերջին միտքն ինձ ստիպեց նորից վերադառնալ խուզարկուի մոտ, քաղաքավարութիւնս նկատելով, որ ես չեմ կարող իրեն մենակ թողնել:

— Այստեղ ինչ-որ բան անհասկանալի է ձեզ համար, — մատնացույց անելով միսս Ռեչելի լուսամուտը, ավելացրի ես:

Դատելով նրա ձայնից՝ խուզարկու Կաֆը նորից վերագտել էր պատշաճ հարդանքը իր սեփական անձի նկատմամբ։

— Դուք Յորքշիրում, կարծեմ, սիրո՞ւմ եք գրազ գալ,— հարցրեց նա։

— Իսկ ի՞նչ կա որ։ Ասենք թե՛ սիրում եմք։

— Եթե ես յորքշիրցի լինեի,— ձեռքս բռնելով՝ շարունակեց խուզարկուն,— ապա, միստր Բետտերեյ, մի ամբողջ սովերեյնի վրա գրազ կգալի, որ ձեր երիտասարդ օրիորդը որոշել է մեկնել անից։ Եթե ես շահեմ այդ գրազը, ապա պատրաստ եմ դնելու մեկ ուրիշ սովերեյն, որ մեկնելու միաքը նրա զլխով անցել է ընդամենը մեկ ժամ առաջ։

Խուզարկուի առաջին կռահումը վախեցրեց ինձ։ Երկրորդը զլխումս մի տեսակ խճճվեց ոստիկանի այն զեկույցի հետ, թե Ռոզաննա Սպիրմանը մեկ ժամ առաջ է վերագարծել Երերուն ավազներից։ Այդ երկու կռահումներն էլ տարօրինակ տպավորութուն թողեցին վրաս։ Երբ գնացիք ընթրելու՝ ես ձեռքս դուրս քաշեցի խուզարկու Կաֆի ձեռքի միջից և, ամեն մի պատշաճութուն մոռանալով, նրանից առաջ ներս մտա, որպեսզի ինքս հարցուվորձ անեմ։

Առաջին մարդը, որին պատահեցի նախասրահում, սպասավոր Սամյուելն էր։

— Միլեդին սպասում է ձեզ և միստր Կաֆին,— ասաց նա, նախքան ես կհասցնեի հարց տալ նրան։

— Վաղո՞ւց է սպասում,— իմ թիկունքում լսվեց խուզարկուի ձայնը։

— Արդեն մեկ ժամ է, սըր։

Նորից։ Ռոզաննան վերագարծել է մեկ ժամ առաջ, միսս Ռեչելը ինչ-որ մի արտասովոր որոշում է ընդունել, և միլեդին սպասել է խուզարկուին. և այս բոլորը վերջին ժամվա ընթացքում։ Ամենևին հաճելի չէր, որ այսքան տարբեր մարդիկ ու առարկաներ այդ ձևով առնչվում էին իրար հետ։ Առանց խուզարկու Կաֆին նայելու և նրա հետ խոսելու՝ գնացի վերև Զեռքս հանկարծ դողաց, երբ այն բարձրացրի տիրուհու սենյակի դուռը թւ չելու համար։

— Ես չեմ գարմանա,— իմ թիկունքում շշնջաց խուզարկուն,— եթե այսօր աղմուկ-աղաղակ սկսվի ձեր տանը։ Մի

վախեցեր: Կյանքումս շատ այդպիսի դժվարություններ եմ հարթել:

Նա դեռ չէր հասցրել այս խոսքերն արտասանել, երբ լսեցի տիրուհուս ձայնը, որ մեզ հրամայում էր ներս մտնել:

## Գ Լ Ո Ւ Խ Կ Վ Ի

Միլեդիի սենյակում վառվում էր միայն մի փոքրիկ լամպ, որի լույսի տակ նա սոփորարար կարդում էր: Լուսամփոփն այնքան ցածր էր իջեցված, որ դեմքը ստվերի մեջ էր: Իր սովորական շիտակությամբ աչքերը մեզ վրա բարձրացնելու փոխարեն, սեղանի մոտ նստած, նա համառորեն աչքերը չէր կտրում բաց արած գրքից:

— Միտոք Կաֆ,— ասաց նա,— արդյո՞ք հետաքննության համար, որ այժմ կատարում եք, կարևոր է նախապես իմանալ, թե երբ որևէ մեկը կկամենա հեռանալ այս տնից:

— Չափազանց կարևոր է, միլեդի:

— Հեռուարար, ձեզ պետք է ասեմ, որ միսս Վերինդերը մտադիր է տեղափոխվել Զրիզինհուլ, իր մորաքույր միսիս էբլուայթի մոտ: Նա կմեկնի վաղն առավոտյան շուտ:

Խուզարկու Կաֆը նայեց ինձ: Ես մի քայլ առաջ գնացի տիրուհուս հետ խոսելու համար, բայց, խոստովանում եմ, ղզացի, որ չեմ համարձակվի այդ անել, և, առանց որևէ խոսք ասելու, քաշվեցի նախկին տեղս:

— Կարո՞ղ եմ հարցնել, ձերդ պայծառափայլություն, թե երբ է միսս Վերինդերը մտածել զնալ իր մորաքրոջ մոտ,— հարցրեց խուզարկուն:

— Մոտավորապես մեկ ժամ առաջ,— պատասխանեց տիրուհին:

Խուզարկու Կաֆը նորից նայեց ինձ: Ասում են, թե ծեր մարդկանց սիրտը չի կարող արագ բարախել: Միրոս չէր կարող ավելի ուժեղ խփել, քան խփում էր հիմա, եթե նույնիսկ նորից քսանհինգ տարեկան դառնայի:

— Ես ոչ մի իրավունք չունեմ,— ասաց խուզարկուն,— հսկելու միսս Վերինդերի արարքները: Ես միայն խոնարհարար խնդրում եմ ձեզ հետաձգել նրա մեկնումը, եթե հնարա-

վոր է: Ես ինքս պետք է վաղն առավոտյան մեկնեմ Ֆրիդլին-  
հոլ և վերադառնամ ժամը երկուսին մտա, եթե ոչ ա՛վելի շուտ:  
Եթե հնարավոր լիներ, որ միսս Վերինդերն այստեղ մնար  
մինչև այդ ժամը, ես կկամենայի երկու լսոսք ասել նրան,  
անսպասելիորեն, նրա մեկնումից առաջ:

Միլենդին անմիջապես ինձ հրամայեց կառապանին հա-  
ղորդել իր կարգադրությունը, որպեսզի միսս Ռեչելի կառքը  
մատուցվի կեսօրվա ժամը երկուսից ոչ շուտ:

— Ուրիշ որևէ բան ունե՞ք ասելու,— այնուհետև հարցրեց  
նա խուզարկուին:

— Միայն մի բան, ձերդ ողորմածություն: Եթե միսս Վե-  
րինդերը զարմանա այս ուշացման համար, խնդրում եմ շա-  
սեք, որ պատճառը ես եմ:

Տիրուհիս հանկարծ դուխը բարձրացրեց գրքից, կարծես  
ինչ-որ բան էր ուզում ասել, բայց, մեծ ջանք գործադրելով,  
զսպեց իրեն և, աչքերը նորից բացված էջի վրա իջեցնելով,  
ձեռքի շարժումով ազատ արձակեց մեղ:

— Զարմանալի կին է,— ասաց խուզարկու Կաֆր, երբ  
դուրս էինք եկել նախասրահ:— Եթե շլիներ նրա ինքնատի-  
րապետումը, ապա ձեզ մտահոգող գաղտնիքը, միատու Բեատե-  
րեջ, այսօր բացահայտված կլիներ:

Այս ասելիս վերջապես ճշմարտությունը բացվեց հիմար  
ծերուկիս առաջ: Ես մի պահ, թերևս, բոլորովին գրկվեցի  
բանականությունից: Թափով բռնեցի խուզարկուի օձիքն ու  
նրան սեղմեցի պատին:

— Գրողը ձեզ տանի,— գոռացի ես:— Միսս Ռեչելին ինչ-  
որ վատ բան է պատահել, իսկ դուք այս ամբողջ ժամանակա-  
միջոցում թաքցրել եք ինձնից:

Պատին սեղմված՝ խուզարկուն միայն նայեց ինձ, չփոր-  
ձելով դիմադրել. նրա մելամաղձոտ դեմքի արտահայտու-  
թյունը նույնիսկ չփոխվեց:

— Ըհը,— արտասանեց նա:— Վերջապես կոահեցիք:  
Ես բաց թողի նրա սերթուկի օձիքը, և գլուխս կախվեց  
կրծքիս: Խնդրում եմ, ի արդարացումն իմ բռնկումի, հիշեք,  
որ ես հիսուն տարի ծառայել եմ այս ընտանիքին: Ներողու-  
թյուն խնդրեցի խուզարկու Կաֆից, բայց, վախենում եմ, որ  
դա արեցի թաց աչքերով և ոչ այնքան վայելուչ ձևով:

— Մի վշտացեք, միստր Բեստերեշ,— ասաց խուզարկուն ալեկի մեծ բարությամբ, քան ես իրավունք ունեի սպասելու նրանից։— Եթե մենք մեր այս մասնագիտությամբ խոռովկան լինեինք, ապա ոչինչ չէինք արժենալ։ Նորից բռնե՞լ օձիքս, եթե դա կարող է որևէ շափով սփոփանք լինել ձեզ համար։ Դուք ամենեկին զաղտփար շունեք, թե ինչպես պետք է անել դա, բայց ես կներևմ ձեր անշնորհքությունը, հաշվի առնելով ձեր զգացմունքները։

Նա ծամոեց շուրթերի անկյունները, ըստ երևույթին, երկվաճիտյունով, թե հաջող կատակ արեց։ Նա նրան տարա իմ փոքրիկ աշխատասենյակի ու դուռը փակեցի։

— Ախրան ասեք ինձ, միստր Կաֆ,— սկսեցի ես,— ի՞նչ եք կասկածում դուր։ Դաժան բան կլինի հիմա դա ինձնից թաքցրնելը։

— Ես չեմ կասկածում,— պատասխանեց խուզարկու Կաֆը,— ես դիտեմ։

Տաքարյունությունս նորից սկսեց առաջ անցնել իմ ողջսխտությունից։

— Դուք, կարծես, ուզում եք պարզապես ինձ հավատացնել,— բացահանչեցի ես,— որ միսս Ռեչելը գողացել է իր սեփական ալմաստը։

— Այո,— պատասխանեց խուզարկուն,— հենց դա էլ ուզում էի ձեզ ասել։ Միսս Վերինդերը Լուսնաբարը սկզբից մինչև վերջ պահել է իր մոտ և վստահել է Ռոզաննա Սպիրմանին, որովհետև հավատացած է եղել, որ մենք գողություն մեջ կկասկածենք Ռոզաննա Սպիրմանին։ Ահա ձեզ ամբողջ գործը ափի մեջ դրած, նորից բռնեք օձիքս, միստր Բեստերեշ... Եթե դրանից թեթևություն կզգաք՝ նորից բռնեք օձիքս։

Ողորմյա՛, աստի՛ած։ Դրանից ես թեթևություն չէի զգա։

— Ցույց տվեք ինձ ձեր փաստարկները,— ահա այն բուրբ, որ կարողացա ասել նրան։

— Իմ փաստարկների մասին կլսեք վաղը,— պատասխանեց խուզարկուն։— Եթե միսս Վերինդերը հրաժարվի հետաձգել իր մտաբերող մոտ գնալը (իսկ դուք կտեսնեք, որ նա կհրաժարվի), ես հարկադրված կլինեմ վաղը ամբողջ գործը շարադրել ձեր տիրուհու Նեփելությունից։ Իսկ քանի որ ես դիտեմ, թե ինչ կարող է ստացվել դրանից, խնդրում եմ ձեզ



ներկա գտնվել և վկա լինել կատարվելիքին, Իսկ առայժմ թողնենք այդ գործը: Միստր Բեստերեջ, դուք այլևս ինձնից ոչ մի խոսք չեք լսի կուսնաքարի մասին: Ձեր ընթրիքի սեղանը պատրաստ է: Գա մարդկային բազում թուլություններից մեկն է, որը ես միշտ ներում եմ: Մինչ դուք դանդ կտաք ծառաներին՝ ես աղոթք կկարդամ:

— Բարի ախորժակ եմ ցանկանում ձեզ, միստր Կաֆ,— ասացի ես:— Ախորժակս կորավ: Ես կսպասեմ ու կհետևեմ, որպեսզի ամեն ինչ ձեզ մատուցվի ինչպես որ հարկն է, իսկ հետո, ներեցեք ինձ, կո՞նամ ու կաշխատեմ առանձնություն մեզ տիրապետել ինձ:

Ես տեսա, որ նրան ամեն ինչ մատուցեցին լավագույնը, և բոլորովին չէի ափսոսա, եթե նա խեղդվեր այդ բոլորից:

Լինելով հուզված ու դժբախտ և շունենալով մի սենյակ, որտեղ կարող էի առանձնանալ, զնայի սանդղավանդում գրոսնելու և ամեն ինչի մասին լուսթյան ու անդորրի մեջ խորհելու:

Խորհրդածություններս ընդհատեց Սամյուելը. նա մի գրություն էր բերել տիրուհուցս:

Այն ժամանակ, երբ գնում էի տուն՝ երկտողը լույսի տակ կարդալու, Սամյուելն ասաց, որ եղանակը, թերևս, կփոխվի: Իմ հուզված վիճակը խանգարել էր ինձ անձամբ նկատելու այդ: Բայց հիմա, երբ նա ուշադրությունս հրավիրեց դրավրա, լսեցի, որ շներն անհանգիստ են ու քամին կամացուկ ոռնում է: Աչքերս երկինք բարձրացնելով՝ տեսա, որ ամպերը գնալով սևանում են և ավելի ու ավելի արագորեն են ծածկում գունատ լուսինը: Մոտենում էր փոթորիկը: Սամյուելն իրավացի էր. փոթորիկ էր սկսվելու:

Գրությունս միլեղին ինձ տեղեկացնում էր, որ Ֆրիդինհոլի դատավորն իրեն գրել է երեք հնդիկների մասին: Գալիք շաբաթվա սկզբին հարկ կլինի ազատ արձակել խարդավաններին և, հետևաբար, նրանք հնարավորություն կունենան վարվելու այնպես, ինչպես կուզեն: Եթե մենք մտադիր ենք էլի ինչ-որ հարցեր տալ նրանց, ապա չի կարելի ժամանակ կորցնել: Մոռանալով այդ մասին ասել խուզարկու Կաֆի հետ հանդիպման ժամանակ, տիրուհիս այժմ ինձ հրամայում էր շտկել իր մոռացկոտությունը: Հնդիկները բոլորովին մտքիցս

թուել էին (ինչպիս որ, անկասկած, ձեր մտքից էին թուել), վերստին այդ խնդրին անդրադառնալու մեջ ես մեծ օգուտ չէի տեսնում: Բայց, անշուշտ, անմիջապես ենթարկվեցի միլեդիի հրամանին:

Խուզարկու Կաֆին գտա սեղանի մոտ՝ շոտլանդական վիսկու շիշը դիմացը, և միլեդիի գրութունը դրեցի նրա առաջ:

Այդ միջոցին ես արդեն զրեթե ատում էի խուզարկուին: Բայց, ի շահ ճշմարտության, պետք է խոստովանեմ, որ հնարամտության իմաստով դա, այնուամենայնիվ, զարմանալի մարդ էր:

Գրութունը կարդալուց կես րոպե անց նա արդեն հիշեց տեսուչ Սիգրեի զեկուցագրի այն հատվածը, որտեղ խոսվում էր հնդկկենրի մասին, և նրա սլառասխանը պատրաստ էր: Տեսուչ Սիգրեի զեկուցադրում ասված է մի նշանալիոր հնդկ ճանապարհորդի մասին, որը լավ գիտեր հնդկկենրին ու նրանց լեզուն, այնպես չէ՞: Շատ լավ: Արդյոք ես չգիտե՞մ այդ ջենտլմենի անունն ու հասցեն: Դարձյալ շատ լավ: Չեմ ուզում դրանք զրել միլեդիի գրութան հակառակ երեսին: Պարտավորված կզգամ: Խուզարկու Կաֆն ինքը Ֆրիզինհոլ մեկնելիս կանցնի այդ ջենտլմենի մոտ:

— Դուք հույս ունեք, որ ինչ-որ բան կստացվի՞ դրանից, — հարցրի ես: — Տեսուչ Սիգրեը գտնում է, որ հնդկկենրը նույնքան անմեղ են, որքան և նորածինները:

— Մինչև հիմա տեսուչ Սիգրեի բոլոր ենթադրութունները սխալ են եղել, — պատասխանեց խուզարկուն: — Վատ չէր լինի վաղը ստուգել, թե արդյո՞ք տեսուչ Սիգրեը չի սխալվել նաև հնդկկենրի հարցում:

Միջանցքում հանդիպեցի Պենելոպեին ու հարցրի, թե ինչի է սպասում ինքը:

Նա սպասում էր իր օրիորդի զանգին, որպեսզի իրիքը սլառատուր վաղվա ճանապարհորդության համար: Հետագա կարգադրութուններից պարզվեց, որ միսս Ռեչելը կամեցել է մորաքրոջ մոտ Ֆրիզինհոլ տեղափոխվել այն պատճառով, որ տունն իր համար անտանելի էր դարձել և որ ինքն այլևս չէր կարող տանել ոստիկանի նողկալի ներկայութունը իր հետ նույն հարկի տակ: Կես ժամ առաջ իմանալով, որ իր մեկնումը հետաձգվել է մինչև ժամը երկուսը, սաստիկ բար-

կացել էր: Միշեղին, որ ներկա էր եղել, խիստ նկատողություն էր արել նրան, իսկ հետո (լստ երևույթին, կամենալով մեկուսի ինչ-որ բան ասել աղջկան) Պենելոպին դուրս էր ուղարկել սենյակից: Աղջիկն շափաղանց տխրել էր մեր տան մեջ կատարված հանգամանքների փոփոխությունից:

— Ամեն ինչ ընթանում է ո՛չ այնպես, ինչպես հարկն է, հայրիկ, ամեն ինչ ընթանում է ո՛չ առաջվա պես: Ես զգում եմ, որ ինչ-որ մի ահավոր դժբախտություն է սպասում քու լորիս:

Ինքս էլ էի այդ զգում, բայց աշխատում էի կայտառ ու հանգիստ երևալ Պենելոպի ներկայությամբ: Մինչ մենք խոսում էինք՝ լսվեց միսս Ռեշիլի զանգը: Պենելոպեն վաղելով գնաց վերև՝ իրերը դասավորելու: Ես մեկ ուրիշ ճանապարհով մտա նախասրահ՝ տեսնելու, թե ինչ է ասում ծանրաչափը եղանակի փոփոխության մասին:

Երբ մոտեցա ծառաների սենյակից դեպի ներքևի սրահը տանող դռանը, այն հանկարծ բացվեց իմ դեմ-դիմաց, և վազելով իմ մոտով անցավ Ռոզաննա Սպիրմանը՝ ահավոր տառապանքի արտահայտությունը դեմքին, ձեռքը սրտին ամուր սեղմած, ասես այն ցավելիս լիներ:

— Ձեզ ի՞նչ է պատահել, սիրելիս,— նրան կանգնեցնելով՝ հարցրի ես:— Չլինի՞ հիվանդ եք:

— Ի սեր աստծո, մի խոսեք ինձ հետ,— պատասխանեց նա և, ձեռքիցս դուրս պրծնելով, փախավ դեպի ետնամուտքի սանդուղքը:

Խոհարարուհուն, որը մոտերքում էր գտնվում, խնդրեցի զնալ խեղճ աղջկա ետևից: Մոտերքում ևս երկու մարդ գտնվեց: Խուզարկու Կաֆը կամացուկ դուրս եկավ իմ սենյակից ու հարցրեց, թե ինչ է եղել: Պատասխանեցի, որ ոչինչ էլ չի եղել: Միտար Ֆրենկլինը բացեց դեպի ծառաների կողմը տանող դուռը և, ինձ նախասրահում գտնելով, հարցրեց, թե Ռոզաննա Սպիրմանին շե՞մ տեսել արդյոք:

— Նա հենց նոր վաղելով անցավ իմ մոտով, սրբ, շափաղանց հուզված դեմքով, և իրեն էլ շատ տարօրինակ էք պահում:

— Վախենում եմ, որ այդ հուզմունքի ակամա պատճառք ինքս եմ, Բետտերեջ:

— Դո՞ւք, սրբո՞ւ

— Ես դա չեմ կարող բացատրել, բայց եթե աղջիկը մասնակից է՝ ալմաստի կորչելուն, ապա կարծում եմ, որ ընդամենը երկու բույն տասջ նա պատրաստ էր խոստովանել ամեն ինչ, չգիտես ինչու, դրա համար ընտրելով ինձ:

Երբ նա մերջին բառերն էր արտասանում, ես պատահաբար նայեցի դռանը, և ինձ թվաց, թե այն ներսի կողմից մի փոքր բացվեց:

Մի՞թե ինչ-որ մեկն ականջ էր դնում այնտեղ: Երբ մոտեցա դռանը՝ այն ամուր ծածկվեց. միջանցք նայելով՝ տեսա, ինչպես ինձ թվաց, խուզարկու Կաֆի սև սերթուկի փեշերը, որ անհետացան անկյունում: Նա էլ ինձ նման լավ գիտեր, որ այլևս չի կարող հույս դնել իմ օգնության վրա այս վիճակում, ինչ վիճակում որ գտնվում է իր հետաքննությունը: Նման պարագաներում նրանից կարելի էր սպասել, որ նա ինքը իրեն օգնության կհասնի, և այն էլ հենց այդպիսի դադանի եղանակով:

Երբիլ հավատացած շինելով, որ խուզարկուին եմ տեսել, և շկամենալով փորձանքի պատճառ լինել այնտեղ, որտեղ տոանց այն էլ բավականաչափ փորձանք կար արդեն, միստո Ֆրենկլինին ասացի, որ, թերևս, շներից մեկը տուն մտավ, և խնդրեցի ինձ հաղորդել, թե ինչ էր կատարվել իր և Ռոզաննայի միջև:

Միստո Ֆրենկլինը մատնացույց արեց բիլիարդը:

— Գնդիկներն էի գլորում,— ասաց նա,— և աշխատում էի մտքիցս հանել ալմաստի հետ կապված այդ շարաբաստիկ գործը. պատահաբար գլուխս բարձրացրի, և ինձ մոտ տեսիլքի նման կանգնած էր Ռոզաննա Սպիրմանը: Նա այնքան աննկատելիորեն էր սենյակ մտել, որ սկզբում պարզապես չգիտեի, թե ինչպես վարվեմ: Տեսնելով, որ նա խիստ վախեցած է, հարցրի՝ զույն որե՞ք բա՞ն է ուզում ինձ հաղորդել: Նա պատասխանեց. «Այո, եթե համարձակվեմ»: Իմանալով, թե ինչի մեջ են կասկածում նրան, ես միայն մի իմաստով կարող էի մեկնաբանել այդ ասվածը: Խոստովանում եմ, ես անհարմար վիճակում զգացի ինձ: Չէի ուզում անկեղծության մղել այդ աղջկան: Միևնույն ժամանակ, այն դժվարին կացության մեջ, որն այժմ շրջապատում է մեզ, ես

սյարդապես իրավունք շունեի հրաժարվել նրան լսելուց, եթե նա իրոք կամենում էր ինչ-որ բան ասել ինձ: Շատ անհարմար վիճակ էր Լ, կարծեմ, ես բավականաչափ անշնորհք ձևով դուրս եկա այդ վիճակից: Նրան ասացի. «Սա ձեզ լավ չեմ հասկանում: Ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել»: Բեատեիեջ, նկատի ունեցե՛ք, ես նրա հետ խոսել եմ ամենևին էլ ոչ խիստ. խեղճ աղջիկը մեղավոր չէ, որ ինքը տղեղ է: Բիլիարդի խաղաձողը դեռ ձեռքիս էր, և ես շարունակում էի դնդիկները գլորել իմ անհարմար վիճակը թաքցնելու համար: Մինչդեռ դրանով ևս է՛լ ավելի վատացրի գործը: Կարծեմ՝ վիրավորեցի նրան, այդ անելու շնչին իսկ մտադրություն չունենալով: Հանկարծ նա շրջվեց, և ես լսեցի, թե ինչպես ասաց. «Սա բիլիարդի գնդիկներին է նայում, նրա համար հաճելի է ամեն ինչին նայել, միայն թե ոչ ինձ»: Եվ նախքան ես կկարողանայի բռնել նրան, նա դուրս փախավ: Միրոս անհանգիստ է, Բեատեիեջ... Չլի՞ք համաձայնի Ռոզաննային հաղորդել, որ ես չեմ կամեցել ո՛չ սիրալիր լինել իր հետ: Գուցեև մտքումս փոքր-ինչ խիստ եմ եղել նրա նկատմամբ. քիչ էր մնում հուսայի, որ այժմաստի կորչելը կարելի է վերագրել նրան: Ո՛չ այդ խեղճ աղջկա նկատմամբ ունեցած անբարյացակամությունից, այլ...

Այս խոսքի վրա՝ նա լռեց և շրջվելով դեպի բիլիարդը, սկսեց նորից գնդիկները գլորել:

Խուզարկուի և իմ միջև տեղի ունեցածից հետո ես էլ նրա սյես լավ գիտեի, թե ինչ էր, որ կխսատ էր թողել միստր Ֆրենկլինը:

Միսս Ռեչելին խուզարկու Կաֆի կուսկածանքներից այժմ կարող էր ազատել միայն այն հայտնագործությունը, որ Լուսնաբարը գողացել է մեր երկրորդ աղախինը: Այժմ հարցը վերաբերում էր ո՛չ իմ օրիորդի նյարդային գրգռվածությունը հանգստացնելուն: Հարցը վերաբերում էր նրա անմեղությունը ապացուցելուն: Եթե Ռոզաննան ոչ մի բանով վարկարկած չլիներ իրեն, ապա միստր Ֆրենկլինի տաժած հույսը, ինչպես ինքը խոստովանեց, խղճի մտքը դաժան կլիներ նրա նկատմամբ: Բայց բանն այդպես չէր: Ռոզաննան հիվանդ էր ձեռքեր և թաքուն գնացել էր Ֆրիդլինհուլ: Ամբողջ գիշեր չէր քնել և գաղտնի ինչ-որ բան էր անում կամ ոչնչացնում: Այդ

երեկո նա նաև Երեւոն ավաւններ էր գնացել շատ կասկածելի հանգամանքներում, եթե ավելին ասելու չլինենք: Այս բոլոր պատճառներով էլ (որքան էլ խղճում էի Ռոզաննային) ես չէի կարող շմտածել, որ այդ գործի նկատմամբ միստր Ֆրենկլինի հայացքը բնական էր ու հասկանալի:

Այդ մասին ասացի նրան:

— Այո-այո՛, — պատասխանեց նա: — Բայց դեռևս հուշակա, իհարկե, շատ շնչին, որ Ռոզաննայի վարմունքը կարող է այնպիսի բացատրութիւն ունենալ, որն առայժմ մենք չենք տեսնում: Բետտերեջ, ես չեմ կարող տանել, երբ կանանց վիրավորում են: Այդ խեղճ աղջկան հաղորդեք այն, ինչ որ ձեզ խնդրեցի: Եթե նա ցանկանա խոսել ինձ հետ, միևնույն է, այդ պատճառով ես փորձանքի մեջ կընկնեմ, թե չէ, նրան ուղարկեք ինձ մոտ՝ գրադարան:

Այս բարի խոսքերն ասելով՝ նա ցած դրեց խաղաձողն ու գնաց:

Մտռաների սենյակում հարցուփորձելով՝ իմացա, որ Ռոզաննան գնացել է իր սենյակը, մերժելով խոհարարուհու առաջարկած ամեն օգնութիւն և խնդրելով միայն մի բան. որ իրեն հանգիստ թողնեն: Որեւէ մեկին նրա խոստովանելու հարցն այսօր օրակարգից հանվել էր: Այդ մասին հաղորդեցի միօտր Ֆրենկլինին, որն այնուհետև թողեց գրադարանն ու գնաց քնելու:

Լույսերն էի հանգցնում ու լուսամտուները փակում, երբ ինձ մոտ եկաւ Սամյուելն ու ասաց, որ միստր Կաֆն անհետացել է: Տան ներքեի հարկում ոչ մի տեղ նրան գտնել հնարավոր չեղավ: Մտա իմ սենյակը: Միանգամայն ճիշտ է. այնտեղ ոչ ոք չկար. գտա միայն մի դատարկ բաժակ և տաք փոնջի սուր հոտ վաացի: Գուցե խուղարկուն գնացել է իր համար պատրաստված ննջասենյակը: Գնացի վերև նայելու:

Երբ երկրորդ սանդղահարթակին էի հասել՝ ձախից հանգիստ ու համաչափ շնչառութիւն լսեցի: Սանդղահարթակի ձախ կողմում միջանցքն էր, որը հաղորդակցվում էր միսս Ռեչելի սենյակի հետ: Ներս նայեցի, և այնտեղ, միջանցքի լայնքով գրված երեք աթոռների վրա կծկված, ալեխառն մազերով գլուխը գրպանի կարմիր թաշկինակով կապած, քնած

էր խուզարկու Կաֆը, բարձի փոխարէն գլխի տակ իր սև սեր-  
թուկը դրած:

Հենց որ մոտեցա՛ նա անմիջապէս արթնացավ շան պես  
կամացուկ:

— Բարի գիշեր, միստր Բեռտերը, — ասաց նա:

— Ի՞նչ էք անում այստեղ, — հարցրի ես: — Ինչո՞ւ ան-  
կողմում շէք պառկել:

— Անկողնում շէմ պառկել, — պատասխանեց խուզարկուն, —  
որովհետև պատկանում եմ այս սղորմելի աշխարհի այն բու-  
զում մարդկանց թվին, որոնք շեն կարողանում իրենց փողը  
վաստակել հեշտությամբ և միաժամանակ ազնւորներու Հան-  
գամանքների տարօրինակ բերումով Ռոզաննա Սպիրմանի  
Նրերուն ավազներից վերադառնալը համընկալ միսս Վերին-  
դերի՛ տնից գնալու որոշման հետ: Ինչ էլ որ թաքցրած լիներ  
Ռոզաննան, ինձ համար պարզ է, որ ձեր երիտասարդ օրիոր-  
դը չէր կարող մեկնել, մինչև շիմանար, թէ այդ ինչ է թաքցը-  
ված: Նրանք արդեն հասցրել են խոսել իրար հետ: Իսկ եթե  
նրանք որոշեն մեկ անգամ ևս խոսել, երբ տանն ամեն ինչ  
կխաղաղվի, ես ուզում եմ խանգարել դրան: Հայհոյքը ո՛չ  
ինձ, որ ես խախտել եմ ննջասենյակի հետ կապված ձեր կար-  
գադրութունները, միստր Բեռտերեջ, հայհոյքը այժմաստին:

— Կուղեի, որ այդ արմատը երբևէ ընկած չլիներ մեր  
տունը, — դուրս թռավ իմ բերանից:

Խուզարկու Կաֆը դեմքի խղճալի արտահայտությամբ նա-  
յեց երեք աթոռներին, որոնց նա ինքն իրեն դատապարտել էր  
այդ գիշեր, և լրջորեն պատասխանեց.

— Ես էլ:

## Գ Լ Ո Ւ Խ XVII

Գիշերը ոչինչ տեղի չունեցավ, և (ուրախ եմ ավելացնե-  
լու) միսս Ռեչելն ու Ռոզաննան տեսակցելու ոչ մի փորձ չա-  
րեցին. խուզարկու Կաֆի զգոնությունը մնաց չփոխհատուց-  
ված:

Ես սպասում էի, որ խուզարկու Կաֆը առաւոտոյան ան-  
միջապէս կմեկնի Ֆրիդլինհոլ: Սակայն նա ուշացավ, ասուս

նախքան գնալն ուզում էր ինչ-որ մի օրիչ բան անել: Կաֆրին թողեցի իր մտքերի հետ և, տնից դուրս զալով, հանդիպեցի միստր Ֆրենկլինին՝ իր սիրած ծառուղիում:

Մինչ մե՛ք կ'ապցնեինք մի երկու խոսք փոխանակել՝ խուզարկուն անսպասելիորեն մոտեցավ մեզ: Պետք է խոստովանեի, որ միստր Ֆրենկլինը շատ ամբարտավանորեն վարվեց նրա հետ:

— Ինչ-որ բա՞ն եք ուզում ասել ինձ, — ահա այն բոլորը, ինչ Կաֆն ստացավ որպես պատասխան քաղաքալարությամբ ասված իր «բարի լույսի»:

— Այո, ես ինչ-որ բան եմ ուզում ասել ձեզ, սըր, — պատասխանեց խուզարկուն, — այստեղ կատարածս հետաքրննության արիթմո: Երեկ դուք իմացաք, թե ինչ ընթացք է ստանում այդ հետաքննությունը: Շատ բնական է, որ ձեզ վիճակում դուք վիրավորվել եք ու վշտացել: Շատ բնական է նաև, որ դուք ինձ վրա եք թափում ընտանեկան կոիվները՝ հարուցած զայրույթը...

— Դուք ի՞նչ եք ուզում, — բավականաչափ խստորեն ընդհատեց միստր Ֆրենկլինը:

— Ուզում եմ ձեզ հիշեցնել, սըր, որ մինչև հիմա հանգամանքները չեն հաստատել, թե ես սխալվում եմ: Այդ նկատի ունենալով, հիշեցեք նաև, որ ես ոստիկանական աստիճանավոր եմ և գործում եմ տանտիրուհու հանձնարարությամբ: Այս կացության մեջ, ասացեք, դուք, որպես բարի քաղաքացի, պարտավոր եք, թե ոչ, սզնել ինձ այն տեղեկություններով, որ, շատ հավանական է, ունեք:

— Ես ոչ մի առանձնահատուկ տեղեկություն չունեմ, — պատասխանեց միստր Ֆրենկլինը:

Խուզարկու Կաֆը չսեղու տվեց այդ պատասխանը, ատես միստր Ֆրենկլինն ամենևին ոչինչ ասած չլիներ:

— Դուք կտրող եք խնայել իմ ժամանակը, սըր, չհարկադրելով ինձ այս ու այն տեղից անհարկավոր տեղեկություններ հավաքել, — շարունակեց նա, — եթե կամենաք հասկանալ ինձ և անկեղծորեն արտահայտվել:

— Ես ձեզ չեմ հասկանում, — պատասխանեց միստր Ֆրենկլինը, — և ասելիք էլ չունեմ:





— Սպասուհիներից մեկը, շեմ ուզում անունը տալ, երեկ առանձնություն մեջ խոսել է ձեզ հետ:

Նվ նորից միտար Ֆրենկլինը բնդհատեց նրան, և նորից միտար Ֆրենկլինը պատասխանեց՝ «ես տեսիլք չունեմ»:

Առանց ձայն հանելու նրանց մոտ կանգնած՝ հիշեցի նախորդ օրը թիթևակի բացված դուռը և սերթուկի փեշերը, որ տնհետացել էին միջանցքում: Խուլարկու Կաֆը, անկասկած, մինչև այն պահը, որ ես խանգարեցի նրան, բավականաչափ բան էր լսել և իրավունք ուներ կասկածելու, որ Ռոզաննան, միտար Ֆրենկլին Բլեկին ինչ-որ բան խոստովանելով, թեթևացրել է իր հոգին:

Նոր էր այս բանը մաքուլս անցել, երբ անցուղու ծայրին հայտնվեց ինքը Ռոզաննա Սպիրմանը: Նրա ետևից գալիս էր Պենելոպեն, ըստ երևույթին, աշխատելով ստիպել, որ նա տուն վերադառնա: Տեսնելով, որ միտար Ֆրենկլինը մենակ չէ՝ Ռոզաննան կանգ առավ, ասես ատրակուսելով, քե ինչ անի հե-

տու Պենելոպեն սուգասում էր՝ նրա ետևում կանգնած: Միստր Ֆրենկլինը աղջիկներին նկատել էր ինձ հետ միաժամանակ: Խուզարկուն դիվային խորամանկությամբ ձևացրեց, թե իբր ինքը չի նկատել: Այս ամենը կատարվեց մի ակնթարթում: Մինչ ես ու միստր Ֆրենկլինը կհասցնեինք որևէ խոսք ասել՝ խուզարկու Կաֆր, կարծես ոչինչ չէր պատահել, իբր շարունակելով սկսված խոսակցությունը, բարձրաձայն ասաց այնպես, որպեսզի Ռոզաննան կարողանար իրեն լսել:

—Սըր, դուք որևէ մեկին վնաս հասցրած չիսելու համար վախենալու պատճառ չունեք: Ընդհակառակը, եթե դուք հոգում եք Ռոզաննա Սպիրմանի մասին՝ խնդրում եմ ինձ արժանացնել ձեր վատահոյությանը:

Միստր Ֆրենկլինն անմիջապես ձևացրեց, թե ինքը նույնպես չի նկատել աղջկան: Նա նույնպես բարձրաձայն պատասխանեց:

—Ես ամենևին հոգ չեմ տանում Ռոզաննա Սպիրմանի մասին:

Նայելով անցուղու մյուս ծայրին՝ տեսա, թե ինչպես Ռոզաննան հանկարծ ետ շրջվեց, երբ միստր Ֆրենկլինը արտաբերեց այս բառերը: Պենելոպեն դիմադրելու փոխարեն, ինչպես նա այդ անում էր ընդամենը մեկ րոպե առաջ, այժմ թույլ տվեց, որ աղջիկս թևանցուկ անի իրեն ու տանի տուն:

Հնչեց առաջին նախաճաշի զանգը, և այժմ Կաֆր ստիպված էր հրաժարվել որևէ բան իմանալու հետագա փորձերից: Նա հանգիստ ասաց ինձ.

—Ես մեկնում եմ Ֆրիզինհոլ, միստր Բետտերեջ, և կվերադառնամ մինչև կեսօրվա ժամը երկուսը:

Այլևս ոչ մի խոսք չասելով՝ նա ճանապարհ ընկավ, և մենք մի բանի ժամով ազատվեցինք նրանից:

—Դուք պետք է սա բացատրեք Ռոզաննային, — ասաց ինձ միստր Ֆրենկլինը՝ հենց որ մենք մենակ մնացինք: — Ծակատագիրն ասես նախատեսել էր, որ ես անհարմար բաներ ասեմ կամ անեմ այդ թշվառ աղջկա ներկայությամբ: Ինքներդ տեսաք, որ Կաֆր ծուղակ էր սարքել երկուսիս համար: Եթե նա հասներ այն բանին, որ խճճեր ինձ կամ էլ ջղազրգոթեր Ռոզաննային, ապա նա կարող էր ստիպել ինձ կամ Ռոզաննային ասելու այնպիսի մի բան, որը կհամապատասխաներ իր նպատ-

տակին: Բոսպէի ազդեցութեան տակ եւս ավելի լավ ելք չգտա, քան այն, որ ընտրեցի: Գրանով եւս խանդարեցի, որ աղջիկըն ավելորդ բաներ ասի, և խուզարկուին հասկանալ տվի, որ իր մտքինը հասկանում եմ: Բնատերեջ, նա, ըստ երևույթին, ականջ է դրել, երբ երեկ զրուցել ենք եւս ու դուք:

«Ականջ դնելը քիչ է, ավելի վատ բան է արել,—մտածեցի հաստ—խուզարկուն հիշել էր իմ այն սասածը, որ աղջիկը սիրահարված է միտք Գրենկլինին, և դիտաւորչալ կերպով Ռոզաննայի նկատմամբ միտք Գրենկլինի հոգատարութեան մասին այդպես բարձրաձայն խոսեց, որպէսզի Ռոզաննան կարողանար լսել նրա պատասխանը»:

—Ինչ ականջ դնելուն է վերաբերում, սրբ,—նկատեցի եւս (երկրորդ եզրակացութիւնը թողնելով մտքումս),— բոլորս էլ, ինչպես ասում են, դժբախտութեան ընկերներ կղաղնանք, եթե այդպիսի բաները սրանից հետո էլ շարունակվեն: Թաքուն նայելը, գողունի հետևելը, ականջ դնելը բնական զբաղմունքն է մեր այժմյան վիճակում գտնվող մարդկանց: Ես չեմ մոռանա այն, ինչ ինձ ասացիք: Առաջին իսկ առիթից կօգտարվեմ, որպէսզի ամեն ինչ բացատրեմ Ռոզաննա Սպիրմանին:

—Նրան դեռ ոչինչ չե՞ք ասել անցյալ երեկոյի մասին,—հարցրեց միտք Գրենկլինը:

—Ոչինչ, սրբ:

—Եվ ոչինչ էլ մի ասեք: Ավելի լավ է շարունակեմ աղջկա խոստովանութիւնը, և այն էլ, երբ խուզարկուն անհամբեր սպասում է, որ մեզ բռնացնի երկուսով: Իմ վարվելակերպն այնքան էլ հետևողական չէ, Բնատերեջ, այնպես չէ: Եթե ամառը Ռոզաննայի մոտ չլինի, ես չեմ պատկերացնում, թե ինչպես ենք դուքս գալու այս վիճակից, որի մասին հնարավոր չէ առանց սարսափի մտածել: Մինչդեռ ես չեմ կարող և չեմ ուզում օգնել խուզարկու Կաֆին՝ մերկացնելու այդ աղջկան:

Անկասկած, բավականաչափ անտրտմաբանտկան է: Բայց թե ես էլ էի նույն բանը զգում: Ես լիովին հասկանում էի նրան: Եվ, եթե կյանքում դոնե մեկ անգամ հիշեք, որ դուք մահկանացու եք, գուցե դուք էլ լիովին հասկանաք նրան:

Մինչ խուզարկուն Գրիպինհոլ էր մեկնել՝ մեր տանը և տնից դուրս իրավիճակը համառոտակի հետևյալն էր:

Միսս Ռեչելը, համառորեն փակված իր սենյակում, սպա-

սում էր, թե երբ կառք կմասուցեն իրեն՝ մտրաբոջ մոտ մեկ-  
նելու համար: Միլեդիին և միստր Ֆրենկլինը նախաճաշեցին  
երկուսով: Նախաճաշից հետո հանկարծ միստր Ֆրենկլինն  
ընդունեց իր անտկենկալ վճիռներից մեկը՝ սրբնթաց դուրս ե-  
կավ տնից, որպեսզի բավականաչափ երկարատև զբոսանքով  
հանդատացնի իր նյարդերը: Միայն ես տեսա, թե ինչպես նա  
գնաց. նա ինձ հաղորդեց, որ կգա մինչև խուզարկուի վերա-  
դառնալը: Եղանակը, ինչպես և ենթադրում էինք նախօրյակին,  
փոխվել էր: Տեղատարափ անձրևից հետո վաղ լուսաբացին  
ուժեղ քամի փչեց: Ամբողջ օրը զով էր ու քամոտ: Բեռն առաջ-  
վանից ավելի մուսլ ամպեր էին կախվել, անձրև չկար: Սո-  
վից փչող քամու ուժեղ պոռթկումներին դիմացող, երիտասարդ  
և առողջ մարդու զբոսանքի համար եղանակը վատ չէր:

Նախաճաշից հետո ևս միլեդիին օգնեցի աչքի անցկաց-  
նելու մեր տնային հաշիվները: Խոսակցության մեջ նա մի-  
այն մեկ անգամ անդրադարձավ հետաքննությունը և այն էլ  
նրա համար, որպեսզի արգելի այդ մասին խոսել:

—Սպասեցեք մինչև վերադառնա այդ մարդը,—ասաց նա,  
նկատի ունենալով խուզարկուին,— այն ժամանակ պարտա-  
վոր կլինենք խոսել այդ մասին: Այժմ ոչ ոք մեզ չի ստիպում  
այդ անել:

Միլեդիից բաժանվելով՝ իմ սենյակում գտա Պենելոպին,  
որ ինձ էր սպասում:

—Հայրիկ, ինչդրում եմ, զնացեք խոսեք Ռոզաննայի հետ,—  
ասաց նա,—շատ եմ անհանդստանում նրա համար:

Սա շատ լավ էի հասկանում, թե ինչն-ինչոց է: Բայց իմ  
սկզբունքն է, որ սղամարդիկ, որպես բարձրագույն էակներ,  
կանանց վրա ազդեն որտեղ որ դա հնարավոր է: Եթե կինն  
ուզում է ինձ ստիպել, որ ես որևէ բան անեմ (աղջիկս, թե մեկ  
ուրիշը, դա նշանակութուն չունի), ևս միշտ ուզում եմ իմա-  
նալ՝ ինչի՞ համար: Որքան ավելի հաճախակի ստիպեք նրանց  
ուղեղները շարժել, իմաստ փնտրելով, այնքան ավելի համա-  
կերպվող կգտնեք նրանց ամբողջ կյանքի ընթացքում: Այդ  
խեղճ արարածների մեղքը չէ, որ նրանք նախ գործում են,  
իսկ հետո նոր միայն հասկանում: Դա նրա՛նց մեղքն է, ովքեր  
հիմարի պես դրդում են նրանց: Տվյալ առիթով Պենելոպեի

բերած պատճառը հաղորդում եմ նրա խոկ սեփական բառերով:

— Հայրիկ, վախենում եմ, որ միտքը Զրենկլինը, իր կամքին հակառակ, խիստ վիրավորել է Ռոզաննային:

— Իսկ ինչո՞ւ է Ռոզաննան դնացել այդ ծառուղին, — հարցրի ես:

— Իր խենթության պատճառով, — պատասխանեց Պենելոպին, — ուրիշ անուն տալ չեմ կարող: Նա կամեցել է ինչ գնով ուզում է լինի այսօր սուսվոսյան խոտել միտքը Զրենկլինի հետ: Ես ամեն ջանք գործադրեցի Ռոզաննային ետ պահելու, ինքներդ այդ տեսաք: Եթե կարողանայի նրան հեռացնել՝ նախքան նա կլսեր այդ ահավոր բառերը:

— Բավական է, բավական է, — սասցի ես: — Մի շափազանցրու Առանձնապես այնպիսի բան չի եղել, որից Ռոզաննան կարողանար հուսահատություն մասնվել:

— Առանձնապես բան չի եղել, հայրիկ, միայն միտքը Զրենկլինն ասել է, թե ոչ մի հոգոտարություն չի ցուցարկերում նրա նկատմամբ և, ա՛խ, այնքան դաժան ձևով:

— Նա այդ ասել է, որպեսզի փակի խուզարկուի բերանը:

— Ես սասցի Ռոզաննային, բայց, հայրիկ, միտքը Զրենկլինը (հիշո՛ւ է, իր կամքին հակառակ) արդեն շաբաթներ շարունակ ստորացրել ու վշտացրել է Ռոզաննային, և ի լրումն այդ բոլորի՝ նաև սա: Ռոզաննան ինձ պարզապես սարսափեցրեց, հայրիկ, երբ միտքը Զրենկլինն սասց այդ բառերը: Դրանք լսելով՝ Ռոզաննան տես քորացալ: Իսկ հետո հանկարծ դարձավ արտակարգ հանգիստ և այդ պահից սկսած շարունակում է աշխատել ասես ընի մեջ:

Ես տազնապ դպացի: Պենելոպեի ձայնի մեջ կար մի բան, որն իմ դատողությանը ստիպեց լռել: Ես հիշեցի, թե երեկ ընկալարդանոցում ինչ էր տեղի ունեցել միտքը Զրենկլինի և Ռոզաննայի միջև: Այն ժամանակ ազդիկը խոցվել էր մինչև հոգու խորքը, իսկ հիմա, դժբախտաբար, նորից դիպել էին խեղճ աղջկա ամենազգայուն տեղին:

Ես միտքը Զրենկլինին խոստացել էի խոսել Ռոզաննայի հետ, և հիմա հասել էր ամենահարմար պահը, որ խոստումս կատարեի:

Ռոզաննան, հապին իր շիկ համետ ողբատը, միջանցքն էր

ալլում. դունատ էր ու հանդիստ և, ամեն անգամվա պես, խը-  
նամբով հարդարված: Միայն թե աչքերը տարօրինակ կերպով  
խամբած էին. ոչ թե լացակումած էին, այլ կարծես շատ սևե-  
ռուն ինչ-որ բանի էին նայում: Գուցե դա մշուշ էր՝ սեփական  
մտքերից առաջացած: Իհարկե, նրա շուրջը չկար ոչ մի այնպի-  
սի բան, որ նա հարյուր անգամ, հազար անգամ տեսած չլիներ:

— Ռոզաննա, հապա մի բարձրացրեք ձեր գլուխը, — ասա-  
ցի ես: — Ձեզ մի տանջեք սեփական երեակայություններով:  
Նկեզ եմ ձեզ որոշ բաներ հաղորդելու միտք Ֆրենկլինի կող-  
մից:

Նա այս տեսակետից ամեն ինչ շարադրեցի նրան ամենա-  
բարյացակամ ու հանգստացնող բառերով, որպիսիք կարող  
էի մտածել: Թույլ սևովին վերաբերող իմ սկզբունքները՝ ինչ-  
պես արդեն կարող եք նկատած լինել, շատ խիստ են: Բայց,  
չգիտեմ ինչու, երբ կանգնում եմ կանանց դեմ առ դեմ, այդ  
սկզբունքները, խոստովանում եմ, գործնականում չեն կի-  
րառվում:

— Միտք Ֆրենկլինը շատ բարի է և ուշադիր, խնդրում եմ,  
չնորհակալություն հայտնեք նրան:

Ահա այն բոլորը, ինչ ասաց նա ինձ, որպես պատասխան:  
Աղջիկս արդեն նկատել էր, որ Ռոզաննան իր գործերով զը-  
բազվում էր ինչպես քնի մեջ. ավելացնեմ, որ նա և՛ լսում,  
և՛ խոսում էր նույնպես, ինչպես քնի մեջ: Արդյո՞ք նա հաս-  
կացել էր իմ ասածները, կասկածում եմ:

— Ռոզաննա, հավատացած եք, որ հասկանում եք իմ ա-  
սածը, — հարցրի ես:

— Միանգամայն հավատացած եմ:

Նա այս կրկնեց ո՛չ որպես կենդանի կին, այլ որպես մի  
լարովի տիկնիկ: Խոսելու հետ միաժամանակ շարունակում  
էր ավելի միջանցքը: Նա նրա ձեռքից վերցրի խոզանակը այն-  
պես մեղմորեն ու քնքուշ, ինչպես որ կարող էի:

— Բավական է, բավական է, սիրելիս, — ասացի, — կարծես  
ձեզ կորցրած լինեք: Ինչ-որ բան է տանջում ձեզ: Սա ձեր բա-  
րեկամն եմ և ձեր բարեկամը կոմսոմ, նույնիսկ եթե որևէ մեղք  
ունեք: Անկեղծ եղեք ինձ հետ, Ռոզաննա, անկեղծ եղեք:

Կար ժամանակ, երբ, այս ձևով հետը խոսելիս, արցունք-

ներ կհայտնվեին նրա աչքերում: Հիմա ես ոչ մի փոփոխու-  
թյուն չտեսա:

—Այո,— մեխանիկորեն արտաբերեց նա,— ես ամեն ինչ  
անկեղծորեն կպատմեմ:

—Միլեդիի՞ն:

—Ոչ:

—Միստր Ֆրենկլինի՞ն:

—Այո, միստր Ֆրենկլինին:

Ես չգիտեի ինչ պատասխանեմ նրա այս սասածին: Ես այն-  
պիսի վիճակում էր, ոչ մի կերպ չէր կարողանա հասկանալ  
միստր Ֆրենկլինի հետ առանձնակի շխտակու այն նախազգու-  
շացումը, որ Ֆրենկլինն ինձ խորհուրդ էր տվել ասել նրան  
Փորձելով աննկատելիորեն անել իմ հաջորդ քայլը, ես Ռո-  
զաննային ասացի, որ միստր Ֆրենկլինը դուրս է եկել զբոս-  
նելու:

—Դա միևնույն է,— պատասխանեց նա,— այսօր ես այլ-  
ևս չեմ անհանգստացնի միստր Ֆրենկլինին:

—Իսկ ինչո՞ւ չեք ուզում խոսել միլեդիի հետ,— հարցրի  
ես:— Ձեզ հետ միշտ սրտանց վերաբերվող կարեկից տիրու-  
հո: Հետ դրուցելով, դուք կթեթևացնեիք ձեր հոգին:

Ռոզաննան լուրջ ու սևեռուն հայացքով մի պահ ինձ նա-  
յեց, կարծես աշխատելով հիշողության մեջ դրոշմել սասած-  
ներս: Հետո ձեռքիցս վերցրեց խողանակը և դանդաղ քայլեց  
միջանցքի երկարությամբ:

— Ոչ,— ասաց նա, շարունակելով ավելի,— հոգիս թե-  
թևացնելու ավելի լավ ձև գիտեմ:

—Ինչպիսի՞ն:

—Խնդրում եմ՝ թույլ տաք շարունակել աշխատանքս:

Պենեկլուպեն զնաց նրա հոտից, առաջարկելով իր օգնու-  
թյունը:

Ռոզաննան պատասխանեց.

—Ոչ, Ինքս եմ ուզում ավարտել իմ աշխատանքը: Ծնոր-  
հակալ եմ, Պենեկլուպե:

Հետո նայեց ինձ:

—Ծնորհակալ եմ, միստր Բեստերեզ:

Ոչնչով հնարավոր չէր շարժել նրա սիրտը, նրա հետ խո-  
սելու բան չկար: Ես նշան արեցի, որ Պենեկլուպեն գա ինձ հետ:

Մենք թողեցինք նրան, ինչպես որ գտել էինք, ասես քնի մեջ սիջանցքն ավլելիս:

— Սա մեր բժշկի գործն է,— ասացի ևս,— այստեղ մենք անզոր ենք:

Ազգիկս ինձ հիշեցրեց, որ միտոր Կանգին հիվանդ է, գուցե հիշում եք, գեոես այն երեկոյից, մեզ մոտ տրված հրավիրովի ճաշկերույթից հետո: Նրա օգնականը, ոմն միտոր էզրա Ջենինգըսը, անշուշտ մեր տրամագրության տակ էր, բայց թե մեր կողմերում քշերն էին նրան ճանաչում:

Որոշեցի խոսել միլեդիի հետ: Բայց միլեդին միսս Ռեչելի հետ փակվել էր սենյակում: Ես չէի կարող նրան տեսնել մինչև որ նա դուրս չգար այնտեղից:

Երկար սպասեցի իդուր, մինչև որ շքամուտքի ժամացույցը խփեց ժամը երկուսից քառորդ պակաս: Հինգ րոպե հետո ինձ ձայն տվին տան առջևում գտնվող ճանապարհից: Ես անմիջապես ճանաչեցի այդ ձայնը. խուզարկու Կաֆր վերադարձել էր Ֆրիդինհոլմից:

## Գ Լ Ո Ւ խ XVIII

Մոտենալով շքամուտքի դռանը՝ խուզարկուին հանդիպեցի արդեն սանդուղքի աստիճանների վրա:

Մեր միջև անդի ունեցածից հետո չէի ուզում որևէ հետաքրքրություն ցուցաբերել նրա գործերի նկատմամբ, և, այնուամենայնիվ, այդ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ չկարողացա դիմանալ: Սևիական արժանատիությունս զգացումը թաքնվեց խորքում և դուրս թուան հետևյալ բառերը.

— Ի՞նչ նորություն կա Ֆրիդինհոլմում:

— Տեսա հնդիկներին,— պատասխանեց խուզարկու Կաֆր,— և իմացա, թե անցած հինգշաբթի քաղաքում ինչ է թաքուն զննել Ռոզաննան: Հնդիկներն ազատ կարձակվեն զալիք չորեքշաբթի: Ես ամենեին չեմ կասկածում, ինչպես նաև միտոր Մերտուետը չի կասկածում, որ նրանք այստեղ են եկել լուսնաքարը գողանալու: Սակայն նրանց հաշիվները խառնել է չորեքշաբթի գիշերը այստեղ կատարվածը, և նրանք նույնքան քիչ են մասնակից արմատի կորչելուն, որքան և դուք:



Բայց մի բան կարող եմ ձեզ ասել, միտոր Բեռտերեջ. եթէ  
Նունաքարը շղտնենք մենք, ապա կգտնեն նրանք: Դուք գեւ  
կլսեք այդ երեք աճպարարների մասին:

Երբ խուզարկուն արտասանում էր այս վարմանայի խոս-  
քերը՝ միտոր Ֆրենկլինն այդ պահին վերադառնում էր զրո-  
սանքից: Իր հետաքրքրասիրությունը հաղթահարելով շատ  
ալկիլի լավ, քան ես կարողացա այդ անել, նա անցավ մեր մո-  
տով և մտավ տուն: Մինչդեռ ես, սեփական արժանապատ-  
ւությունս մեկ անգամ զոհարեիւած լինելով, որոշեցի լիովին  
օգտվել զոհարեությունից:

— Դա հնդիկների մասին. իսկ ի՞նչ կա Ռոզաննայի հաշ-  
վով:

Խուզարկու Կաֆը գլուխը տարուբերեց:

— Այդ տեսակետից գաղտնիքն առաջվանից ավելի մութ  
է: Ֆրիդինհոլում նրան հետեւեցի մինչև այն խանութը, որ  
պատկանում է կտավ վաճառող Մոլթրի անունով մեկին: Ռո-  
զաննան ոչինչ չի գնել ուրիշ խանութներում՝ ոչ մահուկ վա-  
ճառուղիներից, ոչ գերձակներից, ոչ էլ գերձակուհիներից: Մոլթ-  
րիի խանութից էլ կտավ է գնել միայն և հատկապես հետա-  
քրքրվել է զրա որակով: Իսկ ինչ վերաբերում է քանակին, ապա  
վերցրել է այնքան, որ բավարարի մի գիշերանոցի համար:

— Ո՞ւմ գիշերանոցի:

— Անշուշտ՝ իր սեփական: Հինգշաբթի օրը կեսգիշերի և  
առավոտովա ժամը երեքի արանքում, մինչ բուրս քնած ենք  
և զԼԼ, նա, թերևս, անցել է իր օրիորդի սենյակը, որպիսով նրա  
հետ պայմանավորվի, թե որտեղ պահի Լուսնաքարը: Այնտե-  
ղից վերադառնալիս գիշերանոցի փեշը դիպել է նոր ներկած  
ղոտնը: Բիծը լվանալու հնարավորություն չի ունեցել, չի էլ  
համարձակվել ոչնչացնել գիշերանոցը, քանի որ չի ունեցել մեկ  
ուրիշը, ճիշտ դրա նմանը, որպիսով իր սպիտակեղևը պա-  
կաս չլինի:

— Ի՞նչ ապացույց ունեք, որ այդ գիշերանոցը Ռոզաննա-  
յինն է:

— Փոխելու համար նրա գնած կտորը, — պատասխանեց  
խուզարկուն: — Եթե խոսքը վերաբերեր միսս Վերինդերի գի-  
շերանոցին, ապա նա պետք է գնած լիներ ժանյակներ, բու-  
լորածալեր և, աստված գիտե, թե էլ ինչ, ու չէր հասցնի Կա-

րել մի գիշերվա ընթացքում: Հասարակ կտալը նշանակում է սպասուհու հասարակ գիշերանոց: Ոչ, ոչ, միստր Բետտերեզ, այդ բոլորը շատ պարզ է: Դժվարը հետևյալ հարցին պատասխանելն է. ինչո՞ւ նոր գիշերանոց կարելուց հետո նա ներկատածը թաքցրել է՝ փոխանակ ոչնչացնելու: Եթե աղջիկը չկամենա բացատրություն տալ, ապա այդ հանելուկը լուծելու միայն մի եղանակ կա՝ խուզարկել Երեբուն ավազները: Եվ այն ժամանակ ճշմարտությունը երևան կգա:

— Իսկ ինչպե՞ս կգտնեք իսկական տեղը, — հարցրի ես:

— Յավում եմ, որ չեմ կարող գոհացնել ձեր հետաքրքրասիրությունը, — ասաց խուզարկուն: — Բայց դա մի գաղտնիք է, որը ես մտադիր եմ պահել իմ մեջ:

Ձեր հետաքրքրությունը չգրգռելու համար, ինչպես որ նա գրդուց իմ, այստեղ նախապես ասեմ, որ նա Ֆրիդլինհոլցի վերադարձել էր խուզարկություն կատարելու թույլտվությամբ: Նման գործերում ունեցած փորձը նրան հուշել էր, որ Ռոզաննան, ամենայն հավանականությամբ, իր մոտ թղթի վրա նշած ունի այն տեղը, որտեղ ինքը թաքցրել է իրը, այն պարագայի համար, եթե ինքը ստիպված լինի փոփոխված հանգամանքներում այնտեղ վերադառնալ նաև երկար ժամանակից հետո: Այդ թուղթը ձեռք գցելով՝ խուզարկուն կունենար այն ամենը, ինչ իրեն հարկավոր էր:

— Իսկ հիմա, միստր Բետտերեզ, — շարունակեց նա, — եկեք թողնեք ենթադրությունները և անցնեք գործի: Ես Ջոյսին հանձնարարել եմ հետևել Ռոզաննային: Որտե՞ղ է Ջոյսը:

Ջոյսը Ֆրիդլինհոլցյան այն ոստիկանն էր, որին տեսուչ Միդլերը թողել էր խուզարկու Կաֆի տրամադրություն տակ: Այն պահին, երբ նա այդ հարցը ինձ տվեց՝ խփեց ժամը երկուսը: Եվ ճիշտ նշանակված ժամին մոտեցավ կառքը՝ միսս Ռեչելին իր մորաքրոջ մոտ տանելու համար:

— Երկու գործ միանգամից չես անի, — խոսեց խուզարկուն, ինձ կանգնեցնելով այն պահին, երբ ես ուղում էի գնալ Ջոյսին գտնելու — նախ և առաջ պետք է դբազվել միսս Վերինսգերով:

Քանի որ երկինքն առաջվա պես մռայլ էր՝ միսս Ռեչելի համար մատուցեցին ծածկակառք: Խուզարկու Կաֆը Սամ-

յուելին նշան արեց, որ կառքի ետնամասից իջնի և մոտենա իրեն:

— Իմ բարեկամներից մեկն սպասում է ծառերի ետևում, դարպասին շհասած,— ասաց նա:— Այդ բարեկամը, անանց կառքը կանգնեցնելու, կթռչի և տեղ կգրավի կառքի ետնամասում: Դուք պետք է ձեռք քաշած պահեք ձեր լեզուն և փակեք ձեր աչքերը, հակառակ դեպքում՝ անախորժություններ կունենաք:

Այսպիսի խորհուրդ տալով՝ նա ծառային ուղարկեց իր անդր: Թե այդ մասին ինչ մտածեց Սամյուելը՝ ես չգիտեմ: Բայց ինձ համար պարզ էր, որ միսս Ռեչելի նկամամբ գալունի հսկողություն կահմանվի մեր տնից դուրս գալուց անմիջապես հետո, եթե նա դուրս դա: Հսկողություն իմ օրիորդի նրկատմամբ: Կրտսեր կանգնած է Ռեչելի թիկունքում՝ նրա մոր կառքի ետնամասում: Ես պատրաստ էի լեզուս կտրել այն բանի համար, որ ինձ կորցրել էի ու խոսքի բռնվել խուղարկու կաֆի հետ:

Առաջինը տնից դուրս եկավ միլեդին: Կանգնեց հեռու, վերևի աստիճանի վրա, որտեղից կարող էր տեսնել այն ամենը, ինչ կատարվում էր: Նա ոչ մի խոսք չասաց ոչ խուղարկուին, ոչ ինձ: Շուրթերը սեղմած և ձեռքերը պահած թևիկ թիկնոցի տակ, որ ուսերին էր գցել բաց օդ դուրս գալիս, միլեդին կանգնել էր անշարժ, արձանի պես, սպասելով աղջկան:

Մեկ բուպե անց դուրս եկավ Ռեչելը՝ նազանքով հագած ինչ-որ փափուկ դեղին կտորից կարված կոստյում, որը շատ էր սաղում նրա թուխ դեմքին: Ժակետը կիպ գրկել էր իրանը: Գլխին՝ ծղոտե պճնազարդ գլխարկ՝ սպիտակ շղարշով, ձեռքերին՝ հաճարագույն ձեռնոցներ, որ երկրորդ մաշկի պես պատել էին մատները: Հրաշադեղ սև մադերը, որ դուրս էին թափվել գլխարկի տակից, ատլասի պես հարթ էին թվում: Փոքրիկ ականջները, որոնցից մարգարիտներ էին կախված, հիշեցնում էին վարդաղույն խեցիներ: Նա մոտեցավ մեզ, շիտակ՝ ինչպես շուշանը ցողունի վրա, և ճկուն՝ շարժումների մեջ, կատվաձագի պես: Իմ կարծիքով, նրա դուրեկան դեմքի վրա ոչինչ չէր փոխվել՝ աչքերից ու շուրթերից բացի: Աչքերըն ավելի փայլուն ու զայրալի էին, քան ես կուզեի, որ լինեին, իսկ շուրթերն այն աստիճան էին զրկվել իրենց գույնից ու



ժպխտից, որ ես պարզապես շճահաշեցի դրանք: Նա հասարտապ համբուրեց մոր աչար, ասելով. «Մաշրիկ, աշխատեցեք ներև ինձ», և շղարշն այնքան արագորեն իջեցրեց գեմբին, որ պատուհց: Մի պահ անց՝ նա վազելով իջավ տատիճաններից ու նետովի կառքի մեջ, ասես ուզում էր թաքնվել այնտեղ:

Խուզարկու Կաֆր ճարպկութունն ցուցաբերեց իր հերթին նա մի կողմ հրեց Սամյունիին և, բաց գոնակը բռնելով, միտս Ռեշելի առջև կանգնեց այն պահին, երբ սա նստեց իր տեղը:

— Ի՞նչ եք ուզում,— շղարշի տակից հարցրեց միաս Ռեշելը:

— Ուզում եմ, միտս, մի խոսք ասել ձեզ՝ ձեր մեկնելուց

առաջ,—պատասխանեց խուզարկուն:—Ես չեմ համարձակվի արդեւել ձեզ մեկնելու ձեր մորաքրոջ մօտ, ես կարող եմ մի-  
այն համարձակվել ասել, որ ձեր մեկնումը, այս կացութիւն  
մեջ, վարող է խանգարել ինձ՝ գանձու ալմաստը: Հասկացե՞ք  
սա և ինքներդ վճռեք՝ մեկնե՞լ, թե մնալ:

Միսս Ռեչելը նույնիսկ չպատասխանեց նրան:

—Շարժվե՛ք, Զեմս,—ձայն տվեց նա կառուպանին:

Այլևս ոչ մի խոսք չասելով՝ կառուպանը ծածկեց կառքի  
դռնակը: Այն պահին, երբ նա դռնակն էր ծածկում, միսոր  
Ֆրենկլինը վազելով իջավ աստիճաններից:

—Մնաք բարով, Ռեչել,— ասաց նա, ձեռքը մեկնելով նրան:

—Շարժվե՛ք,— առաջվանից ավելի բարձր ձայնով կանչեց  
Ռեչելը, ուշադրութուն չդարձնելով միսոր Ֆրենկլինի վրա,  
ինչպես որ ուշադրութուն չէր դարձրել խուզարկու Կաֆի վրա:

Միսոր Ֆրենկլինը շանթահարվածի պես հտ-հտ գնաց:  
Կառուպանը, շիմանալով ինչ անել, նայեց միլեդիին, որը դեռ  
անշարժ կանգնած էր սանդուղքի ամենավերին աստիճանին:  
Տիրուհիս, որի դեմքի վրա կովում էին վայրույթը, վիշտն ու  
ամոթը, մեկնելու նշան արեց կառուպանին և շտապով մտավ  
տուն: Միսոր Ֆրենկլինը, որ վերստացավ խոսելու ունակութուն-  
նը, ձայն տվեց նրա հսկից, երբ կառքն արդեն շարժվում էր:

—Մորաքույր, դուք միանգամայն իրաւացի էիք, ընդու-  
նեցեք իմ շնորհակալութունը ձեր ամենայն բարութեան հա-  
մար և ինձ թույլ տվեք մեկնել:

Միլեդին շրջվեց՝ ասես նրա հետ խոսելու համար: Հետո,  
կարծես չվստահելով ինչն իրեն, սիրալիր ձեռքով արեց:

—Նախքան մեզնից հեռանալը՝ անցեք ինձ մօտ, Ֆրենկլ-  
լին,— ընդհատուն ձայնով ասաց նա և մտավ իր սենյակը:

—Մի վերջին շնորհ արեք ինձ, Բեատերեջ,— արցունքն  
աչքերին դիմեց միսոր Ֆրենկլինը.— ինձ տարեք երկաթու-  
ղային կայարան, և, որքան հնարավոր է, շուտ:

Նա նույնպես տուն մտավ: Միսս Ռեչելի վերաբերմունքն  
ամբողջովին ցնցել էր նրան: Ինչպե՞ս էր նա սիրում այդ  
աղջկան:

Խուզարկու Կաֆն ու ես երկուսով մնացինք սանդուղքի  
մօտ: Խուզարկուն կանգնել էր դեմքով դեպի ծառերի արան-  
քում երևացող լուսաշեղար, որի մեջ երևում էր տան մտաից  
սկսվող ծառուղու շրջապարձերից մեկը:

Նա ձեռքերը գրեւ էր գրպանը և ըթի տակ կամացուկ սու-  
լում էր «Ամուսն վերջին վտարը վառ»:

— Ամեն ինչ իր ժամանակն ունի, — բավականաչափ կա-  
տաղարեն զուրս թուալ իմ բերանից: — Հիմա սուլելու ժամա-  
նակը չէ:

Այդ պահին ծառուղում երևաց կառքը, որ արագորեն շարժ-  
վում էր դեպի դարպասը: Սամյուելից մացի, նրա նսնամա-  
սում երերում էր մեկ ուրիշ մարդ:

— Ամեն ինչ կարգին է, — ինքն իրեն փնթփնթաց Կաֆը:  
Նա շրջվեց դեպի ինձ:

— Հիմա սուլելու ժամանակ չէ, միստր Բետտերեջ, ինչպես  
իրավացիորեն ասում եք դուք: Ժամանակն է գործի անցնե-  
լու՝ առանց որեէ մեկին խնայելու: Սկսենք Ռոզաննա Սպիր-  
մանից: Որտե՞ղ է Ջոյսը:

Երկուսով ձայն տվինք Ջոյսին, բայց պատասխան չտա-  
ցանք: Զիապանի օգնականներից մեկին ուղարկեցի նրան  
փնտրելու:

— Լսեցի՞ր, թե ինչ ասացի միսս Վերինգերին, — հարցրեց  
խուզարկուն, մինչ մենք սպասում էինք: — Ել տեսա՞ք, թե  
նա ինչպես այդ ընդունեց: Ես նրան ուղղակի ասում եմ, որ իր  
մեկնումը կարող է խանդարել ինձ գտնելու ալմաստը, և նա  
մեկնում է, ուշադրություն չդարձնելով իմ այս ասածին: Զեր  
օրիորդը, միստր Բետտերեջ, իր մոր կառքում ուղեկից ունի,  
և նրա անունն է Լուսնաքար:

Ես ոչինչ չասացի: Ես միայն հաստատապես մնում էի միսս  
Ռեչելի նկատմամբ ունեցած իմ հավատին:

Զիապանի օգնականը վերադարձավ, նրա ետևից, շատ  
դժկամորեն, ինչպես ինձ թվաց, դալիս էր Ջոյսը:

— Որտե՞ղ է Ռոզաննա Սպիրմանը, — հարցրեց խուզարկու  
Կաֆը:

— Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, սըր... —  
սկսեց Ջոյսը: — Շատ եմ ափսոսում, բայց ինչ-որ ձևով...

— Իմ Ծրիդինհոլ մեկնելուց առաջ, — խստորեն ասաց խու-  
զարկուն, ընդհատելով նրան, — ես ձեզ հրամայեցի աչքից  
բաց չթողնել Ռոզաննա Սպիրմանին, և այնպես անել, որ նա  
չնկատի, թե իրեն հետևում են: Մի՞թե ուզում եք ինձ ասել,  
որ նրան թույլ եք տվել խուլյս տալ ձեզնից:

—Վախենում եմ, սրբ, — փնթիւնթաջ Զոյսը, սկսելով դողալ, — որ ես, թերեւ, չափից ավելի եմ ջանացել, թույլ շտաւով, որ նա նկատի իմ հսկողությունը: Այս տանն այնքան շատ են միջանցքները ներքեի հարկում:

—Վաղ՞ուց եք նրան կորցրել ձեր տեսադաշտից:

—Մոտավորապես մեկ ժամ, սրբ:

—Դուք կարող եք վերադառնալ Ֆրիդինհոլ՝ ձեր պաշտոնին, — առաջվա նման միանգամայն հանգիստ և իրեն հատուկ ձանձրույթով արտասանեց խուզարկուն: — Ինձ թվում է, թե ձեր ընդունակությունները պիտանի չեն մեր մասնագիտության համար, միտք Զոյս: Ձեր այժմյան աշխատանքը ձեր ընդունակություններից փոք-ինչ ավելի վեր է: Մնաք բարով:

Ոստիկանը հեռացավ: Հիմա ինձ համար դժվար է նկարագրել, թե ինձ վրա ինչպես ներգործեց Ռոզաննա Սպիրմանի անհետանալու լուրը: Մտքերս փոխվում էին տենդագին արագությամբ. կարծես հիսուն տարբեր բաների մասին էի մտածում նույն պահին: Կանգնել էի՝ աչքերս խուզարկու Կաֆին հառած. խոսելու ունակությունը բոլորովին դավաճանել էր ինձ:

— Ոչ, միտքը թետտերեջ, — ասաց խուզարկուն, կարծես մտքերիս հորձանքում կռահելով ամենազխաժորը և պատասխանելով դրան, նախքան մնացած բոլորին պատասխանելը, — ձեր բարեկամուհի Ռոզաննան այնքան հեշտ չի սողսկի մասներիս արանքով, որքան դուք մտածում եք: Քանի դեռ գիտեմ, թե որտեղ է միսս Վերինգերը, ես ձեռքիս մեջ պահում եմ միսս Վերինգերի գործակցուհուն ևս գտնելու միջոցը: Ես նրանց խանգարեցի հանգիստելու այս դիշեր: Շատ լավ է: Նրանք իրար կգտնեն Ֆրիդինհոլում, փոխանակ հանգիստելու այստեղ: Հետաքննութունը պետք է պարզապես փոխադրվի (փոքր-ինչ ավելի շուտ, քան ես սպասում էի) այս տնից այն տունը, ուր մեկնել է միսս Վերինգերը: Իսկ առայժմ, վախենում եմ, որ պետք է ձեզ խնդրեմ նորից հավաքել ծառաներին:

Ես նրա հետ մեկտեղ գնացի ծառաների սենյակը: Վայել չէ ինձ, բայց ստիպված եմ խոստովանել, որ նրա վերջին խոսքերը լսելիս՝ խուզարկուական տենդի մի նոր հորձանք զգացի: Մոռացա, որ ատում եմ խուզարկու Կաֆին և վատահաբար թեանցուկ արի նրան: Ես ասացի.

— Ի սեր աստծու, ասացիք, թե հիմա ի՞նչ եք անելու ծառաների հետ:

Նշանավոր Կաֆը կանգ առավ և ինչ-որ մի մեկամաղձոտ հիացմունքով հետեյալ խոսքերով դիմեց զասարկ տարածութեանը.

— Եթե այդ մարդը,— ասաց նա, ըստ Երևույթին, նկատի տնկնալով ինձ,— նաև վարդեր աճեցնելուց լան հասկանար, ապա կյիններ ամբողջ տիեզերքի ամենակատարյալ մարդը:— Զղացմունքների այսպիսի ուժեղ դրսևսումից հետո նա հառաչեց ու փհանցուկ արեց ինձ:— Ահա թե որն է հարցը,— ասաց նա՝ նորից գործի անցնելով:— Ռոզաննան արև է երկուսից մեկը. կամ ուղղակի գնացել է Ֆրիդլինհոլ՝ նախքան ևս կհասցնեի այնտեղ գնալ, կամ սկզբում գնացիլ է Երերուն ավազների իր թաքստոցը: Պետք է իմանալ, թե ծառաներից ով է վերջին անգամ տեսել նրան՝ նախքան նրա տնից դուրս դալը:

Հետաքննութունը ցույց տվեց, որ Ռոզաննային վերջին անգամ տեսել է աման լվացող Նանսին: Նանսին տեսել է, թե ինչպես նա դուրս է եկել՝ նամակը ձեռքին, և կանգնեցրել է մտի խանութի վաճառողին, որը իր բերած միսն է խոհարարուհուն հանձնելիս Եղև Ետնամուտքի սանդուղքի մտու՝ նանսին լսել է, թե ինչպես է նա այդ մարդուն խնդրել Ֆրիդլինհոլ վերադառնալիս փոստատուն տանել նամակը: Այդ մարդը նայել է հասցեին և ասել, թե տարօրինակ է Քոբս հոլը հասցեագրված նամակը հանձնել Ֆրիդլինհոլի փոստատուն, և այն էլ շաբաթ օրը, քանի որ նամակը երկուշաբթի օրվանից շուտ տեղ չի հասնի: Ռոզաննան նրան պատասխանել է, թե եթե նամակը մինչև Երկուշաբթի էլ տեղ չհասնի՝ նշանակութուն չունի: Ինքը միայն ուզում է, որ նա կատարի իր խնդրանքը: Նա խոստացել է և մեկնել: Նանսին կանչել են խոհանոց, և նա վերադարձել է իր դործին: Իրանից հետո Ռոզաննա Սպիրմանին ոչ ոք չի տեսել:

— Ի՞նչ պլաի անենք հիմա,— հարցրի ես, երբ նորից երկուսով մնացիք:

— Հիմա,— պատասխանեց խուզարկուն,— ես պետք է մեկնեմ Ֆրիդլինհոլ:

— Նամակի հաշվով, սրբ:

— Այլ: Գրութունը, թե ինչպես գտնել այն տեղը, որտեղ



Ռոզաննան թարցրել է իր իրը, դանդում է այդ նամակում: Ես պետք է փոստատան գրասենյակում նայեմ հասցեն: Եթե այն նույն հասցեն է, որ Ես կասկածում եմ, ապա հաջորդ երկուշաբթի նորից կայցելեմ մեր բարեկամուհի միսիս Յուլանդին:

Ես զնացի խուզարկուի համար կառք պատվիրելու Ախտում մենք նոր լուր ստացանք կորած աղջկա մասին:

## Գ Լ Ո Ւ Խ XIX

Ռոզաննայի անհետանալու լուրը տարածվել էր բոլոր ծառաների մեջ: Նրանք սկսել էին իրենց սեփական հետաքննությունը և բռնել էին Դեֆի անունով մի ժիր տղայի, որին երբեմն վերցնում էին այգին քաղհանելու և որը կես ժամ առաջ էր տեսել Ռոզաննա Սպիրմանին: Դեֆին պնդում էր, թե աղջիկը ոչ թե անցել է, այլ սլացել է իր մոտով՝ ծառուղիով գետի ծովափ տանող ճանապարհով:

— Տղան ծանոթ է այստեղի ափին, — հարցրեց խուզարկու Կաֆր:

— Նա ծնվել ու մեծացել է այդ ափին, — պատասխանեցի Ես:

— Դեֆի, — ասաց խուզարկուն, — ուզո՞ւմ ես մի շիլինգ վատտակել: Եթե համաձայն ես, ապա արի ինձ հետ... Միսսր Բետտերեջ, թող կառքը պատրաստ սպասի մինչև իմ վերադառնալը:

Նա այնպիսի հապճեպությունը զնաց Երեբուն ավազներ, որ ոտքերս (թեև իմ տարիքի համար շատ լավ պահպանված) չէին կարողանա հասնել նրա ետևից: Փոքրիկ Դեֆին, ինչպես պատանի վայրենիներն են այդ անում մեր կողմերում, երբ իրենց շատ ուրախ են զգում, խնդրության ճիշտ արձակեց ու սրլացավ խուզարկուի ետևից:

Այստեղ ես նորից ինձ համար հնարավոր չեմ համարում պարզ հաշիվ տալ խուզարկու Կաֆի գնալու և վերադառնալու միջև ընկած ժամանակամիջոցում մտքերիս վիճակի մասին: Մի տարօրինակ տազնայ համակեց ինձ: Ես բաղձաթիվ անօգուտ բաներ արեցի տան ներսում ու դրսում և հիմա գրան-

ցից ոչ մեկը չեմ կարող հիշել: Ես նույնիսկ չգիտեմ, թե ինչ-  
քան ժամանակ էր տեցել խուզարկուի՝ ավազներ գնալուց  
հետո, երբ Դեֆին վաղելով հտ վերադարձավ՝ հանձնարա-  
րական բերելով ինձ: Խուզարկու Կաֆը ծոցատետրից պոկած  
մի թերթիկ էր ավել տղային, որի վրա մատիտով գրված էր.  
«Շուտ ինձ ուղարկեք Ռոզաննա Սպիրմանի կոշիկը»:

Առաջին իսկ պատահած սպասուհուն ուղարկեցի Ռոզան-  
նայի սենյակը՝ կոշիկը բերելու, և տղային ևս ուղարկեցի, ա-  
սելով, որ ինքս անձամբ կբերեմ:

Շատ լավ գիտեմ, որ այդ ձևով դործելը չի նշանակում  
արադորեն ենթարկվել իմ ստացած հրահանգներին: Բայց ևս  
որոշեցի Ռոզաննայի կոշիկը նրան հանձնելուց առաջ ստու-  
գել, թե ինչ է մտադիր անել նա հիմա: Այլևհան պատասպարե-  
լու նախկին ցանկությունս նորից վերադարձավ այն ժամա-  
նակ, երբ, հնարավոր է, արդեն ուշ էր: Զգացմունքների այս  
վիճակը (էլ չեմ ասում՝ խուզարկուական տենդը) ինձ ստիպեց  
շտապել, այնպես, ինչպես որ կարող է շտապել յոթանասուն-  
ամյա մարդը:

Երբ մոտեցա ավին՝ ամպերը թանձրացան և անձրև հոր-  
դեց քամուց քշվող համատարած սպիտակ պատի պես: Ես  
լսում էի, թե ինչպես են զզրում ակիքները՝ փշրվելով ծովա-  
խորշի հտևում գտնվող ավազե ծանծաղուտի վրա: Մի փոքր  
այն կողմ ես անցա անձրևից ավազաթմբերի տակ պատասպար-  
ված տղայի մոտով: Հետո տեսա փոթորկվող ծովը, ծանծա-  
ղուտը ռոզոզոլ ակիքները, ջրի վրա կախված անձրևի քողը,  
ամայի դեղին ավիը և այնտեղ միայնակ կանգնած մի սև կեր-  
պարանք, որը խուզարկու Կաֆն էր:

Նա ձևոքի շարժումով ցուլց էր տալիս հյուսիսը և գոռում.

— Շարժվեք այդ կողմով: Այստեղ եկեք, ինձ մոտ:

Ես, շնչահեղձ լինելով, մոտեցա նրան. սիրտս այնպես էր  
խփում, կարծես ուզում էր դուրս թռչել կրծքիցս: Խոսել չէի կա-  
րողանում: Ուզում էի հարչուր հարց տալ նրան, բայց դրան-  
ցից ոչ մեկը դուրս չթափվ իմ բերանից: Նրա դեմքը վախե-  
ցրեց ինձ: Ես նրա աչքերի մեջ տեսա սարսափի արտահայ-  
տություն: Նա ձևոքիցս թոցրեց կոշիկը և դրեց ավազին գրոշմ-  
ված հևաքերի վրա, որ մեր կանգնած տեղից դնում էին դեպի  
հարավ, ուղիղ դեպի այն ժայռի ցցվածքը, որը կոչվում է Հա-

րավային ժայռ: Անձրեր դու  
չէր լվացել հետքերը, աղչկա  
կոշիկը ճիշտ և ճիշտ դրանց  
չափով էր:

Խուզարկուն, առանց որևէ  
խոսք ասելու, մատնացույց  
արեց հետքին համապա-  
տասխանող կոշիկը:

Ես թափով բռնեցի նրա  
ձեռքը, աշխատելով խոսել  
հետը, ու չէի կարողանում:  
Նա հետքերով շարժվեց դե-  
պի այն տեղը, որտեղ միա-  
նում էին ժայռերն ու ավա-  
զը: Մակրնթացութունն րս-  
կըսում էր աստիճանաբար  
ողողե՛լ Հարավային ժայռը.  
ջուրը ծածկում էր Երերուն  
ավազների մակերեսը: Մերթ  
այստեղ, մերթ այնտեղ հա-  
մառ լուսնյամբ, որը նման  
էր ծանր արճճի, համառ  
համբերությամբ, որը սար-  
սափելի էր տեսնել, խուզար-  
կու Կաֆը կոշիկը դնում էր  
հետքերին և միշտ գտնում.  
որ դրանք ուղղված են մի  
կողմի վրա, ուղղակի այն-  
տեղ, ժայռերի կողմը: Ինչ-  
քան էլ որ նա փնտրեց՝ այն-  
տեղից բերող ոչ մի տեղ ոչ  
մի հետք գտնել չկարողա-  
ցավ:

Վերջապես նա կանգ ա-  
ռավ: Նորից նայեց ինձ,  
հետո ջրին, որ ավելի ու  
ավելի վեր էր բարձրանում Երերուն ավազներից: Ես նայեցի



Ինուզաբէ՛տի հայացքի ուղղութիւնսմբ ու հասկացա, թե նա ինչ է մտածում: Հանկարծ մի ահալոր զող համակեց ինձ: Ես ճնկներին վրա բնկա ավազի մեջ:

—Նա եկել է իր թաքստոցը,— լսեցի խուզարկու՛ւի ձայնը,— և այս ժայռերի վրա ինչ-որ ճակատագրական սլատահակա-նութիւն...:

Աղջկա ալլալված դեմքը, նրա խոսքերն ու վարվելակերպը, նրա ցրվածութիւնը՝ ինձ լսելիս և ինձ հետ խոսելիս, երբ մի քանի ժամ առաջ միջանցքն էր ավլում, մտաբերեցի ես, ապա-ցուցելով, որ խուզարկուն հեռու չէ ահալոր ճշմարտութիւ-նից: Ուզում էի նրան հաղորդել ինձ համակած վախի մասին: Փորձում էի ասել. «Նա մեռել է իր փնտրած մահով...»:

Բայց ոչ, բառերը չէին պոկվում շուրթերիցս: Ես կարծես ընդարմացել էի: Ես չէի դգում տեղատարափ անձրևը: Ես չէի տեսնում բարձրացող մակընթացութիւնը: Ինչպէս զոռան-ցանքի կամ քնի մեջ, ես նորից իմ առչև տեսնում էի խեղճ ուղջկան: Ես նրան նորից տեսնում էի ինչպէս այն առավոտ, երբ այստեղ եկա նրան տուն տանելու համար: Ես նորից լսում էի, թե ինչպէս նա ինձ ասում է՝ Երերուն ավաղները, իր կամ-քին հակաբակ, ձգում են իրեն, և ինքն իրեն հարցնում է՝ արդ-յո՞ք իրեն գերեզման չի սպասում այնտեղ: Ինչ-որ անհաս-կանալի սարսափ պատեց ինձ, երբ մտածեցի աղջկաս մասին: Աղջիկս նրա հասակակիցն էր: Աղջիկս Ռոզաննայի պես, նույն փորձութիւններին ենթարկվելով, կարող էր նույնպիսի մի ահալորէ կշանք ատրել ու մեռնել նույնպիսի սարսափելի մա-հով...:

Խուզարկուն սիրալիր բարձրացրեց ինձ ու հեռացրեց այն տեղից, որտեղ աղջիկը զոհվել էր: Սկսեցի ավելի հեշտ շնչել, և այժմ առարկաները տեսնում էի այնպիսին, ինչպիսին որ դրանք կային իրականում: Դեպի ավաղարշուրները շրջվելով՝ նկատեցի, թե ինչպէս մեր կողմն են վաղում ծառաներն ու ձկնորս Յուանդը. նրանք տադնապով հարցնում էին՝ աղջիկը բանվէ՞ց, թե ոչ:

Խուզարկուն մի քանի խոսքով նրանց բացատրեց, թե ինչ էլին ցույց տալիս հեռքերը, և ասաց, որ, թերևս, դժբախտու-թիւն է պատահել նրան: Հետո նորից շրջվելով դեպի ծովը՝ հարց տվեց ձկնորսին.

— Ասացեք, կարո՞ղ է նազակը նրան հանած լինել ժայռի այն ցցվածքից, որտեղ նրա հետքերն են վերջանում:

Ղկնորսը մատնացույց արեց ալիքները, որ դրոշմում էին ծանծաղուտի վրա և բոլոր կողմերից փրփուրի ամպերով սլա-տում հրվանդանը:

— Ոչ մի նազակ չէր դիմանա այնտեղ,— պատասխա-նեց նա:

Նուզարկու Կաֆը մի վերջին անգամ նայեց ավազի վրա երևացող հետքերին, որ այժմ լվանում էր անձրևը:

— Այսպես, ուրեմն,— ասաց նա,— ահա մի ապացույց, որ աղջիկն այստեղից ոտքով չի գնացել, իսկ այնտեղ,— նա նայեց ձկնորսին,— ապացույցն է այն բանի, որ աղջիկը չէր կարող ծովով գնալ:

Նա լռեց ու մի պահ մտածմունքի մեջ ընկավ:

— Աղջկան դեպի այս կողմը վազելիս տեսել են իմ այստեղ դալուց կես ժամ առաջ,— հաղորդեց նա Յուլանդին:— Դրու-նից հետո բավականաչափ շատ ժամանակ է անցել. մոտավո-րապես մեկ ժամ: Ինչքա՞ն էր բարձր այն ժամանակ ջուրը ժայռերի այդ կողմում:

Նա մատնացույց արեց հարավային կողմը, այսինքն՝ այն-տեղ, որտեղ Երերուն ավազներ չկային:

— Դատելով ըստ այն բանի, թե այսօր ինչպես է ջուրը բարձրանում ժայռի մյուս կողմում, ասա մեկ ժամ առաջ այն չէր բավականացնի նույնիսկ մի կստովի ձագ խեղդելուն:

Նուզարկու Կաֆը շրջվեց դեպի հյուսիս, Երերուն ավազ-ների կողմը:

— Իսկ ա՞յս կողմում,— հարցրեց նա:

— Էլ ավելի քիչ,— պատասխանեց Յուլանդը:— Երերուն ավազները հազիվ կարող էին թրջվել: Ո՛չ ավելին:

Նուզարկուն շրջվեց իմ կողմը և սուսց, որ դժբախտ դեպ-քը կատարվել է, թերես, Երերուն ավազներում:

Լեզուս բացվեց:

— Դժբախտ գնացք չի եղել,— բացականչեցի ևս:— Աղջի-կըն այստեղ է եկել կյանքից հսկանած, որպեսզի այստեղ էլ հրաժեշտ տա նրան:

Նա հտ-հտ դնաց:

— Դուք որտեղի՞ց գիտեք,— հարցրեց նա:

Բոլորը խոնվեցին իմ շուրջը: Խուզարկուն անմիջապես ուշքի եկավ: Նա բուրբին ևտ հրեց ինձնից, ասաց, որ ևս ծեբունի եմ, ասաց, որ հայտնությունը ցնցել է ինձ, և պահանջեց:

— Հանգիստ թողեք նրան:— Հետո շրջվեց դեպի Յուլանդը և հարցրեց.— Երբ տեղատվությունն սկսվի՞ հնարավո՞ր է գտնել նրան:

Յուլանդը պատասխանեց,

— Ամենևին: Ինչ որ ընկնում է այս ավազների մեջ՝ այնտեղ էլ մնում է ընդմիշտ:

Ձկնորսը մի քայլ արեց դեպի ինձ ու շարունակեց.

— Միտար Բետտերեջ, որոշ բաներ եմ ուզում ձեզ ասել այդ երիտասարդ կնոջ մահվան մասին: Ժայռի այդ կողմի երկայնքով երեք ոտք խորությամբ ավազի մեջ անցնում է քարի մի լայն ցցվածք: Հարցնում եմ՝ ինչո՞ւ նա չի ընկել այդ ցցվածքի վրա: Եթե նա պատահաբար սայթաքած լիներ՝ կընկներ այնտեղ, որտեղ կարող էր նորից ոտքի կանգնել, և այնպիսի խորության վրա, որ ավազը հաղիվ մինչև նրա գոտկատեղը հասներ: Ոչ, նա դիտակցաբար իջել է այդ ցցվածքից կամ անցել է նրա վրայով ու իրեն գցել ավազների ամենախորքը, հակառակ դեպքում, նա չէր կարողանա մեռնել: Ոչ, դժբախտ պատահար չի եղել, սբբ: Երերուն ավազները կլանել են նրան և կլանել են նրա սեփական կամքով:

Այդ մարդու վկայությունից հետո, մի մարդ, որի իմացության վրա կարելի էր հենվել, խուզարկուն լուց: Մենք էլ, նրա պես, ձայն չէինք հանում: Հետո բոլորս էլ ետ դարձանք ու բարձրացանք ավի:

Ավազաբլուրներում հանդիպեցինք ձիապտևի օգնականին, որը, վազելով, գալիս էր տնից: Դա մի բարի, ինձ տնկեղծորեն հարգող մարդ էր: Նա ինձ մեկնեց մի գրություն՝ դևաքի վրա դեպքին պատշաճող վշտահարությամբ:

— Ինձ ուղարկել է Պենեկոպեն, միտար Բետտերեջ, ինձ ուղարկել է Պենեկոպեն. նա այս գրությունը գտել է Ռոզաննայի սեյակում:

Դա Ռոզաննայի վերջին հրածնշտի խոսքն էր՝ ուղղված ծերունուն, որը նրա համար արել էր ինչ որ կարողացել էր,

փա՛ռք աստծու, միշտ էլ արեւ էր ինչ որ կարողացել էր, որպէսզի օգնած լիներ խեղճին:

«Անցած ժամանակներում դուք հաճախ եք ներել ինձ, միստր Բետտերեջ: Առաջին անգամ, երբ տեսնեք Նրերուն աւազները, աշխատեցեք մեկ անգամ ևս ներել ինձ: Ես գերեզմանս գտա այնտեղ, որտեղ այն ինձ սպասում էր: Ես ապրել եմ և մեռնում եմ, սըր, ձեր բարության համար երախտագիտութեամբ»:

Այսքանը միայն: Որքան էլ հակիրճ էր գրութեանը, ես արիւթյուն չունեցա դիմանալու այդ խոսքերին: Հեշտութեամբ են ձեր աչքերից արցունքներ հոսում, երբ դուք երիտասարդ եք և սկսում եք ապրել աշխարհում: Հեշտութեամբ են ձեր աչքերից արցունքներ հոսում, երբ դուք արդեն ծեր եք և թողնում եք այս աշխարհը: Ես հեկեկացի:

Խուզարկու Կաֆլ մի քայլ արեց դեպի ինձ. շեմ կասկածում, բարի մտադրութեամբ: Բայց ես սարսափով ընկրկեցի նրանից:

— Ինձ չդիպչեք, — ասացի: — Այդ դուք ահաբեկեցիք նրան, դուք հասցրիք այս բանին:

— Իրավացի չեք, միստր Բետտերեջ, — հանգիստ պատասխանեց նա: — Բայց այդ մասին խոսելու ժամանակ կլինի, երբ մենք նորից տուն վերադառնանք:

Ես գնացի բոլորի ետևից՝ հենված ձիապանի օգնականի թևին: Մենք վերադարձանք տեղատարափ անձրևի տակ, որպէսզի դիմավորենք տանը մեզ սպասող տագնապն ու սարսափը:

## Գ Լ Ո Ւ Խ XX

Առջևից գնացողները մեզնից շուտ էին տեղ հասցրել տրխուր լուրը: Բոլոր ծառաներին գտանք խուճապալին սարսափով համակված: Երբ անցնում էինք միլիդիի սենյակի մոտով՝ դուռը ներսից բացվեց: Տիրուհիս (նրա ետևից գալիս էր միստրը Ֆրենկլինը՝ իլուր ջանալով հանգստացնել նրան) մեր դեմ դուրս եկավ ահապոր դեպքից իրեն բոլորովին կորցրած:

— Այդ դուք եք մեզավոր դրանում, — բացականչեց նա՝

մատր սպառնալի թափ տալով խուզարկուի վրաս:— Գաբրիել,  
վճարեք այս սրիկային, և որպեսզի ես նրան այլևս չտեսնեմ:

Բոլորիցս միայն խուզարկուն կարող էր խոսք հասկացնել  
նրան, քանի որ միայն նա էր իրեն տիրապետում:

— Ես նույնքան քիչ եմ մեղավոր այս վշտալի դեպքի մեջ,  
որքան և դուք, միլեդի,— ասաց նա:— Եթե կես ժամ հետո  
էլ դուք շարունակեք պնդել, որ ես հեռանամ ձեր տնից, ևս  
կրնդունեմ հրաժարականը, բայց ո՛չ ձեր փողերը:

Պա ասվեց շատ հարգալիք, բայց միևնույն ժամանակ և  
շատ հաստատ և ներդործեց տիրուհուս վրա այնպես, ինչպես  
և ինձ վրա: Միլեդիին միտար Ծրենկլիինին թույլ տվեց սենյակ  
ստանել իրեն: Երբ դուռը ծածկվեց նրանց ետևից, խուզարկուն  
նայեց սպասուհիներին և իր սովորական դիտողականությամբ  
նկատեց, որ այն ժամանակ, երբ մնացածները սլարզապես  
վախեցած էին, Պենեկուպեն լաց էր լինում:

— Երբ ձեր հայրը զոհատը փոխի,— ասաց նա,— եկեք  
նրա սենյակը մեզ հետ գրուցելու:

Ձեր անցել և կես ժամ, որի ընթացքում ես հասցրի փո-  
խել թաց հագուստս ու չորը հագնել և թույլ տալ, որ խու-  
զարկուն էլ շորերը փոխի, երբ մեզ մոտ եկավ Պենեկուպեն  
իմանալու, թե ինչ է ուզում խուզարկուն իմանալ իրենից: Այդ  
պահին ևս, իրոք, առանձնապես սուր զգացի, թե ինչքան բա-  
րի ու հնազանդ աղջիկ ունեմ: Աղջկա նստեցրի ծնկներին և  
աստծուն ազաչեցի, որ օրհնի նրան: Նա գլուխը թաքցրեց  
կրծքիս վրա ու ձևաբերով զրկեց վիղս, և այդպես որոշ ժա-  
մանակ նստեցինք առանց ձայն հանելու: Երկուսս էլ, թերևս,  
մեռած խեղճ աղջկա մասին էինք մտածում: Խուզարկուն մո-  
տեցավ լուսամուտին և նույնպես լուռ սկսեց դուրս նայել: Ես  
որոշեցի, որ պետք է նրան շնորհակալություն հայտնել եր-  
կուսիս նկատմամբ ցուցաբերած փափկամեղամտության հա-  
մար, և շնորհակալություն հայտնեցի:

Պենեկուպեն և ևս պատրաստ էինք պատասխանելու նրան  
հենց որ խուզարկուն իր հերթին պատրաստ կլիներ հարցնե-  
լու: Երբ խուզարկուն Պենեկուպեին հարցրեց՝ արդյո՞ք նա չդի-  
տե, թե ինչը Ռոզաննային ստիպեց վերջ տալ իր կյանքին,  
աղջիկս պատասխանեց (ինչպես որ կուսում եք), որ նա այդ  
արեւ է միտար Ծրենկլիին Բլեկի նկատմամբ ունեցած սիրույր:



Երբ խուզարկուն հարցրեց, թե Պենելոպեն այդ մասին որևէ ուրիշ մարդու ասե՞լ է, թե ոչ, Պենելոպեն պատասխանեց.

— Այդ մասին ոչ ոքի չեմ ասել, խնայելով Ռոդաննաչին: Ես հարկ համարեցի մի քանի խոսք ավելացնել դրան: Ասացի.

— Խնայելով նաև միստր Ֆրենկլինին, սիրելիս: Եթե Ռոդաննան մեռավ նրա նկատմամբ ունեցած սիրուց, ապա դա կատարվեց առանց միստր Ֆրենկլինի գիտության և ոչ նրա մեղքով: Թող նա այսօր իր համար հանդիստ զնա այստեղից. ինչո՞ւ անտեղի վշտացնել նրան՝ ճշմարտությունը հաղորդելով:

Խուզարկու Կաֆր նկատեց՝ «Միանդամայն արդարամիտ է», — ու նորից լռեց, Պենելոպեի կարծիքը համեմատելով (ինչպես ինձ թվաց) իր սեփական կարծիքի հետ, որը նա շարտահայտեց:

Կես ժամ անց հնչեց տիրուհուս զանգը: Կանչի վրա գնալով՝ հանդիպեցի միստր Ֆրենկլինին, որ դուրս էր գալիս մորաբրոջ աշխատասենյակից: Նա ինձ հաղորդեց, որ լեդի Վերինդերը պատրաստ է ընդունելու միստր Կաֆրին՝ առաջվա նման իմ ներկայությունը, և որ ինքն անձամբ ուղղում է դրանից առաջ մի երկու խոսք ասել խուզարկուին: Ինձ հետ մեկտեղ իմ սենյակը վերադառնալով, նա կանգ առավ ու նայեց զնացքների շվացուցակը, որ կախված էր նախասրահում:

— Մի՞թե դուք իրոք կհեռանաք մեզնից, սրբ,— հարցրի ես:— Միսս Ռեչելը, Էրեի, միտքը փոխի, եթե ժամանակ տաք նրան:

— Նա միտքը կփոխի,— պատասխանեց միստր Ֆրենկլինը,— Երբ լսի, որ ես մեկնել եմ և որ ինքը ինձ չի տեսնի:

Ես մտածում էի, որ նա այդպես է ասում իմ օրիորդի վրա բարկացած լինելով: Բայց դա ճիշտ չէր: Տիրուհիս նկատել էր, որ մեր տան մեջ ստիկանություն հաստատվելու պահից սկսած միստր Ֆրենկլինի անվան հիշատակումն իսկ բավական է եղել, որ միսս Ռեչելին ստիպի զսյրությունից բանկել: Նա շատ էր սիրում իր դարմիկին և չէր ուզում դա խոստովանել ինքն իրեն. բայց ճշմարտությունը երևան էկավ, երբ միսս Ռեչելը մեկնեց մորաբրոջ մոտ: Միստր Ֆրենկլինը հանկարծ այդ զգաց իր համար ծանր բուպեին և անմիջապես

վճիռ ընդունեց, միակ վճիռը, որ կարող էր ընդունել հպարտ մարդը՝ դնալ մեր տնից:

Նա խուզարկուի հետ խոսեց իմ ներկայութեամբ: Ասաց, որ միլեդին պատրաստ է խոստովանելու, որ շափից դուրս կրքոտութեամբ է արտահայտվել: Նա հարցրեց՝ խուզարկուն կհամաձայնվի՞, միլեդիի այսպիսի խոստովանութեան առկայութեամբ, վարձատրութիւնն ընդունել և ալմաստի հետ կապված գործը թողնել այն վիճակում, ինչ վիճակում որ գտնուվում է: Խուզարկուն սուարկեց:

— Ոչ, սրբ, ինձ վարձատրութիւնն է տրվում պարտականութիւններէս կատարման համար: Ես հրաժարվում եմ այն ընդունել, բանի դեռ չեմ կատարել իմ պարտականութիւնները:

— Ես ձեզ չեմ հասկանում,— ասաց միստր Ֆրենկլինը:

— Բացատրեմ ձեզ, սրբ,— պատասխանեց խուզարկուն:— Երբ այստեղ եկա՝ ձեռնարկեցի ալմաստի կորստյան հետ կապված մութ գործը պատշաճ ձևով բացահայտելուն: Հիմա պատրաստ եմ դրան և իմ խոստումը կատարելու հնարավորութեան եմ սպասում միայն: Երբ լեդի Վերինդերին ներկայացնեմ, թե ինչ վիճակում է գտնվում գործը, և երբ նրան ուղղակի ասեմ, թե ինչ պետք է ձեռնարկել լուսնաքարը գտնելու համար, պատասխանատվութիւնն իմ վրայից կվերցվի: Դրանից հետո թող միլեդին ինքը որոշի՝ գործը շարունակե՞մ, թե ոչ: Դրական պատասխանի դեպքում՝ կավարտեմ այն, ինչը ձեռնարկել եմ, և կընդունեմ վարձատրութիւնը:

Այս ասելով՝ միստր Կաֆը մեզ հիշեցրեց, որ նույնիսկ ոստիկանական խուզարկուն ունի իր արժանապատուութիւնը, որը չի կամենում կորցնել:

Նրա տեսակետն այնքան արդարամիտ էր, որ առարկելու բան չկար: Երբ ես վեր կացա, որպեսզի միլեդիի սենյակն առաջնորդեմ նրան, նա հարցրեց, թե արդյո՞ք միստր Ֆրենկլինը չի ուզում ներկա գտնվել խոսակցութեանը: Միստր Ֆրենկլինը պատասխանեց.

— Ոչ, եթե լեդի Վերինդերն ինքը այդ չկամենա:

Երբ ես գնում էի խուզարկուի ետեից՝ Ֆրենկլինը շշուկով ասաց ականջիս.

— Ես զիտեմ, թե այդ մարդն ինչ է պատրաստվում ասել

Ռեչելի մասին, մինչդեռ ես շափից գուրս շատ եմ կապված Ռեչելի հետ և այդ լսելիս շեմ կարողանա ինձ զսպել: Ավելի լավ է մենակ մնամ:

Ես նրան թողեցի մեծ վշտի մեջ. նա արմունկներով հենվեց լուսամտուտի գոգին, երկու ձեռքով ծածկեց դեմքը. Պենելոպեն, նրան մխիթարելու կրակոտ ցանկությամբ, նայում էր դուան ետեից:

Այդ միջոցին խուզարկու Կաֆր և ես մտանք միլլիդի սենյակը:

## Գ Լ Ո Ւ խ XXI

Երբ մեր տեղերն արդեն զբաղեցրել էինք, առաջին խոսքն ասաց տիրուհիս.

— Միստր Կաֆ, թերևս ներող հանգամանքներ կան այն շմտածված բառերի համար, որ կես ժամ առաջ ասացի ձեզ: Սակայն շեմ կամենում վկայակոչել այդ հանգամանքները: Ես ամենայն անկեղծությամբ ասում եմ, որ ցավում եմ, եթե ձեզ վիրավորել եմ:

Այն սիրալիրությունը, որով միլլիդին արտաբերեց այս ներողությունը, պատշաճ ներգործություն ունեցավ խուզարկուի վրա: Սա իր գործելակերպի մեջ արգարանալու թուլություն խնդրեց, այդ արգարացումը ներկայացնելով որպես տիրուհուս նկատմամբ ունեցած հարգանքի նշան: Նա ասաց, որ ոչ մի կերպ չի կարող բոլորիս այդքան խորը համակած դժբախտության պատճառը լինել հենց այն հարգելի պատճառով, որ ամբողջ հետաքննության հաջողությունը կախված է եղել Ռոզաննա Սպիրմանի հետ իր քաղաքավարի վարմունքից, մի կին, որին ոչ մի դեպքում չէր կարելի հուղել կամ վախեցնել: Նա գիմեց ինձ, խնդրելով վկայել իր խոսքերի ճշմարտությունը: Ես չէի կարող չհաստատել նրա ասածը: Մտածում էի, որ գործը դրանով էլ կփերջանա:

Սակայն խուզարկու Կաֆը մի քայլ ևս տրեց. ըստ երեվույթին, մտադիր լինելով սկսել լեզի վերինդերի և իր միջև բոլոր հնարավոր բացատրություններից ամենաահաճը:

— Լսել եմ, որ երիտասարդ կնոջ ինքնասպանությունը վե-

բազրում են մի պատճառի,— ասաց խուզարկուն:— Գուցիև այդ պատճառը իրոք գոչութիւնն ունի, բայց թե դա ոչ մի կապ չունի այն գործի հետ, որով ես այստեղ գրազվում եմ: Եվ պետք է ավելացնեմ, որ ես այստեղ ուրիշ պատճառ եմ տեսնում: Այնաստի կորչելու հետ կապված ինչ-որ մի անբացատրելի անհանգստութիւն, ինչպես որ ենթադրում եմ, այդ խեղճ աղջկան մղել է իրեն գրկելու կյանքից: Ես չեմ պատրաստվում հավատացնել, թե դիտեմ ինչն է եղել այդ տարօրինակ անհանգստութեան պատճառը: Բայց ես, միլեդի, ձեր թույլութեամբ մատնացույց կանեի մի անձնավորութեան, որը կարող է որոշել իրավացի եմ ես, թե ոչ:

— Հիմա այդ անձնավորութեանը դտնվում է տա՞նը,— որոշ լուսթյունից հետո հարցրեց տիրուհին:

— Այդ անձնավորութեանն այստեղից գնացել է, միլեդի: Պատասխանն այնքան ուղղակի էր նշում միսս Ռեչելին, որքան որ դա հնարավոր էր: Լուսթյուն տիրեց. կարծում էի, թե այն երբեք չի ընդհատվի: Աստված իմ, ինչպես էր սուսնում քամին, ինչպես էր անձրևը ձեռնում լուսամուտները: Ես նստած սպասում էի, որ նրանցից որևէ մեկը նորից խոսի:

— Բարի եղեք ավելի պարզ արտահայտվել,— վերջապես ասաց միլեդին:— Գուք նկատի ունեք իմ դտնը:

— Ես նկատի ունեմ միսս Ռեչելին,— նույնքան ուղղակի պատասխանեց խուզարկու Կաթը:

Երբ մենք սենյակ մտանք՝ միլեդիի սեղանի վրա ընկած էր շեկի գրքույկը, անկասկած. խուզարկուի հետ հաշիվները փակելու համար: Այժմ միլեդին գրքույկը նորից դրեց դարակը: Ինձ համար ցավալի էր ականել, թե ինչպես էր դողում նրա խեղճ ձեռքը՝ ձերունի ծառային այնքան լավութեաններ տրած ձեռքը. և ես աստծուն աղաչում էի, որպեսզի, երբ հասնի իմ վախճանի ժամը և ես թողնեմ այս անցավոր աշխարհը, այդ ձեռքը բռնի իմ ձեռքը:

— Ես հույս ունեի,— շատ դանդաղ ու հանդիստ շարունակեց միլեդին,— որ կվարձատրեմ ձեր ծառայութեանները և ձեզնից կրաժանվեմ, առանց միսս Վերինդերի անունը այսքան բացահայտորեն հիշատակելու, ինչպես որ այն հիշատակեցինք հիմա: Իմ վարմիկը, հավանաբար, նախքան ձեր աշտեղ գալը, ասել է ձեզ այդ մասին:

— Միտար Բլեկը կատարել է ձեր հանձնարարությունը, միլեդի: Իսկ ես միտար Բլեկին բացատրել եմ պատճառը...

— Այդ պատճառի մասին ինձ ասելն անօգուտ է: Այն բունից հետո, որ հիմա ասացիր, դուք էլ ինձ նման շատ լավ գիտեք, որ շատ հեռուն եք դնացել և չեք կարող նահանջել: Ես պարտավոր եմ հանուն ինձ և հանուն իմ դստեր պնդել, որ դուք մնաք այստեղ և արտահայտվեք ուղղակի:

Խուլարկուն նայեց ժամացույցին:

— Եթե ես ժամանակ ունենայի, միլեդի, ապա կգերազանսի իմ գեկույցը տալ գրավոր և ոչ թե բանավոր: Բայց, եթե շարունակենք այդ հետաքննությունը, ապա ժամանակը շատ կարևոր է և չի կարելի այն կորցնել գրավոր գեկույցների կազմելով: Ես պատրաստ եմ անմիջապես գործի անցնելու: Ինձ համար շատ ծանր կլինի խոսել, իսկ ձեզ համար՝ չսեղ...

Այս խոսքի վրա տիրուհիս նորից ընդհատեց նրան.

— Թերևս ե՛ր ձեզ համար, ե՛ր իմ բարի ծառայի ու բարեկամի համար պակաս տանջալի լինի,— ասաց միլեդին,— եթե ես իմ կողմից օրինակ տամ և սկսեմ համարձակորեն խոսել: Դուք կասկածում եք, որ միսս Վերինդերը խաբում է բոլորիս, արժասաը թարցնելով իր սեփական նպատակի համար: Այդպես չէ՞:

— Ճիշտ այդպես է, միլեդի:

— Շատ լավ: Հիմա, նախքան դուք կսկսեք, ես պետք է ձեզ ասեմ, որպես միսս Վերինդերի մայր, որ նա ամենեին բնորոնակ չէ անելու այն, ինչի մեջ նրան կտակածում եք: Դուք նրան տեսել եք միայն երկու օր առաջ: Իսկ ես նրա բնավորությունը գիտեմ նրա ծնված օրից: Ինչքան ուզում եք խիստ արտահայտեք ձեր կասկածները, դրանով չեք կարող ինձ վիրավորել: Ես նախապես հավատացած եմ, որ, ձեր ամբողջ փորձառությունը հանդերձ, տվյալ դեպքում հանգամանքները խաբել են ձեզ: Հիշեցեք, ես ոչ մի վազանի տեղեկություն չունեմ: Դուստրս այդ հարցում նույնքան բիշ է տեղեկոթ ինձ հետ, որքան և ձեզ հետ: Պատճառը, որ ինձ ստիպում է այսքան դրական խոսել, մեկն է. ես ճանաչում եմ իմ երեխային:

Նա շրջվեց իմ կողմը և ձեռքը մեկնեց ինձ: Ես լուռ համբուրեցի այն:

— Կարող եք շարունակել, — ասաց նա, դարձյալ նախկին հաստատակամությամբ նայելով խուզարկուին:

Խուզարկու Կաֆը խոնարհվեց: Տիրուհուս խոսքերը միայն մի ազդեցութուն գործեցին նրա վրա. նրա խիստ դեմքը մի պահ մեղմացավ, նա, կարծես, խղճում էր միլեդիին: Ինչ վերաբերում է խուզարկուի համոզմունքները սասանելուն, ապա սլարդ էր, որ միլեդին մաղաշափ անդամ չէր սասանել դրանք: Խուզարկուն ավելի հարմար տեղավորվեց աթոռին և հետևյալ խոսքերով նողկալի դրոճ գործեց միսս Ռեչելի անվան վրա:

— Ես ձեզ պետք է խնդրեմ, միլեդի, — ասաց նա, — այդ գործին նայել նաև իմ տեսանկյունից: Բարի եղեք պատկերացնել, որ դուք եք այստեղ ծամանել՝ իմ դերում և իմ փորձառությամբ, և թույլ տվեք համառոտակի ձեզ հիշեցնել, թե որն է իմ այդ փորձառությունը:

Տիրուհիս զույլը խոնարհեց ի նշան համաձայնության: Խուզարկուն շարունակեց.

— Վերջին քսան տարում ինձ հաճախ են հրավիրել ընտանեկան փափկանկատ գործեր կարգավորելու: Այդ ասպարեղում կատարածս աշխատանքի միակ արդյունքը, որը կապ ունի սույն գործի հետ, կարող եմ երկու խոսքով բացատրել: Իմ ձեռք բերած փորձի համաձայն, երիտասարդ աղջիկները, հարուստ և ազնվատոճ, հաճախ դադարնի պարտքեր են ունենում, որը նրանք չեն համարձակվում խոստովանել իրենց մերձավոր ազդականներին ու մտերիմներին: Մի դեպքում՝ այդ պարտքերի պատճառը դերձակուհին ու ոսկերիչն են: Մեկ ուրիշ դեպքում՝ փողը հարկավոր է այնպիսի նպատակների համար, որպիսիք այս գործում ես չեմ կասկածում և չեմ ուզում դրանք հիշատակելով՝ վիրավորել ձեզ: Ասածս պահեք ձեր մտքում, միլեդի, իսկ հիմա ընտելության առնենք, թե ինչպես այս տունը կատարված դեպքերն ինձ ստիպեցին հիշել իմ հին փորձը, անկախ իմ ուզելուց կամ չուզելուց:

Խուզարկուն մի պահ մտքերը հավաքեց և հետո շարունակեց մի այնպիսի ահավոր պարզությամբ, որը մեզ ստիպում էր հասկանալ նրան, այնպիսի մի դաժան ճշմարտացիությամբ, որը ոչ որի չէր խնայում:

— Այժմաստի կորչելուն վերաբերող առաջին տեղեկու-

թյունները ևս ստացել ևմ տեսուչ Սիգրիից: Նա ինձ համոզեց, որ բոլորովին անընդունակ է հետաքննելու այդ գործը: Միակ բանը, որ ուշադրության արժանի թվաց ինձ նրա ասածներում՝ այն հիշատակությունն էր, որ միսս Վերինգերը հրաժարվել է իր հարցերին պատասխանելուց և իր հետ խոսել է անհասկանալի կողմնակցամբ ու արհամարհանքով: Դա տարօրինակ էր, բայց ես դա վերագրեցի տեսուչի ինչ-որ մի անշնորհքության, որը գուցեև վիրավորել է ջահել աղջկան: Սա հիշելով՝ գործով զբաղվեցի մենակ: Հետադասություններս ավարտվեցին, ինչպես ձեզ հայտնի է, դուան վրացի բիծը հայտնարեբելով: Միսսը Ֆրենկլինի Բլեկի ցուցմունքներից պարզ է, որ այդ բիծը և արմատի անհետանալը նույն շղթայի օղակներն են: Երևիև հիմա ես կասկածում էի, ի դեպ, շատ անորոշ, որ, կարող է պատահել, լուսնաքարը գողացվել է, և որ զողը կարող է լինել ծառաներից որևէ մեկը: Շատ լավ: Իսկ ի՞նչ պատահեց հետաքննության տվյալ փուլում: Հանկարծ միսս Վերինգերը դուրս եկավ իր սենյակից և խոսքի բռնվեց ինձ հետ: Ես երեք կասկածելի հանգամանք նկատեցի. նա դեռևս անհավատալիորեն հուզված էր, թեև արմատի կորչելուց հետո մեկ օրից ավելի էր անցել. նա նույնքան կողտորեն էր վարվում ինձ հետ, որքան և տեսուչ Սիգրևի. և նա խիստ ջգտնանում էր միսսը Ֆրենկլինի Բլեկի վրա: Հիանալի՜ է: Ահա ասում եմ ինքս ինձ, մի ջահել աղջիկ, որը զրկվել է հարվածազուտ թանկաթեք առարկայից. ջահել աղջիկը, ինչպես արքերս ու ականջնհրս ևն ինձ ասում, շատ դյուրարորբոք և անզուսպ է: Այս իրավիճակում և այդպիսի բնավորություն ունենալով՝ ի՞նչ է անում նա: Նա անհասկանալի լշնամանք է ցուցաբերում միսսը Բլեկի, տեսուչի և իմ նկատմամբ, այլ խոսքով, հենց այն երեք հոգու նկատմամբ, որոնք տարբեր եղանակներով աշխատում են օգնել իրեն գտնելու իր կորած առարկան: Հետաքննությունս մինչև այս կետը հասցնելով, միլեդի, այդ ժամանակ, և միայն այդ ժամանակ, ես դիմեցի իմ փորձառությանը: Այդ փորձառությունը բացատրեց միսս Վերինգերի վարմունքը, որը հակառակ դեպքում բոլորովին անհասկանալի է թվում: Այդ փորձառությունն ինձ ստիպեց նրան դասել իմ ճանաչած ուրիշ ջահել աղջիկների շարքը: Այդ փորձառությունն ինձ հուշեց, որ նա՝ միսս Վերինգերը,

պարտքեր ունի, որ չի համարձակվում խոստովանել, և որոնք, ինչ ուզում է լինի, պետք է վճարվեն: Եվ ես չեմ կարող ինքս ինձ շահարջնել. արդյոք արմաստի կորուստ չի՞ նշանակում միայն այն, որ արմաստը կօգտապործվի այդ պարտքերը վճարելու համար: Ահա մի Լզրակացություն, որին իմ փորձառությունը հանդում է հասարակ փաստերից: Ինչո՞ւ վարող է սրա դեմ առարկել ձեր փորձառությունը, միլեդի:

— Միայն նրանով, ինչ արդեն ձեզ ասել եմ,— պատասխանեց տիրուհիս:— Հանդամանքները ձեզ խաբում են:

Խուզարկու Կաֆր շարունակեց.

— Ճշմարիտ էր իմ Լզրակացությունը, թե ոչ, միլեդի, ես պետք է նախ և առաջ ստուգելի այն: Միլեդի, ես ձեզ առաջարկեցի ստուգել տանը եղած ամբողջ հաղուստեղենը: Դա միակ եղանակն էր գտնելու այն զգեստը, որը, ամենայն հավանականությամբ, հետք է թողել դռան վրա, և դա միակ եղանակն էր ստուգելու իմ Լզրակացությունը: Իսկ ի՞նչ ստացվեց դրանից: Դուք, միլեդի, համաձայնվեցիք դրան: Միտար Բլեկը համաձայնվեց, միտար էբլուայթը համաձայնվեց: Միայն միսս Վերինդերը կասեցրեց հետաքննությունը, կտրականապես հրաժարվելով: Այս արդյունքն ինձ ապացուցեց, որ իմ կասկածներն իրավացի են: Եթե դուք և միտար Բետտերչը, այնուամենայնիվ, չեք ուզում համաձայնվել ինձ հետ, դուք պետք է որ կույր լինեք այն ամենի հանդեպ, ինչ այսօր կատարվեց ձեր աչքի առաջ: Ձեր ներկայությամբ ես Երիտասարդ աղջկան բարձրաձայն ասացի, որ ներկա իրավիճակում իր մեկնումը կարող է խանգարել ինձ գտնելու իր արմաստը: Ինքներդ տեսաք, թե ինչպես նա, չնայած իմ հայտարարությանը, կառուպանին հրամայեց շարժվել: Ինքներդ տեսաք, որ, փոխանակ շնորհակալ լինելու, որ միտար Բլեկը մնացած բոլորից ավելին արեց, որպեսզի ինձ օգնի լուծելու հանելուկը, նա՞ միսս Վերինդերը, միտար Բլեկին միրավորեց իր մոր տան աստիճանների վրա: Ի՞նչ է նշանակում սա: Եթե միսս Վերինդերը հաղորդակից չէ արմաստի կորչելուն, ապա ի՞նչ է նշանակում սա:

Խուզարկուն նայեց ինձ: Սարսափելի էր լսել, թե ինչպես նա իրար Լտեից շարում է միսս Ռեչելի դեմ ուղղված ապացույցները, և զիտակցել, որ դու, օրիորդին պաշտպանելու



բուն ցանկութեամբ հանդերձ, ոչնչով չես կարող նրան առարկել: Ես, փառք ասածու, գատողութեան փաստարկներից հաստատապես վեր եմ կանգնած: Դա ինձ օգնեց հաստատապես մնալու միլեգիի առաակեալի վրա: Դա ինձ օգնեց հանգիտ գիմանալու միտար Կաֆի հայացքին: Ընթերցող, աղաչում եմ ձեզ, օգտվեք իմ օրինակից: Դա ձեզ կփրկի շատ անախորժութեաններից: Ձեր մեջ դաստիարակեք գերազանցութեան բանականութեան փաստարկների նկատմամբ, և կտեսնեք, թե ինչքան անսասան կլինեք ուրիշների աչն ջանքերի հանդեպ, որոնց նպատակն է հանուն ձեր սեփական բարօրութեան ձեզ դրկել հոգու հանգստութեանից:

Տեսնելով, որ և՛ ես, և՛ տիրուհիս լուս ենք, խուզարկու Կաֆը շարունակեց (ան՛ր աստված, ինչպես էի կատաղում, որ մեր լուսթյունը ամենեին շփոթեցրեց նրան)։

— Այսպիսին են, միլեգի, Եզրակացութեանները, որոնք մեղադրում են միայն միսս Վերինդերին: Այժմ դիմենք այն սպացույցներին, որոնք խոսում են ընդդէմ միսս Վերինդերի և հանգուցյալ Ռոզաննա Սպիրմանի՝ միասին վերցրած: Ձեր թուշտվութեամբ մի պահ անդրադանանք ձեր ազգկա՝ իր հանդերձարանը ստուգելուց հրաժարվելուն: Այդ հրաժարվելուց հետո նոր ես հանգեցի իմ եզրակացութեանը, բայց ևս սկեք է ինձ համար երկու հարց վճռելի: Առաջինը, ինչպե՞ս շարունակեմ հետաքննութեանը: Երկրորդ, միսս Վերինդերը հանցակից ունի՞ սպասուհիների մեջ, թե ոչ: Սա լավ կշտագասելով, որոշեցի հետաքննութեանը տանել բոլորովին սխալ ձևով, պաշտոնական տեսակետից: Ինչո՞ւ: Որովհետեւ գործ ունեի ընտանեկան ազմկալի դորժի հետ, որը շսկար է դուրս գար ընտանիքի շրջանակներից: Որքան քիչ ազմուկ լինեք, որքան քիչ լինեք կողմնակի մարդկանց օգնութեանը, այնքան լավ: Կասկածանքով մարդկանց բռնելու, դատարանում նշրանց հարցաքննելու և նման այլ բաներ այստեղ բոլորովին պետք չէին, եթե ձեր դուտորն ինքը, միլեգի, ինչպես որ ես այդ ենթադրում եմ, եղել է այդ ամբողջ գործի կենտրոնում: Այսպիսի պայմաններում ես զղում էի, որ միտար Բետտերեջի նման մեկը՝ իր բնավորութեամբ և տանը զրափած զիրքով մեկը, որ ճանաչում է ծառաներին ու դողում է ընտանիքի պատվի վրա, օգնականի դերի համար շատ ավելի հարմար է,

բան ձևերիս տակ եղած մնացած բոլորը: Ես ինձ օգնական կվերցնեի միտքը Բլեկին, բայց մի հանգամանք խանգարեց: Միտքը Բլեկը հենց սկզբից նկատել էր, թե ինչ ուղղութեամբ է գնում իմ հետաքննությունը, և միտք Վերինգերի նկատմամբ նրա նվիրվածության առկայությամբ իմ ու նրա միջև փոխադարձ ըմբռնումն անհնարին եղավ: Միլեդի, այս բոլոր մանրամասնություններով ձեզ անհանգստացնում եմ նրա համար, որպեսզի ցույց տամ, որ այդ գաղտնիքը ես չեմ դուրս բերել ընտանեկան շրջանակի սահմաններից: Ես այդ գաղտնիքն իմացող միակ կողմնակի մարդն եմ. իսկ քննիչի իմ կարիերան կախված է նրանից, թե որքան կարող եմ լուել ես:

Այս խոսքի վրա զգացի, որ իմ կարիերան կախված է իմ շնորհից: Ես չէի կարող զիմանալ, որ իմ այս տարիքում տիրուհուս առջև ներկայացվեի որպես տնային խուզարկու:

— Ռուչտովություն եմ խնդրում ձեզ զեկուցելու, միլեդի,— ասացի ես,— որ սկզբից մինչև վերջ երբեք գիտակցաբար չեմ օգնել այս նողկալի հետաքննությանը և միտքը Կաֆին խնդրում եմ հերքել ասածներս, եթե համարձակվի:

Այսպիսով ազատություն տալով գզացմունքներին, մեծ թեթևություն զգացի: Միլեդին ինձ պատիվ արեց, բարեկամաբար թողնելով ուստի Արդարացի ղայրույթով նաչեցի խուզարկուին, ցանկանալով իմանալ, թե ինչ է մտածում նման վկայության մասին: Նա մի հեղ հայացք զցեց ինձ վրա և, թվում էր, առաջվանից ավելի մեծ համակրանք զգաց իմ նկատմամբ:

Միլեդին նրան առաջարկեց շարունակել իր բացատրությունը:

— Հասկանում եմ,— ասաց նա,— որ դուք բարեխղճորեն ձեր բոլոր ջանքերն օգտադրածեցիք հօգուտ այն բանի, ինչը իմ շահն էք համարում: Ես պատրաստ եմ լսել, թե ինչ կասեք հետո:

— Այն, ինչ որ կասեմ հետո,— պատասխանեց միտքը Կաֆը,— վերաբերում է Ռոզաննա Ապիրամանին: Երիտասարդ կնոջը, ինչպես դուք, երևի, հիշում եք, միլեդի, ճանաչեցի, երբ նա այստեղ բերեց սպիտակեղենի գիրքը: Մինչ այդ պահը ես կասկածում էի՝ արդյո՞ք միտք Վերինգերն իր գաղտնիքը վստահել է որևէ մեկին: Երբ Ռոզաննային տեսա՝ կ.

ծիրքս փոխեցի: Սկսեցի կասկածել, որ նա հաղորդակից է  
ալմաստի կորչելուն: Խեղճ աղջիկը մեռավ ստրասփելի մու-  
հով, և ես շեմ ուզում, որպեսզի դուր, միլեդի, հիմա, երբ նա  
այս աշխարհում չէ, մտածեք, թե ես անարդար և դաժան եմ  
եղել նրա նկատմամբ: Եթե դա գողութեան սովորական դեպք  
լիներ, ապա ես Ռոզաննայի վրա կկասկածեի այնպես, ինչ-  
պես տանը եղած մյուս բոլոր ծառաների վրա: Փորձը մեզ  
ասում է, որ ուղղիչ տանը եղած կանայք, երբ ծառայության  
են մտնում, և երբ սիրալիր ու արդարացի են վարվում նրանց  
հետ, մեծ մասամբ անկեղծորեն զոջում են և արժանի են լի-  
նում այն ուղորմածություններին, որոնցով նրանց շրջապա-  
տում են: Բայց դա գողութեան սովորական դեպք չէր: Իմ կար-  
ծիքով, դա խորամանկորեն մտածված ծրագիր էր՝ հենց ալ-  
մաստի տիրոջ մասնակցությունը: Այդ նկատի ունենալով, ես,  
շատ բնական է, նախ և առաջ հիշեցի Ռոզաննային ու հետև-  
յալը մտածեցի. արդյո՞ք միսս Վերինդերը, ներսղություն եմ  
խնդրում, միլեդի, կդոհանա մեր այն ենթադրությամբ, որ  
լուսնաքարը պարզապես կորել է, թե՞ ավելի հեռուն կգնա և  
կաշխատի ուրիշներին համոզել, որ լուսնաքարը գողացված  
է: Վերջին դեպքում Ռոզաննա Սպիրմանը, գողի իր անցյալով,  
նրա ձեռքի տակ եղել է մի անձնավորություն, որը շատ ավե-  
լի կարող է ձեզ, միլեդի, և ինձ դուրս բերել կեղծ ճանապարհ:  
Արդյո՞ք հնարավոր էր, հարցրել եմ ինքս ինձ, գործը բնագեմ  
Ռեչելի և Ռոզաննայի շարագրել առավել զգվելի տեսանկյու-  
նից: Պարզվում է՝ հնարավոր էր, ինչպես որ հիմա կտեսնեք:  
Հանգուցյալին կասկածելու ուրիշ պատճառ եմ ունեցել,— շա-  
րունակեց խուզարկուն,— մի պատճառ, որն ավելի համոզիչ է  
թվում ինձ: Բոլորից լավ ո՞վ կարող էր օղնել միսս Վերինդե-  
րին՝ գաղտնի կերպով ստանալու ալմաստի համար արված  
փողը: Ռոզաննա Սպիրմանը: Միսս Վերինդերի դրություն մեջ  
գտնվող ոչ մի երևույթարդ աղջիկ չէր կարողանա անձամբ  
այդպիսի վտանգավոր գործ կատարել: Նա պետք է օգնա-  
կան ունենար, իսկ ո՞վ կարող էր ավելի պիտանի լինել դրա  
համար, նորից եմ հարցնում, եթե ոչ Ռոզաննա Սպիրմանը:  
Ձեր հանգուցյալ սպասուհին, միլեդի, գող եղած ժամանակ  
շատ լավ է իմացել իր արհեստը: Ես հաստատա պիտեմ, որ նա  
կապ է ունեցել Լոնդոնի այն սակավաթիվ վաշխատուններից

մեկի հետ, որոնք կհամաձայնվեն շատ փոք տալ այնպիսի մի հաշանի իմանկարժեք իրի համար, ինչպիսին Լուսնաբարն է, առանց անհարմար հարցեր տալու և անհարմար սլաշմաններ պարտադրելու: Միլեդի, այս ամենը սգահեք ձեր մտքում, իսկ հիմա թույլ տվեք ինձ բացատրել, թե ինչպես իմ կասկածները հաստատվեցին Ռոզաննայի արարքներով և ինչքան սլարզ եղրակացությունների կարելի է հանդել դրանցից...

Դրանից անմիջապես հետո նա մեկ առ մեկ քննության ենթարկեց Ռոզաննայի արարքները: Դուք, ինչպես և ես, արվեն ծանոթ եք այդ արարքներին և կհասկանար, թե ինչպես այդ անհերքելի փաստարկները սովեր դեցեցին մեռած խեղճ աղջկա հիշատակի վրա, ապացուցելով նրա մասնակցությունը ալմաստի անհետացմանը: Նույնիսկ տիրուհիս վախեցավ նրա ասածներից: Միլեդին նրան ոչինչ չպատասխանեց և նա ավարտեց իր խոսքը:

Խուզարկուի համար կարծես միևնույն էր՝ պատասխանում են իրեն, թե ոչ: Նա, զրոյք նրան տանի, շարունակեց նույն հաստատակամությամբ:

— Այս ամբողջ գործը շարադրելով այնպես, ինչպես ես այն հասկանում եմ, — ասաց նա, — ինձ մնում է միայն ավելալացնել, միլեդի, թե ինչպես եմ մտադիր գործել այսուհետև: Հետաքննությունը հաջող ավարտի հասցնելու երկու եղանակ եմ տեսնում: Դրանցից մեկը համարում եմ առավել հուսալի: Մյուսը նկատի ունեմ միայն որպես համարձակ փորձ, և ուրիշ ոչինչ: Դա, միլեդի, ինքներդ որոշեք: Արդյո՞ք հուսալի եղանակը կընտրենք:

Տիրուհիս նշան նշան արեց, որ նա վարվի իր ուղածի պես և ինքն էլ ընտրություն կատարի:

— Շնորհակալ եմ, — պատասխանեց խուզարկուն: — Սկսենք արժանահավատ եղանակից, քանի որ ձերդ պայծառութիւնը ընտրությունը թույնում է ինձ: Միսս Վերինգերը կմնա Ֆրիդինհոլում, թե կվերադառնա այստեղ՝ ես մտադիր եմ թե մեկ, թե մյուս դեպքում ուշադիր հետևել նրա բոլոր արարքներին՝ մարդկանց, որոնց հետ նա տեսնվում է, ձեռով կամ ստորով զբոսանքներին, որ նա կատարելու է, նամակներին, որ նա ստանալու է կամ գրելու է:

— Հետո՞, — հարցրեց տիրուհիս:

— Հետո,— պատասխանեց խուզարկուն,— կխնդրեմ ձեզ, միլեդի, տանը Ռոզաննա Սպիրմանի փոխարեն սպասուհի վերցնել աչքօրինակ գաղտնի հետաքննություններին սուղոր մի կնոջ, որի համետառության համար կարող եմ երաշխավարել:

— Հետո՞,— կրկնեց տիրուհիս:

— Հետո,— շարունակեց խուզարկուն,— մտադիր եմ լոնդոնի ընկերներինց մեկին հանձնարարել, որ կապ հաստատի այն վաշխառուի հետ, որը, ինչպես հիշատակել եմ, առաջ ծանոթ է եղել Ռոզաննա Սպիրմանի հետ և որի անունն ու հասցեն (միլեդի, կարող եք ինձ վստահել) Ռոզաննան հաղորդել է միսս Վերինդերին: Ես չեմ ժխտում, որ առաջարկածս միջոցառումները փող կարժեհան և շատ ժամանակ կպահանջեն: Բայց դրանց արդյունքը կասկածից վեր է: Մենք մի օղակ կգծենք լուսնաբարի շուրջը և կսկսենք աստիճանաբար սեղմել այն, մինչև որ լուսնաբարը կդառնա միսս Վերինդերի ձեռքում, եթե, իհարկե, նա որոշի այն թողնել իր շոտ: Իսկ եթե նրա պարտքերն անհետաձգելի են և նա որոշի ծախել, ապա մենք կունենանք մի մարդ, որը, լուսնաբարը լոնդոն հասնելուն պես, անմիջապես կճանկի այն:

Հարազատ աղջկա հետ կապված այդպիսի ենթադրություններ լսելը տիրուհուս համար այնքան անտանելի էր, որ նա առաջին անգամ խոսեց զայրույթով:

— Համարեք, որ ձեր առաջարկը բուրբովին մերժված է, և բացատրեք հետաքննությունը մինչև վերջ հասցնելու ձեր մյուս եղանակը:

— Իմ մյուս եղանակը,— շարունակեց խուզարկուն առաջվա պես անկաշկանդ,— մի համարձակ փորձ կատարելն է: Ինձ թյուժ է ես բաժանանալափ ճիշտ պատկերացում եմ կազմել միսս Վերինդերի բնավորության մասին: Նա, իմ կարծիքով, միանգամայն ընդունակ է համարձակ խարեության: Բայց նա չափից դուրս բուռն ու զյուրաբորբոք բնավորություն ունի և սովոր չէ խարելու, այդ պատճառով էլ չի կարող երկերեսանիություն անել ու զսպել իրեն, երբ բորբոքվելու առիթ կա: Այդ ամբողջ ժամանակամիջոցում նրա զգացմունքները բազմիցս դուրս են եկել իր հսկողությունից,

այն գիւղքում, երբ նրա շահերը պահանջել են թաքցնել զբրանքս։ Նրա բնավորութեան հենց այս առանձնահատկութեան վրա էլ առաջարկում եմ ներդործել։ Ուզում եմ անսպասելիորեն ուժեղ ցնցում պատճառել նրան այնպիսի հանգամանքներում, որոնք կգիպչեն նրան։ Պարզ ասած, ուզում եմ անսպասելիորեն նրան հագորդել Ռոզաննայի մահը, հուսալով, որ նրա լավագույն զգացմունքները նրան կստիպեն անկեղծորեն ամեն ինչ խոստովանել։ Այս եղանակը միլիդին ընդունում է, թե ոչ։

Տիրուհիս չափազանց դարմացրեց ինձ։ Նա անմիջապես պատասխանեց։

— Այո, ընդունում եմ։

— Երկանիվ կառքը մատուցված է,— ասաց խուզարկուն։— Թույլ տվեք, միլիդի, բարի լույս մաղթել ձեզ։

Միլիդին ձեռքը բարձրացրեց և դռան մեջ կանգնեցրեց նրան։

— Իմ դստեր լավագույն զգացմունքները փորձութեան կենթարկվեն, ինչպես դուք ևք առաջարկում,— խոսեց նա,— բայց ես, որպես մայր, պահանջում եմ այդ փորձութունն անձամբ անցկացնելու իրավունք։ Մնացեք այստեղ, իսկ Ֆրիդինհոլ կմեկնեմ ինքս։

Կյանքում առաջին անգամ նշանավոր Կաֆր ամենասովորական մարդու պես համբուցավ դարմանքից։

Տիրուհիս ղանգը հնչեցրեց և հրամայեց տալ իր անջրթափանց թիկնոցը։ Անձրերը շարունակում էր թափվել, իսկ ծածկակառքը, ինչպես ձեզ հայտնի է, Ֆրիդինհոլ էր տարել միսս Ռեչելին։ Ես աշխատում էի տիրուհուս համոզել, որ իրեն շենթարկի Լզանակի խոստովանք։ Բոլորովին ապարդյուն։ Խնդրեցի, որ թույլ տա իր հետ գնամ և անձրեկանոցը պահեմ վրան։ Նա լսել անգամ չուզեց այդ մասին։ Երկանիվ կառքը մոտեցավ ձիավոր ծառայի ուղեկցութեամբ։

— Կարող եք լիովին հավատարացած լինել,— նախասրահում ասաց նա խուզարկու Կաֆին,— որ ես այդ փորձը միսս Վերինգերի հետ կկատարեմ նույնքան համարձակորեն, որքան այդ կարող էիք անել ինքներդ։ Եվ արդյունքը ձեզ կհաղորդեմ

կամ բանալոր, կամ գրավոր՝ այսօր վերջին գնացքը Լոնդոն մեկնելուց առաջ:

Այս ասելով նա նստեց երկսոխով կառքը և, սահձք վերցնելով, մեկնեց Ֆրիդինհոլ:

## Գ Լ Ո Ւ Խ Ա Ն Ա Ւ

Նրբ ախրուհիս արդեն մեկնել էր, ևս ժամանակ ունեցազրազվելու խուզարկու Կաֆով: Նրան գտա ներքևի սրահի մի հարմարավետ անկյունում նստած: Նա իր ծոցատեարն էր աչքի անցկացնում, և նրա շուրթերի անկյունները խիստ ծոմավում էին:

— Մեր գո՞րն եք թնության ենթարկում,— հարցրի ես:

— Ոչ,— պատասխանեց խուզարկուն:— Պարզում եմ, թե ինչ գործով եմ զբաղվելու սրանից հետո:

— Օ՛,— բացականչեցի ես:— Ուրեմն դուք գտնում եք, որ մեզ մոտ արդեն ամեն ինչ ավարտված է:

— Ես գտնում եմ,— պատասխանեց խուզարկու Կաֆը,— որ լեդի Վերինդերը Անգլիայի ամենախելացի կանանցից մեկն է: Գտնում եմ նաև, որ Ժվելի հաճելի է նայել վարդին, քան արձաստին:

Լուսնաքարին վերաբերող այլևս ոչ մի խոսք հնարավոր չեղավ դուրս քաշել նրանից: Նա արդեն կորցրել էր ամեն մի հետաքրքրություն իր հետաքննության նկատմամբ:

Մինչդեռ ևս պետք է իմանայի, թե երեկոյան գնացքով մեր մոտից դնալու իր մտադրությունը չի՞ փոխել միստր Ֆրենկլինը: Միլեդիի սենյակում տեղի ունեցած խորհրդակցության մասին ինձ հարցուփորձելով և իմանալով, թե ինչով է այն ավարտվել, միստր Ֆրենկլինն անմիջապես որոշեց սպասել Ֆրիդինհոլից մոբաքրոջ ուղարկած լուրերին:

Նրկանիվ կառքը վերադարձավ իմ սպասածից կես ժամ շուտ: Միլեդին որոշել էր առայժմ մնալ քրոջ տանը: Չիավոր ծառան երկու նամակ էր բերել իմ տիրուհուց. մեկը՝ հասցեագրված միստր Ֆրենկլինին, մյուսը՝ ինձ:

Միստր Ֆրենկլինին հասցեագրված նամակն ուղարկեցի իրեն՝ զբաղարան: Ինձ ուղղված նամակը կարդացի իմ սենյակում: Ծրարը բացելիս միջից ընկած շեկը, նախքան նամա-

կի բովանդակութիւնը կարգալը, ինձ ապացուցեց, որ կուսնա-  
բարի հեռ կտալիս ճիշտ արձանագրութեան զգալի ցուցմը վճարած  
բան է:

Մարդ ուղարկեցի խուզարկու Կաֆին կանչելու ներս մըտ-  
նելուն պես նա նկատեց ձեռքիս եղած նամակը:

— Ա՛, — ձայնի մեջ ձանձրուցի՛մ ասաց նա: — Կուր էք  
ստացել Միլեդիից: Ինձ վերաբերո՞ւմ է, միտար Բետտերեջ:

— Բնքներդ դատեցեք, միտար Կաֆ:

Եվ ես նրան կարողացի նամակը (պատշաճ արտահայտա-  
կանութեամբ ու զգալուներով), որը կազմված էր հետևյալ  
արտահայտութիւններով.

«Իմ բարի Քարրիել, խնդրում եմ խուզարկու Կաֆին  
հաղորդել, որ ես կատարել եմ նրան տվածս խոստումը հետև-  
յալ արդիւնքով:

Միսս Վերինդերը հանդիսավորութեամբ հավատացնում է,  
որ ինքը երբեք և ոչ մի բառ ատանձին չի խոսել Ռոզաննայի  
հետ այն պահից ի վեր, որ այդ գծրախտ կինը սոր է վրել իմ  
տունը: Նրանք չեն հանդիպել նույնիսկ պատահականորեն,  
այն գիշեր, երբ անհետացել է արմատը, և նրանց միջև  
վճականապէս ոչ մի կապ չի եղել հինգշաբթի առավոտից,  
երբ սկսվել է տազնապը, մինչև շաբաթ օրը, երբ միսս Վե-  
րինդերը զնացել է մեր մոտից: Այսպիսին և զամ աղչկաս  
պատասխանը, երբ ես հանկարծակի և հակիրճ նրան հաղոր-  
դեցի Ռոզաննա Սպիրմանի ինքնասպանութեան մասին»:

Այդ տեղին հասնելով՝ աչքերս բարձրացրի միտար Կաֆի  
վրա ու հարցրի, թի ինչ է մտածում նա այս մասին:

— Միայն կվիրավորեմ ձեզ, եթե իմ կարծիքն արտա-  
հայտեմ, — պատասխանեց խուզարկուն: — Շարունակեք,  
միտար Բետտերեջ, շարունակեք:

Նրբ ես հիշեցի, թե ինչպէս այդ մտորը հանդիսութեան  
ունեցավ զանգաւովելու մեր այգեպանի համառութեանից,  
մեջս բուն ցանկութիւնն առաջացավ «շարունակելու» իմ  
բառերով և ոչ թե այն բառերով, որ գրված էին տիրուհու  
նամակում: Սակայն այս անգամ քրիստոնեական զգացմունք-  
ներս ինձ չզավաճանեցին:

Ես հաստատուն ձայնով շարունակեցի կարգալ միլեդիի  
նամակը.



«Միսս Վերինդերի հետ ոստիկանական սպայի առաջարկած ձևով վարվելուց հետո ես նրա հետ խոսակցի ինչպես որ ինքս էի անհրաժեշտ համարում, որպեսզի տպավորություն գործեմ նրա վրա: Նրա՝ տնից մեկնելուց առաջ ես երկու անգամ գտնուի նախազգուշացրել էի, որ նա շատ անհեթեթ կասկածանքների է ենթարկել իրեն: Հիմա էլ, առանց երկզիմի խոսքերի, նրան բացատրեցի, որ իմ երկյուղներն արդարացի են:

Նա հանգիստավորությամբ և հնարավորին շափ համոզիչ կերպով ինձ հավատացրեց, որ, նախ, ոչ մի սլարտք չունի. երկրորդ, ավմաստը իր ձեռքում չէ և չի եղել այն սլահից ի վեր, որ ինքը շորեքշաբթի օրն այն դրել է պահարանիկի մեջ:

Գտե՛րս արած խոստովանությունները սրանից դենը չեն գնում: Նա համառորեն լռում է, Երբ հարցնում եմ, թե չի՞ կարող արդյոք ինձ բացատրել ավմաստի անհետացումը: Նա արցունքն աչքերին հրաժարվում է, Երբ խնդրում եմ անկեղծ լինել ինձ հետ: «Կգա օրը, երբ դուք կիմանաք, թե ինչու ինձ համար միևնույն է, որ կասկածում են ինձ վրա, և ինչու լռում եմ նույնիսկ ձեզ մոտ: Ես շատ բան եմ արել մորս կարեկցանքին արժանանալու համար և չեմ արել ոչ մի այնպիսի բան, որը մորս ստիպեր կարմրել իմ փոխարեն»: Ահա աղջկաս ասածները:

Գտնում եմ, որ ոստիկանական սպայի և իմ միջև տեղի ունեցած խոսակցությունից հետո նա, թեև կողմնակի մարդ է, սխտք է, ինչպես որ դուք, խմանա միսս Վերինդերի սլատասխանը: Նամակս կարդացե՛ք նրան, իսկ հետո հանձնե՛ք նամակի մեջ նրա համար դրված չեկը: Նրա հետագա ծառայություններից հրաժարվելով, չեմ կարող շատել, որ համոզված եմ նրա բարեխղճության ու նրա խելքի մեջ. բայց համոզված եմ նաև, առաջվանից ավելի հաստատ, որ տվյալ դեպքում հանգամանքները ճակատագրականորեն խաբել են նրան»:

Նամակը սրանով ավարտվում է: Չեկը խուլարկու Կտֆին հանձնելուց առաջ հարցրի, թե չի՞ կամենում որևէ բան ասել:

— Միատր Բետտերեջ, իմ պարտականությունների մեջ չի մտնում արդեն ավարտված գործի մասին խոսել:

Ես սեղանի վրայով չեկը դրեցի նրան:



— Իսկ լեզի Վերինդերի նամակի այդ հատվածին հավատո՞ւմ եք,— վրդովված հարցրի ես:

Խուզարկուն նաչեց շեկին և թախծորեն բարձրացրեց հոնքերը, պատշաճը հատուցելով միլեդիի առատաձևոնությունը:

— Սա այնքա՛ն բարձր դնահատումն է իմ ժամանակի,— ասաց նա,— որ ինձ պարտավոր եմ համարում որևէ բանով հատուցել դրա համար: Միտար Բևտակերեջ, ևս կհիշեմ այս շեկի վրայի թիվը, երբ դրա համար առիթ լինի:

— Ի՞նչ նկատի ունեք,— հարցրի ես:

— Լեզի Վերինդերն առաջժրմ շատ հմտորեն է կարգավորել դորձը,— ասաց խուզարկուն:— Բայց ընտանեկան այս աղմկահարույց դեպքը պատկանում է այնպիսիների թվին, որոնք հանկարծ նորից բռնկում են այն ժամանակ, երբ գրեթե չեք սպասում: Ընդամենը մի քանի ամիս հետո մենք նորից ստիպված կլինենք զբաղվել կուսնաբարով:

Նրա ասածին լռատասիտա-

նեցի հետևյալ պարզ արտահայտություններով.

— Միտար Կաֆ, ձեր վերջին դիտողությունը վիրավորական եմ համարում միլեդիի և նրա դստեր համար:

— Միտար Բևտակերեջ, սա նախազգուշացում համարեք ձեզ համար, և դուք ավելի մոտիկ կլինեք նպատակակետին:

Որքան էլ ես բորբոքված էի ու ջղայնացած, այն դժոխա-  
յին վստահութիւնը, որով նա այդ պատասխանը տվեց ինձ,  
փակեց բերանս:

Ես մոտեցա լուսամուտին, որ հանգստանամ:

Խուզարկու Կաֆր նկատեց իմ մեջ տեղի ունեցած փոփո-  
խութիւնը և շատ տեղին մի խոսքով խրախուսեց այն:

— Բավական է, բավական է,— ասաց նա:— Ինչո՞ւ իմ  
տեսակետին չնայել այնպես, ինչպես միլեդին է նայում դրան:  
Ինչո՞ւ շատել, որ հանգամանքներն անաւար կերպով խաբել  
են ինձ:

Որնէ բանի միլեդիի պես նայելը շատ հաճելի առավելու-  
թիւն էր նույնիսկ այն անշահափետ դեպքում, որ այդ առա-  
վելութունն ինձ առաջարկել էր խուզարկու Կաֆր: Զայրույթս  
անմիջապես սառեց, և ես նորմալ վիճակի մեջ մտա: Միւս  
Ռեչելի վերաբերյալ միլեդիի և իմ կարծիքից բացի, ամեն մի  
ուրիշ կարծիքի ես նայում էի դոռոչ արհամարհանքով: Սա-  
կայն մի բան, որ չէի կարող անել, դա Լուսնաբարի մասին  
չխոսելն էր: Ողջամտութիւնը պետք է ինձ նախազգուշացնէր,  
ես դա գիտեմ, որ այդ գործը պետք էր հանդիսա խողնել:  
Բայց ասա թե ինչ: Այժմյան սերնդին բնորոշ առաքինութիւն-  
ները հայտնի չեն եղել իմ ժամանակներում: Խուզարկու Կա-  
ֆր դիպավ իմ հիւանդ տեղին ու, թեև ես արհամարհում էի  
նրան, այդ հիւանդ տեղն, այնուամենայնիւ, ցավում էր:  
Ավարավեց նրանով, որ ես նենգորեն նորից նրա ուշադրու-  
թիւնը բեռեցի լեզի վերինդերի նամակի վրա:

— Այս նամակն ինձ լիովին համոզեց,— ասացի ես,—  
բայց միևնույն է շարունակեք, գուցե կարողանաք հակառակը  
համոզել ինձ: Գուք մտածում եք, որ միսս Ռեչելի ասածներին  
չի կարելի հավատալ և որ մենք դեռ լսելու ենք Լուսնաբարի  
մասին: Հապա մի ապացուցեք դա, միստր Կաֆ,— աշխու-  
ժորեն եզրափակեցի ես:— Հապա մի ապացուցեք դա:

Նեղանալու փոխարեն խուզարկու Կաֆր թափով բռնեց  
ձեռքս և այնպես ամուր սեղմեց, որ մատներս ցավ զգացին:

— Նրդվում եմ կրկնքով,— հանդիսավորութեամբ բացա-  
կանչեց այդ տարօրինակ խուզարկուն,— ես վաղն եեթ ծա-  
ռայութեան կմտնեի, միստր Բետտերեզ, եթե հնարավորու-  
թիւն ունենայի ծառայելու ձեզ հետ մեկտեղ: Ասել, որ դուք

Երեխայի սրևս պարզամիտ եք, սրբ, կնշանակելու կոմպլիմենտ  
անել Երեխաներին, մի բան, որին արժանի չէ տասը փոքրի-  
կից ինը: Ոչ-ուչ, այլևս չենք վիճի: Դուք ինձնից ճշմարտու-  
թյունը կստանաք ավելի թեթև պոչմաննեկով: Այլևս ոչ մի  
խոսք չեմ ասի ոչ միլիոնի, ոչ էլ միսս վերինգերի մասին, ևս  
միայն կվերածվեմ մարդարե՛ր՝ կյանքումս առաջին անգամ և  
բացառապես ձեզ համար: Ես արդեն ձեզ նախազգուշացրել  
եմ, որ դուք դեռ չեք վերջացրել Լուսնաբարձի գործը: Շատ  
լավ: Հիմա ձեզ հրաժեշտ տալիս ևս կկանխադուշակեմ Երեք  
դեպք, որոնք, ինչպես ենթադրում եմ, իրենք ձեզ կստիպեն  
ուշադրություն դարձնել իրենց վրա, անկասի: այն բանից՝ դուք  
այդ ուզում եք, թե չեք ուզում:

— Ինչ արած, շարադրեք այդ դեպքերը, — ասացի ևս,  
ոմենեկն չշփոթվելով և նախկին աշխուժությամբ:

— Առաջինը, — սկսեց խուզարկուն, — եկող երկուշարժի  
դուք որոշ բաներ կլսեք Յուլանդիերից, երբ փոստատարը Ռո-  
զաննայի նամակը բերի Քոբս Հուլլ:

Եթե նա մի դուլլ սառը ջուր լցնեք զլսիս, առկա, կաս-  
կածում եմ, որ ավելի տ՛ան լինեք: Միսս Ռեչելի հավաս-  
տիացումը, թե ինքն անմեղ է, բուլտովին անբացատրելի էր  
դարձնում Ռոզաննայի վարժունքը՝ նոր գիշերանոց կարելը,  
կեղտոտվածը թաքցնելու փորձերը և նման բաներ: Դա  
իմ մտքով չէր անցել այնքան ժամանակ, մինչև որ խուզար-  
կու Կաֆր մի ակնթարթում բոլորն ինձ հիշեցրեց:

— Երկրորդ, — շարունակեց խուզարկուն, — դուք նորից  
կլսեք Երեք հնդիկների մասին: Դուք նրանց մասին կլսեք այս  
տեղերի մոտակայքում, եթե միսս Ռեչելը մնա այստեղ: Նը-  
բանց մասին կլսեք Լոնդոնում, եթե միսս Ռեչելը դնա  
Լոնդոն:

Երեք տնտեսարանների հանդեպ ամեն մի հետաքրքրություն  
կտրցրած և իմ օրինորդի անմեղության մեջ միանգամայն  
հավատացած, ևս բավակասնաշափ հեշտությամբ ընդունեցի  
Երկրորդ կանխազուշակությունը:

— Կատարվելիք Երեք դեպքերից դուք թվարկեցիք եր-  
կուսը, — ասացի ևս: — Իսկ ո՞րն է երրորդը:

— Երրորդը, և վերջինը, այն է, որ դուք վաղ թե ուշ որոշ  
բաներ կլսեք Լոնդոնի այն վաշխառուի մասին, որին արդեն

համարձակությունն եւ ունեցել հիշատակելու երկու անգամ: Տվեք ինձ ձեր ծոցատետրը, և ես, ամենայն սպաւազայի համար, նրա մեջ կգրեմ վաշխառուի անունն ու հասցին, որսկեսոքի, հրք այդ պատահի, այդ հաշվով սխալ չլինի:

Նա մի մաբուր թերթի վրա պարզորոշ գրեց. «Միտար Սեպտիմուս Լյուկեր, Միլլսեկի հրատարակ, Լամբելթ, Լոնդոն»:

— Ահա,— հասցին մասնադուլց անելով՝ ստաց նա,— Լուսնաքարին վերաբերող վերջին խոսքը, որով անհանգստացնում եմ ձեզ ներկայումս: Յպագան ցույց կտա՝ իրավայի եմ ես, թե ոչ: Իսկ առայժմ, սրբ, հետո տանում եմ ձեր նկատմամբ ունեցած անկեղծ հարգանքը, սրբ, կարծում եմ, պատիվ է բերում երկուսիս էլ: Եթե մենք չհանդիպենք մինչև իմ պաշտոնաթող լինելը, հույս ունեմ ձեզ հյուր տեսնել Լոնդոնի մոտերքի իմ փոքրիկ տանը, որ մտածում եմ ձեռք բերել: Խոստանում եմ ձեզ, միտար Բեատերեջ, որ իմ այցում կլինեն խոտածածկ անցուղիներ:

### Գ Լ ո Վ իս XXIII

Նա երկանիվ կառքը պատրաստել էի այն պարագայի համար, եթե միտար Ֆրենկլինն անպայման կամենար մեկնել Լրեկոյան գնացքով: Սկզբում ուղեբեռի, իսկ նրանից հետո նաև իր՝ միտար Ֆրենկլինի, աստիճանների վրա հայտնվելն ինձ բավականաչափ պարզորոշ ցույց տվեց, որ նա կյանքում առաջին անգամ հաստատապես հետևում է իր ընդունած վճռին:

— Ուրեմն որոշել եք անպայման մեկնել, սրբ,— ասացի ես, հրք հանդիպեցինք ներքեի սրահում:— Ինչո՞ւ մի երկու օր շտպասել և ուշքի գալու հնարավորություն չտալ միսս Ուշեկին:

Պատասխանելու փոխարեն նա ինձ տվեց այն նամակը, որ միլեդին գրել էր իրեն: Նամակի մեծ մասը զբաղեցրել էր այն, ինչ միլեդին արդեն ասել էր իմ ստացած նամակում: Բայց վերջում կար միսս Ռեչեկին վերաբերող մի հավելում,

որը, եթե ուրիշ ոչինչ չբացատրեր, ապա կբացատրեր միստր Ֆրենկլինի մտադրությունը:

«Դուք, երևի, զարմանում եք.— դուրս է միլեգին,— որ ես դատերս թույլ եմ տալիս կատարյալ անտեղյակություն մեջ թողնել ինձ: Կորեկ է քսան հարյար ֆունտ արժողությամբ ավմաստ, և ես պետք է ենթադրեմ, որ այդ կորուստը ոչ մի գազանիք չի ներկայացնում Ռեչելի համար. որ լուելու անհասկանալի պարտավորություն է նրա վրա դրել ինձ բոլորովին անհայտ ինչ-որ մի մարդ կամ ինչ-որ մարդիկ, հետապնդելով այնպիսի մի նպատակ, որը ես նույնիսկ կռահել չեմ կարող: Արդյոք բացատրելի՞ է, որ ես թույլ եմ տալիս այս ձևով վարվել ինձ հետ Միանդամայն բացատրելի է Ռեչելի սույն կացությունում: Ես այնպիսի նյարդային զրգալածություն մեջ է, որ խղճալի է նրան նայելը: Ես Լուսնաբարի հարցը չեմ համարձակվի նորից սուսջ քաշել այնքան ժամանակ, մինչև որ նա գոնև մի քիչ կհանգստանա: Ահա թե ինչու ես, առանց տատանվելու, ազատ արձակեցի խողարկուին: Մեզ շփոթեցնող գաղտնիքը շփոթեցնում է նաև նրան: Այս գործում կողմնակի մարդը մեզ չի կարող օգնել: Նրա ներկայությունը խորացնում է իմ տառապանքները, իսկ Ռեչելը նրա անունն անգամ լսել չի կարող:

Ապագայի իմ ծրագրերը մտածված են այնքան լավ, որքան դա հնարավոր է: Մտադիր եմ Ռեչելին տանել Լոնդոն. մասամբ նրա համար, որպեսզի նրան հանդատացնեմ տեղի փոփոխությամբ, մասամբ էլ նրա համար, որպեսզի փորձեմ, թե ինչ կարելի է անել՝ ամենալավ բժիշկների հետ խորհրդակցելով: Տեղի՞ն կլինի ձեզ խնդրել, որ մեզ հետ հանդիպեր Լոնդոնում: Թանկագին Ֆրենկլին, դուք էլ ինձ նման պետք է ձեր կողմից համբերություն ցուցաբերեք և սպասեք, ինչպես որ ես եմ սպասելու, ամիսի հարմար ժամանակի: Այն արժեքավոր օգնությունը, որ դուք ցույց եք տվել հետաքրքրություններ, Ռեչելին՝ իր այժմյան հոգեկան վիճակում, շարունակում է թվալ աններելի վիրավորանք: Այս հարցում կորուրն գործելով՝ դուք միայն ավելացրել եք նրա տառապանքները, քանի որ օգնել եք նրա գաղտնիքի բացահայտմանը: Ես չեմ կարող ներել այն շարությունը, որով նա ձեզ մեղադրում է այն տխուր հետևանքների համար, որոնք ոչ դուք, ոչ

ևս չէինք կարող պատկերացնել կամ կանխատեսել: Ռեչելին հնարավոր չէ համոզել որևէ բանում. նրան կարելի է միայն խղճալ: Ցավով պետք է ասել, որ լավ կլինի, եթե առայժմ դուք և Ռեչելը չհանդիպեք: Միակ խորհուրդը, որ կարող եմ առաջարկել ձեզ, հետևյալն է՝ ուշքի դալու ժամանակ տվեք նրան»:

Նամակը վերադարձրի, անկեղծորեն խղճալով միտքը Ֆրենկլինին, որովհետև գիտեի, թե նա ինչքան է սիրում օրիորդին, և տեսնում էի, որ Ռեչելի մոր խոսքերը խոցել են նրան մինչև հոգու խորքը:

— Դուք գիտեք այս առածը, սըր (ահա այն բոլորը, որ ես նրան ասացի).— երբ բանը հասնի վատթարագույնին, այն կոկոսի փոխվել դեպի լավը: Մեր գործերը, միտքը Ֆրենկլին, չեն կարող ավելի վատ լինել, քան հիմա են:

Միտքը Ֆրենկլինը ծալեց մորաքրոջ նամակը. ասածներս, երեի, այնքան էլ չէին սփռվել նրան:

— Նրբ այդ ահավոր արմատն առած այստեղ եկա Լոնդոնից, կարծում էի, թե այս ընտանիքից ավելի երջանիկ ընտանիք չի լինի Անգլիայում,— ասաց նա:— Նայեք հիմա այս ընտանիքին: Ցրված է, պառակտված է, այս տան օդն անգամ թունավորված է գաղտնիքներով ու կասկածներով: Հիշո՞ւմ եք այն առավոտը Սրերուն ավագներում, երբ մենք խոսում էինք իմ քեռի Հեմկաստի և ծննդյան օրվա առթիվ արած նրա նվերի մասին: Բետտերնջ, Լուսնաքարը զնդապետի վրիժառույթյան դրոժիք եղավ, և այն էլ այնպիսի, որ զնդապետն ինքը անգամ չէր կարող պատկերացնել:

Այս ասելով, նա սեղմեց ձեռքս ու գնաց դեպի երկանիվ կառքը:

Ես աստիճաններով իջա նրա հետևից: Ցավալի էր տեսնել, թե ինչպես նա թողնում էր այն հին տունը, որտեղ իր կյանքի ամենաերջանիկ տարիներն էր անցկացրել: Պենելոպեն, տանը կատարված ամեն ինչից խիստ հուզված, արցունքն աչքերին, եկավ հրաժեշտ տալու միտքը Ֆրենկլինին: Սա համբուրեց նրան: Ես ձեռքս թափ տվի, կարծես ասելով. «Բարի ճանապարհ, սըր»: Մի քանի սպասուհիներ անկյունից նայում էին նրան: Նա այն տղամարդկանցից էր, որոնք դուր

էն գալիս բոլոր կանանց: Վերջին պահին ևս կանգնեցրի երկունիվ կաթրը և մխտոր Ֆրենկլինին խնդրեցի, որպէս սղորմածութեան, նամակով տեղեկացնել իր մասին: Նա, կարծեմ, ուշադրութեան շղարձրեց ասածիս. շուրջն էր զննում, նայելով մերթ մեկ, մերթ մյուս առարկային, կարծես հրաժեշտ տալով հին տանն ու այգուն:

— Ասացիք մեզ, սըր, ո՞ւր եք մեկնում,— հարցրի ևս, աշխատելով իմանալ նրա ասլադա ծրագրերը:

Միտոր Ֆրենկլինը հանկարծ գլխարկը քաշեց մինչև հոնքերը:

— Ո՞ւր եմ մեկնում,— կրկնեց նա:— Մեկնում եմ գրողի ծոցը:

Այս խոսքի վրա պոնին ցնցվեց, ասես քրիստոնեական զզվանք զգալով դրա նկատմամբ:

— Ուր էլ որ դնաք՝ աստված ձեզ հետ լինի, սըր, ուր էլ որ դնաք,— ահա այն բոլորը, որ ևս հասցրի ասել, նախքան նրա՝ աչքից անհետանալը:

Հաճելի՜, սիրելի՜ Լորտասարգ: Իր բոլոր թերութիւններով ու խենթութիւններով հանդերձ՝ սիրելի ու հաճելի Լորտասարգ: Միլեդիի տնից գնալով՝ նա իրենից հետո թողեց մի տխուր դատարկութեան:

Երբ շաբաթ օրվա այդ ամառային երկար Լրեկոն Է վերջո մոտեցավ իր վախճանին՝ տունը վերջնականապէս թաղվեց տխրութեան մեջ:

Սա ինձ քաջալերում էի՝ ձեռքիս ամուր սլահած ծխամորճը և «Մորթինդոն Կրուդոն»: Կանայք, Պենելոպեից բացի, ժամանակն անցկացնում էին Ռոզաննայի ինքնասպանութեանը վերաբերող ասեկոսներով ու դատողութիւններով: Նըրանք համառորեն մնում էին այն կարծիքին, թէ իբր խեղճ աղջիկը զոպացել է Լուանաբարբ և ինքնասպանութեան գործել ահից, վախենալով, որ այդ մասին կիմանան:

Աղջիկս (հասկանալի է՝ մտքում) համառորեն մնում էր այն կարծիքին, ինչ որ պնդում էր առաջ: Սակայն Ռոզաննայի ինքնասպանութեան պատճառի վերաբերյալ նրա կնիադրութիւնը արմատի հետ կապված ոչ մի եզրակացութեան չէր բերում մեզ, ճիշտ աշխօլես, ինչպէս Ռոզաննայի անմեղութեան մեջ միլեդիի հավատացած լինելը: Ռոզաննայի



գաղտնի ճանապարհորդությունը Ֆրիդինհոլ և նրա մնացած արարքները բոլորովին անբացատրելի էին մնում: Իմաստ չունեւր այդ բոլորը մատնացույց անել Պենելոպեին. սուարկումները նույնքան բիշ տպավորություն էին գործում նրա վրա, որքան որ տեղատարափ անձրեւը բիշ հետքեր է թողնում անջրաթափանց թիկնոցի վրա: Բանն այն է, որ աղջիկս ժառանգել էր իմ սեփական սուհամարհանքը մտավոր փաստարկների նկատմամբ և այդ տեսակետից շատ առաջ անցել իր հարազատ հորից:

Հաջորդ օրը (կիրակի) կառքը, որ մնում էր միտոր էրլուայթի տանը, մեղ մոտ վերադարձավ դատարկ: Կարասյանն ինձ բերեց միլեդիի դրությունը և գրավոր կարգադրություններ՝ միլեդիի սպասուհիներին ու Պենելոպեին:

Միլեդին իր գրությամբ հաղորդում էր, որ որոշել է Լրկոռչաբթի օրը միսս Ռեչելին տանել Լոնդոնի իր տունը: Սպասուհիներին ուղղված միլեդիի կարգադրությունները վերաբերում էին այն բանին, թե նրանք ինչ զգեստներ պետք է վերցնեն և որ ժամին Լոնդոնում զիմավորեն իրենց տիրուհիներին: Ծառաների մեծ մասը նույնպես պետք է այնտեղ մեկնել: Միլեդին, տեսնելով, որ միսս Ռեչելը կատարված բոլոր բաներից հետո չի ցանկանում տուն վերադառնալ, որոշել էր Լոնդոն մեկնել ուղղակի Ֆրիդինհոլից: Իսկ ես պետք է մինչև նոր կարգադրություն մնայի գյուղում, հետևի տանն ու կալվածքին:

Այս բոլորն ինձ հիշեցրեց միտոր Ֆրենկլինի առածները ջրված ու մասնատված ընտանիքի մասին, և մտքերս, բնականաբար, ուղղվեցին անձամբ միտոր Ֆրենկլինին: Որքան ավելի շատ էի մտածում նրա մասին, այնքան ինձ ավելի շատ էին անհանգստացնում նրա ապագա անելիքները: Ավարտվեց նրանով, որ ես կիրսկնօրյա փոստով նամակ ուղարկեցի նրա հոր անձնական սպասավոր միտոր Զեֆկոյին (որին վաղուց էի ճանաչում), խնդրելով ինձ հաղորդել այն, ինչ որ կանի միտոր Ֆրենկլինը Լոնդոն հասնելուց հետո:

Կիրակի օրվա երեկոն շաբաթ օրվա երեկոյից ավելի ախուր էր, եթե, իհարկե, դա հնարավոր էր: Մենք օրն ավար-

տեցինք ինչպէս հարյուր հազարավոր ուրիշ մարդիկ են պարբերաբար շարաթահան մեկ անգամ այն ավարտում այս կղզիներում, սպասելով, թե վերջապես երբ կհասնի անկողին մտնելու ժամը, և, չկարողանալով մինչև վերջ սպասել, քնեցինք մեր աթոռներին նստած:

Քն երկուշաբթին ինչպէս անցավ մնացած սպասավորներին համար՝ չդիտեմ, բայց բավականին հարված հասցրեց ինձ: Խուզարկու Կաֆի առաջին գուշակությունը, որ ես որոշ բաներ եմ լսելու Յոլանդներին, կատարվեց այդ օրը:

Պենելոպեին և միլեդիի սպասուհուն ուղարկեցի երկաթուղային կայարան՝ Լոնդոն տարվելիք իրերով, և դրոսնում էի այգում, երբ հանկարծ անունս լսեցի: Ստ դառնալով՝ դեմ տա դեմ հանդիպեցի ձկնորսի աղջկան՝ Կադոտն Լյուսին: Բացառութեամբ կազութեան և նիհարութեան (վերջինս, իմ կարծիքով, սարսափելի թերութուն է կանանց համար), այդ աղջիկը ոչ բիշ գրավիչ կողմեր ունէր տղամարդու աչքով նայելիս: Խելացի թուխ դեմքը, հաճելի մարմուր ձայնը, շագանակագույն հրաշալի մազերը նրա արժանիքներին էին: Հենակը խոստում էր նրա դժբախտութեան մասին: Իսկ տաքարյուն բնավորութունը լրացնում էր նրա թերութուններին ցանկը:

— Կով, սիրելիս,— ասացի ես,— ի՞նչ եք ուզում ինձնից:

— Ուրե՞ղ է Ֆրենկլին Բլեկ անունով մարդը,— ասաց աղջիկը, հենվելով իր հենակի վրա և կատաղի հայացքը հասնելով ինձ:

— Զենտլեմներին մասին տեղապես խոսելը հարգալից չէ,— պատասխանեցի ես:— Եթե ուզում եք միլեդիի դարմիկի մասին իմանալ, սուպ արդյո՞ք հաճո չէ ձեզ միտոր Ֆրենկլին Բլեկ անվանել նրան:

Աղջիկը մի քայլ արեց դեպի իմ կողմը և այնպէս նայեց, կարծես պատրաստվում էր ողջ-ողջ ստեղ ինձ:

— Միտոր Ֆրենկլին Բլեկ,— ինձնից անմիջապես հետո կրկնեց նա:— Նրան ավելի ճիշտ կլիներ անվանել մարդասպան Ֆրենկլին Բլեկ:

Հանդուցյալ միտիս Բեատերեջի հետ վարվելու իմ մեթոդն այս անգամ էլ օգնեց ինձ: Երբ կինն աշխատում է համ-

բերութիւնից հանել ձեզ, աշխատեցեք ինքներդ համբերութիւնից հանել նրան: Կինն ընդհանրապէս պատրաստ է ամեն տեսակ հակահարվածի, ինչպիսին որ դուք կարող էք ընտրել ինքնապաշտպանութիւն համար, բացի այդ մեկից: Միայն մեկ հատիկ բառով կարելի է հասնել դժբան ավելի լավ, քան հարկուք բռնով, և ես մի բառով հասա դրան Կադոտն Լյուսիի նկատմամբ: Սիրալիր նայելով նրա երեսին՝ ստացի:

— Թշու:

Աղջիկն անմիջապէս բռնկեց: Նա ավելի հաստատուն կանգնեց առողջ ստրի վրա և իր հենակով մի երեք անգամ կատաղորեն խփեց գետնին:

— Նա մարդասպա՞ն է: Նա մարդասպա՞ն է: Նա մարդասպա՞ն է: Նա՞ է հղել Ռոզաննա Սպիրմանի մահվան պատճառը:

Աղջիկը դա գոռաց ականջ ծակող ամենասուր ձայնով: Երկու հոգի, որ ոչ հետու աշխատում էին այգում, աչքները բարձրացրին, տեսան, որ Կադոտն Լյուսին է, իմանալով, թե ինչ կարելի էր սպասել նրանից, նորից իրենց գործին անցան:

— Նա՞ է հղել Ռոզաննա Սպիրմանի մահվան պատճառը, — կրկնեցի ես: — Ի՞նչն է ձեզ ստիպում այդպէս խոսել, Լյուսի:

— Ձեր ի՞նչ գործն է: Ի՞նչ գործ ունի որևէ սպամարդ այս բանի հետ: Օ՛հ, եթե նա տղամարդկանց մասին մտածեր այնպէս, ինչպէս ես եմ նրանց մասին մտածում, ապա հիմա նա ողջ կլիներ:

— Նա՞ այդ խեղճ աղջիկը, միշտ լավ է մտածել իմ մասին, — ասացի ես, — ես էլ միշտ լավ եմ վերաբերվել նրան:

Ես սա առացի հնարավորին չափ հանդստացնող ձևով: Ճիշտն ասած, շհամարձակվեցի սուր պատասխաններով ջղաչնացնել աղջկան: Առաջ նկատել էի նրա միայն վատ բնավորութիւնը: Հիմա նկատեցի, որ նա դժբախտ է, իսկ դա հաճախ հասարակ խավի մարդկանց ստիպում է հանդուգն լինել:

Իմ պատասխանը մեղմացրեց Կադոտն Լյուսիին: Նա գլուխը կախեց իր հենակի վրա:

— Ես սիրում էի նրան,— կամացուկ ասաց աղջիկը:— Նույն շատ դժբախտ էր, միտար Բեստերեջ: Նողկալի մարդիկ դաժանորեն վարվեցին նրա հետ և նրան կանգնեցրին վատ ճանապարհի վրա, բայց դա շփշացրեց նրա հեղ բնավորութունը: Ես հրեշտակ էր: Ես կարող էր երջանիկ լինել ինձ հետ: Ես ծրագրել էի, որ Լոնդոն գնանք երկուսով, տեղավորվենք երկու քրոջ պես և վաստակենք կար անելով: Այդ մարդը եկավ այստեղ ու փշացրեց ամեն ինչ: Ես կախարդեց Ռոզաննային: Չասեք, թե նա չէր ուզում այդ անել և այդ մասին ոչինչ չգիտեր: Ես պետք է իմանար: Ես պետք է խղճար աղջրկան: «Ես չեմ կարող ապրել առանց նրա, իսկ նա, Լյուսի, նույնիսկ վրաս չի նայում».— ահա թե ինչ է ասել Ռոզաննան: Գաժանություն է, դաժանություն է, դաժանություն է: Ես ասում էի նրան. «Ոչ մի աղամսորք չարժի, որ իր համար հալումաշ լինեն», իսկ նա պատասխանում էր. «Կան տղամարդիկ, որոնց համար արժի մեռնել, Լյուսի, իսկ նա դրանցից մեկն է»: Ես մի քիչ փող էի հավաքել: Պայմանավորվել էի հորս ու մորս հետ: Ուզում էի նրան տանել-հեռացնել այն ստորացումներից, որոնց նա ենթարկվում էր այստեղ: Մենք մի փոքրիկ բնակարան կունենայինք Լոնդոնում և կապրեինք բուլբուրի պես: Մըր, ինչպես ձեզ հայտնի է, նա լավ դաստիարակություն էր ստացել և լավ ձեռագիր ուներ: Ես շատ ճարպիկ էր կար անելու մեջ: Ես նույնպես լավ եմ գրում, թեև այնպիսի ճարպկություն չեմ կարում, ինչպես նա էր կարում, բայց թե ինձնից էլ մի բան կստացվեր: Մենք հրաշալի կապրեինք: Եվ ինչ կատարվեց այսօր: Նամակ է գալիս նրանից, և ես իմանում եմ, որ նա հրաժեշտ է տվել կյանքին: Ստացվում է մի նամակ, ուտեղ նա ինձ հրաժեշտ է տալիս ընդմիջտ: Որտե՞ղ է նա,— գլուխը բարձրացնելով ու նորից բռնկելով դայրույթով, ճշաց աղջիկը:— Որտե՞ղ է այդ ջենտրլմենը, որի մասին ես պետք է ոչ այլ կերպ, քան հարգանքով խոսեմ: Հեռու չէ այն օրը, միտար Բեստերեջ, երբ Անգլիայում չբավորները կաստամբեն հարուստների դեմ: Աստծուն աղաչում եմ, որպեսզի նրանից սկսեն: Աստծուն աղաչում եմ, որպեսզի նրանից սկսեն:

Կարծում եմ, որ նույնիսկ բահանան իները (թեև, խոստո-



Կաղստն Կլոսին ընկավ իր հենակի վրա և սուր վրայով նայեց ինձ:

վանում եմ, սա շատ ուժեղ է ասված) շէր կարողանա ազգիան խելքի բերել այն վիճակում, ինչ վիճակում, որ նա գտնվում էր: Ես սոսկ համարձակվեցի նրան վերադարձնել դեպի իր դաշրուլլի առարկան, հուսալով որևէ օգտակար բան չսեղ նրանից:

— Ձեր ինչի՞ն է պետք միստր Ծրենկլին Բլեկը,— հարցրի ես:

— Ես պետք է նրան տեսնեմ:

— Ինչի՞ համար:

— Նրան ուղղված նամակ ունեմ:

— Ոոգաննա Սպիրմանի՞ց:

— Այո:

— Որ դրված է եղել ձեզ հասցեագրված նամակի մե՞ջ:

— Այո:

Մի՞թե մշտն սկսում է ցրվել: Մի՞թե այն, ինչ ես այնքան բուռն կերպով ուզում էի իմանալ, բացահայտվում է ինքն իրեն: Ես հարկադրված էի մի պահ հաղադել: Խուզարկու Կաֆն իրենից հետո վարակ էր թողել: Ըստ ինձ հալտնի որոշ նշանների, խուզարկուական տեսլը նորից սկսում էր համակել ինձ:

— Դուք չեք կարող տեսնել միստր Ծրենկլինին,— ասացի ես:

— Ես պետք է նրան տեսնեմ ու կտեսնեմ:

— Նա երեկ մեկնեց Լոնդոն:

Կաղոտն Լյուսին սևեռուն նայեց Լրեսիս և հասկացավ, որ ճիշտ եմ ասում: Այլևս ոչ մի բառ շարտարերելով, նա անմիջապես շրջվեց ու գնաց դեպի Քորս Զոլլ:

— Սպասեցե՛ք,— բացականչեցի ես.— Միստր Ծրենկլին Բլեկին վերաբերող լուրեր եմ սպասում վաղը: Նամակը տվեք ինձ, և ես կուզարկեմ փոստով:

Կաղոտն Լյուսին ընկավ իր հենակի վրա և ուսի վրայով նայեց ինձ.

— Նամակը նրան պետք է հանձնեմ միայն ձեռքից-ձեռք:

— Այդ մասին գրե՞մ նրան:

— Գրեք, որ ևս ատում և՛մ նրան, և դուք ճշմարտությունն ասած կլինեք:

— Այո-այո, խոկ նամակի հա՞րցը...

— Եթե նա ուզում է ստանալ այդ նամակը՝ պետք է վերադառնա այստեղ և վերցնի ինձնից:

Այսքանն ասելուց հետո նա կազալով զնաց դեպի Քորա Հոլլ: Խուզարկուական տենդն ինձ գրկել էր ամեն մի արժանապատվությունից: Ես շտապեցի նրա ետևից և բոլոր ջանքերը գործադրեցի, որպեսզի նրան ստիպեմ խոսել: Իդո՛ւր: Դժբախտաբար ևս տղամարդ էի, և Կաղոտն կլուսիին հաճույք էր պատճառում ինձ հիասթափեցնելու: Նույն օրը, մի քիչ ավելի ուշ, բախտս փորձեցի նրա մոր մոտ: Բարի միսիս Յուլանդը կարողացավ միայն փղձկալ և խորհուրդ տվեց փոքր-ինչ սփոփվել հոլանդական շշով: Ջկնորսին գտա ծովափին: Նա ասաց, որ գործը խճճված է, ու շարունակեց իր ցանցը նորոգել: Ոչ հայրը, ոչ էլ մայրը ինձնից ավելին չգիտեին: Մնում էր փորձել վերջին միջոցը՝ առավոտյան փոստով նամակ ուղարկել միստր Ֆրենկլին Բլեկին:

Չեղ և՛մ թողնում դատելու, թե երեքշաբթի առավոտյան ինչպիսի անհամբերությամբ էի սպասում փոստատարին: Նա երկու նամակ բերեց ինձ: Մեկը Պեննելոպեից (անհամբերությամբ բացեցի ու կարդացի), որն ինձ հաղորդում էր, թե միլեդին և միսս Ռեչելը բարեհաջող ժամանել են Լոնդոն: Մյուսը միստր Ջեֆկոյից էր և հայտնում էր, որ իր տիրոջ որդին արդեն մեկնել է Անգլիայից:

Ինչպես պարզվում է, միստր Ֆրենկլինը, մայրաքաղաք ժամանելուց հետո, անմիջապես գնացել է հոր մոտ: Եվ ներկայացել է ո՛չ այնքան ժամանակին: Միստր Բլեկ-ավագը զլխովին թաղված է եղել ստորին պալատի իր դեպուտատական գործերի մեջ և այդ երեկո տանը զվարճացել է պառլամենտական սիրած խաղով՝ գրությունների կաղմեկով, որ իրենք անվանում են «մասնավոր օրինագիծ»: Միստր Ջեֆկոն ինքն է միստր Ֆրենկլինին առաջնորդել հոր աշխատասենյակը:

«Միրելի Ֆրենկլին, ի՞նչն է քեզ ստիպել այսպես հանկարծափ գալ ինձ մոտ: Չլինի՞ թե վատ բան է պատահել»:

«Այո՛ Վատ բան է պատահել Ռեչկին, և ես չափազանց վշտացած եմ»:

«Յավով եմ լսում աչո: Բայց հիմա բեզ լսելու ժամանակ չունեմ»:

«Իսկ Լ՞րբ կկարողանաք ինձ լսել»:

«Միրելի տղաս, շեմ ուղտմ քեզ խաբել: Քեզ կկարողանամ լսել այս նստաշրջանն ավարտվելուց հետո, դրանից ոչ մի րոպե շուտ: Բարի գիշեր»:

«Շնորհակալ եմ, սըր, բարի գիշեր»:

Այսպիսին է եղել աշխատասենյակում տեղի ունեցած խոսակցությունը, որ ինձ հաղորդել է միստր Ջեֆկոն: Աշխատասենյակից դուրս աեղի ունեցած խոսակցությունն ավելի կարճատև է եղել:

«Ջեֆկո, տեսեք, թե երբ է մեկնում վաղվա այն դնացքը, որը հարմարեցված է շոգենավով մայր ցամաք հասնելուն»:

«Առավոտյան ժամը վեցին, միստր Ֆրենկլին»:

«Կարգադրեք, որ ինձ արթնացնեն ժամը հինգին»:

«Արտասահման եք մեկնում, սըր»:

«Կմեկնեմ, Ջեֆկո, ուր-որ երկաթուղիները կտանեն ինձ»:

«Կհրամայե՞ք զեկուցել ձեր հայրիկին, սըր»:

«Այո, նրան զեկուցեք նստաշրջանն ավարտվելուց հետո»:

Հաջորդ առավոտյան միստր Ֆրենկլինը մեկնել էր արտասահման: Թե կոնկրետ որտե՞ղ էր մեկնել՝ իրենից բացի ոչ ոք չէր կարող կոռահել: Գուցե առաջին լուրը նրանից ստանանք Նվրոպայից, Ասիայից, Աֆրիկայից կամ Ամերիկայից: Միստր Ջեֆկոյի կարծիքով՝ նա հավասարապես կարող էր լինել աշխարհի շուրս կողմերից որևէ մեկում:

Միստր Ֆրենկլինի շաբաթ առավոտյան մեկնելու լուրը և Երկուշաբթի օրը միսս Ռեչկի ու միլեդիի Լոնդոն ժամանելու լուրը, ինչպես ձեզ հայտնի է, ինձ հասան երեքշաբթի Վրա հասավ շորերշաբթին և ոչ մի նոր բան չբերեց: Հինգշաբթին մատուցեց Պեննելոպևից ստացված լուրերի երկրորդ հոսքը:



Աղջիկս հազորդում էր, որ օրիորդի մոտ են հրավիրել  
Հոնդոնի ինչ-որ մի նշանավոր բժիշկ և սա մի դինեա է ստա-  
ցել սոսկ նրա համար, որ խորհուրդ է տվել զվարճացնել  
նրան: Առաջիկայում նախատեսվում էին ծաղկի ցուցահան-  
դեսներ, օպերաներ, սյարահանդեսներ, բազմաթիվ այլ զվար-  
ճալի բաներ. և միսս Ռեչլը, ի զարմանս իր մոր, սգեւորու-  
թյամբ խորամուխ է եղել այդ ամենի մեջ: Այցելելու է եկել  
միսոր Գոդֆրին. ամենայն հավանականությամբ, նա առաջ-  
վա պես սիրահարված էր զարմուհուն, շնայած այն ժամանակ  
իրեն ցույց տրված ընդունելությանը, երբ ինքը իր բախար  
փորձել էր Ռեչլի ծննդյան օրը: Պենելոպեն շատ մեծ ցավ է  
զգացել, որ այս անգամ շատ սիրալիք էին ընդունել նրան, և  
սա տեղնուտեղը միսս Ռեչլի անունը գրել է կանանց բարե-  
գործական կոմիտեի անդամների ցուցակում: Տիրուհիս, Պե-  
նելոպեի ասածի համաձայն, շատ է հուզվել և երկու երկա-  
րտե զրույց է ունեցել իր փաստաբանի հետ: Այնուհետև  
գալիս էին ինչ-որ մի լսեղճ ազգականուհուն՝ ոմն միսս Կլակի  
վերաբերյալ ինչ-որ դատողություններ, այն ազգականուհու,  
որին ես հիշատակել եմ ծննդյան օրը տրված ճաշկերույթը  
նկարագրելիս. նա նստած էր միսոր Գոդֆրիի մոտ և շամ-  
պայն գինիների մեծ գիտակ էր: Պենելոպեն զարմանք էր  
հայտնում, որ միսս Կլակը դեռևս այցելություն չի տվել: Հա-  
վանաբար նա շուտով կկալչի միլեդիին, սովորականի պես...  
և այլն, և այլն, ինչպես այդ ընդունված է կանանց մոտ՝  
կսկսեն խայթոցներ ուղղել իրար և՛ բանավոր, և՛ գրավոր:  
Այս մասին արժևր հիշատակել, եթե շիներ մի հանդամանք:  
Լսել եմ, որ, ինձնից բաժանվելուց հետո անցնելու եք միսս  
Կլակի մոտ: Եթե այդպես է, ապա բարի եղեք չհավատալ  
նրա ոչ մի խոսքին, երբ նա կսկսի ձեր նվաստ ծառայից խո-  
սել:

Ուրբաթ օրը ոչինչ տեղի չունեցավ, միայն շներից՝ մեկի  
ականջի ետևում թարախապալար գոչացավ: Խոտերից պատ-  
րաստված դեղ տվի նրան և դիետի նստեցրի: Ներկեցք, որ  
այս մասին հիշատակում եմ: Մի տեսակ սպտահարար դուրս  
թռավ: Խնդրում եմ, բաց թողեք սա: Ես արագորեն մոտենում

եմ ձեր ժամանակակից կրթված ճաշակի դեմ իմ մեղանշում-  
ների ավարտին: Ընդ որում, այդ շունք շատ բարի կենդանի  
էր, և արժանի էր լավ բուժման. իրոք, արժանի էր:

Առավոտյան փոստը ինձ տնակնկալ մատուցեց իմ անու-  
նով ստացված լոնդոնյան մի թերթով: Ձևագիրը, որով  
դրված էր հասցեն, ինձ մտահոգեց: Այն համեմատեցի ծո-  
ցատեարուժս զրված լոնդոնյան վաշխառուի անվան ու հաս-  
ցեի հետ, և անմիջապես շանաչեցի խուզարկու Կաֆի ձեռու-  
գիրը:

Հետաքրքրությամբ աչքի անցկացնելով թերթը՝ նկատեցի,  
որ հոդվածներից մեկը՝ «Դատարանի դահլիճից» վերտառու-  
թյամբ, շրջանակված է թանարով: Ահա այն ներկայացնում  
եմ ձեր ուշադրությանը: Կարդացեք, ինչպես որ ես կարդարի,  
և արդարամտորեն կդնահատեք այս վերջին նորությունն ինձ  
սուղարկած խուզարկուի հարցալից ուշադրությունը:

«Կամքեր: Նիստը փակվելուց մի փոքր առաջ միստր Սեյ-  
տիմոս Լյուկերը, որ հին թանկարժեք քարերի, բանդա՛լա-  
դարդ իրերի և այլեայլ նման բաների հայտնի առևտրական է,  
խորհրդի համար դիմել է դատավորին: Հայցվորը բացատրել  
է, որ ամբողջ օրվա ընթացքում իրեն անհանդուստացրել է թա-  
փառույ երեք հնդիկների վարմունքը, որոնք փողոցում թրև են  
գալիս իր տան մոտ: Ոստիկանությունը քշել է նրանց, իսկ  
նրանք նորից վերագարձել են և մի քանի անգամ փորձել  
ստն թափանցել, իրը ողորմություն ստանալու համար: Երբ  
նրանց վնդել են շքամուտքի դռան մոտից, նրանք հայանը-  
վել են Լոնդամուտքի մոտ: Այդ մուրացկանների նկատմամբ  
միանշամայն բնական վրդովմունքից բացի, միստր Լյուկերը  
երկյուղ է հայտնել, թե արդյո՞ք նրանք մտադիր չեն գողու-  
թյուն անել: Իր հավարածուի մեջ թանկարժեք շատ իրեր կան,  
և՛ անտիկ, և՛ արևելյան, որոնք հսկայական գումար արժեն:  
Հենց նախօրյակին ինքը հարկադրված է եղել մերժել հմուտ  
դարդարանդակող աշխատողին (ինչպես հասկացանք՝ հնդի-  
կին), նրան կասկածելով գողության փորձ անելու մեջ, և ին-  
քը վստահ չի եղել, թե այդ աշխատողն ու փողոցի աճույս-


բարձրը, որոնց վրա ինքը գանգատվել է, միասին շեն գործել: Թերևս նրանց նպատակն է եղել բազմություն հավարել, իրարանցում սարքել փողոցում և այդ իրարանցման մեջ տուն մտնելու հնարավորություն ստանալ: Ի պատասխան դատավորի հարցի՝ միստր Լյուկերը խոստովանել է, որ ինքը չի կարող ապացույցներ ներկայացնել, թե գողություն է նախապատրաստվում: Ինքը գանգատվել կարող է միայն այն բանից, որ հնդիկները ձանձրացրել ու խանդարել են իրեն: Դատավորը ասել է, որ եթե մեկ անգամ էլ դա կրկնվի, հաջգվորը կարող է հնդիկներին դատարան կանչել, որտեղ նրանց հետ կվարվեն օրենքով: Ինչ վերաբերում է միստր Լյուկերի մոտ գտնվող թանկարժեք իրերին, ապա նա ինքը պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկի դրանց պահպանության համար: Թերևս, պետք էր իմաց տալ ոստիկանությունը և ձեռնարկել բոլոր նախազգուշական միջոցները, որպիսիք կարող է նախատեսել ոստիկանական աստիճանավորների փորձառությունը: Հաջգվորը շնորհակալություն է հայտնել դատավորին ու հեռացել:»

Ասում են, հին իմաստուններից մեկը իր մերձավորներին խորհուրդ է տվել (մոռացել եմ, թե ինչ առիթով) «նայել վերջը»: Իմ էջերի վերջը նայելով և հիշելով, թե մի քանի օր առաջ ինչպես էի անհանգստանում՝ դուրս կբերե՞մ, թե ոչ իմ պատմությունը, տեսնում եմ, որ փաստերի իմ լիակատար նկարագրությունը մինչև վերջ է հասել շատ պատշաճ ձևով: Լուսնաքարի գործում մենք մի հրաշքից անցնում ենք մյուսին և ավարտում ենք ամենամեծ հրաշքով՝ խուզարկու Կաֆիերեք գուշակությունների կատարումով՝ մեկ շաբաթից էլ պակաս ժամանակամիջոցում, հաշի՞նած այն օրից, որ դրանք արվել են:

Ծրկուշարթի օրը լսել էի Յուանբլեերի մասին, այժմ լսեցի հնդիկների ու վաշխառուի մասին, և հիշեցե՞մ՝ միտս երեկըն ինքը այդ ժամանակ գտնվում էր Լոնդոնում: Դուք տեսնում եք, որ ես ամեն ինչ ամենամուտք դույներով եմ ներկայացնում, նույնիսկ, եթե դա իմ սեփական հայացքների դեմ է խոսում: Եթե դուք ինձ լքեք և խուզարկուի կողմն անցնեք՝ դե-

կալարվելով այս բոլոր հանցանշաններով, Լիկ միակ խելամիտ բացատրութիւնը, երբեքսին կարող էր պտնել, այն է, որ միսս Իեղեղն ու միստր կշուկերը հասցրել են սրտամանավորվել և Լուսնաքարը որպէս զրավական գտնվում է վաշխատուի մոտ, — խոստովանում եմ, ես չեմ կարողանա ձեզ գատարտել: Ես խալարի մեջ ձեզ հասցրի մինչև այստեղ: Ստիպված եմ ձեզ թողնել խալարի մեջ՝ իմ ամենախոնարհ հարգանքներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՉԱՀԱՅՏՈՒՄԸ



ԴԵՊՔԵՐ,  
ՈՐ ՊԱՏՄԵԼ ԵՆ  
ՏԱՐԲԵՐ ՄԱՐԴԻԿ

1848 - 1849



## ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԸ,

որ գեղ է միսս Կակը, հանգուցյալ սրբ Ջան Վերինդիերի գաւմանին

### Գ Լ ու լ ս Լ

Հիմա երկնքում դտնվող իմ թանկագին ծնողներին եմ պարտական կարգուկանոնի և ճշտապահութեան այն սովորութիւնը, որ ինձ պատվաստվել է շատ վաղ հասակից:

Այդ երջանիկ, վաղուց անցած ժամանակներում են ինձ սովորեցրել խնամքով սանրված լինել օրվա ու գիշերվա բոլոր ժամերին և քնելուց առաջ հագուստիս յուրաքանչյուր կտորը ջանադրութեամբ ծալել ու տեղավորել միեկնույն հաջորդա-

կանությամբ, միևնույն աթոռի վրա և միևնույն տեղում՝ մահճակալի ոտնամասում: Յրվա ղեկքերի գրառումն իմ փոքրիկ օրագրում՝ մշտապես նախորդել է հազուատու տեղավորելուն: Իրիկնային օրհներգը (որ կրկնվել է անկողնում) մշտապես հաջորդել է հազուատու տեղավորելուն: Իսկ մանկության քաղցր քունը մշտապես հաջորդել է իրիկնային օրհներգին:

Հետագա կյանքում (ալա՛ղ) իրիկնային օրհներգին հետևել է նաև տխուր ու դառը խորհրդածությունները: Իսկ քաղցր քունը փոխարինվել է տաղնապալի երազներով, որոնք ինձ ստիպել են անհանդիստ շուռումուռ գալ բարձի վրա: Բայց հազուատու ծալելու-տեղավորելու և օրագիր պահելու սովորույթը ես պահպանեցի նաև իմ հետագա կյանքում:

Առաջին սովորույթն ինձ հիշեցնում է երջանիկ մանկությունը, այն օրերը, երբ հայրս դեռ չէր սնանկացել: Երկրորդը, որը մինչև հիմա օգտակար է եղել զխավորապես նրանով, որ ինձ օգնել է կարգավարժելու Ագամից ժառանգած մեր մեղավոր բնությունը, իմ համեստ հետաքրքրությունների համար անսպասելիորեն կարևոր դարձավ բոլորովին այլ տեսակետից: Այն խեղճիս թույլ տվեց կատարելու ընտանիքի մի հարուստ անդամի քմահաճույքը, որի հետ հանդույցալ քնուխ մերձավորվել էր ամուսնանալով: Ինձ բախտ վիճակվեց օգտակար լինելու միտոր Ֆրենկլին Բլեկին:

Որոշ ժամանակի ընթացքում ես ոչ մի լուր չունեի բարօրության մեջ ապրող իմ այս ազգականներից: Երբ մենք միայնակ ենք ու աղքատ՝ մեզ հաճախ մոռանում են: Ես հիմա խնայողության նկատառումներով ստիպված եմ ապրել Բրեստոնի մի փոքրիկ քաղաքում, որտեղ անզլիացի հարգարժան բարեկամների բնարյալ շրջանակ կա և որտեղ առկա է երկու առավելություն՝ բողոքական ջահանա և էժան շուկա:

Այդ առանձնացած անկյունում հանկարծ ես մի նամակ ստացա Անզլիայից: Անսպասելիորեն իմ ողորմելի գոյության մասին հիշել էր միտոր Ֆրենկլին Բլեկը: Հարուստ ազգականս (Օ՛, ինչպես կուզեի ավելացնել՝ հոգեպես հարուստ) գրում է, նույնիսկ առանց փորձելու թաքցնել այդ, որ ինքն

ինձնից ինչ-որ բան է ուղղում: Նրա մտքով անցել է Լուսնա-  
քարի աղմկոտ պատմությունը վերակենդանացնելու անհն-  
վելիությունը, և ես իրեն պետք է օգնեմ այդ բանում, գրելով  
այն ամենի պատմությունը, ինչի վկան եմ եղել քեռակին  
Վերվնդերի շնորհման տանը: Ինձ առաջարկում են զրամա-  
կան վարձատրություն՝ հարուստ մարդկանց հատուկ զգա-  
լունության բացակայությամբ: Ես պետք է նորից փորփրեմ  
ա՛յն վերքերը, որ հաղիվ է փակել ժամանակը. ևս պետք է  
արթնացնեմ շատ տանջալից հիշողություններ և, այդ անե-  
լով, ինձ վարձատրված համարեմ մի նոր տասասպանքով, որը  
միտար Ֆրենկլինի շեկի տեսքն ունի:

Մարմինը թույլ է: Ինձ հարկ եղավ երկար պայքարել այն  
բանի համար, որպեսզի քրիստոնեական հնազանդությունը իմ  
մեջ հաղթի մեղսական հպարտությանը, իսկ ինքնաուրացու-  
մը ստիպի համաձայնվել շեկին:

Ասանց օրագիր պահելու սովորության, կասկածում եմ  
(թույլ տվեք ինձ ամենակոպիտ բառերով արտահայտելու  
սա), կկարողանա՞յի՞ հս աղնվորեն վաստակել այդ փողը.  
բայց իմ օրագրով խեղճ աշխատավորուհին (որը միտար Բլե-  
կին ներում է նրա հասցրած վիրավորանքը) արժանի է ստա-  
նալիք վարձատրությանը: Իմ աչքից ոչինչ չվրիպեց այն ժա-  
մանակ, երբ ես հյուսիսակալի էի իմ թանկագին քեռակին  
Վերվնդերի մոտ: Իմ վաղեմի սովորության շնորհիվ ամեն  
ինչ զրատվել է, օր առ օր, և ամեն ինչ ամենայն մանրամաս-  
նությամբ կպատմվի այստեղ: Ըշմարտության նկատմամբ  
սրբազան հարդանքը (փա՛ռք աստծու) ինձ համար ավելի  
բարձր է, քան մարդկանց նկատմամբ հարգանքը: Միտար  
Բլեկը ճշտությամբ կարող է հանել այն տեղերը, որոնք այն-  
քան էլ գովասանական չեն թվա նրան մի անձնավորության  
նկատմամբ: Նա գնեց իմ ժամանակը, բայց նրա առատա-  
ձեռնությունն անգամ չի կարող գնել իմ խիղճը<sup>1</sup>:

Օրագիրն ինձ հաղորդում է, որ հազար ութ հարյուր քառա-  
սունու թվականի հուլիսի երեքի երկուշաբթի օրը ես պատա-

<sup>1</sup> Ֆրենկլին Բլեկի հավելումը. «Միտա կյակը կարող է բոլորովին հան-  
գիստ լինել: Նրա ձեռագրի մեջ ոչինչ չի ավելացված, չի պակասեցված և  
չի փոփոխված, այնպես ինչպես և մյուս ձեռագրերում»:



հարար անցել եմ քեռտիկն Վերինդերի տան մոտով, որը զբա-  
նրվում է Մոնտեբլու պուրակի փողոցում:

Տեսնելով, որ լուսամուտների փեղկերը բաց են, իսկ  
վարդույրները բարձրացված, ես դառցի, որ քաղաքավարու-  
թյունը պահանջում է թափել և տեղեկանալ տանտերերի մասին:  
Դուրս բացող անձնավորությունն ինձ հաղորդեց, որ քեռա-  
կինը և նրա դուստրը (ես, արդարև, չեմ կարող նրան դար-  
մուռի անվանել) գյուղից եկել են մեկ շաբաթ առաջ և մտադիր  
են որոշ ժամանակ մնալ Լոնդոնում: Անմիջապես հանձնա-  
րարեցի նրանց հաղորդել, որ չեմ ցանկանում իրենց անհան-  
գատացնել, այլ սոսկ ուզում եմ իմանալ, թե չե՞մ կարող  
արդյոք սրեկ բանով օգտակար լինել: Անձնավորությունը, որ  
դուրս բացեց, հանդուգն լուսթյամբ ունկնդրեց իմ հանձնա-  
րարությունը և ինձ թողեց նախասրահում կանգնած: Դա  
Քետտերեշ անունով այն սրբապիղծ ծերուկի դուստրն էր, որին  
երկար, շափից դուրս երկար ժամանակ է հանդուրժում են իմ  
քեռակնոջ ընտանիքում: Նստեցի նախասրահում ու սպասեցի  
պատասխանի. և քանի որ մշտապես մի քանի կրոնական  
տրակտատներ եմ ունենում իմ պայուսակում, ընտրեցի  
դրանցից մեկը, որը շատ ավելի հարմար էր դուրս բացող  
անձնավորության համար: Նախասրահը կեղտոտ էր, աթոռը  
կոշտ, բայց այն բանի երանելի գիտակցումը, որ շարության  
դիմաց բարությամբ եմ հասուղում, այդպիսի բոլոր ողորմելի  
մանրուքներից բարձր կանգնեցրեց ինձ: Այդ տրակտատը  
պատկանում էր երիտասարդ կանանց համար գեոստների  
մեղսալիության վերաբերյալ թեմայով գրված գրքույկների  
շարքին: Ոճն աստվածասլախ էր և շատ հասարակ, վերնագիրը՝  
«Մի խոսք ձեզ հետ՝ ձեր շորագլխարկի ժապավենների  
մասին»:

—Միլեդին շատ երախտապարտ է ձեզ և խնդրում է դուզ  
հաջորդ օրը ժամը երկուսին երկրորդ նախաճաշի ժամանակ:

Չեմ ուզում եկար ու բարակ խոսել այն ձայներանդի մա-  
սին, որով նա ինձ հաղորդեց այդ հանձնարարությունը, և  
նրա հայացքի ահավոր հանդգնություն մասին:

Ես շնորհակալություն հայտնեցի գեոստի մեղավորին և  
ասացի բրիտոնեական կարեկցանքի ձայներանդով:

—Շնորհ շեփ անի վերցնելու այս գրքույկը:

Նա մի հայացք պցեց վերնադրին:

— Ո՞վ է սա գրել, միսս. տղամա՞րդ, թե՞ կին: Եթե կին է, ապա ես, արդարեւ, կարդալու բան չունեմ. իսկ եթե տղամարդ է, ապա խնդրում եմ նրան հաղորդել, որ նա սրանից ոչինչ չի հասկանում:— Նա դրքույկը վերադարձրեց ինձ ու բացեց դուռը:

Մենք պետք է բարության սերմեր ցանենք որտեղ կարող ենք և ինչպես կարող ենք: Սպասեցի մինչև զուտն իմ հտևից փակվեց, և գրքույկը մտցրի նամակների արկղի մեջ: Երբ մեկ ուրիշ դրքույկ էլ պարտեպի ճաղերի արանքով ներս խցկեցի, զգացի, որ հոգիս փոքր-ինչ թեթևացավ, մերձավորների հոգու համար պատասխանատուլութունն արդեն այնքան էլ չէր տանջում ինձ:

Այդ երեկո մենք ժողով ունեինք «Հայրական շալվարները մանկականի վերածելու մայրական հոգաբարձուական կոմիտեում»: Այդ բարեգործական սքանչելի ընկերության նպատակն է (ինչպես հայտնի է ամեն մի լուրջ մարդու) գրավատեղից հտ գնել հայրական շալվարները և թույլ չտալ, որ դրանք նորից վերցնի անուղղելի ծնողը, այլ անհապաղ վերածեւել ու կարել նրա անմեղ որդու համար: Այդ ժամանակ ես այդ ընտրյալ կոմիտեի անդամ էի, և այստեղ ընկերության մասին հիշատակում եմ, որովհետեւ իմ թանկագին ու հրաշագեղ ընկեր, միստր Գոդֆրի էբլուայթը կիսում էր բարոյական ու նյութական օգնության մեր աշխատանքը: Ես սպասում էի նրան կոմիտեում տեսնել երկուշաբթի հրեկոյան, որի մասին այժմ գրում եմ, և մտադիր էի հանդիպելուն պես նրան հաղորդել սիրելի քեռակին Վերինդերի կոնդոն ժամանելու մասին: Բայց շատ եմ ափսոսում, որ նա՝ Գոդֆրին, այնտեղ չէր: Երբ ես դարմանք հայտնեցի նրա բացակայության առթիվ, կոմիտեի իմ բոլոր քույրերը աչքերը բարձրացրին շալվարներից (այդ երեկո մենք շատ գարծ ունեինք) ու զարմանքով հարցրին՝ մի՞թե ես չեմ լսել, թե ինչ է պատահելու խոստովանեցի իմ անտեղյակութիւնը, և այդ ժամանակ ինձ առաջին անգամ պատմեցին այն դեպքը, որը և կազմելու է այս պատմության այսպես ասած ելակետը: Հասարակության

մեջ միանգամայն տարբեր դիրք ունեցող երկու ջինալմեններ անցած ուրբաթ օրը զս՛հ կին զարձել մի զայրացուցիչ դավադրութեան, որն ապշեցրել էր ամբողջ կոնդոնը: Այդ ջենալմեններից մեկը միտար Սեպտիմուս կոչվերն է, որ ապրում է կամրեթում, մյուսը միտար Գոդֆրի էբլուայթն է:

Այժմ առանձին ապրելով, ևս հնարավորութեան շունեմ այն ժամանակ թերթերում տպագրված այդ զայրացուցիչ դեպքի վերաբերյալ ինֆորմացիան մտցնելու իմ պատմութեան մեջ: Այն ժամանակ ևս գրկված էի նաև այդ ամենի մասին անձամբ միտար Գոդֆրի էբլուայթի ոգեշունչ շուրթերից լսելու անգնահատելի առավելությունից: Ահա այն ամենը, ինչ որ կարող եմ անել՝ փաստերը ներկայացնել նույն կարգով, ինչ կարգով դրանք ինձ են ներկայացվել այն երկուշարթի երկուշարթի:

Գեպքը կատարվել է (ծնողներին շնորհիվ՝ ոչ մի օրացույց ժամանակի առումով չի կարող ավելի ճշգրիտ լինել, քան ես)՝ հազար ութ հարյուր քառասունութ թվականի հունիսի տասներեքին, ուրբաթ օրը:

Մեր մեծաշնորհ միտար Գոդֆրին այդ արժանահիշատակ օրը վաղ առավոտյան գնաց կոմբարդյան փողոցում գտնվող բանկիրական տներից մեկը՝ շեկը փոխելու: Ֆիրմայի անունն իմ օրագրում ծածկված է պատահական բժով, իսկ ճշմարտութեան նկատմամբ իմ սրբազան հարգանքն ինձ արգելում է համարձակվել կոահումների անելու նմանօրինակ գործում: Ֆիրմայի անունը, բարեբախտաբար, ոչ մի կապ չունի այդ գործի հետ. կապ ունի միայն մի հանգամանք, որը պատահել է, երբ միտար Գոդֆրին արդեն իր գործն ավարտված է եղել: Բանկից դուրս գալիս նա դուան մեջ հանդիպել է իրեն բոլորովին անծանոթ մի ջինալմենի, որը պատահաբար գրասենյակից դուրս գալիս է եղել իր հետ միաժամանակ: Նրանք փոխադարձաբար քաղաքավարութեան ևն ցուցարբերել մեկը մյուսի նկատմամբ, թե առաջինը ով անցնի դռնով: Անծանոթը պնդել է, որպեսզի միտար Գոդֆրին իրենից առաջ անցնի: միտար Գոդֆրին շնորհակալական մի քանի խոսք է ասել: Նրանք գլուխ են ավել ու բաժանվել:

Ահհոգ մարդիկ կարող են ասել՝ անհեթեթ—պայմանական

մաներայով պատմված շատ շնչին ու դատարկ դեպք է՝ Օ՛, իմ մեղսակից բարեկամներ ու հղբայրներ: Զգուշացիք ձեր խեղճ ողջախոսՅոթյունը հասցնող գործադրելուց: Ճշտապահ հղեք բարոյապետ: Թող ձեր հավատը լինի այնպես, ինչպես ձեր պաշտօնը, և ձեր գույպաները՝ ինչպես ձեր հավատը. երկուսն էլ անբասիր և երկուսն էլ պատրաստ՝ անհրաժեշտ պահին անմիջապես ձգվելու: Բայց՝ հազար ներսույթյուն, Նա ինձ համար աննկատելիորեն անցա իմ կիրակնօրյա զբարոցական ոճին: Գա ծւլը աստիճան անտեղի է այնպիսի մի հաշվեհաճության մեջ, ինչպիսին իմն է: Թույլ տվեք ինձ նորից վերադառնալ նրբակրթության, թույլ տվեք ասել, որ դատարկ բաները տվյալ դեպքում էլ, ինչպես և շատ ուրիշ դեպքերում, սարսափելի հետևանքների հանգեցրին:

Նախապես պարզաբանելով, որ քաղաքավարի ջենտլմենը հղել է լամբիթցի միստր կյուկերը, այժմ մենք միստր Գոգֆրիի ևտից գնանք նրա տունը, Քիլլեն:

Նա նախապահում դատվ աղքատիկ հաղնված, բայց կիրթ ու հետաքրքիր արտաբինով մի տղայի, որ իրեն էր սպասում: Տղան նամակ սվեց, ասելով միայն, որ այն ստացել է մի ծեր տիկնոջից, որին ինքը չի ճանաչում և որը պատվիրել է պատասխանին շտապել: Միստր Գոգֆրիի՝ որպես բարեգործական ընկերության անդամի, հսկայական փորձակյանքում նման դեպքեր շատ էին հղել: Նա ազատ արձակեց տղային ու բացեց նամակը:

Ձեռնպիրը բռնրոլին անձանոթ էր իրեն: Նամակը նրան հրավիրում էր մեկ ժամ հետո լինելու նորտումբերյանդի փողոցում գտնվող մի տան մեջ, որտեղ լինել նրան պետք էր վիճակվել:

Հրավերն ուղարկել էր մի տարիքով լեղի, որը պատրաստվում էր սուսա նվիրատվություն կատարել բարեգործական նպատակով. եթե նա՝ միստր Գոգֆրին, գոհացուցիչ պատասխանի իր մի բանի հարցերին: Տիկինը գրել էր իր անունը, ավելացնելով, քանի որ ինքը կարճ ժամանակով է և՛ոնդոն ժամանել, ապա դա իրեն թույլ չի տվել ավելի շուտ հանդիպել նշանավոր բարեգործի հետ, որին ինքը դիմում է:

Սովորական մարդիկ կարող էին երկու անգամ մտածել, նախքան իրենց դարձերը կթողնեին ի սեր իրենց անհայտ

անձնավորութեան հարմարութեան: Բայց թե իսկական բրիտտոնեան երբեք չի տատանվում, եթե խոսքը բարի պարբերին է վերաբերում: Միտար Գոդֆրին անմիջապես դուրս է եկել տնից և դնացել նորտումբերլանդի փողոցը: Գուտը նրա առջև բացել է բավականաչափ պատկանելի արտաքինով, թեև փոքր-ինչ դեր, մի մարդ և, միտար Գոդֆրի անունը լսելուն պես, նրան տարել է երկրորդ հարկ, մի դատարկ սենյակ, որի լուսամտոտները բակի վրա են բացվում: Սենյակ մտնելիս երկու արտակարգ բան է նկատել միտար Գոդֆրին: Առաջինը, մուշկի և կամֆորայի թույլ հոտ, երկրորդ, սեղանի վրա բաց վիճակում դրված արևելյան մի հին ձևապիք, որը ճիշտ նկարագրադրված էր հնդկական նկարներով ու զլխազարդերով:

Նա այս գիրքն է նայելիս եղել՝ մեջքով դեպի նախասենյակի հետ հաղորդակցվող փակ դուռը կանգնած, երբ հանկարծ առանց որևէ ազմուկի հաևից ճանկել են նրա կոկորդը: Նա հասցրել է միայն նկատել, որ իր վիզը բռնած ձեռքը եղել է մերկ ու թուխ, բայց իր աչքերն անմիջապես ամուր կապել են, բերանը խցոց դրել և, ինչպես թվացել է, երկու հոգի իրեն գցել են հատակին: Երրորդը քրքրել է իր գրպանները և (եթե ինձ թույլ տրվի նման արտահայտություն օգտագործել) առանց քաշվելու խուզարկել ոտրից-գլուխ:

Այս ամբողջ բռնությունը կատարվել է մեռելային լուսթյան մեջ: Երբ այն ավարտվել է, անտեսանելի շարադրմաները մի քանի խոսք են փոխանակել միտար Գոդֆրին անհասկանալի լեզվով, բայց այնպիսի ձայներանգով, որը պարզ արտահայտել է (նրա լուսավորչալ լսողութեան համար) խարված սպասում և կատաղություն: Հանկարծ իրեն բարձրացրել են հատակից, նստեցրել աթոռին և կապել ոտքերն ու ձեռքերը: Մեկ բույս անց զգացել է բաց դռնից եկող թարմ օդը, սկանչ է դրել ու համոզվել, որ ինքը նորից մենակ է մնացել սենյակում:

Անցել է մի որոշ ժամանակ, և միտար Գոդֆրին լսել է կնոջ զգեստի շրշուռնի նման ազմուկ: Այն մոտեցել է աստիճանների կողմից և հանկարծ դադարել է: Կնոջ ճիշտ ճեղքել է հանցագործութեան այդ մթնոլորտը: Մի տղամարդ ներքնից գոռացել է՝ «Թ՞նչ է եղել»: Աստիճանների վրա լավել են տղամարդու քայլեր: Միտար Գոդֆրին զգացել է, ինչպես ինչ-որ

մեկի քրիստոնեական մատներն արձակում են իրեն և բերանից հանում խցոցը: Նա գարմանքով տեսել է պատկառելի արտաքինով ամուսնական մի ղուլզի և նվազած բացականչել:

— Ի՞նչ է նշանակում այս բոլորը:

Պատկառելի արտաքինով ամուսինները նայել են իրենց ջուրջը և պատասխանել:

— Այդ հարցը մենք էինք ուզում ձեզ տալ:

Հետեւել է անխուսափելի բացատրությունը: Ո՛չ: Հուլժ ճշգրիտ լինենք. հետեւել են մի բաժակ ջուրը և աղերով սրվակը՝ սիրելի միստր Գոդֆրիի նյարդերը կարգի բերելու համար: Բացատրությունը հաջորդել է զրան:

Տանտիրոջ և տանտիրուհու պատմածից (մարդիկ, որոնք լավ անուն ունեն հարեալների շրջանում) պարզվել է, որ նրանց առաջին ու երկրորդ հարկերը նախօրյակին մեկ շաբաթով վարձել է պատկառելի արտաքինով մի ջենտլմեն, հենց նա, որը դուռը բացել է միստր Գոդֆրիի թակոցի վրա: Ջենտլմենը միանգամից վճարել է ամբողջ շաբաթվա համար, ասելով, թե այդ սենյակները հարկավոր են արևելյան հրեք աղնվազարմ պարոնների համար, որոնք իր մտերիմներն են և Անգլիա են այցելել առաջին անգամ: Այդ զայրացուցիչ դեպքի օրը, առավոտյան, արևելյան երկու անձանոթները, իրենց հարգարժան անգլիացի ընկերոջ ուղեկցութեամբ, փոխադրվել են այդ բնակարանը: Սպասվում էր, որ շուտով կգա երրորդը, իսկ ուղեբեւը (ինչպես հավատացնում էին՝ շատ մեծ) պետք է իրենք մաքսատնից ստանալին նույն օրը մի փոքր ավելի ուշ: Միստր Գոդֆրիի գալուց մի ասած բուպե առաջ հայտնվել է երրորդ անձանոթը: Ոչ մի անսովոր բան տեղի չէր ունեցել, որքան դա հայտնի էր տանտիրոջն ու տանտիրուհուն, որոնք ներքեում են եղել մինչև հինգ բուպե այն բանից առաջ, երբ երեք օտարերկրացիները, իրենց անգլիացի ընկերոջ ուղեկցութեամբ, դուրս են եկել անից և ոտքով հանգիստ գնացել Սարանդիի ուղղութեամբ: Տանտիրուհին հիշել է, որ այցելու էր եկել նրանց մոտ: Ծվ քանի որ ինքը չէր տեսել, որ այդ այցելուն գուրս եկած լիներ տնից, իրեն տարօրինակ է թվացել, թե ինչո՞ւ էին այդ պարոնին մենակ թողել վերեւում: Ամուսնու հետ խորհրդակցելուց հետո նա անհրաժեշտ է համարել հավաստիանալ, թե արդյո՞ք որևէ բան չի պատա-

հելւ Արդյունքը ևս արդեն նկարագրել ևմ վերևում. դրանով էլ ավարտվել է տանտիրոջ ու տանտիրուհու բացատրությանը:

Սենյակը ղննել են ամենայն ուշադրությամբ: Թանկագին միստր Գողֆրիի իրերը թափված են եղել սենյակով մեկ: Սակայն, երբ դրանք հավաքել են, պարզվել է, որ տեղում է ամեն ինչ՝ ժամացույցը, շղթան, դրամապանակը, բանայինները, թաշկինակը, ծոցատետրը. մոտը ելած բոլոր թղթերը հանգամանորեն աչքի էին անցկացվել և թողնվել բոլորովին անվնաս վիճակում: Տանտերերի ունեցվածքից նույնպես ոչ մի բան չէր վերցվել: Արևելյան աղնվազարմ պարոններն իրենց հետ տարել էին միայն իրենց պատկերազարդ ձեռագիրը և ուրիշ ոչինչ:

Ի՞նչ էր նշանակում այս ամենը: Եթե աշխարհիկ տեսակետից քննելու լինենք, ապա դա, ըստ երևույթին, նշանակում էր, որ միստր Գողֆրին ինչ-որ անհայտ մարդկանց զոհն է դարձել թյուրիմացության պատճառով: Այստեղ ինչ-որ մի մով դավադրություն էր եղել, և մեր սիրեցյալ անմեղ բարևկամն ընկել էր հանցագործների ցանցը:

Չոգևոր տեսակետից, եթե քրիստոնյան, մարդասիրական հարյուրավոր հաղթանակների հերոսը, սխալմամբ իր համար սարքված ծուղակն է ընկնում,— օ՛, միշտ զգոն լինելու ինչպիսի՛ նախադրուշացում է դա մնացած բոլորիս համար: Ինչքան շո՛ւտ կարող են մեր սեփական մով կրքերը դառնալ հանկարծակի մեղ ճանկող արևելյան աղնվազարմ պարոններու: Չիմա մենք պետք է միստր Գողֆրիին թողնենք նորաումբերլանդի փողոցում և փոքր-ինչ ավելի ուշ գնանք մեկ ուրիշ տուն, այս անգամ՝ միստր Լյուկերի ետևից:

Բակից դուրս գալուց հետո միստր Լյուկերն իր գործով այցելել է Լոնդոնի տարբեր թաղամասեր: Տուն վերադառնալով՝ գտել է իրեն սպասող մի նամակ, որ, ինչպես իրեն ասել են, քիչ առաջ ինչ-որ մի տղա է թողել: Այստեղ էլ, ինչպես միստր Գողֆրիի նամակում, ձեռագիրն անծանոթ է եղել. սակայն հիշատակվել է միստր Լյուկերի այլաբաղաբային հաճախորդներից մեկի անունը: Նամակագիրը հազորդում էր (նամակը գրված էր մի երրորդ անձնավորության, հավանաբար՝ քարտուղարի ձեռքով), որ ինքը անսպասելիորեն կանչվել է Լոնդոն, կանգ է առել Ալֆրեդի հրապարակում, Տոտեն-



հեմ—Կուրտ—Ռոդում, և ցանկանում է անհապաղ միտար կյուկերին տեսնել մի գնման առիթով, որ ինքը պատրաստվում է անել: Այդ ցննալմենը արևելյան հաղվազյուտ իրեր հավարդ էր և շատ տարիներ եղել էր միտար կյուկերի առատաձեռն հաճախորդը կամրեթում: Միտար կյուկերն անմիշտպես կառք էր վերցրել և մեկնել իր առատաձեռն հաճախորդի մոտ:

Այն բոլորը, ինչ որ նորտումբերլանդի փողոցում միտար Գոդֆրիի հետ էր կատարվել, կրկնվել էր նաև միտար կյուկերի հետ Ալֆրեդի հրապարակում: Գարձյալ պատկառելի արտաքինով մի մարդ բացել էր գուռը և հյուրին տարել խորքում գտնվող հյուրասենյակը: Նորից սեպանի վրա եղել էր պատկերազարդ ձեռագիրը: Հնդկական արվեստի այդ հրաշագեղ ստեղծագործությունը կյուկերի ուշադրությունը գրավել էր ճիշտ այնպես, ինչպես և միտար Գոդֆրիի ուշադրությունը:



Նա նույնպես հանկարծ իր վզի վրա դրացել էր մի մերկ լնու՛ր ձևոք. նրա աչքերը նույնպես կապվել էին և բերանն էլ խցոց դրվել: Նա նույնպես գցվել էր գետնին և խուզարկվել ոտը խցոց-գլուխ: Այնուհետև վրա հասած ժամանակամիջոցն ավելի նրկար էր եղել, քան միստր Գոգֆրիի տառապածը, բայց թե դա էլ, ինչպես և առաջինը, ավարտվել էր նրանով, որ տանտերերը, ինչ-որ վատ բան կասկածելով, գնացել են վերև՝ տեսնելու թե ինչ է պատահել: Ծիշտ այնպիսի մի բացատրություն, ինչպիսին որ Նորտոմբերլանդի փողոցի տանտերն էր տվել միստր Գոգֆրիին, այդպիսի բացատրություն տվել էր նաև Ալֆրեդը: Հրապարակի տանտերը միստր Լյուկերին: Երկուսն էլ հավասարապես խաբվել էին պատկառելի արտաքինով անծանոթի պատշաճ պատրվակով և լիքը քսակով, մի մարդու, որն իրը գործել է իր արտասահմանյան մտերիմների հանձնարարությունամբ: Միակ տարբերությունն այն է եղել, որ, երբ միստր Լյուկերի գրպաններից թափված իրերը հավաքվել են հատակից, ժամացույցն ու դրամապանակն անվնաս են եղել, բայց (նա նույնքան երջանիկ էր եղել, որքան և միստր Գոգֆրին) թղթերից մեկը վերցվել էր: Այդ թուղթը եղել էր ստացականը մի շատ թանկարժեք իրի, որ միստր Լյուկերն այդ օրը պահպանման էր հանձնել իր բանկիրներին: Սակայն այդ փաստաթուղթն օգտակար լինել չէր կարող գողի համար, բանի որ թանկարժեք իրը վերադարձվելու էր միայն անձամբ արևոջը: Հենց որ միստր Լյուկերն ուշքի է հկել՝ շտապել է բանկ, մտածելով, որ կարող է իրեն կողոպտած գողերը, այդ բանը չիմանալով, ստացականը վերցրած՝ դնան այնտեղ: Սակայն բանկում նրանց ոչ ոք չէր տեսել, ոչ այդ օրը, ոչ էլ հետագա օրերին: Նրանց անդիտացի հարգարժան ընկերը, բանկիրը՝ կարծիքով, կարողացել էր ստացականի արժեքը հասկանալ, նախքան նրանք կփորձեին օգտվել դրանից, և ժամանակին նախազգուշացրել էր նրանց:

Երկու սուսթածներն էլ այդ գործով դիմել են ոստիկանատուն. մեծ եռանդով մանրակրկիտ հետաքննություն է կատարվել: Ոստիկանական իշխանությունները եկել են այն եզրակացություն, որ թանկարժեք իրեր հափշտակելու իրենց որոշումը կողոպտիչները կայացրել են անբավարար տեղեկություններ ունենալով: Նրաք որոշակի չեն իմացել՝ միստր

Լյուկերն իր թանկարժեք իրի հանձնումը կատարել է անձամբ, թե ոչ, իսկ խեղճ բարեկիրթ միտոր Գողթրին սուժել է այն պատճառով, որ պատահարար խոսքի է բռնվել Լյուկերի հետ:

Սրան ավելացրեք, որ երկուշարթի օրվա մեր ժողովից միտոր Գողթրիի բացակայության պատճառը եղել է այն, որ նա այդ օրը պետք է ներկա գտնվեր ուստիկանական իշխանությունների խորհրդակցությունում,— և դուք կստանաք պահանջվելիք բոլոր բացատրությունները, իսկ ես կկարողանամ անցնել այն համեստ պատմությունը, որ անձամբ ապրել եմ Մանտերյու պուրակում:

Իմ բարեգութ քեռակին վերիններն ինձ ընդունեց իր սովորական տիրալիրությունը: Բայց թե ես շատով նկատեցի, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է ընտանիքում: Քեռակինս մի քանի տաղնապալի հայացք պեցեց դատեր վրա: Ամեն անգամ, որ նայում եմ Ռեչեկին, շեմ կարող չլարմանալ, թե ինչպես այդ ողորմելի աղջիկը կարող է լինել այնպիսի հրաշալի ծնողների դուստր, ինչպիսիք են սրբ Զոնը և լեդի վերինդերը: Իսկ հիմա եա ոչ միայն հիասթափեցրեց, այլև շփոթեցրեց ինձ: Նրա խոսելաձևի և վարմունքի մեջ բացակայում էր ամեն մի բարեկիրթ դասվածություն, որը շատ տհաճ բան է իմ կարծիքով: Նա բռնված էր ինչ-որ մի տենդագին հուզմունքով, որը նրան ստիպում էր բարձրաձայն ջրքջալ և մեղսալիորեն բմահաճ ու պահանջկոտ լինել նախաձաշի սեղանի ուտելիքների ու խմելիքների նկատմամբ: Ես շատ էի խղճում նրա դժբախտ մորը՝ նույնիսկ իսկական իրավիճակն ինձ հայտնի դառնալուց առաջ:

Նախաձաշն ավարտվելուց հետո քեռակինս ասաց.

— Հիշիր, Ռեչեկ, բժիշկը պատվիրել է, որ դու ուտելուց հետո հանդիստ նստես ու գիրքը ձեռքդ առնես:

— Գնամ պրադարան, մայրիկ,— պատասխանեց նա:— Բայց եթե Գողթրին գա, կարդադրեք ինձ տեղեկացնել: Մեռնում եմ նորսումբերլանդի փողոցի նրա արկածը մանրամասնորեն իմանալու ցանկությունից:

Նա համբուրեց մոր ճակատը և նայեց իմ կողմը:

— Մնաք բարով, Կլակ,— անփութորեն արտաբերեց նա: Նրա հանդգնությունը զայրույթի զգացում շառաջացրեց իմ մեջ: Միայն թե ես ամուր մխրճեցի հիշողությունս մեջ՝ պետք

է աղսթեմ նրա համար: Երբ մենակ մնացինք՝ քեռակիրնս ինձ ներկայացրեց հնդկական արմատի սարսափելի պատմությունը, որը, ինչպես ուրախությամբ իմացա, աչտեղ վերապատմելու ոչ մի հարկ չկա: Նա ինձնից շէր թաքցնում, որ կգերադասեր գաղտնի պահել դա: Բայց հիմա, երբ բոլոր ծառաներն իմացել էին արմատի անհետանալը, երբ որոշ հանգամանքներ նույնիսկ ընկել էին թերթերի էջերը և կողմնակի մարդիկ քննարկում են, թե արդյոք որնէ կապ չկա՞ լեզի Վերինդերի կարվածքում պատահածի և Նորատմերիլանդի փողոցում ու Ալֆրեդի հրապարակում կատարված դեպքերի միջև, արդեն իմաստ չունի գաղտնապահություն անելը, և լիակատար անկեղծությունը դառնում է ոչ միայն առաքինություն, այլև անհրաժեշտություն:

Շատերը, լսելով այն, ինչ որ ես լսեցի, հավանաբար, ծայրաստիճան կզարմանային: Բայց ես, իմանալով, որ Ռեչելի բնավորությունը մանուկ հասակից ի վեր ուղղման չի ենթարկվել, պատրաստ էի այն ամենին, ինչ որ քեռակիրնս կարող էր ինձ ասել իր դատեր մասին: Կարող էր նաև ավելի վատ լինել և վերջանալ սպանությունմբ, իսկ ես, այնուամենայնիվ, մտքումս կասեի. «Միակ արդյունքը: Աստված իմ, աստված իմ, միակ արդյունքը»: Ինձ սոսկ տհաճություն պատճառեցին այն միջոցները, որ տվյալ դեպքում ձեռնարկեց քեռակիրնս: Ահա այստեղ է, որ պետք է գործեր քահանան, մինչդեռ լեզի Վերինդերը գտնում էր, որ պետք է բժշկի դիմել: Իմ խեղճ քեռակիրնը ջահելությունն անց էր կացրել իր հոր անասոված տանը: Գարձյալ բնական արդյունքը: Օ՛, աստված իմ, աստված իմ. նորի՛ց բնական արդյունքը:

— Բժիշկները Ռեչելին պատվիրել են շարժման մեջ լինել ու զվարճանալ և համառորեն ինձ համոզել են նրա մտքերը շեղել անցյալից, — ասաց լեզի Վերինդերը: — Ես բոլոր ուժերս գործադրում եմ այդ պատվերները կատարելու համար: Բայց Գոգֆրիի հետ այս տարօրինակ արկածը պատահեց շատ անհաջող ժամանակ: Ռեչելն անմիջապես տագնապեց ու հուզվեց այդ մասին լսելով: Նա ինձ հանգիստ չտվեց այնքան ժամանակ, մինչև որ ես գրեցի ու հրավիրեցի իմ զարմիկ էթլուայթին: Ռեչելը հետաքրքրություն ցուցաբերեց նաև այն մյուս մարդու նկատմամբ, որի հետ նույնպես կոպիտ էին

վարվել, միստր Լյուկեր էր անունը, թե ինչ: Թեև, հասկանալի է, սա արդեն բոլորովին կողմնակի մտրդ է նրա համար:

—Ձեր աշխարհիմացությունը, սիրելի քեռակին, շատ ավելի բարձր է իմից,—հարգալից պատասխանեցի ես:—Բայց պետք է որ պատճառ լինի Ռեչեյի այդքան տարօրինակ վարմանքի համար: Նա մի մեղսալի գաղտնիք է թաքցնում ձեզնից ու բոլորից: Այս վերջին դեպքերի մեջ չկա՞ այնպիսի մի բան, որը սղատնար նրա գաղտնիքի բացահայտմանը:

—Բացահայտմա՞նը,— հարցը կրկնեց քեռակինս:—Ի՞նչ էր ուղում գրանո՞վ ասել: Լյուկերի՞ միջոցով բացահայտման: Իմ վարմիկի՞ միջոցով բացահայտման:

Հաղիվ էին այս բաները թուեւ նրա բերանից, երբ միջամտեց ինքը նախախնամությունը: Մասան գոները բացեց և զեկուցեց միստր Գոդֆրի էբլուայթի մասին:

## Գ Լ ու լ ւ Ի Ի

Միստր Գոդֆրին, ծառայի հտեից դալով, հայտնվեց շատ հարմար ժամանակ (ճիշտ այնպես, ինչպես միստր Գոդֆրին անում է ամեն ինչ): Նա ներս մտավ ո՛չ այնքան արագ, որպեսզի վախեցներ մեզ, եվ ո՛չ այնքան դանդաղ, որպեսզի մենք հարկազրված լինեինք սպասել՝ նայելով րոց գոտնը:

—Անմիջապես անցեք միսս Վերինդերի մոտ,—գիմեց քեռակինս ծառային,—և ասացեք, որ միստր էբլուայթն այստեղ է:

Երկուսս էլ հարցրինք նրա առողջությունը: Երկուսս էլ միաժամանակ տեղեկացանք՝ անցած շաբաթվա սարսափելի արկածից հետո ուշքի՞ եկել է արդյոք: Նա հասցրեց երկուսիս էլ ամենայն քաղաքավարությունք պատասխանել միևնույն թուպին: Լեզի Վերինդերն ստացավ Գոդֆրիի բանավոր պատասխանը, իսկ ինձ բաժին ընկավ նրա հմայիչ ժպիտը:

—Ինչո՞վ եմ արժանացել այս ամբողջ համակրանքին,— ամենայն մեղմությամբ բացականչեց նա:— Սիրելի՛ մորաբույր: Սիրելի՛ միսս Կլակ, Ինձ ուղղակի ինչ-որ մեկ ուրիշի տեղ էին գրել: Միայն թե աչքերս կապեցին. միայն ին քիչ մնաց ինձ խեղդելին. միայն թե ինձ մեքքի վրա գցեցին մի շատ բա-

րակ գորգի վրա, որով ինչ-որ մի շատ կոշտ հատուկ էր ծածկված: Ձէ որ կարող էր շատ ավելի վառ լինել, Ես կարող էի սպանվել, ինձ կարող էին կոզոպտել: Ինչի՞ց եմ գրկվել: Ոչնչից, բացի նյարդային ուժից, որն օրենքը սեփականություն չի ձանաչում, այնպես որ, լուրջ իմաստով, ես ոչնչից չեմ գրկվել: Եթե կարողանայի իմ ուզածով վարվել, ապա լուս-թյան կմատնեի այդ արկածը: Ինձ համար հաճելի չեն այս ամբողջ իրարանցումն ու հրապարակայնությունը: Բայց միտար կյովեքը հասարակայնության սեփականությունն է դարձրել իր անախորժությունները և, որպես բնական հետևանք, հասարակայնության սեփականությունն են դարձել նաև իմ անախորժությունները: Ես լրադրերի սեփականությունը կլինեմ այնքան ժամանակ, մինչև որ այդ նյութը կձանձրացնի սիրելի ընթերցողին: Ինձ որ ձանձրացրել է: Տա աստված, որ սիրելի ընթերցողը հնարավորին չափ շատ հետևի իմ օրինակին... Ինչպե՞ս է սիրասուն Ռեչելի առողջությունը: Արդյո՞ք նա դեռ շարունակում է դմաչլվել լոնդոնյան դվարձություններով: Շատ ուրախ եմ այդ լսելուս համար... Միտս կլակ, ինձ հարկավոր է ձեր ներողամտությունը: Ես բոլորովին բարձիթողի եմ արել կոմիտեական գործերը և լքել եմ իմ սիրելի տիկնանց: Բայց հույս ունեմ հաջորդ շաբաթ մտնել մայրական հողաբարձության ընկերություն: Շա՞տ բան եք կարողացել անել երկուշաբթի օրը: Ապագայի հետ կասկած որևէ հույս ունի՞ կոմիտեն: Պահեստավորված շա՞տ շարվարներ ունենք:

Երկնային հեղուկյամբ լի նրա ժպիտին դիմանալ հնարավոր չէր: Նրա թավշյա ձայնի խորությունն ուժեղացնում էր հմայքը այն հույժ հետաքրքիր դործարար հարցի, որով նա դիմեց ինձ: Մեզ մոտ շատ մեծ քանակությամբ շարվարներ կին հավաքված. մենք սյարդապես կորել էինք դրանց մեջ: Ես հենց այդ էի ուզում ասել, երբ հանկարծ դուրս նորից բացվեց, և աշխարհիկ տաղնապի շունչը սենյակ խուժեց ի գեմս միսս Վերինդերի:

Նա դեպի միտար Գողֆրին վաղեց անվաչելուլ արագությամբ, խիստ գզգզված մազերով և տհաճորեն կարմրատակած երեսներով:

— Ինչքա՞ն ուրախ եմ ձեզ տեսնելու համար, Գողֆրի,— դիմեց նրան Ռեչելը այնպիսի մի մտեմական ձայներանգով,

որով մի երկտասարդը դիմում է մյուսին:—Շա՛տ ավստս, որ ձեզ հետ շեք բերել միստր Լյուկերին: Գուք և նա (քանի դեռ շարունակվում է մեր վերջին սենսացիան) այժմ ամենահասարքբիր մարդիկն եք ամբողջ Լոնդոնում: Դա մռայլ թեմա է, դա անբնական է, դրանից բնագդաբար ցնցվում է այնպիսի մի կանոնավոր անձնավորություն, ինչպիսին միսս Կլակն է: Միևնույն է: Հիմա ևեթ ինձ ամբողջութեամբ պատմեք Նորտումբերլանդի փողոցում կատարվածը: Ես գիտեմ, որ թերթերը որոշ բաներ չեն հիշատակել:

Նույնիսկ սիրելի միստր Գոդֆրին ժառանգել էր մեզ բուլբրիս Ադամից մնացած անառակ բնավորությունը՝ մարդկային ժառանգութեան մի շատ չնչին մասը, բայց, ավա՛ղ, այնուամենայնիվ, ժառանգել էր: Խոստովանում եմ, ինձ համար ծանր էր տեսնել, թե ինչպես նա Ռեչելի ձեռքը վերցրեց իր երկու ձեռքի մեջ ու կամացուկ սեղմեց իր սերթուկի ձախ կողմին: Դա ուղղակի խրախուսումն էր Ռեչելի անպարկեշտ խոսակցութեան և իմ նկատմամբ նրա արած լպիրշ ակնարկի:

—Թանկագին Ռեչել,—արտասանեց նա այն նույն ձայնով, որը ինձ ցնցել էր, երբ խոսում էր մեր հույսերի ու մեր շավարենբրի մասին,—լրագրերը ձեզ ամեն ինչ պատմել են, և պատմել են շատ ավելի լավ, քան ես կկարողանայի:

—Գոդֆրին գտնում է, որ մենք չափից ավելի նշանակութուն ենք տալիս այդ գործին,— նկատեց քեռակինս:— Հենց նոր նա մեզ ասում էր, որ այդ մասին խոսելն իր համար հաճելի չէ:

—Ինչո՞ւ:

Ռեչելն այս հարցը տվեց՝ հանկարծակի փայլեցնելով աչքերը և հայացքը հառելով ուղիղ միստր Գոդֆրիի երեսին:

Իսկ սա այնպիսի հանարժանի և ոչնչով չարդարացված ներողամտութեամբ լի մի հայացք գցեց Ռեչելի վրա, որ ես էլի կարող չմիջամտել:

—Ռեչել, սիրելիս,—մեղմորեն բողոքեցի ես,—իսկական վեհությունն ու իսկական արիությունը միշտ համեստ են:

— Գուք յուրովի ազնիվ մարդ եք, Գոդֆրի,— շարունակեց նա, առաջվա պես չնչին իսկ ուշադրություն չդարձնելով ինձ վրա և խոսելով նույն անպարկեշտ ձևով,— բայց ես հավատացած եմ, որ ձեր մեջ մի վեհություն չկա. ես չեմ հա-

վատում, որ դուք սրեկ տոանձնահաստուկ արիություն ունենաք, և հաստատ համուլված եմ, որ դուք նորտումբերլանդի փո-  
հոցի ձեր արկածի մասին շիտսելու անձնական սլատճառ  
ունեք: Եվ ես մտադիր եմ իմանալ այդ պատճառը:

— Պատճառը շատ պարզ է, և դա խոստովանելը շատ դյու-  
րին է, — պատասխանեց նա Ռեշելի նկատմամբ շատ մեծ նե-  
րողամտությամբ. — այդ մասին խոսելն ինձ ձանձրացրել է:

— Զեզ ձանձարցրե՞լ է: Սիրելի Գոդֆրի, մի դիտողություն  
անեմ ձեզ:

— Ի՞նչ դիտողություն:

— Դուք չափից դուրս շատ ժամանակ եք անցկացնում կա-  
նանց միջավայրում: Դուք երկու շատ վատ սովորություն եք  
յուրացրել այնտեղ՝ լրջորեն խոսել դատարկ բաների մասին  
և ստել սոսկ սուտ ասելու բավականություն համար: Դուք չեք  
կարող շիտակ գործել ձեր երկրպագուհիների հետ: Բայց ես  
մտադիր եմ ձեզ ստիպել, որ շիտակ գործեր ինձ հետ: Եկեք  
նստեք այստեղ: Ես այրվում եմ ձեզ շիտակ հարցերով ողո-  
ղելու ցանկությունը և հույս ունեմ ստիպել, որ շիտակ պատաս-  
խաններ տաք ինձ:

Միսս Ռեշելն ուղղակի քարշ տվեց նրան ամբողջ սենյակի  
երկարությամբ ու նստեցրեց լուսամուտի մոտ դրված աթո-  
ռին, որտեղ լույսը կրնկներ նրա դեմքին: Ինձ համար ծանր  
է, որ ստիպված եմ նկարագրել այդօրինակ խոսքերն ու արարը-  
ները: Բայց մի կողմից միտար Զրենկլին Բլեկի շեկն է և մը-  
յուս կողմից՝ ճշմարտության նկատմամբ սրբազան պահանջը:  
Ի՞նչ կարող եմ անել: Նայեցի քուակնոջս: Նա նստած էր ան-  
շարժ, ըստ երևույթին, ամենևին տրամադիր չլինելով միջա-  
մտել: Այդպիսի ընդարմացում երբեք չէի նկատել նրա մեջ:  
Դա, թերևս, հեռանքն էր գյուղում անցկացրած այն անհան-  
դիստ ժամանակի, որ ապրել էր նա:

Ռեշելը միտար Գոդֆրիի հետ նստեց լուսամուտի մոտ:  
Սկսեց իր հարցերը, որոնցով սպառնացել էր նրան, ամենևին  
ուշագրություն չդարձնելով իր մօր և ինձ վրա, ասես մենք  
սենյակում չլինեինք:

— Ոստիկանությունը ոչինչ չպարզե՞ց, Գոդֆրի:

— Բացարձակապես ոչինչ:

— Ենթադրում եմ, որ ձեզ համար ծուղակ սարբած երեք

հոգին եղել են այն նույն մարդիկ, որոնք հետո ծուղակ են սարքել միստր Լյուկերի համար:

— Դրանում ոչ մի կասկած չի կարող, սիրելի Ռեչել:

— Եվ այդ մարդկանց հետքն անդամ չի գտնվել:

— Ամենեին:

— Կարծում են (այդպես չէ), թե դրանք այն նույն երեք հնդիկներն են, որ գյուղում մեզ մոտ էին եկել:

— Ոմանք այդպես են մտածում:

— Իսկ դուք այդպես մտածո՞ւմ եք:

— Բանկազինս, նախքան կկարողանայի նրանց տեսնել, կապիցին աչքերս: Ես բացարձակապես ոչինչ չգիտեմ այդ մասին: Էլ ինչպե՞ս կարող եմ որևէ կարծիք հայտնել:

Ռեչելը, առանց անհարմար զգալու, շարունակում էր իր հարցերը.

— Գոգֆրի, ես ուզում եմ որևէ բան իմանալ միստր Լյուկերի մասին:

— Գարձյալ բախտս չի բերում, Ռեչել: Ես բացարձակապես ոչինչ չգիտեմ միստր Լյուկերի մասին:

— Բանկում հանդիպելուց առաջ իրար հետ չե՞ք տեսնվել:

— Երբեք:

— Իսկ հետո նրան տեսե՞լ եք:

— Այո: Մեզ հարցաքննել են և՛ միասին, և՛ առանձին-առանձին. ուստի կանատանը:

— Միստր Լյուկերից, կարծեմ, խլել են այն ստացականը, որ նրան տվել է իր բանկիրը: Ի՞նչ ստացական է դա:

— Ինչ-որ մի թանկարժեք իրի, որը նա պահպանություն է հանձնել բանկում:

— Այդպես էլ ասված էր թերթերում: Բայց եթե դա բավական է ընթերցողների համար ընդհանրապես, ապա ինձ համար քիչ է: Ստացականում, հավանաբար, նշված է, թե ինչ թանկարժեք իր է դա:

— Ռեչել, ես լսել եմ, որ ստացականում ոչինչ էլ նշված չի եղել: Միստր Լյուկերին պատկանող թանկարժեք իր, կնքված նրա կնիքով և հանձնված բանկ՝ պահպանություն, այն հաշվով որպեսզի ետ վերադարձվի միայն անձամբ նրան. — ահա այդ ստացականի ձևը և ահա այն բոլորը, որ ես գիտեմ այդ մասին:



Ռեչելը մի պահ ձայն չհանեց, նայեց մորն ու հառաչեց: Հետո նորից աչքերը դարձրեց միստր Գոգֆրիի վրա ու շարունակեց.

— Մեր մասնավոր գործերը, կարծեմ, ընկել են թերթերի էջերը:

— Ցավով պետք է խոստովանեմ, որ աչդայես է:

— Եվ ինչ որ պարապ մարդիկ, մեզ բոլորովին օտար, աշխատում են կապ գտնել Յորքշիրում մեր տանը կատարվածի և դրանից հետո այստեղ կոնդոնում պատահածի միջև:

— Վախենում եմ, որ հասնուրակայնության հետաքրքրասիրությունն ուղղված է հենց այդ կողմը:

— Մարդիկ, որոնք սնդում են, թե ձեզ վրա և միստր Լյուկերի վրա հարձակված էրեք անհայտ անձնավորությունները այն նույն հեղիկներն են, ասում են նաև, որ թանկարժեք իրը...

Այստեղ Ռեչելը կանգ առավ: Նա աստիճանադարձ ավելի ու ավելի էր գունատվում: Նրա արտակարգ սև մազերը այնքան ահավոր էին դարձրել այդ գունատությունը, որ բոլորս մտածում էինք, թե նա, այն պահին, երբ կանգ առավ իր հարցի կես ճանապարհին, կուշաթափվի: Միրելի միստր Գոգֆրին աթոռից վեր կենալու երկտորդ փորձն արեց: Քեռակինս Ռեչելին աղաչում էր, որ այլևս չխոսի: Քեռակնոջ օգնության շտապեցի հաշտության համեստ երաշխիքով հոտատելի ազի սրվակով:

— Գոգֆրի, մնացեք ձեր տեղում... Մայրիկ, ինձ համար երկյուղելու ոչ մի պատճառ չկա... Կլակ, դուք մեռնում եք վերջը լսելու ցանկությունից. ես ուշադնաց չեմ լինի հատկապես նրա համար, որպեսզի շնորհ արած լինեմ ձեզ:

Այսպիսին էին Ռեչելի իսկական խոսքերը. ես դրանք զրի առա տուն վերադառնալուն պես:

Նա նորից դիմեց միստր Գոգֆրիին: Համառությամբ, որին նայելը երկյուղալի էր, նա նորից անդրադարձավ ընդհատված արտահայտությանը, որի վրա կանգ էր առել, և ավարտեց այն.

— Գոգֆրի, ասացեք ինձ ուղղակի, որևէ մեկն ասում է, որ միստր Լյուկերի թանկարժեք իրը կուսնաբարն է:

Հագիվ էր արմատի հիշատակությունը պոկվել Ռեչելի շուրթերից, երբ ես փոփոխություն նկատեցի իմ հրաշագեղ

ընկերոջ մեջ: Նրա դեմքը մթնեց: Գողֆրիին լթեց վարվելա-  
կերպի՝ իրեն հատուկ մեղմությունը, որը նրա գլխավոր  
հմայքներից մեկն էր: Նրա պատասխանը լցվեց ազնիվ զայ-  
րույթով:

— Նրանք այդ ասում են,— բացականչեց նա:— Կան  
մարդիկ, որոնք կանգ չեն առնում հանուն ինչ-որ մասնավոր  
անձնական շահերի միտքը կյուկերին խաբուկության մեջ մեղա-  
դրելու առջև: Ի պատասխան զրպարտության՝ նա նորից ու  
նորից հանդիսավորապես երգվում է, որ կյանքում երբեք չի  
էլ լսել Լուանաքարի մասին: Իսկ այդ ստոր մարդիկ, առանց  
որևէ ապացույցի նշույլի, պատասխանում են, թե նա զազտ-  
նապահ լինելու պատճառ ունի: «Մենք հրաժարվում ենք նրա  
երգումին հավատալուց»: Ամոթ ու խայտառակություն:

Մինչ նա խոսում էր՝ Ռեչելը նրան էր նայում ինչ-որ տար-  
օրինակ ձևով, շեմ կարող նկարագրել, թե ինչ աստիճան տար-  
օրինակ: Երբ Գողֆրիին վերջացրեց, Ռեչելն ասաց.

— Եթե նկատի առնենք, որ միտքը կյուկերը հազիվ է  
ծանոթ ձեզ, ապա դուք մի տեսակ շափից ավելի կրքոտու-  
թյամբ եք պաշտպանում նրան, Գողֆրի:

Իմ բազմաշնորհ բարեկամը ավետարանական այնպիսի մի  
հշմարիտ պատասխան տվեց նրան, որպիսին կյանքումս հազիվ  
թե երբևէ լսած լինեի:

— Հուսով եմ, Ռեչել, ես կրքոտությամբ եմ պաշտպանում  
ամեն մի հալածական մարդու շահերը:

Չայնհրանգը, որով ասվեց սա, քարն անգամ կարող էր  
հալեցնելու Բայց, օ՛ր բարեկամներս, ի՞նչ է քարի կարծրու-  
թյունը: Ոչինչ՝ դարձի չեկած մարդկային սրտի հանդեպ: Ռեչելը  
փոթկացրեց: Այս հիշելով՝ հո կարմրում եմ. փոթկացրեց նրա  
իրեսն ի վեր:

— Ձեր աղնվաքարոտ արտահայտությունները պահեք կա-  
նանց կոմիտեի համար, Գողֆրի: Ես համոզված եմ, որ կյու-  
կերի հետ կապված աղմկալի անախորժությունը ձեզ էլ չի  
խնայել:

Այս խոսքերն արտաբերվելիս քեռականոջս ընդարմացումն  
անգամ անցավ:

— Ռեչել, սիրելիս,— միջամտեց նա,— դու այդպես խոսելու  
իրավունք չունես:

—Մայրիկ, ես ոչ մի վատ բան նկատի չունեմ. ես սա-  
ասու՛յ՛ եմ բարի մտադրութեամբ: Եվս մի բոպե համբերեք, և  
կտեսնեք:

Նա նորից միտար Գողֆրիին նայից այնպիսի մի արտահայ-  
տութեամբ, որը նման էր անակնկալ խղճահարութեան: Նա  
այնքան հեռուն դնաց, այնքան անհամաաեղելի կնոջական  
արժանապատվության հետ, որ իրեն թույլ տվեց բռնել Գող-  
ֆրիի ձեռքը:

—Հավատացած եմ, որ կուահում եմ մորս և ինձ հետ այդ  
թեմայով խոսելու ձեր շկամութեան պատճառը: Գժբախտ  
պատահականութեանը մարդկանց աչքում ձեր անունը միացրել  
է միտար կյուկերի անվան հետ: Գուք ինձ պատմեցիք նրա ան-  
վան շուրջը պատվող աղմկալի լուրերի մասին: Ասացեք, իսկ  
ի՞նչ աղմկալի լուրեր են պատվում ձեր անվան շուրջը:

Նույնիսկ այդ պահին սիրելի միտար Գողֆրին, որ միշտ  
պատրաստ է բարութեամբ պատասխանելու շարին, փորձեց  
խնայել Ռեչելին:

—Ինձ մի հարցրեք,—ասաց նա:—Կա՞յ կլինի մոռանանք  
այդ, Ռեչել... Իրոք, լավ կլինի:

—Ես ուզում եմ այդ իմանալ,—ցատումով բացականչեց  
Ռեչելը:

—Պատասխանեք նրան, Գողֆրի,—միջամտեց քնուակինս.—  
հիմա ոչ մի բան այնպես չի վնասի նրան, ինչպես ձեր լուռ-  
թեանը:

Միտար Գողֆրիի դեղեցիկ աչքերը լցվեցին արցունքով:  
Նա վերջին աղերսական հայացքը հառեց նրան և վերջապես  
արտաբերեց ճակատագրական բառերը.

—Եթե ուզում եք իմանալ, Ռեչել, լուրեր են պատվում, թե  
Վուանաքարը գրավ է դրված միտար կյուկերի մոտ և որ զրավ  
դնողն էլ հենց ես եմ:

Ռեչելը հառաչելով վեր թռավ տեղից: Նա փոփոխակի մերթ  
քնուակնոջս, մերթ միտար Գողֆրիին էր նայում այնպիսի իսկու-  
ցնոր հայացքով, որ ես, արդարև, մտածեցի՝ չլինի՞ թե իսկու-  
դարվեց:

—Ինձ հետ շխոսեք: Ինձ չդիտչեք,—բացականչեց նա,  
հալածված գազանի պես ետ-ետ դնալով ու քաշվելով դեպի  
սենյակի հեռավոր անկյունը:—Գա իմ մեղքն է: Ես պետք է

բառնեմ այն: Ես զոհարեմբիլ եմ ինձ. դա իմ իրաւոյնքն է: Բայց տեսնել, թէ ինչպէս է կործանւում անմեղ մա՞րդը, և պահել զբաշտնի՞քը՝ խորտակելով նրա կյանքը: Օ՛, աստված, իմ: Դա անաւելո՞ր բան է: Ես չեմ դիմանա դրան:

Ջեռուկինս նստած տեղից բարձրացաւ ու հանկարծ Նորից նստեց: Նա նվազած ձայն տվեց ինձ, մատնացույց անելով իր աշխատանքային զամբջուղիկի մեջ գրված սրվակը:

— Շուտ,— շնչաց նա,— վեց կաթիլ՝ ջրով: Թող Ռեչեչը չտեսնի:

Մեկ ուրիշ պարագայում ես տարօրինակ կհամարեի դա: Բայց հիմա մտածելու ժամանակ չկար. սխաբ էր դեղ տալ: Միքէլի միտար Գողֆրին անգիտակցաբար ինձ օգնեց այդ բանը թաքցնելու Ռեչեչից, սենյակի մյուս ծայրում մխիթարանքի խոսքեր ասելով նրան.

— Ծիշտ եմ ասում... Ծիշտ եմ ասում, դուր չափազանցում եր,— լսեցի ես.— Իմ անունը հույժ անբասիր է և այգալիսի հոգանցիկ զրուարտանքը չէր կարող արատաւորել այն: Մեկ շաբաթ անց այս բոլորը կմոռացվի, էլ չենք խոսի դրանից:

Ռեչեչը բոլորովին անտարբեր մնաց նույնիսկ այգալիսի մեծահոգութեան հանդեպ: Նա՛՝ զնալով ավելի ու ավելի վատ էր պահում իրեն:

— Ես պարտավոր եմ և ուզում եմ կասեցնել այդ զրուարտանքը,— տոաց նա:— Մայրիկ, լսեք, թէ ինչ կոսեմ ձեզ... Միտս կլակ, լսեք, թէ ինչ կասեմ ձեզ: Ես գիտեմ այն ձեռքը, որ վերցրել է Լուսնաբարը: Ես գիտեմ...— Նա խիստ շեշտեց այս բառերը, իրեն համակած կատաղութեամբ ոտքը խփեց գետնին.— Ես գիտեմ, որ Գողֆրի էբլուայրը մեղավոր չէ: Տարեք ինձ դատավորի մոտ, Գողֆրի: Տարեք ինձ դատավորի մոտ, և ես կերզվեմ դրա համար:

Քեռակինս արագորեն բռնեց ձեռքս ու շնչաց.

— Մի երկու րոպե կանգնեք առաջս, թող Ռեչեչն ինձ չտեսնի: Միտս Վերինդերի գեմքին երեացած կապտավուն երանգը ստրսափեցրեց ինձ: Նա տեսավ, որ ես վախեցա:

— Կաթիլները կկազդուրեն մեկ-երկու րոպեից,— շնչաց նա և, աչքերը փակելով, սկսեց սպասել դրանց ներգործութեանը:

Մինչ դա շարունակվում էր, ևս լսում էի, թե ինչպես սիրելի Գողֆրին հեղուխյամբ առարկում էր:

— Ձեր անունը չպետք է կապվի այդպիսի դործերի հետ: Ձեր անունը, թանկագին Ռեչել, շափազանց մաքուր է ու շափագանց սուրբ. դրանով կատակել չի կարելի:

— Իմ անունը:— Նա սկսեց բրբջալ:— Ինձ, Գողֆրի, մեղադրում են ճիշտ այնպես, ինչպես որ ձեզ: Անպիտան լավադույն խուզարկուն համոզված է, որ ևս եմ գողացել իմ սեփական արժասուր: Հարցրեք նրա կարծիքը, և նա ձեզ կասի, որ ևս չուսնաքարը գրավ եմ դրել իմ դադտնի պարտքը: Ի՞նչ քննարկուհի համար:

Նա լռեց, վաղելով անցավ սենյակի մի ծայրից մյուսը և ծնկի իջավ մոր ոտքերի մոտ:

— Օ՛, մայրիկ, մայրիկ, մայրիկ: Ի՞նչ ես խելադար եմ ես, այնպես չէ՞: Ծճմարտությունը չբացահայտել նույնիսկ հիմա՛:

Նա այնքան հուզված էր, որ շնկատեց իր մոր վիճակը: Նորից ոտքի ելավ և մի ակնթարթում հայտնվեց միստր Գողֆրիի կողքին:

— Սա չեմ թույլ տա, որպեսզի ձեզ... Ձեմ թույլ տա, որպեսզի որեէ անձեզ մարդու մեղադրեն ու պատվազրկեն իմ պատճառով: Եթե դուք չեք ուղում ինձ դատավորի մոտ տանել, ապա հիմա ևեթ հայտարարություն գրեք ձեր անմեղություն մասին, և ես կստորագրեմ այն: Արեք, ինչ որ ձեզ ասում եմ, Գողֆրի, կամ ես այդ մասին կգրեմ թերթերում, դուրս կվառեմ և այդ մասին կսկսեմ գոռալ փողոցներում:

Մենք շնք փորձի հավատացնել, թե այս խոսքերը խզճի խայթի արդյունք էին. մենք կասենք, որ դրանք հիստերիկայի հետևանք էին: Ներողամիտ միստր Գողֆրին նրան հանգստացրեց. թուղթ վերցրեց ու գրեց հայտարարությունը: Ռեչելը տենդագին շտապողականությամբ ստորագրեց այն:

— Սա ցույց ավելք ամեն տեղ, իմ մասին շմտածեք, — թուղթը մեկնելով նրան՝ ասաց Ռեչելը: — Վախենում եմ, Գողֆրի, որ մինչև հիմա իմ մտածումներում արդարամիտ չեմ եղել ձեր նկատմամբ: Դուք այն եստսերը չեք, դուք շատ ավելի բարի եք քան ես կարծել եմ: Եկեք մեզ մոտ, երբ կկարողանաք, և ես կաշխատեմ ուղղել այն անարդարությունը, որ ցույց եմ տվել ձեր հանդեպ:

Ռեչելը ձեռքը մեկնեց նրան: Ավա՛ղ, ինչքան ողորմելի է մեր անկշալ անձր: Ավա՛ղ, միստր Գոդֆրին ոչ միայն այն սաստիճան զգաստությունը կորցրեց, որ համբուրեց նրա ձեռքը, այլև նրան պատասխանեց այնպիսի մի մեղմ ձայներանցով, որն ինքնին մեղսական էր տվյալ պարագայում:

— Կգամ, թանկագինս, մի պայմանով, որպեսզի մենք այլևս չխոսենք այդ ատելի առարկայից:

Նախքան մեղնից որեէ մեկը կհասցնեք ևս մի խոսք ասել՝ դուրը ուժղին թակեցին: Ես դուրս նայեցի լուսամտից և տեսա Աշխարհիկը, Մարմինն ու Սատանան, որ սպասում էին տան տոջևում՝ կասքի ու ձիերի, քամսված սպասավորի և երեք կանանց տեսքով. վերջիններս այն սաստիճան համարձակ էին հագնված, որ կյանքումս երբեք ինձ չէր վիճակվել նման որեէ բան տեսնել:

Ռեչելը ցնցվեց և ուշքի եկավ: Նա մտտեցավ մորը:

— Եկե՛լ են ինձ տանելու ծաղկի ցուցահանդես, — ասաց նա: — Մուրիկ, միայն մի խոսք՝ գնալուցս առաջ: Ես հո ձեզ չվշտացրի՞:

Կաթիլներն իրենց աղբեցությունը դործել էին: Խեղճ բեռան կնոջըս գեմքը վերստացել էր իր բնական գույնը:

— Ո՛չ, ոչ, հոգյակս, — ասաց նա: — Գնա ընկերներիդ հետ ու զվարճացիր:

Ազգիկը կուսցավ ու համբուրեց մորը:

Ես դուսն մոտ էի կանգնած, երբ Ռեչելը դուրս էր գալիս սենյակից: Նոր փոփոխություն. նրա աչքերը լիքն էին արցունքով: Ես հետաքրքրությամբ դիտում էի այդ դազադած հոգու ակնթարթային մեղմացումը: Արդեն հակված էի համոզումի մի խոսք ասելու նրան: Ավա՛ղ, բարի մտադրություններից հարուցված իմ համակրանքը սոսկ վիրավորեց նրան: «Ինչո՞ւ եք խըղճում ինձ, — վշտալի շնչոցով հարցրեց նա: — Մի՞թե չեք տեսնում, որ ես երջանիկ եմ: Ես մեկնում եմ ծաղկի ցուցահանդես: Կլյակ, և իմ զխարկը ամենադեղեցիկն է ամբողջ Հոնդոնում»: Իմ նկատմամբ այս ծաղրը նա ավարտեց ինձ հասցեագրված օգային համբուրով ու դուրս վազեց սենյակից:

Քեռակնոջս մոտ վերադառնալով՝ նկատեցի, որ սիրելի միստր Գոդֆրին սենյակի անկյուններն ընկած ինչ-որ բան է փնտրում: Մինչ կհասցնեի օգնությունս առաջարկել, նա արդեն

գտնել էր փնտրածը, Նա վերադարձաւ մորաքրոջ և ինձ մոտ՝ մի ձեռքում իր անմեղուսթյան հայտարարութիւնը, մյուսում՝ մի տուփ լուցկի:

— Թանկագին մորաքույր, մի փոքրիկ դավադրութիւն,— ասաց նա — Թանկագին միսս Կլակ, մի բարեպաշտ խորեովիտն, որը ներելի է նույնիսկ ձեր բարոյական վեհ շիտակութեան համար: Խնդրում եմ, թողեք, թող Ռեչելը համոզված մնա, որ ես ընդունում եմ այն մեծահոգի ինքնադոհողութիւնը, որով նա ստորագրել է այս թուղթը: Եվ խնդրում եմ ձեզ՝ վկա եղեք, որ ես այս թուղթը ոչնչացրի ձեր ներկայութեամբ, այս տնից դուրս գալուց առաջ:

Նա վառեց լուցկին և թուղթը այրեց սեղանին դրված ափսեի մեջ:

— Ինձ պատահած փոքրիկ անախորժութիւնը բոլորովին դատարկ բան է. շատ ավելի կարևոր է այդ մաքուր անունը պահպանել հասարակութեան վարակից: Ահա՛: Մի փոքրիկ անմեղ մոխրակույտ, և մեր դուրազգաց սիրելի Ռեչելը երբեք չի իմանա, թե ինչ արեցինք մենք: Ինչպիսի՞ն են հիմա ձեր զգացումները: Իմ թանկագին բարեկամներ, ինչպիսի՞ն են հիմա ձեր զգացումները: Ինչ վերաբերում է ինձ, ապա հոգիս հիմա թեթև է նույնքան, որքան փոքրիկ տղայինն է լինում:

Նա փայլեց իր հմայիչ ժպիտով. մի ձեռքը մեկնեց մորաքրոջը, մյուսը՝ ինձ: Ես ցնցվեցի նրա տզնիվ վարմունքից ու շկարողացա խոսել: Կիտցեցի աչքերս. ինչ-որ միստիկ ինքնամոռացութեան մեջ նրա ձեռքը մոտեցրի շուրթերիս: Նա մի մեղմ առարկութիւն շնչացրեց: Օ՛, հիացմունք, այդ պահի ջինջ, ո՛չ երկրային հիացմունք: Նստեցի՝ ինքս էլ չգիտեմ ինչի վրա, զգացմունքներից հուզավառութեան մեջ մոռանալով ամենամեն ինչ: Երբ նորից բացեցի աչքերս՝ ասես՝ երկնքից դիտին իջա: Գողֆրին գնացել էր:

Կուզեի վերջակետ դրած լինել այստեղ, պատմութիւնս ավարտելով միստր Գողֆրիի ազնիվ վարմունքով: Դժբախտաբար, դեռ շատ բան է մնում, շատ բան, որի մասին միստր Ֆրենկլին Բլեկի ֆինանսական ճնշումն ինձ հարկադրում է գրել:

Լեդի Վերինդերի հետ մենակ մնալով, ես, բնականաբար, հարցրի նրա առողջութիւնը, բաղաբավարութեամբ հիշատա-

կելուվ, որ ինձ դարձացրին իր նստան և ընդունած գեղերը աղջկանից գաղտնի պահելու իր ջանքերը: Քեռակնոջս պատասխանը ապշեցրեց ինձ:

— Դրուզիլլա, — ասաց նա (Լթե դեռ չեմ հիշատակել, որ իմ քրիստոնեական անունը Դրուզիլլա է, ապա թույլ տվեք այդ մասին հաղորդել հիմա), — դուք, հավատացած եմ, առանց որևէ կտին մտքի, շոշափեցիք մի դժվարին հարց:

Ես անմիջապես տեղիցս վեր կացա: Նրբանկատությունը միայն մի ելք էր թողնում ինձ. նախ՝ ներսոյություն խնդրել, իսկ անուհետև՝ հեռանալ: Լեզի Վերինդերն ինձ կանգնեցրեց ու սնդեց, որ նստեմ:

— Դուք պատահաբար իմացաք մի դաղտնիք, որը ես վստահել եմ միայն քոջս՝ միսիս Էրլուայթին, ու իմ փաստաբան միստր Բրեֆին, և ուրիշ ոչ ոքի: Ես կարող եմ հուշս դնել նրանց համեստության վրա և հավատացած եմ, որ, երբ ձեզ պատմեմ բոլոր հանգամանքները, կկարողանամ հուշս դնել նաև ձեզ վրա: Արդյո՞ք աղատ եք այսօր, թե՞ խոստացել եք որևէ տեղ գնալ, Դրուզիլլա:

Ավելուրդ է ասել, որ ես անմիջապես իմ ամբողջ ժամանակն ամբողջությամբ դրի քեռակնոջս տրամադրության տակ:

— Եթե այդպես է՝ մի ժամ էլ մնացեք ինձ հետ, — ասաց նա: — Ես մի քանի բան կհաղորդեմ ձեզ և, կարծում եմ, դուք դառնություն կլսեք գրանք: Այս պատճառով էլ կխնդրեի մի ծառայություն մատուցել ինձ, եթե միայն դեմ չեք:

Իզուր է ասելը, որ ես ամենևին էլ դեմ չէի և շափից դուրս շատ էի ուզում օգնել նրան:

— Սպասենք միստր Բրեֆին, նա գալու է ժամը հինգին: Եվ դուք, Դրուզիլլա, երբ ես ստորագրեմ իմ կտակը, կարող եք լինել վկաներից մեկը:

Միևեղի Վերինդերի կտակը: Հիշեցի նրա աշխատանքային գարակում գտնվող կաթիլները: Մտաբերեցի նրա դեմքի կապտավուն երանգը: Ոչ այս աշխարհի լույսը, այլ դեռևս չփորված գերեզմանից մարդաբեարար շողացած լույսը լուսավորեց մտքերս: Քեռակնոջս գաղտնիքը դադարեց ինձ համար գաղտնիք լինելուց:



Եւեղճ լեզի Վերինդերի հանդեպ տաժաժս հարդանքն ինձ  
 թույլ շտվեց ակնարկելու, որ իր բերանը բացելուց առաջ ես  
 կուահել եմ տխուր ճշմարտությունը: Ես լուռ սպասում էի,  
 մինչև նա կկամենար խոսել:

—Արդեն բավականաչափ ժամանակ է, ինչ ես լուրջ հիվանդ  
 եմ, Գրուլիլլա,—սկսեց քննակինս,—և, տարօրինակ է ասել,  
 ինքս դա չեմ իմացել:

Ես մտածեցի հաղարտվոր ու հազարավոր մեանոզ էականութի  
 մասին, որոնք այս պահին հիվանդ են հոգեպես, բայց այդ  
 մասին չգիտեն իրենք: Եվ ես շատ էի վախենում, որ իմ խեղճ  
 քեռակինը կարող է լինել նրանց թվում:

—Այո, թանկագինս,—տխրությամբ արտաբերեցի ես,—  
 այո:

—Գուր գիտեք, որ ես Ռեչկին Լոնդոն բերեցի՝ բժիշկներէ  
 հետ խորհրդակցելու համար,—շարունակեց նա:—Անհրաժեշտ  
 համարեցի դիմել երկու բժշկի:

—Այո, թանկագինս,—նորից կրկնեցի ես,—այո:

—Երկու բժշկից մեկն անժանոթ էր ինձ,—շարունակեց  
 քեռակինս:—Մյուսը ամսունուս հին ընկերն էր և միշտ անկեղ-  
 ծորեն կարեկից էր եղել ինձ՝ ի սեր իմ ամուսնու Ռեչկի  
 համար դեղեր գրելուց հետո նա ասաց, որ կուզեր առանձին  
 խոսել ինձ հետ: Բնականաբար, մտածեցի, որ աղջկանս բուժ-  
 մանը վերաբերող ինչ-որ առանձնահատուկ խորհուրդներ է  
 տալու Ի գարմանս իմ, նա լուրջ տեսքով բռնեց ձեռքս և  
 ասաց. «Լեզի Վերինդեր, ձեզ նայում եմ ոչ միայն բարեկամի,  
 այլև բժշկի հոգածությամբ: Վախենում եմ, որ ձեզ ավելի շատ  
 բժշկի խորհուրդ է պետք, քան ձեր աղջկանս»: Նա մի քանի  
 հարց տվեց ինձ, որոնց ես ոչ մի նշանակութուն չէի տալիս,  
 մինչև նկատեցի, որ իմ պատասխանները վշտացնում են  
 նրան: Ավարտվեց նրանով, որ նա պայամնավորվեց հաջորդ  
 օրն ինձ մոտ գալ իր ընկերոջ հետ, որը նույնպես բժիշկ էր, և  
 գալ այնպիսի ժամի, երբ Ռեչկիլը տանը չի լինի: Այդ այցե-  
 լության արդյունքը շատ մեղմ ձևով ու զգուշությամբ հաղորդ-  
 վեց ինձ: Զննությունը երկու բժիշկներին ցույց էր տրվել, որ  
 կորսվել է բավականաչափ շատ թանկ ժամանակ, որն այլևս

հնարավոր չէ վերադարձնել, և որ իմ հիվանդությունն արդեն անմատչելի է նրանց արվեստի համար: Երկու տարուց ավելի է ևս տառասում եմ սրտի հիվանդությամբ, որը, ինձ վախեցնելու ընդունակ նշաններ չդրսևորելով, կամաց-կամաց կործանարար կերպով քայքայել է իմ առողջությունը: Ես կարող եմ ապրել ևս մի քանի ամիս կամ ավելի շուտ մեռնել, այսօրվա ընթացքում այն հաշվով բժիշկները շին կարող կամ չեն համարձակվում որեէ որոշակի բան ասել: Չեմ ուզում պնդել, սիրելիս, թե իմ իսկական վիճակն իմանալով՝ ծանր ռոպեներ շապրեցի: Բայց հիմա ևս արդեն հնազանդվել եմ իմ ճակատագրին և բոլոր ուժերով աշխատում եմ կարգի բերել իմ աշխարհական գործերը: Միայն մի բանի համար եմ անհանգստանում. որ Ռեչելը ճշմարտությունը չիմանա: Եթե նա սա իմանա, ապա անմիջապես հիվանդությունս կվերադրի արմաստի հետ կապված անհանգստությանը և կսկսի դառնորեն կշտամբել իրեն, խեղճ աղջիկ, այն բանի համար, ինչի համար ինքն ամենևին մեղավոր չէ: Երկու բժիշկները համաձայն են, որ հիվանդությունը սկսվել է երկու, եթե ոչ երեք տարի առաջ: Հավատացած եմ, որ գաղտնիքս կպահեք, Դրուպիլա. ես անկեղծ վիշտ ու կարեկցանք եմ տեսնում ձեր դեմքին:

Վիշտ ու կարեկցածք: Օ՛, հեթանոսական այս զգացմունքները չէր, որ պետք էր սպասել քրիստոնեական հավատին խոյապես նվիրված քրիստոնեուհուց և անզուհուց:

Քեռակինս չէր էլ սխալեցրացնում, թե ինչպիսի բարեպաշտական երախտադիտություն դող անցավ երակներովս, երբ նա մտանցավ իր տխուր պատմության ավարտին: Ի՞նչ օգտակար շործունեություն էր բացվում իմ առջև Իմ սիրեցյալ ազգականուհին և մեռնող մերձավորուհին մեծ փոփոխության եղբին էր կանգնած բոլորովին անպատրաստ, և նախախնամության սպորմածությունը նրան ստիպեց իր վիճակը բացել իմ առջև: Ես աննկարագրելի ուրախությամբ անմիջապես հիշեցի, որ եկեղեցական հովիվների մեջ ունեմ ոչ թե միավորներով, այլ տասնյակներով հաշվվող թանկ բարեկամներ, որոնց վրա կարող եմ հույս ունենալ այս գործում: Ես ամուր գրկեցի ճեռակնոջս. ինձ համակած հարգառատ քնքշությունն այժմ չէր կարող բավարարվել ավելի քիչ բանով, քան գրկախառնությունն էր:

—Օ՛,— Երկյուղածորեն արտասանեցի ևս,— ի՛նչ անասելի հետաքրքրություն եք ներշնչում դուք ինձ: Օ՛, ինչպիսի՞ օգուտ եմ մտադիր բերել ձեզ, հոգյակս, նախքան մենք կրածանվենք:

Երկու-երեք լուրջ խոսքով նախապատրաստելով նրան, առաջարկեցի ընտրություն կատարել այն բոլոր թանկարժեք հոգևոր հովիվների մեջ, որոնք այս շրջակայքում առավոտից երեկո գրադվել են գթության գործով և հավասարապես փայլել են անսպառ պերճախոսությամբ և հավասարապես սպասարատ են իմ մի խոսքով գործի դնելու իրենց ձիրքերը: Ավա՛ղ: Ասածներս պատշաճ արձագանք չգտան: Տարակուսանք ու վախ արտահայտվեց խեղճ լեզվի վերինդերի դեմքին, և նա այն ամենին, ինչ որ ես կարող էի ասել, պատասխանում էր դուռ աշխարհական առարկությամբ. ինքը ֆիզիկապես չափից դուրս թույլ է կողմնակի մարդկանց հետ հանդիպելու համար: Ես, հասկանալի է, զիջեցի սկզբնական շրջանի համար: Ընթերցողի և քարոզչի հսկայական փորձառությունն ինձ հուշեց, որ սա մի այնպիսի դեպք էր, երբ պահանջվում էր նախապատրաստել համապատասխան ընթերցման միջոցով:

Տվյալ դեպքի համար միանգամայն հարմար մի փոքրիկ գրադարան ունեի, որը նախատեսված էր բնակնոջս սթափեցնելու, նախապատրաստելու, լուսավորելու և գոտեպնդելու համար:

—Դուք, թանկագինս, չեք հրաժարվի կարդալ, ճիշտ չէ՞,— ամենախանդաղատալի ձայներանդով ասացի ես,— չեք հրաժարվի կարդալ, եթե ես իմ սեփական թանկարժեք գրքերը բերեմ ձեզ: Քնուակին, էջերը անհրաժեշտ տեղում ծալված են: Իսկ մատիտով նշաններ են արված այնտեղ, որտեղ դուք պետք է կանգ առնեք և ինքներդ ձեզ հարցնեք. «Արդ՞ոք սա կիրառելի է իմ նկատմամբ»:

Նույնիսկ այսքան հասարակ խնդրանքը (ինչքան ուժեղ է աշխարհի պիղծ ազդեցությունը) կարծես վախեցրեց իմ քնուակնոջը: Նա սլատասխանեց այնպիսի մի զարմացած հայացք գցելով վրաս, որը և՛ ուսանելի էր, և՛ միաժամանակ սարսափելի էր տեսնել:

—Դուրզիլլա, կանեմ ինչ որ կարող եմ, որպեսզի ձեզ հաճույք սլատճառեմ:

Չէր կարելի ոչ մի բոսի կորցնել: Բուխարու վրայի մամա-

յուշը ինձ ցույց տվեց, որ ես հաղիվ հասցնեմ տուն վաղել, վերցնել ընտիր գրքերի առաջին շարքը (ասենք, ընդամենը մի աստիճանի հատ) և ժամանակին վերադառնալ՝ փաստաբանին տեղում գտնելու և որպէս վկա լեզի Վերինդերի կտակը անբարագրելու համար: Խոսք տալով անպայման ժամը հինգէ մտերբում վերադառնալ, շտապեցի իմ բարեգործական գործին:

Երբ գործը իմ սեփական շահերին է վերաբերում՝ ես հնազանդորեն բավարարվում եմ հանրակառքով: Դուք քեռականոջս՝ շահերին իմ նվիրվածութեան վերաբերյալ լիակատար պատկերացում կտանաք, եթէ իմանաք, որ ես տվյալ դեպքում անանկացա երկանիվ կառք վարձելով:

Տուն գալով՝ ընտրեցի ու նշումներով ծածկեցի ընթերցանութեան համար նախատեսվող առաջին շարքը և Մոստերջու—սյուրակ վերադարձա պաշտուսակիս մեջ մի դյուժինի շափ գրքեր, որսխտիք ոչ մի ուրիշ եվրոպական երկրի գրականութեան մեջ չէր գտնի: Կառապանին վճարեցի միայն այնքան, որքան հարկ էր: Նա փողը վերցրեց հայհոյելով, իսկ ես անհատապէս նրան մեկնեցի իմ տրակտատներից մեկը: Եթէ ես ատրճանակ դեմ արած լինեի նրա ճակատին, ապա այդ սրիկան ավելի չէր ահաբեկվի: Նա անմիջապէս տեղավորվեց նստիքին և, դժգոհութեան պիղծ բացականչութուններով, սլացալ կարողացածին շափ արագ: Եվ բոլորովին իզուր՝ ուրախութեամբ կարող եմ սա ասել ձեզ. ես, այնուամենայնիվ, հակառակ նրա, հասցրի բարի սերմեր ցանել, երկրորդ տրակտատը ներս գցելով նրա կառքի լուսամուտից:

Ի մեծ թեթևութեամբ ինձ՝ դուրս բացեց ոչ թէ շորագլխարկի վրա ժապավեններ ունեցող անձնավորութեանը, այլ ծառան, որն ինձ հաղորդեց, որ բժիշկը եկել է և դեռ նստած է լեզի Վերինդերի հետ՝ սենյակում փակված: Փաստաբան միտք Բրեֆը նույնպէս ժամանել է մեկ ըտպի առաջ և սպասում է դրագարանում: Ինձ տարան դրագարան և խնդրեցին սպասել Բրեֆը, կարծես, զարմացած էր ինձ տեսնելով: Նա ընտանեկան փաստարան է, և ես ու նա քանիցս հանդիպել ենք լեզի Վերինդերի տանը: Ցալով պետք է ասեմ, որ նա ապրել է մինչև մազերի ճերմակելը՝ զբաղվելով աշխարհական գործերով: Իր գործի ժամերին այդ մարդը Օրենքի և Մամոնայի

ընտրյալ մարդարեն էր, իսկ աղատ ժամերին հավասարապես կարող էր վեպ կարդալ և գրքույկը պատահոտել:

—Միսս Կլակ, ապրելո՞ւ եք եկել այստեղ,—նայելով իմ պայուսակին՝ հարցրեց նա:

Ասել նրան, թե ինչ կար իմ թանկարժեք պայուսակի մեջ, կնշանակեր պարզապես պիղծ խոսքերի հեղեղ առաջացնել: Ես ինձ ստորացրի՝ հասցնելով մինչև նրա մակարդակը, և բացատրեցի, թե ինչ գործով եմ եկել այստեղ:

—Քեռակինս ինձ հաղորդեց, որ պատրաստվում է իր կտակը ստորագրել,—պատասխանեցի հուսով—Նա այնքան բարի եղավ, որ ինձ խնդրեց լինել իր վկաներից մեկը:

— Հա՛, ինչ կա որ, միսս Կլակ, դուք միանգամայն պիտանի եք վկա լինելու համար: Տարիքով վաղուց արդեն շափահաս եք, և դրամական ոչ մի շահագրգռվածություն չունեք լեղի վերինդերի կտակի նկատմամբ:

Գրամական ո՞չ մի շահագրգռվածություն լեղի վերինդերի կտակի նկատմամբ: Օ՛, ինչպիսի երախտագիտություն լսեցի այդ: Եթե քեռակինս, հազարներ ունենալով, հիշեր նաև ինձ՝ խեղճ աղջկաս, որի համար նույնիսկ հինգ հազարը շատ մեծ բան է, և եթե կտակում իմ անունը հայտնվեր փոքրիկ ժառանգության կապակցությամբ, թշնամիներս կարող էին դեռևս կասկածել, թե ինչն էր ինձ ստիպել հետս բերել զրագարանիս ընտիր գանձերը և իմ նվազ միջոցները սպառել կառք վարձելու վրա: Բայց այժմ դրանում չէր կարող կասկածել նույնիսկ ամենադաժան անարգիչը: Շատ ավելի լավ է, որ հենց այդպես եղավ: Օ՛, իհարկե, իհարկե, շատ սովելի լավ:

Այս մխիթարական խորհրդածություններից ինձ կտրեց միտոր Բրեֆի ձայնը: Խորհրդածություններով լի իմ լուսթյունը, ըստ երևույթին, ճնշում էր այդ ունայնամիտ մարդուն և նրան ստիպում էր, այսպես ասած, ինձ գլխել իր՝ կամքին հակառակ:

— Դե, միսս Կլակ, ինչպիսի՞ն են ձեր բարեգործական խումբակների վերջին նուրբությունները: Ինչպե՞ս է ձեր բարեկամ միտար Գոդֆրի էբլուայթը այն ծեծից հետո, որ նրան տվել են խարդավանները նորտումբերլանդի փողոցում: Իմ ակումբում լավ բաներ են պատմում այդ բարեպաշտ ջենտլմենի մասին:

Ես շնկատելու տվի այն ձայներանգը, որով այդ մարդն ինձ հայտարարեց, թե ես չափահաս եմ և դրամական ոչ մի շահագրգռվածություն չունեմ քեռակնոջս կտակում: Բայց այն ձայներանգը, որով նա ակնարկեց սիրելի միստր Գոդֆրիին, ինձ համբերությունից հանեց: Այդ օրը իմ ներկայությամբ կատարված ամեն ինչից հետո ինձ պարտավոր համարելով պընդել իմ հրաշագեղ բարեկամի անմեղության վրա, ով էլ, որտեղ էլ որ կասկածեր դրանում, ես անհրաժեշտություն զգացի միստր Բրեֆին ուղղված խայթող կշտամբանք դնել այդ արդարացի մտադրության կատարման մեջ:

—Ես հասարակության մեջ չեմ ապրում,—ասացի,—և սըր, ձեր ակումբի անդամը լինելու առավելությունից չեմ օգտվում: Բայց ես պատահաբար իմացա այն պատմությունը, որ դուք ակնարկում եք, ու գիտեմ նաև, որ այդ պատմությունից ավելի նողկալի սուտ երբեք չի հորինվել:

—Այո-այո, միսս Կլակ, դուք հավատում եք ձեր բարեկամին: Դա բավականաչափ բնական է: Բայց միստր Գոդֆրի էլբլուայթի համար այգքան հեշտ չի լինի հասարակությանը համոզել ընդհանրապես, ինչպես բարեգործական կանանց կամիտեին. փաստերը խոսում են նրա դեմ: Նա տանն է եղել, երբ կորել է լվմաստը, նա առաջինն է այդ տնից մեկնել լոնդոն: Սրանք շատ տգեղ հանգամանքներ են, տիրուհի, եթե վերջին գեպքերի տեսանկյունից նայելու լինենք դրանց:

Ես գիտեմ, որ պետք է կանգնեցնեի նրան նախքան նա կշարունակեր: Ես նրան պետք է ասեի, որ ինքը խոսում է պատկերացում շունենալով միստր Գոդֆրիի անմեղության վկայականի մասին, որ նրան տվել է այն միակ անձնավորությունը, որի իրավունքն այստեղ անվիճելի է, քանի որ կապված է ճշմարտության դրական իմացության հետ: Ավա՞ղ, այդ օրինագեատին իր սխալ լինելու անհրաժեշտ գիտակցմանը հասցնելու գայթակղությունը շատ ուժեղ էր: Բոլորովին անմեղ տեսքով հարցրի, թե ինքն ի՞նչ է հասկանում «վերջին գեպքեր» ասելով:

—«Վերջին գեպքեր» ասելով, միսս Կլակ, հասկանում եմ այն գեպքերը, որոնց խառն են հնդիկները,—սկսեց միստր Բրեֆը, խոսելով ավելի ու ավելի ամբարտավանորեն:—Ի՞նչ են անում հնդիկները, երբ նրանց ազատ են արձակում ֆրի-

գինհոլյան բանտից: Նրաք անմիջապես մեկնում են Լոնդոն  
 և սկսում են ուշադիր հետևել միտար Լյուկերին: Ի՞նչ է լինում  
 հետո: Միտար Լյուկերը վախենում է, և միանգամայն հիմնա-  
 վորապես, այն թանկարժեք իրի ապահովության համար, որը  
 նա գրավ էր վերցրել: Լյուկերը այդ իրը դադարեցրեց (ընդ-  
 հանուր նկարագրությամբ) պահպանության է հանձնում բան-  
 կիրին: Զարմանալի խորամանկություն է նրա կողմից, բայց  
 հնդիկները նույնպես զարմանալիորեն խորամանկ են իրենց  
 կողմից: Նրանք կասկածում են, որ «թանկարժեք իրը» փոխա-  
 գրվել է մի տեղից մեկ ուրիշ տեղ և իրենց կասկածները ստու-  
 գելու համար ընտրում են արտակարգ համարձակ ու հաջող  
 մի եղանակ: Ո՞ւմ են ճանկում ու խուզարկում նրանք: Ոչ մի-  
 այն միտար Լյուկերին, որ բավականաչափ հասկանալի կլի-  
 ներ, այլև միտար Գոդֆրի էրլուայթին նույնպես: Ինչո՞ւ էր-  
 լուայթի բացատրությունն այն է, թե հնդիկները իբր գործել  
 են կույր կասկածամտությամբ, իրեն պտտահարաբ միտար  
 Լյուկերի հետ զրուցելիս տեսնելով: Անհեթեթություն է: Այդ  
 առաջուտ կես դյուսիսի շափ ուրիշ մարդիկ էին խոսել միտար  
 Լյուկերի հետ: Այդ ինչո՞ւ հնդիկները այդ մարդկանց չէին  
 հետևել մինչև նրանց տները և ծուղակը չէին պցել: Ոչ-ո՞չ:  
 Պարզ եզրակացությունը, որին կարելի է հանգել դրանից, այն  
 է որ միտար էրլուայթը ինչ-որ մի առանձին կասկ ունի «թան-  
 կարժեք իրի» հետ, ինչպես և միտար Լյուկերը, և որ հնդիկները,  
 հավանաբար, չեն իմացել, թե նրանցից որի մոտ է եղել այդ  
 թանկարժեք իրը, այնպես որ նրանց ոչինչ չի մնացել, քան  
 խուզարկել և՛ մեկին, և՛ մյուսին: Այսպես է ասում հասարակ-  
 կական կարծիքը, միսս Կլակ, և հասարակական կարծիքը հեր-  
 քել՝ տվյալ դեպքում այնքան էլ հեշտ չէ:

Նա այնպիսի ինքնաձստահությունը արտասանեց այս վեր-  
 չին բառերը, որ, խոստովանում եմ համոթ ինձ, ես ուղեցի  
 նրան ստիպել, որ ավելի հեռուն գնա, նախքան ճշմարտու-  
 թյամբ կխոցելի նրան:

— Զեմ համարձակվում վիճել այսպիսի մի հմուտ իրավա-  
 բանի հետ, — ասացի ես, — բայց արդյո՞ք արդարացի կլինի,  
 սրբ, միտար էրլուայթի հարցում արհամարհել լոնդոնյան այն  
 նշանավոր խուզարկուի կարծիքը, որը հետաքննություն է կա-

տարել: Խուզարկու Կաֆը բացարձակապես ոչ ոքի վրա չի կասկածում, բացի միսս Վերինդերից:

— Ուզում եք ասել, միսս Կլակ, որ դուք համաձայն եք խուզարկուի հետ:

— Ես ոչ ոքի չեմ դատապարտում, սրբ, և ոչ մի կարծիք չեմ արտահայտում:

— Իսկ ես անում եմ և՛ մեկը, և՛ մյուսը, տիրուհի: Ես զբոսնում եմ, որ խուզարկուն միանգամայն սխալ է եղել, և արտահայտում եմ իմ կարծիքը, որը հետևյալն է. եթե նա Ռեչելի բնավորովյունն իմանար այնպես, ինչպես նա դիտեմ, ապա նա, նախքան Ռեչելի վրա կասկածելը, կկասկածեր տան բոլոր անդամների վրա: Ես համաձայն եմ, որ Ռեչելն իր թերություններն ունի՝ գաղտնապահ է, իր ասածի, տարօրինակ, քմահաճ և ամենևին նման չէ իր հասակակից մյուս աղջիկներին, բայց նա մաքուր հոգի ունի, մեծահոգի է և ազնիվ, նույնիսկ չափից ավելի: Եթե աշխարհում ամենաբացահայտ հանցանշանները ցուցանշելին միայն մի բան և, Ռեչելի ազնիվ խոսքից բացի, ուրիշ ոչինչ չցուցանշեր մեկ ուրիշ բան, ես հանցանշանների առկայությունը նախապատվությունը կտայի Ռեչելի խոսքին, չնայած այն բանին, որ ես փաստաբան եմ: Սա խիստ է ասված, միսս Կլակ, բայց ես ասում եմ այն, ինչ մտածում եմ:

— Միստր Բրեֆ, չէի՞ք հաճի ձեր խոսքերի նշանակությունը բացատրել այնպիս, որպեսզի ես վստահ լինեի, որ հասկանում եմ ձեզ: Ենթադրենք, որ միսս Վերինդերը բոլորովին անհասկանալի կերպով է հետաքրքրվել միստր էբլուայթի և միստր Լյուկերի հետ սլատահածով: Ենթադրենք, որ նա միստր էբլուայթի նկատմամբ սարսափելի զրպարտանքին վերաբերող շատ տարօրինակ հարցեր է տվել և շատ անհավասարելի հուզմունք է դրսևորել, երբ իմացել է, թե ինչ զրպարտանք է դա:

— Ենթադրեք, ինչ ուզում եք, միսս Կլակ, դա մաղաչափ անգամ չի սասանի իմ վստահությունը միսս Վերինդերի նրկատմամբ:

— Ուրեմն, դուք գտնում եք, որ բացարձակապես կարելի է վստահե՞լ նրան:

— Բացարձակապես:



— Բայց, թույլ տվեք, միտար Բրեֆ, ձեզ հաղորդել, որ միտար Գոդֆրին երկու ժամ առաջ գտնվում էր այս տանը, և որ Լուսնաքարի անհետացման հետ կապված ամեն բանում նրա կատարյալ անմեղությունը հուշակեց ինքը միսս Վերդիները այնպիսի ուժեղ արտահայտություններով, որպիսիք երբևէ չեսել եմ այդ երիտասարդ աղջկանից:

Ես հազթանակի հաճույքը վայելեցի (վախենում եմ, որ դա մեղտալի հազթանակ էր), տեսնելով, թե ինչպես միտար Բրեֆը բուրբուրվին ընկճված է և ապշած իմ հասարակ խոսքերից: Նա վեր թռավ տեղից և աչքերն անձայն հասեց վրաս: Ես անվրդով մնացի իմ տեղում և ամբողջ տեսարանը նրան պատմեցի այնպես, ինչպես որ տեղի էր ունեցել:

— Հիմա ի՞նչ կասեք միտար էրյուայթի մասին, — պատմությունս վերջացնելուց հետո մեծազույն հեղտությամբ հարցրի ես:

— Եթե Ռեչելը վկայել է նրա անմեղությունը, միսս Կլակ, ես առանց տատանվելու կասեմ, որ նրա անմեղությունը հավատում եմ նույնքան հաստատ, որքան դուք եք հավատում: Ինձ, ինչպես և շատ ուրիշներին, խաբել են արտաքին փաստերը, և ես դա կշտկեմ ինչպես որ և որտեղ որ կարող եմ, ձեր բարեկամին հետապնդող զրպարտությունը հրապարակորեն հերքելով ամենուրեք, որտեղ այն կլսեմ: Իսկ առայժմ թույլ տվեք ինձ ձեզ շնորհավորել այն վարպետության առթիվ, որով դուք ձեր մարտկոցի ամբողջ կրակը բացեցիք այն պահին, երբ ես ամենևին չէի սպասում: Գուք հաջողության հիսանների ժամանակաշրջանի մեջ, եթե տղամարդ ծնված լինեիք:

Այս ասելով՝ նա շրջվեց ինձնից և սկսեց ջղազույզված ետ ու առաջ քայլել սենյակում:

Ես պարզ տեսնում էի, որ այն նոր լույսը, որի տակ ես նրան ներկայացրի այդ դեպքը, չափազանց դարմացրել և անհանգստացրել է նրան: Առանձին բառերը, որ պոկվում էին շուրթերից նրա՝ իր մտքերի մեջ ավելի ու ավելի թաղվելուն համեմատ, ինձ համար պարզեցին, թե մինչև հիմա ինչ ահավոր տեսանկյունից էր նայել նա Լուսնաքարի կորստյան դաղտնիքին: Նա չէր ամաչել սիրելի միտար Գոդֆրիին կասկածել ալմաստի նողկալի գողության մեջ և Ռեչելի վարմունքը վերագրել Գոդֆրիի հանցանքը թաքցնելու մեծահողի ցան-

կությանը: Ըստ անձամբ միսս Վերինդերի (ինչպես ձեզ հայտնի է, միստր Բրեֆի կարծիքով՝ անհերքելի հեղինակության) վկայության այդ բացատրությունն այժմ բոլորովին սխալ դուրս եկավ: Տարակուսանքը, որի մեջ ընկավ իրավաբանական այդ բարձր հեղինակությունը, այնքան սաստիկ էր, որ նա ամենևին ի վիճակի չէր այն թաքցնել ինձնից:

— Այ քեզ բա՛ն, — լսեցի ես, երբ նա փնթփնթաց լուսամուտի մոտ կանգ առնելով և մատներով թմրկահարելով ապակին: — Դա բացատրություն չի ենթարկվում, կուահելու նշույլ անգամ չկա:

Իմ պատասխանը պահանջող ոչինչ չկար նրա ասածների մեջ, և, այնուամենայնիվ, ես պատասխանեցի նրան:

— Ներեցեք, եթե ընդհատեմ ձեր խորհրդածությունները, — ասացի ոչինչ չկասկածող միստր Բրեֆին: — Բայց չէ՞ որ կարելի է անել այնպիսի մի ենթադրություն, որը մինչև հիմա ձեր մտքով չի անցել:

— Գուցե, միսս Կլակ: Խոստովանում եմ, այդպիսի բան չգիտեմ:

— Նախքան ես բախտ ունեցա, սբր, ձեզ համոզելու միստր էրլուայթի անմեղություն մեջ, դուք, որպես նրան կասկածելու մի փաստարկ, նշեցիք այն, որ արմաստը կորչելու ժամանակ նա եղել է տանը: Թույլ տվեք ձեզ հիշեցնել, որ արմաստը կորչելու ժամանակ միստր Ֆրենկլինը նույնպես եղել է տանը:

Ծեր մեղավորը հեռացավ լուսամուտից, հենց իմ դիմաց նստեց աթոռին և խիստ ու շար ժպտով սևեռուն նայեց ինձ:

— Միսս Կլակ, ձեզնից այնպիսի լավ փաստաբան չէր ըստացվի, ինչպիսին որ ենթադրել եմ ես, — մտախոհ նկատեց նա. — դուք չեք կարող ժամանակին կանգ առնել:

— Երևի ձեր ասածը չեմ հասկանում, միստր Բրեֆ, — համեստորեն պատասխանեցի ես:

— Երկրորդ անգամ չեք կարողանա, միսս Կլակ: Բրոք, չե՛ք կարողանա: Ֆրենկլին Բլեկը իմ սիրելին է, դա քաջ հայտնի է ձեզ: Բայց դա ոչինչ չի նշանակում: Ես գործին կնայեմ ձեր տեսանկյունից, նախքան դուք կհասցնեք հարձակվել ինձ վրա: Դուք միանգամայն իրավացի եք, տիրուհի: Ես միստր էրլուայթի վրա կասկածել եմ այնպիսի պատճառներով, որոնք իրավունք են տալիս կասկածելու նաև միստր Բլեկի վրա:

Շատ լավ, կասկածներ նաև նրա վրա: Ենթադրենք, որ նա իր բնավորութեամբ ընդունակ է գողանալու Լուսնաքարը: Միակ հարցն այն է, թե նրա ինչի՞ն էր պետք գողանալը:

— Միսոր Ֆրենկլին Բլեկի պարտքերը, — նկատեցի ես, — հայտնի են ամբողջ ընտանիքին:

— Մինչդեռ միսոր Գողֆրի էբլուայթի պարտքերը այդ աստիճան հայտնի չեն դարձել: Միանգամայն ճշմարիտ է: Բայց այստեղ ձեր տեսութեանը խանդարող երկու դժվարութիւն կա, միսս Կլակ: Նա վարում եմ Ֆրենկլին Բլեկի դործերը և խնդրում եմ թույլ տաք ասել ձեզ, որ նրա պարտասերերի մեծ մասը, իմանալով, որ նրա հայրը հարուստ մարդ է՝ դահանում է սոկոսներն ստանալով և հանդիսու սպասում իր փողերը վերագարձնելուն: Սա առաջին, բավականաչափ նշանակալի դժվարութիւնն է: Կա նաև երկրորդը, որն է՛լ սովորութեղ է: Անձամբ լեզի Վերինդերն ինձ ասել է, որ իր ազգակեր պատրաստ է ամուսնանալու Ֆրենկլին Բլեկի հետ, նախքան այս զգվելի հնչկական արժաստի՝ տնից անհետանալը: Թեչելը մերթ հույս է ալել նրան, մերթ վանել է ջահել սղջկա կոկետութեամբ: Բայց նա իր մորը խոստովանել է, որ սիրում է զարմիկ Ֆրենկլինին, իսկ մայրը այդ գաղտնիքը վստահել է զարմիկ Ֆրենկլինին: Ահա թե ինչպիսի վիճակում է գտնվել Ֆրենկլինը, միսս Կլակ. պարտատերերը համաձայնվել են սպասել, իսկ նա ինքը մոտ ժամանակներս պետք է ամուսնանար հարուստ ժառանգորդուհու հետ: Նրան սրիկա համարեք, ինչքան ուզում եք, բայց սասցեք ինձ՝ նրա ինչի՞ն էր պետք Լուսնաքարը:

— Մարդկային հողին անքննելի է, — պատասխանեցի ես, — ո՞վ կարող է տեսնել նրա խորքերը:

— Այլ խոսքով, տիրուհի, թեև նա արժաստը գողանալու ոչ մի պատճառ չի ունեցել, այնուամենայնիվ դողացել է իր այլասերված բնավորութեան պատճառով: Շատ լավ: Ենթադրենք՝ գողացել է: Բայց ինչո՞ւ, սատանան տանի...

— Ներեցեք, միսոր Բրեֆ: Եթե սատանայի անուն եք առելու, ես ստիպված կլինեմ դուրս գալ սենյակից:

— Ներեցեք, միսս Կլակ, այսուհետև ավելի զգույշ կլինեմ իմ արտահայտութիւնների մեջ: Միայն ահա թե ինչ կուզեի հարցնել: Ինչո՞ւ, ենթադրելով, որ Ֆրենկլին Բլեկն է արժաստ-

տը դողացել, ինչո՞ւ տանը բողբոխից շատ նա է աշխատում գտնել այդ բարը: Կարող եք պատասխանել, թե նա խորամանկորեն փորձել է կասկածները շեղել իրենից: Իսկ ես կպատասխանեմ, որ նա կասկածներն իրենից վանելու կարիք չի ունեցել, որովհետև ոչ ոք էլ նրա վրա չի կասկածել: Նախ գոչանում է Լուսնաքարը՝ առանց որևէ հիմք ունենալու, սոսկ բնությունից փշացած լինելու պատճառով, իսկ հետո առաջին դերն է կատարում կորած ալմաստը գտնելու գործում, մի դեր, որն ամենե՛նի՛ն պետք չէ իրեն և մահացու վիրավորել է ջահել օրիորդին, որը, եթե այդ բանը չլիներ, կամուսնանար նրա հետ: Ահա մի անհեթեթ պնդում, որին անխուսափելիորեն կհհանգե՛ր, եթե ձգտեք Լուսնաքարի անհետացումը կապել Ֆրենկլին Բլեկի հետ: Ոչ-ոչ, միսս Կլակ: Իմ ու ձեր այսօրվա մտքերի չնոխանակությունից հետո վճռականապես կարելի է փակուղի մտնել: Ռեչելի անմեղությունը, որքան հայտնի է նրա մորը և ինձ, ամեն մի կասկածից վեր է: Միստր էբլուայթի անմեղությունը անհերքելի է, հակառակ դեպքում Ռեչելը երբեք չէր վկայի այն: Ֆրենկլին Բլեկի անմեղությունը, ինչպես հիմա տեսար, անվիճելիորեն ապացուցվում է ինքն իրեն: Մի կողմից՝ բոլորս համոզված ենք այս ամենի մեջ: Մյուս կողմից՝ մենք համոզված ենք նաև, որ ինչ-որ մեկը Լուսնաքարը բերել է Լոնդոն, և որ ալմաստը այս պահին գաղտնաբար զրտնըվում է կամ միստր Լյուկերի կամ նրա բանկիրի մոտ: Ի՞նչ օգուտ իմ փորձառությունից, ի՞նչ օգուտ բրե՛է մեկ ուրիշի փորձառությունից նման գործում: Այն շփոթեցնում է ինձ, այն շփոթեցնում է ձեզ, այն շփոթեցնում է բոլորիս...

Ոչ, ո՛չ բոլորիս: Այն չի շփոթեցրել խուզարկու Կաֆին: Ես արդեն ուզում եմ այդ մասին հիշատակել ամենայն հնարավոր հեղությամբ և ամենայն անհրաժեշտ բողբոջով բնդդեմ այն ենթադրության, թե իբր ես ուզում եմ ստվեր պցել Ռեչելի վրա, երբ ներս մտավ ծառան՝ ասելու, որ բժիշկները մեկնել են և որ քեռակինս մեզ է սպասում:

Գա ընդհատեց մեր վեճը: Միստր Բրեֆը, խոսակցությունից փոքր-ինչ հոգնած, հավաքեց իր թղթերը. ես վերցրի թանկարժեք հրատարակություններով լի իմ պայուսակը, զգալով, որ կարող էի Լի մի քանի ժամ խոսել: Եվ երկուսով լուռ մըտանք լեզի վերինդերի սենյակը:

Կտակի ստորագրման արարողությունը շատ ավելի կաշնտեկեց, քան ես սպասում էի: Իմ կարծիքով ամեն ինչ արվել անվայելուչ հապճեպությամբ: Մարդ ուղարկեցին Սամյունելին կանչելու, սպասավորին, որը պետք է լիներ երկրորդ վկան, և նույն պահին գրիչը տվին քեռականոջս: Առիթին վայել մի քանի խոսք ստելու ուժեղ մղում զգացի, բայց միտքը Բրեֆի վարձույնքն ինձ համեղեց, որ ավելի խելամիտ կլինի ձեռնպահ մնալ դրանից, քանի դեռ ինքը սենյակում է: Երկու րոպե շանցած՝ ամեն ինչ վերջացավ, և Սամյունելը (զրկված այն ամենի բարերար ազդեցությունից, ինչ որ ես կարող էի ասել) նորից գնաց ներքև:

Կտակը ծաղկույց հետո միտքը Բրեֆը նայեց ինձ, ըստ երկվույթին, ինքն իրեն հարցնելով՝ արդյոք ես մտադիր չեմ իրեն մենակ թողնել իմ գեոտկնոջ հետ: Բայց ես պետք է իմ վեհ առաքելությունը կատարելի, և թանկարժեք հրատարակություններով լի պայուսակը դրված էր ծնկներս: Փաստաբանը ճիշտ այնպես, ինչպես որ հայացքով կարող էր տեղաշարժել Սուրբ Պողոսի տաճարը, այնպես էլ տեղաշարժել կարող էր ինձ: Նա մի արժանիք ունի (անկասկած, ձեռք բերված աշխարհական դաստիարակության շնորհիվ), որը ես հերքելու ցանկություն չունեմ. նա շատ լավ տեսնում է ամեն ինչ: Կարծեմ, նրա վրա գրեթե նույնպիսի տպավորություն գործեցի, ինչպիսի տպավորություն որ գործել էի կառապանի վրա: Սա նույնպես ինչ որ պիղծ խոսքեր մոթմոթաց և հապճեպ հեռացում, ինձ խուչնելով հաղթանակած:

Հենց որ մենք մենակ մնացինք՝ քեռակինս թիկնեց բողմոցին, իսկ հետո որոշ շփոթությունը ակնարկեց իր կտակը:

— Հուսով եմ, որ ձեզ մոռացված չեք համարի, Գրուզելիլա, — ասաց նա: — Ես մտադիր եմ ձեր փորձիկ ժառանգությունը ձեզ հանձնել անձամբ, սիրելիս:

Ահա ա՛յն, սակե առիթը: Ես անմիջապես օգտվեցի դրանից: Այլ խոսքով ես անմիջապես բացեցի պայուսակս և հանեցի վերևում գրված տրակտատը: Դա «Տնային օձը» վերնապարով անստորագիր նշանավոր Լրկի (կարծում եմ, որ այն գրել է թանկագին միսս Բելտուսը) առաջին հրատարակություննե-

լից մեկն էր, քսանհինգերորդը։ Այդ գրքի, որին աշխարհական ընթերցողը թերևս ծանոթ չէ, նպատակն է ցույց տալ, թե ինչպիսի մեր ամենօրյա կյանքի արտաքուստ անմեղ բոլոր արարքներում մեզ հետևում է շար ոգին։ Կանանց ընթերցանության համար տալովէլ հարմարեցված գլուխները կոչվում են «Սատանան գլխի խողանակի մեջ», «Սատանան հայելու էտևում», «Սատանան թեյի սեղանի տակ», «Լուսամուտից նայու սատանան» և այլն։

— Սիրելի քեռակին, ձեր ուշադրությունը նվիրե՛ր այս թանկարժեք գրքին. ահա այն լավագույնն էլերը, որ ձեզնից խընդրում եմ։

Այս ասելով՝ նրան տվի մի շատ լավ տեղում բացված գիրքը՝ «Սատանան բաղձոցի բարձերի արանքում»։

Եեղճ լեզի Վերինդերը, սր թեթևամտորեն հենվել էր իր բաղձոցի բարձերին, մի հայացք դցեց գրքույկին և ինձ վերադարձրեց տաջվանից ավելի շփոթված։

— Դրուզիլլա, — ասաց նա, — վախենում եմ, որ պետք է սպասես մինչև լավ զգամ ինձ ու կարողանամ կարդալ սա։

Ինձ ոչինչ չէր մնում անել, քան զիջել, բայց միայն մեկ բոպեով։ Ամեն մի բացահայտ հավաստիացում, որ իմ գործը բժիշկների գործից շատ ավելի կարևոր է, բժշկին կատիպեր իր հիվանդի մարդկային թուլության վրա ներգործել բուժելուց հրաժարվելու սպառնալիքով։ Բարեբախտաբար բարի սերմեր ցանելու շատ եղանակներ կան, և քչերն են, որ ինձնից ավելի լավ գիտեն այդ եղանակները։

— Դուք, հոգյակս, թերևս ձեզ ավելի լավ գտաք մի երկու ժամ հետո, — ասացի ես, — կամ կարող եք վաղն առավոտյան արթնանալ ինչ-որ բանի սյակաս ունենալու զգացումով, և այն ժամանակ այս հասարակ գրքույկը կարող է փոխարինել այդ պակասին։ Թույլ կտա՞ք թողնել այստեղ, քեռակին։ Բժիշկը սրա գեմ ոչինչ չի ասի։

Նա գրքույկը խցկեցի բաղձոցի բարձի տակ՝ նրա թաշկինակի և հոտոտելի սպիրտով սրվակի մոտ։ Ամեն անգամ, երբ նա ձեռքը երկարի վերցնելու մեկը կամ մյուսը, անպայման վղիպչի գրքույկին և, ով դիտե, վաղ թե ուշ գրքույկն էլ կարող է գիպչել նրան։ Այսպես դասավորելուց հետո խելամիտ համարեցի հեռանալ։

— Բույլ ավելք ինձ հրածեշտ աալ ձեղ, թողնելով, որ հանգրստանաք, սիրելի քեռակին, միշն վազը:

Այսպես ասելով, պատահարար նայեցի լուսամուտին. այնտեղ բազմատեսակ ծաղիկներ կային արկղների ու ծաղկամանների մեջ: Լեզի Վերինդերը խելահեղության աստիճան սիրում էր այդ փուշ գանձերը, սովորություն ուներ ժամանակ առ ժամանակ հիանալ դրանցով ու հաս քաշել: Մի նոր միտք անցավ գլխովս:

— Օ՛, կարելի՞ է մի ծաղիկ քաղել, — ասացի ևս է, կասկած չհարուցելով, մոտեցա լուսամուտին:

Բայց ծաղիկ քաղելու փոխարեն ևս ևս մեկը ավելացրի դրանց վրա, այսինքն՝ իմ պայուսակից հանած մեկ ուրիշ զըրքույկ, որը թողեցի խորգենու ու վարդերի արանքում, որպես քեռակնոջս մատուցված սնակնկալ: Մի երջանիկ միտք հեռավեց դրան. «Ինչու՞ խեղճ կնոջ համար նույնը չանել յուրաքանչյուր սենյակում, որտեղ նա մտնում է»: Անհապաղ հրածեշտ տվի նրան և, նախասրահն անցնելով, դադաագողի մտա գրադարան: Սամյուելը ինձ դուրս թողնելու համար դռանը մոտենալով և ենթադրելով, որ արգեն դնացել եմ, վերադարձավ ներքևում գտնվող իր սենյակը: Գրադարանում սեղանի վրա դրված էր երկու «հեաաքքիթի գիրք», որ սրբապիղծ բժիշկն էր հանձնարարել: Գրանք անմիջապես թարցրի իմ Երկու լիակազին գրքույկների տակ: Ծաշասենյակում տեսա քեռակնոջը սիրելի զեղձանիկը՝ վանդակում: Քեռակինս սովորություն ուներ միշտ այդ թռչնակին կերակրել իր ափի մեջ: Սեղանին, որի վրա վանդակն էր դրված, սերմ էր լցված: Գրքույկը դրեցի սերմերի մեջ: Պայուսակս դատարկելու մի ավելի երջանիկ առիթ ունեցա հյուրեսենյակում: Քեռակնոջս սիրելի երաժըշտական պիեսներն ընկած էին դաշնամուրի վրա: Երկու զըրքույկ խցկեցի նստանների արանքը: Մի զըրքույկ էլ հեռավոր հյուրասենյակում դրեցի անավարտ ձեռագործի տակ. գիտեի, որ դա լեզի Վերինդերի աշխատանքն է: Երրորդ փոքրիկ սենյակը գտնվում էր հեռու ընկած հյուրասենյակի մոտ և նրանից բաժանվում էր ոչ թե դռնով, այլ վարագույրով: Քեռակնոջս հին հասարակ հովհարը դրված էր բուխարու վրա: Բացեցի իննբորոգ գիրքը և հովհարը, որպես էջադիր, դրեցի մի շատ օգտակար տեղում: Այստեղ մի հարց սուաջացավ, շմտե՞մ նաև նրն-

շարան, անկասկած, որով անկողով վերափորձների ենթարկ-  
 վել, եթե ժապավեններ ունեցող շարաշխարհով անձնավո-  
 լաթուներ այդ ժամին գանձեր վերելի հարկում և տեսներ ինձ։  
 Բայց, աստված իմ, հետո ի՞նչ։ Մի՞թե վերափորձները  
 սարսափելի են խեղճ քրիստոնեուհու համար։ Գնացի վերև՝  
 պատրաստ լինելով ասնելու ամեն ինչ։ Սովորներ լուս էր ու  
 դատարկ. դա, կարծես, ժողովների բնչալուծության ժամն էր  
 Առաջին սենյակը քնակնոցս ննջարանն էր։ Հանգուցչալ թան-  
 կագին քնոի սըր Զոնի փոքրիկ դիմանկարը կախված էր պա-  
 տին՝ անկողնու դիմաց։ Նա, կարծես, ժպտում էր ինձ, կար-  
 ծես ասում էր. «Իրուզիլա, մի զբքուչի էլ այստեղ դիր»։ Քե-  
 ոակնոցս անկողնու երկու կողմում սեղանիկներ էին գրված։  
 Նա անճնովիամբ էր տառապում, և գլխերները զանազան ա-  
 ռարկաներ էին պետք լինում նրան (կամ թվում էր, թե պետք  
 էին)։ Մի գրքուչկը դրեցի մի կողմում՝ լուցիկու մոտ, մի գր-  
 քուչկն էլ՝ մյուս կողմում՝ շոկոլագե բլիթներով տուփի տակ։  
 Ելք կրակ պետք լինի նրան կամ բլիթ պետք լինի՝ թանկար-  
 ժեկ գրքուչկը աչքովը կընկնի կամ կընկնի ձեռքի տակ և յուրա-  
 յանչուր գեպքում կգորցի անձայն պերճախոսությամբ՝ «Ճաշա-  
 կի՛ր ինձ։ Ճաշակի՛ր ինձ»։ Այժմ պաշուսակի տակին միայն  
 մի գրքուչի էր մնում, և մնում էր միայն մի սենյակ, որտեղ  
 դեռ չէի մտել. լոգարանը, որը հարում էր ննջարանին։ Ներս  
 մտա, և սրբազան ներքին ձայնը, որը երբեք չի խաբում, ինձ  
 շշնջաց. «Դու գրքուչկներ դրեցիր ամեն տեղ, Իրուզիլա, հի-  
 մա էլ դիր լոգարանում, և քո գործը ավարտված կլինի»։ Նկա-  
 տեցի, սր օթոսի վրա գցված խալաթը գրպան սնի, և վերջին  
 գրքուչկը խցկեցի այնտեղ։ Հնարավո՞ր է, արդյոք, բառերով  
 արտահայտել կատարված պարտքի այն երանելի դիտակցումը,  
 որ համակեց ինձ, հրր ես աննկատելիորեն դուրս թառ տնից  
 և, դատարկ պաշուսակը թևիս տակ, հայտնվեցի փողոցում։  
 Այնքա՞ն թեթև էր հոգիս, կարծես նորից երեխա էի դարձել։  
 Նորից երեխա՛ էի դարձել։

Երբ հաջորդ աստվածայան արթնացա, օ՛, ինչքան երիտա-  
 սարդ զգացի ինձ։ Կարող էի ավելացնել՝ ինչքան երիտասարդ  
 էի թվում, եթե կարողանայի ասել իմ փուչ մարմնի մասին։  
 Բայց ես չէի կարող, և ոչինչ չեմ ավելացնի։

Երբ նախաճաշի ժամը մոտեցավ (ոչ ի սեր մարդկային



պահանջմունքների, այլ ի սեր քեռակնոջս տեսնելու) չրեցի գլխարկս, որպեսզի գնամ Մոնտեքյուս-պուրակ։ Նոր-նոր էի պատրաստվել, էրբ այն բնակարանի սպասուհին, որտեղ ես այդ ժամանակ ապրում էի, դուռը բացեց և ասաց.

— Լեդի Վերինդերի մոտից ծառա է եկել միսս Կլակի մաս։ Լոնդոնում աւերածս ժամանակ ես ղբաղեցնում էի ներքեկ հարկը։ Հյուրասենյակս շատ փոքր էր, շատ ցածր էր և շատ ազգաաիկ կահավորված, բայց կոկիկ էր։ Ես դուրս եկա միջանցք՝ տեսնելու, թե լեդի Վերինդերի ծառաներից ով է ինձ հարցնում։ Երիտասարդ սպասավոր Սամյուելն էր՝ քաղալավարի, կարմրերես պատանի, գեմբի խելացի արտահայտությամբ և շատ կիրթ շարժուձևով։ Ես միշտ էլ հոգևոր համակրանք եմ ունեցել Սամյուելի նկատմամբ և ցանկություն՝ մի քանի խրատական խոսք ասելու նրան։ Այս անգամ նրան հրավիրեցի հյուրասենյակ։ Նա ներս մտավ՝ մի մեծ փաթեթ թևի տակ։ Փաթեթը սեղանին դրեց այնպիսի տեսքով, կարծես վախենում էր նրանից։

— Միլեդին հրամայել է ողջունել ձեզ, միսս, և ասել, որ դուք նամակ կգտնեք այստեղ։

Հանձնարարությունը կատարելով, կարմրերես երիտասարդ սպասավորն ինձ ղարմացրեց նրանով, որ կարծես ուզում էր նույն պահին շրջվել ու փախչել։

Ես նրան պահեցի, որպեսզի մի քանի հաճելի հարցեր տամ։ Կարո՞ղ եմ քեռակնոջս տեսնել, և թե Մոնտեքյուս-պուրակ գնամ։ Ոչ, նա ղբոսնելու է գնացել կառքով։ Միսս Ռեչելն էլ է գնացել, միստր էբլուայթը նույնպես նրանց հետ կառք նստեց։ Իմանալով, թե ինչքա՞ն է իր բարեգործական ղբաղմունքները բարձիթողի արել սիրելի միստր Գոդֆրին, ես առնվազն տաղօրինակ համարեցի այդպիսի պարագ ղբոսանքը։ Սամյուելին, որ արդեն դուան մոտ էր հասել, կանգնեցնելով՝ ես մի քանի սիրալիր հարց տվի։ Միսս Ռեչելն այսօր գնում է պարահանդես, իսկ միստր էբլուայթը պայմանավորվել է դալ երեկոյան սուրճի ժամանակ և մեկնել նրա հետ։ Վաղվա համար հայտարարվել է առավոտյան համերգ, և Սամյուելին հրամայված է մի քանի տոմս վերցնել, այդ թվում՝ նաև միստր էբլուայթի համար։

— Վախենում եմ՝ բոլոր տոմսերը ծախվեն, միսս,— ա-

սաց այդ անմեղ պատանին, — Եթե հիմա եկթ չգնամ առնելու:

Նա այս բառերն արտասանեց արդեն վաղելիս, և ես նորից մենակ մնացի ինձ համակած տազնայալի մտքերի հետ:

Այդ երեկո մեզ մոտ պետք է տեղի ունենար «Հայրական շալվարները մանկականի վերածելու նկատմամբ մայրական հոգացողության կոմիտեի» շտապ նիստը, հատկապես հրավիրված միստր Գոդֆրիից խորհուրդ և օգնություն ստանալու համար: Եվ, փոխանակ օգնելու կոմիտեին՝ ծանրաբեռնված շալվարների մի վիթխարի կուլտով, որոնք բոլորովին ճգմել են մեր գոքրիկ համայնքը, նա պայմանավորվել է ևտճաշյա սո՛ւրճ խմել Մոնտեբյու-պուրաիում, իսկ այնուհետև պարահանդես մեկնել: Վաղվա համար նշանակված էր «Սպասուհիների կիրակնօրյա երկրպագուների նկատմամբ բրիտանական կանանց հսկողության րնկերության» տոնակատարությունը: Փոխանակ ներկա գտնվելու այդտեղ և լինելու իր գոյության համար դժվարությամբ պայքարող այդ ընկելության հոգին, նա փուշ մարդկանց խոսք է տվել նրանց հետ մեկտեղ դնալ առավոտյան համերգի: Ինքս ինձ հարցրի. «Ի՞նչ է նշանակում սա»: Ավա՛ղ, այդ նշանակում էր, որ մեր քրիստոնեական հերոսը իմ առջև կանգնեց բոլորովին նոր լույսի տակ և իմ մտածումներում կայված է մեր օրերի մեծնաճալար մեղանշումների հետ:

Սակայն դառնանք այսօրվա պատմությանը: Սենյակում մենակ մնալով, ես, րնականարտր, ուշադրություն դարձրի այն փաթեթի վրա, որը, ըստ երևույթին, մի տեսակ տարօրինակ սարսափ էր առաջացրել կարմրերես երիտասարդ սպասավորի մեջ: Չլինի՞ թե քեռակինս ինձ էր ուղարկել խոստացված ժառանգությունը և արդյո՞ք դա չի լինի մաշված զգեստ, գործածված արծաթե գդալներ, հնտոճ առարկաներ կամ այդօրինակ ինչ-որ բաներ: Հնապանդուկն պատրաստվելով ընդունելու բոլորը և չբարկանալու ոչ մի բանի վրա, բացեցի փաթեթը: Եվ ի՞նչ տեսա ես: Այն թանկարժեք տասներկու հրատարակությունները, որ նախորդ օրը ցրիվ էի տվել տան մեջ, բոլորն ինձ է՛ն վերադարձվել բժշկի հրամանով: Էլ ինչպե՞ս կարող էր շղթադողալ պատանի Սամյուելը, երբ իմ սենյակը բերեց այդ փաթեթը: Եվ ինչպե՞ս էլորող էր նա շփախշել այդքան նողկալի հանձնարարություն կատարելուց հետո: Խեղճ բեռակինս իր

նամակում հակիրճ հաղորդում էր, թե ինքը շի համարձակվել շանսալ իր բժշկին: Ի՞նչ անել հիմա: Իմ ստացած դաստիարակության և իմ կանոնների առկայությամբ այդ հաշվով իմ մեշ ոչ մի կասկած չէր մնում: Ղեկավարվելով իր խղճով և աշխատելով մերձավորի օգտին, իսկական ըրիստոնեոսին երբեք չի ընկճվում: Ոչ հասարակական ազդեցությունը, ոչ առանձին մարդկանց ազդեցությունը ամենևին չեն ներգործում մեզ վրա, երբ մենք արդեն ձեռնամուխ ենք եղել մեր առաքելությունը կատարելուն:

Թե ինչ ձև պետք է ընդունել իմ բարեպաշտ համառությունը իմ մոլորչալ քեռակնոջ գործում՝ միանգամայն պայլ էր ինձ համար:

Լեդի Վերինգերի բացահայտ շիամությունն պատճառով շրջաջողվեց կղերական բարեկամների օգնությամբ նրան նախապատրաստել ապագա կյանքի համար: Զնաջողվեց նրան նախապատրաստել նաև զրբույկների օգնությամբ. պատճառը բժշկի պիղծ համառությունն էր: Ի՞նչ այդպես լինի: Ի՞նչ էր մնում անել: Նրան նախապատրաստել նամակների օգնությամբ: Այլ խոսքով, քանի որ զրբուկները վերադարձվել էին, ապա նրանցում նշված հատվածները (արտադրված տարբեր ձևազրկերով և նամակների ձևով ուղարկված քեռակնոջ) պետք է առաքվեին փոստով, իսկ մի քանիսն էլ այս ու այնտեղ անվճար տանը ըստ այն ծրագրի, որ կազմել էի նախորդ օրը: Որպես նամակ՝ դրանք կասկած չեն հարուցի, որպես նամակ՝ դրանք կբացվեն և, զուցե, ընթերցվեն: Դրանցից մի քանիսը ինքս գրեցի.

«Միրելի քեռակին, կարո՞ղ եմ ձեզ խնդրել, որ ուշադրություն դարձնեք այս մի քանի տողի վրա» և այլն:

«Միրելի քեռակին, երեկ ընթերցելիս սպասահարար ուշադրությունս դրավեց հետևյալ տեղը...» և այլն:

Մյուս նամակներն ինձ համար գրել էին իմ անգնահատելի աշխատակիցները, «Մայրական հոգացողություն ընկերություն» անդամները:

«Ողորմած տիրուհի, ներեցեք, որ ձեր ճշմարիտ, բայց խոնարհ բարեկամը մասնակցում է ձեր գործին...»

«Ողորմած տիրուհի, կարո՞ղ է, արդյոք, մի լուրջ անձնավորություն մի քանի մխիթարական խոսքով անհանգստացնել ձեզ»:

Այսօրինակ քաղաքապարի խնդրանքներն միջոցով մեզ հա-  
ջողվեց այս բոլոր թանկարժեք հատվածները ներկայացնել  
այնպիսի ձևով, որի վրա շեր կարող էր ասկածել պիղծ բժիշկնե-  
լից նույնիսկ ամենախորաթանցանցը, Երկինամուտի ստվեր-  
նէրը Թանձրանալուց առաջ տասներկու խրատական գրքույկնե-  
րի փոխարեն ևս արդեն ունեի քեռակէտջս ուղղված տասներկու  
խրատական նամակ: Անմիջապէս հոգացի, բրայեսով վեց նա-  
մակն ուղարկվի փոստով, իսկ վեցը պահեցի դրպանումս,  
որպեսզի հաջորդ օրը անձամբ ցրիվ տամ տան մէջ: Շուտով  
ժամը երկուսից հետո ևս նորից բարեւոյաշտ պայքարի սասպա-  
րեղ մտա, լեզի Վերինգերի տան դռան մտա սիրալիր հարցու-  
փորձով դիմելով Սամուելին: Քեռակինս ղիշերը վատ է անց-  
կացրել: Նա նորից եղել է այն սենյակում, որտեղ ևս որպէս  
վկա ստորագրել էի նրա կտակը, պառկել է բազմոցի վրա և  
աշխատել է հենել: Ասացի, որ կսպասեմ գրադարանում, հույս  
ունենալով մի փոքր ավելի ուշ տեսնել նրան: Հուլիս ջանալով  
շատ շատ ցրել նամակները, մտքովս էլ չանցավ հարցնել Ռե-  
չելի մասին: Տանը լռություն էր տիրում, և անցել էր այն ժամը,  
երբ պետք է սկսվեր համերգը: Հավատացած, որ և՛ Ռեչելը, և՛  
բավակոնություն փնտրողների ամբողջ հասարակությու-  
նը (ներառյալ, ավա՛ղ, նաև միստր Գոդֆրին) պոնվում էին  
համերգում, ևս կրքոտությամբ ինձ նվիրեցի իմ բարի գործին.  
Ժամանակն ու հարմար սոխիքը դեռևս իմ յիակատար տրամա-  
դրության տակ էին:

Քեռակնոջս առավոտյան փոստը, ներառյալ խրատական  
վեց նամակները, որ ուղարկել էի փոստով, դեռևս չբացված  
բնկած էր գրադարանում՝ սեղանի վրա: Նա, ըստ երևույթին,  
իրեն անկարող էր զգում վրադվելու այդքան նամակներով և,  
դուցե, նրան վախեցնեին ավելի մեծ քանակությամբ նամակ-  
ները, եթէ նա սովելի ուշ մտնէր գրադարան: Դրա համար էլ  
երկրորդ վեցյակի նամակներից մեկը դրեցի առանձին, որպէս-  
զի՛ նրա ուշադրությունը գրավեմ հենց նրանով, որ այն ըն-  
կած կլինէր առանձին: Երկրորդ նամակը միտումնալոր կերպով  
գրեցի ճաշասենյակի հատակին: Մտաններից առաջինը, ոչ  
կմտնի ինձնից հետո, կմտածի, թե այն ձեռքից գցել է քեռա-  
կինս ինքը, և կաշխատի նամակը վերադարձնել նրան: Ներքևի  
հարկում իմ ցանքն ավարտելուց հետո թեթևությամբ վազեցի

վերև, որպէսզի իմ բարեխարութիւնները շաղ տամ երկրորդ հարկի հատակին:

Հյուրասենյակ մտնելով՝ լսեցի, որ դուռը լիակում են փողոցի կողմից. կամացուկ ու քաղաքավարի լեզուով էր: Մինչ կըհասցնէի արագորեն գրադարան վերադառնալ (որտեղ պետք է որ գտնվէի)՝ երիտասարդ ճարտիկ սպասաւորը հայտնվեց նախասրահում ու բացեց դուռը: Ես մեծ նշանակութիւն չտվի գրան: Քեռականոջս առողջական վիճակը թույլ չէր տալիս հյուրեր ընդունել: Բայց, ի սարսափ և ի զարմանս իմ, պարզվեց, որ նա, ով կամացուկ ու զգուշորեն լեզու էր, բացառութիւն էր ընդհանուր կանոններից: Սամյուելի ձայնը (հավանաբար, ի պատասխան հարցերի, որ ես չէի լսել) շատ պարզ արտաբերեց.

— Համեցեք վերև, սրբ:

Մեկ բոպէ անց քալերի ձայն լսեցի, երկրորդ հարկ բարձրացող տղամարդու քալերի: Ո՞վ կարող էր լինել այդ ընտրյալ հյուրը: Այս հարցը դեռ չծագած՝ մտքովս անցավ պատասխանը: Էլ ո՞վ կարող էր լինել, բժշկից բացի:

Եթէ դա որեէ մեկ ուրիշ աչցելու լինէր՝ ես թույլ կտայի, որ ինձ տեսնին հյուրասենյակում: Ոչ մի արտաւտց բան չէր լինի, որ ես ձանձրացած լինեի գրադարանում սպասելուց և որ տեղս փոխելու համար բարձրացած լինեի վերև: Բայց իմ նկատմամբ ունեցածս հարգանքն ինձ խանգարեց հանդիպելու այն մարդու հետ, որը, պրքույկներս ետ ուղարկելով, վերավորել էր ինձ: Ես արագորեն անցա երրորդ փոքրիկ սենյակը, որը, ինչպէս հիշատակել եմ, հարում էր հետու գտնվող հյուրասենյակին, և իջեցրի դռան բացվածքը ծածկող վարագույրը: Բաշխան և մի երկու բոպէ սպասեմ, և տեղի կունենա այն, ինչ սովորաբար լինում է այդպիսի դեպքում. բժշկին կատաշնորդն սենյակ՝ իր հիվանդի մոտ:

Բայց անցավ երկու բոպէ և նույնիսկ ավելի: Ես լսում էի ինչպէս էր հյուրը անհանդիստ կտուտուաջ քալում: Կտում էի նաև, թէ ինչպէս էր նա ինքն իր հետ խոսում: Ինձ նույնիսկ թվաց, թէ ես ճանաչեցի նրա ձայնը: Արդյո՞ք չեմ սխալվել: Մի՞թէ դա բժիշկը չէ, այլ մեկ ուրիշն է, օրինակ, միատր Բրեֆը: Ոչ, անսխալ բնազդն ինձ հուշեց, որ դա միատր Բրեֆը չէ: Բայց ով էլ որ լինէր՝ նա դեռ շարունակում էր խոսել ինքն

իր հետև վարագույրը փոքր-ինչ ետ տարաւ և սկսեցի աղանջ  
դնել:

Հսկցի հետևյալ բառերը. «Ես դա կտնեմ այսօր»: Իսկ ձայ-  
նը, որ արտաբերեց դրանք, պատկանում էր միատր Գողթրի  
էրլուսլիին:

## Գ լ ու խ V

Ձեռքս իջեցրեց վարագույրը: Բայց շննխադրեք, օ, շնն-  
թաղրեք, թէ ինձ վախեցրեց իմ ծայրահեղ դժվարին կացու-  
թյան միտքը: Միտր Գողթրիի նկատմամբ իմ քույրական  
կարեկցանքն այնքան մեծ էր, որ ես նույնիսկ կանգ շառա այն  
մտքի վրա, թե ինչու նա համերգ չի գնացել: Ո՛չ: Ես մտածում  
էի միայն նրա շուրթերից սողված բառերի, սպառնալի բառե-  
րի մասին: Նա այդ կանի այսօր: Նա հուսահատ վճռակա՞նու-  
թյան ձայնով ասաց, որ այդ կանի այսօ՛ր: Բայց ի՞նչ, ի՞նչ է  
անելու նա: Մի՞թե է՛լ ավելի անազնիվ ինչ-որ բան, քան այն,  
որ արդեն արել է: Չլինի՞ թե հավատից է հրաժարվելու  
Չլինի՞ թե լքելու է մեր մայրական կոմիտեն: Մի՞թե այլևս  
նրա հրեշտակային ժպիտը շնք տեսնի կոմիտեի դահլիճում:  
Մի՞թե այլևս շնք լսի նրա աննման պերճախոսությունը էքքս-  
տեր-ձուլում: Ես այնքան հուզված էի նրա սկսած մարդու հետ  
կապված այդ ահալոր հնարավորությունների մասին մտածե-  
լիս, որ, կարծես, պատրաստ էի դուրս վազել իմ ապաստարա-  
նից և լոնդոնի բոլոր կանանց կոմիտեաների անունով երդվեց-  
նել, որ բացատրություն տա, երբ հանկարծ մեկ ուրիշ ձայն  
լսեցի: Այն թափանցեց վարագույրի միջով, այն բարձր էր,  
այն համարձակ էր, կնոջական ոչ մի հմայք չկար նրա մեջ:  
Դա Ռեչել Վերինդերի ձայնն էր:

— Ինչո՞ւ եք այստեղ եկել, Գողթրի, — հարցրեց նա: —  
Ինչո՞ւ գրադարանում չեք:

Գողթրին կամացուկ ծիծաղեց ու պատասխանեց.

— Գրադարանում նստած է միսս Կլակլը:

— Ինչպե՞ս թե գրադարանում:

Ռեչելն անմիջապես իջավ բազմոցին:

— Դուք միանգամայն իրաւացի եք, Գողֆրիւ ալիւի լավ է մնանք այստեղ:

Մեկ րոպե առաջ էս տես տենդի մեջ էի ու շփտեի, թե ինչ անեմ: Այժմ սառույցի սլես սառն էի և այլևս ոչ մի կասկած չունեի: Նրանց երևալ այն բանից հետո, ինչ էս լսեցի՝ հնարավոր չէր: Բուխարուց բացի, ոչ մի ուրիշ թաքնվելու տեղ չկար: Ինձ նահատակություն էր սպասում: Զգուշությամբ էտ տարա վարագույրը, այնպէս, որպէսզի կարողանայի տեսնել ու լսել նրանց: Իսկ հետո առաջին քրիստոնյաների օրինակով դիմեցի նահատակության:

— Բաղմոցին չնստեք,— շարունակեց երիտասարդ աղջիկը:— Աթոռ վերցրեք, Գողֆրիւ: Ես սիրում եմ, որ ինձ հետ խոսողը դիմացս նստած լինի:

Գողֆրին նստեց ամենամոտիկ աթոռի վրա: Աթոռը ցածրիկ էր և չափազանց փոքր միտք Գողֆրիի բարձր հասակի համար: Նրա ռտքերն այդպիսի անհարմար վիճակում դեռ հորեք չէի տեսել:

— Դե,— շարունակեց Ռեչելը,— ի՞նչ ասացիք նրանց:

— Հենց այն, սիրելի Ռեչել, ինչ որ դուք էիք ինձ ասել:

— Որ մայրս այսօր մի փոքր վատ է դրում և որ ես չեմ ուզում նրան մենակ թողնել համերգի սլատճառով:

— Հենց այդպէս: Նրանք շատ ափսոսացին, որ զրկվել են համերգում ձեր ընկերակցությունից, բայց թե հասկացան ձեր մերժումը: Նրանք բոլորն էլ ողջուն են հղում ձեզ և հույս են հայտնում, որ լեզի Վերինդերը շուտով լավ կզգա իրեն:

— Դուք դա ճիշտ եք համարում, Գողֆրի:

— Անշո՛ւշտ: Ես միանգամայն հավատացած եմ, որ մի քանի օր հետո նա լրիվ ապաքինված կլինի:

— Ես էլ եմ այդպէս մտածում: Սկզբում մի փոքր վախեցա, բայց հիմա հանգստացել եմ: Դուք շատ բարի եք եղել, որ իմ փոխարեն ներողություն եք խնդրել ձեզ գրեթե անծանոթ մարդկանցից: Բայց ինչո՞ւ դուք նրանց հետ համերգի չեք գրնացել: Ափսոս է, որ դուք չեք լսելու այդ երաժշտությունը:

— Այդպէս մի ասեք, Ռեչել: Եթե իմանայիք, թե որքան հոգանիկ եմ այստեղ ձեզ հետ:

Նա ձեռքերը խաշեց կրծքին ու նայեց աղջկան: Այն դիրքում, որ նա զբաղեցնում էր աթոռի վրա, ձեռքերը խաշելիս պետք

է շրջվիր իմ կողմը: Գծվար է բառերով արտահայտել, թե որքան զվվելի դարձավ ինձ համար, երբ ես նրա գեմքի վրա տեսա այն նույն սրտառուջ արտահայտութիւնը, որն ինձ հմայում էր, երբ նա էրստեր-Հոլլի ամբիոնի վրա մարտնչում էր իր միլիոնաւոր շքավոր եղբայրների համար:

— Վաս սովորույթից հրաժարվելը դժվար է լինում, Գոդֆրի, Բայց աշխատեցեք հրաժարվել հաճոյախոսութիւններ անելու սովորութիւնից, աշխատեցեք հաճույք պատճառել ինձ:

— Կյանքումս երբեք հաճոյախոսութիւններ չեմ արել ձեզ, Ռեչել: Բախտավոր սերը կարող է երբեմն դիմել շողոքորթութեան լեզվին, դրան համաձայն եմ, բայց անհույս սերը, թանկագինս, միշտ ճշմարտութիւնն է ասում:

Գոդֆրին ավելի մոտեցրեց իր աթոռը և «անհույս սեր» բառերն ասելիս, բռնեց նրա ձեռքը: Մի պահ լռութիւն տիրեց: Գոդֆրին, որ հուզում էր բողբոխ, անկասկած հուզեց նաև նրբան: Ինձ թվում է, ևս սկսեցի հասկանալ այն ժամանակ նրա բերանից դուրս թռած բառերը, երբ նա մենակ էր հշուրտահեշտակում: «Նս դա կանեմ այսօր»: Ավա՛ղ, մարմնավորված համեստութիւնն անգամ չէր կարողանա կռահել, թե ինչ էր անում նա հիմա:

— Մի՞թե մոռացել եք, Գոդֆրի, թե մենք ինչ պայմանավորվեցինք այն ժամանակ, երբ գոյուղում խոսում էիք ինձ հետ: Մենք պայմանավորվեցինք, որ կլինենք բարեկամներ, և ուրիշ ոչինչ:

— Ես այդ սրտմանը խախտում եմ ամեն անգամ, երբ տեսնում եմ ձեզ, Ռեչել:

— Ուրեմն չպետք է ինձ հետ տեսնվել:

— Դա բոլորովին անօգուտ կլիներ: Ես այդ պայմանը խախտում եմ ամեն անգամ, երբ ձեր մասին եմ մտածում: Թ', Ռեչել, դուք օրերս այնքա՛ն մեղմորեն ասացիք, որ ես բարձրացել եմ ձեր աչքում: Արդո՞ք իմ կողմից խելագարութիւն է այդ թանկագին բառերի վրա հույս դնելը: Մի՞թե խելագարութիւն է երազելը, որ կլինի մի օր, երբ ձեր սիրտը գոնե մի փոքր կմեղմանա իմ հանդեպ: Չասեք, որ դա խելագարութիւնն է: Թողեք ինձ իմ մոլորութեան մեջ, թանկագինս: Հանգստութեանս համար գոնե երազանքը պետք է փայփայլեմ, և թե ուրիշ ոչինչ չունեմ:



Գողֆրիի ձայնը կողում կր, և նա սպիտակ թաշկինակը մոտեցրեց աչքերին: Գողֆրալ էքստեր-Հոլլը: Կրակատար նմանության համար սյուկատում էին միայն հանդիսականները, հավանության բացակահանությունները և մի բաժակ ջուրը:

Ռեշելի սնդրովելի անձն անգամ զղացվեց: Ես տեսա, թե ինչպես նա ավելի կոսցավ դեպի Գողֆրին: Ես մի նոր հետաքրքրություն երանգ լսեցի երա հետևյալ բառերի մեջ:

— Գողֆրի, հավատացա՞՞մ եք, որ սյդ աստիճան սիրում եք ինձ:

— Հավատացա՞՞մ եմ: Գիտե՞ք, թե ինչպիսին եմ եղել ես, Ռեշել, Թուլլ ավեր ձեզ տակ, թե ինչպիսին եմ հիմա: Ես կորցրել եմ հետաքրքրությունս աշխարհում ամեն ինչի նկատմամբ, ձեզնից բացի: Ինձ հետ կատարվել է մի կերպարանափոխություն, որը ինքս էլ չեմ կարող բացատրել: Կհավատա՞՞ք, բարեդորձական աշխատանքներն անտանելի բևս են: զարձեղ ինձ համար, և, երբ այժմ տեսնում եմ կանանց կոմիտեն, ուզում եմ նրանից փախչել աշխարհի ծայրը:

Եթե հավատուրացություն տարեդրության մեջ այս հավատափայցմանը հավատարազոր որևէ բան կա, ապա կարող եմ ասել, որ դա չեմ կարողացել: Ես մտածեցի «Հայրական շալվարները մանկականի վերածելու նկատմամբ մայրական հողացողության ընկերության» մասին: Ես մտածեցի «Կիրակնօրյա երկրպագուների նկատմամբ հսկողության» ընկերության մասին: Ես մտածեցի ուրիշ ընկերությունների մասին, որոնք շափից դուրս շատ են այստեղ հիշատակելու համար և որոնք հենվում են այդ մարդու ուժի վրա որպես անխորտակելի սյան: Արդարությունը պահանջում է ավելացնել, որ ես ոչ մի խոսք բաց չթողեցի նրանց հետագա խոսակցությունից: Ռեշելը խոսեց առաջինը:

— Ես լսեցի ձեր խոստովանությունը, — ասաց նա — Կուղեի իմանալ, արդյո՞ք, եթե ես նույնպես խոստովանություն անեմ, այն կրուժի ձեր դժբախտ սերը:

Գողֆրին ցնցվեց: Խոստովանում եմ, ցնցվեցի նաև ես: Ես մտածեց, ես նույնպես մտածեցի, որ Ռեշելն ուզում է կուսնաքարի գաղտնիքը բացել:

— Կարո՞ղ եք, ինձ նայելով, հավասալ, — շարունակեց Ռեշելը, — որ ձեր առջև է աշխարհիս ամենագոթրախտ աղջիկը:

Դա ճիշտ է, Գողթրի: Կարո՞ղ է ավելի մեծ դժբախտութիւն լինել, բայն այն բանի գիտակցումը, որ դու կորցրել ես հարգանքը քո նկատմամբ: Ահա այդպիսին է հիմա իմ կյանքը:

— Սիրելի Ռեչել, անհնարին է, որ դուք շնչին իսկ հիմք ունենաք ձեր մասին այդպէս խոսելու համար:

— Իրտեղի՞ց գիտեք, որ այդպիսի հիմք չունեմ:

— Մի՞թե կարող եք այդ մասին հարցնել: Ես դա գիտեմ, որովհետև ճանաչում եմ ձեզ: Ձեր լուսթյունը, թանկագինս, ամենեին չի նսեմացրել ձեզ ձեր ճշմարիտ բարեկամների աչքում: Մենզյան օրը ձեզ տրված թանկագին քարի անհետացումը կարող է տարօրինակ երևալ. այդ դեպքի հետ ձեր անհասկանալի կապը կարող է էլ ավելի տարօրինակ երևալ...

— Դուք կուսնաքարի մասի՞ն եք ասում, Գողթրի:

— Ես կարծում էի, թե դա եք ակնարկում...

— Ես ամենեին էլ դա չեմ ակնարկել: Ես կարող եմ կուսնաքարի անհետացման մասին լսել, ով էլ որ այդ մասին խոսելիս լինի, ամենեին շարժանքով հարգանքը իմ նկատմամբ: Եթե երբևէ լույս աշխարհ գա ալմաստի պատմութիւնը, ապա պարզ կդառնա, որ ես ահա՛վոր պատասխանատւութիւն եմ վերցրել ինձ վրա, պարզ կդառնա, որ ես հանձն եմ առել պահելու մի խղճուկ գաղտնիք. բայց նաև պարզ կդառնա, որ ինքս ոչ մի բանում մեղավոր չեմ: Դուք ինձ ճիշտ շնակացաք, Գողթրի: Ես պետք է ավելի պարզ արտահայտվելի: Ինչ էլ որ դա արժեքնա, հիմա ես ավելի պարզ կարտահայտվեմ: Ենթադրեմք, որ դուք սիրահարված չեք ինձ: Ենթադրեմք, որ դուք սիրահարված եք ինչ-որ մի ուրիշ կնոջ...

— Հետո՞:

— Ասենք, դուք իմացել եք, որ այդ կինը բոլորովին արժանի չէ ձեզ: Ենթադրեմք, որ դուք լիովին համոզվել եք, որ ձեզ համար ստորացուցիչ կլինի նրա մասին մտածելը: Ենթադրեմք, որ այդպիսի կնոջ հետ ամուսնութեան մասին մտածելուց անգամ ձեր դիմքը կբռնկեք ամոթից...

— Հետո՞:

— Եվ ենթադրեմք, որ, շնայած այս բոլորին, դուք չեք կարող նրան սլոկիլ ձեր յրախցի: Ենթադրեմք, որ այն զգացմունքը, որ նա հարուցել է ձեր մեջ այն ժամանակ, երբ դուք հավատացիլ եք նրան, անհաղթահարելի է: Ենթադրեմք, այն սե-

բը, որ այդ արգահատելի արարածը ներշնչել է ձեզ... օ՛, որ տեղի՞ց բառեր գտնեմ այդ արտահայտելու համար: Ինչպե՞ս կարող եմ տղամարդուն ստիպել հասկանալու, որ այդ զգացմունքը միաժամանակ ոտքստիեցնում և կախարդում է ինձ: Գա կյանքիս և՛ լույսն է, Գողֆրի, և՛ թուշը, որը միևնույն ժամանակ սպանում է ինձ: Հեռացե՛ք: Ես պետք է որ խելագարված լինեմ այսպես խոսելով: Ոչ, հիմա չբեք ինձ, սխալ տպավորություն չտանեք ձեզ հետ: Ես պետք է ասեմ այն ամենը, ինչ որ կարող եմ ասել ի սաշտոսանություն ինձ: Հիշեցեք մի բան. նա չգիտե և երբեք չի իմանա այն, ինչ որ ես ձեզ ասացի: Ես երբեք նրան չեմ տեսնի: Ինձ համար միևնույն է, ինչ էլ որ պատահի. ես երբեք, երբեք, երբեք չեմ տեսնի նրան: Այլևս ոչինչ չհարցնեք ինձնից: Փոխենք խոսակցությունը: Գողֆրի, այնքան հասկանո՞ւմ եք բժշկությունից, որպեսզի ասեք, թե ինչու է ինձ թվում, իբր ես խելզգլում եմ օդի պակասությունից: Չկա՞ հիստերիայի այնպիսի մի նոպա, որն արտահայտվում է բառերի հորձանքի և ոչ թե արցունքների հորձանքի մեջ: Երևի՞ կա: Բայց մի՞թե միևնույնը չէ՞: Հիմա դուք հեշտություն մը կտանեք ամեն մի դառնություն, որ ես երբևէ պատճառել եմ ձեզ: Ես ինձ զցեցի ձեր աչքում, այնպես չէ՞: Այլևս ուշադրություն մի դարձրեք ինձ վրա: Մի ափսոսացեք ինձ համար: Ի սեր աստծու, հեռացե՛ք:

Ռեչելը հանկարծ շրջվեց և ձեռքերով ուժեղ հարվածեց բազմոցի թիկնակին: Նրա դուխն իջավ բարձրի վրա, և նա հեկեկաց: Մինչ ևս կհասցնեի ուշքի դալ, ինձ սարսափելի ապշեցրեց միտք Գողֆրիի բոլորովին անսպասելի արարքը: Արդյո՞ք հնարավոր է հավատալ, նա ծնկների վրա ընկավ Ռեչելի առջև. երկու ծնկների վրա՞: Կարո՞ղ է համեստությունս ինձ թույլ տալ հիշատակելու, որ նա գրկեց Ռեչելին: Կարո՞ղ եմ խոստովանել, որ ակամայից հիացմունք ապրեցի, երբ Գողֆրին նրան կյանքի կոչեց երկու բառով. «Ազնի՛վ էակ»:

Գողֆրին այլևս ոչինչ չասաց: Բայց այս բառերն ասաց այնպիսի պոռթկումով, որը նշանավոր հոետորի համբավ բերեց նրան: Ռեչելը նստել էր (իսկապես, չգիտեմ՝ ապշած, թե համայված)՝ շփոթվելով նույնիսկ ես տանել նրա ձեռքերն այնտեղ, որտեղ գրանք պետք է գտնվեին: Իսկ պատշաճության իմ ըմբռնումները բոլորովին իբար էին խառնվել: Գուցե պար-

տալսր էի աչքերս փակել կամ ականջներս խցել. բայց թե այնպիսի տանջալի անհաստոթյան մեջ էի, որ շարեցի ոչ մեկը, ոչ էլ մյուսը: Այն փաստը, որ ես կարողանում էի այնպես պահել վարագույրը, որ հնարավոր լիներ տեսնել ու լսել, վերագրում եմ միայն ու միայն ինձ խեղդող հիստերիային: Բըժիշկներն անգամ համաձայն են, որ երբ հիստերիան խեղդում է ձեզ, պետք է ամուր բռնեք սրկէ բանից:

— Այո, — ասաց Գոգֆրին, դիմելով իր երկնային ձայնի ու վարձուների հմայքներին, — դուք ազնվագույն էակն եք: Կինը, որը կարող է ճշմարտությունն ասել հանուն միայն ճշմարտության, կինը, որը ավելի շուտ իր հպարտությունը կըտհարեցի, քան իրեն սիրող ազնիվ մարդուն, բոլոր գանձերից սմեկնաթանկն է: Եթե այդպիսի կինը ամուսնանա՝ մեն միայն հարգանք տածելով իր ամուսնու նկատմամբ, նա բավականաչափ կերջանկացնի իր ամուսնուն ամբողջ կյանքում: Գուք, թանկագինս, ասացիք, որ իջել եք իմ աչքում: Ինքներդ դատեցեք, թե ինչքա՞ն բարձր եք. չէ որ ես ծնկաչոք աղաչում եմ ձեզ՝ թույլ տալ ինձ ձեր խոցված խեղճ սրտիկը բուժել ձեր նկատմամբ ցուցարեքած իմ հոգատարությունը: Ռեչել, արդյո՞ք ինձ պատվի կարժանացնեք, արդյո՞ք ինձ հրանություն կպարզեք՝ դառնալով իմ կինը:

Այդ ժամանակ ես անպայման կփակեի ականջներս, եթե Ռեչելն ինքը ինձ չխրախուսեր բաց պահել դրանք, նրան պատասխանելով առաջին իսկ խելամիտ բառերով, որպիսիք լսեցի նրանից:

— Գոգֆրի, — ասաց նա: — Գուք երևի խելագարվե՞լ եք:

— Կյանքումս երբեք ավելի խելամիտ չեմ խոսել, թանկագինս, ձեր և իմ օգուտի տեսակետից: Մի հայացք գցեք ասպագային: Մի՞թե դուք պետք է ձեզ զոհարեք հանուն այն մարդու, որը երբեք չի իմացել իր նկատմամբ ձեր զգացմունքների մասին և որին որոշել եք այլևս երբեք չտեսնել: Արդյո՞ք ձեր իսկ նկատմամբ ձեր պարտքը չէ մոռանալ այդ գժբախտ սերը: Իսկ մի՞թե ձեզ հաջողվում է մոռացություն գտնել այն կյանքում, որ այժմ վարում եք: Գուք արդեն փորձել եք այդ կյանքը, և այն արդեն հոգնեցրել է ձեզ: Շրջապատեք ձեզ ավելի փե՛հ հետաքրքրություններով, քան այդ իրճուկ աշխարհիկ զվարճություններն են: Միրսը, որ սիրում ու հարդում է ձեզ,

ընտանեկան օջախը, որի հանգիստ ու երջանիկ պարտակա-  
նություններն օրեցօր կամացուկ ձեռք կտանեն իրենց կռից,  
փորձեցեք այդ սիրտիանքը, Ռեչել: Ես ձեզնից սեր չեմ խնդրում,  
ես գոհ կմնամ ձեր մտերմությամբ ու հարգանքով: Մնացածը  
թողեք... վստահորեն մնացածը թողեք ձեր ամուսնու նվիրա-  
ծությանն ու ժամանակին, որը բուժում է վերքերը, նույնիսկ  
այնպիսի խոր վերքերը, ինչպիսիք ձերն են:

Ռեչելն արդեն սկսում էր հակվել դեպի նրա հորդորները:  
Օ՛, ինչպիսի դաստիարակություն էր ստացել այդ աղջիկը:  
Օ՛, ինչպես բոլորովին այլ ձևով կվարվեի ես նրա փոխարեն:

— Մի դայթակղեք ինձ, Գոդֆրի, — ասաց Ռեչելը: — Ա-  
ռանց այդ էլ ես բավականաչափ դառնացած եմ ու դժբախտ  
էլ ավելի մի խորացրեք իմ դառնացածությունն ու դժբախտու-  
թյունը:

— Միայն մի հարց, Ռեչել: Ես ձեզ զզվանք չեմ ներշնչում:

— Դո՞ւք: Դուք միշտ դուր եք եկել ինձ: Այն բանից հետո,  
ինչ որ ինձ ասացիր, ես պարզապես անզգա կլինեի, եթե չը-  
հարգեի ձեզ ու շիրանայի ձեզնով:

— Սիրելի Ռեչել, իսկ արդյո՞ք շատ կանաչը կգտնեք,  
որոնք հարգելիս լինեն իրենց ամուսիններին ու հիանան նը-  
րանցով: Մինչդեռ նրանք շատ լավ են ապրում իրենց ամու-  
սինների հետ: Արդյո՞ք պսակագրության զնացող շատ հարու-  
նացուցներ կարող են իրենց սիրտը բացել իրենց նշանածներին:  
Մինչդեռ նրանց ամուսնությունը դժբախտ չի լինում, կամաց-  
կամաց ապրում են իրենց համար: Բանն այն է, որ կանաչը  
շատ ավելի հաճախ են ապաստան փնտրում ամուսնության  
մեջ, քան այդ նրանք կամենում են խոստովանել. գեռ ավելին,  
նրանք գտնում են, որ ամուսնությունն արդարացրել է իրենց  
հույսերը: Նորից դառնանք ձեր հարցին: Չեք սարիքում և ձեր  
գրավչությունը արդյո՞ք դուք իրավունք ունեք միայնակ կյան-  
քի դատաստանելու ձեզ: Ապավիհներ իմ աշխարհի մտցություն-  
ներ. ձեզ համար դա բուրբուրովին անթույլատրելի է, Դա հնարա-  
վոր է միայն ժամանակավորապես: Մի բանի տարի անց դուք  
կամուսնանա՞ր որևէ մեկ ուրիշի հետ: Կամ, թանկագինս,  
կամուսնանա՞ք այն մարդու հետ, որն այժմ ձեր սաքերի մոտ  
է և որը ձեր հարգանքն ու հիացմունքը վեր է դասում աշխար-  
հի որևէ այլ կնոջ սիրուց:

— Կամաց, Գողֆրի: Գուք փորձում եք ինձ համոզել այն բանում, ինչի մասին առաջներում երբեք չեմ մտածել: Գուք ինձ դալթակղում եք նոր հույսով այն ժամանակ, երբ իմ մնացած բոլոր հույսերը փլուզվել են: Նորից կրկնում եմ ձեզ. ես այնքան դժբախտ եմ հիմա, այնպիսի հուսահատութեան եմ հասել, որ եթե թևկուզ մի խոսք էլ տեսք, ես, թերևս, կընորոշեմ ամուսնանալ ձեզ հետ այդ պայմաններով: Օգտվեք այս նախազգուշացումից ու դնացեք:

— Ես ոտքի չեմ կանգնի, մինչև շատեք «այո»:

— Եթե ես «այո» ասեմ, դուք կզղջաք, ես էլ կզղջամ, երբ արդեն շատ ուշ կլինի:

— Երկուսս էլ կօրհնենք այն օրը, թանկագինս, երբ ես սյնդեցի, իսկ դուք դիջեցիք:

— Իրո՞ք այդքան հավատացած եք, ինչքան որ ասում եք:

— Ինքներիդ դատեցեք: Ես ասում եմ մեր սեփական ընտանիքում տեսածիս հիման վրա: Ասացեք, դուք ի՞նչ եք մտածում Յրիզինհոլի մեր ընտանիքի մասին: Մի՞թե հայրս ու մայրս բախտավոր չեն ապրում իրար հետ:

— Ընդհակառակը, որքան որ կարող եմ դատել:

— Մինչդեռ, ազգիկ ժամանակ մայրս, Ռեչել (դա դադունիք չէ մեր ընտանիքում), սիրել է, ինչպես դուք եք սիրում. իր սիրտը տվել է մի մարդու, որն արժանի չի եղել իրեն: Նա ամուսնացել է հորս հետ՝ նրան հարգելով, նրանով հիանալով, բայց ո՛չ ավելին: Արդյունքը ձեր աչքով եք տեսնում: Մի՞թե սրա մեջ խրախուսանք չկա ձեզ և ինձ համար:

— Գուք ինձ չե՞ք շտապեցնի, Գողֆրի:

— Ժամանակը դուք ինքներդ կնշանակեք:

— Ինձնից չե՞ք պահանջի ավելին, քան ես ի վիճակի կլինեմ:

— Հրեշտակու, ես սոսկ խնդրում եմ, որ դուք ձեզ հանձնեք ինձ:

— Ինձ հանձնում եմ ձեզ:

Այս ասելով՝ Ռեչելն ընդունեց նրա առաջարկությունը:

Գողֆրին մի նոր պոռթկումի մեջ ընկավ՝ այս անգամ մեղսական հիացմունքի պոռթկումի մեջ: Գողֆրին ավելի ու ավելի էր դեպի իրեն քաշում Ռեչելին, այնպես, որ իր դեմքն արդեն



— Ես ոտքի չեմ կանգնի, մինչև չասեք «այո»:

քովում էր նրա դեմքին, և այն ժամանակ... Ոչ, ևս, արդարև, չեմ հաւարձակելի արտահետե նկարագրել այդ տնվայելուչ արարքը: Միայն թույլ ավելք ասել, որ ևս սպասարաստվում էի նախքան այդ պատահելը աչքերս փակել և միայն մի ակնթարթ տշացաւ ևս, գիտեք ինչ, հուշս ունեի, թե Թեշելը կզիմագրի: Բայց նա հնազանդվեց: Իմ սեռի ամեն մի ողջախոհ անձնավորութեան համար ամբողջ հատորներ անգամ ոչինչ ավելին չէին կարող ասել:

Նման հարցերում իմ անմեղութեան անգամ սկսեց հասկանալ, թե ուր է հակվում այս տեսակցութունը: Այժմ նրանք այն աստիճան էին հասկանում իրար, որ ևս սպասում էի, թե նրանք անմիջապէս ձեռք-ձեռքի տված կզնան պսակվելու: Սակայն միտար Գողֆրիի հաջորդ խոսքերը հիշեցրին, որ պետք էր ևս մի զատարկ ձևակերպութուն կատարել: Գողֆրին նըստեց բազմոցի վրա՝ նրա մոտ (այս անգամ դա նրան շէր արդելվում):

— Կարո՞ղ եմ ձեր սիրասուն մտն ասել,— հարցրեց Գողֆրին:— Խե՞ր գա ինքներդ կաներ:

Թեշելը մերժեց և՛ մեկը, և՛ մյուսը:

— Ավելի լավ է թող մայրս մինչև ապաքինվելն այդ մասին ոչինչ չիմանաւ: Ես ուզում եմ սա գաղտնի պահել, Գողֆրի: Հիմա զնացեք և վերագարձեք իրեկոյան: Առանց այդ էլ այստեղ շատ նստեցինք երկուսով:

Թեշելը վեր կացավ և առաջին անգամ նայեց այն վտարիկ սենյակին, որտեղ ևս նահատակութեան էի ենթարկվում:

— Ո՞վ է իջեցրել այս վարագույրը,— բացականչեց նա:— Առանց այն էլ սենյակում տոթ է. ինչո՞ւ թարմ օդից զրկվել:

Նա մոտեցավ վարագույրին: Այն պահին, երբ նա դիպավ վարագույրին, այն պահին, երբ նա ինձ անխուսափելիորեն հայտնաբերելու էր սենյակում, հանկարծ աստիճանների վրա հայտնված կարմրերես երիտասարդ սպասավորի ձայնը կանգնեցրեց նրան ու ինձ խանդարեց որևէ բան ձեռնարկելու: Դա, անկասկած, ծայր աստիճան վախեցած մարդու ձայն էր:

— Միսս Թեշել,— գոռում էր նա:— Որտե՞ղ եք, միսս Թեշել:

Նա ընկրկեց վարագույրից ու նետվեց դեպի դուռը: Սենյակ մտավ սպասավորը: Նրա երեսի գույնը թուած էր: Նա ասաց.



— Խնդրում եմ՝ ներքև իջնեք: Միլեդին ուշափախվել է, ոչ մի կերպ չենք կարող ուշքի բերել:

Մեկ բոպե անց ես մենակ մնացի և իմ հերթին կարող էի աննկատելիորեն ներքև իջնել: Միսար Գուֆրին անցավ իմ մոտով, գնաց նախասրահ: Նա գնում էր բժշկի բերելու:

— Գնացեք և օգնեք նրանց, — ինձ մատնացույց անելով դուռը, ասաց նա:

Ռեչելին գտա բազմոցի մոտ ծնկի եկած: Մոր գլուխն ընկած էր նրա կրծքին: Քեռակնոջս դամբին պատճառով մի հայացքը (գիտենալով այն, ինչ ոք ես գիտեի) բավական էր սարսափելի ճշմարտութունն ինձ բացելու համար: Ես մտածումներս շարտահայտեցի մինչև բժշկի գալը: Նա շուտ եկավ. ամենից առաջ սենյակից դուրս հրավիրեց Ռեչելին, իսկ հետո բուրբիս ասաց, որ լեզի Վերինդերը վախճանվել է: Արմատացած անհավատության օրինակներով հետաքրքրվող լուրջ անձնավորութունների համար, թերևս, հետաքրքիր է լսել, որ բժշկը ինձ նայելիս խղճի խայթ զգալու նշաններ չգրասերեց:

Մի փոքր ավելի ուշ ես մտա ճաշասենյակ ու գրադարան: Քեռակինս մեռել էր առանց նամակներիցս որևէ մեկը բացելու: Դա այնքան ցնցեց ինձ, որ այդ սյահին մտքովս էլ չանցավ (այդ մասին հիշեցի մի քանի օր հետո), որ նա մեռել է՝ առանց խոստացված փոքրիկ ժառանգութունն ինձ թողնելու:

## Գ Լ ո խ Կ Լ

Հաջորդաբար շարադրելով անձամբ ապրածս ամենայն ինչ, այստեղ պետք է ասեմ, որ քեռակնոջս մահվանից հետո մի ամբողջ ամիս անցավ, մինչև ես նորից հանդիպեցի Ռեչել Վերինդերին: Նրա հետ նույն հարկի տակ անցկացրի մի քանի օր: Եվ հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ միսար Գուֆրի էբլուայթի հետ Ռեչելի նշանադրությանը վերաբերող մի կարևոր բան, որը առանձնահատուկ հիշատակութուն է պահանջում: Երբ ընտանեկան բազում անախորժութուններից այս վերջինը նկարագրված կլինի՝ իմ հեղինակային սյարտականությունը կավարտվի, որովհետև այդ ժամանակ ես հաջորդած

կլինեմ ւոյն ամենը, ինչ որ գիտեմ որպէս իրադարձությունների անմիջական (թեև տկամ) վկայ:

Քննականոք աճչունը կոնգոնից փոխադրվեց ու թողվեց իր սեփական պարտեզում՝ եկեղեցու մոտ գտնվող փոքրիկ դերեղմանատանը: Մյուս բոլոր աղագահանների հետ թաղմանը հրավիրվել էի նաև ես: Բայց ես (իմ կրօնական հայացքների ասկայությամբ) կարող էի միայն մի քանի օր հետո ուշքի գալ այն ցնցումից, որ ինձ պատճառել էր այդ մահը: Գրանից բացի, իմացել էի, որ հոգևհանգստի արարողությունը կատարելու է Ֆրիդրիխհոլի ռեկտորի Բայց քանի որ ես այդ կղերական հերձվածողին տեսել էի թղթախաղի սեղանի մոտ՝ որպէս լեզի Վերինդերի խաղընկեր, տալա, կասկածում եմ, արդյո՞ք լավ կվարվեի՝ թաղմանը մասնակցելով, եթև նույնիսկ ի վիճակի լինեի մեկնելու:

Լեզի Վերինդերի մահվանից հետո նրա դուստրն անցավ հանդուցյալի փեսա միստր էբլուայթ-ավագի խնամակալության տակ: Կտակի համաձայն, նա Ռեչելի խնամակալ էր նշանակված մինչև սրա ամուսնությունը կամ չափահաս դառնալը: Ենթադրում եմ, որ միստր Գոգֆրին հորը իրազեկ էր դարձրել դարմուհու հետ իր նոր հարաբերությունների մասին: Ինչ էլ որ լիներ, քեռականոք մահվանից տասն օր հետո Ռեչելի նշանադրությունն արդեն շաղտնիք չէր քնտանեկան շրջանակներում, և միստր էբլուայթ-ավագի՝ մեկ ուրիշ կատարյալ հերձվածողի համար կարևոր դարձավ իր խնամակալական իշխանությունը հնարավորին չափ հաճելի դարձնել երիտասարդ հարուստ աղջկա համար, որն ամուսնանում է իր որդու հետ:

Սկզբում Ռեչելը շատ հոգսեր պատճառեց նրան՝ կապված իր ապրելաանողն ընտրելու հետ: Մոնտեքյու-պուրակում գտնվող տունը աղջկան հիշեցնում էր մօր մահը: Յորքշիրի տունը նրան հիշեցնում էր կուսնաբարի անհետացման հետ կապված աղմկահարույց գեպքը: Աղջկա խնամակալի ֆրիդրիխհոլյան բստանը չէր հիշեցնում ոչ այս, ոչ այն, բայց Ռեչելի ներկայությունն այդ տանը, վերջերս ունեցած նրա կորստից հետո, կխանգարեր վարմուհիների՝ օրիորդ էբլուայթների զվարճությանը, և նա ինքը խնդրեց, որպեսզի իր այդտեղ գնալը հետաձգվի մինչև առավել հարմար ժամանակ: Ավարտվեց նը-

բանով, որ ծեր էրլուայիք մեռելիքն տաշարկեց և անհապարակ  
տուն վարձել Բրայտոնում: Նրա կիսն ու հիվանդ դուստրը  
պետք է այնտեղ ապրեին մեռելի հետ, իսկ ինքը պատրաստ-  
վում էր նրանց մոտ գալ ավելի ուշ: Նրանք ոչ մի հասարակու-  
թյուն չեն ընդունի, բացի փոքրաթիվ հին ընկերներեից, իսկ իր  
որդի Գուլֆրին, լոնդոնյան գնացքով ետ ու առաջ երթնեկելիս,  
միշտ պատրաստ կլինի ծառայելու նրանց:

Մի տեղից մյուսը կատարվող այդ անիմաստ տեղափոխու-  
թյունը, այդ անհաղորդ տազնապը և հոգեկան անհավոր չնա-  
ցումը ես նկարագրում եմ այն վերջնական արդյունքի համար,  
որին դրանք հանդիպին: Բրայտոնում տուն վարձելը եղավ այն-  
պիսի մի իրադարձություն, որը նախախնամության կամքով  
ինձ նորից հանդիպեցրեց մեռել վերինդերի հետ:

Միսիս էրլուայիք, որ քեռակնոջա բուլքն է և որին մորա-  
քույր եմ ասում, խարտիշահեր, լուսկյաց, լիքը-լիքը կին էր և  
բնավորության մի երեկի դիժ ուներ. կյանքում երբևք ոչինչ  
չէր արել ինքն իր համար: Նա ամբողջ կյանքն ապրել էր՝ ամեն  
ինչում օգտվելով ուրիշի օգնությունից և ամեն ինչում հենվե-  
լով ուրիշի կարծիքի վրա: Հոգևոր սեռակետից ավելի անհու-  
սալի անձնավորության երբևք չէի հանդիպել. էլ ինչպե՞ս կա-  
րելի է ազդել այդպիսի բնավորության վրա, եթե այն ընդհան-  
րապես չկա: Մորաքույր էրլուայիք նույնպիսի ուշադրությամբ  
կլսեր Տիրևի դալայ-լամային, ինչպես որ ինձ էր լսում, և նրա  
հայացքների մասին կդատեր նույնպիսի պատրաստակամու-  
թյամբ, ինչպես որ իմ հայացքների մասին էր պատում: Նա  
կանգ էր առել լոնդոնյան հյուրանոցում և, բազմոցին պտտեալ,  
իր որդու օգնությամբ տուն էր վարձել Բրայտոնում: Անհրա-  
ժեշտ սպասավորներ հարել էր առավուսը անկողնում նախա-  
ճաշելիս (միևնույն հյուրանոցում). նա իր աղախնուն թույլ էր  
տվել դրսանել այն պայմանով, որպեսզի սա «ղթոսներուց  
առաջ իրեն մի փոքրիկ հաճույք պատճառե՝ զնալով միսս  
Կլակի ետեից»: Փամը տաճնեկին նրա մոտ գալով՝ նրան  
գտա դեռևս կապոտով. նա հովհարով հանդիստ հով էր անում  
իրեն:

— Միբեղի Գրուզիլա, ինձ ծառաներ են հարկավոր: Գուր  
այնքան խելացի եք. խնդրում եմ ինձ համար ծառաներ վարձեք:

Տօ ուշադիր նայեցի շատ վարժած սենյակեր: Եկեղեցու դան-  
դերը հրավիրում էին պատարագի. նրանք ինձ ներշնչեցին  
մտերմական հորոգքանքի խոսք ասելու:

— Ախ, մորաքույր, — ախոր ասացի ես: — Մի՞թե դա  
վայել է քրիստոնեւոհուն ու անզրուհուն: Մի՞թե այդ ձեռով  
պետք է կատարվի մեր հավիտենություն անցնելը:

Մորաքույրս պատասխանեց.

— Ես կհաղնվեմ, Գրուզիլա, եթե բարի լինեք օրնել ինձ:

Ի՞նչ կարելի էր ասել սրանից հետո: Ես հրաշքներ էի գոր-  
ծել մաքղութաններէ հետ, մինչդեռ մի մատ անգամ առաջ  
չէի շարժվել մորաքույր էբրտայթի հարցում:

— Որտե՞ղ է, — ասացի ես, — ձեզ հարկավոր ծառաների  
ցուցակը:

Մորաքույրը գլուխն օրորեց: Նա նույնիսկ ջուրակն իր մտ  
պահելու կարողություն չուներ:

— Ռեչելի մտ է, հոգչակս, — ասաց նա, — այն սենյակում:

Ես գնացի այդ սենյակը և, այդպիսով, նորից տեսա Ռեչելին,  
Մանտեքու-պուրակում նրանից բաժանվելուց հետո առաջին  
անգամ:

Խոր սգո մեջ՝ նա խղճահարության աստիճան փոքրիկ ու  
նիհար էր թվում: Եթե ես լուրջ նշանակութուն տալիս լինեի  
այնպիսի ոռնայն, շնչին բաների, ինչպիսին է մարդկային ար-  
տաքինը, ապա կարող էի ավելացնել, որ նրա դեմքի գույնն  
այնպիսին էր, որը, դժբախտաբար, միշտ կորչում է, եթե որևէ  
սպիտակ բանով չի նրբերանգվում վրի մոտ: Ի մեծ զարմանս  
իմ, երբ սենյակ մտա, Ռեչելը վեր կացավ և ինձ դիմալորեց  
ձեռքը պարզած:

— Ուրախ եմ ձեզ տեսնելու համար, — ասաց նա, — Գրու-  
զիլա, առաջներում ես սովորութուն եմ ունեցել ձեզ հետ խո-  
սելու շատ անխոհեմորեն ու շատ կոպիտ ձեռով: Ներողութուն  
եմ խնդրում ձեզնից. հույս ունեմ՝ կներեք ինձ:

Դեմքս, թերևս, զարմանք արտահայտեց, որը ես զգացի  
այդ խոսքերը լսելիս: Ռեչելը կարմրեց, իսկ հետո շարունակեց  
իր բացատրությունը:

— Խեղճ մորս կենդանության օրոք նրա բարեկամները  
միշտ չէ, որ իմ բարեկամներն էին: Հիմա, երբ զրկվել եմ նը-  
րանից, սիրտս սիրտիանք գտնելու համար դիմում է այն

մարդկանց, որոնց նա սիրում էր: նա սիրում էր ձեզ: Աշխատեցիք լինել իմ բարեկամը, Գրուղիւլա, եթե կարող եք:

Նրա սիրալիրութեանը արձագանքելով ինձ մատչելի ամենայն բարչտայակամութեամբ, նրա խնդրանքով նստեցի իր մոտ, բազմացի վրա: Սկսեցինք խոսել ընտանեկան դորձերից ու ապագա ծրագրերից, այլ խոսքով՝ ամեն ինչից, բացառութեամբ միայն մի ծրագրի, որն ավարտվելու էր հարսանիքով: Ինչքան էլ որ ջանում էի խոսակցութեանը դարձնել այդ կողմի վրա, նա վճռականաբար հրաժարվում էր իմ ակնարկումսնէր հասկանալուց: Այժմ մի նոր հետաքրքրութեամբ նայելով նրան և վերհիշելով, թե ինչպիսի շատածված արագութեամբ նա ընդունեց միտոր Գողֆրիի առաջարկութեանը, ևս իմ սրբազան պարտքը համարեցի հռանդուն միջամտել և վաղորոք հավատացած էի բացառիկ հաջողութեանը: Այդ հաջողութեան դրավականը, ինչպես որ ենթադրում էի, արագ գործեցն էր: Նա անմիջապես վերադարձա կահավորված տան համար անհրաժեշտ ծառաների հարցին:

— Հոգյակս, որտե՞ղ է ցուցակը:

Ռեչելը ցուցակը արվեց ինձ:

— «Խոհարարուհի, աման լվացող, աղախին և սղասավոր», — կարդացի ես: — Սիրելի Ռեչել, այս ծառաները հարկավոր են միայն այնքան ժամանակի համար, ինչքան ժամանակով որ ձեր խնամակալը վարձել է այս տունը: Մեզ համար շատ դժվար կլինի գտնել ազնիվ ու փորձառու ծառաներ, որոնք կհամարձակվեն վարձվել այդքան կարճ ժամանակով, եթե լոնդոնում փնտրենք նրանց: Բրայտոնում տունը վարձված է:

— Այո: Վարձակալել է Գողֆրին, և այդ տան ծառաներն էլ խնդրել են, որ նա թողնի իրենց: Նա հավատացած չի եղել, թե նրանք պիտանի են մեզ համար, և վերադարձել է առանց որևէ բան վճռելու:

— Իսկ ինքներդ փորձված չե՞ք այդպիսի բաներում, Ռեչել:

— Այնքան էլ չէ:

— Իսկ մորաքույր էբլուայթը չի՞ ուղում նեղութուն առ իրեն:

— Այո: Մի դատապարտեք այդ խեղճ կնոջը, Գրուղիւլա:

Սա կարծում եմ, որ դա այն միակ բախտավոր կինն է, որին  
ևս կրքեւէ հանդիպել եմ:

— Բախտավորութեան տարբեր աստիճաններ կան, բարե-  
կամս: Մենք պետք է մի անգամ նստենք ու խոսենք այդ մա-  
սին: Իսկ առայժմ ես ինձ վրա կլիերցնեմ ծառաների ընտրու-  
թեան դժվարին գործը: Թող ձեր մտաբույրը նամակ գրի Բը-  
բայտոնի տան ծառաներին:

— Նա նամակը կստորագրի, եթե նամակը ես դրեմ նրա  
վտխարեն. իսկ դա նույն բանն է:

— Բացարձակապես նույն բանն է: Սա կլիերցնեմ նամակն  
ու վաղը կմեկնեմ Բրայտոն:

— Որքան բարի՛ եք: Մենք ձեզ մոտ կգանք, երբ ամեն ինչ  
արդեն պատրաստ կլինի: Հուսով եմ, որ դուք դեռ որոշ ժամա-  
նակ կմնաք ինձ մոտ: Բրայտոնը միշտ էլ շատ աշխույժ է. ձեզ,  
երեւի, դուր դա:

Ահա թե ինչպիսի խոսքերով հրավիրվեցի ես, և ամեն ինչին  
միջամտելու փառսն հնարավորութեան բացվեց իմ առջև:

Այս խոսակցութեանը տեղի ունեցավ շարաթվա կեսին:  
Շաբաթ օրն արդեն տունը նրանց համար սպասարատ էր: Այդ  
կարճ ժամանակամիջոցում ես ստուգեցի ինձ պիմող բոլոր  
ծառաների ոչ միայն հանձնարարականները, այլև նրանց  
կրօնական հայացքները և հասցրի ընտրութեան կատարել,  
որին հաշտեցնելու սովեց իմ խիղճը: Սա նաև դտա ու այցելեցի  
այդ քաղաքում ապրող իմ երկու լուրջ բարեկամներին, որոնց  
կարող էի վստահել ինձ Բրայտոն բերած բարեպաշտական  
նպատակը: Նրանցից մեկը, որ հոգևոր աստիճան ուներ, ինձ  
օգնեց մեր փոքր ընկերության համար տեղեր ձեռք բերելու  
այն եկեղեցում, որտեղ ինքը ծառայում էր: Մյուս բարեկամս,  
որ ինձ նման շամուսնացած կին էր, լիովին իմ տրամադրու-  
թեան տակ գրեց իր դրողարանը (ամբողջովին թանկարժեք  
գրքերից բաղկացած): Նրանից վերջրի նաև կես դյուծինի շափ  
երկեր, որ ինձամբով ընտրված էին Ռեչելի համար: Դրանք  
շատ հարմար ձևով տեղավորելով այն սենյակներում, որ նա  
պետք է գրադեցներ, ես նախապատրաստութուններս ավարտ-  
ված համարեցի: Իրեն սպասարկող ծառաների հանդեպ հա-  
վատի անսասան ամբողջ, իրեն քարոզող քահանայի հանդեպ  
հավատի անսասան ամբողջ, իր սեղանի վրա ընկած գրքերի

հանդեպ հավատի անստատան ամբողջ-այսպիսին էր այն եռակի նվերը, որ իմ ջանացողությունը պատրաստել էր արբացած աղջկա համար: Երկնաչին անդորրությամբ էր լցված իմ հոգին այն շարաթ օրը, երբ ես, լուսամուտի մոտ նստած, իմ աղգականուհիների գալուն էի սպասում: Մին բաղմություններ էին ունեցնել շարժվում իմ աչքի առաջ: Ա՛խ, այդ մարդկանցից շատե՞րն էին, արդյոք, ինձ նման գիտակցում, որ իրենք անբասիր էտարել էին իրենց պարտականությունները: Մարսափելի հարց է: Կանդ շտանենք դրա վրա:

Ժամը յոթին նրանք ժամանեցին: Ի մեծ դարմանս իմ, նրանց ուղեկցում էր ոչ թե միսար Գոգֆրին (ինչպես որ սպասում էի), այլ փաստաբանը՝ միսար Բրեֆը:

— Ինչպե՞ս եք, միսս Կլակ, — ասաց նա: — Այս անգամ էս մտադիր եմ մնալ:

Այս ակնարկությունը այն բանից հետո, երբ ես Մոնաքյուպուրակում նրան ստիպել էի իր գործերով նահանջել իմ գործի առջև, ինձ համոզեց, որ ծեր մեղավորը Բրայսոնն է եկել ինչ-որ հատուկ նպատակներով: Ես մի փոքրիկ դրախտ էի պատրաստել իմ սիրեցյալ Ռեչելի համար, բայց ահա արդեն հայտնվում է գայթակղիչ օձը:

— Դրուզիլա, Գոգֆրին ափսոսաց, որ չէր կարող մեզ հետ գալ, — ասաց մորաքույր էբլուայթը: — Ինչ-որ բան նրան պատահեց լոնդոնում: Միսար Բրեֆը կամեցավ զբաղեցնել նրա տեղը և մինչև երկուշաբթի մնալ մեզ մոտ: Ի դեպ, միսար Բրեֆ, բժիշկն ինձ պատվիրել է մոցիտոն կատարել, իսկ դա ինձ դուր չի գալիս ամենևին: Ահա... — ավելացրեց մորաքույր էբլուայթը, պատուհանից մատնացույց անելով մի հիվանդի, որին բազկաթոռի մեջ նստեցրած քշում էր ծառան, — ահա մոցիտոնի իմ իդեալը: Եթե օդ է հարկավոր ձեզ, դրանից կարող եք օգտվել բազկաթոռի մեջ նստած, իսկ եթե հոգնություն է հարկավոր ձեզ, հավատացած եմ, կարելի է բավականաչափ հոգնել այս ծառային նայելով:

Ռեչելը լուռ կանգնել էր լուսամուտի մոտ՝ հայացքը ծովին հառած:

— Հոգնե՞լ եք, բարեկամս, — հարցրի ես:

— Ոչ: Միայն մի քիչ տխուր եմ, — պատասխանեց նա: — Ես հաճախ եմ ծովը տեսել մեր յորքշիրյան ափից՝ նույնպիսի

լուսավորութեամբ: Եւ, Գրուզիլլա, մտածում եմ այն օրերի մասին, որոնք երբեք չեն վերադառնա:

Միստր Բրեֆը մնաց և՛ ճաշին, և՛ ամբողջ երեկոն: Որքան ավելի Լրկար էի նայում նրան, այնքան ավելի շատ էի համոզվում, որ նա Բրայտոն է եկել ինչ-որ դադտնի նպատակով: Ես ուշադիր հետևում էի նրան: Նա շատ անբունադժոխի տեսք էր քննում և, առանց դադար տալու, անաստված անմտութեաններ շողակրատեց այնքան ժամանակ, մինչև որ անհրաժեշտ ժամը հասավ: Երբ նա Ռեշելի ձեռքն էր սեղմում, նկատեցի, որ նրա խիստ ու խորամանկ աչքերը մի առանձին հետաքրքրութեամբ ու ուշադրութեամբ լի երկարատև հայացք պեցեցին Ռեշելի վրա: Նրա առաջադրած նպատակը, ըստ երևույթին, վերաբերում էր աղջկան: Հրաժեշտ տալիս նա առանձնապես ուշինչ շատաց ոչ Ռեշելին, ոչ էլ մեկ ուրիշի: Նա այնպես արեց, որ իրեն հրավիրեն հաջորդ օրվա նախաճաշին, և գնաց հյուրանոց գիշերելու:

Հաջորդ առավոտ ոչ մի հնարավորութեան չեղավ մտրաքոյր էբլուայթին ստիպելու, որ հանի կապտը, որպեսզի հասցնի հագնվել եկեղեցի գնալու համար: Նրա հիվանդ աղջիկը (որը, իմ կարծիքով, ոչ մի հիվանդութեամբ չի տառապում, բացի մտրից ժառանգած անբունեի ծուլութունից) հայտարարեց, թե ինքը մտադիր է ամբողջ օրն անցկացնել անկողնում: Եկեղեցի գնացինք միայն ես ու Ռեշելը: Իմ շնորհաշատ բարեկամը մի հոյակապ քարոզ կարդաց փոքրիկ մեղանշումների նկատմամբ աշխարհի հեթանոսական անտարբերութեան մասին: Մեկ ժամից ավելի նրա սերճախոսութեանը թնդաց սուրբ տաճարում: Երբ դուրս էինք գալիս եկեղեցուց, Ռեշելից հարցրի.

— Արդյո՞ք սա ճանապարհ հաթեց պեպի ձեր սիրտը, բարեկամս:

Նա պատասխանեց.

— Ոչ, միայն դուրս սկսեց սաստիկ ցավել:

Այդպիսի պատասխանը կարող էր շատերին վհատեցնել: Բայց երբ հոգեփրկիչ ճանապարհ եմ ոտք դնում ես, ինձ ոչինչ չի վհատեցնում:

Երբ մենք վերադարձանք՝ մտրաքոյր էբլուայթին ու միստր Բրեֆն արդեն նախաճաշում էին: Գլխացույցը վկայակոչելով՝



Ռեշելը հրաժարւից նախանշելուց, և խորամանկ վաստա-  
բանն անմիջապէս օգտվեց զրանից:

— Գլխացավի համար միայն մի դեղ էա,— առաց այդ  
զղվելի ծերուկը.— ձեզ, միսս Ռեշել, կրու՞մի զբոսանքը: Պատ-  
րաստ եմ ձեզ ծառայելու, ձեռքս բռնելու պատիվ կանե՞ք ինձ:

— Շատ մեծ հաճույքով. ինքս էլ շատ-շատ եմ ուզում  
զբոսնել:

— Արդեն Երկուսն անց է,— համեատքեն նկատեցի ես,—  
իսկ պատարագը, Ռեշել, սկսվում է երեքին:

— Մի՞թե կարծում եք, որ ես այսպիսի գլխացավով,— քմա-  
հաճորեն առաց նա,— նուրից կկեղեցի կդնամ:

Միստր Բրեքը ստրկամտորեն գուռը բացեց նրա առջև, և  
նույն պահին Երկուսն էլ դուրս եկան անից: Չգիտեմ, արդո՞ւք  
երբեք ավելի ուժեղ եմ միջամտելու սրբազան պաճանջ զպա-  
ցել, քան այդ բոսկիին: Բայց ի՞նչ կարելի էր անել: Ոչինչ: Բա-  
ցի նույն օրը ավելի ուշ առաջին իսկ հարմար առիթով միջա-  
մտելուց:

Սրբ ես վերադարձել էի կեղեցուց, և նրանք էլ վերադարձել  
էին զբոսանքից, փաստաբանի առաջին իսկ հայացքն ինձ հա-  
մողեց, որ նա Ռեշելին ասել էր այն ամենը, ինչ որ պատրաստ-  
վում էր ասել: Առաջներում երբեք այդքան լուակցաց ու մտա-  
խոհ չէի տեսել Ռեշելին: Առաջներում երբեք չէի տեսել, որ  
միստր Բրեքն այդպիսի նվիրվածություն, այդպիսի ուշադ-  
րություն ցուցաբերած լինէր նրա նկատմամբ և այդպիսի բա-  
ցահայտ հարգանքով նայէր նրան: Նա հայտարարեց (գուցե  
հնարելով), որ ճաշի է հրավիրված, և շուտ հրաժեշտ տվեց  
մեզ, մտադիր լինելով առավոտյան առաջին իսկ գնացքով  
վերադառնալ Լոնդոն:

— Դուք հաստա՞տ եք ձեր քնդունած որոշման մեջ,— զուսն  
շեմին հարցրեց նա Ռեշելին:

— Միանգամայն հաստատ եմ,— պատասխանեց նա. և  
այդպես էլ բաժանվեցին:

Բրեքի գնալուն պես Ռեշելն անցավ իր սենյակը: Նա ճա-  
շելու դուրս չեկավ: Նրա աղախինը (հենց այն մեկը, որը ժա-  
պավեններով շորադլխարկ է կրում) եկավ ներքև ասելու, որ  
իբ օրիորդը նորից գլխացավ ունի: Ես վաղելով գնացի նրա  
մոտ, փակ դուռն միջով նրան առաջարկելով իմ քույրական

ծառայութիւնները: Բայց դուրը փակ մնաց. Ռեչելը չբացեց: Ինչքան խողընդոտներ պետք է հայթհասութի ես: Այդ փակ դուրը տեսնելով՝ ուժերի նոր հորձանք ու ոգևորութիւնս վղացի:

Երբ հաջորդ առաւոտ մի բաժակ թեյ տարան նրան, ես սպասուհու ետեից մտա ներս: Նստեցի Ռեչելի անկողնու մոտ և մի քանի սրտահուլ խոսք ասացի նրան: Նա ասածներս լսեց ցրված քաղաքավարութեամբ: Սեղանի մի անկյունում իրար վրա թափված սեսա իմ բարեպաշտ բարեկամի թանկարժեք հրատարակութիւնները: Արդ՛յո՞ք Ռեչելն աչքի անցկացրել է դրանք: Այո, բայց այդ դրբուկները նրան չեն հետաքրքրել: Թույլ կտա՞, արդ՛յոք, որ իր համար բարձրաձայն կարգամ մի քանի շափաղանց հետաքրքիր կտոր, որոնք, հալանաբար, վրիպել են իր ուշադրութիւնից: Ոչ, ո՛չ հիմա, ինքը պետք է ուրիշ բանի մասին մտածի: Այս պատասխանը տալիս նա, մտասույզ, իր գիշերաղգեստի թելակապերի հետ էր խաղում: Հարկավոր է նրա ուշադրութիւնը գրավել իր համար թանկ աշխարհիկ հետաքրքրութիւններին վերաբերող սրէէ ակնարկ անելով:

— Գիտե՞ք, բարեկամս, — ասացի ես, — երեկ միտար Բրեֆի հետ կապված մի տարօրինակ բան անցավ մտքովս: Զբոսանքից հետո ձեզ նրա հետ տեսնելով, ես որոշեցի, որ նա ինչ-որ մի անախորժ լուր է հաղորդել ձեզ:

Նա բաց թողեց գիշերաղգեստի թելակապերը, և նրա կատաղութեամբ լի սև աչքերն ուղղակի փայլատակեցին:

— Ամենեին ոչ: Ինձ համար շատ հետաքրքիր էր լսել այդ նորութիւնը, և դրա համար ես խորապէս շնորհապարտ եմ միտար Բրեֆին:

— Այո՞, — հեղ հետաքրքրութեան ձայներանդով ասացի ես: Նա նորից սկսեց մտաներով խաղալ թելակապերի հետ ու մոռցադեմ շրջվեց ինձնից: Իմ բարի գործերը կատարելիս ես հարյուրավոր անգամներ դեմ եմ առել այդպիսի վերաբերմունքի: Այս անգամ էլ դա սոսկ մղեց մի նոր փորձ կատարելու: Նրա հոգին փրկելու իմ եռանդուն ջանացողութեան մեջ ես որոշեցի մեծ ոփսկի դիմել և բացեիբաց ակնարկեցի նրա նշանադրութիւնը:

— Զեզ համար հետաքրքիր նորութիւն՞, — կրկնեցի ես:—

Դա, սիրելի Ռեչել, հավանաբար, լուր է միտոր Գողթրի է-բլուայթի մասին:

Նա, սաստիկ դուռնաոված, փոքր-ինչ բարձրացավ տեղից և, ըստ երևույթին, պատրաստովում էր նախկին անսանձ հանգրգնությունամբ սպասախանել ինձ: Բայց իրեն դսպեց. գլուխը նորից իջեցրեց բարձին, մի պահ մտածեց, իսկ հետո հետեվ-յալ ուշագրավ բաներն արտասանեց.

— Ես երբեք չեմ ամուսնանա միտոր Գողթրի էբլուայթի հետ:

— Հասավ տեղից վեր թռչելու իմ հերթը:

— Ի՞նչ եք ուզում ասել, — բացականչեցի ես: — Այդ ամուսնությունը վճռված բուն են համարում ձեր բոլոր ազգականները:

— Սպասվում է, որ միտոր Գողթրի էբլուայթն այստեղ կգա վաղը, — մոռյլորեն ասոց նա: — Սպասեցեք մինչև նույն կգա, և դուք կտեսնեք:

— Բայց, սիրելի Ռեչել...

Նա հնչեցրեց իր գլխավերևում կախված դանդակը: Հայտնի էր ժապավեններ ունեցող շորագլխարկով աղախինը:

— Պեննելոպե, լողարանը:

Պատշաճը հատուցենք նրան: Զգացմունքներին այն ժամանակվա վիճակի առկայությունամբ նա գտավ այն միակ հնարավոր եղանակը, որը կարող էր ինձ ստիպել դուրս գալ սենյակից:

Ռեչելը ներքև իջավ նախաճաշելու, բայց ոչինչ չկերավ և գրեթե ամբողջ ժամանակ լուռ էր: Նախաճաշից հետո նա «անպատակ» թափառեց սենյակից-սենյակ, հետո հանկարծ «թափվեց ու բացեց դաշնամուրը: Նվագելու համար նրա ընտրած երաժշտությունն անսպասելիորեն մեղսական բնույթի էր, վերցված բեմական այն ներկայացումներից, որոնց մասին չի կարելի մտածել առանց արյունը երակներում սառչելու: Ես թաքուն իմացա, թե որ ժամին են սպասում միտոր Գողթրի էբլուայթին, իսկ հետո, տնից դուրս սլոժնելով, ազատվեցի այդ երաժշտությունից:

Մենակ մնալով, օգտվեցի առիթից և այցելեցի տեղի իմ ծրուխ բարեկամներին: Դա աննկարագրելի երանություն էր՝ նորից քեզ վզալ լուրջ մարդկանց հետ լուրջ խոսակցությամբ

զբաղւլամ: Անտահման քաջալիբլամ ու թարմացած, ոտնաթա-  
թիրս ետ դուրծրի հշորի սպասված ժամանումից բավակա-  
նուշափ առաջ: Մտա ճաշասրահ, որն այդ ժամին միշտ գա-  
տարկ էր լինում, և դեմ առ դեմ հանդիպեցի միսար Գողֆրի  
էբլուայթին:

Նա փախչելու ոչ մի փորձ չարեց, ընդհակառակը, չափից  
դուրս հասկնալորեն մոտեցավ ինձ:

— Թանկագին միսս կլտկ, հենց ձեզ էլ սպասում էի: Պա-  
տահարար իմ ենթադրածից վաղ ազատվեցի լոնդոնյան գոր-  
ծերիցս և այստեղ հասա նշանակված ժամանակից շուտ:

Նրա բացատրության մեջ շնչին իսկ շփոթություն չէր զը-  
գացվում, թեև Մոնտեֆյուս-պուրակում տեղի ունեցած տեսա-  
քանից հետո դա մեր առաջին հանդիպումն էր:

— Ռեչելին տեսե՞լ եք, — հարցրի ես: Նա հեղաբարո հա-  
ռաչեց ու բռնեց ձեռքս: Իհարկե ձեռքս դուրս կքաշեի, եթե  
նրա սպասասխանի երանգը չապշեցնեիր ինձ:

— Ռեչելին տեսել եմ, — միանգամայն հանդիստ ասաց նա: —  
Ձեզ հայտնի՞ է, թանկագին բարեկամս, որ նա նշանված  
էր ինձ հետ: Բայց հանկարծ սրտշկ է ետ վերցնել իշ խոսքը:  
Մտորումները նրան համոզել են, որ մեր երկուսիս բարօրու-  
թյան համար ավելի լավ կլինի, եթե ինքը ետ վերցնի իր շը-  
մտածված խոստումը և մեկ ուրիշ, ավելի երջանիկ ընտրու-  
թյուն կատարելու ազտություն տա ինձ: Սա միակ սպառճա-  
սքն է, որ վկայակոչում է նա, և միակ պատասխանը, որ տա-  
լիս է ինձ:

— Իսկ ի՞նչ եք արել դուք ձեր կողմից, — հարցրի ես: — Են-  
թարկվե՞լ եք:

— Սյո, — շատ անվրդով հանգստությամբ սպասասխանեց  
նա, — ես ենթարկվել եմ:

Այդպիսի հանգամանքներում Գողֆրիի վերաբերմուն-  
քըն այնքան անհասկանալի էր, որ ես դարմանքից քար կըտ-  
րեցի, մինչդեռ ձեռքս դրված էր նրա ձեռքի վրա: Աչքերը շը-  
ռած որևէ մեկին նայելը լավ բան չէ, իսկ ջենտլմենին նայելը՝  
անքաղաքալտրություն: Այդ երկու անվայել արարքն էլ գոր-  
ծեցի ես: Եվ ասես քնի մեջ արտաբերեցի.

— Դա ի՞նչ է նշանակում:

—Թույլ տվեք ամեն ինչ սլատմել ձեզ,—պատասխանեց նա,—և, ավելի լավ է, եկեք նստենք:

Նա ինձ մոտեցրեց բազկաթոռին: Ազոտ կերպով հիշում եմ, որ նա շատ ուշադիր էր: Կարծեմ, ինձ պահելու համար, ձեռքով գրկեց իրանս, թեև դա հաստատ չգիտեմ: Ես բոլորովին անօգնական էի, իսկ տիկնանց հետ նրա վերաբերմունքը միշտ այնքան սրտարժու էր: Համենայնդեպս՝ մենք նստեցինք: Եթե ուրիշ ոչ մի բանի համար չեմ կարող երաշխավորել, ապա սրա համար կարող եմ երաշխավորել:

## Գ Լ ու լ Վ Մ

—Ես զրկվեցի հմայիչ հարսնացուից, հրաշալի հասարակական դիրքից ու հարուստ եկամտից,— սկսեց միտք Գուգրին,—և դրան հնազանդվեցի առանց պայքարի: Ի՞նչը կարող է լինել այս արտասովոր վարմունքի պատճառը: Իմ թանկագին բարեկամ, պատճառ չկա:

—Պատճառ չկա,— կրկնեցի ես:

—Թույլ տվեք, թանկագին միսս Կլակ, համեմատություն համար օրինակ բերել երեսային,— շարունակեց նա:—Երեսխան համատեղում է մի շարք տարօրինակ արարքներ: Գուգր զարմացած եք և վործում եք պատճառն իմանալու: Խեղճ մարդըն անկարող է ձեզ բացատրել այդ պատճառը: Գուգր ճիշտ այդպես կարող եք հարցնել խոտերին, թե ինչու են իրենք աճում, և թռչուններին, թե ինչու են երգում: Ճիշտ այդպես, տվյալ դեպքում ես նման եմ սիրասուն երեսային, խոտերին, թռչուններին: Ես չգիտեմ, թե ինչու առաջարկություն արեցի միսս Վերինդերին: Ես չգիտեմ, թե ինչու ամոթալի կերպով անտեսեցի իմ սիրելի տիկնանց: Ես չգիտեմ, թե ինչպես կարող էի հրաժարվել «Մայրական հոգացողություն կոմիտեից»: Գուգր երեսային ասում եք՝ ինչո՞ւ ես կամակորուսյուն անում: Իսկ այդ հրեշտակը մատը մտցնում է բերանը և ինքն էլ չգիտե: Ճիշտ այնպես, ինչպես ես, միսս Կլակ: Սա ես ուրիշ ոչ մեկին չեմ կարող խոստովանել: Բայց պարտավորված եմ զգում խոստովանելու ձեզ:

Ես սկսեցի ուշքի գալ: Ինձ առաջարկվում էր հասկանալ մի

բարոյական խնդիր: Բարոյական խնդիրներն ինձ շատ-շատ են հետաքրքրում և ես, կարծում եմ, բավականաչափ հմուտ եմ գրանց լուծման մեջ:

— Դուք, որ մտերիմներիցս լավագույնն եք, սրեք ձեր միտքը և օգնեք ինձ, — շարունակեց նա: — Ասացեք, ինչո՞ւ եղավ այնպիսի մի ժամանակ, երբ իմ ամուսնական ծրագրերը երազի նման բան են թվում ինձ: Ինչո՞ւ հանկարծ մտքովս անցավ, թե իմ իսկական երջանկությունը նրանում է, որ իմ սիրելի տիկնանց օգնեմ համեստ, օգտակար գործեր կատարելու մեջ և որ սակավաթիվ համոզիչ խոսքեր արտասանեմ, երբ նախագահն է ինձ կանչում: Ինչի՞ս է պետք հասարակական դիրքը: Ինչի՞ս է պետք և կամուտը: Առանց այդ էլ ես կարող եմ վճարել իմ հանապազօրյա հացի համար, իմ փոքրիկ բնակարանի համար և տարեկան երկու ֆրակի համար: Իմ ինչի՞ն է պետք միսս Վերինդերը: Նա իր բերանով ինձ խոստովանեց, սա մեր մեջ, սիրելի միսս Կլակ, որ սիրում է ուրիշի և ինձ հետ ամուսնանում է սոսկ նրա համար, որպեսզի հնարավորին չափ շուտ մտքից հանի նրան: Ինչպիսի՞ ահավոր միություն: Օ, աստված իմ, ինչպիսի՞ ահավոր միություն: Ահա թե ինչի շուրջն էի խորհրդածում ես, միսս Կլակ, Բրայտոն գալու ճանապարհին: Ռեչելի մոտ հայտնվելով՝ ես ինձ զգում էի դատավճռի սպասող հանցագործ: Երբ իմացա, որ նա նույնպես միտքը փոխել է և երբ ինձ առաջարկեց ետ վերցնել իմ խոսքը, ես չափազանց մեծ թեթևություն զգացի (դրանում ոչ մի կասկած չի կարող): Մեկ ամիս առաջ ես հիացմունքով կրծքիս սեղմեցի նրան: Մեկ ժամ առաջ, երբ իմացա, որ այլևս երբեք կրծքիս չեմ սեղմի նրան, ուրախությունը թունդ խմիչքի պես արբեցրեց ինձ: Դա անհնարին է թվում: Դա կարծես չի կարող լինել: Մինչդեռ դրանք փաստեր են, որ պատիվ ունեցա հաղորդելու ձեզ, երբ ես ու դուք նստեցինք այս երկու աթոռի վրա: Ես զրկվեցի հմայիչ հարսնացուից, սքանչելի եկամտից և դրան հնազանդվեցի առանց պայքարի: Ինչպե՞ս կարող եք սա բացատրել, սիրելի բարեկամս: Ինձ համար որ այդ բացատրությունն անմատչելի է, իմ ուժերից վեր է:

Նրա սքանչելի գլուխն իջավ կրծքին, և նա հուսահատորեն հրաժարվեց բարոյական խնդիր լուծելուց:

Ես խորապես զգացված էի: Հիվանդությունը (եթե ես կա-

ըող եմ խոսել որպէս հոգևոր բժիշկ) օրվա պէս պարզ դարձավ ինձ: Բոլորս մեր փորձից դիտենք, որ մեծ ընդունակություններով մարդիկ հաճախ իջնում են մինչև իրենց շրջապատող ամենասահմանափակ մարդկանց մակարդակը: Իմաստուն նախախնամության նպատակն է, անկասկած, այս աշխարհի մեծերին հիշեցնել, որ իրենք էլ մահկանացու են, և որ իշխանությունը, որը մեծություն է ամէլ իրենց, կարող է և այն խելի: Հիմա, ինչպէս ինձ թվում է, ընթերցողի համար հեշտ է սիրելի միտք Գոգֆրիի ախուր արարքներում, որոնց անտեսանելի վկան եղա ես, տեսնել այդպիսի օգտակար նվաստացումներից մեկը:

Ես իմ կարծիքը նրան շարադրեցի հասարակ ու քրոջական բառերով: Հաճելի էր նայել նրա ուրախությանը: Նա փոխնեփոխ շուրթերին էր սեղմում իմ մերթ մեկ, մերթ մյուս ձեռքը: Մտածելով, որ նա կվերադառնա մեզ մոտ և այդ մտքից հուզված, ևս նրան թույլ տվի ձեռքերիս հետ վարվել իր ուղածին պես: Աչքերս փակեցի: Հոգևոր ինքնամոռացության էքստազի մեջ գլուխս դրեցի նրա ուսին: Մեկ րոպե անց ևս, իհարկե, ուշաթափված կընկնեի նրա ձեռքերի վրա, եթե արաքին աշխարհի ազմուկն ինձ շտիպեր սթափվել: Դանակների ու պատառաքաղների զզվելի ծնգճնկոց լսվեց դռան ետևից, սպասավորն էր եկել նախաճաշի սեղանը պցելու: Միտք Գոգֆրին վեր թռավ տեղից ու նայեց բուխարու վրա դրված ժամացույցին:

— Ինչպե՞ս է թույլում ժամանակը, երբ ձեզ հետ եմ, — րացականչեց նա: — Գնացրից կուշանամ:

Համարձակվեցի նրանից հարցնել, թե ինչու է այդքան շապում Լոնդոն վերադառնալ: Նրա պատասխանն ինձ հիշեցրեց ընտանեկան այն դժվարությունները, որ դեռ նոր էին դալու:

— Հորիցս համակ եմ ստացել, — ասաց նա: — Գործերը ներքան ստիպում են Ֆրիզինհոլից Լոնդոն մեկնել այսօր, և նա մտադիր է այստեղ գալ կամ այսօր երեկոյան կամ վաղն առավոտյան: Հարկավոր է նրան իրագեկ դարձնել Ռեչելի և իմ միջև տեղի ունեցածի մասին:

Այս ասելով, նա շտապեց հեռանալ: Ես նույնպէս աճապարհելով վաղեցի վերև, որպեսզի նախքան մորաքույր էր-

լուայթի և Ռեչելի հետ նախաձառի սեղանի շուրջը հանդիպելը, հանգստանամ իմ սենյակում:

Ինձ շատ լավ հայտնի է, որ ամբողջ շրջապատի ամեն ինչ ապականոզ կարծիքը միստր Գոգֆրիին մեղադրել է այն բանում, որ սա սեփական ինչ-ինչ նկատառումներով Ռեչելին իր տված խոսքից ազատել է առաջին իսկ հարմար առիթով, որ սա ընձեռել է իրեն՝ Գոգֆրիին: Ականջիս հասել է նաև, որ իմ աչքում իրեն վերականգնելու Գոգֆրիի անհամբեր ցանկությունը որոշ մարդկանց կողմից վերագրվել է «Մայրական հոգացողության կոմիտեի» անդամ մի հարգարժան տիկնոջ հետ իմ միջոցով հաշտվելու շահախնդրական մտադրությանը, մի տիկնոջ, որը շուայտրեն օժտված է այս աշխարհի շնորհներով և իմ հեղու սիրասուն բարեկամն է: Ես այս նողկալի բամբասանքները հիշատակում եմ սոսկ նրա համար, որպեսզի հայտարարեմ, որ դրանք երբևք չնչին իսկ ազդեցություն չեն դրժել հոգուս վրա:

Իջա ձաշասրահ, անհամբեր սպասելով տեսնել, թե Ռեչելի վրա ինչպես է ներգործել փեսացուի հետ կապերի խզումը:

Ինձ թվաց (բայց, խոստովանում եմ, ես վատ դատավոր եմ նման գործերում), թե Ռեչելի ստացած ազատությունը ներքան վերադարձրել էր դեպի մեկ ուրիշ մարդու, իր սիրած մարդու նկատմամբ ունեցած նախկին մտորումները, և որ նա ինքն իր վրա շարանում էր, որովհետև չէր կարողանում հաղթահարել այն ղգացմունքը, որից ամաչում էր հոգու խորքում: Ո՞վ էր այդ մարդը: Ես կուսում էի, բայց դատարկ կուսումների վրա ժամանակ վատնելն իմաստ չուներ: Եթե ինձ հաջողվի դարձի բերել Ռեչելին, ապա նա, հասկանալի է, ինձնից գաղտնիք չի պահի: Ես կլսեմ ամեն ինչ այդ մարդու մասին, կլսեմ ամեն ինչ նաև կուսնաքարի մասին: Եթե ես նրան մինչև հոգևոր գիտակցության բարձունքը հասցնելու վեհ նրպատակն անգամ չունենայի, ապա նրա հոգին այդ մեղսալի գաղտնիքներից ազատելու ցանկությունն իսկ բավական կլիներ, որպեսզի ինձ խրախուսեր շարունակելու իմ գործը:

Մորաքույր էբլուայթը ցերեկը մոցիոն էր անում հիվանդների համար նախատեսված բազկաթոռում: Ռեչելն ուղեկցում էր նրան:



— Ինքս կուզեի քշել այս բաղկաթորը, — անհանգիստ ասաց նա, — կուզեի այն աստիճան հողնեցնել ինձ, որ ուժասպառ լինեի:

Նրա վիճակը չփոխվեց նաև իրիկնադեմին: Բարեկամիս թանկարժեք հրատարակություններից մեկում («Միսս Զեն-Անն Ստամպերի կյանքը, ուղերձներն ու աշխատությունները», քառասունհինգերորդ հրատարակություն) գտա այն տեղերը, որոնք հիանալի կերպով համապատասխանում էին Ռեչելի տվյալ վիճակին: Բայց, երբ առաջարկեցի կարգալ դրանք, նա իմ մտտից հեռացավ և գնաց դաշնամուրի մոտ: Նա շատ քիչ էր ճանաչում լուրջ մարդկանց, եթե կարող էր մտածել, թե այդքան շուտ կսպառվի իմ համբերությունը: Ես ինձ մտաթողեցի միսս Զեն Ստամպերին և, հաստատապես աստիճանելով ապագային, սկսեցի սպասել հետագա դեպքերին:

Ծերուկ էբլուայթն այդ երեկո չեկավ: Բայց ես զիտեի, թե այդ ագահ աշխարհականն ինչպիսի նշանակություն է տալիս միսս Վերինգերի հետ իր որդու ամուսնությունը, և հաստատ հավատացած էի, որ (ինչքան էլ դրան խանդարի միտար Գոդֆրին) նրան կտեսնենք հաջորդ օրը:

Եվ, իրոք, հաջորդ օրը, ինչպես և ենթադրում էի, մոբարբույր էբլուայթին հարկ եղավ, ինչքան որ թույլ տվեց նրան իր բնությունը, դարմանքի նման ինչ-որ բան արտահայտել, իր ամուսնու անակնկալ հայտնվելը տեսնելով: Ծերուկը դեռ մի ժամ չէր մնացել տանը, երբ, ի մեծ վարմանս իմ, հայտնելվեց մի անսպասելի ու խճճված հանդամանք՝ միտար Բրեֆի տեսքով:

Չեմ հիշում, որ վաստաբանի ներկայությունը երբևէ ավելի տհաճ լիներ ինձ համար, քան այդ պահին: Նա, ըստ երեվույթին, պատրաստվել էր պատերազմական դործողություններին:

— Ինչպիսի՞ հաճելի անակնկալ, սըր, — ասաց միտար էբլուայթը, խաբուսիկ քաղաքավարությամբ դիմելով միտար Բրեֆին: — Երեկ ձեր գրասենյակից դուրս գալիս չեի սպասում, թե այսօր ձեզ Բրայտոնում տեսնելու պատիվը կունենամ:

— Ձեր գնալուց հետո ես ինքս ինձ քննեցի մեր ամբողջ բաժանությունը, — պատասխանեց միտար Բրեֆը, — և մտքովս

անցաւ, որ թերևս օգտակար կլինեմ այստեղ: Հաղիւմ հասա գնացքին և շտեաս, թե դուք որ վաղոնում եր:

Այս բացատրութիւնը տալով, նա նստեց Ռեչելի մոտ: Ես համեստորեն քաշվեցի մի անկյուն, համենայնդեպս, ծնկներս վրա դրած միսս Զեն-Անն Ստամպերը: Մորաքույրը նստել էր լուսամտի տակ և սովորականի նման հանգիստ հով էր անում հովհարով: Միտար էրլուայթը կանդնած էր սենյակի մեջսեղանում. երբ նա շատ բարչացակամորեն դիմեց զարմուհուն՝ նրա ճակատը սովորականից ալելի կարմիր էր:

— Մերելի Ռեչել, — տասց նա, — մի շատ տարօրինակ բան եմ իմացել Գողթրից: Այստեղ եմ եկել պարզելու, թե ինչն է պատճառը: Այս տան մեջ դուք ունեք ձեր սեփական հյուրասենյակը: Ինձ առաջնորդեք այնտեղ:

Ռեչելը տեղից շարժվեց: Չեմ կարող ստել՝ նա որոշել էր բանը ճգնաժամի՞ հասցնել, թե նրան դրդել էր միտար Բրեֆի ինչ-որ թաքուն արած նշանը: Միայն թե նա հրաժարվեց ծերուկ էրլուայթին իր հյուրասենյակն առաջնորդելուց:

— Բոլորը, ինչ որ ուզում եք ինձ ասել, — պատասխանեց նա, — կարելի է ստել այստեղ իմ ուղսականների և (նա նայեց միտար Բրեֆին) մորս վաղեմի հավատարիմ բարեկամի ներկայութեամբ:

— Ինչպես կուզեք, բարեկամս, — պատասխանեց համակերպվող միտար էրլուայթը:

Նա նստեց ու շարունակեց.

— Մի քանի օր առաջ որդիս ինձ տեղեկացրեց, թե միսս վերինդերն իրեն խոսք է տվել, որ կամուսնանա իր հետ: Ռեչել, կարո՞ղ է պատահել, որ նա ճիշտ չի հասկացել ձեզ կամ երևակայել է:

— Իհարկե, ոչ, — պատասխանեց նա. — ես խոսք էի տվել ամուսնանալ նրա հետ:

— Շատ անկեղծ պատասխան է, — տասց միտար էրլուայթը, — և միանգամայն բավարար: Ուրեմն, այն բանում, որ կատարվել էր մի քանի շաբաթ առաջ, Գողթրին չի սխալվել: Ըստ երևույթին, նա սխալվել է նրանում, ինչ կատարվել է երեկ: Հասկանում եմ, դուք երկուսդ պարզապես գժտվել եք, ինչպես սիրահարվածներն են գժտվում, և իմ խենթ տղան դա

լուրջ է ընդունել: Այս, ես նրա տարիքում ավելի հասկացող էի:

Մեր նախամայր Եվայի մեղսալի բնությունն արթնացող Ռեչելի մեջ, ու նա սկսեց տաքանալ:

—Աշխատենք հասկանալ իրար, միստր էբլուայթ,—ասաց նա:—Նրեկ ձեր որդու և իմ միջև դժուրության նմանվող ոչ մի բան տեղի չի ունեցել: Նթե նա ձեզ ասել է, թե ես իրեն խնդրել եմ ինձ վերադարձնել խոսքս և որ ինքը համաձայնվել է դրան, նա ճշմարտությունն է ասել ձեզ:

Բարձր ջերմութուն ցույց տվող ջերմաշափի սկսեց միստր էբլուայթի ճակատի գույնն ապացուցեց, որ նա սկսում է ջրդայնանալ: Գեմքն առաջվանից ավելի սիրալիք էր, բայց առանց այն էլ կարմիր գագաթն ավելի ու ավելի կարմրեց:

—Բավական է, բավական է, հոգյակս,—շատ հանդուստացուցիչ ձայներանգով խոսեց նա:—Մի նեղացեք և դժան մի եղևք խեղճ Գոգֆրիի հանդեպ: Նա, երևի, ինչ-որ բան տեղին չի ասել: Նա փոքր հասակից էլ շատ ճարպիկ չէ, բայց նրա մտադրությունները լավն են, Ռեչել, մտադրությունները լավն են:

—Միստր էբլուայթ, կամ ես պարզ շարտահայտվեցի, կամ էլ դուք ղիտավորյալ կերպով ինձ շեք հասկանում: Ձեր որդու և իմ խզումը վճռված է մեկընդմիջտ, մենք ամբողջ կյանքում կմնանք զարմիկներ, և ոչ ավելին: Պա՞րզ է:

Ռեչելն այնպիսի ձայներանգով արտասանեց դա, որ նրան չհասկանալ չէր կարող նույնիսկ ծերուկ էբլուայթը: Զերմաշափը մի աստիճան էլ բարձրացավ, իսկ ձայնը, երբ նա նորից սկսեց խոսել, դադարեց այնպիսի ձայն լինելուց, որպիսին վայել էր իր բարեսրտությամբ հայտնի մարդուն:

—Հետևաբար, ես պետք է հասկանամ,—ասաց նա,—որ ձեր ու նրա միջև ամեն ինչ վերջացած է:

—Ճիշտ այդպես, միստր էբլուայթ:

—Նաև պետք է հասկանամ, որ կապերի խզման առաջարկությունը եղել է ձե՞ր կողմից:

—Սկզբում՝ իմ կողմից: Բայց, ինչպես ձեզ ասացի, ձեր որդու համաձայնությամբ ու հավանությամբ:

Զերմաշափի սնդիկը հասավ ամենաբարձր կետին, կարմիր գագաթը կարմրատակեց:

— Որդիս փոքրոգի վախկոտ է,— կատաղած գոռաց ծեր մեղավորը:— Ես սրպես հայր, և ոչ թե հանուն նրա, ուզում եմ իմանալ, միսս Վերինդեր, թե ի՞նչն է ձեզ վրդովում միսսը Գողֆրի էբլուայթի վարմունքի մեջ:

Այդ ժամանակ առաջին անգամ միջամտեց միսսը Բրեֆը:

— Գուք պարտավոր շեք պատասխանել այդ հարցին,—ասաց նա Ռեչելին:

Սերուկ էբլուայթն անմիջապես հարձակվեց նրա վրա:

— Չմոռանաք, սըր,—ասաց նա,—որ դուք այստեղ անկոչ հյուր եք: Ձեր միջամտությունը շատ ավելի ցանկալի կլինեք, եթե սպասեիք, մինչև ձեզ կխնդրեին միջամտել:

Միսսը Բրեֆը դրա վրա ոչ մի ուշադրություն չդարձրեց: Սիրալիրություն փայլը շնչին իսկ շափով շիջավ նրա ախտավոր ծեր դեմքից: Ռեչելը նրան շնորհակալություն հայտնեց խորհրդի համար, իսկ հետո շրջվեց դեպի ծերուկ էբլուայթը, պահպանելով այնպիսի մի հանգստություն (նկատի ունենալով նրա տարիքն ու սեռը), որն ուղղակի սարսափելի էր տեսնել:

— Ճիշտ այդպիսի հարց տվեց ինձ ձեր որդին,—ասաց Ռեչելը,— և ես միայն մի պատասխան ունեի նրա համար. միայն մի պատասխան ունեմ նաև ձեզ համար: Ես առաջարկեցի, որ մենք բաժանվենք, որովհետև մտորումն ինձ համոզեց, որ ե՛ս նրա, ե՛ր իմ բարօրության համար ավելի լավ կլինեք ետ վերցնել առանց մտածելու արված խոսքը և մեկ ուրիշ ընտրություն կատարելու ազատություն տալ նրան:

— Իսկ ի՞նչ արեց իմ որդին,— պնդում էր միսսը էբլուայթը:— Ես այդ իմանալու իրավունք ունեմ: Ի՞նչ արեց իմ որդին:

Ռեչելը նույնպես համառորեն իրենն էր ասում:

— Գուք ստացաք այն միակ բացատրությունը, որն անհրաժեշտ եմ համարում տալ նրան կամ ձեզ,—ասաց նա:

— Պարզ ասած, ձեր մտքով անցել էր, միսս Վերինդեր, թեթևամտորեն խաղալ որդուս զգացմունքների հետ:

Ռեչելը մի պահ լռեց. նրա թիկունքում նստած, ես լսում էի, թե ինչպես է նա շնչում: Միսսը Բրեֆը բռնեց նրա ձեռքն ու սեղմեց: Ուժերը հավաքելով՝ Ռեչելը միսսը էբլուայթին պատասխանեց նույնքան համարձակ, որքան և զրանից առաջ:

— Իմ վարվելակերպը սնունդ տվեց էլ ավելի վատ ասեկոսեների,— ասաց նա,— և ես համբերությամբ տարա դրանք: Անցել է այն ժամանակը, երբ դուք կարող էիք վիրավորել ինձ՝ անվանելով թեթևամիտ կոկետուհի...

— Ես այնչիտի դառնությամբ էր խոսում, որ մտածեցի՝ գուցե իրանաքարի աղմկահարույց պատմությունը հիշեց:

— Ես այլևս ասելիք չունեմ,— հոգնած ավելացրեց Ռեչելը, առանց մեղնից որևէ մեկին առանձին-առանձին դիմելու, շրջվելով բոլորիցս և նայելով իրեն ամենից մոտիկ գտնվող լուսամուտին:

Միտքը էբլուայթը վեր թռավ տեղից և այնքան ուժեղ կտքաշեց իր ավոտը, որ սա թեքվեց ու ընկավ:

— Իսկ ես ասելիք ունեմ,— հայտարարեց նա, ձեռքը խզփելով սեղանին:— Կասեմ, որ եթե որդիս չի զգում այդ վիրավորանքը, ապա զգում եմ ես:

Ռեչելը ցնցվեց և անակնկալ զարմանքով նայեց նրան: — Վիրավորա՞նք,— կրկնեց նա:— Ի՞նչ եք ուզում դրանով ասել:

— Վիրավորա՞նք,— կրկնեց էբլուայթը:— Ես գիտեմ, թե ինչ պատճառով եք դուք, միսս Վեբինգեր, դրժել որդուս տված խոստումը: Ես դա գիտեմ այնքան լավ, որքան կիմանայի, եթե ինքներդ այն խոստովանած լինեիք: Ձեր տոհմական անիծյալ հպարտությունը վիրավորանք է հասցնում Գողֆրինհերին, ինչպես որ ինձ վիրավորեց, երբ ամուսնացա ձեր մորաքրոջ հետ: Նրա հարազատները, նրա սղքատ հարազատները երես դարձրին նրանից այն բանի համար, որ նա ամուսնացավ իր ձեռքով իր կարողությունը ստեղծած ազնիվ մարդու հետ: Ես նախնիներ չեմ ունեցել: Ես չեմ սերում գողությամբ ու սպանությամբ ապրող ավազակներից ու խարդավաններից: Ես չեմ կարող նշել այն ժամանակը, երբ էբլուայթների հագին շապիկ չի եղել և երբ նրանք չեն կարողացել իրենց անունը գրել: Այո, երբ ամուսնացա, ես պիտանի չլի շեռնկաստիների համար: Իսկ հիմա իմ որդին պիտանի չէ ձեզ համար: Ես վաղուց էի դա կանխազգում: Ձեր մեջ շեռնկաստիների արյունն է խոսել, սիրելիս: Ես վաղուց էի դա կասկածում:

— Բոլորովին անվայել կասկածանք,— նկատեց Բրեֆը:—

Չարմանում եմ, թե ինչպես քաջություն ունեցաք արտահայտելու այն:

Մինչ միտար էբլուայթը կհասցնեի խոսք գտնել պատասխանի համար, Ռեչելն սկսեց խոսել՝ ամենավիրավորական արհամարհանքի ձայներանգով:

— Չարժե ուշադրություն դարձնել դրա վրա, — ասաց նա փաստաբանին: — Եթե նա այդպես է մտածում, ապա թողնենք մտածի՝ ինչպես որ ինքն է ուզում:

Մուգ կարմիր միտար էբլուայթը դարձավ կապույտ: Նա խեղդվում էր և հաղիվ էր շունչ քաշում. նա մերթ Ռեչելին, մերթ Բրեֆին էր նայում այնպիսի կատաղությամբ, ասես շրգիտեր, թե նախ որի վրա հարձակվեր: Նրա կինը, որ մինչ այդ անտարբերորեն հովհարն էր թափահարում, վախեցավ ու փորձեց, միանգամայն ապարդյուն, հանդստացնել նրան: Այս սրբախոր խոսակցության ամբողջ ժամանակամիջոցում միջամտելու և մի քանի սրտահույզ խոսք ասելու մի ներքին պոռթկում համակեց ինձ, բայց ձեռնպահ էի մնում հնարավոր հետեանքներից երկյուղ կրելով, երկյուղ՝ անվայել քրիստոնեոհուսու և անզուհու համար, որը ձգտում է ոչ թե այն բանին, ինչ փորձերի խոհեմությունն է պահանջում, այլ այն բանին, ինչը բարոյապես ճշմարիտ է: Տեսնելով, թե բանը ուր հասավ հիմա, ես վեր կացա՝ պատշաճության ամեն տեսակ նկատառումներից վեր կանգնելով: Եթե ես մտադիր լինեի առարկել իմ սեփական, համեստորեն հնարագտածս փաստարկներով, զուցե դեռևս սատանվի: Բայց ընտանեկան տխուր անհամաձայնությունը, որին այժմ ականատես էի, հրաշալի և սքանչելի կերպով նախատեսված էր Ջեն-Անն Ստամպերի նամակագրության մեջ՝ «Ընտանեկան անդորր» թեմայով հաղարմեկերորդ նամակը: Ես զուրս եկա իմ մեկուսի անկյունից ու բացեցի թանկադին գիրքը:

— Հարգարժան միտար էբլուայթ, — ասացի ես, — միայն մի խոսք:

Երբ, ոտքի կանգնելով, ինձ վրա բեռնեցի բոլորի ուշադրությունը, կարողացա նկատել, որ միտար էբլուայթը պատրաստվում է ինչ-որ կոպիտ խոսք ասել ինձ: Սակայն իմ բարեկամական խոսքերը կանգնեցրին նրան: Նա հեթանոսական զարմանքով աչքերը շոկեց վրաս:

—Թույլ տվեք ինձ,—շարունակեցի ես,—որպես անկեղծ բարեկամուհու ու մտերիմի, որպես կնոջ, որը վաղուց վարժվել է արթնացնելու, համոզելու, նախապատրաստելու և զորացնելու ուրիշներին, թույլ տվեք ձեր հոգին խաղաղեցնելու միանգամայն ներելի ազատություն տալ ինձ:

Միտար էբլուայթն սկսեց ուշքի դալ. նա պատրաստ էր զայրույթով պոռթկալու և կսոթկար, եթե մեկ ուրիշը լիներ իմ փոխարեն: Բայց իմ ձայնը (սովորաբար՝ հեղ) բարձր հոտա ունի կյանքի կարևոր հանդամանքներում: Տվյալ գեպում ես ամենաբարձր ձայնով խոսելու համար մզում էի գոտմ: Իմ թանկագին գիրքը մոտեցրի նրան և մատնացույց արեցի բաց էջը:

—Ո՛չ իմ հեղ ու համեստ խոսքերի,—բացականչեցի և ջերմեռանդություն պոռթկումով:—Օ՛, շմտածեք, լի էս պահանջում եմ ուշադրություն իմ հեղ ու համեստ խոսքերի նկատմամբ: Մանանա՛ անապատում, միտար էբլուայթ: Յով՛ չորացած հողի վրա: Մխիթարանքի խոսքեր, խոհեմություն խոսքեր, սիրո խոսքեր՝ երանելի, հրանելի, երանելի խոսքերը միտա Ջեն-Անն Ստամպերի:

Այստեղ ես կանգ առա, որովհետև շունչս կտրվեց: Մինչ կհասցնեի սթաիվել՝ մարդու կերպարանքով այդ հրեշք կատաղորեն գոռաց:

—...ծոցը քո Ջեն-Անն Ստամպերը:

Ես շեմ կարող գրել այն սոսկալի բառը, որն այստեղ փոխարինված է կետերով: Երբ այն սլոկվեց նրա շուրթերից՝ ես ճշացի, նետվեցի դեպի սեղանիկի վրա դրված իմ սլաշուսակը, միշից դուրս թափեցի իմ բուրբ արակտատները. վերցրի պիղծ հայհոյանքներին վերաբերող «Լոնցեք ի սեր երկնքի» վերնագրով մի արակտատ և հուսահատ սլաղատանքի արտահայտություն մի նրան: Նա պատառոտեց գրքույկը և սեղանի վրայով շարտեց երեսիս: Բուրբը վախեցած վեր թռան, շիմանալով, թե ինչ տեղի կունենա հետո: Ես անմիջապես տեղափոխվեցի իմ անկյունում: Փամանակին այդպիսի դեպք եղել է, դրեթն նույնանման հանդամանքներում, երբ բռնել են Ջեն-Անն Ստամպերի ուսերից ու դուրս գցել սենյակից: Նրա արի-ուրբամբ ոգեղնչված՝ սսլասում կի նրա մարտիրոսության կրկնությունը:

Բայց ոչ, դա չկրկնվեց: Միստր էբլուայթը նախ և առաջ դիմեց իր կնոջը.

— Ո՞վ, ո՞վ, ո՞վ է, — կատաղության մեջ մոթմոթաց նա, — այստեղ հրավիրել այդ հանդուգն կեղծ բարեպաշտին:

Նախքան մորաքույր էբլուայթը կհասցնե՞ր մի խոսք ասել, Ռեչելը պատասխանեց նրա փոխաբեն.

— Միսս Կլակը իմ հյուրն է:

Այս բառերը տարօրինակ ներգործություն ունեցան միստր էբլուայթի վրա: Այս բառերը նրան զայրույթով կրակված մարդուց հանկարծ վերածեցին սառցե արհամարհանքով բռնված մարդու: Բոլորի համար պարզ դաբձավ, որ Ռեչելն այնպիսի բան էր ասել (ինչքան էլ որ հեղ ու պարզ էր նրա պատասխանը), որն ի վերջո նրան՝ միստր էբլուայթին, առավելություն տվեց Ռեչելի նկատմամբ:

— Ախ, այդպես, — ասաց նա: — Միսս Կլակը ձեր հյուրն է իմ տանը:

Իր հերթին Ռեչելն էլ դուրս եկավ համբերությունից. նրա դեմքը բռնկեց, իսկ աչքերը զայրալի փայլատակեցին: Նա շրջվեց փաստարանի կողմը և, միստր էբլուայթին մատնացույց անելով, ամբարտավանորեն հարցրեց.

— Ի՞նչ է ուզում դրանով ասել:

Միստր Երեֆը միջամտեց երրորդ անգամ:

— Դուք, կարծեմ, մոռանում եք, — դիմեց նա միստր էբլուայթին, — որ այս տունը վարձել եք միսս Վերինդերի համար՝ որպես նրա ինամակայր...

— Շնորհ արեք շշտասկել, — ընդհատեց միստր էբլուայթը, — ինձ մնում է ասել վերջին խոսքը, որը վաղուց ասած կլինեի, եթե այդ... — նա նայեց երեսիս, մտածելով, թե ինչ նողկալի անուն տա ինձ, — եթե այդ սիրահոշակ բլառավ կույսը մեզ չընդհատեր: Ռույլ տվեք ձեզ ասել, սըր, որ եթե իմ որդին պիտանի չէ միսս Վերինդերի ամուսինը լինելու, ապա չեմ կարծում, թե նրա հայրն էլ պիտանի լինե՞ր միսս Վերինդերի խնամակայր լինելու: Խնդրում եմ ձեզ հասկանալ՝ ես հրաժարվում եմ խնամակալությունից, որ առաջարկված է ինձ լեղի Վերինդերի կտակում: Իրավաբանական լեզվով ասած, ես այժմվանից ցած եմ դնում խնամակալի կոչումը: Այս տունը վարձվել է իմ անունով: Այս վարձակալության ամբողջ



պատասխանատուութիւնը վերցնում եմ ինձ վրայ: Սա իմ տունըն է: Ես կարող եմ այն թողնել կամ վարձով տալ ում ուզում եմ: Ես չեմ կամենում շտապեցնել միտս Վերինդերին: Ընդհակառակը, նրան խնդրում եմ իր հշուրին և իր իրեքը աշատեղից տանել միայն այն ժամանակ, երբ դա հարմար կլինի իր համար:

Նա խոր գլուխ տվեց ու դուրս եկավ սենյակից: Ահա թե ինչ ձևով միտար էբլուայթը վրեժ լուծեց այն բանի համար, որ Ռեչելը շուգեց ամուսնանալ իր որդու հետ:

Հենց որ դուրը նրա ետևից ծածկվեց, մորաքույր էբլուայթը արտասովոր եռանդ ցուցաբերեց, որը բոլորիս ստիպեց լսել: Նա բալականաչափ ուժ ունեցավ անցնելու սենյակի միջով:

— Սիրելիս, — բռնելով Ռեչելի ձեռքը՝ տասց նա, — ես կամաշի ամուսնուս արածի համար, եթե չիմանայի, որ քեզ հետ խոսում էր նրա զայբույթը և ոչ թե ինքը... Ի՞նչ, դուք, — շարունակեց մորաքույր էբլուայթը, վճռականութեան մի նոր նուպայով դիմելով դեպի իմ անկյունը, — այդ դուք բարկացրիք նրան: Հուսով եմ, որ երբեք չեմ տեսնի ոչ ձեզ, ոչ ձեր տրակտատները... — Նա նորից շրջվեց Ռեչելի կողմը ու համբուրեց նրան. — Ամուսնուս անունից ներողութիւն եմ խնդրում քեզնից, հոգյակս: Ի՞նչ կարող եմ անել քեզ համար:

Միշտ ամեն բանում համառ, իր կյանքի բոլոր արարքներում կամակոր Ռեչելը, այս աննշան խոսքերը լսելով, հանկարծ սկսեց լաց լինել և առանց ձայն հանելու համբուրեց մորաքրոջը:

— Եթե ինձ թույլ տաք պատասխանելու միտս Վերինդերի փոխարեն, — ասաց միտար Բրեֆը, — ապա ես ձեզ կխնդրեմ, միտս էբլուայթ, այստեղ ուղարկել Պեննելոպեին՝ իր օրիորդի գլխարկով ու շալով: Մեզ մենակ թողեք մի տասը րոպե, — ցածր ձայնով ավելացրեց նա, — և կարող եք վստահել ինձ՝ ես ամեն ինչ վկագրեմ կերպեմ ինչպես որ հարկն է, գոհ կլինեք երկուսդ էլ՝ և դուք, և Ռեչելը:

Վստահութիւնը, որ այդ ընտանիքը տածում էր փաստաբանի հանդեպ, ուղղակի դարձանալի էր: Այլևս ոչ մի բառ չտեսնելով, մորաքույր էբլուայթը դուրս եկավ սենյակից:

— Ա՛խ, — ասաց միտար Բրեֆը, — Հոռնկաստների արշուներ

իր վատ կողմերն ունի, դրան համաձայն եմ: Բայց, այնուամենայնիվ, լավ ծագման մեջ ինչ-որ բան կա:

Այս զուտ աշխարհիկ դիտողությունն անելով՝ նա սևեռուն նայեց իմ անկյունը, կարծես սպասելով, որ ես կհեռանամ: Ռեչիլի նկատմամբ իմ կարեկցանքը, որն անհամեմատ ավելի բարձր էր, քան նրա կարեկցանքը, ինձ մեխեց աթոռին: Միստր Բրեֆն այլևս հույս չունեիր, որ կարող է ինձ դուրս անել ճիշտ այնպես, ինչպես այդ եղել էր Մոնտեֆյու-պուրակում: Նա Ռեչիլին մոտեցրեց լուսամտաի տակ պրված աթոռին և այնտեղ սկսեց խոսել նրա հետ:

— Իմ սիրելի միսս Ռեչել, — ասաց նա, — միստր էբլուայթի վարձունքը, բնականաբար, վիրավորեց ու դարձացրեց ձեզ: Եթե արժենար խոսել այդպիսի մարդու հետ, ապա մենք արագորեն ցույց կտայինք նրան, որ ինքն իրավունք չունի վարվելու ինչպես որ խելքին կփչի: Բայց չարժե: Դուք միանգամայն իրավացի էիք, երբ ասացիք, որ չարժի ուշադրություն դարձնել նրա վրա:

Նա կանգ առավ ու նայեց իմ անկյունը: Ես նստել էի բոլորովին անշարժ, տրակտատները թեխտակ և միսս Զեն-Անն Ստամպերն էլ ծնկներին:

— Դուք գիտեք, — շրջվեց նա Ռեչելի կողմը, — որ ձեր մայրը, իր սքանչելի բնավորությամբ, շրջապատող մարդկանց մեջ միշտ միայն լավ կողմերն էր տեսնում ու չէր նկատում վատերը: Նա իր փեսային ձեր խնամակալը նշանակեց այն պատճառով, որ վստահում էր նրան և կարծում էր, թե դա դուր կգա իր քրոջը: Ինքս անձամբ երբեք չեմ սիրել միստր էբլուայթին և ձեր մորը համոզեցի կտակի մեջ մտցնել մի կետ, որի համաձայն, որոշ դեպքերում նրա կուսակալատարներին իրաջունք է տրվում ինձ հետ խորհրդակցել նոր խնամակալ նշանակելու շուրջը: Նման առիթ ներկայացավ այսօր: Ինձ համար հաճելի է այս գործարար, չոր մանրամասնություններին վերջ առլ կնոջս հանձնարարությունը հաղորդելով: Չե՞ք ուզում պատիվ անել միսիս Բրեֆին՝ դառնալով նրա հյուրը: Համաձայն եք մնալու իմ տանը, որպես իմ ընտանիքի անդամի, մինչև որ մենք, խելոք մարդիկ, կխորհրդակցենք ու կորոշենք, թե ինչ անենք:

Այս խոսքի վրա՝ ես վեր կացա: Միստր Բրեֆն արեց հենց

այն, ինչից ես վախենում էի, երբ նա միտիս էբլուայթլին խընդ-  
րեց ուղարկել Ռեչելի գլխարկն ու շալը:

Մինչ ես կհասցնեի մի խոսք ասել, Ռեչելն ամենաջերմ  
արտահայտություններով ընդունեց նրա հրավերը:

— Կանգ առեք, — բացականչեցի ես: — Կանգ առեք... Դուք  
պետք է ինձ լսեք... Միստր Բրեֆ, դո՛ւք չեք նրա ազգականը,  
այլ ե՛ս եմ: Ես հրավիրում եմ նրան, ես կտակակատարներին  
աղաչում եմ ինձ նշանակել Ռեչելի խնամակալ... Ռեչել, իմ  
սիրելի Ռեչել, ես ձեզ առաջարկում եմ իմ համեստ տունը:  
Հագյալս, հաջորդ դիպքով մեկնենք Լոնդոն և ինձ հետ  
կիսեք իմ ապաստանը:

Միստր Բրեֆը ոչինչ չտասց, Ռեչելն ինձ նայեց զարման-  
քով, որը նույնիսկ չփորձեց թաքցնել:

— Դուք շատ բարի եք, Դրուդլիլա, — պատասխանեց նա, —  
եբբ պատահի, որ Լոնդոն գամ՝ կայցեիկեմ ձեզ: Բայց ես ըն-  
դունեցի միստր Բրեֆի հրավերը և կարծում եմ, որ շատ ավելի  
լավ կլինի, եթե ես այժմ միստր Բրեֆի հսկողության տակ մը-  
նամ:

— Օ՛, այդպես մի ասեք, — աշաչում էի ես: — Ես չեմ կարող  
ձեզնից բաժանվել, Ռեչել, չեմ կարող ձեզնից բաժանվել:

Ես փորձեցի դրկել նրան, բայց նա ընկրկեց ինձնից: Իմ  
չերմեռանդությունը նրան չհաղորդվեց, այլ միայն վախեց-  
րեց նրան:

— Ինչպիսի՜ տարօրինակ հուզմունք, — ասաց նա: — Դրա  
համար պատճառ չեմ տեսնում:

— Ես նույնպես, — արտաբերեց միստր Բրեֆը:

Նրանց խստությունը, նրանց աշխարհիկ զղվելի խստու-  
թյունը վրդովեց ինձ:

— Օ՛, Ռեչել, Ռեչել, — բացականչեցի ես: — Մի՞թե դուք չեք  
տեսնում, որ ես ամբողջ հոգով ձգտում եմ քրիստոնեուհի դարձ-  
նել ձեզ: Մի՞թե ներքին ձայնը ձեզ չի ասում, որ ես աշխա-  
տում եմ ձեզ համար անել այն, ինչ աշխատել եմ անել ձեր  
սիրելի մոր համար, մինչև որ մահը նրան խլել է իմ ձեռքից:

Ռեչելը մի քայլ մոտեցավ ինձ և շատ տարօրինակ ձևով  
նայեց:

— Ես չեմ հասկանում մորս հասցեին արած ձեր ակնար-  
կը: — ասաց նա, — բարի եղեք, միսս Կլակ, բացատրել:

Նոյսրան կհասցնէի սլատասխանել՝ մտտեցաւ միտար Բրե-  
ֆը և թէն տաաջարկեց Ռեշելին, աշխատելով նրան դուրս բե-  
րել սենյակից:

— Բանկադինս, ալիլի լաւ է՝ շարունակեք այս խոսակ-  
ցությունը, — ասաց նա, — և միտս կլակի համար ալիլի լաւ է  
չբացատրվել:

Եթե ես քար կամ փայտ լինեի՝ այդ դեպքում էլ նման մի-  
լամտությունն ինձ կատիպեր ասել ճշմարտությունը: Ես վեր-  
դովձած ետ հրեցի միտար Բրեֆին և հանդիսավորությամբ,  
առիթին վայել լեզվով Ռեշելին հաղորդեցի քրիստոնեական  
ուսմունքի հայացքները այն բանի նկատմամբ, թե ինչ ահա-  
վոք պատուհաս է տուանց զղջումի մահը: Ռեշելն ինձնից  
ընկրկեց (սա գրում եմ կարմրելով) սաբսափած ճշալով:

— Գնանք այստեղից, — ասաց նա միտար Բրեֆին: — Գնանք,  
ի սեր աստճու, քանի զեռ մի ուրիշ բան էլ չի ասել այս կինը:  
Հիշեցեք իմ խեղճ մոր անմեղ, օգտաշատ, գեղեցիկ կյանքը:  
Միտար Բրեֆ, դուք եղել եք թաղմանը, դուք սեսել եք, թե ինչ-  
պես բոլորը սիրում էին նրան, դուք տեսել եք, թե ինչպես  
էին ազգատները լալիս նրա գերեզմանի վրա, զրկված լի-  
նելով իրենց լավագույն բարեկամից: Իսկ այս անպետք կինն  
աշխատում է մեզս կասկած հարուցել, թե արդո՞ք մայրս,  
որ հրեշտակ էր երկրի վրա, հրեշտակ կլինի երկնքում: Էլ չխո-  
սենք այս մասին: Գնանք: Ինձ սպանում է այն միտքը, որ ես  
սրա հետնույն օյն եմ շնչում: Ինձ համար ահավոր է այն բանի  
գիտակցումը, որ մենք երկուսս նույն սենյակում ենք գտնվում:

Ոչ մի հորդորանքի չանսալով՝ նա վազեց դեպի դուռը: Այդ  
պահին ներս մտավ նրա աղախինը՝ բերելով զլիսարկն ու շա-  
լը: Ռեշելը զլիսարիւր դրեց ու շալը զցեց ինչպես որ պատահեր:

— Իրերս կապի՛ր, — ասաց նա, — ու տարե՛ք միտար Բրեֆի  
տունը:

Ես փորձեցի մտտենալ նրան. ես վշտացած էի, բայց (ա-  
սելն օգուտ չունի) վիրավորված չէի: Ես միայն ուղում էի ասել  
Ռեշելին. «Տա աստված, որ ձեր կարծր սիրտը փափկանա:  
Ես հաճույքով ներում եմ ձեզ»: Բայց նա իջեցրեց քողը, և իր  
շալի ծայրը ձեռքիցս դուրս քաշելով, հապշտապ դուրս փախավ  
սենյակից և հենց քթիս առաջ շրխկացրեց դուռը: Ես այդ վի-  
րավորանքը տարա իմ սովորական անսասանությամբ: Հիմա

այդ հիշում եմ իմ սովորական համբերատարութեամբ, վարժը-  
ված լինելով ամեն մի վիրավորանքից ինձ բարձր դասելուն:

Միստր Բրեֆը հրաժեշտ տալիս մի ծաղր նետեց ինձ:

— Ալիկի լավ է շրացատրվեք, միսս Կլակ, — ասաց նա, գը-  
լուխ տվեց ու դուրս եկավ:

Նրանից հետո ինձ դիմեց ժապավենավոր շորագլխարկով  
անձնավորութունը.

— Գժվար չէ կոահել, թե այդ բոլորին ով կովացրեց իրար  
հետ, — ասաց նա: — Ծս սոսկ մի խեղճ ազախին եմ, բայց ար-  
գարե, ամաշում եմ ձեր փոխարեն:

Նա նույնպես դուրս եկավ ու ետևից շրխկացրեց դուռը:  
Սենյակում մնացի մենակ: Բոլորից անարգված ու լքված  
ես սենյակում մնացի մենակ:

Այդ օրից ի վեր ես այլևս երբեք չեմ հանդիպել Ռեչել Վեր-  
ինդերին: Ծս ներել եմ նրան, երբ նա վիրավորել է ինձ: Նրա  
համար աղոթել եմ հետագա օրերին: Եվ երբ ես մեռնեմ, ապա,  
որպես իմ պատասխանը նրան, շարութեան դիմաց բարու-  
թյամբ, նա կստանա միսս Զեն-Անն Ստամպերի «Կյանքը, ու-  
ղերձներն ու աշխատութունները», որ նրան ժառանգութուն  
եմ թողել իմ կտակով:



## ԵՐԿՐՈՐԳ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

որ գրել է Մար Բեեֆը,

Գրեյս — Իճճ պուրակում ապրող փաստաբանը

### Ֆ լ ու խ 1

Իմ սրտնչելի բարեկամ միսս Կլաիր ցած դրեց գրիչը. այն նրանից հետո անմիջապես ես եմ վերցնում երկու պատճառով:

Առաջինը, որովհետև կարող եմ անհրաժեշտ լույս սփռել մինչև այժմ մթան մեջ մնացած կետերի վրա: Միսս Վերինգերը փեսացուից բաժանվելու իր գաղտնի պատճառներն ուներ, և դրա մեղավորը ես էի: Միստր Գոդֆրի էբլուայթն իր հմայիլ զարմուհու ձեռքն ստանալու ամեն տեսակ իրավունքներից հրաժարվելու ի՛ր պատճառներն ուներ, և ես բացահայտեցի դրանք:

Սրկորդը. արդեն շղիտեմ, բարեբախտաբար, թե դժբախտաբար, բայց այն ժամանակամիջոցում, որի մասին այժմ գերում եմ, ինքս հաղորդակից եղա հնդկական արմաստի դադունիքին: Ես պատիվ ունեցա իմ դրասենյակում ընդունելու արտակարգ նուրբ շարժուձևով մի օտարերկրացու, որն, անշուշտ, սչ այլ ոք էր, քան երեք հնդիկների գլխավորը: Սրան ավելացնենք, որ հաջորդ օրը ես տեսնվեցի նշանավոր ճանապարհորդ միստր Մերտուեաի հետ և զրուցեցի Լուանաբարի ջուրջը. դա կարևոր ազդեցություն գործեց հետագա դեպքերի վրա: Ահա այն դիրքի համեմատ իմ իրավունքների հակիրճ թվարկումը, որ ես գրավում եմ այս էջում:

Նշանագրությունը շեղյալ հայտարարելու իսկական պատճառը ժամանակագրականորեն նախորդել է այս բուրրին և, հետևաբար, պետք է առաջին տեղը գրավի այս պատմության մեջ: Աչքի անցկացնելով դեպքերի ամբողջ շղթան՝ մի ծայրից մյուսը, անհրաժեշտ եմ համարում պատմությունս սկսել (որքան էլ դա տարօրինակ թվա ձեզ) իմ հրաշալի հաճախորդ ու ընկեր, հանգուցյալ սրբ Ջոն Վերինդերի անկողնու մոտ կատարվածից:

Սրբ Ջոնն ուներ մարդկությանը հատուկ առավել անվնաս ու համակրելի թուլությունների իր բաժինը, թերևս՝ շափից ավելի մեծ բաժինը: Այժմ թուլություններից հիշատակեմ մեկը, որը վերաբերում է իսկական գործին. կտակը գրելու անհազաթահարելի շկամությունը (քանի դեռ ողջ և առողջ էր): Լեզի Վերինդերն օգտագործեց իր ամբողջ ազդեցությունը, որպեսզի, նրան մղի կատարելու իր պարտքը. իմ ազդեցությունը գործի դրեցի նաև ես: Նա համաձայնվեց մեր հայացքի արդարացիությանը, բայց դրանից այն կողմ շղնաց, մինչև որ նրան գտավ հիվանդությունը, որը և հետագայում գերիզման տարավ նրան: Այդ ժամանակ վերջապես մարդ ուղարկեցին ինձ կանչելու, որպեսզի լսեմ իմ հաճախորդի՝ կտակի վերաբերյալ ցուցումները: Իրանք շատ պարզ ու հուսարակ էին համեմատությամբ այն ամենի, որ ես լսել էի իմ իրավաբանական ամբողջ գործունեության ընթացքում:

Սրբ Ջոնը ննջում էր, երբ ես մտա նրա սենյակը: Իմ Իերս մտնելուն պես նա արթնացավ:

— Ինչպի՞ս եք, միստր Բրեֆ,— հարցրեց նա:— Ես շատ համառոտ կասեմ, հետո նորից կքնեմ:

Նա մեծ ուշադրութեամբ հետևում էր, թե ինչպիս էի ես հանում թուղթը, թանաքն ու գրիչը:

— Պատրաստ եք,— հարցրեց նա:

Ես գլխով արեցի, թաթախեցի դրիչն ու սպասեցի ցուցումների:

— Ես ամեն ինչ թողնում եմ կնոջս,— ասաց սրբ Զոնը:— Ահա երողորդ:

Նա շրջվեց մյուս կողքի վրա և պատրաստվեց նորից քնելու: Ստիպված էի անհանգստացնել նրան:

— Արդյո՞ք ճիշտ հասկացա,— հարցրի ես:— Դուք ձեր ամբողջ ունեցվածքը, որի տերն եք առ այսօր, թողնում եք որպես լեդի Վերինդերի լիակատար սեփականություն:

— Այո,— պատասխանեց սրբ Զոնը,— միայն թե ես շատ ավելի կարճ արտահայտվեցի: Ինչո՞ւ դուք չեք կարող ավելի կարճ գրել ու թողնել, որ ես նորից քնեմ: Ամեն ինչը՝ կնոջս: Ահա իմ կտակը:

Զոն Վերինդերի գույքը գտնվում էր իր լիակատար տրամադրության տակ և երկու տեսակ էր՝ հողային (դիտավորյալ կերպով տեխնիկական արտահայտություններ չեմ օգտագործում) և դրամական: Նման դեպքերում մեծ մասամբ ես իմ պարտքը կհամարեի խնդրել հաճախորդիս, որ լավ կշռադատի իր սրտումը: Բայց տվյալ դեպքում գիտեի, որ լեդի Վերինդերը ոչ միայն արժանի է անվերապահ վստահության (բոլոր հավատարիմ կանայք արժանի են դրան), այլև կարող է ճիշտ անօրինակ մեծ կարողությունը, մի բան, որին, ինչքան ես ճանաչում եմ դեղեցիկ սեռին, հազարից մեկն է միայն ընդունակ: Տասը բույեում գրվեց ու վկայվեց սրբ Զոնի կտակը, իսկ սրբ Զոնն ինքը շրջվեց ու շարունակեց ընդհասույած քունը:

Լեդի Վերինդերը լիովին արդարացրեց ամուսնու ցուցաբերած վստահությունը: Այրիություն առաջին իսկ օրերին նա մարդ ուղարկեց ինձ կանչելու և կաղմեց իր կտակը: Իր դրության նրա ըմբռնումը այնքան ողջամիտ ու խելացի էր, որ նրբան որևէ խորհուրդ տալու ոչ մի կարիք չկար: Իմ պատասխանատվությունն սկսվեց ու ավարտվեց նրա ցուցումներին:



իրավաբանական ձև տալով: Երկու շաբաթ շահցած՝ սրբ Զոնը գերեզման իջաւ, իսկ նրա դստեր տղադան ապահովվելց հիանալի ձևով ու խելամառորեն:

Կտակը մնաց իմ գրասենյակում, անկիղկլի պահարանում, այնքան ժամանակ, որ այդ մասին մտածելն ինձ համար ծանր է: Միայն հազար ութ հարյուր քառասունութ թվականի ամռանը ես նորից կարիք ունեցա նայելու այն, շատ տխուր հանդամանքներում:

Այդ ժամանակ, որի մասին խոսում եմ, բժիշկներն իրենց դատավճիռը կայացրին խեղճ Լեդի Վերինդերի նկատմամբ, մի դատավճիռ, որը բուն իմաստով կարելի է մահավճիռ անվանել: Նա առաջինը հաղորդեց իր դրության մասին և կամեցավ ինձ հետ մեկտեղ վերանայել իր կտակը:

Նրա դստեր դրությունն արդեն բավականաչափ ապահովված էր: Բայց սակավ մոտիկ որոշ ազգականների ժառանգություն թողնելու նրա մտադրությունները ժամանակի ընթացքում փոքր-ինչ փոխվել էին և անհրաժեշտ էր երեք թե չորս կետ ավելացնել փաստաթղթում: Զնախատեսված պատահականություններից խուսափելու համար այդ անմիջապես անելով, ես Լեդի Վերինդերից թույլտվություն ստացա վերջին հրահանգները մտցնելու երկրորդ կտակի մեջ:

Երկրորդ կտակի հաստատումը նկարագրել է միսս Կլակը, որն այնքան սիրալիր եղաւ, որ հաստատեց այն: Ինչ վերաբերում է Ռեչել Վերինդերի դրամական հետաքրքրություններին, ապա երկրորդ կտակը բառ առ բառ առաջինի կրկնությունն էր: Միակ փոփոխությունը վերաբերում էր նոր խնամակալ նշանակելուն: Լեդի Վերինդերի մահվանից հետո կտակը հանձնեցի իմ նոտարիուսին, որպեսզի նա դրանցի այն, ինչպես որ ընդունված է:

Երեք շաբաթ անց, որքան հիշում եմ, լուրեր ստացվեցին, թե ինչ-որ մի արտասովոր բան է կատարվում: Այնպես պատահեց, որ մտա իմ նոտարիուսի ու բարեկամի գրասենյակը և նկատեցի, որ նա սովորականից ավելի մեծ հետաքրքրությամբ ընդունեց ինձ:

— Ձեզ համար նորություն ունեմ,— ասաց նա:— Ինչ եք կարծում, ի՞նչ եմ լսել այսօր առավոտյան Դոկտոր—Կոմսն-

սում<sup>1</sup>, Լեդի Վերինդերի կտակն արդեն պահանջել են և արշփի անցկացրել:

Դա իրոք հետաքրքիր նորութիւն էր: Կտակում բացարձակապէս չկար այնպիսի մի բան, որը այն մերժելու հնարավորութիւն տար, և ես չէի կարողանում հասկանալ, թե ում կարող էր հետաքրքրած լինել դա:

— Իսկ դուք իմացա՞ք, թե ով է կամեցել տեսնել կտակը, — հարցրի ես:

— Այո, գրադիրն ինձ ասաց առանց որևէ տատանման: Կտակը աչքի է անցկացրել միստր Սմոլլին՝ Սկիպպ և Սմոլլի ֆիրմայից: Այն դեռ ցուցակի մեջ մտցված չի եղել: Հետևաբար ոչինչ չէր մնում անել, քան նրան ցույց տալ իսկական փաստաթուղթը: Նա կտակը ղննել է շատ հանգամանորեն և ինչոր բան նշել իր ծոցատետրում: Գաղափար ունե՞ք, թե ինչ է պետք եղել նրան:

Ես գլուխս տարուբերեցի:

— Ոչ, բայց կիմանամ, — պատասխանեցի, — և հենց այսօր: Անմիջապէս վերադարձա իմ գրասենյակը:

Եթե այդ անհասկանալի հետաքրքրութիւնը իմ հանգուցյալ հաճախորդուհու կտակի նկատմամբ ցուցաբերած լիներ մեկ ուրիշ ֆիրմա, ապա ինձ համար, թերևս, դժվար կլիներ անհրաժեշտ հայտնագործութիւններ անելը: Բայց ես ազդեցութիւն ունեի Սկիպպի ու Սմոլլիի վրա, այնպէս որ այստեղ ինձ համար գործելը համեմատաբար հեշտ էր: Իմ սեփական քարտուղարը (չափազանց ընդունակ ու հրաշալի մի մարդ) միստր Սմոլլիի եղբայրն էր, և այդ անուղղակի կապի ողորմածութեամբ Սկիպպն ու Սմոլլին արդեն մի քանի տարի իմ սեղանից թափվող փշրանքներն էին հավարում, այսինքն՝ այն գործերը, որոնք ընկնում էին իմ գրասենյակը, և որոնք զանազան պատճառներով չէի ուղում անձամբ վարել: Իմ պրոֆեսիոնալ հովանավորութիւնն այդ տեսակետից բաժանաճանաչափ կարևոր էր ֆիրմայի համար: Ես մտադիր էի, եթե կարիք լիներ, սովյալ դեպքում նրանց հիշեցնել այդ հովանավորութիւն մասին:

<sup>1</sup> Ատյան, որտեղ պահպանութիւն են հանձնում հոգևոր կտակները և որտեղ ամեն մեկը, ով կամենա, կարող է շնչին վճարով ծանոթանալ ուղած կտակին:

Գրասենյակ վերագառնելուն պես իմ շրջապատին պատճենքի կատարվածը և հետևյալ հանձնարարությունը նրան ուղարկեցի՝ Սկիպպի ու Սմոլլիի մոտ. «Միստր Բրեֆը հրամայեց եղջուռնել ձեզ ու հաղորդել, որ ինքը կկամենար իմանալ՝ ինչո՞ւ են պարոնայք Սկիպպն ու Սմոլլին անհրաժեշտ գտել ծանոթանալ լեզվի Վերինդերի կտակին»:

Դա միստր Սմոլլիին ստիպեց անմիջապես դալ իմ գրասենյակը: Նա խոստովանեց, որ գործել է իր հաճախորդից ստացած հրահանգների համաձայն: Իսկ հետո ավելացրեց, որ ավելին ասելու իրավունք չունի, քանի որ դա պրոֆեսսորիալ էթիկայի խախտում կլիներ:

Մենք բավականաչափ վրձեցինք այդ հարցի շուրջը: Իհարկե՝ իրավացի էր նա և ոչ թե ես: Ծիշտն ասած, ես նեղացած էի, իմ մեջ կասկած էր արթնացել, և ես համառորեն ձգտում էի ավելին իմանալ: Բացի դրանից, ես հրաժարվեցի դա ինձ վստահված գաղտնիք համարել և գործողությունների լիակատար ազատություն պահանջեցի ինձ համար: Ավելին, ուզեցի անառարկելի օգուտներ քաղել իմ գրությունից:

— Ընտրեցեք, սըր,— ասացի միստր Սմոլլիին,— զրկվել կամ ձեր հաճախորդից, կամ իմ գործերից:

Համաձայն եմ, որ դա բոլորովին աններելի է բռնություն է, և ուրիշ ոչինչ: Մյուս բոլոր բռնակալների պես ես իմը պնդեցի: Միստր Սմոլլին ընտրություն կատարեց առանց փոքր-ինչ տատանվելու: Նա խոնարհաբար ժպտաց և տվեց իր հաճախորդի անունը:

— Միստր Գոդֆրի էբլուայթ:

Դա բավական էր, ավելին իմանալու կարիք չունեի:

Պատմությանս մեջ այս կետին հասնելով, ես պետք է այս տողերն ընթերցողին հաղորդակից դարձնեմ լեզվի Վերինդերի կտակի բովանդակությանը:

Կարճ ասած, ըստ այդ կտակի, Ռեչել Վերինդերը դուրըր անօրինելու իրավունք չուներ. այդ գույքը պարզապես ցմահ եկամուտ էր ապահովում նրա համար: Նրա մոր սքանչելի ողջամտությունն ու իմ երկարատև փորձառությունը նրան ազատեցին ամեն տեսակ պատասխանատվությունից ու պահպանեցին ազահ և անխիղճ մարդու զոհը դառնալու ամեն

տեսակ վտանգներին: Ոչ նա, ոչ էլ նրա ամուսինը (եթե Ռեչելն ամուսնանար) չէին կարող տնօրինել ոչ հողը, ոչ էլ կապիտալը: Նրանց տրամադրվել էին Լոնդոնի ու Յորքշիրի տները և լավ եկամուտ էր սպասուովվել: ահա և բոլորը:

Երբ ևս ծանր ու թևթև արեցի այն, ինչ իմացա, կանգնեցի փակուղու առջև. ի՞նչ անեմ: Դեռ մի շաբաթ էլ չէր անցել այն օրից, որ լսել էի (զարմանքով ու ցավով) միսս Վերինդերի նշանադրության մասին: Ես անկեղծորեն հիանում էի նրանով ու սիրում նրան, և ինձ համար անասելի տխուր էր լսել, որ նա առանց մտածելու որոշել է ամուսնանալ միստր Գոդֆրի էլլուայթի հետ: Եվ ահա հիմա այդ մարդը, որին ևս միշտ ճարպիկ լեզու ունեցող խաբեբա եմ համարել, արդարացրեց իր մասին ունեցածս ամենավատ կարծիքը և ուղղակի բացահայտեց, որ ամուսնանում է հաշվենկատորեն: «Իսկ ի՞նչ կա որ,—կարող եք ասել—Այդպիսի բան կատարվում է ամեն օր»: Համաձայն եմ, սիրելի սըր: Բայց արդյո՞ք դուք նույն թևթևությամբ կընդունիք դա, եթե գործը ձեր քրոջը վերաբերեր:

Բնական է, առաջին բանը, որի մասին մտածեցի, հետևյալն էր. արդյո՞ք միստր Գոդֆրի էլլուայթը այն բանից հետո, ինչ իր հանձնարարությամբ իմացել էր փաստաբանը, չի հրաժարվի իր հարսնացուից: Դա ամբողջությամբ կախված էր նրա դրամական հանդամանքներից, որոնց մասին ես ոչինչ չգիտեի: Եթե նրա դործերն այնքան էլ վատ չէին, նրա համար շահավետ էր միսս Ռեչելի հետ ամուսնանալ հանուն սոսկ միայն նրա եկամուտների: Եթե, մյուս կողմից, նրան հարկավոր էր շտապ կարգով մեծ գումար ճարել որոշակի ժամկետի, այդ դեպքում լեզի Վերինդերի կտակը հասել էր իր նպատակին և թույլ չէր տա, որ նրա դուստրը խարդավանի ձեռքն ընկներ:

Վերջին դեպքում ոչ մի անհրաժեշտություն չկար, որ ևս միսս Ռեչելին վշտացնեի մոր հետ կապված սգո առաջին իսկ օրերին, ճշմարտությունն անմիջապես ներկայացնելով նրան: Բայց առաջին դեպքում՝ լուրը նշանակում էր նպաստել ամուսնությանը, որ Ռեչելին կդժբախտացներ ամբողջ կյանքում:

Իմ կասկածները փարատվեցին, երբ ես այցելեցի Լոնդոնի այն հյուրանոցը, որտեղ կանգ էին առել միսսի էլլուայթն ու

միսս վերինդերը: Նրանք ինձ հաղորդեցին, որ հաջորդ օրը մեկնում են Բրայտոն և որ ինչ-որ մի անսպասելի խոշընդոտ միստր Գոդֆրի էրլուայթին խանդարեց ուղեկցելու իրենց: Անմիջապես առաջարկեցի, որ ես զբաղեցնեմ նրա տեղը: Ռեշել վերինդերի մասին մտածելիս դեռ կարելի էր տատանվել: Բայց նրան տեսնելուն պես՝ վճռեցի, ինչ ուզում է լինի՝ ասել ճշմարտությունը: Առիթը ներկայացավ իմ Բրայտոն ժամանելու հաջորդ օրը, երբ մենք Երկուսով գնացինք դրոսներու:

— Կարո՞ղ եմ, — հարցրի ես, — ձեզ հետ խոսել ձեր նշանադրության մասին:

— Այո, — պատասխանեց նա անտարբերորեն, — Եթե խոսակցության համար որևէ ավելի հետաքրքիր բան չունեք:

— Կներե՞ք ձեր ընտանիքի հին բարեկամին ու ծառային, միսս Ռեշել, եթե համարձակվեմ հարցնել՝ դուք սիրո՞ւմ եք ամուսնանում:

— Ամուսնանում եմ վշտից, միստր Բրեֆ, հույս ունենալով գտնել մի խաղաղ հանգրվան, որը կկարողանա ինձ հաշտեցնել կյանքի հետ:

Ուժեղ էր ասված: Եվ այս բառերի տակ, հավանաբար, սիրավեպ ակնարկող ինչ-որ բան է թաքնված: Բայց ես խոսակցության իմ թեման ունեի և շուղեցի շեղվել հիմնական հունից:

— Հազիվ թե միստր Գոդֆրի էրլուայթն էլ ձեզ պես մտածի, — ասացի ես: — Բայց նա, գոնե, սիրո՞ւմ է ամուսնանում:

— Նա այդպես է ասում, և ինձ թվում է ես պետք է նրան հավատամ: Այն բանից հետո, ինչը որ ես խոստովանեցի նրան, նա ինձ հետ չէր ամուսնանա, եթե ինձ չսիրեր:

Խնդիրը, որ ինքս ինձ առաջադրեցի, սկսեց սպասածիցս շատ ավելի դժվար թվալ ինձ:

— Իմ հնաոճ տեսանկյունից, — շարունակեցի ես, — շատ տարօրինակ է թվում...

— Ի՞նչը, — հարցրեց նա:

— Ձեր ձայներանգն ապացուցում է, որ դուք ձեր ապագա ամուսնու մասին խոսում եք այնպես, ասես այնքան էլ հավատացած չեք նրա զգացմունքների անկեղծության մեջ, կասկածելու որևէ հիմք ունե՞ք:

Զարմանալի խորաթափանցությունը նրան օգնեց անմիջապես նկատելու իմ ձայնի մեջ կատարված փոփոխությունը այդ հարցը տալիս, մի փոփոխություն, որը նրան ցույց տվեց, որ ես ինչ-որ որոշակի նպատակ եմ հետապնդում այս խոսակցություն մեջ: Նա կանգ առավ, իր ձեռքը դուրս քաշեց իմ ձեռքի միջից և սևեռուն նայեց ինձ:

— Միտար Բրեֆ, — ասաց նա, — ուղում եք ինձ ինչ-որ բան հազարդել Գոդֆրի էրլուայթի մասին: Ասեք:

Ես այնքան լավ էի ճանաչում նրան, որ առանց տատանվելու ամեն ինչ պատմեցի:

Նա նորից թևանցուկ արեց ինձ և շարունակեց դանդաղ քայլել: Ես զգում էի ինչպես նրա ձեռքը մերձենալորեն ավելի ու ավելի ամուր է սեղմում իմ թևը և տեսնում էի, թե ինչպես իմ ասածին համեմատ ավելի ու ավելի է գունատվում նա: Նրր վերջացրի, նա երկար ժամանակ լուռ էր: Գլուխը թեթևակի կախ գցած, նա քայլում էր իմ կողքով՝ չգիտակցելով իմ ներկայությունը, կլանված իր մտքերով: Ես շփի փորձում շեղել նրան: Ես լավ էի ճանաչում նրան, և դա ինձ հուշեց, ինչպես նման այլ դեպքերում, որ սթափվելու ժամանակ պետք է տալ:

Մոտավորապես մեկ մղոն անցնելուց հետո միայն Ռեչելը սլափվեց իր մտածումներից: Նա հանկարծ ինձ նայեց նախկին երջանիկ ժպիտի թույլ շողարձակումով, մի ժպիտ, որը կանանց դեմքին տեսածս բոլոր ժպիտներից ամենահմայլուն էր:

— Ես արդեն շատ բանով եմ պարտական ձեր բարությունը, — ասաց նա, — իսկ հիմա առաջվանից շատ ավելի պարտական եմ զգում ձեզ, եթե կոնդոն վերադառնալուց հետո դուք խոսակցություններ լսեք իմ ամուսնություն մասին, իմ անունից անմիջապես հերքեք դրանք:

— Որոշեցիք խզել կապերը ձեր փեսացուի հետ, — հարցրի ես:

— Արդյոք այն ամենից հետո, ինչ ասացիք ինձ, կարո՞ղ եք կասկածել դրանում, — հպարտորեն առարկեց նա:

— Միրելի միսս Ռեչել, դուք շատ երիտասարդ եք և, թերևս, ձեզ համար շատ ավելի դժվար լինի դուրս գալ այս դրությունից քան սպասում եք: Չունե՞ք որևէ մեկը, ես նկատի ունեմ որևէ կին, որի հետ կարողանայիք խորհրդակցել:

Այդ լսելով՝ ես վշտացա, շատ վշտացա: Այսքան երիտասարդ, և այսպիսի տոկունութեամբ է տանում ամեն ինչ: Նրան օգնելու ցանկութունն իմ մեջ հաղթահարեց այն անհարմարութեան զիտակցումը, որ ես կարող էի դգալ նման սպարազաներում, և պահի ազդեցութեամբ մտքովս անցածները հազորդեցի նրան, Կյանքումս ես խորհուրդներ էի տվել անհամար թվով հաճախորդների և զլուխ էի հանել շտիպադանց փափկանկատ հանգամանքները: Բայց սա առաջին դեպքն էր, երբ ես պետք է երիտասարդ աղջկան խորհուրդ տայի, թե ինչպես ազատվեր փեսացուին տված խոսքից: Տվածս խորհուրդը, համառոտակի, այսպիսին էր. միստր Գոդֆրի էբլուայթին ասել, անշուշտ, մեկուսի, որ իրեն հաստատ հայտնի է դարձել իր հետ նրա ամուսնանալու շահախնդրությունը, որ գրանից հետո իրենց ամուսնությունն ուղղակի անհնարին է դարձել, և ինքը նրան առաջարկում է ընտրություն կատարել, իր համար ապահովել Ռեչելի լուրթյունը, համաձայնվելով նշանադրությունը քանդելուն, կամ, հակառակ դեպքում, ինքը՝ Ռեչելը, հարկադրված կլինի հայտարարել նշանադրությունը քանդելու իսկական պատճառը: Իսկ Լիե Գոդֆրին փորձի պաշտպանվել կամ հերքել փաստերը, ապա ինքը՝ Ռեչելը, պետք է նրան ուղարկի ինձ մոտ:

Միսս Վերինդերն ուշագիտ լսեց ինձ: Հետո շատ մեղմորեն շնորհակալություն հայտնեց խորհրդի համար, բայց նկատեց, որ ինքը չի կարող հետեւել դրան:

—Կարո՞ղ եմ հարցնել,—ասացի ես,—ինչո՞ւ:

Նա, երեխ, տատանվում էր, իսկ հետո ինքն իր հերթին հարց տվեց ինձ.

—Իսկ եթե ձեզ խնդրեին կարծիք հայտնել միստր Գոդֆրի էբլուայթի վարքագծի մասին,—ասաց նա:

—Հետո՞:

—Ի՞նչ անուն կտայիք դրան:

—Սա այն կանվանելի ստոր խաբեբայի վարքագիծ:

—Միստր Բրեֆ, ես հավատացել եմ այդ մարդուն: Սա խոստացել եմ դառնալ այդ մարդու կինը: Ինչպի՞ս կարող եմ նրան ասել, թե նա ստոր է, թե նա խաբել է ինձ, ինչպի՞ս

կարող եմ այսքան բանից հետո նրան անվանարկել շրջապատի աչքում: Ինքս իմ աչքում նսեմացա նրա մասին մտածելով որպես իմ ապագա ամուսնու: Այժմ նրան ասել այն, ինչ դուք խորհուրդ եք տալիս, նշանակում է նրա առջև խոստովանել իմ սեփական ստորացումը: Ես չեմ կարող այդ անել: Ամոթը նրա համար ոչ մի նշանակություն չի ունենա: Բայց այդ ամոթն անտանելի կլինի ինձ համար:

Այդ ժամանակ դրսևորվեց Ռեչելի բնավորության հիանալի առանձնահատկություններից ևս մեկը: Ամենայն ստորի նկատմամբ ծայրահեղ զղվանքը նրան ստիպում էր մոռանալ, որ ինքը պետք է մտածի իր մասին, նրան դրել էր կեղծ դրություն մեջ և կարող էր անվանարկել բոլոր բարեկամների աչքում: Մինչ այդ ևս մի փոքր կասկածում էի, թե վայելո՞ւ է, արդյոք, իմ տված խորհուրդը, բայց նրա ասածներից հետո հավատացի, որ նրա վիճակում դա ամենալավ խորհուրդն է, և առանց որևէ տասանման սկսեցի համողել, որ հետևի դրան: Նա միայն զլուխն օրորեց ու նորից կրկնեց իր փոստարկները:

— Բայց, թանկագին միսս Ռեչել, — առարկեցի ես, — հնարավոր չէ նրան հայտարարել նշանադրությունը քանդելու մասին՝ առանց որևէ պատճառաբանություն բերելու:

— Ես կասեմ, որ մեկ անգամ էլ ամեն ինչ կշռադատեցի և գտա, որ երկուսիս համար էլ ավելի լավ կլինի բաժանվել:

— Եվ, դրանից բացի, ուրիշ ոչի՞նչ:

— Ուրիշ ոչինչ:

— Մտածե՞լ եք, թե ինչ կարող է ասել նա իր կողմից:

— Կարող է ասել, ինչ որ ուզում է:

Երբ այդ օրը ես թողեցի Ռեչելին, նրա հետ կատրված զգացումներս շատ հակասական էին: Նա համառ էր, նա իրավացի չէր: Նա հետաքրքիր էր, նա զարմանալի էր, նա արժանի էր խոր կարեկցանքի: Ես նրան ստիպեցի խոստանալ, որ հաղորդելու բան ունենալու դեպքում կգրի ինձ, և շատ տաղնապալի վիճակում վերադարձա Լոնդոն:

Իմ վերագառնալու երեկոյան, երբ դեռ չէր կարող ստացված լինել խոստացված նամակը, անսպասելիորեն ինձ այցելեց միստր էբլուայթ ավագը, որպեսզի հաղորդի, թե միստր Գոդֆրին մերժում է ստացել և հենց այդ օրն էլ ընդունել է այն:



Իմ տեսանկյունից, այս վերջին բառերի մեջ ամփոփված հասարակ փաստը միստր Գողֆրի էբլուայթի համաձայնության պատճառը բացատրում էր նույնքան պարզորոշ, որքան, եթե ինքն անձամբ խոստովանած լիներ այն. իրեն հարկավոր էր մեծ գումար, և հարկավոր էր որոշակի ժամկետում: Ռեշնլի եկամուտը կարող էր օգնել մնացած բոլոր բաներում, բայց ո՛չ դրանում, և ահա թե ինչու Ռեշնլին աղատվեց նրանից՝ նրա կողմից շնչին իսկ դիմադրության շահնդիպելով: Եթե ինձ ասեն, թե դա պարզապես ենթադրություն է, ես իմ հերթին կհարցնեմ՝ ուրիշ ի՞նչ ենթադրություն կրացատրի, թե ինչու նա հրաժարվեց այն ամուսնությունից, որը նրան հարստություն կտար մնացած ամբողջ կյանքի համար:

Ուրախությունը, որ ես ասլրեցի գործերի այսքան լավ ընթացք ստանալու առիթով, մթազնեց այն, ինչ կատարվեց ծերունի էբլուայթի հետ ունեցած հետագա խոսակցության ժամանակ:

Նա, անշուշտ, եկել էր իմանալու, թե շե՞մ կարող ես իրեն բացատրել միսս Վերինդերի տարօրինակ վարմունքը: Անօգուտ է ասել, որ ես ոչ մի կերպ չէի կարող հարկավոր տեղեկություններ տալ նրան: Ափսոսանքը, որ պատճառեցի նրան, և վերջերս որդու հետ ունեցած տեսակցությունից առաջացած ջղազրգուծությունը միստր էբլուայթին ստիպեցին կորցնելու ինքնատիրապետումը: Նրա և՛ դեմքը, և՛ խոսքերն ինձ համոզեցին, որ միսս Վերինդերը նրանից գթասրտություն չի կարող սպասել, երբ նա հաջորդ օրը Բլայտոն գա իր մոտ:

Ես տազնապալի գիշեր անցկացրի, մտածելով, թե ինչ եմ անելու հիմա, Թե ինչով ավարտվեցին այդ խորհրդածությունները և թե ինչպես դրանք արդարացրին իմ անվստահությունը ավագ միստր էբլուայթի հանդեպ, արդեն (որքան ինձ հայտնի է) հարկ եղած տեղում պատմել է այդ առաքինի անձնավորություն միսս Կլակը: Ինձ մնում է միայն նրա պատմության վրա ավելացնել, որ միսս Վերինդերը հանգիստ ու անդորր գտավ (որոնց կարիքն այդ խեղճ աղջիկը շատ խիստ զգում էր) իմ տանը՝ Հեմպտեդում: Նա պատիվ արեց մեզ, երկար ժամանակով հյուրընկալվելով մեզ մոտ, Կինս ու աղջիկներս հմայված էին նրանով, իսկ երբ կտակակատարները նոր խնա-

մակալ ընտրեցին, ես անկեղծ հպարտութիւն ու գոհունակութիւն զգացի, մտածելով, որ իմ հայրն ու իմ ընտանիքը բաժանվեցին որսիկս լավ բարեկամներ:

## Գ Լ ո Վ Խ Ի Ի

Հիմա ինձ մնում է հաղորդել այն լրացուցիչ տեղեկութիւնները, որ ինձ հայտնի են Լուսնաբարի կամ, ավելի ճիշտ, այն ծրագրի մասին, որ կազմել էին հնդիկները Լուսնաբարը հափշտակելու համար: Այն քիչ բանը, որ մնում է ինձ ասել (կարծեմ, արդեն ասել եմ այդ մասին), այնուամենայնիվ, բավականաչափ կարևոր է առջևում մեզ սպասող նշանավոր դեպքերի տեսանկյունից:

Միսս Վերինդերի՝ մեր տնից գնալուց մի շաբաթ կամ մի տասը օր հետո գրասենյակի ծառայողներից մեկը, այցետոմսը ձեռքին, մտալով իմ աշխատասենյակը և հաղորդեց, որ ինձ հետ խոսել կամենցող ինչ-որ մի պարոն է սպասում ներքևում:

Ես աչքի անցկացրի այցետոմսը: Այնտեղ գրված էր արդեն հիշողութիւնիցս ջնջված օտարերկրյա մի աղգանսւն: Աղգանվան տակ անգլերենով գրված էին բռներ, որոնք ես շատ լավ մտապահեցի. «Միստր Սեպտիմուս Լյուկերի հանձնարարութեամբ»:

Այնպիսի մի մարդու հանդգնութիւնը, ինչպիսին միստր Լյուկերն է, որ համարձակվել էր ինչ-որ մեկին հանձնարարել ինձ մոտ գալու, այն աստիճան զարմացրեց, որ ես մի պահ լուռ նստեցի՝ ինքս ինձ հարցնելով, թե արդյո՞ք աչքերս ինձ շին խաբել: Գրասենյակային ծառայողը, զարմանքս նկատելով, հարկ համարեց ինձ հաղորդել ներքևում սպասող օտարերկրացու՝ իր անձնական զննումների արդյունքը:

—Այդ մարդը հիանալի արտաքին ունի, սըր. այնքան թուխ է, որ գրասենյակում բոլորս հնդիկի կամ այգպիսի ինչ-որ մեկի տեղ ընդունեցինք նրան:

Գրասենյակային ծառայողի կարծիքը մտովի առնչելով ձեռքիս բռնած այցետոմսի վրայի ինձ համար վիրավորական տողի հետ, անմիջապէս մտածեցի, որ միստր Լյուկերի հանձնարարականը և օտարերկրացու այցելութիւնը վերաբերում են

Լուսնաքարին: Ի դարձանս իմ գրասենյակային ծառայողի, ևս որոշեցի անհապաղ ընդունել ներքևում սպասող սլարոնին:

Ի արդարացումն հետաքրքրութեան համար արած իմ վերին աստիճանի ոչ պրոֆեսիոնալ զոհարերութեան, ինձ թույլ եմ աւելիս այս տողերը կարգացող ամեն մեկին հիշեցնել, որ ոչ մի մարդ (գոնե՛ Անգլիայում) չէր կարող ասել, թե ինքն ավելի- ցերտ կապ ունի Լուսնաքարի հետ, քան ես: Գնդապետ Հեռնկաս- տլը ինձ էր վստահել այն ծրագիրը, որ ինքը կազմել էր վրիժա- րունների ձեռքով մեռնելուց խուսափելու համար: Ես պարբերա- քար ստանում էի գնդապետի նամակները, որոնք հազորդում էին, որ նա ողջ է, Ես էի կազմել այն կտակը, որով նա Լուսնաքարը նվիրաբերել էր միսս Վերինդերին: Ես էի կտակակատարին համոզել, որ ընդունի իր վրա դրված պարտականությունը, քանի որ այդ ավաստը կարող է թանկարժեք գյուտ լինել իր ընտանիքի համար: Վերջապես, ես էի հաղթահարել միստր Ֆրենկլին Բլեկի անվճռականությունը և նրան համոզել ալ- մաստը տանելու լեզի Վերինդերի տուն: Կարծում եմ, որ ոչ ոք չի կարող ժխտել Լուսնաքարով բոլորից շատ հետաքրքրվելու իմ իրավունքը:

Նույն պահին, երբ իմ խորհրդավոր այցելուն իմ սենյակն առաջնորդվեց, ես ներքուստ համոզվեցի, որ իմ առջև կանգնած է երեք հնդիկներից մեկը, հավանաբար, ղեկավարը: Նա շատ խնամքով հարդարված և վրոպական զգեստով էր, Բայց թուխ գեմքը, բարակ ճկուն մարմինը, սիրալիրությունն ու նուրբ շարժուձևը բավական էին, որ յուրաքանչյուր զիտողունակ հայացք նրա մեջ տեսներ արևելյան ծագում ունեցողին:

Ես նրան հրավիրեցի նստելու և խնդրեցի հազորդել, թե ինչն է իրեն բերել ինձ մոտ:

Նախ, ներողություն խնդրելով (անգլիական ամենակիրթ արթահայտություններով), որ համարձակվել է անհանգստաց- նել ինձ, հնդիկը հանեց ոսկե փարչայով սլարուրված մի փոք- րիկ փաթեթ, Հանելով այդ և ինչ-որ մետաքսյա գործվածքից պատրաստված ևս մեկ ուրիշ փաթաթվածք, նա սեղանին դրեց երեքնասփայտե մի փոքրիկ արկղիկ կամ, ավելի ճիշտ, զար- գատուփ՝ գեղեցկորեն դրվագված թանկագին քարերով:

— Եկել եմ ձեզ խնդրելու, սըր,— ասաց նա,— որ փոխարի-

նարար փող տաք ինձ: Իսկ սա ևս կթողնեմ ձեզ մոտ որպես զբաւի:

Նս մատնացուլց արեցի նրա այցեւորմամբ:

— Գուք ինձ եք գիմել միտար կյուկերի հանձնարարականով,— հարցրի ևս:

Հնդիկը գլուխ տվեց:

— Կարո՞ղ եմ հարցնել, թե ինչո՞ւ միտար կյուկերն ինքը փող չի տվել ձեզ:

— Միտար կյուկերն ինձ ասաց, սբբ, որ ինքը ազատ փող չունի:

— Եվ ձեզ խորհուրդ տվեց գիմելու ի՞նձ:

Հնդիկը, իր հերթին, մատնացուլց արեց այցեւորմամբ:

— Այստեղ այդպես է գրված:

Հակիրճ ու ճշգրիտ պատասխան: Եթե կուսնաբարն ինձ մոտ լիներ, հաստատ հավատացած եմ, այդ արևելյան ազնվականն առանց փոքր-ինչ առտանվելու կսպաներ ինձ: Եվ, միևնույն ժամանակ, բացառութեամբ հիշյալ ոչ հաճելի փոքրիկ հանգամանքի, յետք է ստեմ, զա հիրավի օրինակելի այցելու էր: Գուցեև նա շափտոսար իմ կյանքը, բայց նա արեց այն, ինչ իմ հայրենակիցներից ոչ որ երբեք չէր արել. նա ափսոսաց իմ ժամանակը:

— Ափսոսում եմ,— ասացի ևս,— որ դուք անհանգստացել եք ինձ մոտ զալով: Միտար կյուկերը սխալվել է ձեզ ինձ մոտ ուղարկելով: Ինձ, ինչպես և իմ մասնագիտութեան մյուս մարդկանց, հանձնարարում են փող տալ փոխարինաբար: Բայց ես երբեք ինձ անձանոթ մարդկանց փող չեմ տալիս նաև այնպիսի գրավով, ինչպիսին ձերն է:

Ամենևին չփորձելով, ինչպես այդ կանեին ուրիշները, համոզել ինձ, որ հրաժարվեմ իմ կանոններից, հնդիկը մեկ անգամ ևս գլուխ տվեց և, ոչ մի բառ շարտաբերելով, իր զարդատուփը պարուրեց երկու հաթաթովածքի մեջ: Նա, այդ զմայլելի մարդասպանը, վեր կացավ իմ սլատասխանելուց անմիջապես հետո:

— Կարո՞ղ եք ներողամիտ լինել օտարերկրացու հանդեպ,— ասաց նա,— թույլ տալով ինձ զնաւուցս առաջ մի հարց տալ ձեզ:

Նս էլ իմ հերթին գլուխ տվի: Միայն մեկ հարց՝ հրաժեշտի պահին: Մինչդեռ ինձ սովորաբար հիսուն հարց են տալիս:

— Ենթադրենք, սրբ, որ դուք փոխարինութեամբ փող տալից ինձ,— ասաց նա,— ինչ ժամկետում պետք է այն վերադարձնելի ձեզ:

— Մեր երկրի սովորութեան համաձայն,— պատասխանեցի ես,— դուք իրավունք կունենայիք պարտքը վերադարձնել, եթե կամենայիք, մեկ տարի հետո, ճիշտ և ճիշտ նույն օրը, ոչ շուտ:

Հնդիկը մի վերջին անգամ գլուխ տվեց ինձ, առաջվանից ավելի ցածր խոնարհվելով, և հանկարծ անազձուկ դուրս եկավ սենյակից:

Դա կատարվեց մի ակնթարթում. նա դուրս սահեց կամացուկ, ճկուն, կատվի քայլվածքով, որը, խոստովանում եմ, մի փոքր վախեցրեց ինձ: Երբ այն աստիճան սթափվեցի, որ կարող էի մտածել, մի պարզորոշ եզրակացութեան հանգեցի անհասկանալի հյուրի առնչութեամբ, որն ինձ արժանացրել էր իր այցելութեանը: Մեր զրույցի ժամանակ նա այնքան լավ էր տիրապետում իրեն, որ ոչ նրա դեմքից, ոչ նրա ձայնից ոչինչ կուսհել հնարավոր չէր: Բայց եղավ մի պահ, երբ նա այնուամենայնիվ ինձ հնարավորութուն տվեց նայելու այդ դիմակի տակ: Նա շնչին իսկ հետաքրքրութուն չցուցաբերեց ասածներիցս որևէ մեկի նկատմամբ, մինչև որ ես հիշատակեցի, թե ինչ ժամկետում վճարելու իրավունք ունի պարտապանը: Միայն այդ ժամանակ նա առաջին անգամ ուղիղ նայեց երեսիս: Դրանից ես եզրակացրի, որ այս վերջին հարցը նա ինձ տվեց առանձնահատուկ նպատակով. նա իմ պատասխանը լսելու առանձնահատուկ շահ ունեւր: Որքան ավելի շատ էի մտածում մեր խոսակցութեան մասին, այնքան ավելի շատ էի կասկածում, որ բերած զարգատուվին ու փոխառութեան վերաբերյալ խնդրանքը պարզապէս պատրվակ էին, գործադրված՝ դեպի՝ ինձ արված վերջին հարցը ճանապարհ բացելու համար:

Հավատալով այդպիսի եզրակացութեան ճշմարտացիութեանը, աշխատեցի հաջորդ քայլն անել և կուսհել հնդիկի գալու պատճառը: Հենց այդ ժամանակ ինձ բերեցին անձամբ Սեպտիմուս Կլոկերի նամակը: Նա զզվելիորեն ստրկական արտահայտութեաններով ներողութուն էր խնդրում ինձնից և հավատացնում էր, որ ամեն ինչ կարող է ինձ համար գոհացուցիչ ձևով

րացաւորել, եթե ես իրեն արժանացնեմ անձնական հանդիպման:

Մեկ անգամ ես գործերս դոճարերելով հասարակ հետաքրքրաւորութեան համար, ես նրան տեսակցութեան նշանակեցի հաջորդ օրը, իմ գրասենյակում:

Պարզվեց, որ միստր Լյուկերը բոլոր տեսակետներից շատ ավելի քիչ արժանավոր մարդ է, քան հնդիկը. նա այնքան գոհակիկ էր, այնքան անճոռնի, այնքան ստրկամիտ, որ շարժե այս էջերում հանգամանորեն նկարագրել նրան: Ահա այն ամենի էությունը, ինչ նա ասաց ինձ:

Այդ գեղատեսիլ հնդիկը ինձ այցելելու նախորդ օրը իր այցելութեամբ պատիվ է արել միստր Լյուկերին: Չնայած նրա եւրոպական ղգեստին, միստր Լյուկերն անմիջապէս իր հյուրի մեջ ճանաչել է այն երեք հնդիկներին գլխավորին, որոնք, ինչպէս հիշում է ընթերցողը, այնքան էին ձանձրացրել իրեն՝ իր տան մոտ թրև դալով, որ ինքը ստիպված էր եղել դատի տալ նրանց: Այս տարօրինակ հայտնագործութեան անելով, նա եկել էր այն եզրակացութեան (խոստովանում եմ, բավականաչափ բնական), որ հնդիկը, անտարակույս, այն երեք մարդկանցից մեկն է, որոնք կապել էին իր աչքերը, խցել բերանը և իրենից խլել բանկիրի ստացականը: Դրա հետևանքով նա ընդարմացել էր սարսափից և հաստատ հավատացած եղել, որ իր վերջը եկել է: Սակայն հնդիկն իրեն այնպէս էր պահել, ասես իրենք առաջներում երբեք չէին հանդիպել: Նա հանել էր փոքրիկ դարդատուփը և դիմել միստր Լյուկերին ճիշտ նույնպիսի խնդրանքով, ինչպիսի խնդրանքով որ դիմել էր ինձ: Կամենալով հնարավորին չափ շուտ ազատվել նրանից, միստր Լյուկերն անմիջապէս պատասխանել էր, որ ինքը ազատ փող չունի: Այդ ժամանակ հնդիկը խնդրել էր ցույց տալ այնպիսի մի մարդու, որին ավելի նպատակահարմար կլիներ դիմել փոխառութեան համար: Միստր Լյուկերը պատասխանել էր, թե նման դեպքերում ավելի լավ է և ավելի նպատակահարմար դիմել լավ համբավ վայելող փաստաբանի: Հնդիկը խնդրել էր ցույց տալ այդպիսի համբավի ու այդպիսի մասնագիտութեան տեր մարդու, և միստր Լյուկերը իմ անունն էր տվել այն պարզ պատճառով, որ, ծայրաստիճան վախեցած լինելով, արտարերել էր միտքն ընկած առաջին իսկ անունը:

—Քրտինքը վրայիցս թափվում էր անձրեւի պես, սրբ,—  
ամփոփեց իր խոսքը այդ դժբախտը։— Ինքս էլ չգիտեի, թե ինչ  
եմ ասում։ Հուլիս ունեմ, որ դրա համար ինձ շեք մեղադրի, սրբ,  
ուշադրութեան աննկելով, որ ես մահու շափ վախեցած եմ եղել։

Ես բավականաչափ սիրալիր ձևով ներեցի այդ մարդուն։  
Դա նրանից ազատվելու ամենակարճ եղանակն էր։ Երբ նա  
պատրաստվում էր գնալու, սլահեցի՝ մի հարց տալու համար.  
միտքը կյուկերի տնից դուրս դալու պահին ուշադրութեան  
արժանի որևէ բան չի՞ ասել հնգիկը։

Այո։ Հնգիկը միտքը կյուկերից հարցրել է հենց այն, ինչ  
հեռանալիս հարցրել է նաև ինձնից և, իհարկե, ստացել է նույն  
պատասխանը։

Ինչ էր նշանակում դա, Միտքը կյուկերի բացատրութեանն  
ինձ չօգնեց, Իմ սեփական հնարամտութեանը, որին դիմեցի,  
ինձ չօգնեց։ Այդ երեկո ես հրավիրված էի ճաշի և վերև՝ իմ  
սենյակը, գնացի շորերս փոխելու ամենևին ոչ հաճելի տրամա-  
դրութեամբ։ Ես չէի մտածում, որ վերև՝ իմ սենյակը, տանող  
ճանապարհը տվյալ դեպքում ինձ համար կլինի հայտնադոր-  
ծութեան ճանապարհ։

### Գ Լ Ո Ւ Խ III

Այդ ճաշկերույթին պատվավոր հյուր եղավ միտքը Մերտու-  
հալը։

Երբ նա իր բոլոր թափառումներից հետո Անգլիա վերադար-  
ձավ, հասարակութեանը շատ հետաքրքրվեց այդ ճանապար-  
հորով, որը բազում արկածներ էր ունեցել և բազում վտանգ-  
ներ հաղթահարել հաջողութեամբ։ Այժմ նա հայտարարեց, թե  
մտադիր է նորից վերադառնալ իր սխրագործութեանների աս-  
տուրեզը և թափանցել դեռևս բոլորովին շուտամնասիրված  
սեռագավառներ։ Այդպիսի հրաշալի անտարբերութեանը վտանգ-  
ների նկատմամբ, որոնց նա պատրաստ էր կրկին ենթարկել  
իր կյանքը, բարձրացրեց այդ հերոսի նկատմամբ արդեն թու-  
լանալ սկսող հետաքրքրութեանը։ Հավանականութեանների  
տեսութեանը բացահայտորեն դեմ էր նրա նոր փրկութեան  
հարավորութեանը։ Ամեն օր չէ, որ մեզ վիճակվում է ճաշի

սեղանի շուրջը հանդիպել նշանավոր մարդու և զգալ, որ, շատ հավանական է, շուտով նրա սպանութեան լուրը կստացվի:

Երբ տղամարդիկ մենակ մնացին ճաշասրահում, ես հայտնվեցի միստր Մերտուեռի մոտ: Արժե՞ արդյոք հիշատակել, որ բոլոր հյուրերը, անգլիացի լինելով, հենց որ կանանց ներկայությունը դադարեց իրենց ճնշելուց, սկսեցին քաղաքականությունից խոսել:

Պետք է խոստովանեմ, որ իմ հայրենակիցների մեծ մասի համար այնքան այրող հետաքրքրություն ներկայացնող այդ թեմայի առումով ես աշխարհում երբևէ ապրած ամենառատիպական անդլիացիներից մեկն եմ: Քաղաքականությանը վերաբերող խոսակցությունը, որպես կանոն, ինձ թվում է բոլոր խոսակցություններից ամենատխուրն ու ապարդյունը: Երբ շիշն առաջին անգամ շրջան գործեց սեղանի շուրջը, ես, միստր Մերտուեռին նայելով, տեսա, որ նա էլ, ըստ երևույթին, կիսում է իմ մտածելակերպը: Նա իրեն պահում էր զգույշ, իր տիրոջ զգացմունքների նկատմամբ ամենայն հարգանքով, բայց, այնուամենայնիվ, երևում էր, որ նա պատրաստվում է ննջելու: Մտքովս անցավ նրա քունը փախցնել լուսնաքարի շուրջը խոսակցություն սկսելով, և, եթե հաջողվի, իմանալ նրա կարծիքը հնդիկների այն դավադրության հետագա զարգացման մասին, որ կատարվել էր իմ գրասենյակի պրոդայիկ իրադրության մեջ:

— Եթե շեմ սխալվում, միստր Մերտուեռ, — սկսեցի ես, — դուք ծանոթ եք եղել հանգուցյալ լեդի Վերինդերին և, կարծես, հետաքրքրվել եք այն տարօրինակ դեպքերով, որոնք ավարտվել են լուսնաքարի անհետացումով:

Նշանավոր ճանապարհորդն ի պատիվ ինձ անմիջապես արթնացավ իր քնից և հարցրեց, թե ով եմ ես: Ես նրան հաղորդեցի Հեռնկաստլների ընտանիքի հետ իմ ունեցած հարաբերությունների մասին, շնորհակալով հիշատակել նաև այն տարօրինակ դիրքը, որ ես գրավում էի գնդապետի ու նրա ավամատի հետ կապված հարցում: Միստր Մերտուեռն այնպես շրջվեց իր աթոռի վրա՝ որպեսզի իր թիկունքում թողնի բոլոր ներկա գտնվողներին (և՛ պահպանողականներին, և՛ լիբերալներին) և իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց հասարակ փաստարան միստր Բրեֆի վրա:



—Վերջին ժամանակներս որևէ բան լսվե՞լ է հնդիկներէ մասին,—հարցրեց նա:

—Սս բոլոր հիմքերն ունեմ ենթադրելու, որ նրանցից մեկը երեկ եկել է իմ գրասենյակը,— պատասխանեցի ես:

Միտար Մերտուեստին այնքան էլ հեշտ չէր գարմացնել, բայց իմ այդ պատասխանը ուղղակի ասլշեցրեց նրան: Սս պատմեցի, թե ինչ էր պատահել միտար կյուկերին և ինչ էր նպատահել ինձ, ճիշտ և ճիշտ ինչպես որ վերևում նկարագրել եմ:

—Պարզ է, որ հնդիկի՞ հրաժեշտի պահին տված հարցը ինչ-որ նպատակ է ունեցել,—ավելացրի ես:—Ինչո՞ւ նա այդքան շատ էր ուղում իմանալ, թե պարտապանն ինչ ժամկետում իրավունք ունի վճարելու իր պարտքը:

—Հնարավո՞ր է, որ դուք դա չեք հասկանում, միտար Բրեֆ:

—Ամաշում եմ իմ անխելքությունից, միտար Մերտուեստ, աայց չեմ հասկանում:

Նշանավոր ճանապարհորդն ուղեց իմ անխելքությունը շափել մինչև խորքը:

—Թույլ տվեք մի հարց տալ ձեզ,—ասաց նա:—Ի՞նչ են պատրաստվում անել հիմա հնդիկները, որոնց նպատակն է հափշտակել կուսնաքարը:

—Դա չեմ կարող ասել,—պատասխանեցի ես:—Հնդիկները մտադրություններն ինձ համար զազտնիք են:

—Հնդիկների մտադրությունները, միտար Բրեֆ, ձեզ համար զազտնիք են միայն այն պատճառով, որ դուք երբեք լրջորեն չեք մտածել դրանց մասին: Եկեք վերհիշենք բոլոր դեպքերը այն ժամանակից սկսած, երբ դուք կազմել եք գնդապետ Հեռնկոստլի կտակը, և մինչև այն պահը, երբ այդ հնդիկը եկել է ձեզ գրասենյակը: Ընտանեկան իրավաբանի ձեզ դիրքում կարող է շատ կարևոր լինել, որպեսզի դուք կարողանայիք, եթե դա անհրաժեշտ լինի միսս Վերինդերի շահերի համար, պարզ պատկերացում ունենալ ամբողջ գործի մասին: Այս տեսակետից, ասացեք, ի՞նչն է ձեզ համար ավելի հետաքրքիր՝ ստիճանաբար մոտենա՞լ հնդիկների դրդիչ պատճառներին ըմբռնանք, թե՞ ուզում եք, որ ես ձեզ ազատեմ տրամաբանական ինքնուրույն վերլուծության հոգսերից և անմիջապես ասեմ, թե ինչ եմ ինքս մտածում:

Անօգուտ է ասել, որ ես միանգամայն դնահատեցի երկու առաջարկներից առաջինի դործնական իմաստը և հենց դա էլ ընտրեցի:

— Շատ լավ, — ասաց Մերտուենտը: — Ամենից առաջ անդրադառնանք Երեք հնդիկների տարիքին: Ես նրանց տեսել եմ, և երեքն էլ նույն տարիքի են թվում, իսկ ձեզ այցելած հնդիկը կյանքի տմենածաղկուն շրջանում է գտնվում: Կարծում եք նա քառասուն տարեկա՞ն էլ չի լինի: Ես էլ եմ այդ կարծիքին: Ասենք թե նա դեռ քառասուն տարեկան էլ չկա. այժմ մի հետադարձ հայացք դցեք այն ժամանակների վրա, երբ ղնդապետ Հենոկաստը Անդիա եկավ և երբ դուք ներգրավվեցիք իր կյանքի պահպանման համար նրա մտածած ծրագրի մեջ: Ես ձեզ չեմ ստիպի տարիները հաշվել: Միայն կասեմ՝ պարզ է, որ այդ հնդիկներն իրենց տարիքով պետք է լինեն այն երեք հնդիկների ժառանգորդները (նկատի ունեցեք, միստր Բրեֆ, բոլորն էլ ամենաբարձր կաստայի բրահմաններ են), որոնք ղնդապետի Լտևից եկել են այստեղ: Շատ լավ: Մեր այս հնդիկները եկել են փոխարինելու նրանց, որոնք այստեղ են հղել նրանցից առաջ: Եթե խոսքը միայն դրան վերաբերեր, ապա դործը մի առանձին հետաքրքրություն չէր ներկայացնի: Բայց նրանք ավելին են արել: Նրանք անցել են այն կազմակերպութ-  
վյան գլուխ, որը նրանց նախորդները ստեղծել էին այդ երկը-  
րում: Չվախենաք: Ես չեմ կասկածում, որ այդ կազմակերպու-  
թյունը, մեր հասկացողությամբ, պարզապես դատարկ բան է: Նրա նպատակն է փող ունենալ իր տրամադրության տակ, օգտվել այն կասկածելի տեսակի անզխտցիների ծառայու-  
թյուններից, որոնք հանելուկային կյանք են վարում Լոնդո-  
նում, և, վերջապես, հենվել այն սակավաթիվ հայրենակիցների համակրանքի վրա, որոնք զանազան գործեր են կատարում այդ մեծ քաղաքում: Դուք տեսնում եք, որ դրանում ոչ մի վստահավոր բան չկա: Բայց այդ մասին արժե հիշատակել, որովհետև, գուցե, մեր հետագա դատողություններում դեռ-  
ևս հարկ կլինի անդրադառնալ հնդկական այդ փոքրիկ համեստ կազմակերպությանը: Այժմ, վիճակը ճշգրտելով, մի հարց տամ ձեզ և հույս ունեմ, որ ձեր անձնական փորձը կօգնի ձեզ պատասխանելու դրան: Ի՞նչ եք կարծում, ո՞ր դեպքը ավաստը հակաշտակելու առաջին հնարավորությունը տվեց հնդիկներին:

Ես հասկացա, թե ինչու նա հիշատակեց իմ անձնական փորձը:

— Առաջին հնարավորութիւնը, — պատասխանեցի ևս, — նրանց տրվեց գնդապետ Հեռնկաստեղի մահով: Ենթադրում եմ, որ նրա մահն անմիջապէս հայտնի է դարձել նրանց:

— Անշուշտ: Ուրեմն, ասում եք, առաջին հնարավորութիւնը նրանց տվել է այդ մահը: Մինչև այդ կուսնաքարը պահպանված է եղել բանկիրներէի գանձատանը: Դուք եք օրինական ձեռովել գնդապետի կտակին, որով նա թանկարժեք քարը թողել է իր զարմուհուն: Կտակը ներկայացվել է սովորական կարգով: Դուք, որպէս իրավաբան, ատանց դժվարութեան կուահե՞լ եք, թե այս ամենից հետո ինչ կարող էին ձեռնարկել հնդիկները անզլիացիներէի խորհրդով:

— Դոկտոր-Կոմոնսից վերցնել կտակի պատճենը, — ասացի ես:

— Ճիշտ այդպէս: Կասկածիլի անզլիացիներէից մէկը կամ մյուսը, որոնց ևս հիշատակեցի, նրանց համար ձեռք է բերել պատճենը: Նրանք այդ պատճենից իմացել են, որ կուսնաքարը կտակված է լեդի Վերինդերի դստերը, և որ միտտը Բլեկ ավագը կամ նրա ընտրած մարդը պետք է այդ քարը անձամբ հանձնի Ռեչելին: Համաձայնվեք, որ լեդի Վերինդերի և միտտը Բլեկի նման մարդկանց մասին բոլոր անհրաժեշտ տեղեկութիւններ ստանալը շատ հեշտ է: Հնդիկներէին մնում էր միայն որոշել, թե երբ փորձեն հափշտակել ավագատը. բանկից այն վերցնելու ժամանակ, թե՞ ավելի ուշ, երբ այն կտանեն Յորքշիր, լեդի Վերինդերի տուն: Երկրորդը, անկասկած, ավելի անվտանգ է եղել, և ահա ձեզ անպարարի շորեր հագած հրեզդիկներէի՝ Ֆրիդլինհոլում հայտնվելու բացատրութիւնը: Անօգուտ է ասել, որ Լոնդոնի կաղմակերպութիւնը նրանց տեղեկ է պահել բոլոր իրադարձութիւններին: Դրա համար բովական էր երկու մարդ: Մեկը պետք է հետևեր նրան, ով բանկ էր գնացել միտտը Բլեկի տնից: Մյուսը, հալանաբար, պետք է գարեջուր հյուրասիրեր միտտը Բլեկի տան սպասավորներին և նրանցից իմանար տնային նորութիւնները: Այսպիսի պարզ ու հասարակ եղանակով նրանք իմացել են, որ միտտը Ֆրեյնլին Բլեկը եղել է բանկում և որ նա տան միակ մարդն է, որ պարտատվել է այցելել լեդի Վերինդերին: Թե ինչ կատարվեց

այդ տեղեկութիւններէ հեռանալով, ինքներդ, հավանաբար, նույնքան լավ էր հիշում, որքան և ես:

Ես հիշեցի, թե ինչպէս Ֆրենկլին Բլեկը փողոցում նկատել էր, որ իրեն հետևում են, ինչպէս դրա հետևանքով նա Յորքշիր էր մեկնել մի քանի ժամ շուտ և ինչպէս ծերուկ Բևտտերեջի հիանալի խորհրդի շնորհիվ այժմաստը Ֆրիդլենհոլի բանկն էր հանձնել ավելի շուտ, քան հնդիկներն իմացել էին Յորքշիրում նրա հայտնվելու մասին: Մինչև հիմա ամեն ինչ միանգամայն պարզ էր: Բայց քանի որ հնդիկները շդիտեին ձեռնարկած նախազգուշութիւնների մասին, ապա ինչպէ՞ս կարող էր պատահել, որ նրանք Ֆրենկլին Բլեկի ժամանակու օրվանից մինչև Ռեչլի ծննդյան օրն ընկած ամբողջ ժամանակամիջոցում որևէ փորձ չանեին թափանցելու լեզի վերինդերի տունը, որ տեղ, նրանց կարծիքով, պետք է գտնվեր այժմաստը:

Միստր Մերտուեռին այս հարցն առաջադրելով, ես անհրաժեշտ համարեցի ավելացնել այն, ինչ լսել էի տղայի, թանաքի և մնացած բոլոր բաների մասին, և որ պայծառատեսութիւն իմացութեան վրա հիմնված բացատրութիւնը համոզիչ չէ ինձ համար:

— Ինձ համար նույնպէս, — պատասխանեց միստր Մերտուեռը: — Պայծառատեսութիւնը սովոր դեպքում հնդկական ընտելութեան ուսմանտիկ կողմի դրսևորումն է պարզապես: Հոգնեցուցիչ և վտանգավոր ձեռնարկումը օտար երկրում հրաշագործութեան ու գերբնականութեան տարրերով շրջապատելը այդ մարդկանց համար նշանակում է թարմացնել ու հանգըստացնել հոգին: Համաձայն եմ, որ դա բոլորովին անհասկանալի է անգլիացու համար: Նրանց տղան, անկասկած հիպնոսի նկատմամբ զգայուն անձնավորութիւն է և դրա ազդեցութեան տակ արձագանքում է այն ամենին, ինչ զգում է իրեն հիպնոսացնող մարդը: Ես ուսումնասիրել եմ պայծառատեսութեան տեսութիւնը, և ինձ չի հաջողվել արձանագրել, որ նրա գործնական դրսևորումները այդ կետից հեռուն գնային: Հնդիկները այլ կերպ են նայում այդ հարցին. հնդիկներն իրենց տղային համարում են իրենց աչքի համար անտեսանելի առարկաները տեսնելու ընդունակ. և, կրկնում եմ, նրանք այդ հրաշքի մեջ նոր հետաքրքրութեան աղբյուր են գտնում իրենց միավորող նպատակին հասնելու համար: Ես այս մասին հիշատակում եմ.

միայն որպէս մարդկային բնավորութեան մի հետաքրքիր դժի, որը բոլորովին նոր է մեզ համար: Որոնումներ կատարելիս, որոնցով այժմ պլազվում ենք ձեզ հետ մեկտեղ, մենք ոչ մի գործ չունենք պայծառատեսութեան, մեամերիւմի և նման այլ բաների հետ, որոնց հավատալը դժվար է գործնական մարդու համար: Իմ նպատակն է քայլ առ քայլ հետեւել հնդկների գործողութուններին և ռացիոնալ եզանակներով եղրակացութուն հանել բնական պատճառներից: Արդ՞ո՞ք մինչև հիմա բավականաչափ հաջողութուն ունեցել եմ դրանում:

— Անկասկած, միստր Մերտուետու Բայց ես անհամբեր պատում եմ այն դժվարութեան ռացիոնալ բացատրութեանը, որի մասին հիմա ձեզ հարցրի:

— Միստր Մերտուետու ժպտաց:

— Դա բացատրելը շատ հեշտ է,— սաաց նա:— Նախ և առաջ թույլ տվեք ինձ խոստովանել, որ գործի ձեր բացատրութունը միանգամայն ճիշտ էր: Հնդկները, անկասկած, չգիտեին, թե միստր Ֆրենկլին Բլեկն ինչ էր արել ւլմաստը, որովհետև իրենք իրենց առաջին սխալը կատարել էին միստր Բլեկի՞ իր մորաքրոջ տունը ժամանելու առաջին իսկ երեկոյան:

— Առաջին սխալը,— կրկնեցի ես:

— Իհարկէ: Առաջին սխալն այն էր, որ նրանք Գաբրիել Բետտերեջին թույլ էին տվել երեկոյան իրենց տեսնել սանդղաձականդում: Սակայն նրանք տեղնուտեղը նկատել էին իրենց սխալը, քանի որ, ինչպէս դուք նորից ասացիք, իրենց տրամադրութեան տակ շատ ժամանակ ունենալով, նրանք դրբանից հետո մի քանի շաբաթ շեն մտեցել տանը:

— Բայց ինչո՞ւ, միստր Մերտուետու Ահա թե ինչ կուզեի իմանալ:

— Որովհետև, միստր Բրեք, ոչ մի հնդիկ անտեղի վտանգի չի ենթարկի իրեն: Գնդապետ Հեռնկաստլի կտակում ձեր դրած կետը նրանց հաղորդել է, այնպէս չէ՞, որ լուսնաբարը միտս վերինդերի ծննդյան օրը դրվում է նրա լիակատար տնօրինութեան տակ: Շատ լավ: Ասացեք, ի՞նչ անեն, որ խելացի լինի, նրանց՝ գրութեան մեջ գտնվող մարդիկ: Փորձեն ւլմաստը հափշտակել, քանի դեռ այն միստր Ֆրենկլին Բլեկի մոտ է գրտեղվում, երբ պարզ է դարձել, որ նա ինչ-որ բան կասկածում է: և կարողանում է խորամանկութեամբ գերազանցել իրենց,

թև՝ սպասեն մինչև որ ալմաստը կլինի ևրիտասարդ աղջկա ձևորում, որը անմեղ ուրախությամբ ամեն մի հնարավոր առիթով կկրի այդ հրաշագեղ զարդը: Գուցե իմ ասածների ճշմարտացիության աստացո՞ւյց է սկտք ձեզ: Բող հնդիկների վարմունքը ձեզ համար լինի դրա սպացույցը: Նրանք, այս բոլոր շաբաթները սպասելուց հետո, տանը հայտնվել են միսս Վերինգերի ծննդյան օրը և իրենց համբերության համար վարձատրվել են լուսնաքարը միսս Վերինգերի զգեստի վրա տեսնելու: Երբ այդ հրեկո ավելի ուշ լսեցի գնդապետի ու նրա ալմաստի սլատմությունը, միանգամայն հավատացած էի այն բացառիկ վտանգի մեջ, որին ենթարկվում էր միսսը Ֆրենկլինը (հնդիկներն անսպասման կհարձակվեին նրա վրա, եթե նա լեզի Վերինգերի տունը վերադառնար մենակ և ոչ թե այլ մարդկանց ընկերակցությամբ) և այնքան համոզված էի միսս Վերինգերին սպառնացող է՛լ ավելի վատթար վտանգի մեջ, որ խորհուրդ տվի հետևել գնդապետի ծրագրին և քարի նշանակութունը ի չիք դարձնել՝ այն բաժանելով առանձին կտորների: Ալմաստի տարօրինակ անհետացումն այդ զիշեր, որ անօգուտ դարձրեց իմ խորհուրդը և խառնեց հնդիկների բոլոր ծրագրերը, հաջորդ օրը կատարված նրանց ձերբակալությունը և բանտարկությունը, որպես խարդավանների ու թափառաշրջիկների, որ նրանց խանգարեցին որևէ բան ձեռնարկելու, նույնքան լավ են հայտնի ձեզ, որքան և ինձ: Այստեղ ավարտվում է առաջին գործողությունը: Նախքան առաջ անցնելը, կարո՞ղ եմ հարցնել, թե ինչքանով է բացատրությունս գոհացուցիչ գործնական մարզու համար:

Չէր կարելի ժխտել, որ նա հիանալի լուծեց ինձ համար դժվարին հարցը և՛ հնդիկների բնավորությունն իմանալու շրջանորհիվ, և այն բանի շնորհիվ, որ նա գնդապետ Հեռնկաստլի մահից հետո կարիք չունեցավ ինձ նման մտածելու հարյուրավոր ուրիշ կտակների մասին:

— Այսպես ուրեմն, — շարունակեց միսսը Մերտուետը, — ալմաստը հափշտակելու առաջին հնարավորությունը, որ ներկայացել է հնդիկներին, նրանց համար կորսվել է այն օրը, երբ Ֆրեդրիկհոլում բանտ են նստեցրել նրանց: Իսկ ե՞րբ է նրանց ներկայացել երկրորդ հնարավորությունը: Երկրորդ հնարավորությունը, որ ես կարող եմ ապացուցել, ներկայացել է, երբ նրանք զեռ բանտում են եղել:

Պատմութիւնը շարունակելուց առաջ նա հանեց իր ծոցատետրն ու բացեց այն:

— Այն օրիորին ես հյուրընկալուած էի Ֆրիւլին հողում՝ բարեկամներին մոտ, և հնդիկներին ազատ արձակելուց ելելու օր առաջ, դա, կարծեմ, երկուշաբթի օրն էր, բանտի տեսուչն ինձ մոտ եկաւ նամակով: Ոմն միսիս Մական, որի մոտ բնակարան էին վարձել նրանք, այդ նամակը բերել էր բանտ՝ հնդիկներին մեկին հանձնելու համար, իսկ իրեն՝ միսիս Մականին, այդ նամակը առաւոտյան տուն էր բերել փոստատարը: Բանտի իշխանութիւնները նկատել էին, որ նամակի վրայի կնիքը լամբեթյան էր և որ հասցեն, թեև կանոնաւոր անդերերնով գրված, մի տեսակ տարօրինակ կերպով շէր համապատասխանում նամակները հասցեագրելու մեղ մոտ ընդունված սովորույթին: Նամակը բացելով՝ տեսել են, որ այն գրված է օտար լեզվով՝ Հնդկաստանի լեզուներից մեկով, ինչպես իրավացիորեն ենթադրել էին նրանք: Իսկ տեսուչը ինձ մոտ եկել էր նրա համար, որպէսզի ես թարգմանեի այդ նամակը: Ես ծոցատետրումս պատճենահանեցի և՛ բնագիրը, և՛ իմ թարգմանութիւնը, և ահա երկուսն էլ ձեր տրամագրութիւն տակ են:

Նա ինձ մեկնեց բաց արած ծոցատետրը: Նախ և առաջ պատճենահանված էր նամակի հասցեն: Այն գրված էր մեկ նախադասութեամբ, առանց կետադրութեան նշանների. «Սրբ հնդիկներին որ ապրում են Յորքշիրի Ֆրիւլին հողում Մական անունով տիկնոջ մոտ»: Այնուհետև գալիս էր բնագիրը, իսկ անդերեն թարգմանութիւնը գրված էր վերջում և բաղկացած էր հետևյալ խորհրդավոր նախադասութիւններից.

«Հանուն Գիշերվա տիրակալի, որը բազմած է Սայգայում, որի ձեռքերը գրկում են հողադնդի շորս անկյունները:

Նղբայրն՛ր, դեմքով շրջվեք դեպի հարավ, ինձ մոտ եկեք դեպի կեղտոտ ջուրն իջնող բազմադմուկ փողոցը:

Դրա պատճառն է հետևյալը.

Իմ սեփական աչքերը տեսան նրան»:

Նամակը դրանով էլ ավարտվում էր. ոչ ամսաթիւ կար, ոչ օտորագրութիւն: Ես այն վերադարձրի միստր Մերտոնետին և խոստովանեցի, որ հնդկական նամակագրութեան այդ հետաքրքիր նմուշը փակուղու առջև կանգնեցրեց ինձ:

— Ես ձեզ կարող եմ բացատրել առաջին նախադասութիւն-

նը, — ասաց նա, — իսկ հնդիկների վարժունքը կբացատրի մնացածը: Լուսնի աստվածը հնդկական դիցաբանության մեջ ներկայացված է որպես այծեղջյուրի վրա նստած շորս ձեռնանի աստվածություն, և նրա տիտղոսներից մեկն է Գիշերվա տիրակալը: Այստեղ մի բան կա, որ կասկածելիորեն նման է անուղղակի կերպով Լուսնաքարը ակնարկելուն: Հիմա տեսնենք, թե ինչ արեցին հնդիկները, երբ բանտային իշխանությունները նամակը հանձնեցին նրանց: Հենց նույն օրը, որ նրանց աղատ են արածակել, նրանք անմիջապես գնացել են երկաթուղային էայարան և տեղ գրավել Լոնդոն մեկնող առաջին իսկ գնացքում: Ֆրիդինհոլում բոլորս էլ շատ ափսոսացինք, որ գաղտնի հսկողություն չենք սահմանել հնդիկների հետագա գործողությունների նկատմամբ: Բայց այն բանից հետո, որ լեդի Վերինդերն ազատ էր արձակել խուզարկուին և կասեցրել արձատրի անհետացման քննությունը, այլևս ոչ ոք ոչինչ չէր կարող ձեռնարկել այդ գործում: Հնդիկներին Լոնդոն մեկնելու ազատություն էր տվել, և նրանք Լոնդոն էլ մեկնել էին: Դրանից հետո, ե՞րբ ենք լսել նրանց մասին, միստր Բրեֆ:

— Երբ նրանք սկսեցին ձանձրացնել միստր Լյուկերին, — դատասխանեցի ես, — Լամբերթում նրա տան շուրջը թրև գալով:

— Դուք կարդացե՞լ եք, թե ինչպես է միստր Լյուկերը դիմել դատավորին:

— Այո:

— Եթե մտաբերեք, նա հիշատակել է իր մոտ ծառայած տարերկրացուն, որին նոր էր հեռացրել, կասկածելով գողության փորձ կատարելու մեջ. նա կարծել է նաև, որ այդ տարերկրացին գործել է իրեն ձանձրացրած հնդիկների հետ Էնկտեդ: Եզրակացությունը, միստր Բրեֆ, ինքնին պարզ է. և՛ այն բանի անչունթյամբ, թե ով է հնդիկներին գրել այդ նամակը, որը այժմ փակուղու առջև է կանգնեցրել ձեզ, և՛ այն բանի անչունթյամբ, թե այդ ծառայողը արևելյան ինչ թանկարժեք է փորձել գողանալ միստր Լյուկերից:

Եզրակացությունը, ինչպես ինքս շտապեցի խոստովանել, ավականաչափ պարզ էր և մեկ անգամ ևս պարզաբանելու արիք չունի: Ես առաջ էլ չէի կասկածել, որ Լուսնաքարը միստր Լյուկերի ձեռքն է ընկել հենց այն ժամանակամիջոցում,



որի մասին հիշատակել է միստր Մերտուետը: Ինձ միայն շը-  
փոթեցնում էր այն, թե հնդիկներն ինչպես կարող էին իմանալ  
այդ մասին: Հիմա այդ հարցն էլ (իմ կարծիքով՝ ամենադժվա-  
րը) լուծում է ստացել, ինչպես և մնացած բոլորը: Թեև իրա-  
վաբան եմ, բայց զգացի, որ միստր Մերտուետն աչքերը փակ  
ինձ բարեհաջող կտանի այն լարիբրինթոսի ամենավեջին ուղ-  
րաններով, որոնցով մինչև հիմա առաջնորդել է ինձ: Ես այս  
հաճոյախոսութիւնն արեցի նրան, և նա սիրով ընդունեց այն:

— Գուք էլ, ձեր հերթին, օգնեք ինձ պարզելու մի հարց,—  
խնդրեց նա:— Ինչ-որ մեկը լուսնաքարը Յորքշիրից տարել է  
Լոնդոն, և ինչ-որ մեկն էլ այն գրավ է դրել, հակառակ դեպ-  
քում՝ այդ քարը չէր լինի միստր Լյուկերի ձեռքում: Արդին  
գիտե՞ն, թե ով է այդ արել:

— Որքան ինձ հայտնի է՝ դեռ ոչ:

— Ինչ որ լուրեր էին պատվում միստր Գոդֆրի էբլուայթի  
շուրջը, այնպես չէ՞: Ինձ ասացին, որ նա նշանավոր բարեգործ  
է. սա արդե՞ն ուղղակի նրա դեմ է խոսում:

Ես անկեղծորեն համաձայնվեցի միստր Մերտուետի հետ:  
Այդ նույն պահին ևս ինձ պարտավոր զգացի նրան հաղորդելու  
(հազիվ թե կարիք կա գրելու, որ ևս միսս Վերինդերի անունը  
չտվեցի), որ միստր Գոդֆրի էբլուայթը ամեն տեսակի կասկա-  
ծից մաքրվել է այնպիսի անձնավորութիւնի ցուցմունքների հի-  
ման վրա, որի ճշմարտացիութիւնը համար ևս կարող էի երաշ-  
խավորել:

— Շատ լավ,— հանգիստ ասաց Մերտուետը,— թողնենք,  
որ ժամանակն ինքը պարզի այդ գործը: Իսկ առայժմ, միստր  
Բրեֆ, մենք պետք է վերադառնանք հնդիկներին: Նրանց ճա-  
նապարհորդութիւնը կուղտնում ավարտվել է նրանով, որ զոհ  
են դարձել մի նոր անհաջողութիւն: Այժմստի հափշտակու-  
թիւնը երկրորդ հնարավորութիւնը կորցնելը, իմ կարծիքով,  
պետք է վերագրել միստր Լյուկերի խորամանկութիւնն ու  
զգուշավորութիւնը, մի մարդ, որն իզուր չէ, որ զբաղվում է  
վաշխառուի շահավետ ու հին արհեստով: Հապճեպորեն մերժե-  
լով իր ծառայողին, նա հնդիկներին զրկել է այն օգնութիւնից,  
որ նրանց համախոհը կարող էր ցույց տալ իրենց տուն թող-  
նելով: Լուսնաքարն անհապաղ իր բանկիրի մոտ փոխադրելով,  
նա շփոթեցրել է դավադիրներին, նախքան նրանք կկարողա-

Նային այն գողանալու մի նոր ծրագիր կազմել: Որտեղի՞ց էին հնդիկներն իմացել, թե ինչ էր արել նա, և ինչպե՞ս էին հասցրել հափշտակել բանկիրի ստացականը, — սրանք շափից գուրս թարմ դեպքեր են և չարժի սրանց մասին շատ խոսել: Բավաճական է ասել, որ նրանք իմացել էին, որ Լուսնաքարը նորից գնացել է իրենց ձեռքից և, պարզապես թանկարժեք իր կոշվելով, դրվել է բանկիրի սեյֆը: Միստր Բրեֆ, ալմաստը հափշտակելու ի՞նչ նոր, մի երկրորդ հնարավորություն կարող է ներկայանալ և ե՞րբ:

Հաղիվ էր այս հարցը թռել նրա բերանից, երբ ես, վերջապես, կռահեցի, թե ինչու էր երեկ ինձ մոտ եկել հնդիկը:

— Հասկանում եմ, — բացականչեցի ես: — Հնդիկները հավատացած են, ինչպես և մենք, որ Լուսնաքարը գրավ է դրված, և նրանք անպայման պետք է իմանան գրավը հտ գրնելու ամենավաղ ժամկետը, որովհետև հենց այդ ժամանակ էլ ալմաստը վերցվելու է բանկիրի մոտից:

— Ես ձեզ նախազգուշացրել էի, միստր Բրեֆ, որ ինքներդ ամեն ինչ կհասկանաք, և թե ես որոշ բաներ հուշեմ ձեզ: Լուսնաքարի գրավ դրվելուց հետո մեկ տարի անց հնդիկները կըփորձեն իրագործել այն հափշտակելու երրորդ հնարավորությունը: Միստր Լյուկերն ինքն է նրանց ասել, թե ինչքան ժամանակ հարկ կլինի սպասել, և դուք, որ անառարկելի հեղինակություն եք, հաստատել եք միստր Լյուկերի ասածի ճշմարիտ լինելը: Չե՞ր ենթադրությունամբ, ե՞րբ է ալմաստն ընկել պարտատուի ձեռքը:

— Որքան հիշում եմ՝ հունիսի վերջին, — պատասխանեցի ես:

— Հիմա հազար ութ հարյուր քառասունութ թվականն է: Շատ լավ: Եթե Լուսնաքարը գրավ դրած անհայտ անձնավորությունը այն կարող է հտ գնել մեկ տարի հետո, ապա ալմաստը այդ մարդու ձեռքում կարող է լինել հազար ութ հարյուր քառասունինը թվականի հունիսի վերջին: Այդ օրերին ես հեռու կլինեմ Անգլիայից և անգլիական նորություններից, Բայց, գուցե արժև՞ր, որ դուք գրառեիր այս տարիթիվը և աշխատեիր այդ ժամանակ լինել Լոնդոնում:

— Կարծում եք ինչ-որ լուրջ բան է լինելու, — հարցրի ես:

— Կարծում եմ, որ ես շատ ավելի ապահով կլինեմ, —

սլատախանեց նա, — Կենսաբանական Ասիայի կատաղի մոլե-  
ռանդների մեջ, քան կլիկի, եթե Նուանաբարը գրպանումս անց-  
նելի բանկի դռան շեմը: Հնդիկները երկու անգամ անհաջողու-  
թյան են մատնվել, միստր Բրեֆ, Հաստատ հավատացած եմ,  
որ երրորդ անգամ անհաջողության չեն մատնվի:

Սա նրա վերջին խոսքն էր: Սուրճ բերեցին. հյուրերը վեր  
կացան ու ցրվեցին սենյակում, իսկ մենք բարձրացանք վերև  
տիկիներին մոտ:

Սա գրառեցի թվականը, և, գուցե, վատ չի լինի պատմու-  
թյունս ավարտել այստեղ, արտագրելով այդ նշումը:

Հազար ութ հարյուր քառասունինը թվականի հունիս: Հըն-  
դիկների մասին լուրեր սպասել այս ամսվա վերջին:

Այս անելուց հետո գրիչը, որն այլևս ինձ պետք չէ, ես  
հանձնում եմ նրան, ով պետք է գրի ինձնից հետո:



## ԵՐՐՈՐԳ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

որ գրել է

Ֆրենկլիֆ Բլեկը

### Գ Լ ու իս I

Հազար ութ հարյուր քառասունինը թվականի գարնանը, Արևելքում շրջագայելիս, փոխեցի ճանապարհորդությանս այն ծրագիրը, որ կազմել էի մի քանի ամիս առաջ և այն ժամանակ էլ հաղորդել լոնդոնի իմ փաստաբանին ու իմ բանկիրին:

Այդ փոփոխությունը անհրաժեշտություն առաջացրեց, որ նամակներ ու դրամական առաքումներ բերելու համար ես իմ ծառային անգլիական հյուպատոսի մոտ ուղարկեմ այն քաղաքներից մեկը, որտեղ ինքս արդեն մտածում էի այցելել: Մտառս պետք է նորից ինձ միանար նշանակված ժամանակին և նշանակված տեղում: Մի շնախատեսված դեպք, որի համար նա մեղավոր չէր, նրան ուղացրել էր ճանապարհին: Ես և իմ



վարձած մարդիկ մի ամբողջ շաբաթ նրան սպասեցինք անպատի սահմանագծում: Վերջապես կորած ծառան դրամով ու նամակներով հայտնվեց իմ վրանի մուտքի առջև:

— Վախենում եմ, որ վատ լուրեր եմ բերել ձեզ, սրբ,— ասաց նա, մատնացույց անելով սգո երիզով մի նամակ, որի վրա հասցեն գրված էր միստր Բրեֆի ձեռքով:

Նման դեպքերում անհայտությունից ծանր բան չկա: Սգո երիզով նամակը բացեցի մնացած բոլոր նամակներից շուտ: Այն տեղեկացնում էր, որ հայրս մահացել է, և որ ես դարձել եմ նրա հսկայական կարողության ժառանգորդը: Ձեռքս անցնող հարստությունն իր հետ բերում էր պատասխանատվություն. միստր Բրեֆն ինձ խնդրում էր առանց ժամանակ կորցնելու վերադառնալ Անգլիա:

Հաջորդ օրը վաղ լուսաբացին ես արդեն իմ հայրենիքը տանող ճանապարհին էի:

Դիմանկարս, որ իմ հին բարեկամ Բետտերեջը պատկերել էր այն ժամանակ, երբ ես Անգլիայից մեկնում էի, ինչպես ինձ թվում է, մի փոքր շահագլանցված էր: Նա յուրովի լրջությամբ էր մեկնաբանել իմ արտասահմանյան դաստիարակության վերաբերյալ իր օրիորդի երգիծական դիտողությունները և իրեն համոզել, որ իրոք տեսել է իմ բնավորության ֆրանսիական, գերմանական և իտալական այն կողմերը, որոնք պարզապես կատակով ծաղրել է իմ կենսուրախ զարմուհին և որոնք գոյություն են ունեցել մեր բարի Բետտերեջի սոսկ երևակայության մեջ: Բայց, բացառությամբ դրա, պետք է խոստովանել, որ նա զուտ ճշմարտությունն է գրել. ես իրոք մինչև հոգուս խորքը խոցված էի Ռեչելի վերաբերմունքից և Անգլիայից հեռացել էի ինձ շատ դառը հիասթափություն պատճառած տառապանքի անաչին պոռթկումի պահին:

Ես արտասահման մեկնեցի հուսալուով, որ տեղի փոփոխությունը և հրկարատե բացակայությունը կօգնեն ինձ մոռանալու նրան: Համոզված եմ, որ այն մարդը, որը ժխտում է տեղի փոփոխության ու բաժանման բարիբար ազդեցությունը նման դեպքերում, ճիշտ չի պատկերացնում մարդկային բնությունը: Փոփոխությունն ու բաժանումը ուշադրությունը շեղում են սեփական վշտի ամենակուլ հայեցողությունից: Ես չէի մոռացել Ռեչելին, բայց որքան ժամանակը, տարածությունն ու նորույ-

թը ավելի ու ավելի շատ էին կանգնում իմ ու Ռեչելի միջև, այնքան վերհուշի տխրությունն ավելի ու ավելի էր կորցնում իր դառնությունը:

Քայց, մյուս կողմից, այդ դեղամիջոցի ներդրածությունը, որ այնքան լավ էր օգնել ինձ, վերադարձի ճանապարհին սկսեց թուլանալ: Որքան ավելի էի մտտեմնում նրա ապրած երկրին և նորից նրա հետ տեսնվելու հնարավորությունը, այնքան ավելի անհաղթահարելի էր դառնում նրա նախկին իշխանությունն իմ նկատմամբ: Անզլիալից մեկնելիս ես ավելի շուտ կմեռնեի, քան կտալի նրա անունը: Անզլիա վերադառնալուց հետո, միստր Քրեֆի հետ հանդիպելով, ես ամենից առաջ նրա մասին հարցրի:

Անշուշտ, ինձ պատմեցին այն ամենը, ինչ կատարվել էր իմ բացակայությանը, այլ խոսքով՝ այն բոլորը, ինչ զրվել է այստեղ որպես Քատերելի պատմության շարունակություն, բացառյալ միայն մի հանգամանք: Այդ ժամանակ միստր Քրեֆն իրեն իրավունք չէր վերապահում ինձ հաղորդելու այն պատճառները, որ Ռեչելին և Գոդֆրի էբլուայթին հարկադրել էին քանդել իրենց նշանադրությունը: Այդ փափկանկատ առարկայի վերաբերյալ դժվարին հարցերով չէի անհանդստացնում նրան:

Ինձ համար բավականաչափ թեթևություն էր խիստ հիասթափությունից հետո, որ իմ մեջ հարուցել էր Գոդֆրիի կինը դառնալու նրա մտադրության լուրը, իմանալ, որ նա (Ռեչելը), մտորելով, համոզվել է իր արածի սխալ լինելու մեջ և ետ է վերցրել իր խոսքը:

Անցյալին վերաբերող պատմությունը լսելուց հետո իմ հարցուփորձը (բոլորը Ռեչելի մասին) անցավ ներկային: Ո՞ւմ հոգացողության տակ էր եղել նա միստր Քրեֆի՞ տնից հեռանալուց հետո և որտե՞ղ էր ապրում հիմա:

Նա ապրում էր հանգուցյալ սըր Ջոն Վերինդերի այրի քրոջ՝ միսիս Մերիդյուրի մոտ, որին Ռեչելի մոր կտակակատարները խնդրել էին խնամակալ լինել, և որը համաձայնվել էր դրան: Ես լսեցի, որ նրանք շատ լավ են իրար հետ և որ այժմ կոնդոնյան սեզոնի ժամանակամիջոցում բնակվում են միսիս Մերիդյուրի տանը, որ գտնվում է Պորտլենդի հրապարակում:

Այդ մասին իմանալուց կես ժամ հետո ես ուղղվեցի դեպի

Պորալենդի հրապարակը, քաջություն շունենալով այդ մասին խոստովանել միստր Բրեֆին:

Ծառան, որ դուռը բացեց, վստահ չէր՝ տա՞նն է միսս Վերինդերը, թե ոչ: Ես նրան վերև ուղարկեցի իմ այցեատմամբ, որպեսզի հնարավորին չափ շուտ լուծեմ այդ հարցը. ծառան վերադարձավ անթափանցելի դեմքով և հաղորդեց, որ միսս Վերինդերը տանը չէ:

Որևէ մեկ ուրիշի վրա կարող էի կասկածել ինձ հետ տեսնըվելուց միտումնավոր կերպով հրաժարվելու մեջ, բայց Ռեչելի վրա կասկածել հնարավոր չէր: Խնդրեցի հաղորդել, որ կգամ վաղը երեկոյան ժամը վեցին: Ժամը վեցին դարձյալ ինձ ասվեց, որ միսս Վերինդերը տանը չէ: Նա չի՞ հանձնարարել որևէ բան հաղորդել ինձ: Ոչ մի բան: Մի՞թե միսս Վերինդերը չի ստացել իմ այցեատմանը: Միսս Վերինդերն այն ստացել է:

Եղբակացությունը չափազանց պարզ էր. Ռեչելը չէր ուզում ինձ տեսնել:

Ես իմ հերթին չէի կարող թույլ տալ, որ այդ ձևով վարվելին ինձ հետ, չփորձելով գոնե պատճառն իմանալ: Ես իմ այցեատման ուղարկեցի միսիս Մերիդյուին, խնդրելով ինձ տեսակցություն նշանակել իր համար որևէ հարմար ժամանակ:

Միսիս Մերիդյուն ինձ ընդունեց անմիջապես: Ինձ առաջնորդեցին մի գեղեցիկ փոքրիկ հյուրասենյակ, և ես հայտնվեցի մի գեղեցիկ փոքրիկ տարիքավոր տիկնոջ առջև: Նա այնքան բարի էր, որ մեծ կարեկցանք և որոշ դարմանք արտահայտեց: Բայց միևնույն ժամանակ նա չէր կարող բացատրել Ռեչելի վարմունքը, ոչ էլ նրան համոզելու փորձ կատարել, քանի որ գործը վերաբերում էր, ըստ երևույթին, նրա անձնական զգացմունքներին: Նա այս բոլորը կրկնեց մի քանի անգամ, քաղաքավարի համբերությամբ, որին սշինչ չէր կարող հոգնեցնել: Ահա այն բոլորը, որ ես շահեցի, դիմելով միսիս Մերիդյուին:

Իմ վերջին փորձը եղավ Ռեչելին գրելը: Ծառան, որը նամակը տարել էր նրան, պատասխանի սպասելու խիստ հրաման էր ստացել:

Պատասխանը բերվեց. այն ամփոփված էր մի արտահայտության մեջ.

— Միսս Վերինդերը հրաժարվում է միստր Ֆրենկլին Բլեկի հետ նամակագրություն սկսելուց:

Որքան էլ որ սիրում էի նրան, այդպիսի պատասխանով ինձ հասցված վիրավորանքը վրդովմունքի փոթորիկ առաջացրեց իմ մեջ, Միստր Բրեֆը, որ եկել էր ինձ հետ գործերից խոսելու, ինձ գտավ դեռևս ուշքի չեկած վիճակում:

Ես անմիջապես մի կողմ թողեցի բոլոր գործերս և ամեն ինչ անկեղծորեն պատմեցի նրան: Միստր Բրեֆն էլ միսիս Մերիդյուելի նման չկարողացավ գոհացուցիչ բացատրություն տալ ինձ:

Ես հարցրի՝ որևէ մեկն ինձ չի՞ զրպարտել Ռեչելի մոտ: Միստր Բրեֆը ոչ մի զրպարտության մասին չգիտեր: Ռեչելը միստր Բրեֆի տանն ապրած ժամանակ որևէ բան չի՞ ասել իմ մասին: Երբեք: Իմ երկարատև բացակայության ժամանակամիջոցում չի՞ հարցրել՝ ո՞ղջ եմ ես, թե մեռած: Ռեչելն այդպիսի հարց չի ասել:

Դրամապանակիցս հանեցի այն նամակը, որ խեղճ լեզի Վերինդերը Ֆրիզինհոլից ինձ գրել էր այն օրը, երբ ես մեկնել էի Յորքշիրի իր կալվածքից: Ես միստր Բեմֆի ուշադրությունը հրավիրեցի այդ նամակի երկու նախադասության վրա.

«Այն թանկարժեք օգնությունը, որ դուք հետաքննությանը ցույց եք տվել կորած արմատը որոնելու գործում, մինչև հիմա Ռեչելի համար աններելի վիրավորանք է թվում՝ իր հոգու այժմյան ահավոր վիճակում: Այդ գործում կուրորեն վարվելով, դուք մեծացրել եք Ռեչելի անհանգստությունը, անմեղ կերպով սպառնալով ձեր ջանքերով բացահայտել նրա գաղտնիքները»:

— Հնարավոր է, — հարցրի ես, — որ նա հիմա էլ առաջվա պես բարկացած լինի ինձ վրա:

Անկեղծ վիշտ արտահայտվեց միստր Բրեֆի դեմքին:

— Եթե դուք անպայման պատասխան եք պահանջում, — ասաց նա, — խոստովանում եմ, չեմ կարող այլ կերպ մեկնաբանել նրա վարմունքը:

Ես հնչեցրի զանգը և իմ ծառային պատվիրեցի դասավորել իրերս ու մարդ ուղարկել գնացքների շվացուցակն իմանալով Միստր Բրեֆը զարմանքով հարցրեց, թե ինչ եմ մտադիր անել:

— Մեկնում եմ Յորքշիր, — պատասխանեցի ես. — հաջորդ գնալըքով:





— Կարող եմ հարցնել՝ ինչու:

— Միստր Բրեֆ, այն օդնությունը, որ շատ անմեղ ձևով  
ես ցույց եմ տվել Ռեչելի ալմաստը որոնելիս, աններելի վի-  
րավորանք է եղել նրա համար մեկ տարի առաջ և աններելի վի-  
րավորանք էլ մնում է մինչև այսօր: Ես չեմ ուզում դրան  
ենթարկվել: Ես որոշել եմ իմանալ, թե ինչու ես ոչինչ չի ասել  
մորը և ինչն է իմ նկատմամբ նրա թշնամանքի պատճառը: Եթե  
ժամանակը, աշխատանքն ու փողը կարող են այդ անել, ես  
կգտնեմ իրենաբարը հափշտակող գողին:

Արժանավոր ծերունին փորձեց առարկել, ինձ համոզել,  
որ լսեմ բանականության ձայնը, մի խոսքով՝ ուզեց իր պարտ-  
քը կատարել իմ հանդեպ: Բայց ես խոսք մնացի նրա բոլոր  
համոզումների նկատմամբ: Աշխարհում ոչ մի բան այս պահին  
չէր սասանի իմ վճռականությունը:

— Ես հետաքննությունը կշարունակեմ հենց այն տեղից, —  
հայտարարեցի ես, — որտեղ կանգ էի առել, և այն քայլ առ  
քայլ կշարունակեմ այնքան ժամանակ՝ մինչև որ հասնեմ  
վճռական փաստին: Հանցանշանների շղթայում, այն բանից  
հետո, որ ես թողել եմ հետաքննությունը, պակասում է մի  
քանի օղակ. դրանք կարող է լրացնել Գաբրիել Բետտերեջը: Ես  
մեկնում եմ Գաբրիել Բետտերեջի մոտ:

Նույն երեկոյան, մայրամուտին, ես նորից հայտնվեցի  
գյուղական հին խաղաղ տան ինձ շատ լավ ծանոթ սանդղա-  
վանդում: Առաջին մարդը, որին հանդիպեցի ամայացած  
այգում, այգեպանն էր: Իմ այն հարցին, թե որտեղ է Բետտե-  
րեջը, նա պատասխանեց, որ մի ժամ առաջ նրան տեսել է  
հունարակի սովորական անկյունում, արևի տակ տաքանալիս:  
Ինձ լավ ծանոթ էր այդ անկյունը և ասացի, որ ինքս կգնամ  
ու կգտնեմ նրան:

Գնացի ծանոթ անցուղիներով և դարպասի բաց դռնակից  
ներս նայեցի:

Ահա նա՝ իմ սիրելի ծեր բարեկամը այն երջանիկ օրերի,  
որոնք այլս երբեք չեն վերադառնա. ահա նա՝ նստած իր նախ-  
կին անկյունում, ծղոտե նախկին աթոռի վրա, ծխամորճը բե-  
րանում, «Ռոբինզոն Կրուզոն» ծնկներին և ոտքերի մոտ՝ ննջող  
երկու մտերիմ շները: Կանգնել էի այնպես, որ արևի վերջին  
չեղ ճառագայթները ստվերս նետում էին իմ առջև: Շներն այդ

սովե՛րը տեսան, թե նրանց նուրբ հոտառությունը որսաց իմ մոտեցումը, չգիտեմ, բայց նրանք գոմալով վեր թռան: Իր հերթին ցնցվելով, ծերունին մի բացականչությամբ լռեցրեց նրանց, իսկ հետո, ձեռնափը իր թույլ աչքերին դնելով, հարցական նայեց դռնակի մեջ կանգնած մարդուն:

Աչքերս լցվեցին արցունքներով: Ստիպված եղա մի պահ սպասել մինչ կկարողանայի խոսել նրա հետ:

## Չ. 1 ու խ 11

— Բեստերեջ, — վերջապես ասացի ես, մատնացույց անելով նրա ծնկներին դռված ինձ քաջ ծանոթ գիրքը, — «Ռոբինզոն Կրուզոն» այս երկկո ձեզ հաղորդե՞լ է, որ, հնարավոր է, տեսնեք Ֆրենկլին Բլեկին:

— Աստված վկա, միտոր Ֆրենկլին, — բացականչեց ծերունին, — «Ռոբինզոն Կրուզոն» հենց այդպես էլ արել է:

Նա իմ օգնությամբ ոտքի կանգնեց և մի պահ մնաց այդպես, հայացքը ինձնից փոխադրելով «Ռոբինզոն Կրուզոնի» վրա և ընդհակառակը, կարծես հավատացած շէր, թե երկուսիցս որն էր ավելի զարմացրել իրեն: Գիրքը հաղթեց:

Նա այդ զարմանալի գրքին էր նայում աննկարագրելի արտահայտությամբ, կարծես հույս ունենալով, որ Ռոբինզոն Կրուզոն ինքը կիջնի այդ էջերից և մեզ կարծանացնի իր տեսությունը:

— Ահա այն տեղը, որ ես կարդում էի, միտոր Ֆրենկլին, — ասաց նա խոսելու ընդունակությունը վերագտնելուն պես, — և դա նույնքան ճիշտ է, ինչպես որ տեսնում եմ ձեզ, սըր, — ահա այն տեղը, որ ձեր գալուց մեկ րոպե առաջ կարդում էի: Էջ հարյուր հիսունվեց. «Կանգնել էի՝ ասես շանթահարված կամ ասես ուրվական էի տեսել»: Ծթե սա չի նշանակում՝ «Սպասեցեք միտոր Ֆրենկլին Բլեկի անակնկալ հայտնվելուն», ապա անգլերեն լեզուն ոչ մի իմաստ չունի, — իր խոսքն ավարտեց Բեստերեջը, շրխկոցով ծածկելով գիրքը և վերջապես ազատելով ձեռքը, որպեսզի բռնի իմը, որ մեկնել էի իրեն:

Ես սպասում էի (դա շատ բնական կլիներ տվյալ պարագայում), որ նա հարցախեղդ կանի ինձ: Բայց ոչ. հյուրընկալութեան զգացումը ծերունի ծառայի հոգուց դուրս էր մղել մնացած բոլոր բաները. չէ՞ որ ընտանիքի անզամբ տուն էր եկել որպես հյուր (միևնույն է, թե ինչ ձևով):

— Համեցեք, միտք Ֆրենկլին,— սուսաց նա իր հնտոճ խոնարհումով բացելով դուռը:— Ես հետո կհարցնեմ, թե ինչն է ձեզ այստեղ բերել, իսկ հիմա պետք է հնարավորին շափ հարմար տեղավորեմ ձեզ: Ձեր մեկնելուց հետո բազում տխուր փոփոխություններ են կատարվել: Տունը փակ է, ծառաներն աղատ են արձակված: Կավ, ոչինչ, ոչինչ: Ինքս ձեզ համար ճաշ կպատրաստեմ, այգեպանի կիներ անկողին կզցի ձեզ համար, իսկ եթե նկուղում է մի շիշ լատուրջան նշանավոր կլարետ է պահպանվել, սպա պարունակությունը կհոսի ձեր կոկորդը, միտք Ֆրենկլին: Համեցեք, սըր, շնորհ տրեք,— սուսաց խեղճ ծերունին, արիաբար պաշտպանելով լքված տան պատիվը և ինձ ընդունելով անցած ժամանակների հյուրընկալությամբ ու քաղաքավարի ուշադրությամբ:

Ինձ համար ցավալի է շարժարացնել նրա սպասումները: Բայց այս տունը հիմա պատկանում էր Ռեչելին: Արդյո՞ք, այն ամենից հետո, ինչ կատարվել էր կոնգոնում, կարող էի ուտել կամ քնել այստեղ: Անձիս նկատմամբ հարգանքի ամենապարզ զգացումն անգամ ինձ արգելում էր, և միանգամայն իրավացիորեն, անցնել նրա շեմը:

Ես թևանցուկ արևցի Բետտերեջին ու տարա այգի: Ուրիշ ճար չունեի, ստիպված էի նրան ասել ճշմարտությունը: Նա շատ էր կասկած Ռեչելի և ինձ հետ, և նրան շատ էին դանացրել ու մտահոգել հանգամանքները: Նա իր կարծիքը հայտնեց սովորական շիտակությամբ և ինձ հայտնի բոլոր փիլիսոփայություններից ամենադրական փիլիսոփայությամբ, որը հատուկ էր իրեն՝ բետտերեջյան դպրոցի փիլիսոփայությամբ:

— Միտք Ռեչելն ունի իր թերութունները, ևս երբեք դա չեմ ժխտել,— սկսեց նա:— Նա երբեմն սիրում է պնդել իրենը: Ահա ձեր հարցում էլ նա աշխատում էր իրենք պնդելու Աստված իմ, միտք Ֆրենկլին, մի՞թե մինչև հիմա չեք

Ճանաչում կանանց: Ինձնից իրբևէ լսե՞լ եք հանգուցյալ միսիս Բետտերեջի մասին:

Ես շատ հաճախ էի նրանից լսել հանգուցյալ միսիս Բետտերեջի մասին. նա միշտ իր կնոջը ներկայացնում էր որպես գեղեցիկ սեռի թուլության ու քմահաճության օրինակ: Այդ տեսքով նրան ներկայացրեց նաև հիմա:

— Շատ լավ, միստր Ֆրենկլին, Հիմա ինձ լսեք: Ամեն մի կին իրենը պնդելու իր սեփական ձևն ունի: Ամեն անգամ, երբ պատահում էր, որ մերժում էի հանգուցյալ միսիս Բետտերեջի ուղածն անել, նա, երբ տուն էի գալիս, անպայման ձայն էր տալիս խոհանոցից, թե իմ կոպիտ վարմունքից հետո ինձ համար ճաշ պատրաստելու ուժ չունի ինքը: Ես որոշ ժամանակ դա համբերությամբ տարա այնպես, ինչպես հիմա դուք եք միսս Ռեչլիի քմահաճությունները տանում: Բայց վերջապես համբերությունս սպառվեց: Գնացի խոհանոց, միսիս Բետտերեջին վերցրի ձեռքերիս վրա, հասկանո՞ւմ եք, մտերմարար, և տարա մեր ամենալավ սենյակը, որտեղ նա հյուրեր էր ընդունում: «Ահա քո իսկական տեղը, հոգյակս», — ասացի ես և ինքս զնացի խոհանոց: Փակվեցի այնտեղ, հանեցի սերթուկս, քշտեցի թևքերս ու ճաշ պատրաստեցի: Երբ այն արդեն պատրաստ էր, ինքս ինձ մատուցեցի ու հաճույքով ճաշեցի: Հետո ծխամորճս ծխեցի, փունջ խմեցի, իսկ հետո էլ հավաքեցի սեղանը, լվացի ամանները, դանակներն ու պատառաքաղները, այդ բոլորը նորից տեղավորեցի և ավլեցի խոհանոցը: Երբ մաքուր ու հաճելի էր, բացեցի դուռը և խոհանոց թողեցի միսիս Բետտերեջին: «Ես ճաշել եմ, հոգյակս, — ասացի: — Կարծում եմ, խոհանոցը կգտնես այն ամենալավ վիճակում, որպիսին միայն կարող ես ցանկանալ»: Քանի դեռ այդ կինը ողջ էր, միստր Ֆրենկլին, ինձ այլևս երբեք հարկ չեղավ անձամբ ճաշ պատրաստել: Սրանից՝ խրատ. դուք խոնդոնում տարել եք միսս Ռեչլիի քմահաճությունները, դրանք մի՛ տարեք Յորքշիրում: Տուն համեցեք:

Ի՞նչ կարելի էր պատասխանել սրան: Իմ բարի բարեկամին կարող էի միայն հավատացնել, որ համոզելու իր ընդունակություններն անգամ տվյալ դեպքում իզուր են անցել:

— Սքեկոն հրաշալի է, — ասացի, — և ես ոտքով կգնամ

Ֆրիզին՝ ու կիջեանեմ հյուրանոցում, իսկ ձեզ խնդրում եմ վաղն առավոտյան գալ ինձ մոտ նախաճաշելու: Որոշ բաներ ունեմ ձեզ ասելու:

Բետտերջը լուրջ տեսքով գլուխն օրորեց:

— Անկեղծորեն ավստոսում եմ դրա համար, — ասաց նա, — հույս ունեի, միտար Ֆրենկլին, լսել, որ ձեր ու միսս Ռեչելի միջև ամեն ինչ նորից կարգավորվել է: Եթե դուք պետք է ձեր ուղածով վարվեք, սրբ, — մի պահ խորհրդածելուց հետո շարունակեց նա, — ապա գիշերելու համար Ֆրիզին՝ ու գնալու ոչ մի կարիք չունեք: Կարող եք շատ ավելի մոտիկ տեղում տեղավորվել: Գոտերստոնի ֆերման ընդամենը երկու մղոն է այստեղից: Սրա դեմ չեք կարող առարկել, — խորամանկորեն ավելացրեց ծերունին: — Գոտերստոնը, միտար Ֆրենկլին, ասյրում է ոչ թե միսս Ռեչելի հողի վրա, այլ իր սեփական հողի վրա:

Բետտերջի ասելուց հետո ես անմիջապես հիշեցի այդ ֆերման: Տունը գտնվում էր ստվերաշատ հովտում, Յորքշիրի այդ մասի ամենագեղեցիկ առվի ափին. ֆերմերն ունեիր առանձին ննջարան ու հյուրասենյակ, որոնք նա սովորաբար վարձով էր տալիս նկարիչներին, ձկնորսներին և ընդհանրապես տուրիստներին: Այդ վայրերում մնալուս ժամանակամիջոցում ավելի հաճելի կացարան չէի կարող գտնել:

— Հիմա սենյակներն ազատ են, — հարցրի ես:

— Միսիս Գոտերստոնն ինքը, սրբ, դեռ երեկ ինձ խնդրեց առաջարկել իր սենյակները:

— Ես հաճույքով կվարձակալեմ դրանք, Բետտերջ:

Մենք նորից վերադարձանք բակ, որտեղ թողել էի պայուսակս: Մի փայտ անցկացնելով բռնակի միջով և ուսին առնելով, Բետտերջը նորից այնպիսի դարմանք ապրեց, որպիսին նրա մեջ հարուցել էր իմ անսպասելի ժամանումը այն պահին, երբ նա ննջում էր իր ծղոտե աթոռի վրա: Նա տարակուսանքով նայեց տանը, իսկ հետո շրջվեց իմ կողմը և է՛լ ավելի մեծ տարակուսանքով նայեց ինձ:

— Բավականաչափ երկար եմ ապրել այս աշխարհում, — ասաց բոլոր հին ծառաներից այդ ամենալավն ու սիրելին, — բայց չէի սպասում, թե երբևէ այսպիսի բան կտեսնեմ: Ահա կանգնած է տունը, իսկ այստեղ կանգնած է միտար

Ֆրենկլինն Բլեկը, և նա թիկունքով շրջվում է դեպի տունը ու գիշերելու գնում վարձակալած բնակարանում:

Գլուխն օրորելով ու փնթփնթալով՝ նա առաջ անցավ:

— Մնում է, որ մի հրաշք էլ կատարվի,— ասաց նա դա կլինի, երբ դուք, միստր Ֆրենկլին, մեկ էլ տեսար, որոշեցիք ինձ վերադարձնել այն յոթ շիլինգն ու վեց պենսը, որ ինձնից պարտք եք վերցրել երեխա ժամանակ:

Այս ծաղրը լավ տրամադրութուն հաղորդեց նրան: Մենք անցանք բարապանի տնակը և դուրս եկանք զրոսայդու դարպասից: Չեզոք հողի վրա ոտք դնելուն պես հյուրընկալության պարտականությունները (Բետտերեջի բարոյախոսության կողմնակի համաձայն) դադարեցվեցին և ուժի մեջ մտան հետաքրքրասիրության իրավունքները:

Նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում, որպեսզի ես կարողանայի հավասարվել իրեն:

— Զրոսնելու համար հրաշալի երեկո է, միստր Ֆրենկլին,— ասաց նա, կարծես մենք հենց նոր պատահաբար հանդիպել էինք:— Ծնթաղրենք, որ դուք, այնուամենայնիվ, գնայիք Ֆրիդինհոլի հյուրանոցը, սըր...

— Հետո՞:

— Այդ ժամանակ ես վաղն առավոտյան ձեզ մոտ նախաձաշելու պատիվը կունենայի:

— Ինձ մոտ նաճաշալետու եկեք Գոտերստոնի ֆերմա:

— Շնորհապարտ եմ ձեր բարության համար, միստր Ֆրենկլին: Բայց թե ես, ճիշտն ասած, նախաճաշի համար չէի ասում: Կարծեմ, դուք հիշեցրիք, որ ինչ-որ բան ունեք ինձ ասելու Եթի դա գաղտնիք չէ, սըր,— ասաց Բետտերեջը, հանկարծ թողնելով զարտուղիները և մտնելով ուղիղ ճանապարհ,— անհամբեր սպասում եմ իմանալու, թե ինչն է ձեզ այստեղ բերել այսքան անակնկալորեն:

— Ի՞նչն էր ինձ այստեղ բերել անցած անգամ,— հարցրի ես:

— Լուսնաքարը, միստր Ֆրենկլին: Բայց ի՞նչն է ձեզ այստեղ բերել հիմա, սըր:

— Նորից Լուսնաքարը, Բետտերեջ:

Հանկարծ ծերունին կանգ առավ և ինձ նայեց, ասես չհավատալով իր ականջներին:

— Եթե դա կատակ է, սրբ,— ասաց նա,— վախենում եմ, որ ես օր ծերութեան մի քիչ անխելքացի եմ: Ես այդ կատակը չեմ հասկանում:

— Սա կատակ չէ,— պատասխանեցի ես:— Այստեղ եմ եկել նորից շարունակելու հետաքննությունը, որ ընդհատվել էր Անգլիայից իմ մեկնելու ժամանակ: Այստեղ եմ եկել անելու այն, ինչ դեռ ոչ ոք չի արել. իմանալու, թե ով է գողացել արմաստը:

— Մոռացե՛ք այդ արմաստը, միստր Ֆրենկլին: Լսեք իմ խորհուրդը, մոռացե՛ք այդ արմաստը: Հնդկական այդ անիծյալ քարը ճանապարհից շեղել է բոլոր նրանց, ովքեր մոտեցել են իրեն: Ձեր կյանքի ամենածաղկուն շրջանում մի վատնեք ձեր փողերն ու ուժերը Լուսնաքարի վրա: Ինչպե՞ս կարող եք հաջողութեան հույս ունենալ, երբ խուզարկու Կաֆր ինքը խճճվեց այդ գործում: Խուզարկու Կաֆր,— կրկնեց Բետտերեջը, մատը սպառնալի թափ թալով վրաս,— Անգլիայի ամենամեծ խուզարկուն է:

— Որոշումս հաստատ է, իմ հին բարեկամ: Խուզարկու Կաֆր անգամ ինձ չի համոզի: Ի դեպ, վաղ թե ուշ, ես նրա հետ խորհրդակցելու եմ: Վերջին ժամանակներս որեւէ բան լսե՞ք եք նրա մասին:

— Կաֆր ձեզ չի օգնի, միստր Ֆրենկլին:

— Ինչո՞ւ:

— Ձեր մեկնելուց հետո, սրբ, մեծ իրադարձություն է կատարվել օստրիական կան շրջաններում: Նշանավոր Կաֆր պաշտոնաթող է եղել: Նա մի փոքրիկ առանձնատուն է վարձել Դորկինգում և մինչև ականջները խրվել վարդեր աճեցնելու մեջ: Նա ինքն է ինձ գրել այդ մասին, միստր Ֆրենկլին:

— Դա ոչինչ չի նշանակում,— պատասխանեցի ես:— Պարզապես ստիպված կլինեմ յուր գնալ առանց խուզարկու կաֆի օգնութեան: Իսկ սկզբնական շրջանում պետք է ամեն ինչում վստահեմ ձեզ:

Հնարավոր է, որ ես մի քիչ անփույթ ասացի սա: Մի խոսքով՝ իմ պատասխանի մեջ ինչ-որ մի բան վիրավորեց Բետտերեջին:

— Ձեզ սխալ է ասեմ, որ դուք կարող էիք ինձնից ավելի

վատ մեկ ուրիշին էլ վստահել, միստր Ֆրենկլին, — փրնթֆֆրնթալով արտաբերեց նա:

Նրա ձայներանգը և ձայնի մեջ եղած որոշ շփոթութիւնն ինձ հուշեցին, որ նա ունի ինչ-որ տեղեկութիւններ, որոնք չի համարձակվում ինձ հաղորդել:

— Դուք կարող եք ինձ օգնել որոնելու այն հանցանշանները, ոչ վրիպել են խուզարկու Կաֆի ուշադրութիւնից: Գիտեմ, որ դուք կարող եք այդ անել: Իսկ, դրանից բացի, ուրիշ որևէ բան կարո՞ղ էիք անել:

— Ուրիշ էլ ի՞նչ եք սպասում ինձնից, սըր, — ծայրաստիճան հնադանդ տեսքով հարցրեց Բետտերեջը:

— Ես սպասում եմ սպասում, դատելով ըստ մի քիչ առաջվա ձեր ասածի:

— Դատարկ պարծենկոտութիւն է, միստր Ֆրենկլին, — համառելով՝ սլատասխանեց ծերունին: — Կան մարդիկ, որոնք պարծենկոտ են ծնվում և մինչև մեռնելն էլ մնում են այդպիսին: Ես դրանցից մեկն եմ:

Նրա վրա ներգործելու միայն մի միջոց էր մնում:

Որոշեցի օգտվել Ռեչելի և իմ նկատմամբ ունեցած նրա սիրուց:

— Բետտերեջ, կուրախանայի՞ք, եթե լսեիք, որ Ռեչելն ու Լս նորից լավ բարեկամներ ենք դարձել:

— Եթե կասկածում եք դրանում, սըր, նշանակում է ես այս բոլոր տարիներին վատ եմ ծառայել ձեր ընտանիքին:

— Հիշո՞ւմ եք, Ռեչելն ինչպես վարվեց ինձ հետ Անդլիայից իմ մեկնելու ժամանակ:

— Այնքան լավ, որ ասես թե երեկ է եղել: Միլեդին ինքն էր գրել ձեզ այդ մասին, իսկ դուք այնքան բարի եղաք, որ նրա նամակը ցույց տվիք ինձ: Նամակում ասված էր, որ միսս Ռեչելն իրեն սարսափելի վիրավորված է համարում այն մասնակցութեան համար, որ դուք ունեցել եք իր ամաստը որոնելու գործում: Եվ ոչ միլեդին, ոչ ես, ոչ էլ որևէ մեկը չկարողացավ իմանալ, թե ինչու:

— Միանգամայն ճիշտ է, Բետտերեջ: Ես վերադարձա ճանապարհորդութիւնից և տեսա, որ Ռեչելը մինչև հիմա էլ համարում է, որ ես սարսափելի վիրավորել եմ իրեն: Անցյալ տարի ևս դիտեի, որ դրա պատճառը արմաստն էր Գի-



տեմ, որ դա այդպես է նաև հիմա: Ծս փորձեցի խոսել նրա հետ, նա շուզեց ինձ տեսնել: Փորձեցի գրել նրան, նա շուզեց ինձ պատասխանել: Ասացեք, ի սեր աստծու, ինչպե՞ս հասկանալ դա: Իմանալ Լուսնաքարի անհետացման վերաբերյալ ճշմարտությունը՝ ահա միակ հնարավորությունը, որ թողնում է ինձ Ռեչելը:

Ասածներս, ըստ երևույթին, նրան ստիպեցին մի նոր կողմից նայել գործին: Նա մի հարց տվեց ինձ, որը ցույց էր տալիս, որ ես վարանման մեջ էի գրել իրեն:

— Միստր Ֆրենկլին, անբարյացակամ շե՞ք նրա նկատմամբ:

— Ծս նեղացել եմ և մեկնել Լոնդոնից, — պատասխանեցի ես, — բայց հիմա ամեն ինչ անցել է: Ուզում եմ Ռեչելին ստիպել, որ բացատրվի ինձ հետ, և ուրիշ ոչինչ:

— Ենթադրենք, դուք որևէ հայտնագործություն կանեք, սրբ.— շե՞ք վախենում, որ այդ հայտնագործությամբ դուք ինչ-որ բան կիմանաք միսս Ռեչելի մասին:

Ծս հասկացա իր օրիորդի նկատմամբ նրա անսահման վստահությունը, որը նրան թելադրեց այս խոսքերը:

— Նրան հավատում եմ այնպես, ինչպես դուք, — պատասխանեցի ես: — Նրա գաղտնիքի ամենալիակատար բացահայտումը չի կարող ի հայտ բերել այնպիսի մի բան, որը կնվազեցնե՞ր ձեր կամ իմ հարգանքը նրա նկատմամբ:

Այս խոսքերից հետո Բետտերեջի անվճռականությունը վերջնականապես անցավ:

— Նթե ձեզ օգնելը լավ չէ, միստր Ֆրենկլին, — բացականչեց նա, — ապա կարող եմ միայն մի բան ասել՝ ես այդպես չեմ մտածում: Ծս ձեզ կկանգնեցնեմ բացահայտումների ուղու վրա, իսկ դրանից հետո ինքներդ կգնաք: Հիշո՞ւմ եք մեր խեղճ սպասուհի Ռոզաննա Սպիրմանին:

— Անշուշտ:

— Դուք միշտ կասկածել եք, որ նա ուզում է Լուսնաքարի հետ կապված ինչ-որ գաղտնիք բացել ձեզ:

— Ուրիշ ոչ մի բանով չէի կարող բացատրել նրա տարօրինակ վարմունքը:

— Միստր Ֆրենկլին, դուք կարող եք ջրել դրա հետ կապված ձեր կասկածները, եթե հաճո է ձեզ:

Այժմ փակուղու առջև հայտնվելու հերթը իմն էր: Իզուր էի փորձում վրա հասած մթության մեջ տեսնել նրա դեմքի արտահայտությունը: Զարմանքով համակված, ես փոքր-ինչ անհամբեր հարցրի, թե ինչ են նշանակում նրա ասածները:

— Մի շտապեք, սրբ,— կանգնեցրեց ինձ միստր Բետտերեջը:— Ասածներս միայն մի բան են նշանակում. Ռոզաննա Սպիրմանը թողել է ձեզ հասցեագրված մի նամակ:

— Որտե՞ղ է այդ նամակը:

— Քոբս Հոլլում՝ նրա ընկերուհու մոտ: Դուք, սրբ, երբ այստեղ եք եղել, երևի լսե՞լ եք Կաղոտն Լյուսիի մասին, այն աղջկա, որը հենակով է ման գալիս:

— Զկնորսի աղջկա՞:

— Ծիշտ այդպես, միստր Ֆրենկլին:

— Իսկ ինչո՞ւ նամակն ինձ չի ուղարկվել:

— Կաղոտն Լյուսին քմահաճ աղջիկ է, սրբ: Նա ուզեց այդ նամակն անձամբ ձեզ հանձնել: Իսկ դուք, մինչ ես կհասցնեի գրել ձեզ, արդեն մեկնել էիք Անգլիայից:

— Անմիջապես ետ վերադառնանք, Բետտերեջ, և հիմա ևեթ վերցնենք նամակը:

— Հիմա ուշ է, սրբ: Զկնորսները մոմը խնայում են, և Քոբս Հոլլում շուտ են քնում:

— Դատարկ բան է: Կես ժամում կհասնենք այնտեղ:

— Կարող եք, սրբ: Իսկ հասնելուց հետո դուրը փակ կգտնեք:

Նա մատնացույց արեց ներքևում առկայծող կրակները, և նույն պահին ես դիշերային լուսթյան մեջ լսեցի առվակի խոխոջյունը:

— Ահա ֆերման, միստր Ֆրենկլին: Հանգիստ անցկացրեք գիշերը և վաղը առավոտ եկեք ինձ մոտ, եթե կամենաք:

— Ինձ հետ կգա՞ք ձկնորսի մոտ:

— Կդամ, սրբ:

— Վաղ առավոտյա՞ն:

— Այնքան վաղ, որքան հաճո կլինի ձեզ:

Մենք իջանք ֆերմա տանող արահետով:

Ես գրեթե ոչինչ չեմ հիշում Գոտերստոնի ֆերմայում անցկացրած այդ երեկոյից:

Միայն աղոտ հիշում եմ հյուրընկալ հանդիպումը, առատ ընթրիքը, որով կարելի էր մի ամբողջ գյուղ կերակրել Արևելքում, սքանչելի կոկիկ ննջասենյակը, միայն մի թերութիւյամբ՝ մեր նախնիների անտանելի ժառանգութիւյամբ՝ փետրաներքնակով, անքուն գիշերը, անընդհատ մոմ վառելը և հսկայական թեթևացման զգացումը, երբ վերջապես արևը ծագեց ու կարելի էր վեր կենալ:

Նախորդ օրը Բետտերեշի հետ պայմանավորվել էի, որ Քորս Հոլլ գնալու ճանապարհին իր մոտ կգամ այնքան վաղ, որքան հարմար կլինի ինձ համար, մի բան, որը նամակին տեր դառնալու իմ անհամբեր ցանկութեան լեզվով նշանակում էր՝ «Այնքան վաղ, որքան հնարավոր է»: Նախաճաշի շտպասելով, մի կտոր հաց վերցրի ու գնացի, վախենալով, որ բարի Բետտերեշին կգտնեմ դեռևս անկողնում: Ի գոհունակութիւն ինձ, նա էլ ինձ նման հուզված էր առաջիկա հայտնագործութիւյամբ: Նրան գտա արդեն հաղնված և փայտը ձեռքին ինձ սպասելիս:

— Ինչպե՞ս եք ձեզ զգում այսօր, Բետտերեշ:

— Շատ վատ, սրբ:

— Ափսոսանքով եմ լսում այդ: Ինչի՞ց եք դանգաժվում:

— Հենց իմ հայտնագործած նոր հիվանդութիւնից, միստր Յրենկլին: Չէի ուզի ձեզ վախեցնել, բայց դուք էլ, հավանարար, հենց այսօր առավոտյան կվարակվեք այդ հիվանդութիւյամբ:

— Գրո՞ղը տանի:

— Տհաճ այրոցք ստամոքսում, սրբ, և մի շատ վատ թակոց գլխում չե՞ք զգում... Դեռ ո՞չ: Ուրեմն դա ձեզ կպատահի Քորս Հոլլում, միստր Յրենկլին: Ես դա անվանում եմ խուլարկուական տենդ, և դրանով առաջին անգամ վարակվել եմ խուլարկու Կաֆի հետ եղած ժամանակ:

— Դե-դե՞: Իսկ կբուժվեք, երևի, երբ կբացեմ Ռոզաննա Սպիրմանի նամակը: Ուրեմն դնանք և ստանանք այն:

Չնայած վաղ ժամին, ձկնորսի կինն արդեն խոհանոցում

էր: Երբ Բետտերիջն ինձ ներկայացրեց նրան, բարի մխիս Յոլանդը կատարեց այնպիսի մի արարողութիւն, որով (ինչպէս հետո լմացա) միայն պատվավոր հյուրերին էր դիմավորում: Նա սեղանին դրեց մի շիշ հոլանդական ջին, երկու ծխամորճ և խոսակցութիւն սկսեց հետևյալ բառերով.

— Ի՞նչ նոր բան կա Լոնդոնում, սրբ:

Մինչ ես կկարողանայի պատասխան գտնել այդ շատ ընդհանուր հարցի համար, մի տարօրինակ տեսիլք հայտնվեց խոհանոցի մութ անկյունում: Մի նիհար, հյուծված աղջիկ, զարմանալի գեղեցիկ մազերով, հենակին ընկած, կաղալով մոտեցավ սեղանին, որի մոտ ես նստած էի, և կատաղությամբ լի հայացքը հառեց վրաս. թվում էր, թե ես այրող հետաքրքրությամբ խառնված զզվանք եմ ներշնչում նրան, և նա կախարդվածի պէս նայում էր ինձ:

— Միտք Բետտերիջ,— ասաց նա, աչքերն ինձնից չհեռացնելով,— խնդրում եմ, մեկ անգամ էլ բացե՛ք նրա անունը:

— Այս ջենտլմենի անունը,— պատասխանեց Բետտերիջը, խիստ շեշտելով «ջենտլմեն» բառը,— միտք Յրենկլին Բլեկ է:

Աղջիկը մեջքով շրջվեց դեպի ինձ ու հանկարծ դուրս եկավ սենյակից: Բարի միսիս Յոլանդը, որքան հիշում եմ, ներողութիւն խնդրեց իր աղջկա տարօրինակ վարմունքի համար: Սա ասում եմ հենց այնպէս: Ուշադրութիւնս ամբողջովին գրավել էր հեռացող հենակի թխկթխկոցը: Թրխկ-թրխկ՝ փայտի աստիճանների վրա, թրխկ-թրխկ՝ մեր գլխավերևում գտնվող սենյակում, թրխկ-թրխկ՝ նորից աստիճաններով դեպի ներքև, իսկ հետո բաց դռան մեջ նորից հայտնվեց ուրվականը, այս անգամ նամակը ձեռքին, և ինձ դուրս կանչեց սենյակից:

Միսիս Յոլանդին թողցի ներողութիւն խնդրելով և գնացի այդ տարօրինակ աղջկա հտեկից, որ իմ առջևում կաղալով արագ-արագ իջնում էր զառիվայր ափից: Նա ինձ տարավ ձկնորսական նավակներից այն կողմ, որտեղ մեզ չէին կարող տեսնել, չէին կարող լսել գյուղի բնակիչները, և այնտեղ կանգ առավ ու առաջին անգամ նայեց հրեմիս:

— Կանգնե՛ք այստեղ,— ասաց նա,— ուզում եմ նայել ձեզ վրա:

Նրա դեմքի արտահայտութիւնը չէր կարող խաբել: Ես  
աստիկ ատելութիւն ու զղջանք էի ներշնչում նրան: Սնա-  
պարծութիւն չհամարեք, եթէ ասեմ, որ դեռևս ոչ մի կին  
այդպես չէր նայել ինձ: Համարձակվում եմ է՛լ ավելի հա-  
մեստ մի հավաստիացում անել. դեռ ոչ մի կին այդ բանը  
նկատել չէր տվել ինձ: Մարդը այդպիսի անվայելուչ զննման  
կարող է դիմանալ միայն ինչ-որ մի որոշակի ժամանակ:  
Փորձեցի Կաղոտն Լյուսիի ուշադրութիւնը շեղել ուրիշ բա-  
նի վրա, որն այնքան ատելի չէր նրան, ինչքան իմ դեմքը:

— Ձեզ մոտ, կարծեմ, նամակ կա ինձ համար,— սկսեցի  
ես:— Դա ձեր ձեռքի՞նն է:

— Կրկնեք ձեր ասածը,— եղավ նրա միակ պատասխանը:  
Դասը սերտող հնազանդ երեխայի պես կրկնեցի ասածս:

— Ոչ,— ասաց աղջիկը, ինքն իր հետ խոսելով, բայց  
շարունակելով անողոք աչքերը պահել վրաս:— Ձեմ կարող  
հասկանալ, թե նա ինչ էր գտել սրա մեջ: Ձեմ կարող իմա-  
նալ, թե ինչ էր լսել սրա ձայնի մեջ...

Նա հանկարծ շրջվեց ինձնից և գլուխը հոգնածորեն իջեց-  
րեց իր հենակի վրա:

— Խեղճ աղջիկ,— արտաբերեց նա մեղմ ձայնով, որն  
առաջին անգամ լսեցի նրանից: — Իմ զոհված ընկերուհի:  
Ի՞նչ էիր գտել այս մարդու մեջ:

Նա նորից գլուխը բարձրացրեց և կատաղի նայեց ինձ:

— Դուք կարո՞ղ եք ուտել ու իմել,— հարցրեց նա:

Ես գործադրեցի բոլոր ուժերս, որպեսզի կարողանամ  
լուրջ տեսք պահպանել և պատասխանեցի.

— Այո:

— Կարո՞ղ եք բնել:

— Այո:

— Երբ որեէ խեղճ սպասուհու եք տեսնում, խղճի խայթ  
չե՞ք զգում:

— Իհարկե, ոչ: Ես ինչո՞ւ պետք է խղճի խայթ զգամ:

Հանկարծ նա նամակը շարտեց երեսիս:

— Վերցրեք,— կատաղությամբ բացականչեց նա:— Սրտ-  
նից առաջ ես ձեզ երբեք չէի տեսել: Աստված չանի՝ ձեզ տես-  
նեմ նորից:

Հրաժեշտի այս խոսքերով նա կաղալով հեռացավ ինձ-  
նից հնարավորին շփ արագորեն: Մտքովս անցավ, այն, ինչ  
իմ փոխարեն կմտածեր մեկ ուրիշը, այսինքն՝ այն, որ նա  
խանդարված է:

Այս անխուսափելի եզրակացութեանը հանգելով, ես դի-  
մեցի ավելի հետաքրքիր առարկայի՝ Ռոզաննա Սպիրմանի  
նամակին: Հասցեն այսպիսին էր.

«Ֆրենկլին Բլեկին, Էսկվայրին: Անձամբ նրան պետք է  
հանձնի (ուրիշ ոչ ոքի չհանձնարարելով) Լյուսի Յոլանդը»:

Ես պոկեցի կնիքը: Մտքով մեջ դրված էր նամակը, իսկ  
այդ նամակի մեջ՝ մի թուղթ: Նախ և առաջ կարդացի նամակը.

«Սըր, եթե ձեզ համար հետաքրքիր է իմանալ, թե ինչ էր  
նշանակում իմ վարմունքը այն ժամանակ, երբ դուք հյուր-  
ընկալված էիք իմ տիրուհի լեդի Վերինգերի տանը, ապա  
արեք այն, ինչ ցույց է տրված այս նամակի մեջ դրված հու-  
շափղթում. դա արեք այնպես, որպեսզի այդ ժամանակ ոչ  
ոք ներկա չլինի»:

Ձեր խոնարհ ծառա

Ռոզաննա Սպիրման»:

Ես աչքի անցկացրի նամակի մեջ դրված թուղթը: Ահա  
դրա պատճենը՝ բառ առ բառ.

«Հուշաթուղթ: Մակընթացությունն սկսվելուց առաջ գնալ  
Նրերուն ավազներու Շարժվել Հարավային ժայռի երկարու-  
թյամբ այնքան ժամանակ, մինչև Հարավային ժայռի վրայի  
փարոսը և Քոբս-Հոլլից վերև գտնվող մաքսակայանի դրոշա-  
ձողը միաձուլվեն ու վերածվեն մի գծի: Մի փայտ կամ որևէ  
այլ ուղիղ բան դնել ժայռերի վրա՝ փարոսն ու դրոշաձողը  
միացնող գիծը նշելու համար: Այդ անելիս՝ հոգ տանել, որ-  
պեսզի փայտի մի ծայրը ժայռի եզրին գտնվի՝ Նրերուն ա-  
վազների վրա բարձրացող կողմից, փայտի երկարությունը  
շոշափել ջրիմուռների արանքները (սկսած նրա այն ծայրից,  
որն ավելի մոտ է փարոսին), գտնելու համար շղթան: Ձեռ-  
քը տանել շղթայի երկարությունը (երբ այն գտնվի) մինչև  
այն տեղը, որտեղ շղթան ժայռի եզրով կախ է ընկնում ներ-  
քև գեպի Նրերուն ավազները, և այդ ժամանակ քաշել շղթան»:  
Բնագրում բնորոշված վերջին բառերը դեռ չէի հասցրել կար-

զալ, երբ իմ ետևում լսեցի Բեստերեշի ձայնը: Խուզարկուական տենդի դյուտարարը վերջնականապես խոցված էր այդ անհաղթահարելի հիվանդութեամբ:

— Էլ չեմ կարող դիմանալ, միստր Ֆրենկլին: Ի՞նչ է ասվում նամակում: Ի սեր աստծու, սըր, ասացե՛ք, ի՞նչ է ասվում նրա նամակում:

Նրան տվի նամակն ու հուշաթուղթը: Նամակը կարդաց առանց մեծ հետաքրքրության: Բայց հուշաթուղթը մեծ տագնափորություն գործեց նրա վրա:

— Խուզարկուն սա ասել է,— բացականչեց Բեստերեշը:— Սկզբից մինչև վերջ, սըր: Կա՞քը պնդում էր, որ նա ունի գաղտնարանի պլանը: Ահա այն: Տե՛ր աստված, փրկիր մեզ ու ողորմյա: Միստր Ֆրենկլին, ահա այն գաղտնիքը, որը շփոթեցրել է բոլորիս, սկսած նշանավոր Կաֆից: Ահա այն. պատրաստ է և սպասում է միայն, այսպես ասած, ձեզ բացվելուն: Հիմա տեղատվություն է, սրբ, դա կարող է ամեն մարդ տեսնել: Դեռ ինչքա՞ն ժամանակ է մնում մակընթացության սկսվելուն:

Նա բարձրացրեց գլուխը և մեղմից որոշ հեռավորության վրա տեսավ ցանցը նորոգող երիտասարդ ձկնորսին:

— Տամմի Բրա՛յտ,— ամբողջ ձայնով դռաց նա:

— Լսո՞ւմ եմ,— ի պատասխան ձայնեց Տամմին:

— Ե՛րբ է սկսվելու մակընթացությունը:

— Մեկ ժամ հետո:

Երկուսս էլ նայեցինք ժամացույցին:

— Երեքուն ավազներ հասնելու համար կարող ենք բոլորակի շրջանցել ափը, միստր Ֆրենկլին,— ասաց Բեստերեշը,— դրա համար բավական ժամանակ է մնում մեզ: Ի՞նչ կասեք, սըր:

— Գնանք:

Բեստերեշի օգնությամբ շուտով դուռ ալն սեղը, որտեղ, ձուլվելով, մի գիծ էին դառնում փարոսն ու դրոշածողը: Ղեկավարվելով հուշաթղթով, ձեռնափայտս դրեցինք նշված ուղղությամբ այնքան ուղիղ, որքան դա հնարավոր էր ժայռերի անհավասար մակերևույթին, իսկ հետո նորից նայեցինք մեր ժամացույցներին:

Մակընթացության սկսվելուն մնում էր ևս քսան րոպե:

Առաջարկեցի այդ ժամանակն անցկացնել Կաթին և ոչ թե ժայռի թաց ու լպրծուն մակերևույթին: Չոր ավազին հասնելով, պատրաստվում էի նստել, երբ Բետտերեջը, ի զարմանս իմ, հանկարծ շրջվեց, որպեսզի հեռանա ինձնից:

— Ինչո՞ւ եք գնում, — հարցրի ես:

— Կարդացեք նամակը, սըր, և ինքներդ կհասկանաք:

Աչքի անցկացնելով նամակը, հիշեցի, որ ես մենակ պետք է անեի այդ հայտնագործությունը:

— Ինձ համար դժվար է այս պահին ձեռք մենակ թողնելը, — ասաց Բետտերեջը: — Բայց խեղճ աղջիկն ահավոր մահով է մեռել, և ես ինձ պարտավոր եմ դգում, միտք Ֆրենկլին, կատարելու նրա վերջին խնդրանքը: Ընդ որում, — բաղանջանակ ավելացրեց նա, — նամակում ոչինչ չի ասվում այն մասին, որ դուք ձեր հայտնագործությունը պետք է գաղտնի պահեք: Ես կգնամ եղևնու անտառակը և այնտեղ ձեզ կսպասեմ: Շատ շուշանաք, սըր: Այնպիսի մի հիվանդություն, ինչպիսին խուզարկուական տենդն է, նման հանգամանքներում հաղթահարելն այնքան էլ հեշտ չէ:

Հրաժեշտի այս նախազգուշացումով նա մենակ թողեց ինձ:

Որքան էլ կարճ լինի սպասումի ժամանակը, այն երկարում է, երբ անհայտության մեջ ես գտնվում: Դա այն դեպքերից մեկն էր, երբ ծխելու անգնահատելի սովորությունը հատկապես թանկ ու մխիթարական է դառնում: Ես մի սիգար վառեցի ու նստեցի թեք ափին:

Արևը մի առանձին գեղեցկություն էր հաղորդում շրջակա բոլոր առարկաներին: Օդն այնքան թարմ էր, որ ապրելն ու շնչելը ինքնին բավականություն էր: Մեկուսի կանգնած փոքրիկ ծովածոցն անգամ աշխուժորեն ողջունում էր առավոտը, և Երբերուն ավազների խաբուսիկ խոնավ մակերևույթը, ոսկեփայլ շողարձակելով, նրանցում եղած ամբողջ սարսափը թաքցնում էր հպանցիկ ժպիտի տակ: Դա Անգլիա վերագառնալուցս հետո ամենալավ օրն էր:

Ես սիգարս դեռ լրիվ չէի ծխել՝ մակընթացությունն սկսվեց: Տեսա, թե ինչպես սկսեց բարձրանալ ավազը, իսկ հետո՝ ինչպես սարսափելիորեն երերաց նրա մակերևույթը, ասես ինչ-որ մի շար ոգի արթնացավ, տեղաշարժվեց ու դողաց



նրա անհատակ խորքերում: Ծա գցեցի սիգարն ու նորից գնացի դեպի ժայռերը:

Հուշաթուղթն ինձ թելադրում էր ջրիմուռները շոշափել փայտի երկարությամբ, սկսելով նրա այն ծայրից, որն ավելի մոտ էր փարոսին:

Այդպիսով ես շոշափեցի փայտի երկարության կեսից ավելին, ոչինչ չգտնելով, բացի ժայռերի ցցվածքներից: Եվս երկու մատ՝ և իմ համբերությունը վարձատրվեց: Մի փոքրիկ նեղ ճեղքի մեջ, հենց այն տեղում, որին կարող էր հասնել իմ ցուցամատը, ես շոշափեցի շղթան: Երբ փորձեցի տեսնել, թե ուր է՝ գնում այն, ձեռքս խճճվեց ջրիմուռների թանձր կծիկի մեջ, որոնք, անկասկած, այստեղ էին հայտնվել այն բանից հետո, երբ այս գաղտնարանն ընտրել էր Ռոզաննա Սպիրմանը:

Այդ ջրիմուռները պոկելու կամ ձեռքը նրանց արանքը մտցնելու բացարձակապես ոչ մի հնարավորություն չկար: Ես տեղը նկատեցի փայտի այն ծայրով, որն ավելի մոտ էր Երեբուն ավազներին, և որոշեցի շղթան որոնել իմ սեփական պլանով, որը հետևյալն էր. փնտրել հենց ժայռերի տակին. դուրս շղթայի կորսված հետքը գտնվի այնտեղ, որտեղ այն մտնում է ավազի մեջ: Վերցրի փայտն ու շոքեցի Հայավային ժայռի հյուսիսային եզրին:

Այդ վիճակում դեմքս հայտնվեց գրեթե Երեբուն ավազների մակերևույթի մակարդակի վրա: Ինձնից ոչ հեռու ժամանակ առ ժամանակ տատանվող այդ ավազների տեսքն այնքան զզվելի էր, որ մի պահ վախեցրեց ինձ: Այն սարսափելի միտքը, որ հանդուցյալը կարող է հայտնվել ինքնասպանության վայրում, որպեսզի օգնի իմ որոնումներին, այն անարտահայտելի վախը, որ ուր-որ է նա կբարձրանա երեքացող ավազների վրա և ինձ կմատնանշի անհրաժեշտ տեղը, պարուրեցին իմ հոգին ու դողէրոցքի մեջ գցեցին ինձ արևի շողերի տակ: Խոստովանում եմ, այն պահին, երբ փայտի ծայրը խրվեց երեբուն ավազի մեջ, ես աչքերս փակեցի:

Բայց մի ակնթարթ անց, նախքան փայտը ևս մի քանի մատնաչափ կխորանար ավազի մեջ, ես ազատվեցի այդ անահավատ սարսափից ու դողացի հուզմունքից: Փայտը պա-

տահաբար խորելով, առաջին իսկ փորձն անելիս ընկա ինձ անհրաժեշտ տեղը: Փայտը խփվեց շղթային:

Առանց փոքր-ինչ դժվարությամբ դուրս քաշեցի շղթան: Մայրն ամրացված էր թիթեղյա տուփին:

Շղթան այնքան էր ժանդոտել ջրից, որ ոչ մի կերպ չէի կարողանում անջատել օդակից, որով այն ամրացված էր արկղիկին: Արկղիկը ծնկներին արանքը դնելով և ուժերս լարելով՝ սյուկեցի կափարիչը: Միջին ինչ-որ սպիտակ բան կար: Շոշափելով՝ իմացա, որ քաթան էր:

Երբ փորձեցի հանել՝ միաժամանակ դուրս քաշեցի նաև մի տրորված նամակ: Հասցեն նայելով և համոզվելով, որ նամակն ինձ է ուղղված, այն դրեցի գրպանս ու վերջապես հանեցի քաթանը: Ամուր ոլորված էր, որպեսզի տեղավորվեր արկղիկի մեջ, ու թեև երկար էր մնացել այնտեղ, բայց բոլորովին չէր տուժել ծովաջրից:

Քաթանը դրեցի շոր ավազի վրա, բացեցի ու հարթեցրի: Տղամարդու գիշերանոց էր:

Երբ հարթեցրի գիշերանոցը, տեսա, որ նրա առջևի կողմը ներկայացնում է անհամար ծայեր և ուրիշ ոչինչ: Բայց եբք գիշերանոցը շրջեցի մյուս կողմի վրա, անմիջապես աչքովս ընկավ այն ներկի բիծը, որով ներկված էր Ռեշեյի բուզուարի դուտը:

Աչքերս մնում էին բծին գամված, իսկ մտքերս մի թռիչքով ինձ ներկայացրեցին փոխադրեցին անցյալը: Ես այնքան պարզորոշ հիշեցի խուզարկու Կաֆի խոսքերը, ասես այդ մարդը նորից կանգնած էր կողքիս և ինձ ասում էր իր անհերքելի և զբաղակցությունը, որին հանգել էր դռան վրայի բծի մասին մտածելիս.

«Տանը գտեք այդպիսի ներկով կեղտոտված հաղուստը: Իմացեք, ում է սպասկանում այդ հաղուստը: Իմացեք, թե այդ անձնավորությունը ինչպես կբացատրի իր գտնվելն այդ սենյակում, որտեղ ինքը իր հագուստը կեղտոտել է կեսգիշերի և սուսվոտյան ժամը երեքի անրանքում: Եթե այդ անձնավորությունը չկարողանա գոհացուցիչ բացատրություն տալ, սույա ավմաստը հափշտակած ձեռքը գտնելու համար հեռուն հնալու կարիք չկա»:

Այս խոսքերն իրար ետևից միտքս էին գալիս՝ նորից ու

նորից կրկնվելով հոգնեցուցիչ, մեխանիկական միօրինակությամբ: Ես սթափվեցի ընդարձացումից, որը, ինչպես ինձ թվում էր, մի քանի ժամ էր տևել (թեև իրականում այդ ժամերն ընդամենը մի քանի րոպե էին կազմել), երբ լսեցի ինձ կանչող մի ձայն: Գլուխս բարձրացնելով՝ տեսա, որ համբերությունն ի վերջո դավաճանել էր Բետտերեջին: Նա ավազաթմբերի արանքով վերադառնում էր ափ:

Սերունու տեսքն անմիջապես ինձ վերադարձրեց դեպք ներկան և հիշեցրեց, որ հետաքննությունը, որին ես ձեռնամուխ էի եղել, դեռ ավարտված չէ: Ես գտել էի բիծը՝ գիշերանոցի վրա: Բայց ո՞ւմ էր պատկանում այդ գիշերանոցը:

Իմ առաջին մղումը եղավ աչքի անցկացնել գրպանումս դրված նամակը, արկղիկի միջևից գտածս նամակը:

Բայց, ձեռքս զրպանս տանելիս, հիշեցի, որ այդ իմանալու ավելի արագ եղանակ կա: Գիշերանոցն ինքը կրացահայտի ճշմարտությունը, որովհետև նրա վրա, ամենայն հավանականությամբ, կա տիրոջ նշանը:

Ես բարձրացրի գիշերանոցն ու սկսեցի փնտրել այդ նշանը:

Ես դտա այդ նշանը և կարդացի... Իմ սեփական անունը:

Սաևոթ տառերն ինձ ասացին, որ այդ գիշերանոցը իմն է: Հայացքս փախչրի դրանցից: Տեսա արևը, սեսա ծովածոցի շողշողացող ջրերը, տեսա ձերունի Բետտերեջին, որն ավելի ու ավելի էր մոտենում... Նորից նայեցի նշանին: Իմ անունն էր: Աչքերիս առաջ իմ սեփական անունն էր:

«Եթե ժամանակը, աշխատանքն ու փողը կարող են այդ անել, ապա ես կգտնեմ Լուսնաքարը հափշտակած գողին», — այս խոսքերով էի ես մեկնել Լոնդոնից: Ես թափանցել էի այն գաղանիքի մեջ, որ Երեբուն ավազները թաքցրել էին բոլոր մարդկանցից: Եվ անհերքելի հանցանշանը՝ գիշերանոցի վրայի ներկը, ինձ ցույց տվեց, որ գողը ես էի:

#### Գ Լ Ո Ւ Ս IV

Ոչինչ չեմ կարող տեսել իմ ապրումների մասին:

Հարվածը, որ ստացել էի, թվում էր, թե լրիվ կաթվածահարել էր մտածելու ու ղգալու ունակությունս: Անկասկած,

ես չէի գիտակցում, թե ինչ է կատարվում ինձ հետ, որովհետև, ինչպես Բեստերեջն ասաց, երբ ինքը մոտեցել էր ինձ ու հարցրել, թե ինչ է եղել, ես քրքջացել էի և, գիշերանոցը նրա ձեռքը խոթելով, ասել էի, որ ինքը լուծի հանելուկը:

Թե իրար հետ ինչ էինք խոսել ծովափին, այդ մասին ես չնչին իսկ գաղափար չունեմ: Առաջին տեղը, որ հիմա մտաբերում եմ, ծառուղիներով անցնող ճանապարհն էր: Ծս ու Բեստերեջը տուն էինք վերադառնում, և Բեստերեջն ինձ ասում էր, թե մի մեծ բաժակ փունջ խմելուց հետո թե ես, թե ինքը ի վիճակի կլինենք շիտակ նայելու իրերին:

Գործողությունը եղևնու անտառակից փոխադրվում է Բեստերեջի փոքրիկ հյուրասենյակը: Ռեչելի տունը մտնելու իմ օրոշումը մոռացված է: Ինձ ուրախություն են պատճառում այդ սենյակի ստվերն ու լուսությունը: Ծս խմում եմ փունջը (ինձ համար բոլորովին անսովոր ժամանց օրվա այդ պահին), որ իմ բարի ծերունի բարեկամն է պատրաստել սառցի պես պաղ ջրհորի ջրով: Ամեն մի այլ պարագայում այդ խմիչքն ինձ պարզապես կբթացներ, մինչդեռ հիմա ամրապնդեց իմ նյարդերը: Սկսում եմ իրերին նայել շիտակ, ինչպես որ Բեստերեջն էր գուշակել, և Բեստերեջն էլ իր կողմից նույնպես սկսում է շիտակ նայել իրերին:

Վախենում եմ, որ վիճակիս այսպիսի նկարագրությունը շատ տարօրինակ թվա ընթերցողին, եթե շասեմ՝ ավելին: Ամենից առաջ ի՞նչ արեցի այսպիսի բացառիկ վիճակի մեջ ընկնելով: Հեռացա՞ ամեն տեսակ հասարակությունից: Ինձ ստիպեցի վերլուծե՞լ իմ առջև կանգնած անհերքելի, թեկուզև անհավատալի փաստը: Առաջին իսկ գնացքով շտապեցի Լոնդոն, որպեսզի խորհրդակցեմ իրավասու անձանց հետ և տնհապաղ հետաքննություն սկսեմ: Ո՛չ: Գնացի ասպատան փնտրելու այն տանը, որտեղ որոշել էի երբեք չմտնել սեփական արժանապատվությունս շնվաստացնելու համար, և նստած, ծերունի ժառախի ընկերակցությամբ, ջրախառն ոտմ էի խմում առավոտյան ժամը տասին: Արդյո՞ք այսպիսի վարմունք պետք էր սպասել իմ ահավոր վիճակի մեջ դրված մարդուց: Կարող եմ միայն պատասխանել, որ ծերունի Բեստերեջի ծանոթ դեմքի արտահայտությունն անզնահատելի մխի-

Քարություն էր ինձ համար և որ ծերունի Քետտերեջի փունջն ինձ աշնպես օգնեց, ինչպես որ, կարծում եմ, ուրիշ ոչ մի բան չէր օգնի մարմնական ու հոգեկան այն անզգայնության վիճակում, որի մեջ ընկել էի: Միայն այսքան կարող եմ ասել ինձ արդարացնելու համար և պատրաստ եմ անկեղծորեն հիանալ, եթե իմ ընթերցողներն ու ընթերցողուհիները կարող են իրենց արժանապատվությունն ու խիստ տրամաբանական վարվելակերպը պահպանել կյանքի բոլոր պարագաներում:

— Բայց, այնուամենայնիվ, մի բան հաստատ է, միտոր Ֆրենկլին,— ասաց Բետտերեջը, գիշերանոցը զցելով սեղանին և մատով ցույց տալով այն որպես կենդանի արարածի, որը կարող է իրեն լսել.— հաստատ է, որ սա ստում է:

Գործի նկատմամբ այս հանգստացուցիչ հայացքն ինձ շահնգստացրեց:

— Ես նույնքան անմեղ եմ արմատը գողանալու հարցում, որքան և դուք,— ասացի ես,— բայց գիշերանոցն ընդդեմ ինձ է վկայություն տալիս: Գիշերանոցի վրայի ներկն ու նշանը փաստեր են:

Բետտերեջը սեղանի վրայից վերցրեց իմ բաժակն ու խոթեց ձեռքս:

— Փաստե՞ր են,— կրկնեց նա:— Մի բաժակ էլ խմեք, միտոր Ֆրենկլին, և դուք կհաղթահարեք թուլությունը, որը ձեզ ստիպում է հավատալ փաստերին: Մաքուր բան չէ, սրբ,— շարունակեց նա՝ ձայնը ցածրացնելով.— ահա թե ես ինչպես եմ լուծում հանելուկը: Մաքուր բան չէ, և ես ու դուք պետք է հետաքննենք այն: Երբ թիթեղյա արկղիկը բացեցիք՝ մեջն ուրիշ ոչինչ չկա՞ր:

Այս հարցն ինձ անմիջապես հիշեցրեց գրպանումս եղած ծրարի մասին: Հանեցի ու բացեցի: Մանր տառերով գրված մի բանի էջ կար մեջը: Անհամբեր նայեցի նամակի տակ դրված ստորագրությանը՝ «Ռոզաննա Սպիրման»:

Այս անունը կարգալուն պես հանկարծ մի բան միտքս ընկավ և անսպասելի կոահումից բացականչեցի.

— Սպասեցե՛ք: Ռոզաննա Սպիրմանը մորաքրոջս մոտ ծառայության էր եկել ուղղիչ տնից: Ռոզաննա Սպիրմանն առաջ գող էր եղել:

— Զուտ ճշմարտություն է, միստր Ֆրենկլին: է, հետո ի՞նչ, թույլ տվեք հարցնել:

— Ինչպե՞ս թե «հետո ինչ»: Ի՞նչ իմանանք, գուցե, այնուամենայնիվ, նա՞ է գողացել ալմաստը: Ի՞նչ իմանանք, գուցե նա՞ է միտումնավոր կերպով ներկոտել իմ գիշերանոցը:

Բետտերեջն իր ձեռքը դրեց ձեռքիս վրա ու կանգնեցրեց ինձ, նախքան ես կհասցնեի էլի մի բան ասել:

— Դուք կկարողանաք արդարանալ, միստր Ֆրենկլին, դրանում ոչ մի կասկած չկա: Բայց, հույս ունեմ, ոչ այդպիսի ճանապարհով: Նախ տեսեք, թե ինչ է ասվում նամակում, սրբ: Հանգուցյալների հանդեպ հարգանքից հլնելով՝ տեսեք, թե ինչ է ասվում նամակում:

Լրջությունը, որով նա արտասանեց դա, գրեթե կշտամբանք թվաց ինձ:

— Ինքներդ դատեցեք նրա նամակի մասին, — ասացի, — իսկ ես այն բարձրաձայն կկարգամ:

Ես սկսեցի, և կարդացի հետևյալ տողերը.

— «Սրբ, ես պետք է խոստովանություն անեմ ձեզ: Երբեմն խոստովանությունը, որի մեջ շատ վիշտ է ամփոփված, կարելի է անել մի բանի բառով: Իմ խոստովանությունը կարելի է անել շորս բառով. ես ձեզ սիրում եմ...»

Նամակն ընկավ ձեռքիցս: Նայեցի Բետտերեջին:

— Ի սեր աստծու, — բացականչեցի ես, — ի՞նչ է նշանակում սա:

Նրա համար, ըստ երևույթին, հաճելի չէր պատասխանել այդ հարցին:

— Այսօր առավոտյան դուք մենակ եք եղել Կաղոտն Լյուսիի հետ, — ասաց նա, — մի՞թե նա ձեզ ոչինչ չի ասել Ռոզաննա Սպիրմանի մասին:

— Նա Ռոզաննա Սպիրմանի անունն անգամ չի տվել:

— Խնդրում եմ, դարձեք նամակին, միստր Ֆրենկլին: Ասում եմ ուղղակի՝ այն ամենից հետո, ինչ դուք արդեն ապրել եք, սիրտ չեմ անում վշտացնել ձեզ: Թող նա ինքն իր մասին ասի, սրբ, և շարունակեք խմել ձեր փունջը: Հանուն սեփական հանգստության՝ շարունակեք խմել ձեր փունջը:

Ես նորից դարձա նամակին.

— Ձեռն համար ամօթ կլինենր այս մասին ձեզ գրելը, եթե ես ողջ լինեի: Բայց ես արդեն այս աշխարհում չեմ լինի, սրբ, երբ դուք կգտնեք իմ նամակը: Ահա հենց դա էլ համարձակությունն է հաղորդում ինձ: Իմ գիրեզմանն անգամ շի մնա, որպեսզի ձեզ հիշեցնի իմ մասին: Ես համարձակվում եմ ամբողջ ճշմարտությունը գրել, որովհետև Երեբուն ավազներն սպասում են, որպեսզի այս խոսքերը գրվելուն պես իրենց տակն առնեն ինձ:

Բացի դրանից, դուք իմ զաղտնարանում կգտնեք ձեր գիշերանոցը, որը ներկոտած է, և կուզեք իմանալ, թե ինչպես եմ ես այն թաքցրել և ինչու այդ մասին ոչինչ չեմ ասել ձեզ, երբ ողջ եմ եղել: Կարող եմ միայն մի պատճառ բերել. ես այս տարօրինակ բաներն արել եմ, որովհետև սիրում եմ ձեզ:

Ես ձեզ չեմ ձանձրացնի պատմելով իմ մասին և իմ կյանքի մասին մինչև այն օրը, երբ դուք հայտնվեցիք միլեդիի տանը: Լեզի Վերինդերն ինձ վերցրել է ուղղիչ տնից: Ես ուղղիչ տուն մտել եմ բանտից: Ինձ բանտ են նստեցրել, որովհետև զող եմ եղել: Գող եմ հղել, որովհետև մայրս քարշ է եկել փողոցներում, երբ ես աղչնակ եմ եղել: Մայրս քարշ է եկել փողոցներում, որովհետև պարոնը, որ իմ հայրն է, լքել է նրան: Այս սովորական պատմությունը հանդամանորեն ներկայացնելու ոչ մի անհրաժեշտություն չկա: Գա բավականաչափ հաճախ է պատմվում լրագրերում:

Լեզի Վերինդերը և միստր Բետտերեջը շատ բարի են եղել իմ հանդեպ: Այդ երկուսը և ուղղիչ տան պետք այն միակ բարի մարդիկն են եղել, որոնց հետ ինձ վիճակվել է հանդիպել իմ ամբողջ կյանքում: Ես կարող էի մնալ իմ տեղում, ոչ շատ երջանիկ, բայց կարող էի մնալ, եթե դուք չգայիք: Ես ձեզ չեմ մեղադրում, սրբ: Ամեն ինչում մեղավորը ես եմ, միայն ես:

Հիշո՞ւմ եք այն առավոտը, երբ դուք, միստր Բետտերեջին փնտրելով, ավազաբլուրներին իջաք մեզ մոտ: Դուք նման էիք կախարդական հեքիաթի արքայազնին: Դուք նման էիք երազանքով ստեղծված սիրեցյալին: Դուք երբևէ տեսածս ամենասքանչելի մարդն էիք: Այն պահին, երբ ձեզ տեսա, երջանիկ կյանքի նման ինչ-որ մի բան առկայծեց իմ առջև,

որպիսին ես երբեք դեռ չէի իմացել: Եթե կարող եք՝ մի ծի-  
ծաղեք սրա վրա: Օ՛, եթե կարողանայի ձեզ ստիպել զգա-  
լու, թե դա որքա՛ն լուրջ է ինձ համար:

Ես վերադարձա տուն և ձեր ու իմ անունները գրեցի կողք-  
կողքի՝ աշխատանքային արկղիկի վրա: Հետո ինչ-որ մի դե,  
սչ, պետք է ասեի՝ բարի հրեշտակ, շնչաց ականջիս: «Գնա և  
քեզ նայիր հայելու մեջ»: Հայելին ինձ ասաց... միևնույն է,  
թե ինչ ասաց: Բայց ես չափից դուրս խենթ էի և չէի կարող  
օգտվել այդ նախագրուշացումից: Ես հոգով ավելի ու ավելի  
շատ էի կապվում ձեզ հետ, ասես գտնվում էի ձեզ հետ նույն  
աստիճանի վար և ձեր երբևէ տեսած բոլոր կանանցից ամե-  
նագեղեցիկն էի: Ինչպե՛ս էի ջանում, օ՛ աստված իմ, ինչ-  
պե՛ս էի ջանում ձեզ ստիպել, որ նայեք ինձ վրա: Եթե իմա-  
նայիք, թե գիշերներն ինչպես էի լալիս վշտից ու ցավից,  
որ դուք երբեք ուշադրություն չէիք դարձնում վրաս: Այդ դեպ-  
քում գուցե խղճայիք ինձ և երբեմն-երբեմն ինձ արժանաց-  
նեիք ձեր հայացքին, որպեսզի ես ապրելու ուժ գտնեի մեջս:

Բայց, գուցե, ձեր հայացքը շատ բարի չլիներ, եթե դուք  
իմանայիք, թե ինչքան եմ ատում միսս Ռեչելին: Ես, կար-  
ծեմ, ավելի շուտ էի գլխի ընկել, որ դուք սիրում եք նրան,  
քան այդ իմացաք ինքներդ: Նա ձեզ վարդեր էր նվիրում, որ-  
պեսզի դուք դրանք կրեիք մերակում: Ա՛խ, միստր Ֆրենկլին:  
Դուք շատ ավելի հաճախ եք կրել իմ վարդերը, քան ենթադ-  
րել եք դուք կամ նա: Այն ժամանակ ունեցածս միակ մխի-  
թարովթյունն այն էր, որ նրա վարդի փոխարեն իմ վարդն  
էի դնում ձեր բաժակով ջրի մեջ, իսկ նրա վարդը դուրս էի  
զցում:

Եթե նա իրոք այնքան լավը լիներ, ինչքան որ ձեզ թվում  
էր, ես, գուցե, ավելի թևեկությունք տանեի այս բոլորը: Ոչ,  
թերևս, ավելի ուժգին ատեի նրան: Ի՞նչ կստացվի, եթե միսս  
Ռեչելին հագցնեին սպասավորի պես և վրայից հանեին նրա  
բոլոր զարդերը... Չգիտեմ ինչու եմ գրում այս բոլորը: Զե՛ որ  
չի կարելի ժխտել, որ նա վատ կազմվածք ունի. նա չափից  
դուրս նիհար է: Բայց ո՞վ կարող է ասել, թե ինչ է դուք գա-  
լիս սղամարդկանց: Եվ Լրիտասարդ լեդիներին թույլատ-  
րելի է ունենալ այնպիսի շարժումներ, որոնց համար սպա-  
սուհիք կզրկվեք իր տեղից: Բայց դա իմ գործը չէ: Ես չեմ



կարող հույս ունենալ, որ դուք կկարդաք իմ նամակը, եթե շարունակեմ այս ձևով գրել: Միայն թե վիրավորական է լսել, թե ինչպես լավիկն են անվանում միսս Ռեչելին, երբ գիտես, որ այդ բոլորը նրա շքեղ զգեստներից է և իր նկատմամբ նրա վստահությունից:

Աշխատեցիք համբերատար լինել իմ հանդեպ, սրբ: Հիմա կանցնեմ ձեզ հետաքրքրող այն ժամանակներին, երբ կորավ արմատը:

Միսսը Սիգրեն սկսեց նրանից, որ, ինչպես, գուցե, հիշում եք, պահակներ դրեց սպասուհիների ննջարանների դռներ, և բոլոր կանայք կատաղած նեավիցին վերև՝ նրա մոտ, իմանալու, թե ինչ իրավունքով է նա այդպես վիրավորել իրենց: Ես էլ գնացի նրանց հետ, որովհետև եթե ես շանելի այն, ինչ մնացածներն էին անում, միսսը Սիգրեն անմիջապես ինձ վրա կկասկածեր: Մենք նրան գտանք միսս Ռեչելի սենյակում: Նա մեզ ասաց, թե կանայք այստեղ անելիք չունեն և, մատնացույց անելով ներկած դռան վրայի բիծը, ավելացրեց, որ դա մենք ենք արել մեր շրջազգեստով, և բոլորիս ներքև ուղարկեց:

Միսս Ռեչելի սենյակից դուրս գալով, ես մի պահ կանգ առա սանդղահարթակում՝ տեսնելու, արդյո՞ք շրջազգեստս չեմ ներկոտել: Իմ մոտով անցնող Պենելոպե Բիտտերեջը (միակ սպասուհին, որի հետ մտերմական հարաբերությունների մեջ էի) տեսավ, թե ինչ եմ անում:

«Դուք անհանգստանալու բան չունեք, Ռուզաննա, — ասաց նա. — միսս Ռեչելի դռան վրայի ներկը մի քանի ժամ առաջ է շորացել: Եթե միսսը Սիգրենը չկարգադրեր պահակել մեր ննջարանները, ես նրան կասեի այդ մասին: Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես կյանքումս երբեք այսպես վիրավորված չեմ եղել»:

Պենելոպեն տաքարյուն բնավորություն ուներ: Ես հանգրստացրի նրան և նորից հարցրի դռան վրայի ներկի մասին, որը, ըստ նրա, իբր մի քանի ժամ առաջ էր շորացել:

«Դուք դա որտեղի՞ց գիտեք», — հարցրի ես:

«Երեկ ամբողջ առավոտը եղել եմ միսս Ռեչելի և միսսը Յրենկլինի հետ, — պատասխանեց Պենելոպեն. — նրանց համար ներկեր էի խառնում, մինչ նրանք ավարտում էին դու-

որ: Եվ ես լսեցի, ինչպես միսս Ռեչելը հարցրեց՝ դուռը մինչև երեկո, մինչև հյուրերի գալը կչորանա՞, թե ոչ: Իսկ միտոր Ֆրենկլիքը գլուխն օրորեց ու ասաց, որ այն կչորանա տասներկու ժամից ոչ շուտ: Արդեն վաղուց անցել էր նախաճաշի ժամը, ցերեկվա երեքն էր, երբ նրանք ավարտեցին: Ի՞նչ են ասում ձեր հաշվումները, Ռոզաննա: Դրանք ինձ ասում են, որ դուռը պետք է չորացած լիներ այսօր առավոտյան ժամը երեքին»:

«Երեկ երեկոյան տիկիները չե՞ն գնացել դուռը տեսնելու,— հարցրի ես:— Ինձ թվաց, թե միսս Ռեչելը նրանց նախազգուշացրել էր, որ չքսվեին դռանն ու չներկոտվեին»:

«Ներկը տիկնանցից ոչ մեկին քսված լինել չէր կարող,— պատասխանեց Պենելոպեն:— Ես միսս Ռեչելին անկողնում էի թողել անցած գիշեր ժամը տասներկուսին: Դուրս գալիս, նայեցի դռանը, և այն ժամանակ ոչ մի բիծ չկար վրան»:

«Պենելոպե, դուք չե՞ք ուզում այդ մասին ասել միտոր Սիգրևին»:

«Միտոր Սիգրևին օգնելու համար ես ոչ մի խոսք չեմ ասի»:

Նա գնաց զրադվելու իր գործերով, ես էլ՝ իմ: Սըր, իմ գործն էր անկողին գցել ձեզ համար և հավաքել ձեր սենյակը: Դա իմ ամենախրջանիկ ժամն էր ամբողջ օրվա ընթացքում: Սովորաբար համբուրում էի այն բարձր, որի վրա ամբողջ գիշեր հանգչում էր ձեր գլուխը: Ով էլ որ ինձնից հետո հավաքեր ձեր սենյակը՝ ոչ ոք ինձ նման լավ չէր դասավորի ձեր իրերը: Ձեր պահարանում գտնվող ոչ մի առարկայի վրա չնշին-իսկ բիծ չկար: Դուք դա չէիք նկատում, ինչպես որ չէիք նկատում ինձ... Ներեցեք, ես չափն անց եմ կայցնում: Շտապում եմ շարունակել:

Ուրեմն այդ առավոտ գնացի ձեր սենյակը իմ գործով զբաղվելու: Անկողնու վրա ընկած էր գիշերանոցը այն ձևով, ինչ ձևով որ հանել էիք: Սկսեցի ծալել, և նրա վրա տեսա միսս Ռեչելի ներկած դռնից մնացած բիծը:

Այս հետևությունն այնքան վախեցրեց ինձ, որ գիշերանոցը ձեռքիս դուրս վազեցի հտևի սանդուղքով ու փակվեցի սենյակումս, որպեսզի գիշերանոցը զննեմ այնպիսի տեղում, որտեղ ոչ ոք չէր կարողանա խանգարել ինձ:

Երբ ուշքի եկա, հիշեցի Պենելոպեի հետ ունեցած իմ խոսակցութիւնը և ինքս ինձ ասացի. «Ահա ապացուցց, որ նա այս գիշեր եղել է միսս Ռեշելի հչուրասենյակում ժամը տասներկուսի և երեքի արանքում»:

Ուղղակի շիմ ասի, թե առաջինը ինչ կասկած անցավ մտքովս, երբ արել էի այդ հայտնութիւնը: Դուք կջղայնանաք, իսկ եթե ջղայնանաք, ապա կարող է պատահել պատուհաս նամակը և շարունակեք կարգալ:

Ձեր թույլտվութեամբ բավական է ասել միայն մի բան. ամեն ինչ կշռագատելուց հետո որոշեցի, որ դա անհավանական է այն պատճառով, որը հիմա կասեմ ձեզ: Եթե դուք գիշերվա այդ ժամին եղած լինեիր միսս Ռեշելի հչուրասենյակում և Ռեշելն այդ իմանար (եթե դուք խելահեղութիւն ունենայիր մոռանալու, որ հարկ է զգուշանալ շորացած դրոնից), նա ինքը ձեզ կհիշեցներ այդ մասին, նա ձեզ թույլ չէր տա ձեզ հետ տանել իր դիմ ուղղված այնպիսի մի հանցանշան, որն այժմ իմ աչքերի առաջ էր: Միևնույն ժամանակ, խոստովանում եմ, ես լրիվ հավատացած չէի, թե իմ կասկածները սխալ են: Չմոռանաք, որ ես խոստովանել եմ միսս Ռեշելի հանդեպ իմ ատելութիւնը, և աշխատեցեք, եթե կարող եք, պատկերացնել, որ ամեն ինչի մեջ եղել է այդ ատելութեան մասնիկը: Ավարտվեց նրանով, որ ես որոշեցի ձեր գիշերանոցը թողնել ինձ մոտ, ստիպել, հետևել և նայել, թե ինչպէս կարող եմ վարվել դրա հետ: Այն ժամանակ, ինդրում եմ սա շմոռանաք, իմ մտքով էլ չէր անցնում, թե դուք եք գողացել արմաստը...»

Այստեղ ես նորից ընդհատեցի նամակի ընթերցումը:

Այն տեղերը, որտեղ դժբախտ կիինն իր խոստովանութիւններն էր անում ինձ, կարգում էի անախորժ զարմանքով և, կարող եմ խղճով ասել, անկեղծ դառնութեամբ: Ես ամոսոսում էի, անկեղծորեն ամոսոսում էի, որ առանց այս նամակից գոնե մի տող կարդալու, սովեր էի գցել նրա հիշատակի վրա: Բայց երբ հասա վերը շարագրված տեղին, խոստովանում եմ, զգացի, որ ավելի ու ավելի եմ կատաղում Ռոզաննա Սպիրմանի դեմ:

— Մնացածը ինքնիրոք կարդացեք, — ասացի ես, նամակը սեղանի վրայով մեկնելով Բետտերիջին: — Եթե մեջը այն-

պիսի բան կա, որ ես պետք է իմանամ, կարող եք ինձ ասել:  
— Ես ձեզ հասկանում եմ, միստր Ֆրենկլին,— պատաս-  
խանեց նա,— և դա միանգամայն բնական է ձեր կողմից:  
Աստված հասնի բոլորիս,— ձայնը ցածրացնելով, ավելաց-  
րեց նա,— բայց չէ՞ որ դա նույնքան բնական էր նաև նրա  
կողմից:

Շարունակում եմ արտագրել այժմ ձեռքիս տակ գտնվող  
նամակի բնագրից.

«Որոշելով ձեր գիշերանոցը թողնել ինձ մոտ և տեսնել,  
թե հետագայում նրա հետ ինչպես կվարվեն իմ սերը կամ իմ  
ատելութունը (իրոք, չգիտեմ, թե ինչը), ես պետք է ամենից  
առաջ մտածեի, թե ինչպես պահեմ այն, չվախենալով, որ  
այդ մասին կիմանան:

Միակ ելքն էր՝ կարել ճիշտ այդպիսի մեկ ուրիշ գիշերա-  
նոց, կարել մինչև շաբաթ օրը, երբ իր հաշվառման մատ-  
յանով տուն է գալիս վաղարարուհին:

Ես վախեցա գործը մինչև հաջորդ օրը (ուրբաթ) թողնել,  
մտածելով, որ այդ ընթացքում կարող է որևէ բան պատա-  
հել, և որոշեցի մի նոր գիշերանոց կարել հենց նույն օրը  
(հինգշաբթի), երբ ես կարող էի, եթե լավ խաղայի իմ դերը,  
ազատ ժամանակ գտնել դրա համար: Բայց ամենից առաջ  
հարկավոր էր (ձեր գիշերանոցը կոմոդի մեջ փակելով) վերա-  
դառնալ ձեր ննջասենյակը, ոչ այնքան նրա համար, որ սեն-  
յակը մարբելն սվարտեի (Պենելոպեն դա կաներ իմ փոխա-  
բեն, եթե խնդրեի), որքան նրա համար, որպեսդի իմանայի,  
թե արդյո՞ք գիշերանոցի վրայի ներկով չեք կեղտոտել ան-  
կողինը կամ սենյակում գտնվող որևէ այլ բան:

Ամեն ինչ շատ ուշադիր զննեցի և վերջապես ներկի շատ  
փոքրիկ շերտեր գտա ձեր խալաթի ներսի կողմում, ո՛չ քա-  
թանի խալաթի, որը սովորաբար հագնում եք ամռանը, այլ  
ֆլանելե, որը նույնպես ձեզ հետ եք բերել: Դուք, թերևս,  
մրսել էիք մի տակ գիշերանոցով ետ ու առաջ քայլելիս, և  
հագել էիք ձեռքի տակ ընկած պատահած տաք շորը: Ինչ  
էլ որ լիներ, ձեր խալաթի ներսի կողմում բծեր էին երևում:  
Ֆլանելի վրայից ներկը քերելով՝ հեշտությամբ ոչնչացրի բծե-  
րը: Դրանից հետո ձեր դեմ ուղղված միակ հանցանշանը  
մնաց միայն այն մեկը, որը փակված էր իմ կոմոդում:

Դեռ ձեր սենյակն էի մաքրում, երբ ինձ մյուս ծառաների հետ կանչեցին միստր Սիգրևի մոտ հարցաքննության: Այնուհետև սկսեցին նայել մեր բոլոր իրերը: Իսկ հետո տեղի ունեցավ ինձ համար ամենարտասուվոր դեպքը այդ օրվա ընթացքում, այն բանից հետո, երբ ես ներկի բիժ էի գտել ձեր գիշերանոցի վրա: Դա տեղի ունեցավ, երբ տեսուչ Սիգրևն արդեն երկրորդ անգամ հարցաքննել էր Պենելոպե Բետտերեջին:

Պենելոպեն մեզ մոտ վերադարձավ կատաղությունից իրեն կորցրած. նրան վիրավորել էր միստր Սիգրևի վարվելակերպը: Տեսուչն ակնարկել էր, և այն էլ այնպես, որ հնարավոր չէր սխալ հասկանալ նրա բառերի իմաստը, որ իրեն կասկածում է գողութան մեջ: Այս լսելով՝ բոլորս միանման դարմացանք և բոլորս էլ հարցրինք, թե ինչո՞ւ:

«Որովհետև արվաստը եղել է միսս Ռեչելի հյուրասենյակում,— պատասխանեց Պենելոպեն,— իսկ երեկ Լեբկոյան ես վերջինն եմ դուրս եկել հյուրասենյակից»:

Նախքան այդ բառերը կպոկվեին նրա շուրթերից, ես հիշեցի, որ հյուրասենյակում եղել էր ևս մեկ անձնավորություն, արդեն՝ Պենելոպեից հետո: Այդ անձնավորությունը դուք էիք: Գլուխս պտտվեց, և մտքերս ահավոր կերպով իրար խառնվեցին: Եվ նույն պահին, ինչ-որ բան ինձ շնչաց, որ ձեր դիշերանոցի վրայի ներկը կարող էր բոլորովին այլ նշանակություն ունենալ, քան այն, որ ես մինչև հիմա տվել էի նրան: «Եթե պետք է կասկածել նրան, ով որ վերջինն է եղել սենյակում,— մտածեցի ես,— ապա գողը ոչ թե Պենելոպեն է, այլ միստր Ֆրենկլին Բլեկը»:

Եթե խոսքը վերաբերեր մեկ ուրիշ ջենտլմենի, կարծում էմ, ես կամաչեի իմ կասկածներից հենց այն պահին, որ դրանք առաջացել էին իմ մեջ:

Բայց այն միտքը, որ դուք հավասարվել էիք ինձ, իմ շարքըն էիք դասվել և որ ես, ձեռքիս ձեր դիշերանոցն ունենալով, կարող էի ձեզ ազատել իսյատառակությունից, սոսկ այդ միտքը, ասում եմ, սրբ, ձեր բարյացակամությունը շահելու այնպիսի հնարավորություն էր բացում իմ առջև, որ ես կասկածանքից կուրորեն անցա համոզմունքի: Անմիջապես որոշեցի, որ դուք ոստիկանության ետևից ուղարկելու մասին

բուրից շատ էիք հոգում միայն նրա համար, որպեսզի խաբեիք բուրիս, և որ միսս Ռեշելի արմաստը վերցրած ձեռքը ոչ մի կերպ ձեռնից բացի, ուրիշ որևէ մեկին պատկանել չէր կարող:

Երբ ծառաների սենյակը վերադարձա՝ հնչեց մեր ճաշի գանդը: Արդեն կեսօր էր: Մինչդեռ նոր գիշերանոցի կտորը դեռ չէի ճարել: Այն ձեռք բերելու միայն մի հնարավորություն կար: Ծառի ժամանակ հիվանդ ձևացա, և այդպիսով, տրամադրությանս տակ ունեցա մինչև թեյն ընկած ամբողջ ժամանակամիջոցը:

Ինչով էի ես զբաղված, հրբ ամբողջ տունը կարծում էր, թե պառկած եմ իմ սենյակում, և ինչպես անցկացրի գիշերը, դարձյալ հիվանդ ձևանալով թեյի ժամանակ, երբ ինձ նորից անկողին ուղարկեցին, պատմելու հարկ չկա: Խուզարկու Կաֆն իմացել էր այս բոլորը, եթե ուրիշ ոչինչ չէր իմացել: Իսկ ես կարող եմ կուսհել, թե ինչ ձևով: Ինձ ճանաչել էին (թեև երեսիս քողը չէի բարձրացրել) Ֆրիզինհուլի խանութում: Այն վաճառասեղանի մոտ, որտեղ ես քաթանն էի գնում, իմ դիմաց կախված էր հայելի, և այդ հայելու մեջ ես տեսա, թե ինչպես գործակատարներից մեկը, իմ ուսը մատնացույց անելով, ինչ-որ բան շշնջաց մյուսին: Եվ երեկոյան, հրբ իմ սենյակում փակված, գաղտնի գործ էի անում, դուան հտևում լսում էի ինձ վրա կասկածող սպասուհիների շնչառությունը:

Այն ժամանակ դա միևնույն էր ինձ համար, դա ինձ համար միևնույն է նաև հիմա: Չէ՞ որ ուրբաթ առավոտյան, խուզարկու Կաֆի տուն մտնելուց մի քանի ժամ առաջ, նոր գիշերանոցը (այն մեկի փոխարեն, որ ձեռնից վերցրել էի) կարված էր, լվացված, շորացված, արդուկված, նշան արված, ծալված այնպես, ինչպես լվացարարուհիներն են սովորաբար ծալում մնացած բոլոր գիշերանոցները, և բարեհաջող կերպով դրված էր ձեր կոմոդում: Կարող էի չվախենալ (եթե տան սպիտակեղենը սկսեին ղննել), թե նոր գիշերանոցը կմատնի ինձ: Չեր ամբողջ սպիտակեղենը նոր էր, կարված, հավանաբար, այն ժամանակ, երբ վերադարձել էիք արտասահմանից:

Հետո եկավ խուզարկու Կաֆը և մեծ զարմանք առաջաց-

րեց բոլորի մեջ, բացատրելով, թե ինքն ինչ է մտածում դռան  
բժի մասին:

Ես ձեզ վրա էի կասկածում (ինչպես արդեն խոստովանել  
եմ ձեզ) ավելի շատ այն պատճառով, որ ուզում էի ձեզ մե-  
ղավոր համարել, քան որևէ այլ պատճառով: Իսկ խուղար-  
կուն նույնպիսի եզրակացութեան էր հանգել (գիշերանոցի  
առնչութեամբ) բոլորովին այլ ճանապարհով: Բայց թե այժ  
հագուստը, որը ձեր դեմ ուղղված միակ հանցանշանն էր,  
գտնվում էր իմ ձեռքում: Եվ դա հայտնի չէր բացարձակա-  
պես ոչ մի մարդու, այդ թվում՝ նաև ձեզ: Վախենում եմ ձեզ  
ասել, թե ինչ էի զգում, երբ մտածում էի այդ մասին, իմ հի-  
շատակը ձեզ համար ատելի կլինի...»

Այս տողի վրա Բետտերեջը գլուխը բարձրացրեց նամա-  
կից:

— Մինչև հիմա լույսի ոչ մի շող չկա, միստր Ֆրենկ-  
լին, — ասաց ծերունին, հանելով կրիայի պատյանից իր ծանր  
ակնոցը և մի կողմ հրելով Ռոզաննա Սպիրմանի խոստո-  
վանանքը: — Սըր, մինչև ես կարդում էի, դուք տրամաբանա-  
կան որևէ եզրակացութեան հանգեցի՞ք:

— Նախ նամակն ավարտեք, Բետտերեջ. գուցե վերջը  
բանալի կտա մեր ձեռքը, իսկ հետո երկու խոսք կասեմ ձեզ:

— Շատ լավ, սըր: Թող աչքերս մի քիչ հանգստանան,  
հետո նորից կշարունակեմ: Իսկ մինչև այդ, միստր Ֆրենկ-  
լին, շեմ ուզում ձեզ շտապեցնել, բայց գոնե մի խոսքով չէի՞ք  
ակնարկի, այդ ահավոր խառնաշփոթութունից ելք գտե՞լ  
եք, թե չէ:

— Ես պետք է գնամ կոնդոն՝ միստր Բրեֆի հետ խորհրդ-  
ակցելու, — ասացի ես: — Եթե նա չկարողանա ինձ օգնել...

— Հետո՞, սըր:

— Եվ եթե խուղարկուն չկամենա թողնել Դորկինգի իր  
առանձնությունը...

— Ջի կամենա, միստր Ֆրենկլին:

— .... այդ դեպքում, Բետտերեջ, ինչքան որ հիմա տես-  
նում եմ, իմ բոլոր միջոցները սպառված են: Միստր Բրեֆից  
և խուղարկուից բացի, ես չեմ ճանաչում մեկ ուրիշին, որը  
կարողանար շատ թե քիչ օգտակար լինել ինձ համար:

Հաղիվ էի այս խոսքերն արտարելու, երբ ինչ-որ մեկը

թակեց սենյակի դուռը: Բետտերեջի դեմքին երևաց զարմանք և ափսոսանք, որ մեզ խանգարեցին:

— Մտեք, — շղագրգռված գոռաց նա, — ով էլ որ լինեք:

Դուռը բացվեց, և հանգիստ ներս մտավ հիանալի արտաքինով մի մարդ, որի նմանը երբեք չէի տեսել: Դատելով ըստ նրա կազմվածքի ու շարժումների՝ նա դեռ երիտասարդ էր: Իսկ եթե դատելու լինեիք ըստ նրա դեմքի և նրան համեմատենք Բետտերեջի հետ, նա ավելի մեծ էր թվում: Դեմքի գույնը թուխ էր, ինչպես գնչուներինը, նիհար այտերը խոր ներս ընկած էին, և այտոսկրերը՝ խիստ ցցված: Քիթը նուրբ ձևի էր, նուրբ գծագրված, որպիսին հաճախ է պատահում Արևելքի հին ժողովուրդների մոտ և այնքան հազվադեպ է Արևմուտքի նոր ցեղերի մեջ: Ճակատը բարձր էր: Դեմքի կրնձիոներն ու ծալքերն անհամար էին: Եվ այդ տարօրինակ դեմքի վրա՝ է՛լ ավելի տարօրինակ և շատ նուրբ շագանակագույն աչքերը, որոնք մտածկոտ ու տխուր էին, խոր գնացած և ձեռք էին նայում (գոնե այդպես էր ինձ համար) ու ձեր ուշադրությունն իրենց վրա բևեռում իրենց կամքի ուժով: Սրան ավելացրեք կարճ խուզած, խիտ մազերի խոփվը, որոնք բնության ինչ-որ քմայքով իրենց գույնից զրկվել էին շատ զարմանալի ու տարօրինակ ձևով, թեև գազաթին դեռևս պահպանել էին իրենց բնական մուգ սև գույնը: Իսկ գլխի երկու կողմում, առանց աստիճանաբար անցնելու դեպի մեջտեղը, մի բան, որը կնվազեցնեի արտասովոր հակադրության ուժը, դրանք լրիվ սպիտակ էին: Այդ երկու գույների միջև ընկած սահմանը միատարր չէր: Մի տեղում սպիտակ մազերը խըրվում էին սևերի մեջ, իսկ մեկ ուրիշ տեղում՝ սևերը՝ սպիտակների: Ես այդ մարդուն էի նայում այնպիսի մի հետաքրքրություն մը որը, ամոթ է ասել, ամենևին հնարավոր չէր սանձելու նրա շագանակագույն մեղմ աչքերը հեղուկամբ նայեցին ինձ, և նա իմ ակամա գոհակությունը (աչքերս չոնկի վրան) պատասխանեց ներողություն խնդրելով, մի բան, որին ես ամենևին արժանի չէի:

— Ներեցեք, — ասաց նա, — ես չգիտեի, որ միստր Բետտերեջը զբաղված է:

Նա գրպանից մի թուղթ հանեց ու տվեց Բետտերեջին:

— Ցուցակ՝ եկող շաբաթվա համար, — արտաբերեց նա:



Նրա աչքերը նորից հառվեցին վրաս, և նա սինյակից դուրս եկավ նույնքան կամացուկ, որքան կամացուկ ներս էր եկել:

— Ո՞վ է,— հարցրի ես:

— Միստր Կանդիի օգնականը,— պատասխանեց Բետտերեջը:— Ի դեպ, միստր Ֆրենկլին, դուք դառնությամբ կիմանաք, որ փոքրիկ բժիշկը դեռ չի ապաքինվել այն հիվանդությունից, որ ստացավ միսս Ռեչելի ծննդյան օրը ճաշկերույթից տուն վերադառնալիս: Նա իրեն բավականաչափ լավ է զգում, բայց տենդի մեջ կորցրել է հիշողությունը, և այդ օրից գրեթե չի վերագտել այն: Ամբողջ աշխատանքն ընկած է նրա օգնականի վրա: Նրա գործը խիստ կրճատվել է, մնացել են միայն չքավորները: Չէ՞ որ նրանք չեն կարող ընտրություն կատարել: Նրանք պետք է հաշտվեն նաև խայտաբղետ մագերով ու գնչուի նման սև մարդու հետ, հակառակ դեպքում՝ բոլորովին առանց բժշկի կմնան:

— Դուք, կարծեմ, չեք սիրում նրան, Բետտերեջ:

— Ոչ ոք նրան չի սիրում, սրբ:

— Ինչո՞ւ նա համակրանք չի վայելում:

— Նրա արտաքինն անգամ իր դեմ է: Հետո, լուրեր են սլտտվում, թե միստր Կանդին նրան վերցրել է, չնայած նա շատ կասկածելի համբավ ունի: Ոչ ոքի հայտնի չէ, թե որտեղից է նա: Այստեղ ոչ մի ընկեր չունի. էլ ինչպե՞ս կարելի է սպասել, սրբ, որ այս ամենից հետո որևէ մեկը սիրի նրան:

— Անշուշտ, ոչ մի կերպ չի կարելի սպասել: Կարո՞ղ եմ հարցնել, թե ինչ էր ուզում, երբ այդ թուղթը ձեզ տվեց:

— Նա ինձ բերեց այն հիվանդների ցուցակը, սրբ, սրտնց դիմի է անհրաժեշտ: Միլեդին միշտ լավ պարտվեցին ու խերես էր բաժանում չքավոր հիվանդներին, և միսս Ռեչելը ցանկանում է շարունակել այդ սովորույթը: Ժամանակները փոխվել են: Ժամանակները փոխվել են: Հիշում եմ, թե ինչպես միստր Կանդին ինքն էր այդ ցուցակը բերում իմ տիրուհուն: Իսկ հիմա միստր Կանդիի օգնականն այդ ցուցակը բերում է ինձ: Նամակը կարդամ վերջացնեմ, եթե թույլ կտաք սրբ,— ասաց Բետտերեջը, նորից իրեն մոտեցնելով Ռոզաննա Սպիրմանի խոստովանանքը:— Տխուր է կարդալը, հավատացնում

ևմ: Բայց, այնուամենայնիվ, դա ինձ խանգարում է տխրել՝  
անցածի մասին մտածելիս:

Նա դրեց ափնոցն ու մոռալված օրորեց գլուխը.

— Ողջամտութուն կա, սըր, մեր վարմունքի մեջ, երբ  
մենք լույս աշխարհ ենք գալիս: Մեզնից յուրաքանչյուրը քիչ  
թե շատ դիմադրում է այս աշխարհում հայտնվելուն: Եվ մենք  
միանգամայն իրավացի ենք դրանում, մինչև վերջին մարդը:

Միստր Կանդիի օգնականն այնքան ուժեղ տպավորու-  
թյուն գործեց ինձ վրա, որ ես չէի կարող նրան անմիջապես  
հանել մտքիցս: Ես չսեղու տվի Բեստերեջի փիլիսոփայա-  
կան վերջին ճառը և վերադարձա խայտարղետ մարդուն վե-  
րաբերող հարցին:

— Անունն ի՞նչ է,— հարցրի ես:

— Այլանդակ անուն ունի,— փնթփնթալով պատասխանեց  
Բեստերեջը.— էդրա Զենինգս:

## Գ Լ Ո Ւ Խ V

Միստր Կանդիի օղնականի սնունն ինձ հաղորդելով, Բես-  
տերեջը, ըստ երևույթին, որոշեց, որ ինքը բավականաչափ  
ժամանակ է ծախսել այդպիսի շնչին բանի վրա, և նորից  
ձեռքն առավ Ռոզաննա Սպիրմանի նամակը:

Ես նստել էի լուսամտի մոտ, սպասելով մինչև նա  
կվերջացնի: Էդրա Զենինգսի՝ ինձ վրա թողած տպավորու-  
թյունը (թեև այն վիճակում, որի մեջ գտնվում էի, բոլորու-  
վին անհասկանալի էր թվում, որ որևէ մարդ կարող էր որևէ  
տպավորութուն գործել ինձ վրա) կամաց-կամաց անցել էր,  
և մտածումներս վերադարձել էին նախկին հունը: Ես մեկ  
անգամ էլ ծանրութեթև արեցի այն ծրագիրը, որ վերջապես  
կազմել էի իմ ապագա գործողությունների համար:

Նույն օրը վերադառնալ Լոնդոն, ամեն ինչ պատմել միստր  
Բրեֆին և, վերջապես, որ ամենից կարևորն էր, հասնել  
(միևնույն է, թե ինչ եղանակով և ինչպիսի զոհերի գնով)  
Ռեչիլի հետ անձնական տեսակցության. ահա իմ ծրագիրը,  
և թե ես ընդհանրապես այդ ժամանակ ընդունակ էի ծրագրեր

կազմելու: Լոնդոնի գնացքին մնում էր մեկ ժամ. մնում էր մի թույլ հույս, որ Բեատերեջը կարող է Ռոզաննա Սպիրմանի նամակի դեռևս շրնթերցված մասում գտնել այնպիսի մի բան, որն ինձ համար օգտակար կլիներ իմանալ, նախքան ես կթողնեի այն տունը, որտեղ կորել էր ավաստը: Դրա համար էլ որոշեցի սպասել, մինչև նա կվերջացնի ընթերցումը:

Նամակն ավարտվում էր հետևյալ կերպ.

«Պետք չէ ինձ վրա բարկանալ, միստր Ֆրենկլին, նույնիսկ եթե ես մի քիչ ուրախացել եմ, իմանալով, որ ձեռքիս մեջ պահում եմ ձեր ամբողջ ապագան: Տագնապն ու երկյուղները շուտով նորից համակեցին ինձ: Այնպես ահա՛ տանալու վերաբերյալ խուզարկու Կաֆի կարծիքն իմանալով, կարելի է ենթադրել, որ նա կսկսի մեր սպիտակեղենն ու հագուստները ստուգելուց: Իմ սենյակում չկար մի տեղ (ամբողջ տան մեջ չկար մի տեղ), որին, իմ կարծիքով, շսպառնար խուզարկությունը: Ինչպե՞ս թաքցնել ձեր գիշերանոցը որպեսզի խուզարկու Կաֆը չկարողանա գտնել, և ինչպե՞ս անել դա, առանց թանկ ժամանակի բույս-իսկ կորցնելու: Հեշտ չէր այս հարցերին պատասխանելը: Իմ անվճռակա-նությունն ավարտվեց նրանով, որ ես գտա մի եղանակ, որը գուցե, ձեզ կստիպի ծիծաղել: Ես հանվեցի ու հագա ձեր գիշերանոցը: Դուք հագել էիք այն և, ձեզնից հետո հագնելով ևս մի խնդագին պահ ապրեցի:

Նոր լուրը, որ մեղ հասավ ծառաների սենյակում, ցույց տվեց, որ ես ճիշտ ժամանակին էի հասցրել հագնել ձեր գիշերանոցը: Խուզարկու Կաֆը կամեցավ տեսնել այն մատչա-նը, որտեղ գրանցվում էր կեղտոտ սպիտակեղենը:

Այդ մատչանը տաքա միլեգիի հյուրասենյակը: Ես ու խուզարկուն քանիցս հանդիպել էինք անցած ժամանակներում: Հավատացած էի, որ նա կճանաչի ինձ, և հավատացած չէի, թե նա ինչպես կվարվի, երբ տեսնի, որ ծառայում ես այն տանը, որտեղ կորել է թանկարժեք իրը: Ես զգացի, որ այս վիճակում ինձ համար թեթևացում կլինի արագացնել մեր հանդիպումը և անմիջապես իմանալ վատթարագույնը:

Երբ մատչանը տվի նրան, նա ինձ նայեց, կարծես բոլորովին անծանոթ էի իրեն, և շատ քաղաքավարի շնորհակա-

լություն հայտնեց մատյանը բերելու համար: Ծս մտածեցի, որ թե մեկը, թե մյուսը վատ նշան է: Հայտնի չէ, թե նա ինչ կարող էր ասել իմ բացակայությամբ. հայտնի չէ, թե երբ կարող էին կասկածանքով կալանավորել ինձ ու խուզարկել: Երկաթուղային կայարանից ձեր վերադառնալու ժամն էր (դուք գնացել էիք միստր Գոդֆրի էլբուայթին ճանապարհելու) և ես գնացի թփուտներում գտնվող ձեր նախասիրած ծառուղին՝ սպասելու ձեզ հետ խոսելու մի նոր առիթի, ինչպես որ ենթադրում էի, վերջին առիթին, որը դեռ կարող էր ներկայանալ ինձ:

Դուք չերևացիք, և, որ է՛լ ավելի վատ էր, միստր Բետտերեջն ու խուզարկու Կաֆր անցան այն տեղի մոտով, որտեղ ես թաքնված էի, և խուզարկուն տեսավ ինձ:

Դրանից հետո ինձ ոչինչ չէր մնում անել, քան վերադառնալ իմ գործին, քանի դեռ մի նոր փորձանք չէր եկել զըլխիս: Այն պահին, երբ ես անցնում էի ճանապարհը՝ վերադարձաք դուք: Դուք գալիս էիք ուղիղ դեպի թփուտը: Երբ ինձ տեսաք, հավատացած եմ, սրբ, որ ինձ տեսաք, հանկարծ ինձնից, ինչպես ժանտախտով հիվանդից, շրջվեցիք ուրիշ կողմի վրա և մտաք տուն<sup>1</sup>:

Տուն հասա ետնամուտքի աստիճաններով: Այդ ժամերին լվացքատունը դատարկ էր լինում, և ես մենակ մնացի այնտեղ: Ինքս ինձ հարցնում էի, թե ի՞նչը ավելի դժվար կլինի, եթե դործերն այսպես ընթանան. միստր Ֆրենկլին Բլեկի անտարբերությունը տանե՞լը, թե Երբրուն ավագների մեջ ընկնելն ու դրանով ամեն ինչին վերջ տալը:

Անօգուտ կլինեք այդ ժամանակ իմ վարվելակերպի համար ինձնից բացատրություն պահանջելը: Ինչքան էլ որ աշխատում եմ՝ ինքս էլ շեմ կարող այն հասկանալ:

Ինչո՞ւ ես ձեզ ղկանգնեցրի, երբ դուք այդքան դաժաևորեն շրջվեցիք ինձնից: Ինչո՞ւ չգոռացի. «Միստր Ֆրենկ-

<sup>1</sup> Ֆրենկլին Բլեկի ծանոթությունը: Խեղճ աղջիկը շարաշար սխալվել էր: Ծս նրան չէի տեսել... Երբ պատրաստվում էի գրոսնել ծառուղում, հանկարծ հիշեցի, որ կարող է մորաքույրու կամենա ինձ տեսնել երկաթուղային կայարանից վերադառնալուցս անմիջապես հետո, և նույն պահին շրջվեցի ու գնացի դեպի տուն:

լին, ես պետք է անձամբ ձեզ վերաբերող բան ասեմ ձեզ, և դուք պետք է լսեք ու կլսեք ինձ»։ Դուք, ինչպես ասում են, իմ իշխանության տակ էիք։ Դեռ ավելին, ապագայում ձեզ օգտակար լինելու միջոցներ ունեի ես (եթե միայն կարողանայի ձեզ ստիպել, որ հավատաք ինձ)։ Իհարկե, ես ամենևին չէի ենթադրում, որ դուք, ջենտլմեն, ավաստը գողացել եք սոսկ այն գողանալու բավականությունից։ Ոչ, Պենելոպեն լսել էր, ինչպես միսս Ռեչելը, իսկ ես լսել էի, ինչպես միստր Բևտտերեջը խոսել են ձեր շոպյությունից ու ձեր պարտքերից։ Ինձ համար պարզ էր, որ դուք ավաստը վերցրել եք ծախելու կամ գրավ դնելու և, այդպիսով, ձեզ հարկավոր փողերը ձեռք բերելու համար։ Իսկ ես ձեզ կտայի Լոնդոնում ապրող մեկի անունը, որը ձեզ մեծ գումարի պարտք կտար այդ թանկարժեք գրավի դիմաց և ոչ մի անհամեստ հարց չէր տա ձեզ։

Ինչո՞ւ ես ձեզ հետ չխոսեցի։ Ինչո՞ւ ես ձեզ հետ չխոսեցի։ Առաջին մարդը, որ լվացքատուն մտավ, Պենելոպեն էր։ Նա վաղուց արդեն գիտեր իմ գաղտնիքը և ամեն հնարավոր բան անում էր ինձ խելքի բերելու համար, և այդ անում էր քնքշորեն։

«Ա՛խ,— ասաց նա,— ես գիտեմ, թե ինչու եք դուք մենմենակ նստած այստեղ ու ողբում եք։ Ռոզաննա, ձեզ համար ավելի լավ կլինեի, եթե միստր Ֆրենկլինը գնար այստեղից... Կարծում եմ, որ շուտով նա թողնելու է մեր տունը...»

Դեռ ոչ մի անգամ մտքովս չէր անցել, որ դուք կարող եք մեկնել։ Ըս ի վիճակի չէի պատասխանելու Պենելոպեին։ Կարող էի միայն նայել նրան։

«Ըս հենց նոր դուրս եկա միսս Ռեչելի մոտից և բավականաչափ տանջվեցի նրա քմայքների պատճառով,— շարունակեց Պենելոպեն։— Նա ասում է, թե իր համար անսուանելի է տանը մնալ, քանի դեռ այստեղ է ոստիկանը. նա որոշել է այսօր կեթ խոսել միլեդիի հետ և վաղը տեղափոխվել մորաքույր էրլուայթի մոտ։ Սթե նա այդ անի, միստր Ֆրենկլինն անպայման մեկնելու պատճառ կգտնի, հավատացե՛ք»։

Այս լսելիս ես վերագտա իմ խոսելու ունակությունը։

«Ուրեմն, ձեր կարծիքով, միստր Ֆրենկլինը կմեկնի՞ նրա հետ»,— հարցրի ես։

«Շատ հաճույքով կմեկնի, եթե Ռեշելը թույլ տա նրան: Բայց նա թույլ չի տա: Ֆրենկլինն էլ է շատ տուժել նրա քմահաճույթուններից, Ֆրենկլինն էլ է նրա աչքից ընկած, մինչդեռ սա ամեն ինչ արել է նրան՝ այդ խեղճ աղջկան, օգնելու համար: Ձէ-չէ: Եթե մինչև վաղը նրանք չհաշտվեն, կտեսնեք, որ միսս Ռեշելը կմեկնի մի ուղղությամբ, իսկ միստր Ֆրենկլինը՝ մեկ ուրիշ: Թե ուր կգնա միստր Ֆրենկլինը՝ չեմ կարող ասել: Բայց թե միսս Ռեշելի մեկնելուց հետո նա այստեղ չի մնա, Ռոզաննա»:

Ինձ հաջողվեց թաքցնել այն հուսահատությունը, որ ես զգացի ձեր մեկնումի մասին մտածելիս: Ճիշտն ասած, ես ինձ համար հուսո շող տեսա այն բանում, որ լուրջ գժտություն էր տեղի ունեցել ձեր և միսս Ռեշելի միջև:

«Դուք գիտե՞ք, թե ինչի համար են նրանք գժտվել»,— հարցրի ես:

«Բոլորի մեղավորը միսս Ռեշելն է,— ասաց Պենելոպեն,— և որքան ինձ հայտնի է, դրանք սոսկ միսս Ռեշելի քմայքներն են, և ուրիշ ոչինչ: Ինձ համար հաճելի չէ ձեզ վշտացնել, Ռոզաննա, բայց շտարվեք այն մտքով, թե միստր Ֆրենկլինը կգժտվի նրա հետ: Ֆրենկլինն այդ չի անի, քանի որ շափից դուրս շատ է սիրում նրան»:

Նա նոր էր արտաբերել այս անողորմ խոսքերը, երբ մեզ մոտ մտավ միստր Բետտերեջը: Բոլոր ծառաները պետք է իջնեին ներքևի սրահը, իսկ այնտեղից պետք է հերթով, իրար ետևից, գնայինք միստր Բետտերեջի սենյակը, որտեղ մեզ հարցաքննելու էր խուզարկու Կաֆը:

Իմ հերթը հասավ միլեդիի աղախնուն և այնուհետև առաջին սպասուհուն հարցաքննելուց հետո: Խուզարկու Կաֆի հարցովորձերը, թեև նա շատ հմտորեն քողարկում էր դրանք, շուտով ինձ ցույց տվին, որ այդ երկու կանայք (տան մեջ իմ առաջին թշնամիները) հինգշաբթի ցերեկը և նույն հինգշաբթի գիշերը հսկել են իմ դռան մոտ: Նրանք բավականաչափ բաներ էին ասել խուզարկուին՝ իսկություն մի մասը նրան հայտնած լինելու համար: Նա գիտեր, որ ես թաքուն գիշերանոց եմ կարել, բայց սխալմամբ կարծում էր, թե այդ ներկոտած գիշերանոցը պատկանում է ինձ: Այն ամենից, որ ես ինձ ասաց, երևում էր ևս մի բան, թեև ես դա այնքան

էլ լավ շահակացաւ Նա, անշուշտ, կասկածում էր, որ իմ մատր խառն է արմաստը կորչելու մեջ: Բայց միևնույն ժամանակ նա ինձ ցույց տվեց (ենթադրում եմ, որ ոչ առանց միտումի), որ ինձ չի համարում արմաստի անհետացման գրվազովոր մեղավորը: Նա, կարծեմ, մտածում էր, թե ես գործել եմ ինչ-որ մեկ ուրիշի հրամանով: Ո՞վ էր այդ մեկ ուրիշը, ես այդպես էլ չիմացա ոչ այն ժամանակ, ոչ էլ հիմա:

Մի բան անտարակուսելի էր. խուզարկու Կաֆն ամենևին չգիտեր իսկությունը: Դուք ապահով էիք մինչև այն պահը, երբ կգտնվեր ձեր գիշերանոցը, բայց՝ ոչ մի բուրբակ ավելի:

Ես որոշեցի թաքցնել գիշերանոցը և ընտրեցի այնպիսի մի տեղ, որը բոլորից լավ էր հայտնի ինձ՝ Երեբուն ավազները:

Հենց որ հարցաքննությունն ավարտվեց, ես վկայակոչեցի մտրովս անցած առաջին իսկ պատրվակը և թարմ օդ շրջելու թույլտվություն խնդրեցի: Ուղիղ գնացի Քոբս Հուլ, միստր Յոլանդի առանձնատունը: Նրա կինն ու դուստրը իմ մտերիմներն էին: Զկարծեք, թե ես ձեր գաղտնիքը վստահել էի նրանց. ես այն ոչ ոքի չէի վստահել: Ես սոսկ ուզում էի այս նամակը գրել ձեզ և ապահով տեղում վրայիցս հանել գիշերանոցը: Քանի որ ինձ վրա կասկածում էին, ես չէի կարող մեր տանն անել ոչ մեկը, ոչ էլ մյուսը:

Հիմա արդեն գրեթե գրել-վերջացրել եմ իմ երկար նամակը, մեն-մենակ, Լյուսի Յոլանդի ննջասենյակում: Երբ ավարտեմ՝ գիշերանոցը փաթաթած ու թիկնոցիս տակ պահած, կիջնեմ ներքև: Միսս Յոլանդի խոհանոցում հին իրերի մեջ կգտնեմ որևէ արկղիկ, որպեսզի գիշերանոցը անվնաս ու շոր պահեմ իմ գաղտնաբանում: Իսկ հետո կգնամ Երեբուն ավազներ. չվախենաք, քայլերիս հետքերն ինձ չեն մատնի. և ձեր գիշերանոցը կպահեմ ավազի մեջ, որտեղ ոչ մի կենդանի արարած այն չի գտնի, եթե ինքս չբացեմ այդ գաղտնիքը:

Իսկ երբ դա արված կլինի, հետո՞:

Հետո, միստր Ֆրենկլին, ես կրկնակի հիմք կունենամ, որ-սլեսդի մեկ անգամ էլ փորձեմ ձեզ ասել այն, ինչ մինչև հիմա չեմ կարողացել ասել: Նախ, ինձ անհրաժեշտ է ձեզ հետ խոսել մինչև ձեր մեկնելը, թե չէ ես ընդամիշտ կկորցնեմ այդ

առիթը: Այնուհետև, ինձ հանգստացնում է այն բանի գիտակցումը, որ եթե իմ խոսքերը նույնիսկ բարկացնեն էլ ձեզ, ապա գիշերանոցը մեղմացուցիչ հանգամանք կլինի: Եթե այս երկու հիմնավորումները ինձ ուժ չտան դիմանալու այն սառնությանը, որը մինչև հիմա ճնշել է ինձ (ես խոսում եմ իմ նկատմամբ ձեր սառնության մասին), ապա շուտով վերջ կտրվի նաև իմ ջանքերին, որ գործադրում եմ ապրելու համար:

Այո: Եթե ես չկարողանամ օգտվել ինձ ներկայացած առաջին առիթից, եթե դուք դարձյալ անողորմ լինեք իմ հանդեպ և դա այնպես ցավեցնի ինձ, ինչպես որ առաջ, ես հրաժեշտ կտամ աշխարհին, որն ինձ մերժեց այն երջանկությունը, որ տալիս է ուրիշներին: Ես հրաժեշտ կտամ կյանքին, որը, ձեր բարությունից բացի, ուրիշ ոչինչ չի կարող հաճելի դարձնել ինձ համար: Ինձ չդատապարտեք, սրբ, եթե այս ձևով ավարտվի դա: Բայց աշխատեցեք մի քիչ խղճալ ինձ: Ես կհոգամ, որպեսզի ձեզ համար արածս դուք իմանաք, երբ արդեն ի վիճակի չեմ լինի անձամբ ասել ձեզ այդ մասին: Արդյո՞ք այդ ժամանակ իմ մասին որևէ գորովալի բան կասեք նույն հեղահամբույր ձայնով, ինչ ձայնով որ միսս Ռեչելի հետ եք խոսում: Եթե այդ անեք, և եթե գոյություն ունեն ռգիներ, ապա հավատում եմ, որ իմ ոգին կլսի դա ու կուրախանա:

Ժամանակն է, որ վերջացնեմ նամակս: Ես ինձ հասցրի արցունքների: Էլ ինչպի՞ս գտնեմ գաղտնարան տանող ճանապարհը, և թե անհարկավոր արցունքներին թույլ տամ կուրացնել աչքերս:

Բացի դրանից, ինչո՞ւ մոռյլ նայել իրերին: Ինչո՞ւ չհավատալ, որ դեռ ամեն ինչ կարող է լավ վերջանալ: Այսօր ես ձեզ կարող եմ գտնել լավ տրամադրություն մեջ, իսկ եթե ոչ, ապա ինձ, թերևս, դա հաջողվի վաղն առավոտյան: Իմ տղեղ դեմքը չի գեղեցկանա վշտից, այնպես չէ՞: Ի՞նչ իմանաս... գուցե իզո՞ւր եմ գրոտել այս անհամար էջերը: Ապահովության համար (հիմա ուրիշ պատճառ չպետք է հիշել) դրանք գաղտնարանը կդնեմ գիշերանոցի հետ մեկտեղ: Ինձ համար դժվար է եղել, շատ դժվար է եղել այս նամակը գրե-



լը: Օ՛, եթե մենք հասկանալիք իրար, ինչսիսի ուրախությամբ կպատռնի այն:

Մնամ, սըր, նվիրվածորեն ձեզ սիրող և ձեր համեստ ծառա՝ Ռոզաննա Սպիրմանս:

Բետտերեջն անձայն ավարտեց նամակի ընթերցումը: Ինամքով ծալեց, դրեց ծրարի մեջ և, գլուխն իջեցնելով ու աչքերը գետնին հառած, մտածմունքի մեջ ընկավ:

— Բետտերեջ,— ասացի,— նամակի վերջում չկա՞ այնպիսի մի ակնարկ, որը կարող էր մեզ օգնել:

Նա դանդաղորեն և ծանր հոգոց հանելով՝ բարձրացրեց աչքերը:

— Այստեղ չկա ոչ մի այնպիսի բան, որը կարող էր ձեզ օգնել, միստր Ֆրենկլին,— պատասխանեց նա:— Ականջ դրեք իմ խորհրդին և այդ նամակը ծրարից մի հանեք այնքան ժամանակ, մինչև որ ձեր այժմյան հոգսերը կվերջանան: Երբ էլ որ կարդաք՝ այն շատ կվշտացնի ձեզ: Հիմա շարժվեք:

## Ք Լ Ո Ւ Խ VI

Կայարան զնացի ոտքով: Ավելորդ է ասելը, որ ինձ ուղեկցում էր Գարրիել Բետտերեջը: Նամակը գրպանումս էր, իսկ գիշերանոցը պահված էր պայուսակիս մեջ՝ նրա համար, որպեսզի թե մեկը, թե մյուսը հենց այդ երեկոյց ցույց տայի միստր Բրեֆին:

Մենք լուռ դուրս եկանք տնից: Մերունի Բետտերեջին ճանաչելու օրից ի վեր առաջին անգամ էր, որ նա չգիտեր, թե ինչից խոսեր ինձ հետ: Բայց քանի որ ես իրեն ասելու բան ունեի, սալա զբոսայգու դարպասից դուրս գալուն պես խոսակցությունն սկսեցի:

— Լոնդոն մեկնելուց առաջ,— սկսեցի ես,— ուզում եմ երկու հարց տալ ձեզ: Դրանք առնչվում են անձամբ ինձ հետ և, կարծում եմ, մի քիչ կզարմացնեն ձեզ:

— Եթե դրանք կարող են մտքիցս վանել խեղճ աղջկա նամակը, միստր Ֆրենկլին, ապա թող ինչ տեսակ տպավորություն ուզում է գործեն վրաս: Խնդրեմ, սըր, հնարավորին չափ շուտ զարմացրեք ինձ:

— Առաջին հարցը, Բետտերեջ, այսպիսին է. Ռեչելի ծննդյան օրը երեկոյան ես հարբած չե՞մ եղել:

— Հարրա՞ծ: Դու՞ք,— բացականչեց ծերունին:— Ընդհակառակը, դա ձեր ամենամեծ թերությունն է, միստր Ֆրենկլին, որ դուք միայն ճաշի ժամանակ եք խմում, իսկ հետո արդեն՝ ոչ մի կաթիլ:

— Բայց ծննդյան օրը առանձնահատուկ օր է: Այդ երեկո ես կարող էի դավաճանել իմ մշտական սովորութենքին: Բետտերեջը մի պահ մտածմունքի մեջ ընկավ:

— Դուք դավաճանեցիք ձեր սովորութենքին, սրբ, և ձեզ կասեմ, թե ինչպես: Դուք խիստ վատառողջ էիք երևում, և մենք ձեզ համոզեցինք ջրի հետ խառնած մի քանի կաթիլ կոնյակ խմել, որպեսզի փոքր-ինչ լավ զգաք:

— Ես ջրի հետ խառնած կոնյակի սովոր չեմ: Թերևս կարող է...

— Սպասեցեք, միստր Ֆրենկլին: Ես գիտեի, որ դուք սովոր չեք, և ձեզ համար լցրի կես գավաթ մեր հիսուն տարվա կոնյակից և, ամոթ ինձ, այդ ազնիվ խմիչքը բացեցի մի ամբողջ բաժակ սառը ջրով: Երեխան անգամ չէր կարող հարրել դրանից, ուր մնաց թե մեծ մարդը:

Ես գիտեի, որ այդ տեսակ գործերում կարող եմ վստահել նրա հիշողությանը: Հետևաբար, այն ենթադրությունը, թե ես հարբած եմ եղել, բոլորովին անհիմն եղավ: Անցա երկրորդ հարցին:

— Իմ արտասահման մեկնելուց առաջ, Երեխա ժամանակս, հաճախ եք ինձ տեսել, Բետտերեջ: Ծիշտն ասացեք, երբ բնել եմ, որևէ տարօրինակ բան չի՞ եղել իմ մեջ: Երբևէ նկատե՞լ եք, որ ես քայլեմ քնած ժամանակ:

Բետտերեջը կանգ առավ, մի պահ նայեց ինձ և, գլուխն օրորելով, շարունակեց ճանապարհը:

— Տեսնում եմ, թե ինչ եք կկնարկում, միստր Ֆրենկլին,— ասաց նա:— Դուք աշխատում եք բացատրել, թե ինչպես է ներկը ձեր գիշերանոցի վրա հայտնվել առանց ձեր գիտության: Բայց դուք հազարավոր մղոններ հեռու եք ճամարտությունից, սրբ: Շրջիլ քնած ժամանակ: Դուք կյանքում երբեք այդպիսի բան չեք արել:

Ես նորից զգացի, որ Բետտերեջը պետք է իրավացի լի-

նի: Ոչ տանը, ոչ արտասահմանում, երբեք մեկուսի կյանք չեմ վարել: Եթե ես լուսնոտ լինեի՝ հարյուրավոր մարդիկ նկատած կլինեին իմ այդ առանձնահատկությունը, և կարեկցելով կնախազգուշացնեին ինձ, որպեսզի կարողանայի ազատվել այդ հիվանդությունից:

Եվ, անուամենայնիվ, ես համառությամբ (նման պարագաներում՝ և՛ բնական, և՛ ներելի) կառչեցի այդ երկու բացատրությունից, որոնք կարող էին պարզաբանել այն ահավոր վիճակը, որի մեջ այդ ժամանակ գտնվում էի: Նկատելով, որ ես գոհ չմնացի իր պատասխաններից, Բետտերեջը հիշեցրեց Լուսնաքարի պատմության հետ կապված հետազադեպերը, անմիջապես մեկընդմիշտ հօդս ցնդեցրեց իմ հույսերը:

— Ասենք, ձեր ենթադրությունը ճիշտ է, և տեսնենք, թե ինչպես այն մեզ կհանգեցնի ճշմարտության բացահայտման: Եթե համարենք, որ գիշերանոցն ապացույց է, իսկ ես դրան չեմ հավատում, ապա դուք ոչ միայն քսվել եք դրան ներկին, ինքներդ այդ շիմանալով, այլև վերցրել եք արմաստը, դարձյալ այդ շիմանալով: Ես ճիշտ եմ դատում:

— Միանգամայն ճիշտ: Շարունակեք:

— Շատ լավ, սրբ: Ենթադրենք, երբ վերցրել եք արմաստը, հարբած եք եղել կամ քնած շրջել եք լուսնոտի պես: Դա բացատրում է այն, ինչ կատարվել է գիշերը՝ ծննդյան օրից հետո: Բայց ի՞նչ կերպ է դա բացատրում այն, ինչ պատահել է հետո: Արմաստը տարվել է Լոնդոն: Արմաստը դրավ է զրվել միստր Լյուկերի մոտ: Մի՞թե դուք թե մեկը, թե մյուսը արել եք՝ առանց ինքներդ այդ իմանալու: Մի՞թե դուք հարբած եք եղել, երբ շաբաթ օրը երեկոյան ես ձեզ ճանապարհել եմ կառքով: Եվ մի՞թե դուք քնած ժամանակ եք միստր Լյուկերի մոտ գնացել, երբ գնացքը ձեզ հասցրել է մինչև ձեր ճանապարհի վերջը: Ինձ ներեցեք, եթե ասեմ, միստր Ֆրենկլին, որ այս գործն այնքան է հուղել ձեզ, որ դուք դատողություններ անելու դեռևս ընդունակ չեք: Որքան շուտ խորհրդակցեք միստր Բրեֆի հետ, այնքան շուտ դուրս կգաք այն անելանելի վիճակից, որի մեջ հիմա գտնվում եք:

Կայարան հասանք գնացքը մեկնելուց մի երկու րոպե առաջ միայն:

Ես հասլշտաւ պ Բետտերեջին տվի Լոնդոնի իմ հասցեն, որպեսզի կարողանա ինձ գրել, եթե անհրաժեշտ լինի, խոստացա, իմ հերթին, նրան հաղորդել նաև իմ նորությունները: Այդ անելուց և նրան արդեն հրաժեշտ տալուց հետո պատահաբար նայեցի գրքերի ու լրագրերի կրպակի կողմը և տեսա, որ կրպակի տերը խոստում է միստր Կանդիի տարօրինակ օգնականի հետ: Նույն պահին մեր աչքերը հանդիպեցին: էզրա Ջենինգսը գլխարկը հանեց: Ես պատասխանեցի խոնարհումին և վագոն նստեցի, երբ գնացքն արդեն սկսել էր շարժվել: Կարծում եմ, ինձ համար թեթևություն կլինեք բուրրովին կողմնակի բաների մասին մտածելը: Ինչ էլ որ լինեք, երբ ես վերադարձի ճամփան էի բռնել, ինձ համար այնքան կարևոր գործով միստր Բրեֆի մոտ մեկնելով, զարմանքով, խոստովանում եմ, բավականաչափ անհեթեթ զարմանքով, մտածում էի, որ մեկ օրվա ընթացքում երկու անգամ տեսել եմ խայտաբղետ մաղերով մարդուն:

Լոնդոն հասա այնպիսի ժամի, երբ միստր Բրեֆին իր գրասենյակում գտնելու ոչ մի հույս չկար: Այդ պատճառով էլ կայարանից ուղիղ գնացի նրանց տուն՝ Հեմլիտոնգ, և անհանգստացրի ծեր փաստաբանին, որը մեն-մենակ ննջում էր իր ճաշասենյակում, իր սիրած կատուն ծնկներին և գինու շիշը ձեռքի տակ:

Թե միստր Բրեֆի վրա ինչ ազդեցություն գործեց իմ պատմությունը՝ ավելի լավ է հաղորդեմ նկարագրելով, թե նա ինչ արեց գրանից հետո: Ինձ միշտ վերջ լսելով, նա հրամայեց կրակ անել, թունդ թեյ բերել իր աշխատասենյակը և կարգադրեց իր տիկիններին հաղորդել, որպեսզի ոչ մի պատրվակով մեզ չանհանգստացնեն: Այս կարգադրություններից հետո նա նախ աչքի անցկացրեց գիշերանոցը, իսկ հետո սկսեց կարգալ Ռոզաննա Սպիրմանի նամակը:

Նամակը կարդալուց հետո միստր Բրեֆն ինձ հետ խոսեց առաջին անգամ այն ամբողջ ժամանակամիջոցում, որ մենք փակվել էինք իր աշխատասենյակում:

— Ֆրենկլին Բլեկ,— ասաց ծեր ջինտլմենը,— սա շատ լուրջ գործ է բոլոր տեսակետներից: Իմ կարծիքով՝ սա Ռեչելին վերաբերում է նույնքան, որքան և ձեզ: Նրա տարո-

բինակ վարմունքը հիմա արդեն գաղտնիք չէ: Նա հավատա-  
ցած է, որ ալմաստը դուք եք գողացել:

Սա երկար եմ կռվել ինքս ինձ հետ, վանելով այդ զայ-  
րացուցիչ եզրակացութիւնը, բայց, այնուամենայնիւ, այն  
անխուսափելիորեն մտել է գլուխս: Ռեշելի հետ անձնապէս  
տեսակցութեան հասնելու իմ մտադրութիւնը, ճիշտն ասած,  
հենվում էր հենց այն համոզմունքի վրա, որ այժմ արտա-  
հայտեց միստր Բրեֆը:

— Առաջին քայլը, որ հիմա պետք է անել, — շարունա-  
կեց փաստաբանը, — Ռեշելին դիմելն է: Օրիորդը մինչև հի-  
մա լուռ է եղել այնպիսի պատճառներով, որոնք, նրա բնա-  
վորութիւնն իմանալով, ես հեշտութեամբ կարող եմ հաս-  
կանալ, բայց, այն ամենից հետո, որ կատարվել է, այլևս  
չի կարելի տանել այդ լռութիւնը: Նրան պետք է համոզել  
կամ հարկադրել մեզ ասելու, թե ինչու է ինքը համարում,  
որ Լուսնաքարը հենց դուք եք վերցրել: Հույս կա, որ մեզ  
այդքան լուրջ թվացող այդ ամբողջ գործը ի չիք կդառնա, եթե  
մեզ հաջողվի կոտրել Ռեշելին և համոզել, որ արտահայտվի:

— Դա շատ հանգստացուցիչ կարծիք է ինձ համար, —  
ասացի ես: — Խոստովանում եմ, ևս կուզեի իմանալ...

— Դուք կուզեիք իմանալ, թե ինչով եմ դա հիմնավո-  
րում, — ընդհատեց միստր Բրեֆը, — Դա ձեզ կարող եմ բա-  
ցատրել երկու բոլորում: Հասկացեք, նախ, որ ես գործին  
նայում եմ իրավաբանական տեսանկյունից: Ինձ համար  
հարցը հանցանշանն է: Շատ լավ: Հենց սկզբից հանցանշա-  
նը անհիմն է դառնում մի կարևոր կետում:

— Ի՞նչ կետում:

— Հիմա կիմանաք: Համաձայն եմ, որ գիշերանոցի վրա-  
ջի նշանն ապացուցում է, որ այդ գիշերանոցը ձերն է: Հա-  
մաձայն եմ, բիծն ապացուցում է, որ այդ գիշերանոցը քսվել  
է Ռեշելի դուռն ներկին: Բայց որտե՞ղ է այն ապացույցը,  
որ այդ գիշերանոցը ձեր հագին է եղել:

Այս դատողութիւնը առավել ևս համոզիչ թվաց ինձ, քա-  
նի որ արդեն այդպիսի մի բան մտքովս անցել էր:

— Ինչ վերաբերում է սրան, — շարունակեց փաստաբա-  
նը, ձեռքն առնելով Ռոզաննա Սպիրմանի խոստովանութիւ-  
նը, — ապա հասկանում եմ, նամակը հաճելի չէ ձեզ համար:

Հասկանում եմ, որ դուք չեք համարձակվում այդ վերլուծել դուռ օրչեկտիվ տեսակետից: Բայց իմ վիճակն ուրիշ է: Իմ իրավաբանական փորձի վրա հենվելով, կարող եմ այդ փաստաթուղթը դիտել այնպես, ինչպես կղիտեի ամեն մի ուրիշ փաստաթուղթ: Չհիշատակելով, որ այդ կինը գող է եղել, միայն նկատեմ, որ նրա նամակն ապացուցում է, իր իսկ խոստովանությանը, թե ինչ հմուտ խաբեբա է եղել նա, այս պատճառով էլ ես իրավունք ունեմ կասկածելու, որ նա ձեզ ասել է ոչ ամբողջ ճշմարտությունը: Հիմա չեմ ուզում դատողություններ անել այն հարցի շուրջը, թե՛ նա կարող էր, թե չէր կարող այդ անել: Միայն ասեմ, որ, եթե Ռեչելը ձեզ վրա կասկածում է միայն այդ գիշերանոցի հանցանշանով, ապա կարելի է գրեթե հաստատ ասել, որ գիշերանոցը նրան ցույց է տվել Ռոզաննա Սպիրմանը: Այդ կինն իր եամակում խոստովանում է, որ ինքը խանդել է Ռեչելին, որ ինքը իր վարդերով է փոխարինել ծաղկամանի միջի նրա վարդերը, որ ինքը իր համար հույսի նշույլ է տեսել Ռեչելի և ձեր գծաթղթի մեջ: Չեմ ուզում հարցնել, թե ով է վերցրել Լուսնաբարը. իր նպատակին հասնելու համար Ռոզաննա Սպիրմանը հիսուն Լուսնաբար կվերցնեք. միայն ասեմ, որ արմատի անհետացումը ձեզ Ռեչելի հետ ընդմիշտ գծակցելու համար առիթ է տվել այդ սիրահարված գողին: Նա այն ժամանակ չի համարձակվել իրեն կյանքից զրկել, հիշեցեք սա: Իմ էլ հստականապես պնդում եմ, որ նա իր բնավորությանը ու վիճակով միանգամայն ընդունակ էր օգտվել առիթից ու դողանալ քարը: Ի՞նչ կասեք սրան:

— Նամակը բացելուց անմիջապես հետո այդպիսի մի բան ես էլ եմ մտածել,— պատասխանեցի ես:

— Դա է որ կա: Մինչդեռ նամակը կարդալիս խղճացել էք այդ աղջկան և նրա վրա կասկածելու ուժ չեք գտել ձեր մեջ: Դա պատիվ է բերում ձեզ, սիրելի սըր, դա պատիվ է բերում ձեզ:

— Բայց, ասենք, պարզվի, որ այդ գիշերանոցը հագիս է եղել: Հետո՞:

— Չեմ տեսնում, թե դա ինչպես կարող է ապացուցվել,— ասաց միտքը Բրեքը:— Բայց, եթե ենթադրենք, որ դա այդպես է, ապա ձեր անմեղությունն ապացուցելը հեշտ չի լի-

նիւ Հիմա այդ հարցի մեջ շխորանանք: Սպասենք ու տեսնենք՝ արդո՞ք Ռեշելը ձեզ վրա կասկածել է միայն այն հանցանշանի հիման վրա, որպիսին գիշերանոցն է:

— Աստված իմ: Ինչպիսի՜ անտարբերութեամբ եք ասում, որ Ռեշելը կասկածում է ինձ վրա,— բռնկեցի ես:— Նա ի՞նչ իրավունք ունի ինձ գողութեան մեջ կասկածելու ինչ-որ մի հանցանշանի հիման վրա:

— Շատ խելամիտ հարց է, սիրելի սրբ: Փոքր-ինչ կըրթոտութեամբ առաջադրված, բայց, այնուամենայնիվ, ուշադրութեան արժանի: Այն, ինչ տարակուսանքի մեջ է գցում ձեզ, տարակուսանքի մեջ է գցում նաև ինձ: Փնտրեք ձեր հիշողութեան մեջ և ինձ ասացեք, արդո՞ք այն ժամանակ, երբ դուք հյուրընկալված եք եղել լեդի Վերինդերի տանը, չի կատարվել այնպիսի մի բան, որը նրան ստիպեր կասկածի տակ առնել ձեր ազնվութունը կամ, ասենք, թեկուզ (թող որ անհիմն կերպով), ձեր բարոյական սկզբունքներն ընդհանրապես:

Ես անզուսպ վրդովմունքով վեր թռա տեղիցս: Անդլիայից մեկնելուցս հետո առաջին անգամ փաստաբանի հարցն ինձ հիշեցրեց, որ այն ժամանակ, երբ հյուրընկալվել եմ լեդի Վերինդերի մոտ, իրոք ինչ-որ բան կատարվել է:

Ես խելահեղութուն էի ունեցել (այն ժամանակ սովորուկանի պես փողի կարիք ունենալով) փոխաբինաբար որոշ գումար վերցնել Փարիզի մի փոքրիկ ճաշարանի տիրուջից, որին ես շատ լավ հայտնի էի որպես իր մշտական հաճախորդը: Նշանակվել էր վճարման ժամկետ, իսկ երբ այն հասավ, ես չկարողացա խոսքս կատարել, ինչպես այդ հաճախ պատահում է հազարավոր ուրիշ ազնիվ մարդկանց հետ: Ես պարտամուրհակ ուղարկեցի այդ մարդուն: Նման փաստաթղթերի վրա զրվող իմ ստորագրութունը, դժբախտաբար, քաջ հայտնի էր. նրան չհաջողվեց դա հաշվի առնել: Նրա գործերը խառնվեցին, և նրա մի ազգականը, Ֆրանսիայի մի փաստաբան, եկավ ինձ մոտ Անդլիա և սկսեց պահանջել, որ վճարեմ իմ պարտքը: Դյուրաբորբոք մարդ էր, և նա սխալ ձայներանգ ընտրեց բացատրութուններն համար: Երկու կողմից էլ բազում խիստ խոսքեր ասվեցին. մտաբույրս և Ռեշելը, դժբախտաբար, գտնվում էին հարևան սեն-

յակում և լսում էին մեր խոսակցութիւնը: Լեդի Վերին-դերը մտավ մեր սենյակը և անպայման ուղեց իմանալ, թե ինչ է պատահել: Ֆրանսիացիին ցույց տվեց իրեն հանձնված լիազորագիրը և հայտարարեց, թե ես մեղավոր եմ խեղճ մարդու սնանկացման մեջ, որը վստահել է իմ ազնվութիւնը: Մորաքույրս անմիջապէս փողը վճարեց նրան ու ետ ուղարկեց: Լեդի Վերինդերը, անշուշտ, այնքան էր ինձ ճանաչում, որ իմ վերաբերյալ Ֆրանսիացու կարծիքը չէր կիսում: Բայց նա վիրավորվել էր իմ անփութութիւնից և իրավացիորեն բարկացավ վրաս այն բանի համար, որ այնպիսի վիճակի մեջ էի դրել ինձ, որն առանց իր միջամտութեան կարող էր շատ անախորժ լինել: Մա՛յրն էր այս ամենի մասին պատմել, թե Ռեչելն ինքն էր իմացել հարևան սենյակից, շեմ կարող ասել: Միայն թե նա յուրովի ողմանտիկորեն ու շփազանցված նայեց այս դեպքին: Ծս «անհոգի» էի, ես «անազնիվ» էի, ես «բարբեր շունի», հայտնի չէ թե «ուրկարող եմ հասնել»,— մի խոսքով այնքան խիստ բաներ ասաց ինձ, որպիսիք ոչ մի երիտասարդ աղջկանից չէի լսել: Գլխատութիւնը շարունակվեց ամբողջ հաջորդ օրը: Երրորդ օրն ինձ հաջողվեց հաշտվել նրա հետ, և ես դադարեցի այդ մասին մտածելուց: Գուցէ Ռեչելն այդ շարաբաստիկ դե՞պքն էր հիշել այն կրիտիկական պահին, երբ նրանից հարգվելու իմ իրավունքը նորից, և շատ ավելի լրջորեն, հարցականի տակ էր դրված: Միստր Բրեֆը, երբ այս բոլորը պատմեցի նրան, անմիջապէս դրական պատասխան տվեց:

— Դա պետք է ազդած լիներ նրա վրա,— լրջորեն պատասխանեց նա,— և ես, ի սեր ձեզ, կուղիի, որ դա տեղի չունենար: Սակայն մենք ձեզ հետ մեկտեղ պարզեցինք, որ ևդել է մի հանդամանք, որը կարող էր վնասել ձեզ, և առնվազն մի հանկուտկ յուժեցինք: Չգիտեմ, թե էլ ինչ կարող էինք անել սրանից հետո: Այս հետաքննութեան մեջ մեր հաջորդ քայլը պետք է մեզ բերի Ռեչելի մոտ:

Նա վեր կացավ և սկսեց մտախոհ ետուառաջ քայլել սենյակում: Երկու անգամ քիչ մնաց նրան ասիի, որ որոշել եմ ինքս տեսնվել Ռեչելի հետ, և երկու անգամ էլ, հաշվի առնելով նրա տարիքն ու բնավորութիւնը, զգուշացա այսպի-



սի անբարենսլատս պահի նրան մի նոր անակնկալի բերելուց:

— Ամենամեծ դժվարությունն է,— շարունակեց նա,— ստիպել, որ Ռեչելն արտահայտվի մինչև վերջ: Դուք ի՞նչ եք առաջարկում:

— Միստր Բրեֆ, որոշել եմ անձամբ խոսել Ռեչելի հետ:

— Դո՞ւք:

Նա հանկարծ կանգ առավ և ինձ նայեց այնպես, կարծես խելքս թուցրել էի:

— Դո՞ւք: Մի՞թե դա հնարավոր է ձեզ համար:

Նա ուժեղ ցնցեց գլուխը և նորից սկսեց քայլել սենյակում:

— Սպասեցեք,— ասաց նա:— Նման անսովոր դեպքերում թեթևամիտ վարմունքը երբեմն կարող է լավ միջոց լինել:

Նա ևս երկու-երեք րոպե այդ հարցը ծանրութեթե արեց այս նոր լույսի տակ և հանկարծ համարձակորեն վճռեց իմ շարժում:

— Ձեռ խիզախի՝ շեռ շահի,— եզրակացրեց ձեր ջենտրլմենը:— Ձեր կողմն է շահելու հնարավորությունը, որպիսին շունեմ ես. դուք էլ առաջինը կկատարեք այդ փորձը:

— Շահելու հնարավորությունը իմ կողմն է,— մեծ դարձանքով կրկնեցի ես:

Միստր Բրեֆի դեմքը առաջին անգամ մեղմացավ ժպիտով:

— Ահա թե ինչ,— արտաբերեց նա.— անկեղծորեն խոստովանում եմ, ես հույս չեմ դնում ոչ ձեր զգուշավորության, ոչ էլ ձեր սառնասրտության վրա: Բայց ես հույս եմ դնում այն բանի վրա, որ Ռեչելն իր հոգու խորքում դեռ որոշ թուլություն ունի ձեր նկատմամբ: Օգտվեք դրանից և, հավատացեք, կլսեք այն ամենաանկեղծ խոստովանությունը, որին միայն ընդունակ է կիրնը: Հարցը միայն այն է, թե ինչպես հանդիպեք նրա հետ:

— Նա հյուրընկալվել է ձեր տանը,— պատասխանեցի ես:— Կարո՞ղ եմ ձեզ խնդրել, որ նրան հրավիրեք այստեղ, շատելով, որ ձեր տանը կտեսնվի ինձ հետ:

— Կա՞վ է,— ասաց միստր Բրեֆը:

Ի սլատաասխան իմ առաջարկի միայն այսքանն ասելով, նա նորից սկսեց քայլիլ սենյակում:

— Այլ կերպ ասած, — շարունակեց նա, — Թեչեչի համար իմ տունը կդառնա թակարդ՝ կնոջս և դստերս հրավերի տեսքն ունեցող խայծով: Եթե դուք չլինեիք Ֆրենկլինի Բլեկը և եթե գործը մի մաղաչափ պակաս լուրջ լիներ, քան իրականում է, ես կտրականապես կհրաժարվեի: Բայց հանգամանքները հիմա այնպիսին են, որ հաստատ հավատացած եմ՝ հետագայում Թեչեչն ինքը ուխտադրժության համար երախտապարտ կլինի ծերուկիս: Ինձ համարեք ձեր դավադրակիցը: Թեչեչը կհրավիրվի մեկ օր անցկացնելու մեզ մոտ և ժամանակին ձեզ իմաց կտրվի այդ մասին:

— Ե՞րբ: Վա՞ղը:

— Վաղը դեռ չենք հասցնի ստանալ նրա սլատաասխանը: Թող վաղը չէ մյուս օրը լինի:

— Ինչպե՞ս իմաց կտաք ինձ:

— Ամբողջ առավոտ նստեք տանը, ինքս կգամ ձեր հետ վից:

Ես ջերմ երախտագիտության զգացումով շնորհակալություն հայտնեցի ինձ ցույց տրված անզնահատեչի օգնության համար և, Հեմփստեդում գիշերելու հյուրընկալ հրավերից հրաժարվելով, վերադարձա Լոնդոնի իմ բնակարանը:

Հաջորդ օրվա մասին կարող եմ միայն ասել, որ դա կյանքիս ամենաերկար օրն էր: Թեև գիտեի իմ անմեղությունը, թեև հավատացած էի, որ ինձ վրա ընկած նողկալի մեղադրանքը վաղ թե ուշ պարզվելու է, այնուամենայնիվ, մի անսակ ես իմ աչքում ընկա և չէի ուզում բարեկամներիցս ուրե՛կ մեկին ասենել: Հաճախ լսում էի, ի դեպ, շատ ավելի հաճախ՝ մակերեսային գիտորդներից, որ հանցագործությունը կարող է անմեղության տեսք ունենալ: Ինձ շատ ավելի ճիշտ է թվում այն, որ անմեղությունը կարող է հանցագործության նմանվել: Հրամայեցի ամբողջ օրը ոչ ոքի չընդունել և համարձակվեցի դուրս գալ միայն գիշերային մթության քողի տակ:

Հաջորդ առավոտ, երբ դեռ նստած նախաճաշում էի, անսպասելիորեն հայտնվեց միստր Բրեֆը: Նա մի մեծ բանա-



լի տվեց ինձ և ասաց, որ կյանքում առաջին անգամ ամաչում է իր արածի համար:

— Գալս՞ է:

— Այսօր կգա նախաճաշելու և ամբողջ օրը կանցկացնի կնոջս ու աղջիկներին հետ:

— Միսիս Բրեֆին ու ձեր աղջիկներին էլ է հայտնի մեր գաղտնիքը:

— Ուրիշ կերպ հնարավոր չէր: Բայց կանայք, ինչպես ինքներդ, երևի, նկատել եք, այնքան էլ խիստ շեն իրենց վարվելակերպի մեջ: Իմ ընտանիքը խղճի խայթ չի դրում: Քանի որ նպատակը ձեզ Ռեչելի հետ հաշտեցնելն է, կինս ու աղջիկներս, ճիզվիտների նման, դրան հասնելու միջոցներին նայում են հանգիստ խղճով:

— Անշափ պարտական եմ ձեզ: Սա ի՞նչ բանալի է:

— Իմ այգու դռան բանալին է: Այնտեղ եղեք ժամը երեւիին: Մտեք այգի, իսկ այնտեղից, ծաղկանոցի միջով՝ տուն: Անցեք փոքրիկ հյուրասենյակը և բացեք դիմացի դուռը, որը տանում է հրաժշտական սենյակ: Այնտեղ կգտնեք Ռեչելին, և կգտնեք մենակ:

— Ինչպե՞ս շնորհակալություն հայտնեմ ձեզ:

— Ես ձեզ կասեմ ինչպես. սրանից հետո կատարվելիքի համար ինձ մի մեղադրեք:

Այս ասելով՝ նա գնաց իմ մոտից:

Դեռ շատ պետք է սպասեի: Ժամանակը մի կերպ անցկացնելու համար սկսեցի նայել փոստից եկած նամակները: Գրանց մեջ գտնվեց Բևտտերեջի նամակը:

Հապշտապ բացեցի այդ նամակը: Ի զարմանս և ի հիասթափություն իմ, նամակն սկսվում էր ներողությամբ այն բանի համար, որ ոչ մի առանձին նորություն չի պարունակում: Հաջորդ նախադասության մեջ դարձյալ հայտնվեց հանգիստ շտվող էզրա Ջենինգսը: Նա կանդնեցրել էր կայարանից վերադարձող Բևտտերեջին և հարցրել, թե ով եմ ես: Իմ անունն իմանալով, նա իր սլառոտին՝ միտոր Կանդին, հաղորդել էր, որ ինձ տեսել է: Դոկտոր Կանդին, այս լսելով, ինքն է ևկել Բևտտերեջի մոտ իր ափսոսանքը հայտնելու, որ մենք շենք տեսնվելու նա ասել է, թե ինձ հետ տեսնվելու մի առանձին պատճառ ունի և խնդրել է, որ երբ նորից Ֆրիդին-

հուլի շրջաւայրում լինեմ, իրեն յիմաց տամ: Բեռտերեցի փի-  
լիսոփայութեան համար բնորոշ մի բանի նախադասութեան-  
ները շահազված, ահա իմ ստացած նամակի բովանդակու-  
թեանը: Բարի, նվիրված ժերուկը խոստովանում էր, որ գրել  
է «ազնի շուտ ինձ գրելու հաճույքն ունենալու համար»:

Նամակը գրեցի գրպանս և, Ռեչելի հետ զալիք տեսակ-  
ցութեանով տարված, մի բուպի անց՝ մոռացա այն:

Երբ Հեմփստեդի եկեղեցու ժամացույցը խփեց ժամը երե-  
քը՝ ես միստր Բրեֆի բանալին մտցրի այգու դռնակի կող-  
պեքի մեջ: Խոստովանում եմ, որ այդի մտնելով և դռնակը  
ներսի կողմից փակելով, ես որոշ վախ էի զգում, մտածե-  
լով, թե ինչ կարող է տեղի ունենալ: Աչքի պոշով զգուշորեն  
շուրջս նայեցի, վախենալով այգու շերտացող անկյունում  
որեւէ անսպասելի վկայի ներկայութեանից: Բայց ոչ մի բան  
չհաստատեց իմ հրկյուղը: Այգու բոլոր ծառուղիները դատարկ  
էին, և միակ վկաները թռչուններն ու մեղուններն էին:

Անցա այգու միջով, մտա ծաղկանոցը, շրջանցեցի փոք-  
րիկ հյուրասենյակը: Երբ ձեռքս դիմացի պատի դռան բռ-  
նակին դրի, նրա ետևից մի բանի տխուր ակորդներ լսեցի:  
Ռեչելը հաճախ էր այդպես ցրված խաղում ստեղծների հետ,  
երբ ես հյուրընկալված էի լինում նրա մոտ տանը: Հարկա-  
դրված եղա մի բանի վայրկյան սպասել՝ սիրտ առնելու հա-  
մար: Այդ պահին անցյալն ու ներկան հառնեցին իմ առջև և,  
գրանց հակադրութեանն ապշեցրեց ինձ:

Մի բանի վայրկյան անց՝ ես գինվեցի արիութեամբ ու  
բացեցի դուռը:

## Ք լ ու խ VII

Գոան մեջ ինձ տեսնելով՝ Ռեչելը վեր կացավ դաշնա-  
մուրի մոտից:

Ես դուռը ծածկեցի իմ ետևից: Մենք լուռ նայում էինք  
իրար: Մեզ բաժանում էր սենյակի երկարութեանը: Շար-  
ժումը, որ Ռեչելն արեց տեղից վեր կենալով, կարծես միակ  
շարժումն էր, որին այժմ նա ընդունակ էր: Այդ պահին նրա

հոգեկան բոլոր ուժերը կհնարունացած էին ինձ վրա ուղղված հայացքի մեջ:

Ես երկյուզով մտածեցի, որ շափից ավելի անսահնկալ եմ հայտնվել: Մի քանի քայլ արեցի դեպի նա: Մեղմ ասացի.

— Ռեչե՛լ:

Իմ ձայնի հնչերանդը կյանքի կոշեց նրան, և շառագու-  
նեց նրա դեմքը: Նա անձայն շարժվեց ինձ ընդառաջ: Դան-  
դաղորեն, ասես զործելով իմ կամքից անկախ ուժի ազդեցու-  
թյամբ, նա ավելի ու ավելի էր մոտենում ինձ. տաք, թանձր  
ներկը ողողել էր նրա այտերը, աչքերի փայլը գնալով ուժե-  
ղանում էր: Ես մոռացա ինձ այստեղ բերած նստատակը. ևս  
մոռացա բարի անվանս վրա ընկած նոզկալի կասկածը. մո-  
ռացա ամեն տեսակի նկատառումներ, անցյալը, ներկան և  
ապագան, որոնք պարտավոր էի հիշել: Ես միայն տեսնում  
էի, որ իմ սիրած կինը ավելի ու ավելի էր մոտենում ինձ...  
Նա դողաց, կանգ առավ անվճռականության մեջ: Ես այլևս  
չկարողացա ինձ զսպել. թափով նրան առա գրկիս մեջ ու  
դեմքը ծածկեցի համբույրներով:

Եղավ մի պահ, երբ մտածեցի, թե նա պատասխանում է  
իմ համբույրներին, մի պահ, երբ ինձ թվաց, թե իբր նա  
նույնպես մոռացել է ամեն ինչ աշխարհում: Բայց դեռ չէի  
հասցրել այս բանը մտածել, երբ նրա առաջին իսկ դիտակց-  
ված արարքն ինձ ստիպեց զգալ, որ նա ամեն ինչ հիշում է:  
Ճիշտով, որը նման էր սարսափի ճիշի, և այնպիսի ուժով,  
որին կասկածում եմ, թե կարողանայի դիմազրել, եթե փոր-  
ձեի, նա ինձ էտ հրեց իրենից: Ես նրա աչքերում տեսա ա-  
նողոք վայրույթ, ևս նրա շուրթերին տեսա անողորմ արհա-  
մարհանք: Նա դայրալի հայացքով ինձ էր նայում որպես իրեն  
վիրավորած կողմնակի մարդու:

— Վախկո՛ւս,— ասաց նա:— Ստոր, արգահատելի, ան-  
հոգի վախկո՛ւտ:

Այսպիսին էին նրա առաջին բառերը: Նա գտավ այն  
ամենաանտանելի կշտամբանքը, որպիսին կինը միայն կա-  
րող է ուղղել տղամարդուն, և այն նեհեց ինձ:

— Ես հիշում եմ այն ժամանակները, Ռեչել,— պատաս-  
խանեցի ես,— երբ դուք կարող էիք ավելի արժանավոր կեր-

պով ինձ ասել, որ ես վիրավորել եմ ձեզ: Խնդրում եմ ներել ինձ:

Այն ցավը, որ ես զգում էի, գուցե հաղորդվեց նաև ձայնիս: Իմ առաջին իսկ բառերը լսելիս, նրա աչքերը, որ այժմ մի կողմի վրա էին նայում, նորից դժկամորեն ուղղվեցին ինձ վրա: Նա պատասխանեց ցածր ձայնով, մոայլ զսպվածությամբ, որն ինձ համար բացարձակապես նորություն էր:

— Գուցե ես արժանի եմ որոշ ներողամտության,— ասաց նա:— Այն բանից հետո, ինչ դուք արել եք, ինձ թվում է, սա ձեր կողմից ցածր արարք է՝ ինձ մոտ թափանցել այն ձևով, ինչ ձևով, որ թափանցել եք Ե. յուսր: Ինձ թվում է՝ ձեր նկատմամբ ունեցածս թուլության վրա հույս դնելը փոքրագույն է ձեր կողմից: Ինձ թվում է, ստորություն է, հանկարծակիությունից օգտվելով՝ ինձնից համբույր կորզելը: Բայց սա սոսկ կնոջ տեսակետ է: Ես պետք է հիշեի, որ դուք չեք կարող այն կիսել: Ես ավելի լավ վարված կլինեի, եթե ինձ տիրապետեի և ոչինչ լասեի ձեզ:

Այս ներողությունը վիրավորանքից ավելի ծանր էր: Աշխարհի ամենաշնչին մարդն իսկ նվաստացած կզգար իրեն:

— Եթե իմ պատիվը ձեր ձեռքում չլիներ,— ասացի ես,— ես այս պահին ևևթ կհեռանայի ձեր մոտից և այլևս երբեք չէի անսովի ձեզ հետ: Դուք հիշատակեցիք, թե ես ինչ եմ արել: Բայց թի ի՞նչ եմ արել ես:

— Ի՞նչ եք արել: Դուք այդ հարցը ի՞նձ եք տալիս:

— Այո:

— Ես ձեր նողկալիությունը գաղտնի եմ պահել,— պատասխանեց նա,— և կրել եմ իմ լուծյան հետևանքները: Մի՞թե ես իրավունք չունեմ, որպեսզի դուք ինձ ազատեք այն վիրավորական հարցից, թե ինչ եք արել դուք: Մի՞թե երախտագիտության ամեն մի զգացում մեռել է ձեր մեջ: Դուք մի ժամանակ ջենտլմեն էիք: Դուք մի ժամանակ թանկ եք եղել մորս համար և է՛լ ավելի թանկ՝ ինձ համար...

Չայնը զավաճանեց նրան: Նա իջավ աթոռին, թիկունքով շրջվեց զևրի ինձ ու դեմքը ծածկեց ձեռքերով:

Ես մի փոքր սպասեցի մինչև նորից խոսելու ուժ գտա իմ մեջ: Ինքս էլ չգիտեմ, թե լուծյան այդ միջոցին ի՞նչը ավելի խիստ վիրավորեց ինձ՝ այն անարգա՞նքը, որ ինձ հասցրել

էր նրա արհամարհանքը, թե՛ նրա հպարտ վճռականութիւնը, որն ինձ թույլ չէր տալիս կիսել նրա վիշտը:

— Եթե դուք առաջինը չխոսեք, — սկսեցի ես, — ապա այդ կանեմ ես: Ես այստեղ եկել եմ մի շատ կարևոր հարցի շուրջը ձեզ հետ խոսելու մտադրութեամբ: Կցուցաբերե՞ք, արդո՞րք, շատ սովորական արգարամտութիւն իմ հանդեպ և կհամաձայնվե՞ք լսել ինձ:

Նա շարժվեց ու շատասխանեց: Ես այլևս չհարցրի, ևս ոչ մի քայլ չմտտեցա աթոռին: Ես էլ նրա պես համառ հպարտութիւն ցուցաբերելով, նրան պատմեցի Երեւոն ավազներում կատարածս հայտնագործութեան մասին և այն ամենի մասին, ինչը ինձ բերել էր իր մոտ: Պատմութիւնս, անշուշտ, բավականաչափ ժամանակ զբաղեցրեց: Սկզբից մինչև վերջ Ռեչելը շարժվեց իմ կողմը և ոչ մի բառ չասաց:

Ես զուսպ էի: Իմ ամբողջ ապագան, ամենայն հավանականութեամբ, կախված էր նրանից, որ ես այդ պահին չկորցնէի իմ ինքնատիրապետումը: Հասել էր միտար Բրեքֆի տեսութիւնն ստուգելու ժամանակը: Այն փորձելու խիստ ցանկութեամբ համակված, ես պտտվեցի աթոռի շուրջը և կանգնեցի այնպես, որպեսզի հայտնվեմ Ռեչելի դիմ-դիմաց:

— Ես պետք է մի հարց տամ ձեզ, — ասացի, — և դա ինձ ստիպում է վերադառնալ ծանր նյութի Ռոզաննա Սպիրմանը ձեզ ցո՛ւյց է տվել իմ գիշերանոցը: Այո՞, թե ոչ:

Նա տեղից վեր թռավ և ընդհուպ մոտեցավ ինձ: Նրա աչքերը մեխվեցին դեմքիս, ասես կամենալով այնտեղ կարգալ այն, ինչ դեռ երբեք չէին կարգացել նրանում:

— Դուք խելագարվե՞լ եք, — բացականչեց նա:

Ես դեռ զսպում էի ինձ: Հանգիստ ասացի.

— Ռեչել, դուք իմ հարցին չե՞ք պատասխանի:

Ինձ վրա ուշադրութիւն չդարձնելով՝ նա շարունակեց.

— Արդո՞ք ինձ անհայտ որեէ նպատակ չկա այստեղ: Ապագայի համար ինչ-որ փոքրոզի վախ, որը դիպչում է նաև ինձ: Ասում են, ձեր հոր մահից հետո դուք հարստացել եք: Գուցե դուք նրա համար եք եկել, որպեսզի փոխհատուցե՞ք իմ ալմաստի արժեքը: Եվ ձեր մեջ դեռ այնքան խիղճ է մնացել, որ ամաչո՞ւմ եք: Սա չէ՞, արդո՞ք, ձեր կարծեցյալ անմեղութեան և Ռոզաննա Սպիրմանին վերաբերող ձեր պատ-

մության բացատրութիւնը: Իւրդո՞ք այս ամբողջ ստի խոր-  
քում խայտառակութիւն չի թաքնված:

Ես ընդհատեցի նրան: Ես այլևս չէի կարող ինձ զսպել:

— Դուք աններելի վիրավորանք եք հասցրել ինձ,— գո-  
ռացի ես:— Դուք կասկածում եք, որ ես եմ գողացել ձեր ալ-  
մաստը: Ես իրավունք ունեմ և ուզում եմ իմանալ, թե ի՞նչ  
պատճառով:

— Կասկածո՞ւմ եմ,— բացականչեց նա, ինձ նման վեր-  
դովվելով:— Սրիկա՛: Ես իմ աչքով տեսա, թե ինչպէս դուք  
վերցրիք ալմաստը:

Այս բառերի մեջ ամփոփված ահաւոր բացատրութիւնը,  
ոչնչացումը այն ամենի, ինչի վրա հույս էր դրել միտար Բրե-  
ֆըր, անդգայության մեջ զցեցին ինձ: Իմ ողջ անմեղությամբ  
հանդերձ՝ լուռ կանգնել էի նրա առջև նրա համար, ամեն  
մեկի համար ես պետք է թվայի այնպիսի մի մարդ, որը  
ցնցված է իր հանցագործութեան բացահայտումից:

Նրան շփոթեցրեց իմ նվաստացման և իր հաղթութեան տե-  
սարանը: Իմ հանկարծակի լուռութիւնն ասես վախեցրեց նրան:

— Ես ձեզ խնայել եմ այն ժամանակ,— ասաց նա,— ես  
ձեզ կխնայեի նաև հիմա, եթե դուք ինձ շտապեիք խոսել:

Նա հեռացավ ինձնից, պատրաստվելով դուրս գալ սեն-  
յակից, բայց դռան մոտ վարանեց:

— Ինչո՞ւ այստեղ եկաք ձեզ նվաստացնելու,— հարցրեց  
նա:— Ինչո՞ւ այստեղ եկաք ինձ նվաստացնելու:

Նա ես մի քանի քայլ արեց ու նորից կանգ առավ:

— Ի սեր աստծու, մի բան ասացեք,— հուզված բացական-  
չեց նա:— Եթե ձեր մեջ գոնե մի քիչ խղճահարութիւն է  
մնացել, մի թույլ տվեք, որ ես այսպիսով նվաստացնեմ ինձ:  
Մի բան ասացեք, և ինձ ստիպեք սենյակից դուրս գալ:

Ես մոտեցա նրան, ինքս էլ չիմանալով, թե ինչ եմ աս-  
նում: Գուցե աղօտ կերպով մտածում էի ետ պահել նրան,  
քանի դեռ նա դարձյալ ինչ-որ բաներ չէր ասել: Այն պահից,  
երբ իմացա, որ վկայութիւնը, որի հիման վրա Ռեչելն ինձ  
մեղադրել էր, հենց իր աչքերի վկայութիւնն էր, ոչ մի բան,  
նույնիսկ իմ անմեղութեան նկատմամբ համոզմունքը, պարզ  
չէր իմ մտածումներում: Ես բռնեցի նրա ձեռքը. աշխատեցի



նրա հետ խոսել վստահ ու խելամտորեն, բայց միայն կարողացա արտաբերել.

— Ռեչե՛լ, դուք ինչ-որ ժամանակ սիրել եք ինձ:

Նա դողաց ու շրջվեց ինձնից: Նրա դողացող անզոր ձեռքը մնաց իմ ձեռքի մեջ:

— Ձեռքս թողեք,— թույլ ձայնով ասաց նա:

Իմ՝ նրա ձեռքին հպվելը նույնպիսի ազդեցություն գործեց նրա վրա, ինչպիսի ազդեցություն որ գործել էր իմ ձայնը այն ժամանակ, երբ ես սենյակ մտա: Այն բանից հետո, երբ նա ինձ վախկոտ անվանեց, նրա խոստովանությունից հետո, որը գողի դրոշմ դրեց ինձ վրա, ես դեռ նրա նկատմամբ իշխանություն ունեի, քանի դեռ նրա ձեռքն իմ ձեռքի մեջ էր:

Ես նրան կամացուկ տարա սենյակի մեջտեղը: Նստեցրի կողքիս:

— Ռեչել,— ասացի,— ես չեմ կարող բացատրել այն բանում եղած հակասությունները, որ հիմա ձեզ կասեմ: Կարող եմ մեկայն ասել ճշմարտությունը, ինչպես այն դուք ասացիք: Դուք տեսել եք, թե ինչպես ես վերցրել եմ ավամասը: Աստծու առաջ, որը լսում է մեզ, երդվում եմ, որ միայն հիմա առաջին անգամ իմացա, որ ես եմ վերցրել այն: Դուք դեռ կասկածո՞ւմ եք ինձ վրա:

Նա կամ ուշադրություն չդարձրեց իմ ասածներին, կամ էլ չսեց դրանք:

— Ձեռքս թողեք,— թույլ ձայնով կրկնեց նա:

Դա նրա միակ պատասխանն էր: Նրա գլուխն ընկավ իմ ուսին, իսկ ձեռքն անզիտակցաբար իմ ձեռքը սեղմեց այն պահին, երբ նա ինձ խնդրեց, որ բաց թողնեմ այն:

Ես ինձ զսպելով՝ հարցը չկրկնեցի: Բայց դրանով էլ սպառվեց իմ համբերությունը: Ես հասկացա, որ նորից ազնիվ մարդկանց շքերթի մեջ նայել կկարողանամ միայն այն դեպքում, եթե Ռեչելին ստիպեմ ամեն ինչ հանդամանորեն պատմել: Միակ հույսը, որ մնում էր ինձ, այն էր, որ գուցե Ռեչելն ուշադրություն չի դարձրել շղթայի որևէ օղակի վրա, որևէ մանրուքի վրա, որը, գուցեև, ուշադիր ուսումնասիրելու դեպքում, կարող էր իմ անմեղությունն ապացուցելու միջոց լինել: Խոստովանում եմ, ես նրա ձեռքը բաց չէի թող-

նում: Խոստովանում եմ, ես նրա հետ խոսեցի անցած ժամանակների ջերմությամբ ու վստահությամբ:

— Ես ուզում եմ մի բան խնդրել ձեզնից, — ասացի: — Ուզում եմ, որպեսզի դուք ինձ պատմեք բոլորը, ինչ կատարվել է սկսած այն պահից, երբ մենք բարի գիշեր մաղթեցինք իրար, մինչև այն պահը, երբ դուք տեսաք, որ ես վերցրի արմատը:

Նա գլուխը բարձրացրեց ուսիցս և ջանաց իր ձեռքն ազատել:

— Օ՛, ինչո՞ւ անդրադառնալ դրան, — ասաց նա: — Ինչո՞ւ անդրադառնալ:

— Ես ձեզ կասեմ, թե ինչու, Ռեչել: Դուք և ես ճշմարտության դիմակ հագած ինչ-որ մի ահավոր խաբուսթյան զոհ ենք: Եթե մենք միասին նայենք ձեր ծննդյան օրվա գիշերը կատարվածին, ապա կարող է պատահել դեռ հասկանանք իրար:

Նրա գլուխը նորից ընկավ իմ ուսին: Արցունքներ հայտնվեցին աչքերում և դանդաղորեն գլորվեցին երեսներն ի վար:

— Օ՛, — ասաց նա: — Մի՞թե ես էլ այդ հույսը չեմ ունեցել: Մի՞թե ես չեմ փորձել դրան նայել այնպես, ինչպես հիմա դուք եք նայում:

— Դուք մենակ եք փորձել, — պատասխանեցի ես, — դուք դեռ չեք փորձել իմ օգնությամբ:

Այս բառերը կարժես նրա մեջ արթնացրին այն հույսը, որ ինքս ունեի, երբ արտաբերեցի դրանք: Նա իմ հարցերին պատասխանում էր ոչ միայն հնազանդությամբ, այլև ամբողջ հիշողությունը լարելով: Նա սիրով իմ առջև բացում էր իր հոգին:

— Սկսեմք, — ասացի, — նրանից, ինչ կատարվեց այն բանից հետո, երբ մենք բարի գիշեր մաղթեցինք իրար: Դուք անկողին մտա՞ք, թե ոչ:

— Ես անկողին մտա:

— Նկատեցի՞ք ժամը քանիսն էր: Ո՞ւշ էր:

— Այնքան էլ չէ: Մոտավորապես տասներկուսը կլիներ:

— Քնեցի՞ք:

— Ոչ: Այդ գիշեր չէի կարողանում քնել:

— Անհանգի՞ստ էիք:

— Ձեր մասին էի մտածում:

Այդ պատասխանը գրեթե խլից իմ ամբողջ արիությունը: Չայնեյրանգի մեջ, նույնիսկ ավելի, քան բառերի մեջ, եղած ինչ-որ բան ուղղակի թափանցեց հոգուս խորքը: Միայն որոշ լուսթյունից հետո կարողացա շարունակել:

— Ձեր սենյակում լույս կա՞ր,— հարցրի ես:

— Ոչ, մինչև ես վեր կացա ու վառեցի մոմը:

— Ձեր՝ անկողին մտնելուց ինչքա՞ն ժամանակ հետո:

— Կարծեմ, մեկ ժամ հետո:

— Ննջասենյակից դուրս եկա՞ք:

— Պատրաստվում էի դուրս գալ: Վրաս զցեցի խալաթս ու գնում էի հյուրասենյակ գիրք վերցնելու:

— Բացեցի՞ք ձեր ննջասենյակի դուռը:

— Բացեցի:

— Բայց հյուրասենյակ դեռ չէի՞ք մտել:

— Ոչ, կանգ առա...

— Ի՞նչը ձեզ կանգնեցրեց:

— Լույս տեսա դռան տակի արանքում և քայլերի ձայ-  
ներ լսեցի:

— Վախեցա՞ք:

— Ոչ, ծս գիտեի, որ խեղճ մայրս անքնությամբ է տա-  
ռապում, և հիշեցի, որ նա ինձ համոզում էր արմաստը հանձ-  
նել իր պահպանությանը: Այն ժամանակ ինձ թվում էր, թե  
բոլորովին անհիմն է նրա անհանգստությունը, և ես մտա-  
ծեցի, որ եկել է տեսնելու՝ անկողնում եմ, թե ոչ և ար-  
մաստից խոսելու, եթե տեսնի դեռ քնած չեմ:

— Իսկ ի՞նչ արեցիք դուք:

— Մոմը հանգցրի, որպեսզի նա կարծի, թե ես քնած եմ: Ես համառ էի. ուղում էի արմաստը թողնել այնտեղ, որտեղ  
գրել էի:

— Մոմը հանգցնելով՝ նորից անկողի՞ն մտաք:

— Չհասցրի: Այն պահին, երբ ես մոմը հանգցրի, հյու-  
րասենյակի դուռը բացվեց և տեսա...

— Տեսա՞ք...

— Չեղ:

— Սովորականի պես հաղնվա՞ծ:

— Ոչ: Գիշերանոցով, մոմը բռնած:

— Մենա՞կ էի:

— Մենակ:

— Դուք կարո՞ղ էիք իմ դեմքը տեսնել:

— Այո:

— Պարզորո՞շ:

— Միանդամայն: Ձեր ձեռքի մոմը լուսավորում էր այն:

— Աչքերս բա՞ց էին:

— Այո:

— Որևէ տարօրինակ բան նկատեցի՞ք դրանցում, սեւ-  
առուն կամ անիմաստ արտահայտութիւն նման որևէ բան:

— Ամենեւին ոչ: Ձեր աչքերը փայլուն էին, ավելի փայ-  
լուն, քան սովորաբար: Դուք այնպես էիք սենյակի մեջ ձեր  
շուրջը նայում, որ կարծես գիտեիր, որ գտնվում եք այն-  
տեղ, որտեղ չպետք է լինեիր, և կարծես վախենում էիք: Որ  
ձեզ կտեսնեն:

— Ուշադրութիւն դարձրի՞ք, թե ինչ տեսք ունեի, երբ  
սենյակ էի մտնում:

— Դուք քայլում էիք, ինչպես միշտ եք քայլում: Հասար  
սենյակի մեջտեղը, հետո կանգ առաք և ձեր շուրջը նայե-  
ցիք:

— Ի՞նչ արեցիք, երբ տեսաք ինձ:

— Ես ոչինչ չէի կարող անել: Կանգնել էի քարացածի  
պես: Ձէի կարող խոսել, չէի կարող ճշալ, չէի կարող շարժ-  
վել, որ դուր ծածկեմ:

— Կարո՞ղ էի ձեզ տեսնել ձեր կանգնած տեղում:

— Իհարկե, կարող էիք ինձ տեսնել: Բայց դուք ոչ մի ան-  
գամ չնայեցիք ինձ վրա: Անիմաստ է այդպիսի հարց տալը:  
Սա հավատացած եմ, որ դուք ինձ չտեսաք:

— Ինչո՞ւ եք հավատացած:

— Հակառակ դեպքում, մի՞թե արմասսը կվերցնեիր: Կվար-  
վեիր՞ք այնպես, ինչպես հետո վարվեցիք: Հիմա դուք այստեղ  
կլինեիր՞, եթե իմանայիր, որ այն ժամանակ ես քնած չեմ  
եղել և ձեզ եմ նայել: Ինձ մի ստիպեք դրանից խոսել: Իս  
ուզում եմ հանդիստ պատասխանել ձեզ: Օգնեք ինձ պահ-  
պանելու հանգստութիւնս: Ուրիշ բանից խոսենք:



— Դուք հասար սենյակի մեջտեղը, հետո կանգ առաք և ձեր շարժը  
Լայկեբր:

Նա իրավացի էր, իրավացի բոլոր տեսակետներից: Ես անցա ուրիշ հարկի:

— Ի՞նչ արեցի սենյակի մեջտեղը հասնելուց և այնտեղ կանգնելուց հետո:

— Շրջվեցիք և ուղիղ գնացիք լուսամուտի մոտի անկյունը, որտեղ իմ հնդկական պահարանիկն է դրված:

— Պահարանիկի մոտ կանգնած ժամանակ պետք է որ կանգնած լինեի մեջքով դեպի ձեզ: Դուք ինչպե՞ս տեսաք, թե ես ինչ էի անում:

— Երբ դուք տեղից շարժվեցիք՝ շարժվեցի նաև ես:

— Որպեսզի տեսնեք, թե ի՞նչ եմ անում:

— Իմ հյուրասենյակում երեք հայելի կա: Երբ դուք կանգնած էիք այնտեղ, ես ամեն ինչ տեսա հայելիներից մեկում:

— Իսկ ի՞նչ տեսաք:

— Դուք մոմը դրեցիք պահարանիկի վրա: Իրար ետևից դուրս քաշեցիք ու տեղը դրեցիք դարակները, մինչև որ հասաք այն մեկին, որի մեջ ես այժմաստն էի դրել: Դուք մի պահ նայեցիք դուրս քաշած դարակին, իսկ հետո ձեր ձեռքը մըտցրիք մեջը և հանեցիք այժմաստը:

— Ինչպե՞ս իմացաք, որ այժմաստը հանեցի:

— Տեսա, թե ինչպես ձեր ձեռքը մտցրիք դարակի մեջ: Երբ ձեր ձեռքը հանեցիք դարակի միջից՝ ձեր ցուցամատի և բութ մատի արանքում տեսա շողշողացող քարը:

— Ձեռքս նորից շմեկնվե՞ց դեպի դարակը՝ այն, ասե՞նք, փակելու համար:

— Ոչ: Այժմաստը բռնել էիք աջ ձեռքում, իսկ պահարանիկի վրայից մոմը վերցրիք ձախ ձեռքով:

— Դրանից հետո նորի՞ց շուրջս նայեցի:

— Ոչ:

— Անմիջապես դո՞ւրս եկա սենյակից:

— Ոչ: Կանգնեցիք բոլորովին անշարժ և, ինչպես ինձ թվաց, բավականաչափ երկար: Ես ձեր դեմքը հայելու մեջ տեսնում էի կողքից: Դուք նման էիք մտասուզված և իր մտածումներից դժգոհ մարդու:

— Ի՞նչ եղավ հետո:

— Դուք հանկարծ սթափվեցիք մտածումներից և անմիջապես դուրս եկաք սենյակից:

— Գուռը ետեհցս փակեցի՞:

— Ոչ: Արագ դուրս եկաք միջանցք և դուռը բաց թողեցիք:

— Իսկ հետո՞:

— Հետո ձեր մոմի լույսն անհետացավ, և ձեր քայլերի ձայնը լուց, իսկ ես մենակ մնացի սենյակում:

— Եվ ուրիշ ոչինչ տեղի չունեցա՞վ մինչև այն ժամանակ, երբ ամբողջ տունն իմացավ, որ ալմաստն անհետացել է:

— Ոչինչ:

— Հավատացա՞ծ եք դրանում: Գուցե քնե՞լ եք մի փոքր ժամանակ:

— Բոլորովին չեմ քնել, բոլորովին անկողին չեմ մտել: Ոչինչ տեղի չունեցավ, մինչև որ առավոտյան, իր սովորական ժամին ներս մտավ Պենելոպեն:

Ես բաց թողեցի նրա ձեռքը, վեր կացա ու սկսեցի քայլել սենյակում: Պատասխան էր տրված իմ ամեն մի հարցին: Յուրաքանչյուր մանրուքը, որ ուզեցի իմանալ, հաղորդվեց ինձ: Ես քիչ մնաց վերադառնալի լուսնոտության ու հարբածության մտքին. և դարձյալ թե մեկի, թե մյուսի անհնարինությունը կանգնեց իմ առջև. այս անգամ՝ ինձ իր սեփական աչքերով տեսած վկայի ցուցմունքներում: Ի՞նչ էր պետք ասել հիմա: Ի՞նչ էր պետք անել հիմա: Գողության այդ ահավոր փաստը՝ միակ տեսանելի ու շոշափելի փաստն էր դրված իմ առջև անթափանց լսավարում, որի մեջ սուղվում էր ամեն ինչ: Լույսի ոչ մի շող չկար այն ժամանակ, երբ Երևրուն ավազներում ես իմացա Ռոզաննու Սալիրմանի դադտնիքը: Եվ լույսի մի շող չկա հիմա, երբ ես դիմեցի անձամբ Լեռնելին և այն գիշերվա նողկալի պատմությունը լսեցի անձամբ նրանից:

Այս անգամ նա ինքը առաջինն ընդհատեց լուսությունը:

— Դե, — ասաց նա, — դուք հարցրիք, իսկ ես պատասխանեցի: Գուք ինձ հույս տվիք, որ ինչ-որ բան կստացվի այս ամենից, որովհետև ինքնեզրկ ինչ-որ բանի հույս ունեիք: Ի՞նչ կասեք հիմա:

Ձայներանգը, որով նա խոսում էր, ինձ ցույց սովեց, որ նրա վրա ունեցած իմ ազդեցությունն անցել է:

— Մենք պետք է միասին վերանայեինք այն, ինչ կատարվել է իմ ծննդյան օրվա գիշերը,— շարունակեց նա,— և այդ ժամանակ մենք պետք է հասկանայինք իրար: Այդպիսի բան եղավ:

Նա անողորմաբար սպասում էր իմ սլատասխանին: Նրան սլատասխանելով, ևս կործանարար սխալ գործեցի. ևս թույլ տվի, որ իմ դրուժյան հուսահատ անզորությունը վեր կանգնի իմ ինքնատիրապետումից: Թեթևամտորեն ու անխոհեմորեն սկսեցի նրան կշտամբել այն լուռության համար, որը մինչև հիմա անպիտուկության մեջ էր պահել ինձ:

— Եթե դուք արտահայտվեիք, երբ որ հարկ էր արտահայտվել,— սկսեցի ես,— եթե դուք շատ սովորական արդարամտություն ցուցաբերեիք իմ հանդեպ ու բացատրվեիք...

Կատաղության ճիշով ընդհատեց նա ինձ: Ասածներս անզուսպ մոլեգնության մատնեցին նրան:

— Բացատրվել,— կրկնեց նա:— Օ՛, աշխարհում էլ ուրիշ այսպիսի մարդ կա՞: Ես խնայեցի նրան, երբ սիրտս կտորկտոր էր լինում, ևս նրան պաշտպանեցի, երբ բանը իմ անվանն էր վերաբերում, իսկ հիմա նա ինձ կշտամբում է և ասում, որ ես պետք է բացատրվեի՞: Այն բանից հետո, որ ևս հավատում էի նրան, այն բանից հետո, որ ևս սիրում էի նրան, այն բանից հետո, որ ևս մտածում էի նրա մասին ցերեկը, գիշերը տեսնում էի երազում, նա հարցնում է՝ ինչո՞ւ ևս իրեն անազնվության մեջ շեղողդեցի առաջին անգամ, երբ մենք հանգիպեցինք: «Իմ սրտի սիրեցյալ, դու դո՞ւ ես: Ի՞մ հերոս, որին ես սիրում եմ ու հարգում, դու գիշերվա մթության քողի տակ սողոսկեցիր իմ սենյակը և զողացար իմ ալմաստը»— ահա թե ես ինչ պետք է ասեի: Օ՛, սրիկա, օ՛ ստոր, ստոր, ստո՛ր սրիկա: Ես ավելի շուտ հիտուն արմատից կզրկվեի, քան կուզեի տեսնել, որ ձեր դեմքն ինձ ստում է, ինչպես որ հիմա է ստում:

Ես վերցրի գլխարկս: Նրա հանդեպ ունեցած կարեկցանքից, այո, անկեղծ եմ ասում, նրա հանդեպ ունեցած կարեկցանքից շրջվեցի, առանց մի բառ իսկ ասելու, և բացեցի դուռը, սրով սենյակ էի մտել:

Նա նկատ իմ ետևից, ինձ ետ հրեց դռնից, շրխկացրեց այն և մատնացույց արեց այն տթոռը, որի վրայից վեր էի կացել:





— Ոչ,— ասաց նա:— Ո՛չ հիմա: Պարզվում է՝ ես դեռ պարտավոր եմ իմ վարքագիծն արդարացնել ձեր առջև: Ուրեմն մնացեք ու լսեք ինձ, իսկ եթե դուք, հակառակ իմ կամքի, գնաք այստեղից, դա ամենամեծ ստորությունը կլինի:

Ինձ համար ծանր էր տեսնել նրան, ինձ համար ծանր էր լսել նրա բառերը: Ես նշանով պատասխանեցի (ավելին անել անկարող էի), որ հնազանդվում եմ իր կամքին:

Երբ ես վերադարձա և անձայն նստեցի ախոռին, զայրույթի վառ կարմիրն սկսեց անհետանալ նրա դեմքից: Նա մի փոքր սպասեց, ուժերը հավաքեց: Երբ սկսեց խոսել՝ զգացմունքի ոչ մի նշույլ նկատելի չէր նրա մեջ: Նա խոսում էր առանց ինձ նայելու: Զեռքերն ամուր սեղմել էր ծնկներին, իսկ աչքերը՝ հառել դետնին:

— Ես պետք է շատ սովորական արդարամտությունն ցուցաբերեի ձեր հանդեպ ու բացատրվեի,— կրկնեց նա իմ ասածը:— Դուք կտեսնեք՝ ես աշխատե՞լ եմ արդարամտություն ցուցաբերել ձեր հանդեպ, թե ոչ: Ես ձեզ հիմա ասացի, որ բոլորովին չեմ քնել և բոլորովին անկողին չեմ մտել այն բանից հետո, երբ դուք դուրս եկաք իմ հյուրասենյակից: Անօգուտ է ձեզ ձանձրացնել, պատմելով, թե ես ինչ էի մտածում. դուք ինձ չեք հասկանա: Միայն կասեմ, թե ինչ արեցի, երբ որոշ ժամանակ անց ուշքի եկա: Ես որոշեցի աղմուկ չբարձրացնել և չպատմել, թե ինչ էր կատարվել, մի բան, որ պետք է անեի: Չնայած այն բանին, որ ամեն ինչ իմ աչքերով էի տեսել, ես ձեզ այնքան էի սիրում, որ պատրաստ էի հավատալ ամեն ինչին, միայն թե ոչ նրան, որ դուք զոդ եք: Ես մտածեցի, մտածեցի և վերջացրի նրանով, որ գրեցի ձեզ:

— Ես ձեր այդ նամակը չեմ ստացել:

— Գիտեմ, որ դուք այն չեք ստացել: Մի քիչ սպասեցեք և կլսեք, թե ինչու: Իմ նամակը ոչ մի բան պարզորոշ չէր ասի ձեզ: Այն կյանքում երբեք չէր կործանի ձեզ, և՛թև սրև է մեկ ուրիշի ձեռքն ընկնել: Նրանում միայն ասվում էր (բայց այնպես, որ դուք չէիք կարող սխալվել), որ ես հիմք ունեմ մտածելու, որ դուք պարտքեր ունեք, և որ ինձ ու մորս հայտնի է՝ դուք այնքան էլ պահանջկոտ ու նրբանկատ չեք այն միջոցների մեջ, որոնցով փող եք ձեռք բերում, երբ դա ձեզ

հարկավոր է: Ընդ որում դուք պետք է հիշեիք Ֆրանսիացի փաստաբանի այցելութունը և կկոահեիք, թե ես ինչ եմ ակնարկում: Եթե դրանից հետո էլ դուք շարունակեիք հետաքրքրություններ կարողալ, ապա կհասնեիք մի առաջարկի, որ ես ուզում էի ձեզ անել. մի գաղտնի առաջարկի, այն հաշվով, որպիսզի այդ մասին բարձրաձայն ոչ մի խոսք չսովեր մեր միջև. ձեզ պարտքով տալ այնպիսի մի մեծ գումար, որպիսին ես կարող եմ ձեռք բերել: Եվ ես դա կճարեի,— բացականչեց Ռեչելը: Դարձյալ շառագույնը բռնկեց նրա այտերին, և նրա աչքերը նայեցին ինձ:— Ես ինքս գրավ կղնեի ալմաստը, եթե չկարողանայի ուրիշ ճանապարհով փող ձեռք բերել: Ահա թե ինչ էի գրել ձեզ: Սպասեցե՛ք: Ես ավելին արեցի: Ես Պենելոպեի հետ պայմանավորվեցի, որ նա նամակը ձեզ տա անձամբ: Ես ուզում էի փակվել իմ ննջասենյակում և իմ հյուրասենյակը բաց 'ու դատարկ թողնել ամբողջ առավոտը: Եվ ես հույս ունեի, հույս ունեի ամբողջ հոգով ու սրտով, որ դուք կօգտվեք այս առիթից և աննկատելիորեն ալմաստը նորից կղնեք պահարանիկի մեջ:

Ես փորձեցի խոսել: Նա անհամբեր շարժումով կանգնեցրեց ինձ: Նրա տրամագրությունն անընդհատ փոխվում էր, և նրա ղայրույթը նորից սկսեց բորբոքվել: Նա վեր կացավ աթոռից ու մոտեցավ ինձ:

— Ես պիտեմ, թե դուք ինչ կասեք,— շարունակեց նա:— Դուք ուզում եք նորից ինձ հիշեցնել, որ նամակը չեք ստացել: Կարող եմ ձեզ ասել թե ինչու. ես նամակը պատռեցի:

— Ի՞նչ պատճառով:

— Շատ հիմնավոր: Ես գերադասեցի ավելի շուտ պատռել այն, քան տալ ձեզ պես մարդու: Ի՞նչ լուրեր հասան ինձ առավոտյան: Այս ծրագիրը կազմելուց հետո ի՞նչ լսեցի: Էսեցի, որ տանը գտնվողներից բոլորից առաջ դուք, դուք եք ուստիկան հրավիրել: Դուք բոլորից գործունեն էիք, դուք էիք գլխավոր գործող անձը, դուք բոլորից ավելի ջանադարար էիք գործում ալմաստը գտնելու համար: Ձեր համարձակությունն այն աստիճանի հասցրիք, որ ուզում էիք ալմաստի կորչելուց խոսել ինձ հետ, ալմաստ, որը ինքներդ էիք գողացել, որը այդ ամբողջ ժամանակամիջոցում ձեր ձեռքին էր բռնվում: Ձեր ահավոր կեղծիքի ու խորամանկության այս

ապացուցից հետո ես նամակը պատռեցի: Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ ինձ խելագարեցնում էին ձեր հրավիրած ոստիկանի հետաքննություններն ու հարցուփորձերը, նույնիսկ այն ժամանակ ինչ-որ մի կուրուֆյուն ինձ թույլ չտվեց լրիվ հրաժարվել ձեզնից: Ինքս ինձ ասում էի. «Նա իր նողկալի խաղն է խաղում տան բոլոր մարդկանց առջև: Փորձենք, կկարողանա՞ այդ խաղը խաղալ նաև իմ առջև»: Ինչ-որ մեկն ինձ ասաց, որ դուք սանդղավանդում եք: Գնացի այնտեղ: Ինձ ստիպեցի նայել ձեզ վրա: Ինձ ստիպեցի խոսել ձեզ հետ: Մոռացն՞լ եք, թե ինչ ասացի ձեզ:

Ես կարող էի պատասխանել, որ հիշում եմ իր ամեն մի բառը: Բայց այդ պահին ի՞նչ օգուտ կտար իմ պատասխանը: Ինչպե՞ս կարող էի նրան ասել, որ այն ժամանակ իր ասածը զարմացրեց ու վշտացրեց ինձ, ստիպեց մտածել, թե ինքը գտնվում է շատ վտանգավոր նյարդային գրգռման վիճակում, նույնիսկ իմ հոգում կասկած առաջացրեց, թե արդյո՞ք արմաստի անհետանալը նրա համար նույնպիսի զաղտներիք է, ինչպես և մեր բոլորիս համար, բայց թե ճշմարտության նշույլ անգամ ցույց չտվեց: Անմեղությանս շնչին-իսկ ապացույց չունենալով, ինչպե՞ս կարող էի նրան համոզել, որ ես բացարձակապես ոչինչ չգիտեի, թե ինչ էր մտածում նա սանդղավանդում ինձ հետ խոսելու պահին:

— Գուցե ձեր օգտին է մոռանալ իմ ասածները, բայց իմ օգտին է հիշել զրանք,— շարունակեց նա:— Ես դիտեմ, թե ինչ ասացի, որովհետև ամեն ինչ նախապես մտածել էի: Ես ճշմարտությունը խոստովանելու իրարահաջորդ մի քանի առիթ տվի ձեզ: Ես խոսում էի հնարավորին չափ պարզ, միայն ուղղակի շասացի, թե ինձ հայտնի է, որ գողությունը դուք եք կատարել: Իսկ դուք ինձ նայեցիք շինծու զարմանքով և անմեղության կեղծ արտահայտությամբ, ճիշտ և ճիշտ ինչպես հիմա եք նայում ինձ: Այն առավոտ ես հեռացա ձեզնից, վերջապես իմանալով, ինչպիսին եք դուք՝ աշխարհում երբևէ կղած ամենաստոր սրիկան:

— Եթե այն ժամանակ դուք լրիվ արտահայտվեիր, Ռեչել, ապա կարող էիք ինձնից հեռանալ այն գիտակցությամբ, որ դաժանորեն վիրավորել եք մի անմեղ մարդու:

— Եթե ես արտահայտվեի ուրիշների ներկայութեամբ, —  
զայրույթի նոր բռնկումով առաքկեց նա, — դուք կխայտա-  
ռակվեիք ընդմիշտ: Եթե միայն ձեզ ասեի՝ դուք կժխտեիք,  
ինչպես հիմա եք ժխտում: Մի՞թե կարծում եք կհավատայի  
ձեզ: Մի՞թե կեղծիքի առջև կանգ կառնեք մի մարդ, որն  
արել էր այն, ինչ, ինչպես ինքս տեսա, արել էիք դուք, և  
դրանից հետո իրեն պահում էր այնպես, ինչպես դուք էիք  
ձեզ պահում: Կրկնում եմ, ես վախենում էի լսել, թե ինչպես  
դուք ստում եք այն բանից հետո, երբ ինքս էի տեսել, թե  
ինչպես եք զողացել: Դուք այդ մասին խոսում եք այնպես,  
կարծես դա թյուրիմացությունն է, որը կարելի է մի քանի  
խոսքով շտկել: Բայց ահա թյուրիմացությունը պարզվեց:  
Արդյո՞ք գործը շտկվեց: Ոչ, այն մնաց նախկին վիճակում:  
Ես ձեզ չեմ հավատում հիմա: Ես չեմ հավատում, որ դուք  
գտել եք դիշերանոցը. չեմ հավատում, որ Ռոզաննա Սպիրմանը  
նամակ է գրել ձեզ. չեմ հավատում ձեր ոչ մի խոսքին: Դուք  
եք զողացել արմատը. ինքս եմ տեսել: Դուք ձևացնում էիք,  
թե իբր օգնում եք ոստիկանությանը. ինքս եմ տեսել: Դուք  
արմատը գրավ եք դրել լոնդոնյան վաշխառուի մոտ, ես հա-  
վատացած եմ դրանում: Անազնիվ լինելու կասկածը, իմ  
ստոր լուծյան պատճառով, դուք գցեցիք անմեղ մարդու  
վրա: Դուք ձեր ավարով փախաք մայրցամաք: Այս բոլոր կեղ-  
տոտություններից հետո դուք միայն մի բան կարողացաք  
անել: Դուք այստեղ եկաք այս վերջին սուտը ձեր շուրթերին,  
դուք այստեղ եկաք և ինձ ասացիք, թե ես արդարացի չեմ ձեր  
հանդեպ:

Եթե ես ես մեկ բոլոր մնայի, ապա կարող էին բերանիցս  
թռչել այնպիսի բառեր, որոնց մասին հետո զուր զղջումով  
կհիշեի: Ես անցա Ռեչելի մոտով ու նորից բացեցի դուռը:  
Եվ նորից, ինքնատիրապետումը կորցրած կնոջ անտրամա-  
բանությունամբ նա թափով բռնեց ձեռքս ու փակեց ճանապարհ-  
հրս:

— Թողեք ինձ, Ռեչել, — ասացի ես: — Դա երկուսիս հա-  
մար էլ լավ կլինի: Թողե՛ք ինձ:

Երբ նա դուռն մեջ բռնած պահում էր ինձ՝ նրա կուրծքը  
բարձրանում էր հիստերիկ զայրույթից, արագացած, ջղա-  
ձիգ շնչառությունը գրեթե դիպչում էր երեսիս:

— Ինչո՞ւ եկաք այստեղ;— հուսահատորեն կրկնում էր նա:— Նորից եմ հարցնում՝ ինչո՞ւ եկաք այստեղ: Վախենում եք, որ ես ձեզ կմատնե՞մ: Հիմա դուք հարուստ եք, հիմա տեղ եք գրավել բարձր հասարակության մեջ, հիմա կարող եք ամուսնանալ Անգլիայի ամենալավ աղջկա հետ. թե՞ վախենում եք ուրիշներին կասեմ այն, ինչ ձեզնից բացի աշխարհում ուրիշ ոչ ոքի չեմ ասել: Ես դա չեմ կարող ասել: Ես չեմ կարող ձեզ մատնել: Ես ավելի վատն եմ, եթե դա հնարավոր է, քան դուք...

Նա հեկեկաց: Նա հուսահատորեն կռվում էր հեկեկոցների դեմ. նա ավելի ու ավելի ամուր էր բռնում ինձ:

— Ես չեմ կարող ձեր հանդեպ ունեցած իմ զգացմունքը սրտիցս պոկել նույնիսկ հիմա,— ճշաց նա:— Դուք կարող եք ապավինել այն ամոթալի թուլությանը, որը միայն այս ձևով կարող է կռվել ձեզ հետ:

Հանկարծ նա բաց թողեց ինձ, ձեռքերը վեր բարձրացրեց ու սկսեց մոլեզնորեն ձգատել:

— Աշխարհում ամեն մի ուրիշ կին խայտառակություն կհամարեր դիպչել նրան,— բացականչեց նա:— Աստված իմ: Ես ինձ ավելի շատ եմ արհամարհում, քան արհամարհում եմ նրան:

Կամրիս հակառակ՝ արցունքներ հայտնվեցին իմ աչքերում, ես այլևս չէի կարող տանել այդ անավոր տեսարանը:

— Դուք կիմանաք, որ արգարացի շեք եղել իմ հանդեպ,— սասցի ես,— կամ այլևս երբեք չեք տեսնի ինձ:

Այս ասելով՝ ես հեռացա նրանից: Նա վեր թռավ աթոռից, որի վրա զրանից մեկ րոպե առաջ իջել էր ծանրորեն. վեր թռավ (աղնի՛վ էակ) և ինձ ճանապարհեց հարևան սենյակի ամբողջ երկարությամբ, գթությամբ լի խոսքեր ասելով հրաժեշտի պահին:

— Ֆրենկլին,— առաց նա:— Ես ձեզ ներում եմ: Օ՛, Ֆրենկլին, Ֆրենկլին: Մենք այլևս երբե՛ք չենք հանդիպի: Սոսայեք, որ դուք ներում եք ինձ:

Ես շրջվեցի, որպեսզի նա իմ դեմքին կարգար այն, ինչ ես ի վիճակի չէի ասելու. ես շրջվեցի, ձեռքով արեցի և, ի

վերջո, աշփերիցս հոսող արցունքների միջից ազոտ կերպով տեսա նրան՝ ինչպես տեսիլքի:

Մեկ բուպե հետո ամեն ինչ վերջացավ: Ես նորից դուրս եկա այգի: Այլևս չտեսա ու չսեցի նրան:

## Փ լ ու խ VIII

Ուշ երեկոյան անսպասելիորեն ինձ մոտ եկավ միսոր Բրեֆը:

Փաստաբանի մեջ փոփոխութիւն էր նկատվում: Նա զրբկվել էր իր սովորական ինքնավստահութիւնից ու եռանդից: Նա կյանքում առաջին անգամ լուռ սեղմեց ձեռքս:

— Վերագտնում եք Հեմփստե՞ր, — հարցրի ես ինչ-որ բան ասած լինելու համար:

— Հիմա Հեմփստեղից եմ գալիս, — պատասխանեց նա: — Գիտեմ, միսոր Յրենկլին, վերջապես ամեն ինչ իմացել եք: Բայց ուղղակի ասում եմ ձեզ, եթե կարողանայի կանխատեսել, թե ինչ գնով հարկ կլինի վճարել զրա դիմաց, կգերագասեի անգիտութիւն մեջ թողնել ձեզ:

— Տեսել եք Ռեչելի՞ն:

— Նրան տարա Պորտլենդի հրապարակը և եկա այստեղ. հնարավոր չէր մենակ թողնել: Ես ձեզ շեմ կարող մեղադրել (չէ որ դուք նրա հետ տեսնվել եք իմ տան մեջ և իմ թույլտվութեամբ) այն ահաւոր ցնցման համար, որ այդ շարաբաստիկ տեսակցութիւնը պատճառել է նրան: Ես միայն կարող եմ թույլ շտալ, որ այդ շարիքը կրկնվի: Նա երիտասարդ է, նա վճռական է և եռանդուն, նա կարող է տանել դա. ժամանակը և հանդիստ կյանքը կօգնեն նրան: Խոստացեք, որ դուք ոչինչ չեք ձեռնարկի նրա ասպարիւնմանը խանգարելու համար: Կարո՞ղ եմ ապավինել ձեզ, որ դուք առանց իմ համաձայնութիւնի ու հավանութիւնի չեք փորձի ես մեկ անգամ տեսնվիլ նրա հետ:

— Նրա ունեցած ապրումներից հետո և այն ապրումներից հետո, որ ես ունեցա, — պատասխանեցի, — դուք կարող եք ապավինել ինձ:

— Խոստանո՞ւմ եք:

— Այո:

Միտար Բրեֆը կարծես թեթևություն զգաց: Նա ցած դրեց գլխարկը և իր աթոռը մոտեցրեց իմ աթոռին:

— Ուրեմն՝ վերջ դրան,— ասաց նա:— Հիմա խոսենք ապագայի, ձեր ապագայի մասին: Իմ կարծիքով, գործի այս տարօրինակ ընթացքից բխող եզրակացությունը համառոտակի այսպիսին է. առաջինը, մենք հավատացած ենք, որ Ռեչելը ճշմարտությունն արտահայտել է այնքան պարզորոշ կերպով, որքան դա հնարավոր է արտահայտել բառերով: Երկրորդ, թեև մենք գիտենք, որ ինչ-որ մի ահավոր սխալ է թաքնրված այստեղ, այնուամենայնիվ, մենք չենք կարող Ռեչելին մեղադրել այն բանի համար, որ նա ձեզ մեղավոր է համարում, հենվելով իր սեփական զգացմունքների ցուցմունքի վրա, քանի որ այդ ցուցմունքը հաստատել են ուղղակի ձեր դեմ խոսող հանգամանքներ...

Այստեղ ես նրան ընդհատեցի:

— Ես Ռեչելին չեմ դատապարտում,— ասացի,— միայն ափսոսում եմ, որ այն ժամանակ սիրտ չի արել բացեիբաց խոսել ինձ հետ:

— Դուք ափսոսալու նույնքան հիմք ունեք, որքան և Ռեչելը, Ռեչելը և ոչ թե մեկ ուրիշը,— առարկեց միտար Բրեֆը:— Եվ այն ժամանակ էլ, կասկածում եմ, որ նրբանկատ աղջիկը, որ ամբողջ սրտով ուղում էր ձեր կինը դառնալ, իրեն թույլ կտար ձեր երեսին ձեզ մեղադրել զողության մեջ: Ինչ էլ որ լինե՛ր՝ դա անելն անհարիր էր Ռեչելի բնավորությանը: Բացի դրանից, այսօր քաղաք գնալու ճանապարհին նա ինքն ինձ ասաց, որ այն ժամանակ էլ չէր հավատա ձեզ, ինչպես որ հիմա չի հավատում: Ի՞նչ կարող եք պատասխանել սրան: Բացարձակապես ոչինչ: Բավական է, բավական է, միտար Ֆրենկլին: Իմ տեսությունը լրիվ սխալ դուրս եկավ, համաձայն եմ դրան, բայց թե տվյալ իրադրության մեջ, այնուամենայնիվ, վատ չի լինի իմ խորհուրդը լսել: Ուղղակի ասում եմ. մենք իզուր գյուխ կկոտրենք և ժամանակ կկորցնենք, եթե փորձենք ետ դառնալ և այդ ահավոր կծիկը քանդել ամենասկզբից: Մոռանանք բացարձակապես այն ամենը, որ անցյալ տարի կատար-

վել է լեզի Վերինդերի կալվածքում, և տեսնենք, թե ինչ կարող ենք բացահայտել ապագայում, նրա փոխարեն, ինչ որ չենք կարող բացահայտել անցյալում:

— Գուք, երևի, մոռացել եք,— ասացի ես,— որ ամբողջը, գոնե ինձ վերաբերող մասը, սլատկանում է անցյալին:

— Պատասխանեք ինձ,— առարկեց միստր Բրեֆը.— դուք գտնում եք, որ այս բոլոր անախորժությունների պատճառը միայն կուսնաբա՞րն է: Կուսնաբա՞րն է, թե ոչ:

— Անշուշտ, կուսնաբարն է:

— Շատ լավ: Ձեր կարծիքով, ի՞նչ է ար<sup>12</sup>. կուսնաբարը, էրբ տարվել է կոնդոն:

— Գրավ է դրվել միստր Կյուկերի մոտ:

— Մենք գիտենք, որ դուք չեք գրավ դրել: Իսկ մենք գիտե՞նք, ով է այդ անձնավորությունը:

— Ոչ:

— Իսկ, ձեր կարծիքով, որտե՞ղ է հիմա գտնվում կուսնաբարը:

— Պահպանության է հանձնվել միստր Կյուկերի բանկիրին:

— Ճիշտ այդպես: Հիմա տեսեք: Հիմա արդեն հունիսն է: Այս ամսվա վերջին, չեմ կարող ճշտությամբ որոշել, թե որ օրը, կլրանա այն ժամանակից հաշված մեկ տարին, երբ, ինչպես մենք ենթադրում ենք, գրավ է դրվել արմաստը: Հնարավոր է (որպեսզի ավելին չասենք), որ այդ թանկարժեք իրը գրավ գրած մարդը կուզենա տարին լրանալուց հետո ետ դնել այն: Եթե նա ետ գնի, ապա միստր Կյուկերն ինքը պետք է իր իսկ կարգադրությամբ արմաստը վերցնի բանկիրից: Այս հանգստանքներում ես անհրաժեշտ եմ համարում այս ամսվա վերջին խուզարկուին կանգնեցնել բանկի մոտ և հետևել, թե միստր Կյուկերը ում է վերադարձնելու կուսնաբարը: Հիմա հասկանո՞ւմ եք:

Ես համաձայնվեցի (թեև որոշ դժկամությամբ), որ այս միտքը, գոնե, նոր է:

— Այս միտքը միստր Մերտուետինն է նույնքան, որքան և իմը,— ասաց միստր Բրեֆը:— Այն, թերևս, երբեք զլխումըս չծագեր, Էթե շլիներ նրա հետ խոսակցությունը: Եթե միստր Մերտուետն իրավացի է, ապա հնչիկները նույնպես



ամսվա վերջին հսկելու են բանկի մոտ, և այդ ժամանակ, գուցե, ինչ-որ մի լուրջ բան կատարվի: Թե դրանից ինչ կըստացվի՝ բողոքովին միենույնն է ձեզ համար և ինձ համար, բացի այն, որ մեզ կօգնի բռնելու արմատը գրավ դրած խորհրդավոր անձնավորութանը: Այլ մարդն է, հավատացեք խոսքիս, պատճառը այն վիճակի (ճշգրտորեն չեմ կարող ասել, թե ինչ ձևով), որի մեջ այս պահին գտնվում էք դուք, և միայն այդ մարդը կարող է ձեզ վերագարձնել Ռեչելի հարգանքը:

— Չեմ կարող ժխտել,— ասացի ես,— որ ձեր առաջարկած ծրագիրը դժվարին հարցը կլուծի շատ համարձակ, շատ հնարամիտ և միանգամայն նոր եղանակով, բայց...

— Բայց դուք առարկություն ունեք:

— Այո: Առարկությունս այն է, որ ձեր առաջարկին ստիպում է մեզ սպասել:

— Համաձայն եմ: Իմ հաշվումներով, դուք պետք է սպասեք մոտավորապես երկու շաբաթ: Մի՞թե դա այդքան շատ է:

— Դա մի ամբողջ հավիտենություն է, միստր Բրեֆ, այնպիսի վիճակում, ինչպիսին իմն է: Կյանքը պարզապես անտանելի կլինի ինձ համար, եթե որևէ բան շձեռնարկեմ իմ բարի համբավն անմիջապես վերականգնելու համար:

— Լս'՛վ, լա'՛վ, ես դա հասկանում եմ: Արդեն մտածե՛լ էք, թե ինչ կարելի է անել:

Ես որոշել էի խորհրդակցել խուզարկու Կաֆի հետ:

— Նա պաշտոնաթող է եղել: Անօգուտ է սպասել, թե Կաֆը կկարողանա ձեզ օգնել:

— Ես գիտեմ, որտեղ կարելի է գտնել նրան, և կարող եմ փորձել:

— Փորձեք,— ասաց միստր Բրեֆը՝ մի պահ մտածելուց հետո:— Այդ դորժը, այն բանից հետո, որ խուզարկու Կաֆը խողել է նրանով զբաղվելը, այնպիսի սարօրինակ ընթացք է ստացել, որ դուք, գուցե, նրան շահագրգռեք: Փորձեք և արդյունքը հաղորդեք ինձ: Իսկ մինչ այդ,— շարունակեց նա,— եթե մինչև ամսվա վերջը ոչ մի հայտնադործություն չանեք, ես, իմ կողմից, ինչ-որ բանի կհասնեմ՝ բանկի մոտ հսկողություն սահմանելով:

— Իհարկե, — պատասխանեցի, — եթե միայն ես ձեզ շագատեմ այդ փորձը կատարելու անհրաժեշտութիւնից:

Միստր Բրեքը ժպտաց ու վերցրեց զլիարկը:

— Խուզարկու Կաֆին, — պատասխանեց նա, — հաղորդեք իմ խոսքերը. արմատի գաղտնիքի լուծումը այն հարցի լուծման մեջ է, թե ով է գրավ դրել արմատը: Եվ ինձ հաղորդեք, թե այդ մասին ինչ կարծիքի է խուզարկու Կաֆը:

Այդպես ես ու նա բաժանվեցինք այդ երեկու:

Հաջորդ առավոտ ես գնացի 'Իորկինգ փոքրիկ քաղաքը, որտեղ, ինչպես Բեատերեջն էր ինձ հաղորդել, բնակութիւն էր հաստատել խուզարկու Կաֆը:

Հյուրանոցում հարցուփորձ անելով, անհրաժեշտ տեղեկութիւններ ստացա, թե ինչպես գտնեմ խուզարկուի առանձնատունը: Դեպի այն տանում էր մի խաղաղ փողոց: Առանձնատունը գտնվում էր քաղաքից որոշ հեռավորութեան վրա. հարմարավետորեն պահված էր այգու մեջ, որը ետևի կողմից ու կողքերից բոլորված էր աղյուսե ամուր պարսպով, իսկ առջևից՝ կանաչահայտու բարձր ցանկապատով: Ներկած, պճնապաճույճ ցանցով դռնակը փակ էր: Զանգը հնչեցնելով՝ նայիցի ցանցից ներս և ամենուրեք տեսա նշանավոր Կաֆի սիրած ծաղիկները, որոնք նրա այգում ծաղկում էին ողկույզներով, որոնք պարուրում էին դռները, մտնում էին լուսամուտներից ներս: Մեծ քաղաքի հանցագործութիւններից ու գաղտնիքներից հեռու, նշանավոր խուզարկուն, գողերի այդ սարսափը, կյանքի վերջին տարիներն ապրում էր հոգսերից ազատ, զլիսովին թաղված իր վարդերի մեջ:

Դռնակը բացեց մի հարգարժան տարիքավոր կին և անմիջապես խորտակեց խուզարկու Կաֆի օգնութեան վրա դրած սույսերը: Կաֆը նախօրյակին մեկնել էր Իոլանդիա:

— Գործով է գնացել, — հարցրի ես:

Կինը ժպտաց:

— Հիմա նա միայն մի դործ ունի, սըր, — ասաց կինը. — վարդերը: Ինչ-որ մի մեծատոհմիկ սլարոնի այգեպան վարդերի աճեցման նոր եղանակ է գտել այնտեղ, և միստր Կաֆը Իոլանդիա է գնացել այն իմանալու:

— Զգիտե՞ք, երբ կվերստանա:

— Զգիտեմ, սըր: Միստր Կաֆն ասաց, որ ինքը կարող է

և՛ անմիջապես վերադառնալ, և՛ ուշանալ, նայած թե ինչ-  
պիսին կհամարի նոր եղանակը՝ ուսումնասիրման արժանի՞,  
թե ոչ: Ծթե կամենում եք որևէ բան հաղորդել նրան, ես  
կհոգամ այդ մասին, սրբ:

Ծս նրան տվի իմ այցետոմսը, մատիտով գրելով վրան.  
«Լուսնաքարին վերաբերող բաներ ունեմ ձեզ հաղորդե-  
լու՝ Վերադառնալուն պես՝ ինձ տեղեկացրեք»:

Սրանից հետո ինձ այլևս ոչինչ չէր մնում անել, քան  
հնազանդվել հանգամանքներին ու վերադառնալ Լոնդոն:

Այն ժամանակվա իմ ջղագրգռված վիճակում, որի մա-  
սին հիմա գրում եմ, խուզարկուի մոտ կատարածս անհա-  
ջող ուղևորությունը սոսկ իմ մեջ սաստկացրեց որևէ բան  
անելու տաղնասպալի պահանջը:

Քանի որ հիշարժան գիշերվա իրադարձությունները դեռևս  
անհասկանալի էին ինձ, ես մի փոքր ետ նայեցի և սկսեցի  
հիշողությանս մեջ փնտրել այդ գիշերվան նախորդած ժա-  
մերին տեղի ունեցած որևէ դեպք, որը ինձ կօգներ գտնելու  
հանելուկի բանալին:

Ինչ-որ բան չէ՞ր կատարվել այն ժամանակ, երբ Ռեչելն  
ու ես ավարտում էինք դռան նկարազարդումը: Կամ ավելի  
ուշ, երբ ես զնացի Ֆրիդինհոլ, Կամ հետո, երբ վերադարձա  
Գոդֆրի էբլուայթի և նրա քույրերի հետ: Կամ ավելի ուշ,  
երբ Լուսնաքարը տվի Ռեչելին: Կամ է՛լ ավելի ուշ, երբ եկան  
հյուրերը և բոլորս տեղավորվեցինք ճաշասեղանի շուրջը:  
Հիշողությունս շատ հեշտ պատասխանում էր բոլոր հարցե-  
րին, մինչև որ հասավ վերջինին: Մտաբերելով ճաշի ժամանակ  
տեղի ունեցած դեպքերը, հանկարծ փակուղու առաջ կանդ-  
նեցի: Ծս չէի կարողանում նույնիսկ ճշգրտորեն վերհիշել ինձ՝  
հետևումս սեղանի շուրջը նստած հյուրերի թիվը:

Որոշեցի իմանալ ճաշկերույթին ներկա եղած մարդկանց  
անունները, իսկ հետո, իմ իսկ հիշողության կարողությունը վե-  
րականգնելու համար, գիմել մյուս հյուրերի հիշողությանը,  
գրառել այն ամենը, ինչ նրանք կարող էին հիշել ծննդյան օրը  
տեղի ունեցած դեպքերի մասին, և այդպիսով ստացված ար-  
դյունքը ստուգել ըստ այն դեպքերի, որ տեղի էին ունեցել  
հյուրերի մեկնելուց հետո:

Գործողության այս ծրագիրը կազմելով, ևս պետք է ամն-

նից առաջ իմանալի հյուրերի լրիվ ցուցակը: Գա հեշտությամբ կարելի էր ստանալ Գաբրիել Բետտերեջից: Որոշեցի նույն օրը վերադառնալ Յորքշիր և հաջորդ առավոտից սկսել իմ հետաքննությունը:

Ընդամենը մի քանի բոպե ուշացա այն գնացքից, որը Լոնդոնից մեկնում էր կեսօրից առաջ: Այլևս ոչինչ չէր մնում անել, քան մոտավորապես երեք ժամ սպասել հաջորդ գնացքին: Զէի՞ կարող այդ ժամանակամիջոցն օգտագործել Լոնդոնում:

Մտքերս նորից համառորեն դարձան դեպի ծննդյան օրվա ճաշկերույթը:

Թեև մոռացել էի եղած հյուրերի և՛ թիվը, և՛ նրանց մեծ մասի անունները, բայց բավականաչափ շուտ հիշեցի, որ գրեթե բոլորն էլ Ֆրիզինհոլից կամ նրա շրջակայքից էին եկել: Բայց «գրեթե բոլորը» դեռևս չէր նշանակում «բոլորը»: Նրանցից ոմանք այդ կոմսություն մշտական բնակիչներ չէին: Ես ինքս այդպիսիներից մեկն էի, մյուսը Մերսուեան էր, երբորդը Գոդֆրի էբլուայթն էր, միստր Բրեֆը... ոչ, հիշեցի, որ գործերը միստր Բրեֆին խանգարել էին գալու: Տիկինների մեջ Լոնդոնի որևէ մշտական բնակիչ չկա՞ր: Մտաբերեցի միայն միսս Կլակին: Սակայն ահա արդեն կար երեք հյուր, սրոնց հետ օգտակար էր տեսնվելը, նախքան Լոնդոնից մեկնելու: Զիմանալով նրանց հասցեները, անմիջապես գնացի միստր Բրեֆի զրասենյակը, հույս ունենալով, որ թերևս նա կօգնի գտնելու նրանց: Միստր Բրեֆն այնքան զբաղված էր, որ չէր կարող իր թանկագին ժամանակից մեկ բոպեից ավելի հատկացնել ինձ: Սակայն այդ մեկ բոպեում նա հասցրեց վճռել, շատ զժկամորեն, այն բոլոր հարցերը, որ առաջադրեցի իրեն:

Առաջին, գաղտնիքի բանալին գտնելու իմ նոր հայտնագործած մեթոդը նա համարեց շատ ֆանտաստիկ, ուստի զրա մասին լրջորեն խոսելու կարիք չկար: Երկրորդ, երրորդ և չորրորդ, միստր Մերսուեան այժմ գտնվում էր իր նախկին արկածների վայրերը գնալու ճանապարհին. միսս Կլակը զրամական կորուստներ է ունեցել և խնայողության նկատառումով փոխադրվել է Ֆրանսիա. միստր Գոդֆրի էբլուայթին, թերևս, կարելի էր գտնել Լոնդոնում: Գուցե ակումբո՞ւմ

իմանամ նրա հասցեն: Իսկ հիմա, գուցե, ներքե՞մ միտոր Բրև-  
ֆին, եթե նա գնա իր գործին և բարի դիշեր մաղթի ինձ:

Լոնդոնում որոնումներ կատարելու ասպարեզն այժմ աշն-  
քան սահմանափակվեց, որ ինձ մնում էր միայն իմանալ  
Գոդֆրիի հասցեն: Ունկնդրեցի փաստաբանի խորհրդին ու  
գնացի ակումբ:

Նախասրահում հանդիպեցի ակումբի անդամներից մեկին,  
որը իմ գարմիկի հին ընկերն էր, իմ էլ ծանոթը: Այդ ջենտլը-  
մենը, Գոդֆրիի հասցեն ինձ հաղորդելով, պատմեց վերջերս  
նրան պատահած երկու դեպքի մասին, որոնք իմ ականջին  
չէին հասել, թեև շատ կարևոր էին ինձ համար:

Պարզվում է, որ, Ռեչելից մերժում ստանալով, նա, հու-  
սահատության մատնվելու փոխարեն, դրանից անմիջապես  
հետո առաջարկություն է արել մի երիտասարդ ազգկա, որը  
հայտնի էր որպես հարուստ ժառանգորդուհի: Առաջարկու-  
թյունն ընդունվել էր, և ամուսնությունը վճռված գործ էր  
համարվում: Բայց հանկարծ նշանադրությունն անակնկալ  
կերպով ու անսպասելիորեն քանդվել էր և այս անգամ ամուս-  
նական պայմանագրի որոշ կետերի շուրջը հարսնացուի հոր  
և փեսացուի միջև կարծիքների լուրջ անհամաձայնության  
սղորմածությունը:

Ասես ի վարձատրություն այդ երկրորդ անհաջողության,  
Գոդֆրին դրանից հետո շատ շուտով ստացավ իր բազմա-  
թիվ երկրպագուհիներից մեկի սիրո ու հարգանքի սրտառուչ  
և դրամական տեսակետից բավականին ուշադրավ նշանը:  
Հարուստ տարեց կինը, որ շափազանց հարգված էր «Մայրսի-  
կան հոգացողության կոմիտեում» և մեծ բարեկամուհին էր  
միսս Կլակի (որին նա, ի դեպ, չէր մերժել ոչինչ, բացի սզո  
ժատանուց), սքանչելի և արժանավոր միստր Գոդֆրիին կտա-  
կել էր հինգ հազար ֆունտ: Ստանալով իր դրամական հա-  
մեստ միջոցների այս հաճելի հավելումը, նա, ասում են, իր  
բարեգործական աշխատանքներից փոքր-ինչ հանգստանալու  
անհրաժեշտություն էր զգացել և բժշկի խորհրդով պետք է  
«մեկնեք մայրցամաք, քանի որ դա կարող էր օգտակար լի-  
նել նրա առողջությանը»: Եթե նա ինձ պետք է, հետևաբար  
նրան հարկ է այցելել առանց ժամանակ կորցնելու:

Ես անմիջապես գնացի նրա մոտ:

Բայց նույն ճակատագիրը, որ ինձ ստիպել էր մեկ օր ուշանալ խուզարկու Կաֆի մոտ հասնելուց, ինձ ստիպեց մեկ օր ուշանալ նաև Գողթրիի մոտ լինելուց: Նախորդ օրը առավոտյան նա մեկնել էր Գուվր: Նա ուղևորվում էր Օստենդե, իսկ նրա ծառան կարծել էր, թե նա կգնա Բրյուսել: Վերադարձի ժամանակը որոշված չէր, համենայնդեպս՝ նա կբացակայի առնվազն երեք ամիս:

Փոքր-ինչ ընկճված՝ վերադարձա տուն: Մենդյան օրը ճաշ կերույթին ներկա եղած հյուրերից երեքը (և երեքն էլ բացառապես խելացի մարդիկ) հեռու էին ինձնից հենց այն ժամանակ, երբ ես նրանց հետ խոսելու այնքան կարիք ունեի: Վերջին հույսս այժմ Բետտերեջի և հանգուցյալ լեդի Վերինգերի մտերիմների վրա էր, որոնց դեռևս կարող էի գտնել Ռեչելի կալվածքի հարևանությամբ ապրելիս:

Այս անգամ ես ուղիղ գնացի Ֆրիդինհոլ, քանի որ այժմ այդ քաղաքն իմ որոնումների կենտրոնական կետն էր: Հասա երեկոյան. արդեն շատ ուշ էր Բետտերեջի հետ տեսնվելու համար: Հաջորդ առավոտ նամակով մարդ ուղարկեցի նրա մոտ, խնդրելով հնարավորին չափ շուտ գալ ինձ մոտ հյուրանոց:

Մասամբ ժամանակը կրճատելու, մասամբ էլ Բետտերեջի համար հարմարություն ստեղծելու նպատակով ես շրջահայացորեն սուրհանդակիս ուղարկեցի վարձովի կառքով և կարող էի հուսալ, եթե ոչ մի արգելք չպատահեր, ծերուկին տեսնել կես ժամից հետո և նույնիսկ ավելի շուտ: Իսկ այդ ժամանակամիջոցում որոշեցի հարցուփորձել ծննդյան օրը ճաշկերույթին ներկա եղած հյուրերից նրանց, որոնք անձամբ ինձ ծանոթ էին և ապրում էին մոտերքում: Դրանք իմ ազգականներ էրլուայթներն էին և միստր Կանդին: Բժիշկը ինձ տեսնելու առանձնահատուկ ցանկություն էր հայտնել և ապրում էր հսրևան փողոցում: Այսպես ուրեմն, ես ամենից առաջ հնացի միստր Կանդիի մոտ:

Բետտերեջի՝ ինձ պատմածից հետո ես, բնականաբար, սպասում էի բժշկի ղեմքին տեսնել նրա տարած լուրջ հիվանդության հետքերը: Բայց ես պատրաստ չէի այն փոփոխությունը, որ նրա մեջ տեսա, երբ նա սենյակ մտավ ու ձեռքըս սեղմեց: Նրա աչքերը խամրել էին, մազերը բոլորովին

ճերմակել էին, դեմքը ծածկվել էր կնճիոններով, մեջքը կուցել էր: Ես նայում էի նախկինում շարժունակ, զրուցասեր, աշխույժ փոքրիկ բժշկին, հիշում նրա աշխարհիկ անմեղ սխալմունքներն ու անհամար կատակները և առաջվանից ոչինչ չէի գտնում նրա մեջ, եթե չհաշվենք ծիծաղելի պճնամուլոթյան հակումը: Այդ մարդը անցյալի միայն բեկորն էր, լայց նրա հագուստն ու վարդերը (որսլես դուժան ծաղր նրա մեջ կատարված փոփոխություն) նույնքան խայտաբղես ու վառ էին, ինչպես առաջ:

— Ես հաճախ եմ մտածել ձեր մասին, միտքը Ռյևկ,— ասաց նա,— և անկեղծ ուրախ եմ վերջապես ձեզ տեսնելու համար: Եթե կարող եմ որևէ բան անել ձեզ համար, խնդրեմ, ամբողջովին ձեր տրամադրություն տակ եմ, սբր, խնդրեմ, ամբողջովին ձեր տրամադրության տակ եմ:

Նա այս աշխարհիկ սովորական հաճոյախոսություններն անում էր անհարկի հապճեպություններ ու ողորություններ, զբրսկորելով իմ Յորքշիր գալու պատճառն իմանալու հետաքրքրասիրություն, որն ամենևին (ես կասեի՝ հրեխայավարի) չէր կարողանում թաքցնել:

— Ես վերջերս եղել էի Յորքշիրում և հիմա նորից այստեղ եմ եկել բավականաչափ ումանտիկ գործով,— ասացի ես:— Հանգուցյալ լեզի Վերինգերի բոլոր բարեկամները, միտքը Կանդի, որոշ մասնակցություն ունեցել են այդ գործին: Հիշում եք հնդկական արմաստի խորհրդավոր անհետանալը մոտ մեկ տարի առաջ: Վերջերս այնպիսի բաներ են կատարվել, որոնք հույս են տալիս, թե արմաստը կարելի է գտնել, և ես, որպես ընտանիքի անդամ, մասնակցում եմ որոնումներին: Ինձ հանդիպած դժվարությունների շարքին է պատկանում նաև առաջներում հավաքված բոլոր ցուցմունքները նորից, և հնարավորին չափ շատ, հավաքելու անհրաժեշտությունը: Այդ գործի որոշ առանձնահատկություններ պահանջում են որքան կարելի է ճշգրտորեն սլարդել միսս Ռեչելի ծննդյան օրվա երեկոյան լեզի Վերինգերի տանը կատարված ամեն ինչ: Եվ ես համարձակվում եմ գիմել նրա հանգուցյալ մոր բարեկամներին, որոնք ներկա են եղել դրան, օգնելու ինձ իրենց հիշողություններով:

Հագիվ էի այս տեղին հասել, երբ հանկարծ կանգ առա,

միստր Կանդիի դեմքից պարզորոշ տեսնելով, որ իմ փորձն ամենեին չի հաջողվել:

Փոքրամարմին բժիշկը, մինչ ես խոսում էի, անհանդիստ իր մատներին ծայրերն էր կծոտում ամբողջ ժամանակ: Նրա խամրած, ջրակալած աչքերն այնպիսի անիմաստ արտահայտությամբ էին նայում իմ երեսին, որ շատ տանջալից էր տեսնելու: Հնարավոր չէր կոահել, թե ինչ է մտածում նա: Պարզ էր միայն մի բան, որ առաջին երկու-երեք նախադասությունից հետո նա դադարել էր ինձ լսելուց: Միակ բանը, որով հնարավոր էր ստիպել, որ նա սթափվի, խոսակցության նյութը փոխելն էր: Փորձեցի անմիջապես ուրիշ բանից խոսել:

— Ահա թե ինչն է ինձ Ֆրիզինհոլ բերել, — ուրախ-ուրախ ասացի ես: — Հիմա, միստր Կանդի, հերթը ձերն է: Դուք Գարրիել Բետտերեջին հանձնարարել էիք ինձ հաղորդել...

Նա դադարեց մատները կծոտելուց և հանկարծ աշխուժացավ:

— Այո, այո, այո, — ողևորությամբ բացականչեց նա: — Ի՞նչո՞ւ այդպես: Հանձնարարել էի ձեզ հաղորդել:

— Եվ Բետտերեջն ինձ նամակով հաղորդել էր, — շարունակեցի ես, — որ դուք, երբ ես այս վայրերը գայի, կուզեիք ինչ-որ բան ասել ինձ: Դե, միստր Կանդի, ահա ես այստեղ եմ:

— Ահա և դուք այստեղ եք, — կրկնեց բժիշկը: — Եվ Բետտերեջը միանգամայն իրավացի է եղել: Ես կուզեի ձեզ ինչ-որ բան ասել: Ես այդպիսի հանձնարարություն տվել եմ նրան: Բետտերեջը զարմանալի մարդ է: Ինչպիսի՞ հիշողություն: Նրա տարիքում՝ ինչպիսի՞ հիշողություն:

Նա նորից լռեց և նորից սկսեց մատները կծոտել: Մտաբերելով այն, ինչ որ Բետտերեջից լսել էի նրա հիշողության վրա անդրադարձած տենդի հետևանքների մասին, շարունակեցի խոսակցությունը, հուսալով, որ գուցե կկարողանամ օգնել փոքրամարմին բժիշկին:

— Մենք շատ վաղուց շենք հանդիպել, — ասացի ես: — Վերջին անգամ տեսնվել ենք Ռեչելի ծննդյան օրը ճաշկերույթի ժամանակ, այն վերջին հրավիրովի ճաշկերույթի, որ տվեց իմ խեղճ մորաքույրը:



— Ճիշտ այդպես, — բացականչեց միստր Կանդին: — Սննդյան օրը տրված ճաշկերույթի ժամանակ:

Նա վեր թռավ տեղից ու նայեց ինձ: Հանկարծ թանձր կարմրությունը ողողեց նրա գունատ դեմքը, և նա նորից իջավ աթոռին, կարծես գիտակցելով, որ դրսևորել է մի թուլություն, որն ինքը կուզեր թաքցրած լինել: Ցավալի էր տեսնել, թե ինչպես նա գիտակցում է իր հիշողության պակասը և կամենում է այն թաքցնել իր բարեկամների ուշադրությունից: Մինչև հիմա նա սոսկ կարեկցանք էր հարուցում իմ մեջ:

Բայց այժմ նրա արտաբերած բռնորդ, թեև դրանք շատ չլին, ծայր աստիճան բորբոքեցին իմ հետաքրքրասիրությունը: Ես հենց ծննդյան օրվա ճաշկերույթի մասին էի մտածում՝ երան նայելով հուլսի, վախի ու վստահության խառնուրդով: Եվ հանկարծ պարզվեց, որ միստր Կանդին ուզում է ինչ-որ կարևոր բան հաղորդել այդ ճաշկերույթի մասին: Աշխատեցի նորից օգնել նրան: Բայց այս անգամ իմ մասնակցության պատճառը իմ սեփական շահերն էին, և դրանք ինձ ստիպեցին շափից դուրս շտապել դեպի այն նպատակը, որը ես նկատի ունեի:

— Շուտով արդեն մի տարի կլինի, — ասացի ես, — որ մենք նստած էինք այդ հաճելի սեղանի շուրջը: Դու՞ չե՞ք դրանել, օրագրում կամ մեկ ուրիշ տեղ, այն, ինչ կուզեիք ինձ ասել:

Միստր Կանդին հասկացավ իմ ակնարկը և ինձ հասկացնել տվեց, որ դա վիրավորական է համարում:

— Ես գրառելու կարիք չունեմ ամենեկին, միստր Բլեկ, — բավականին սառը ասաց նա: — Ես այնքան էլ ծեր չեմ և, փառք աստծու, դեռ կարող եմ վստահել իմ հիշողությանը:

Ավելորդ է ասելը, որ ես ձեռացրի, թե իբր շահակացա, որ ինքը վիրավորվել է ինձնից:

— Նույնը կուզեի ասել իմ հիշողության մասին, — պատասխանեցի ես: — Երբ աշխատում եմ մտածել մեկ տարի առաջ կատարված բաների մասին, ապա տեսնում եմ, որ հիշողություններս ամենեկին էլ այնքան հստակ չեն, ինչպես որ ես կուզեի: Օրինակ, լեզի Վերինդերի մոտ տրված ճաշկերույթը...

Այս բառերը բերանիցս դուրս գալուն պես միտքս կանգին նորից աշխուժացավ:

— Հա՛, ճաշկերույթը, լեղի Վերինդերի մոտ տրված ճաշկերույթը, — է՛լ ավելի ոգևորված բացականչեց նա: — Ես պետք է որոշ բաներ ձեզ պատմեմ այդ ճաշկերույթի մասին:

Նրա աչքերը նորից ինձ հառվեցին հարցական արտահայտությամբ, այնքան խղճալի, այնքան սևեռուն, այնքան անիմաստ, որ մեղք էր նայելը: Ըստ հրեույթին, նա տանջալից և իզուր ջանում էր ինչ-որ բան վերհիշել:

— Ճաշկերույթը շատ հաճելի էր, — հանկարծ խոսեց նա այնպիսի տեսքով, կարծես հենց այդ էլ ուզում էր ասել: — Շատ հաճելի ճաշկերույթ էր, այնպես չէ՞, միտքս բլեկ:

Նա զլխով արեց, ժպտաց և կարծես հավատացնում էր, թե իրեն հաջողվեց այդ հնարամտությամբ թաքցնել հիշողության լիակատար կորուստը:

Այս տեսարանն այնքան ցավալի էր, որ ես անմիջապես, թեև խիստ շահագրգռված էի, որպեսզի նա վերհիշեր ճաշկերույթի հանդամանքները: փոխեցի նյութը և տեղական հետաքրքրություն ներկայացնող ուրիշ թեմաներից խոսեցի:

Այդ ժամանակ էա սկսեց բավականին սահուն շատախոսել: Հեշտությամբ մտաբերում էր մեկ ամիս առաջ քաղաքում եղած անհեթեթ բամբասանքներն ու զժտությունները, խոսում էր գրեթե նախկին ժամանակների զրուցասիրությամբ, բայց լինում էին պահեր, երբ իր սերձախոսության նույնիսկ լիակատար թռչքի ժամանակ հանկարծ տատանվում էր, աչքերում եղած անիմաստ հարցով մի պահ նայում էր ինձ, հաղթահարում ինքն իրեն ու նորից շարունակում: Ես համբերությամբ տանում էի այս տանջանքը (իհարկե, լայն հետաքրքրություններ ունեցող մարդու համար զավառական փորձիկ քաղաքի նորություններն անտրտունջ ու լռելյայն լսելն իսկական տանջանք է), մինչև որ բուխարու վրայի ժամացույցն ինձ ցույց տվեց, որ արդեն կես ժամից ավելի է, ինչ շարունակվում է իմ այցելությունը: Իմ զոհը մատուցած համարելու արդեն որոշ իրավունք ունենալով, ես վեր կացա, որ հրաժեշտ տամ: Երբ իրար ձեռք էինք սեղմում, միտքս կանգին ինքը նորից խոսեց ծննդյան օրվա ճաշկերույթից:

— Ես այնքան ուրախ եմ, որ մենք նորից հանդիպե-

ցինք, — ասաց նա: — Ես, իրոք, միսար Բլեկ, պատրաստվում էի ձեզ հետ խոսել լեզի Վերինգերի մոտ տրված ճաշկերույթի մասին, այնպես չէ՞: Շատ հաճելի ճաշկերույթ էր, իրոք հաճելի ճաշկերույթ էր, համաձայն եք ինձ հետ:

Ես դանդաղորեն իջա աստիճաններից, ցավով համոզված, որ բժիշկն իրոք ուզում էր ինձ համար շափազանց կարևոր ինչ-որ բան ասել, բայց ի վիճակի չէր այդ անել: Նա ջանում էր հիշել, որ ուզում է ինչ-որ բան ասել ինձ, և դա, ըստ երևույթին, միակ շանքն էր, որ ընդունակ էր գործադրել նրա թուլացած հիշողությունը:

Երբ ես իջա աստիճաններից և թեքվեցի նախասրահում, տան ներքևի հարկում ինչ-որ տեղ դուռը կամացուկ բացվեց, և մի հեզ ձայն իմ հետևում ասաց.

— Վախենում եմ, սըր, որ դուք տխուր փոփոխություններ գտաք միսար Կանդիի մեջ:

Ես շրջվեցի և դեմ առ դեմ հանդիպեցի էզրա Ջենինգսին:

## Փ լ ու խ Լ X

Հնարավոր չէր վիճարկել Բետտերեջի այն կարծիքը, թե էզրա Ջենինգսի արտաքինը, ընդունված տեսակետից, նրա դեմ էր խոսում: Նրա զնչուական տեսքը, ներս ընկած այտերը՝ ջցված այտուսկրերով, բազմագույն արտասովոր մազերը, դեմքի և կաղնվածքի միջև եղած տարօրինակ հակասությունը, որը նրան ստիպում էր միաժամանակ և ծեր, և երիտասարդ երևալ, այս բոլորը այսպես թե այնպես նախատեսված էր առաջին իսկ ծանոթության ժամանակ անբարենպաստ տպավորություն գործելու համար: Եվ, այնուամենայնիվ, այս բոլորն զգալով չէի կարող ժխտել, որ էզրա Ջենինգսը ինչ-որ անըմբռնելի ճանապարհներով անհաղթահարելի համակրանք էր հարուցում իմ մեջ:

Մինչ մարդկանց հարցում ունեցած իմ փորձն ինձ խորհուրդ էր տալիս ընդունել, որ ես տխուր փոփոխություն եմ նկատել միսար Կանդիի մեջ, և շարունակել իմ ճանապարհը, էզրա Ջենինգսի նկատմամբ հետաքրքրությունն ասես ինձ

գամեց տեղում և նրան առիթ տվեց (որը և նա, ըստ երեւոյթի փնտրում էր) ինձ հետ առանձին խոսելու իր տիրոջից:

— Գուցի նույն ճանապարհով ենք գնալու, միստր Զենինգս,— հարցրի ես, նրա ձեռքին գլխարկ տեսնելով:— Ես գնում եմ իմ մորաքույր էրլուայթին տեսնելու:

էզրա Զենինգսը պատասխանեց, թե ինքն էլ նույն ճանապարհով է գնում, հիվանդի մոտ:

Միստր Կանդիի հիվանդությունից խոսք բացելով, էզրա Զենինգսը, ըստ երևույթին, որոշեց խոսակցութեան շարունակութունը թողնել ինձ: Նրա լուրջութունը պարզ ասում էր. «Հիմա հերթը ձերն է»: Ես նույնպէս բժշկի հիվանդութեան վերաբերյալ խոսակցութեանը վերադառնալու իմ պատճառներն ունեի և հաճույքով առաջինը խոսելու պատասխանավորութունն ինձ վրա վերցրի:

— Գատելով ըստ այն փոփոխութեան, որ գտնում եմ նրա մեջ,— սկսեցի ես,— միստր Կանդիի հիվանդութունը շատ ավելի վտանգավոր է եղել, քան ես ենթադրել եմ:

— Գրեթէ հրաշք է, որ նա, այնուամենայնիվ, առողջացել է,— պատասխանեց էզրա Զենինգսը:

— Նրա հիշողութունը միշտ այնպիսի վիճակում է, ինչպէս այսօր: Նա անվերջ ինչ-որ բանից էր ուզում խոսել ինձ հետ...

— ... ինչ-որ բանից, որ կատարվել է իր հիվանդութունից առաջ,— հարցական շարունակեց նա իմ խոսքը, նկատելով, որ ես կանգ առա:

— Ճիշտ այդպէս:

— Այն ժամանակվա դեպքերի հետ կապված նրա հիշողութունը թուլացել է անհուսալիորեն,— ասաց էզրա Զենինգսը:— Նույնիսկ հարկ է լինում ամսոսալ, որ խեղճը այդ հիշողութեան ինչ-որ խղճուկ մնացորդներ դեռ պահպանում է: Ազոտ կերպով հիշելով հիվանդութունից առաջ ունեցած մտազրույթունները, բաներ, որ մտադիր էր անել կամ ասել, նա բացարձակապէս ի վիճակի չէ վերհիշելու, թե ինչ մտազրույթուններ էին դրանք և ինչ պիտք է ասեր կամ աներ ինքը: Նա տանջալից դիտակցում է հիշողութեան կորուստը և տառապում է, աշխատելով, ինչպէս հավանաբար նկատեցիք,

Քարցնել ուրիշներոց: Եթե նա առողջանար, բոլորովին մոռանալով անցյալը, ապա ավելի երջանիկ կլիներ: Մենք բուրս, թերևս, ավելի երջանիկ զգայինք մեզ,— ավելացրեց նա տխուր ժպիտով,— եթե կարողանայինք լրիվ մոռանալ:

— Ամեն մարդու կյանքում,— առարկեցի ես,— երևի կլինեն պահեր, որոնց հետ կապված հիշողութիւնից նա չի ուզի բաժանվել:

— Հուսով եմ, որ դա կարելի է ասել մարդկութեան մեծ մասի վերաբերյալ, միստր Բլեկ: Սակայն, վախենում եմ, որ դա արդարացի չի լինի բոլորի նկատմամբ կիրառելիս: Դուք հիմք ունե՞ք ենթադրելու, թե այն վերհուշը, որ միստր Կանդին ջանում էր իր հիշողութեան մեջ վերակենդանացնել ձեզ հետ խոսելիս, լուրջ նշանակութիւն ունի ձեզ համար:

Այս ասելով, նա իր իսկ նախաձեռնութեամբ անդրադարձավ հենց այն բանին, ինչի շուրջը ես ուզում էի նրա հետ խորհրդակցել: Այդ տարօրինակ մարդու նկատմամբ հետաքրքրութիւնն ինձ ստիպեց բոլորակապակապութեան արդեցութեան տակ ինձ հետ խոսելու առիթ տալ նրան. առայժմ լուսնային մատնելով այն ամենը, ինչ ես իմ կողմից ուզում էի ասել նրան իր տիրոջ առիթով, ուզեցի նախ և առաջ հավաստիանալ, թե արդո՞ւք կարող եմ վստահել նրա համեստութեանն ու նրբամտութեանը: Բայց այն քիչն էլ, որ նա ասաց, բավական էր ինձ համոզելու, որ ես գործ ունեմ ջննտումնի հետ: Նրա մեջ կար այն, ինչ ես կփորձեմ այստեղ նկարագրել որպէս անկաշկանդ ինքնատիրապետում, մի բան, որը լավ զաստիարակութեան նշան է ոչ միայն Անգլիայում, այլև բոլոր քաղաքակիրթ երկրներում: Ինչ նպատակ էլ որ նա հետապնդեր իր վերջին հարցով, ես հավատացած էի, որ որոշ շափով անկեղծորեն կարող եմ պատասխանել նրան:

— Կարծում եմ, ինձ համար ծայր աստիճան կարևոր է վերականգնել այն հանգամանքները, որոնք միստր Կանդին ինքը ի վիճակի չէ վերհիշելու,— ասացի ես:— Ձե՞ք կարող նրա հիշողութեանն օգնելու որևէ միջոց հուշել ինձ:

էզրա Ջենինգսը ինձ նայեց մտախոհ շագանակագույն աչքերում կարեկցանքի անակնկալ հետաքրքրութեամբ:

— Միստր Կանդիի հիշողութեանն այլևս ոչնչով հնարավոր չէ օգնել,— պատասխանեց նա:— Նրա առողջանալուց ի վեր

այնքան եմ փորձել օգնել, որ հաստատապես կարող եմ պընգել:

Նրա սասածներն ինձ վշտացրին, և ես դա չթաքցրի:

— Խոստովանում եմ, դուք առավել դոհացուցիչ պատասխանի հույս էիք ներշնչել ինձ,— ասացի ես:

Նա ժպտաց.

— Սա, թերևս, վերջնական պատասխանն է, միստր Բլեկ: Միստր Կանդիի մոռացած հանդամանքները վերականգնելու եղանակ, թերևս, գտնվի, առանց նրա օգնությանը դիմելու:

— Իրո՞ք: Իմ կողմից անհամեստություն չի՞ լինի, եթե հարցնեմ՝ ինչպե՞ս:

— Ամենին: Ձեր հարցին պատասխանելու միակ դժվարությունն ինձ համար բուն բացատրության մեջ է: Կարո՞ղ եմ վստահել ձեր համբերությանը, եթե մեկ անգամ էլ անդրադառնամ միստր Կանդիի հիվանդությանը և, դրա մասին խոսելիս, այս անգամ ձեզ ազատեմ որոշ մասնագիտական մանրամասնություններից:

— Օ՛, խնդրեմ: Դուք այդ մանրամասնություններով արդեն շարժել եք իմ հետաքրքրությունը:

Իմ հետաքրքրասիրությունը, կարծես, նրան հաճելի էր: Նա նորից ժպտաց: Այդ ժամանակամիջոցում մենք արդեն ետևում էինք թողել Ֆրիդլինհոլի վերջին տները:

էզրա Ջենինգսը մի պահ կանգ առավ՝ ճամփեզրի մի քանի դաշտային ծաղիկներ քաղելու համար:

— Ինչքա՞ն լավն են,— պարզ ու հասարակ խոսեց նա, իր փունջը ցույց տալով ինձ,— և Անգլիայում ինչքա՞ն քիչ մարդիկ են ընդունակ հիանալու սրանցով, այնպես, ինչպես սրանք արժանի են դրան:

— Դուք միշտ Անգլիայում չե՞ք ապրել,— հարցրի ես:

— Ոչ: Ես ծնվել ու մանկությունս անցկացրել եմ մեր գաղութներից մեկում: Հայրս անգլիացի էր, իսկ մայրս... Մենք շեղվեցինք մեր թեմայից, միստր Բլեկ, և դա իմ մեղքն է: Ծիշտն ասած, ես շատ բան ունեմ կապված այս ճամփեզրյա փորրիկ համեստ ծաղիկների հետ: Բայց թողնենք դա: Մենք միստր Կանդիի մասին էինք խոսում: Եկեք վերադառնանք միստր Կանդիին:

Իրեն վերաբերող մի քանի բառերը, որ պատահաբար դուրս

էին թուել նրա բերանից, բաղդատելով կյանքի նկատմամբ  
այն մեղամաղձոտ հայացքի հետ, ըստ որի նա մարդկու-  
թյան երջանիկ լինելու պայմանը համարում էր անցյալի լրիվ  
մոռացումը, ես հասկացա, որ նրա դեմքին կարդացածս  
պատմութիւնը համընկնում էր (առնվազն երկու մանրա-  
մասնեքում) նրա պատմածի հետ. նա տառապել էր, ինչ-  
պէս մարդկանցից քշերն են տառապում. և նա զտարյուն անգ-  
լիացի շէր:

— Դուք, հավանաբար, լսել եք միստր Կանդիի հիվանդու-  
թյան սկզբնական պատճառի մասին,— դարձյալ խոսեց նա:—  
Լեդի Վերինգերի հրավիրովի ճաշկերույթից հետո գիշերը տե-  
ղատարափ անձրև էր գալիս: Միստր Կանդին տուն էր գնում  
բաց կառքով և թրջվել էր մինչև ոսկորները: Տանը նրան  
սպասում էր հիվանդի մոտից եկած մի մարդ, թախանձա-  
զին խնդրելով անհապաղ այցելել հիվանդին: Գժբախտա-  
բար, նա իր հիվանդի մոտ գնաց՝ նեղություն չկրելով շորե-  
րը փոխել: Այդ գիշեր ես ինքս մնացի հիվանդի մոտ, Ֆրի-  
զինհոլից որոշ հեռավորության վրա: Երբ հաջորդ առավոտ  
վերադարձա, դռան մոտ արդեն ինձ էր սպասում միստր  
Կանդիի վախեցած ձիավոր ծառան և ինձ անմիջապէս տա-  
րավ իր տիրոջ սենյակը: Այդ ժամանակամիջոցում փոր-  
ձանքն արդեն տեղի էր ունեցել, հիվանդութիւնը մտել էր իր  
իրավունքների մեջ:

— Այն ինձ նկարագրել են սոսկ շատ ընդհանուր գծերով,  
անվանելով ջերմախտ,— ասացի ես:

— Եվ ես ավելի ճշգրիտ ոչինչ չեմ կարող ավելացնել  
դրան,— պատասխանեց էզրա Ջենինգսը:— Հիվանդութիւնը  
սկզբից մինչև վերջ որևէ որոշակի ձև չընդունեց: Առանց ժա-  
մանակ կորցնելու, ուղարկեցի երկու բժշկի Լտևից, որոնք  
միստր Կանդիի ընկերներն էին. ուղում էի իմանայ նրանց  
կարծիքը հիվանդության մասին: Նրանք ինձ հետ համա-  
ձայնվեցին, որ այն լուրջ է, բայց բուժման հարցում մեր  
հայացքները խիստ տարբերվեցին: Հիվանդի զարկերակի  
վրա հիմնվելով, մենք միանդամայն տարբեր եղբակացու-  
թյունների էինք հանդում: Երակազարկի արագացումը նկատի  
ունենալով, նրանք պնդում էին, թի բուժման միակ միջոցը  
չերմիջուցն է, որին պետք է դիմել: Իսկ ես, իմ կողմից,

զսնելով, որ երակազարկն արագացած է, նշում էի հիվանդի ահավոր թուլութունը որպես օրդանիզմի հյուծված վիճակի նշան, և անհրաժեշտ էի համարում դիմել զրգոիչ միջոցներին: Սրկու բժիշկն էլ այն կարծիքին էին, թե պետք է հիվանդին կապել շիլայի, լիմոնազի, գարու եփուկի և այլ բաներին: Մինչդեռ ես նրան կտայի շամպայն կամ կոնյակ, ամոնիակ և քինաքինա: Ինչպես տեսնում եք, կարևոր տարակարծութունն է, և այն էլ ո՞ւմ միջև: Քաղաքում ընդհանուրի հարգանքը վայելող երկու բժիշկների և մի եկվորի միջև, որը սոսկ բժշկի օգնականն է: Առաջին օրերին ինձ ոչինչ չէր մնում անել, քան ենթարկվել փորձով ու դիրքով ինձնից բարձր մարդկանց կամքին: Մինչդեռ հիվանդի ուժերը ղնալով նվազում էին: Ես որոշեցի երկրորդ անգամ մատնացույց անել Լրակազարկի պարզ, անվիճելիորեն պարզ վկայութունը: Նրա արագութունը բոլորովին չէր պակասել, իսկ թուլութունը այլեւայլ էր: Բժիշկները վիրավորվեցին իմ համառութունից: Նրանք ասացին.

«Միտքը Ջենինգս, կամ մենք ենք բուժում հիվանդին, կամ դուք: Ուրեմն՝ մեզնից ո՞ր մեկը»:

«Պարոնայր,— պատասխանեցի ես,— հինգ րոպե տվեք մտածելու համար, և դուք կտանաք ձեր պարզ հարցի ոչ պակաս պարզ պատասխանը»:

Նշված ժամանակամիջոցն անցնելուց հետո իմ որոշումն ընդունվեց:

«Դուք կտրականապես հրաժարվո՞ւմ եք զրգոիչ միջոցներով բուժելու փորձ կատարելուց»,— հարցրի ես:

Նրանք կտրականապես հրաժարվեցին:

«Այդ դեպքում՝ ես մտադիր եմ անհապաղ ձեռնամուխ լինել դրան, պարոնայր»:

«Ձեռնամուխ եղեք, միտքը Ջենինգս, և մենք անմիջապես կհրաժարվենք հետագա բուժումից»:

Մարդ ուղարկեցի նկուղ մի շիշ շամպայն բերելու և մի կես բաժակ տվի հիվանդին, որ խմի: Բժիշկները սուսուփուս վերցրին իրենց գլխարկներն ու հեռացան...

— Եվ դուք մեծ պատասխանատվութուն եք վերցրել ձեզ վրա,— նկատեցի ես:— Ձեր փոխարեն ես, հավանաբար, կխուսափեի դրանից:



— Եթե դուք իմ փոխարեն լինեիք, միստր Բլեկ, ապա կհիշեիք, որ միստր Կանդին ձեզ իր տունն է տարել այնպիսի հանգամանքներում, որոնք ձեզ նրա պարտապանն են դարձրել ամբողջ կյանքում: Իմ փոխարեն դուք, տեսնելով, որ ժամ առ ժամ նրա ուժերը նվազում են, ավելի շուտ կորուզեիք վտանգի ենթարկել ամեն ինչ, քան թողնել, որ ձեր աչքի առաջ մեռնի աշխարհում միակ մարդը, որը օգնել է ձեզ: Չկարծեք, թե ես չէի գիտակցում այն ահավոր վիճակը, որի մեջ ինքս ինձ դրել էի: Լինում էին պահեր, երբ մինչև վերջ զգում էի իմ մենակության ամբողջ դառնությունն ու ինձ վրա ընկած ահավոր պատասխանատվությունը: Եթե ես երջանիկ մարդ լինեի, եթե կյանքս անցած լիներ բարեկեցության մեջ, ես, կարծեմ, չէի դիմանա ստանձնուծ պարտականության ծանրությունը: Բայց թե ես չէի ունեցել երջանիկ անցյալ, որի վրա կարողանայի հետագարձ հայացք գցել, չէի ունեցել հոգու հանգստություն, որի համար երկյուղ կրեի՝ տանջալի անհայտության մեջ տառապելով. և ես արիաբար պայքարեցի մինչև վերջ: Ինձ համար անհրաժեշտ հանգրստի մեկ ժամն ընտրում էի օրվա այն միջոցին, երբ հիվանդի վիճակը փոքր-ինչ բարելավվում էր: Իսկ մնացած ժամանակը, մինչ նրա կյանքը վտանգի մեջ էր գտնվում, չէի հեռանում նրա մահճակալի մոտից: Արևի մայր մտնելու պահին, ինչպես միշտ լինում է նման դեպքերում, սկսվում էր ջերմախտի ժամանակ սովորական զառանցանքը: Այն ընդհատումներով շարունակվում էր ամբողջ գիշերը և դադարում էր վաղ առավոտվա վտանգավոր ժամերին, երկուսից մինչև հինգը, երբ նույնիսկ ամենաառողջ մարդկանց կենսական ուժերն ընկնում են մինչև վերջին աստիճանը: Այդ ժամերին մահն առավել հարուստ հունձ է կատարում: Այդ ժամանակ ես մահվան դեմ պայքարի էի ելնում հանուն մահճում պառկած հիվանդի, նրանից վանելով այն: Ծս ոչ մի անգամ չչեղվեցի բուժման ընդունած մեթոդից, հանուն որի վտանգի տակ էի դրել ինձ: Երբ գինին չէր բավականացնում, ես անցնում էի կոնյակին: Երբ մյուս գրգռիչ միջոցները կորցնում էին իրենց ներգործությունը՝ սկսում էի կրկնապատկել ընդունումը: Երկարատև անհայտությունից հետո (որ աստուծն աղաչում եմ այլևս երբևէ ցույց չտա ինձ) հասավ այն օրը,

Երբ շափից դուրս հաճախակի հրակազարկն սկսեց աստիճանաբար նվազել ու դառնալ համաշափ: Այդ ժամանակ ես հասկացա, որ փրկել եմ նրան, և, խոստովանում եմ, ինձ դավաճանեց իմ հաստատակամությունը: Խեղճ հիվանդի նիհարած ձեռքն իջեցրի անկողնու վրա ու հեկեկացի: Հիստերիկ նուպա, միստր Բլեկ, ուրիշ ոչինչ: Ֆիզիոլոգիան ասում է, և ճիշտ է ասում, որ որոշ տղամարդիկ կենդական կառուցվածք ունեն, դրանց թվում եմ նաև ես:

Իր արցունքների այս անողոքաբար սթափ գիտական արդարացումը նա արտահայտեց նույնքան հանգիստ ու բնական ձայնով, ինչպես որ մինչև հիմա խոսում էր ինձ հետ: Նրա ձայնն ու շարժումները սկզբից մինչև վերջ արտահայտում էին իր նկատմամբ կարեկցանք հարուցելու մի առանձին, գրեթե հիվանդագին վախ:

— Գուք կարող եք հարցնել, թե ինչու եմ այս մանրամասնություններով ձանձրացնում ձեզ,— շարունակեց նա:— Ես չեմ տեսնում մեկ ուրիշ եղանակ, որով կարող եմ պատշաճ ձևով ձեզ նախապատրաստել այն բանին, ինչ որ ասելու եմ: Հիմա դուք ճշտությամբ գիտեք իմ վիճակը միստր Կանդիի հիվանդության ժամանակ, և հեշտությամբ կհասկանաք, թե այդ ժամանակ որքան խիստ կարիք ունեի որևէ այլ բանով զբաղվելու: Մի քանի տարի առաջ սկսել էի գիրք գրել ազատ ժամերիս. դա նախատեսվում էր իմ մասնագիտության գծով եղբայրակիցներիս համար: Այդ գիրքը ուղեղի և նյարդային համակարգի հիվանդությունների բարդ խնդիրներին էր վերաբերում: Աշխատանքս, հավանաբար, երբեք չի ավարտվի և, անշուշտ, չի հրատարակվի: Այնուամենայնիվ, այդ գիրքը իմ բնկերն է եղել մենակության երկարատև ժամերին. այն ինձ օգնել է սպանելու ժամանակը՝ տանջալից սպասումի ու անգործության ժամանակը միստր Կանդիի մահճակալի մոտ: Կարծեմ, ձեզ ասել եմ, որ նա զառանցում էր: Եթե չեմ սխալվում, նույնիսկ հիշատակել եմ, թե երբ է այն սկսվում:

— Այո:

— Ահա հենց այդ ժամանակ հս իմ զրբում հասել էի այն բաժնին, որը այդօրինակ զառանցանքին է նվիրված: Ես ձեզ նեղություն չեմ պատճառի այդ հարցին վերաբերող իմ տե-

ւությունը հանգամանորեն շարադրելով և կասհմանափակ-  
վեմ միայն նրանով, ինչը ներկա դեպքում հետաքրքրություն  
է ներկայացնում ձեզ համար: Այն օրից ի վեր, որ բժշկու-  
թյամբ եմ զբաղվում, բազմիցս կասկածել եմ, թե կարելի՞  
է եղրակացնել, որ գառանցանքի ժամանակ կապակցված խոս-  
քի ունակության կորուստը ապացուցում է հետևողական մտա-  
ծողության ունակության կորուստը: Ինչո՞ւ միտքը կանգիի  
հիվանդությունն ինձ հնարավորություն էր տալիս պարզելու  
իմ կասկածները: Ես կարողանում եմ սղազրել և հեշտությամբ  
էի գրառում հիվանդի կցկտուր նախադասությունները ճիշտ  
այն վիճակում, որ նա արտաբերում էր: Հիմա հասկանո՞ւմ  
եք, միտքը Բլեկ, թե ինչի համար եմ ասում այս բոլորը:

Ես շատ պարզ հասկանում էի և շունչս պահած սպա-  
սում էի, թե ինչ կասի այնուհետև:

— Տարբեր ժամանակներում և ընդհատումներով,— շա-  
րունակեց էզրա Ջենինգսը,— ես վերծանում էի իմ սղազ-  
րական նոթերը, մեծ տարածություններ թողնելով կցկտուր  
նախադասությունների և նույնիսկ առանձին բառերի միջև,  
նույն կարգով, ինչ կարգով, որ դրանք անկասկապ արտաբերում  
էր միտքը կանգին: Ի վերջո ես այդ ամենի հետ վարվեցի  
գրեթե այնպես, ինչպես երեխաներն են վարվում խորանար-  
դիկներով խաղալիս: Սկզբում ամեն ինչ ներկայանում է որ-  
պես քառս, բայց բավական է ճիշտ դատավորիք առանձին  
մասերը, և ձեր առջև կպարզվի ավարտուն ու հասկանալի  
պատկերը: Այս ծրագրին համեմատ գործելով, լրացնում էի  
էրկու նախադասությունների միջև ընկած բացթողումները,  
աշխատելով կռահել հիվանդի միտքը: Ուղղում ու փոփոխում  
էի, մինչև որ իմ ընդմիջարկումները աեղավստվում էին այն  
բառերից հետո, որ ասվել էին իրենցից առաջ, և ընականա-  
բար միանում էին իրենցից անմիջապես հետո ասված բա-  
ռերին: Արդյունքը ցույց տվեց, որ ես իզուր չէի աշխատել  
այդ տանջալից երկար ժամերին և հասել էի այն բանին, ին-  
չը, ինձ թվում էր, հաստատում էր իմ տեսությունը: Պարզ  
ասած, երբ կցեցի կցկտուր նախադասությունները, համուղ-  
վեցի, որ բարձրագույն ունակությունը (կասկակցված մտածո-  
ղություն) հիվանդի մոտ քիչ թե շատ կանոնավոր շարունա-  
կել է իր գործունեությունը, այն դեպքում, երբ ստորին ունա-

կությունը (մտքի բանավոր շարադրման) գրեթե լրիվ խան-  
գարված է եղել...

— Մի խոսք,— աշխուժորեն ընդհատեցի նրան,— Զա-  
ռանցելիս նա իմ անունը տվե՞լ է:

— Հիմա կլսեք, միտար Բլեկ: Վերոհիշյալ դրությամբ իմ  
գրավոր ապացույցների մեջ կամ, ավելի ճիշտ, այն դրա-  
վոր փորձերի մեջ, որոնք հակվում են իմ վիճակն ապա-  
ցուցելուն, կա մի թերթիկ, որտեղ հանդիպում է ձեր անու-  
նը: Միտար Կանդիի մտքերը գրեթե ամբողջ դիշեր զբաղված  
էին ձեր և նրա միջև եղած ինչ-որ մի ընդհանուր բանով: Ես  
նրա անկապ բառերը գրառել եմ այն տեսքով, ինչ տեսքով  
որ նա ասել է դրանք, մի թղթի վրա, իսկ մեկ ուրիշ թղթի  
վրա՝ իմ սեփական նկատառումները, որոնք կապ են հաղոր-  
դում դրանց: Դրա ածանցյալը, ինչպես թվաբանության մեջ  
են արտահայտվում, եղավ պարզ հաշվետվությունը. առաջի-  
նը, ինչ-որ բանի մասին, որ կատարվել է անցյալում. երկ-  
րորդը, ինչ-որ բանի մասին, որ միտար Կանդին մտադիր  
է եղել անել ապագայում, եթե նրան չխանգարեր հիվան-  
դությունը: Հիմա հարցն այն է, թե արդյո՞ք դա ներկայաց-  
նում է այն կորսված հիշողությունը, որ նա ապարդյուն փոր-  
ձել է որսալ, հրք դուք այսօր այցելել եք նրան:

— Դրանում ոչ մի կասկած լինել չի կարող,— բացական-  
չեցի ես:— Հիմա եեթ զնանք և աչքի անցկացնենք թղթերը:

— Հնարավոր չէ, միտար Բլեկ:

— Ինչո՞ւ:

— Ձեզ գրեք իմ տեղը,— ասաց էզրա Ջենինգսը:— Դուք  
կհամաձայնվեի՞ք մեկ ուրիշ մարդու ներկայացնել այն, ինչ  
հիվանդ ժամանակ անդիտակցաբար արտահայտել է ձեր հի-  
վանդն ու անպաշտպան բարեկամը, լառանց նախապես հավաս-  
տիանալու, որ ձեր այդօրինակ արարքը արդարացվում է  
անհրաժեշտությամբ:

Թեև զգում էի, որ հնարավոր չէ գրան առարկել, սակայն  
փորձեցի համոզել նրան.

— Այդպիսի փափկանկատ հարցում իմ դորձելակերպն  
առավելապես կախված կլիներ նրանից, թե ես իմ անկեղ-  
ծությամբ կվնասե՞մ, թե չեմ վնասի իմ բարեկամին:

— Ես վաղուց արդեն հերքել եմ հարցի այդ կողմը բըն-

Նարկելու ամեն մի անհրաժեշտութիւն,— ասաց էզրա Զե-  
նինգսը:— Իմ այն դրառումները, որոնք այնպիսի մի բան  
էին պարունակում, որ միտար Կանդին կկամենար գաղտնի  
պահել, շատ վաղուց ոչնչացվել են: Բարեկամիս անկողնու  
մոտ կատարած ձեռագիր փորձերն արդեն այժմ չեն պարու-  
նակում ոչ մի այնպիսի բան, որը նա չհամարձակվեր հա-  
ղորդել ուրիշներին, եթե վերագտներ իր հիշողութիւնը: Իսկ  
ինչ վերաբերում է ձեզ, ապա ես նույնիսկ հավատացած եմ,  
որ իմ գրառումները բովանդակում են հենց այն, ինչ որ նա  
այնքան շատ ուզում է ձեզ ասել հիմա:

— Եվ դուք, այնուամենայնիվ, տատանվո՞ւմ եք:

— Եվ ես, այնուամենայնիվ, տատանվում եմ: Հիշեցիք,  
թե ինչ հանգամանքներում եմ ձեռք բերել այս տեղեկու-  
թիւնները, որ հիմա ունեմ: Որքան էլ անմեղ են դրանք, ես  
չեմ կարող ձեզ հաղորդել, մինչև դուք ինձ չշարադրեք այն  
պատճառները, որոնցից ելնելով, այդ պետք է անել: Նա  
այնքան ծանր հիվանդ էր, միտար Բլեկ, բուրբուխն անօգ-  
նակա՞ն, ամբողջովին իմ իշխանութեան ներքո: Մի՞թե շա-  
փից դուրս շատ կլինի, եթե ձեզ խնդրեմ միայն ակնարկել,  
թե ձեզ համար ինչ բնույթի հետաքրքրութիւն է կապված  
էորսոված հիշողութիւնների հետ կամ ինչ հիշողութիւն է  
դա, ձեր կարծիքով:

Նրան պատասխանել այն անկեղծութեամբ, որ իմ մեջ հա-  
րուցում էր իրեն պահելու և խոսելու նրա շարժումը, կնշա-  
նակեր բացեիբաց ինձ դնել այնպիսի մարդու նվաստացու-  
ցիչ վիճակում, որին կասկածում են արմատը գողանալու  
մեջ: Թեև այն անբացատրելի համակրանքը, որ էզրա Զե-  
նինգսը առաջացրել էր իմ մեջ, այժմ էլ ավելի էր մեծացել,  
ևս, այնուամենայնիվ, չէի կարող նրան պատմել այն խայ-  
տառակ վիճակի մասին, որի մեջ ընկել էի: Ես նորից դիմեցի  
այն բացատրական նախադասութիւններին, որոնք պատ-  
րաստ պահում էի կողմնակի մարդկանց հետաքրքրասիրու-  
թիւնը բավարարելու համար:

Այս անգամ ես առիթ չունեի գանդատվելու իմ ունկնդրի  
պակաս ուշադրութեան համար: էզրա Զենինգսն ինձ լսում  
էր համբերութեամբ, նույնիսկ տագնապով, մինչև որ ես  
ավարտեցի պատմութիւնս:

— Շատ եմ ափսոսում, միտոր Բլեկ, որ ձեր մեջ հույսեր արթնացրի սոսկ նրա համար, որպեսզի ի դերև հանեմ գրանք, — ասաց նա: — Իր հիվանդութեան ամբողջ ժամանակամիջոցում, սկզբից մինչև վերջ, միտոր Կանդին ոչ մի բառ չի ասել արմատի մասին: Այն դորժը, որի հետ նա կապել է ձեր անունը, հավատացնում եմ, ոչ մի հնարավոր կապ չունի միսս Վերինդերի թանկարժեք քարի կորչելու կամ այն վերագտնելու հետ:

Մինչ նա խոսում էր, մենք մոտեցանք այն տեղին, որտեղ մեծ ճանապարհը, որով քայլում էինք, բաժանվեց երկու ճյուղի: Մեկը տանում էր դեպի միտոր էրլուայթի տուն, մյուսը այն գյուղը, որ փոխած էր ներքևում, այստեղից երկու կամ երեք մղոն հեռավորութեան վրա: էզրա Զենինգսը կանգ առավ գյուղ տանող շրջադարձի մոտ:

— Ես այս կողմ եմ գնում, — ասաց նա: — Ես, արդարև, շատ վշտացած եմ, միտոր Բլեկ, որ չեմ կարող օգտակար լինել ձեզ:

Նրա ձայնի հնչերանդն ինձ համոզեց, որ նա անկեղծ է: Նրա շագանակագույն հեղահամբույր աչքերը տխուր կարեկցանքի արտահայտութեամբ կանգ առան ինձ վրա: Նա խոնարհվելով հրաժեշտ տվեց ու գնաց դեպի գյուղ, առանց այլևս որևէ խոսք ասելու:

Մի պահ կանգնեցի անշարժ, հայացքով հետևելով նրան, մինչ նա ավելի ու ավելի հեռանում էր ինձնից, իր հետ ավելի ու ավելի հեռուն տանելով այն, թերևս, հնարավոր լուծումը, որ հս ջանք էի թափում իմանալու: Մի փոքր տարածություն անցնելուց հետո նա ետ նայեց: Ինձ տեսնելով նույն տեղում, որտեղ մենք բաժանվել էինք, կանգ առավ, ասև ինքն իրեն հարցնելով, արդյո՞ք նորից չեմ ուղում խոսել իր հետ: Ես ժամանակ չունեի մտածելու իմ սեփական վիճակի և այն մասին, որ բաց եմ թողնում առիթը, սրբ կարող է կարևոր շրջադարձ կատարել իմ կյանքում, և բոլորն այն պատճառով, որ ես չեմ կարող մի կողմ դնել իմ ինքնասիրությունը: Ես հասցրի սոսկ ետ կանչել նրան, իսկ հետո նոր սկսեցի խորհրդածել: Խիստ կասկածում եմ, որ ինձնից ավելի լիակատար մարդ լինի աշխարհում:

«Հիմա արդեն ուրիշ ոչինչ չի մնում անել, — որոշեցի մտքումս: — Ես նրան պետք է ասեմ ողջ ճշմարտությունը»:

Նա անմիջապես ետ դարձավ: Ես բնդառաջ գնացի նրան: — Ես ձեզ հետ լրիվ անկեղծ շեմ եղել, միստր Զենինգս, — սկսեցի ես: — Միստր Կանդիի կորսված հիշողության նկատմամբ հետաքրքրությունն ինձ մոտ կապված չէ ևուսնաբարի որոնումների հետ: Ինձ ստիպել է Յորքշիր գալ մի անձնակահա կարևոր գործ: Այդ գործում ձեզ հետ ոչ լրիվ անկեղծ լինելս արդարացնելու համար միայն մի բան կարող եմ ասել: Ինձ համար ծանր է, ավելի ծանր է, քան այդ կարող եմ արտահայտել, որևէ մեկին բացատրել իմ այժմյան վիճակը: Էզրա Զենինգսը մեր խոսակցության բռնվելուց ի վեր առաջին անգամ շփոթմունքով նայեց ինձ:

— Ես ոչ իրավունք, ոչ էլ ցանկություն ունեմ, միստր Բլեկ, — առարկեց նա, — միջամտելու ձեր մասնավոր գործերին: Թույլ տվեք իմ կողմից ներողություն խնդրել նրա համար, որ ես, ամենևին դա չկասկածելով, անախորժ փորձության ենթարկեցի ձեզ:

— Դուք լիակատար իրավունք ունեք առաջադրելու պայմաններ, որոնց հիման վրա հնարավոր եք համարում ինձ հաղորդել այն, ինչ լսել եք միստր Կանդիի հիվանդության մահճի մոտ: Ես հասկանում ու գնահատում եմ այն ազնվությունը, որն առաջնորդում է ձեզ: Ինչպե՞ս կարող եմ ձեզնից վստահություն սպասել, եթե ինքս ձեզ մերժեմ այդ վրստահությունը: Դուք պետք է իմանաք և կիմանաք՝ ինչու ինձ համար այդքան կարևոր է պարզել, թե ինչ էր ուզում ինձ հաղորդել միստր Կանդին: Եթե պարզվի, որ ես սխալվել եմ իմ սպասումներում, և իմ որոնումների իսկական պատճառն իմանալով, իրավունք չեք ունենա դա հաղորդելու ինձ, ապա ես կապավիճեմ ձեր ազնվությանը, որ դուք կպահեք իմ գաղտնիքը: Եվ ինչ-որ մի բան ինձ ասում է, որ իմ վրստահությունն անտեղի չի լինի:

— Կանգ առեք, միստր Բլեկ: Նախքան ձեզ թույլ կտամ շարունակել՝ ևս երկու խոսք պետք է ասեմ ձեզ:

Ես դարձանքով նայեցի նրան: Ըստ երևույթին հանկարծակի հոգեկան մի ծանր տառապանք էր համակել նրան: Դեմքի գնչուական գույնին փոխարինել էր գորշավուն սարսափելի դունատությունը. հանկարծ աչքերը շողացին վայրենի փայլով, ձայնն իջավ և հնչեց այնպիսի մի խիստ վրճ-

տակահանութեամբ, որը նրանից առաջին անգամ էի լսում: Այդ մարդու թաքնված ուժերը (այդ պահին դժվար էր ասելը, թե ինչի էին ուղղված դրանք՝ բարո՞ւն, թե շարին) իմ առջև հայտնվեցին հանկարծակի, ինչպես կայծակի փայլատակում:

— Նախքան իմ նկատմամբ որևէ վստահութիւն ցուցաբերելը, — շարունակեց նա, — դուք պետք է իմանաք, և կիմանաք, թե ինչ հանգամանքներում եմ ես մտել միստր Կանդիի տունը: Դա շատ ժամանակ չի զբաղեցնի: Սըր, ես մտադիր չեմ, ինչպես ասում են, «իմ կյանքի պատմութիւնն» անել որևէ մեկին: Դա կմեռնի ինձ հետ: Միայն ինդրում եմ թույլ տվեք ձեզ հաղորդել այն, ինչ միստր Կանդիին եմ հաղորդել: Եթե ինձ լսելուց հետո դուք չեք փոխի ձեր որոշումն այն բանի նկատմամբ, ինչ որ ուղում էիք ինձ ասել, ապա ես ամբողջովին ձեր տրամադրութեան տակ եմ: Չշարունակե՞նք քայլել:

Նրա դեմքի ցավը, որ նա զսպում էր, ինձ ստիպեց լռել: Ես ձեռքի շարժումով պատասխանեցի նրա հարցին, և մենք շարունակեցինք ճանապարհը:

Մի քանի հարյուր յարդ անցնելուց հետո էլբրա Ջենինգսը կանգ առավ գորշ քարով շարված պատի բացվածքի մոտ. պատն այդ տեղում ճանապարհը բաժանում էր ցախի հարթավայրից:

— Մտադիր չե՞ք մի փոքր հանգստանալ, միստր Բլեկ, — հարցրեց նա: — Ես արդեն առաջվանը չեմ, մինչդեռ կան բաներ, որոնք խորապես ցնցում են ինձ:

Ես, անշուշտ, համաձայնվեցի: Նա դնաց դեպի ցախի մեջ գտնվող խոտածածկ մարգագետինը: Ճանապարհի կողմից մարգագետինը ծածկում էին թփուտներն ու վտիտ ծառերը, իսկ մյուս կողմից վեհաշուք տեսարան էր բացվում անապատային ընդարձակ գորշ հարթավայրի վրա: Վերջին կես ժամում ամպերը սքողել էին երկինքը: Օրը դարձել էր մառախլապատ, հորիզոնը պարուրվել էր մշուշով: Գույները խամրել էին, և հրաշագեղ բնութիւնը մեզ դիմավորեց հեզորեն, խաղաղ, առանց փոքր-ինչ ժպտի:

Մենք լուռ նստեցինք: էլբրա Ջենինգսը դիտարկը դրեց կողքին, նկատելի հոգնութեամբ ձեռքով շփեց ճակատը, մատ-



Ներք տարավ խրեց իր սև ու սպիտակ արտասովոր մազերի մեջ: Գաշտային ծաղիկներից կազմված իր փոքրիկ փունջը մի կողմ գցեց այնպիսի շարժումով, ասես դրանց հետ կապված հիշողությունները հիմա էլ տառապանք էին պատճառում նրան:

— Միտոր Բլեկ,— հանկարծ ասաց նա,— դուք վատ մարդու հետ եք նստած: Շատ տարիներ ինձ վրա ծանրացած է եղել ահավոր մեղադրանքի բեռը: Ես անմիջապես ձեռ խոստովանում եմ վատթարագույնը: Զեր առջև գտնվում է մի մարդ, որի կյանքը կործանված է, որի բարի անունը ոչընչացված է անվերադարձ կերպով:

Ուզեցի նրան ընդհատել, բայց նա կանգնեցրեց ինձ.

— Ոչ, ոչ,— բացականչեց նա:— Ներեցեք, դեռ ոչ: Ո՛չ հիմա. ինձ չկարեկցեք, որի համար կարող եք հետո զոջալ: Ես հիշատակեցի այն մեղադրանքը, որ շատ տարիներ ծանրացած է ինձ վրա: Դրա հետ կապված որոշ հանգամանքներ իմ դեմ են խոսում: Ես չեմ կարող ինձ ստիպել խոստովանելու, թե որն է այդ մեղադրանքը: Եվ ես ի վիճակի չեմ, բոլորովին ի վիճակի չեմ ապացուցելու իմ անմեղությունը: Ես միայն կարող եմ պնդել, որ անմեղ եմ: Երգվում եմ որսւթես քրիստոնյա: Ինձ համար իզուր կլիներ երգվել իմ պատվով:

Նա նորից կանդ առավ: Նայեցի նրան, բայց նա աչքերը չէր բարձրացնում: Նրա ամբողջ էությունը, կարծես, կլանված էր տանջալի հիշողություններով և խոսելու համար ջանք գործադրելով:

— Ես շատ բան կարող էի ասել,— շարունակեց նա,— իմ նկատմամբ իմ մոտիկների անաստված վերաբերմունքի և այն անողոք թշնամանքի մասին, որի զոհը ես դարձա: Բայց շարիքը կատարված է և անուղղելի է: Ես չեմ ուզում, սրբ, ոչ ձանձրացնել ձեզ, ոչ էլ վիշացնել ձեր տրամադրությունը: Այդ երկրում իմ կարիերան սկսելիս ինձ մեկընդմիշտ խոցեց ստոր զրպարտանքը, որը հիշատակել եմ: Ես հրաժարվեցի իմ մասնագիտության մեջ որևէ հաջողության հասնելուց. հիմա երջանկության իմ միակ հույսը մնացել է անհայտությունը: Ես բաժանվեցի նրանից, որին սիրում էի. կարող էի նրան դատասարտել իմ խայտառակությունը կի-

սելուն: Անգլիայի հեռավոր անկյուններից մեկում բժշկի օգնականի տեղ բացվեց: Ես ստացա այդ տեղը: Այն ինձ խոստանում էր անդորրութուն, խոստանում էր անհայտութուն. այդպես էի կարծում: Սխալվել էի: Վատ լուրը ժամանակի ու զիպքերի օգնությամբ մեծանում է, ընդարձակվում և անցնում հեռուները: Մեղադրանքը, որից ես փախել էի, եկել էր իմ հոտից: Ինձ նախազգուշացրին ժամանակին: Ինձ հաջողվեց տեղից հեռանալ կամոպին, հանձնարարականներով, որոնք ստացել էի քստ արժանվույն: Դրանք ինձ ուրիշ տեղ հատկացրին, մեկ ուրիշ հեռավոր անկյունում: Անցավ որոշ ժամանակ, և իմ պատվի համար սպանիչ գրպարտանքը նորից գտավ իմ ապաստարանը: Այս անգամ ես նախազգուշացված չէի: Տերս ինձ ասաց.

«Ես ձեր դեմ ոչինչ չունեմ, միտք Ձենինգս, բայց դուք պետք է արդարանաք կամ հեռանաք իմ տնից»:

Ընտրութուն չունեի: Պետք է հեռանայի: Կարիք չկա երկարուբարակ ասելու, թե ինչեր տարա դրանից հետո: Ես ընդամենը քստստուն տարեկան եմ: Նայեցեք դեմքիս, և թող իմ փոխարեն նա ձեզ ասի ապրածս տանջալից տարիների մասին: Վերջապես բախտը ինձ բերեց այս կողմերը. միտք կանդին օգնականի կարիք ուներ: Իմ ընդունակութունների հարցում ես վկայակոչեցի իմ վերջին պատրոնին: Հոնձնաբարականների վերաբերյալ նրան պատմեցի նույնը, ինչ որ ասացի ձեզ, և զեռ ավելին: Ես նրան նախազգուշացրի զրգվարութունների համար, որոնք կծագեն նույնիսկ այն դեպքում, եթե նա ինձ հավատար «Այստեղ, ինչպես և ամեն տեղ,— ասացի նրան,— ես արհամարհում եմ ուրիշի անվան տակ ապրելու ամոթալի խորամանկութունը. Ֆրիզինհոլում ավելի ապահովված չեմ, քան ուրիշ տեղերում, այն ամպից, որը, որտեղ էլ թաքնվում եմ, գալիս է իմ ետևից»:

«Ես ոչ մի բան կիսատ չեմ անում,— պատասխանեց նա ինձ:— Ես հավատում եմ ձեզ և խղճում եմ ձեզ: Եթե դուք պատրաստ եք դիմելու ամեն մի վտանգի, ապա ես էլ պատրաստ եմ վտանգվելու ձեզ հետ մեկտեղ»:

— Թող աստված բարին տա նրան: Նա ինձ տվեց ազատան, նա ինձ տվեց զբաղմունք, նա ինձ շնորհեց հոգու անդորրութուն, և ես համոզված եմ (արդեն մի քանի ամիս է,

ինչ այդ համոզմունքն առաջացել է իմ մեջ), հիմա չի պատահի այնպիսի մի բան, որը նրան կատիպեր զզջալ արածի համար:

— Զրպարտանքը հանդարտե՞լ է,— հարցրի ես:

— Առաջվանից ավելի ուժեղ է գործում: Բայց մինչև այստեղ հասնի՝ արդեն ուշ կլինի:

— Դուք նախօրոք կմեկնե՞ք:

— Ոչ, միստր Բլեկ, ես այլևս կենդանի չեմ լինի: Տասը տարի է տառապում եմ անբուժելի հիվանդությամբ: Չեմ թաքցնում, վաղուց կթողնեի, որ նա ինձ սպաներ, եթե չլինեիր ինձ կյանքի հետ կապող մի վերջին թել: Ուզում եմ ապահովել ինձ համար շատ թանկ մի... անձնավորության, որին այլևս երբեք չեմ տեսնի: Այն քիչը, որ ինձ մնացել է ծնողներիցս, նրան չի կարող փրկել կախումից: Այդ գումարը որոշակի թվի հասցնելու համար անհրաժեշտ ժամանակ ապրելու հույսն ինձ մղել է հիվանդության դեմ կռվելու այն բոլոր թեթևացնող միջոցներով, որպիսիք ես կարող էի գտնել: Իսկականը եղավ միայն ափիոնը: Այդ ամենագոր ցավազրկիչին եմ պարտական ես իմ մահավճիռը շատ տարիներով հետաձգելու: Բայց թե ափիոնի բարեբար հատկություններն էլ իրենց սահմանն ունեն: Քանի որ հիվանդությունը զնալով ուժեղանում էր, ապա ես էլ սկսեցի աննկատելիորեն շարաչահել ափիոնը: Հիմա էլ դրա համար հատուցում եմ: Ամբողջ նյարդային համակարգս խախտված է. դիշերներս լիքն են տաժանելի տառապանքներով: Վերջս արդեն հեռու չէ: Թող դա. իզուր չեմ ապրել ու աշխատել ես: Մի փոքրիկ գումար գրեթե հավաքված է, և ես այն լրացնելու հնարավորություն ունեմ, եթե կենսական ուժերիս վերջին պաշարը ենթադրածիցս ավելի շուտ սպառվի... Ինքս էլ չեմ հասկանում, թե ինչու եմ սա ձեզ պատմում: Չեմ կարծում, թե ես այնքան ստորն եմ, որ աշխատում եմ իմ նկատմամբ խղճահարություն առաջացնել ձեր մեջ: Դուք, թերևս ավելի շուտ հավատաք ինձ, եթե լմանաք, որ ձեզ հետ խոսակցություն ւկսելիս, ես հաստատ հավատացած եմ եղել իմ վերահաս մահվան մեջ: Որ դուք համակրանք ներշնչեցիք ինձ, միստր Բլեկ, չեմ ուզում թաքցնելու իմ խեղճ բարեկամի հիշողության կորուստն ինձ համար միջոց եղավ ձեզ հետ մերձենա-

լու փորձ անելու համար, Ծս ապավինել էի հետաքրքրասիրութեանը, որ ձեր մեջ կարող է հարուցել այն, ինչ նա ուզում էր ձեզ ասել, և այդ հետաքրքրասիրութիւնը բավարարելու իմ հնարավորութեանը: Մի՞թե ինձ համար ներումն չկա, որ այս ձեռով ձեր վրին փաթաթվեցի: Գուցե և կա: Ինձ նման ապրած մարդը մարդկային ճակատագրի մասին խորհրդածելիս դառը բոսկենքեր է ապրում: Դուք ունեք երիտասարդութիւն, առողջութիւն, հարստութիւն, դիրք՝ բարձր աշխարհիկ հասարակութեան մեջ, ապագայի հույսեր. դուք և ձեզ նման մարդիկ ինձ ցույց են տալիս կյանքի արևոտ կողմը և ինձ հաշտեցնում են այս աշխարհի հետ, նախքան ես ընդմիշտ հրածեշտ կտամ նրան: Ինչով էլ որ ավարտվի մեր խոսակցութիւնը, ես չեմ մոռանա, որ դուք ներողամտութիւն ցուցաբերեցիք իմ նկատմամբ, համաձայնվելով դրան: Հիմա, սրբ, ձեզնից է կախված ինձ ասել այն, ինչ մտադիր էիք ասել, կամ հաջողութիւն մաղթել ինձ:

Ծս միայն մի պատասխան ունեի տալու այս կոչին: Ոչ մի բոսկե շտատանվելով, ես նրան ամեն ինչ պատմեցի նույնքան անկեղծորեն, ինչպես որ արտահայտվել եմ այս էջերում:

Նա վեր թռավ տեղից և, երբ հասա իմ պատմութեան զրլ-խավոր տեղին, նա, լարված ուշադրութիւնից հազիվ շնչելով, նայում էր ինձ:

— Անտարակուսելի է, որ ես մտել եմ սենյակ, — ասում էի ես, — անտարակուսելի է, որ ես վերցրել եմ արմաստը: Եվ այս երկու անհերքելի փաստերի համար կարող եմ միայն ասել, որ դա արել եմ, եթե արել եմ, բոլորովին անգիտակցաբար:

Հանկարծ էզրա Ջենինգսը թափով բռնեց ձեռքս:

— Սպասեցեք, — բացականչեց նա: — Դուք ինձ ավելին ստացիք, քան ենթադրում եք: Երբևէ պատահե՞լ է, որ ափիոն ընդունեք:

— Կյանքումս՝ երբեք:

— Անցյալ տարի այս ժամանակ ձեր նյարդերը խանդարված չե՞ն եղել: Դուք մի առանձին անհանդստութիւն և ջղագրգռութիւն չե՞ք զգացել:

— Իրոք, զգացել եմ:

— Վա՞տ եք քնել:

— Շատ վատ: Շատ գիշերներ բոլորովին անքուն եմ անցկացրել:

— Միտս Վերինդերի ծննդյան օրվա գիշերը բացառութեամբ չի՞ եղել: Աշխատեցեք վերհիշել, արդո՞ք այդ ժամանակ լավ եք քնել:

— Շատ լավ հիշում եմ: Հրաշալի եմ քնել:

Նա նույնքան անակնկալորեն բաց թողեց ձեռքս, ինչպես որ բռնեի էր, և ինձ նայեց այնպիսի մի մարդու տեսքով, որից չբացել էր ճնշող վերջին կասկածը:

— Դա սքանչելի օր է ձեր կյանքում և իմ կյանքում,— խորին համոզմունքով ասաց նա:— Մի բանում ես հաստատ հավատացած եմ, միտար Բլեկ. հիմա ես գիտեմ, թե այսօր ինչ էր ուղում ձեզ ասել միտար Կանդին. դա կա իմ գրառումներում: Սպասեցեք, դա դեռ բոլորը չէ: Ես հաստատ հավատացած եմ, թե կարող եմ ապացուցել, որ դուք անգիտակցաբար եք վարվել, երբ սենյակ եք մտել ու վերցրել արմատը: Միայն ժամանակ տվեք ինձ մտածելու և հարցուփորձելու ձեզ: Կարծեմ, ձեր անմեղութեան ապացույցն իմ ձեռքում է:

— Բացատրվեք, ի սեր աստծու: Ի՞նչ եք ուղում դրանով ասել:

Մեր խոսակցութեամբ համաշտակված, մի քանի քայլ արեցինք, ինքներս էլ այդ շնկատելով, և մեր ետևում թողեցինք վտիտ ծառերը, որոնց ետևում մենք չէինք երևում: Մինչ էդրա Զենինգսը կհասցնեի ինձ պատասխանել, նրան ձայն տվեց մեծ ճանապարհի վրա կանգնած մի մարդ, որը խիստ հուղված էր և, ըստ երևույթին, նրան էր սպասում:

— Գալի՛ս եմ,— ի պատասխան գոռաց սա նրան,— հիմա գալիս եմ: Շատ լուրջ հիվանդ է, գյուղում ինձ են սպասում,— դիմեց նա ինձ:— Ես պետք է այնտեղ լինեի կես ժամ առաջ. պետք է անմիջապես այնտեղ գնամ: Երկու ժամ հետո նորից եկեք միտար Կանդիի մոտ. խոսք եմ տալիս, որ այն ժամանակ լրիվ ձեր տրամադրութեան տակ կլինեմ:

— Ինչպե՞ս կարող եմ սպասել,— անհամբեր բացականչեցի ես:— Մի՞թե չեք կարող մեր բաժանվելուց առաջ մի խոսքով հանգստացնել ինձ:

— Գործը չափից ավելի կարևոր է, և հնարավոր չէ հաս-  
շտապ բացատրել այն, միտքը Բլեկ: Իմ քմահաճույքով չէ, որ  
փորձութեան հմ ենթարկում ձեր համբերութիւնը. ընդհա-  
կառակը, սպասումը ձեզ համար էլ ավելի ծանր կզարձնեի,  
եթե փորձեի այն թեթևացնել հիմա: Ցտեսութիւնը, սըր, մին-  
չև երկու ժամ հետո Ֆրիդինհոլում հանդիպելը:

Մեծ ճանապարհի վրա կանգնած մարդը նորից ձայն տվեց  
նրան: Սա արագորեն հեռացավ և մենակ թողեց ինձ:

## Գ Լ Ո Ւ Խ X

Թե տանջալից անհաստատութիւնը, որին ես դատապարտ-  
ված էի, իմ փոխարեն ինչպե՞ս կներգործեր մեկ ուրիշի վրա,  
չեմ կարող ասել: Սպասումի երկժամյա տառապանքը հե-  
տևյալ ձևով անգրագարձավ ինձ վրա. ես ինձ զգում էի ֆի-  
զիկապէս անընդունակ մնալու նույն տեղում և բարոյապէս  
անընդունակ խոսելու որե՛կ մեկի հետ, քանի դեռ չէի իմա-  
ցել այն ամենը, ինչ ուզում էր ինձ ասել էզրա Զենինգսը:

Այս տրամադրութեան մեջ ես ոչ միայն փոխեցի միտքս  
էրլուայթին այցելելու միտքը, այլև շողեցի նույնիսկ Գար-  
րիէլ Քետտերլէջի հետ հանդիպել:

Ֆրիդինհոլ վերադառնալով, նրան թողեցի մի երկտող,  
որով հաղորդում էի, թե անսպասելիորեն ետ եմ կանչվել,  
բայց անպայման կվերադառնամ կեսօրից հետո ժամը երե-  
քին մոտ: Նրան խնդրում էի ճաշ պահանջել իր սովորական  
ժամին և մինչև այդ ինչ-որ բանով զբաղեցնել իր ժամա-  
նակը: Նա անհաշիվ բարեկամների ուներ քաղաքում, և դա  
զիտեի, հետևաբար նրա համար դժվար չի լինի ինչ-որ բա-  
նով զբաղեցնել մինչև իմ հյուրանոց վերադառնալն ընկած  
սակավտօթիվ ժամերը:

Այս անելուց հետո ես նորից դուրս եկա քաղաքից և սկսե-  
ցի թափառել Ֆրիդինհոլը շրջապատող ցախիի հարթավայ-  
րերում, մինչև ժամացույցն ինձ ասաց, որ վերջապէս հա-  
սել է միտքը Կանդիի տուն վերադառնալու ժամը:

էզրա Զենինգսն արդեն ինձ էր սպասում: Մենակ նստած  
էր փոքրիկ սենյակում, որի ապակեպատ զուռը տանում էր

դեպի դեղատուն: Գեղին ներկած պատերին կախված էին անտանելի ավերածություններ պատկերող գունավոր դիագրամներ, ավերածություններ, որ գործում են զանազան ահավոր հիվանդություններ: Գրապահարան՝ լցված խունացած կազմով բժշկական երկերով. վրան, սովորական կիսանդրու փոխարեն՝ գանգ. սոճուց պատրաստված մի մեծ սեղան՝ ամբողջովին ծածկված թանաքի բծերով. փայտե աթոռներ, որպիսիք լինում են խոհանոցներում և առանձնատներում. բրդե մաշված մի փոքրիկ գորգ հատակին. խեցամանով և ջրատար խողովակով ծորակ, որը կոպիտ կերպով մտցված է պատի մեջ և ակամայից վիրաբուժական հավոր գործողությունների մասին է մտածել տալիս. — ահա թե ի՛նչ էր բաղկացած սենյակի կահույքը: Մեղոնեիը բըզպում էին լուսամուտի մյուս կողմում դրված ծաղկամանների մեջ, թռչունները երգում էին այդոմ, հորեմն լարից ընկած դաշնամուրի թույլ տնկտնկոցներ էին գալիս հարևան տնից:

Մեկ ուրիշ տեղում այս առօրյա ձայները հաճելիորեն կհաղորդեին պատերից դուրս եղած առօրյա աշխարհի մասին. բայց դրանք այստեղ էին խուժում որպես լուսթյունը խախտողներ, որը, մարդկային տառապանքից բացի, խախտելու իրավունք չունեն որիշ ոչ մի բան: Ես նայեցի դուրս պահարանի թարեքին առանձնահատուկ տեղ գրավող վիրաբուժական գործիքներով արկղին, որը կարմիր փայլից էր պատրաստված, և վիրակապման թևերի հակայական կծիկին, ու ցնցվեցի, մտածելով էզրա Զենինգսի սենյակի համար սովորական ձայների մասին:

— Ես ձեզնից ներողություն չեմ խնդրում, միտքը բլեկ, որ այս սենյակում եմ ձեզ ընդունում, — ասաց նա: — Սա ամբողջ տան մեջ միակն է, որտեղ օրվա այս ժամին կարող էնք վստահ լինել, որ մեղ շեն անհանգստացնի: Ահա իմ իղթերը, որ պատրաստել եմ ձեզ համար, իսկ այստեղ երկու գիրք կա, որոնց մենք առիթ կունենանք դիմելու նախօրան մեր խոսակցությունն ավարտելը: Մոտեցեք սեղանին և կեք այս բուրբը միասին նայենք:

Սա աթոռս մոտեցրի նրան, և նա գրառումները տվեց ինձ: Երկու մեծ թերթ էր: Առաջինի վրա գրված էին բառեր՝ իրա-

րից հետու-հետու: Երկրորդը վերևից ներքև ամբողջովին գրո-  
տած էր սև ու կարմիր թանաքով: Հետաքրքրասիրության այն  
տագնապալի վիճակում, որի մեջ այդ պահին գտնվում էի  
ես, հուսահատությամբ մի կողմ դրի երկրորդ թերթը:

— Խղճացե՛ք ինձ,— բացականչեցի ես:— Ասացեք, ի՞նչ  
կուրող եմ սպասել նախքան սրանք կարդալը:

— Հաճույքով, միտք բլեկ: Թույլ կտա՞ք երկու-երեք հարց  
տալ ձեզ:

— Հարցրեք, ինչ ուզում եք:

Նա ինձ նայեց դեմքի տխուր ժպիտով և շագանակագույն  
հեղ աչքերի ջերմ կարեկցանքով:

— Գուք ինձ արդեն ասել եք,— սկսեց նա,— որ, որքան  
ձեզ հայտնի է, երբեք ավիոն շեք դրել ձեր բերանը:

— Որքան դա ինձ հայտնի՞ է,— հարցրի ես:

— Անմիջապես կհասկանաք, թե ինչու այդ վերապահումն  
ալեցի: Շարունակենք: Գուք շեք հիշում, որ երբևէ ավիոն  
օդատարժած լինեք: Անցյալ տարի հենց այս ժամանակ դուք  
տառապել էք նյարդային խանգարվածությամբ և գիշերները  
վատ եք քնել: Սակայն, միսս Վերինդերի ծննդյան օրվա գի-  
շերը դուք, սովորականին հակառակ, խորը քնել եք: Ըի՞շտ  
է այս բոլորը, որ ասում եմ: Կարո՞ղ եք ինձ ասել ձեր նյար-  
դային խանգարվածության և անքնության պատճառը:

— Ամենեին շեմ կարող: Որքան հիշում եմ, ծերունի Բեա-  
տերեջը պնդում է, թե ինքը գիտե պատճառը: Բայց հազիվ  
թե դա արժե հիշատակել:

— Ներեցեք ինձ: Չկան բաներ, որոնք շարժե հիշատա-  
կել այսօրինակ գործում: Ասում եք՝ Բեատերեջն ինչ-որ բա-  
նով է բացատրել ձեր անքնությունը: Իսկ ինչո՞վ:

— Նրանով, որ թողել էի ծխելը:

— Իսկ ծխելու սովորությունն ունեցե՞լ եք:

— Ունեցել եմ:

— Եվ միանգամի՞ց եք թողել ծխելը:

— Այո, միանգամից:

— Բեատերեջը միանգամայն իրավացի է ևղև, միտք  
բլեկ: Երբ ծխելը սովորություն է դառնում, ապա միայն շատ  
առողջ մարդը նյարդային համակարգի որոշ խանգարվածու-  
թյուն չի զգա ծխելը միանգամից թողնելով: Իմ կարծիքով,



ձեր անբնությունը հենց դրանով էլ բացատրվում է: Իմ հաջորդ հարցը վերաբերում է միասր Կանդիին: Արդյո՞ք ծննդդյան օրը կամ մեկ ուրիշ ժամանակ նրա մասնագիտության առիթով որևէ վեճ չեք ունեցել հետը:

Այս հարցն անմիջապես ծննդյան օրվա հրավիրովի ճաշկերույթի հետ կապված աղոտ հիշողություն արթնացրեց իմ մեջ: Միասր Կանդիի հետ իմ անիմաստ վեճը հարկ եղածից շատ ավելի հանգամանորեն նկարագրված է Բեստերեջի պատմության տասներորդ գլխում: Այդ վեճի մանրամասները բոլորովին ջնջվել են հիշողությունիցս, այնքան որ հետագայում քիչ եմ մտածել այդ մասին: Վերհիշել և իմ զրույցակցին հաղորդել կարողացա միայն այն, որ ճաշի ժամանակ այնքան խիստ ու համառ հարձակում եմ գործել բժշկության վրա, որ համբերությունից հանել եմ նույնիսկ միասր Կանդիին: Նաև հիշեցի, որ մեր վեճին վերջ տալու համար միջամտեց լեդի Վերինդերը, իսկ ես ու փոքրամարմին բժիշկը հաշտվեցինք, ինչպես երեխաներն են ասում, և երբ հրաժեշտ տալիս իրար ձեռք էինք սեղմում, նորից բարեկամներ էինք:

— Մի բան էլ կա, որ ինձ համար շատ կարևոր է իմանալ, — ասաց էզրա Ջենինգսը: — Անցյալ տարի այս ժամանակ Լուսնաքարի հաշվով անհանգստանալու առիթ չե՞ք ունեցել:

— Շատ մեծ առիթ եմ ունեցել: Ես գիտեի, որ ամեն գնով ուզում են Լուսնաքարը հափշտակել, և ինձ նախազգուշացրել էին, որպեսզի ես միջոցներ ձեռնարկեի պահպանելու համար միսս Վերինդերին, որին այն պատկանում էր:

— Այդ երեկո քնելու գնալուց առաջ որևէ մեկի հետ չե՞ք խոսել, թե ինչպես կարելի է ավելի լավ պահպանել ալմաստը:

— Այդ մասին իր ազդկա հետ խոսել է լեդի Վերինդերը...

— Ձեր ներկայությամբ:

— Իմ ներկայությամբ:

էզրա Ջենինգսը սեղանի վրայից վերցրեց իր գրառումներն ու տվեց ինձ:

— Միասր Բլեկ, — ասաց նա, — եթե դուք հիմա իմ գրառումները կարդաք իմ տված հարցերի և ձեր պատասխանների լույսի տակ, ապա ձեզ վերաբերող երկու զարմանալի

հայտնագործություն կանեք: Նախ կիմանաք, որ միսս Վերինդերի հյուրասենյակն եք մտել և ալմաստը վերցրել անգիտակից վիճակում, ասիոնի ազդեցութեան տակ. երկրորդ, որ ասիոնը ձեզ տվել է միստր Կանդին, առանց ձեր գիտութեան, որպեսզի փորձով հերքի միսս Ռեչելի ծննդյան օրվա հրավիրովի ճաշկերույթի ժամանակ ձեր արտահայտած միտքը:

Քարացած նստել էի՝ թղթերը ձեռքիս:

— Ներեցեք խեղճ միստր Կանդին,— հեղութեամբ ասաց Ջենինգսը:— Նա սոսկալի վնաս է պատճառել, ես դա չեմ ժխտում, բայց դա արել է առանց ետին մտքի: Աչքի անցկացրեք իմ զրառումները, և կտեսնեք, որ, եթե հիվանդությունը նրան չխանգարեր, ապա հաշորդ օրը կգար լեղի Վերինդերի մոտ և կխոստովաներ ձեզ հետ խաղացած խաղը: Միսս Վերինդերն, իհարկե, լսած կլինեք այդ մասին. նա կհարցուի փորձեր նրան և, այդպիսով, մի ամբողջ տարի անհայտ մնացած ճշմարտությունը ի հայտ կգար մեկ օրում:

— Ես չեմ կարող միստր Կանդիի վրա բարկանալ նրա այժմյան վիճակում,— նեղացած ասացի ես:— Բայց ինձ հետ խաղացած նրա խաղը, այնուամենայնիվ, ուխտադրո՞ւմ արարք է: Ես կարող եմ այն ներել, բայց մոռանալ՝ երբե՛ք:

— Միստր Բլեկ, չկա մի բժիշկ, որն իր բժշկական գործունեության ընթացքում այդպիսի ուխտադրություն կատարած չլինի: Ասիոնի նկատմամբ անգիտակ անվստահությունը Անգլիայում տարածված է ոչ միայն ցածր ու քիչ կրթված դասակարգերի մեջ: Ամեն մի քիչ թե շատ փորձառու բժիշկ հարկադրված է լինում ժամանակ առ ժամանակ խարել իր հիվանդներին, ինչպես միստր Կանդին է ձեզ խաբել: Ես չեմ արդարացնում ձեզ հետ արված շար կատակը: Ես սոսկ ձեզ շարադրում եմ զրդիչ պատճառների նկատմամբ առավել ճշգրիտ ներողամիտ հայացքը:

— Բայց ինչպե՞ս է դա կատարվել,— հարցրի ես:— Ո՞վ է ինձ ասիոն տվել առանց իմ գիտութեան:

— Չգիտեմ: Այդ մասին իր ամբողջ հիվանդութեան ընթացքում ոչ մի բառ չի ասել միստր Կանդին: Գուցե ձեր սեփական հիշողությունը ձեզ կհուշի, թե ում վրա պետք է կասկածել:

— Ոչ:

— Այդ դեպքում անօգուտ է գլուխ կոտրել դրա վրա: Ձեզ փիտոն են տվել թաքուն, այս կամ այն ձևով: Իսկ հիմա թողնենք դա և տվյալ դեպքում ավելի նշանակալի հանգամանքներից խոսենք: Կարդացեք իմ գրառումները, եթե կարող եք: Ընտելացեք այն մտքին, ինչ կատարվել է անցյալում: Ես մտադիր եմ ծայր աստիճան համարձակ և ապագայի տեսակետից անսպասելի ինչ-որ բան առաջարկել ձեզ:

Նրա վերջին բառերն աշխուժություն հաղորդեցին ինձ: Ես թղթերն աչքի անցկացրի այն կարգով, ինչ կարգով դրանք ինձ էր տվել էզրա Ջենինգսը: Սակավ գրոտած լիերթը դրված էր վերնից: Գրա վրա գրառված էին զառանցանքի ժամանակ միստր Կանդիի շուրթերից պոկված անկապ բառերն ու կրցկրտուր նախադասությունները.

...Միստր Ֆրենկլին Բլեկը... և հաճելի... երբ բժշկության... ամբարտավանությունը... թողնի... ընդունում է... անբնությամբ... ասում եմ... խանդարված են... բուժվի... ինձ ասում է... միան մեջ խարխափելով գնալը նույն բանն են... ճաշասեղանի շուրջը խմբված բոլորի ներկայությունամբ... ասում եմ... քուն եք փնտրում... խարխափելով... պատասխանում... մի կույրը մյուսին առաջնորդում է... գիտե դա ինչ է նշանակում... սրամիտ է... ի հեճուկս իր սուր լեզվի վրի մի դիշեր... լեզի Վերինդերի դեղարկող... առանց նրա գիտություն... քսանհինգ գրան... հաջորդ առավոտյան... ինչ կասեք միստր Բլեկ... այսօր դեղ ընդունել... երբեք չեք պատվի... Սխալվում եք, միստր Կանդի... հրաշալի... առանց ձեր... ապշեցնել... ճշմարտությունը... հրաշալի քնել եք լաուրանում ընդունելու... սրբ... ձեզ... պառկելուց առաջ... հիմա բժշկության...»

Ահա այն ամենը, ինչ գրված էր առաջին թղթի վրա: Ես սյն վերադարձրի էզրա Ջենինգսին:

— Սա այն է, ինչ դուք լսել եք հիվանդի մահճակալի մոտ, — ասացի ես:

— Բառ առ բառ, ինչ որ լսել եմ, — պատասխանեց նա, — միայն թե իմ սղագրական նոթերն արտագրելիս բաց եմ թողել նույն բառերի կրկնությունը: Որոշ նախադասություններ ու բառեր նա կրկնել է տասնյակ անգամ, երբեմն հիսուն

անգամ, նայած, թե ինչ նշանակութունն է տվել իր արտահայտած մտքին: Այս իմաստով կրկնությունները կցկտուր նախադասությունների կապը վերականգնելու որոշ միջոց են եղել ինձ համար: Իհարկե, ես չեմ պնդում,— ավելացրեց նա, ցույց տալով երկրորդ թերթը,— թե կարողացել եմ վերականգնել հենց այն արտահայտությունները, որ կօգտագործեր միստր Կանդին ինքը, եթե կապակցված խոսելու ընդունակ լիներ: Ես միայն պնդում եմ, որ անկապ շարադրանքի պատենշի միջով թափանցել եմ դեպի մշտական ու հետևողական հիմնական միտքը: Ինքներդ դատեցեք:

Ես դիմեցի երկրորդ թերթին, որը, ինչպես պարզվեց, առաջինի բանալին էր: Միստր Կանդիի զառանցանքն այստեղ դրառված էր սև թանաքով, իսկ նրա օգնականի վերականգնածը՝ կարմիր թանաքով:

Թե մեկը, թե մյուսը արտագրում եմ իրար ետևից, քանի որ և՛ զառանցանքը, և՛ դրա բացատրությունը այս էջերի վրա գտնվում են բավականաչափ իրար մոտիկ, այնպես որ դրանք հեշտությամբ կարելի է բաղդատել ու ստուգել:

«... Միստր Ֆրենկլին Բլեկը խելացի է և հաճելի, բայց երբ դատում է բժշկության մասին՝ ամբարտավանությունը պետք է թողնի: Նա ընդունում է, որ տառապում է անքնությամբ: Ես նրան ասում եմ, որ իր նյարդերը խանգարված են և, որ նա պետք է բուժվի: Նա ինձ ասում է, թե բուժվելն ու միայն մեջ խարխափելով գնալը նույն բանն են: Եվ նա այդ ասաց ճաշասեղանի շուրջը խմբված բոլորի ներկայությամբ: Ես նրան ասում եմ՝ դուք քուն եք փնտրում մթության մեջ խարխափելով և, դեղից բացի, ուրիշ ոչինչ ձեզ չի օգնի դրանելու այն: Սրան նա պատասխանում է, թե լսել է, ինչպես մի կույրը մյուսին առաջնորդում է, իսկ հիմա գիտե, թե դա ինչ է նշանակում: Սրամիտ է, բայց ես կարող եմ ստիպել, որ նա ի հեճուկս իր սուր լեզվի, քնի մի գիշերու Խոթ նա քնելու կարիք ունի, և լեզի Վերինդերի դեղարկղն իմ տրամադրությունն ատակ է: Առանց նրա գիտություն, գիշերադեմի-քսանհինգ դրան լաուզանում տալ նրան և զալ հաջորդ առավոտյան: «Ինչ կասեք, միստր Բլեկ, չե՞ք համաձայնվի այսօր դեղ ընդունել: Առանց դրա երեք չեք ազատվի անքնությունից»: «Մխալվում եք, միստր Կանդի, ես այս գիշեր հրա-

շալի քնել ևմ առանց ձեր դեղերի»։— Այդ ժամանակ նրան ապշեցնել, հայտնելով ճշմարտությունը. «Դուք այս գիշեր հրաշալի քնել եք լաուդանում ընդունելու շնորհիվ, սըր, որ ձեզ տրվել է ձեր պառկելուց առաջ։ Ի՞նչ կասեք հիմա բժշկության մասին»։

Երբ էզրա Զենինգսին վերադարձրի թերթիկը, բնականաբար, իմ առաջին տպավորությունը հիացմունքն էր այն հնարամտության հանդեպ, որով նա կարողացել էր ահավոր խառնաշփոթությունից սահուն ու կապակցված խոսք վերատեղծել։ Իրեն հատուկ համեստությամբ նա հարցով ընդհատեց ինձ, թե համաձայն եմ իր գրառումներից արված եզրակացությանը։

— Չե՞ք կարծում, արդյոք, ինչպես ես եմ կարծում, որ դուք լաուդանումի ազդեցությամբ եք արել այն ամենը, ինչ արել եք լեդի Վերինդերի տանը՝ նրա դստեր ծննդյան օրվա գիշերը։

— Ես շատ քիչ բան դիտեմ լաուդանումի ներգործության մասին, որպեսզի կարողանամ իմ սեփական կարծիքը կաղմել,— պատասխանեցի ես.— կարող եմ միայն ապավինել ձեր կարծիքին, ներքուստ համոզված լինելով, որ դուք իրավացի եք։

— Շատ լավ։ Հիմա հետևյալ հարցն է ծագում. դուք համոզված եք, ես էլ եմ համոզված, բայց ինչպե՞ս այդ համոզմունքը հաղորդենք ուրիշներին։

Ես մատնացույց արեցի մեր առջև սեղանին ընկած թրղթերը։

էզրա Զենինգսը գլուխն օրորեց.

— Սրանք անօգուտ են, միստր Բլեկ, բուլբորովին անօգուտ են ևրեք անհերքելի պատճառով։ Առաջինը, այս գրառումները կազմվել են այնպիսի հանգամանքներում, որոնք բուլբորովին նոր են մարդկանց մեծ մասի համար։ Արդեն սա դրանց դեմ է խոսում։ Երկրորդը, այս գրառումներում շարադրված է բժշկության մեջ նոր և դեռևս շտուգված մի տեսություն։ Սա նույնպես դրանց դեմ է խոսում։ Երրորդը, այս գրառումները իմն են. իմ հավաստիացումից բացի, ոչ մի ուրիշ ապացույց չկա, որ դրանք կեղծիք չեն։ Մտաբերեք, թե ես ինչ ասացի մարգագետնում, և ինքներդ ձեզ հարցրեք՝ ի՞նչ կշիռ կարող

են ունենալ իմ ասածները: Ո՛ր, բարձրաշխարհիկ հասարակութեան տեսանկյունից իմ դրառումները ոչ մի արժեք չունեն, բայց դրանք ցույց են տալիս այն եղանակը, որով կարող է ապացուցվել ձեր անմեղութեանը, իսկ այն պետք է ապացուցվի: Մենք պարտավոր ենք մեր համոզմունքը հիմնավորել փաստերով, և ես գտնում եմ, որ դուք կարող եք այդ անել:

— Ինչպե՞ս, — հարցրի ես:

— Նա սեղանի վրայով կոացալ դեպի ինձ:

— Սիրտ կանե՞ք դիմել մի համարձակ փորձի:

— Ինձ վրա ընկած կասկածը մաքրելու համար պատրաստ եմ ամեն ինչի:

— Կհամաձայնվե՞ք ժամանակավորապես որոշ անհամարութեան ենթարկվել:

— Ինչպիսին էլ լինի՝ միևնույնն է:

— Արդե՞ք անվերապահորեն կհետևեք իմ խորհուրդներին: Դա կարող է հանգեցնել այն բանին, որ հիմարները ծաղրեն ձեզ, դա կարող է հանգեցնել մտերիմների հորդորանքներին, որոնց կարծիքը դուք պարտավոր եք հարգել:

— Ասացեք, թե ինչ պետք է անեմ, — անհամբերութեամբ ընդհատեցի նրան, — և ինչ ուզում է լինի՝ ես դա կկատարեմ:

— Ահա թե ինչ պետք է անեք, միտքով ընկե՛ք, — պատասխանեց նա: — Դուք պետք է երկրորդ անգամ անգիտակցաբար զոզանաք իւրանաքարը այնպիսի մարդկանց ներկայութեամբ, որոնց վկայութեանը չի կարող կասկածի ենթարկվել:

Ես վեր թռա տեղիցս: Փորձեցի խոսել... Ես կարող էի միայն նայել նրան:

— Կարծում եմ, որ դա կարելի է անել, — շարունակեց նա, — և դա կարվի, եթե միայն դուք կամենաք ինձ օգնել: Աշխատեցեք հանգստանալ: Նստեք ու լսեք, թե ինչ կասեմ ձեզ: Դուք նորից սկսել եք ծխել, ինքս եմ դա տեսել: Վաղո՞ւց է դա եղել:

— Մոտ մեկ տարի առաջ:

— Հիմա առաջվանից ավելի շատ եք ծխում, թե քիչ:

— Ավելի շատ:

— Նորից կթողնե՞ք այդ սովորութեանը: Նկատի ունեցեք, միանգամից, ինչպես որ այն ժամանակ եք թողել:

Ես աղոտ կերպով սկսեցի հասկանալ նրա նպատակը — կթողնեմ հենց այս՝ ըոպեից, — պատասխանեցի ես: — Եթե հետևանքները լինեն նույնպիսին, ինչպիսին էին անցյալ տարվա հուլիսին, — ասաց էզրա Զենինգսը, — եթե դուք նորից տառապեք անքնությամբ, մենք առաջին քայլը կատարած կլինենք: Մենք նորից ձեզ կհասցնենք այն նյարդային վիճակին, որի մեջ դուք եղել եք ծննդյան օրվա գիշերը: Եթե մենք կարողանանք գոնե մոտավորապես վերականգնել այն ժամանակ ձեզ շրջապատող իրադրությունը, ելին մենք կարողանանք նորից ձեր մտքերը զբաղեցնել ավաստի հետ կապված դանազան հարցերով, որոնք առաջ ձեզ անհանգստացրել են, ապա մենք ֆիզիկապես ու բարոյապես ձեզ կդնենք այնպիսի վիճակում, որը հնարավորին շափ մոտ է այն վիճակին, երբ դուք ափիոն եք ընդունել անցյալ տարի: Եվ այս դեպքում մենք կարող ենք հուսալ, որ ափիոն ընդունելու կրկնությունը շատ թե քիչ շափով կտանի դեպի առաջին անգամ ընդունելուց առաջացած հետևանքի կրկնությունը: Ահա, կարճ ասած, իմ առաջարկը: Իսկ հիմա ձեզ բացատրեմ, թե ինչու եմ այդպիսի փորձը հնարավոր համարում:

Ես շրջվեց դեպի իր մոտ դրված գիրքը և բացեց այն էջը, որտեղ թուղթ էր դրված:

— Չկարծեք, թե ես մտադիր եմ ձեզ ձանձրացնել ֆիզիոլոգիայի վերաբերյալ դասախոսությունամբ, — ասաց նա: — Ես իմ պարտքն եմ համարում ապացուցել, որ ձեզ խնդրում եմ այդ փորձին դիմել ո՛չ իմ ինչ-որ տեսությունն արդարացնելու համար: Որինականացված սելըրունքներն ու ճանաչված հեղինակությունները հաստատում են իմ տեսակետը: Մի հինգ ըոպե ինձ արժանացրեք ձեր ուշադրությունը, և ես պատրաստ կլինեմ ձեզ ապացուցելու, որ առաջարկությունը, որքան էլ այն տարօրինակ թվա, հիմնված է գիտական տվյալների վրա: Ահա, առաջինը, նշանավոր բժիշկ Կարպենտերի շարադրած այն ֆիզիոլոգիական սկզբունքը, որին ես ապավինում եմ: Ինքնիրոգ կարդացեք:

Ես ինձ տվեց գրքի մեջ որպես էջանիշ դրված Ռուլլը: Վրան հետևյալ տողերն էին դրված.

«Շատ հիմքեր կան մտածելու, որ գիտակցություն կողմից մեկ անգամ ընկալված ամեն մի զգայական տպավոր-

րություն, այսպես ասած, արձանագրվում է մեր ուղեղում և կարող է հետագայում վերարտադրվել, թեև տվյալ ամբողջ ժամանակամիջոցում մենք այն չենք դիտակցել»:

— Առայժմ ամեն ինչ պարզ է, այնպես չէ՞, — հարցրեց էզրա Զենինգսը:

— Միանդամայն սլարզ է:

Նա սեղանի վրայով իմ կողմը հրեց բացած դիրքը և ցույց տվեց մատիտով նշված տեղը:

— Կարդացե՛ք այս նկարագրությունը, — ասաց նա, — որը, ինչպես ինձ թվում է, ուղղակի կապ ունի ձեր վիճակի և այն փորձի հետ, որին ես ձեզ համոզում եմ դիմել: Կարդալուց սուաջ, միստր Բլեկ, նկատի առե՛ք, որ ես վկայակոչում եմ անգլիական մեծագույն ֆիզիոլոգներին մեկին: Ձեր ձեռքի գիրքը բժիշկ էլիոտսոնի «Մարդու ֆիզիոլոգիան» է, իսկ այն դեպքը, որ վկայակոչում է բժիշկը, հաղորդել է հուշակվոր հեղինակություն միստր Կոմբան:

Այն հատվածը, որ նա ցույց էր տալիս, պարունակում էր հետևյալը.

«Բժիշկ էյբան, — ասում է միստր Կոմբան, — ինձ հաղորդել է իուլանդացի մի բեռնակրի մասին, որը սթափ վիճակում մոռանում էր, թե ինչ էր արել հարբած ժամանակ, բայց խմելուց հետո վերհիշում էր հարբած վիճակում արածները: Մի անգամ, հարբած լինելով, նա բավականաչափ թանկարժեք մի փաթեթ է կորցրել և սթափ պահերին չի կարողացել որևէ բացատրություն տալ դրա վերաբերյալ: Հաջորդ անգամ, երբ խմել է, հիշել է, որ փաթեթը թողել է մի տան մեջ, և քանի որ վրան հասցե չի եղել, ապա այն մնացել է այնտեղ, և բեռնակիրը գնացել ու վերցրել է»:

— Դարձյա՞լ ամեն ինչ պարզ է, — հարցրեց էզրա Զենինգսը:

— Ավելի պարզ հնարավոր չէ:

Նա թուղթը դրեց նախկին տեղն ու գիրքը փակեց:

— Հիմա համոզվեցի՞՞ք, որ ես խոսել եմ՝ հեղինակությունների վրա հենվելով, — հարցրեց նա: — Եթե ոչ, ապա բավական է, որ դիմեմ այս գրադարակներին, իսկ դուք կարողա՞ք նշածս հատվածները, և վերջնականապես կհամոզվե՞ք:



— Կիովին բավարարւած եմ՝ առանց այլևս թեկուզ մի բառ կարգալու:

— Այդ դեպքում մենք կարող ենք վերադառնալ այս գործում ձեր ունեցած անձնական հետաքրքրութիւններին: Ես պարտավոր եմ ձեզ ասել, որ այդ փորձի դեմ կարելի է ինչոր առարկութիւններ բերել: Եթե դուք կարողանայիք այս տարի ստեղծել ճիշտ և ճիշտ այնպիսի պայմաններ, ինչպիսիք եղել են անցյալ տարի, ապա, անկասկած, մենք ճիշտ նույնպիսի արդյունքի կհանգեցինք: Բայց դա պարզապէս հնարավոր չէ: Մենք կարող ենք սոսկ հուսալ, որ կմտտենանք այդ պայմաններին և, եթե չկարողանանք ձեզ վերադարձնել դեպի հնարավորին շափ նույն անցյալը, մեր փորձը չի հաջողվի: Իսկ եթե կարողանանք (ևս հույս ունեմ, որ կհաջողվի), ապա գոնե կկարողանանք տեսնել այն ամենի կրկնութիւնը, որ դուք արել եք միսս Ռեչելի ծննդյան օրվա գիշերը, և դա ամեն մի ողջամիտ մարդու կհամոզի, որ դուք մեղավոր չեք և ալմաստը գիտակցաբար չեք հափշտակել: Միստր Էլեկ, ես ենթադրում եմ, որ այժմ երկու կողմն էլ լուսաբանել եմ ամենայն անաշտութեամբ: Եթե ձեզ համար որեէ բան պարզ չէ, ասացեք ինձ, և ես կաշխատեմ դա պարզել ձեզ համար:

— Այն ամենը, ինչ որ ինձ բացատրեցիք, — ասացի ես, — շատ լավ հասկացա: Բայց, խոստովանում եմ, ինչ-որ բան սարակուսանքի է մատնում ինձ:

— Ի՞նչը:

— Ես չեմ հասկանում ափիոնի՝ ինձ վրա թողած ազդեցութիւնը: Ես չեմ հասկանում, թե ինչպէս եմ դնացել աստիճաններով ու միջանցքներով, բացել ու փակել պահարանի դարակները և նորից վերադարձել իմ սենյակը: Այս բոլորը ակտիվ գործողութիւններ են: Ես կարծել եմ, թե ափիոնը նախ բթացնում է, իսկ հետո նոր քուն բերում:

— Ընդհանուր մոլորութիւն է ափիոնի հարցում, միստր Էլեկ: Այս պահին ես միտքս սրում եմ լաուզանում ընդունելու ազդեցութեան տակ, որը տասն անգամ ավելի ուժեղ է նրանից, որ ձեզ տվել է միստր Կանդին: Բայց իմ հեղինակութեանը չապավինեք նույնիսկ այն ժամանակ, երբ ես խոսում եմ անձնական փորձիս հիման վրա: Ես կանխատեսել

էի, որ դուք կառարկեք, և դարձյալ նախապես ապահովել նմ մի վկայութիւն, որը կշիռ կունենա և՛ ձեր աչքում, և՛ ձեր բարեկամների աչքում:

Նա ինձ տվեց իր մոտ սեղանին դրված երկու գրքից մեկը:

— Ահա,— ասաց նա,— «Ափիոն ընդունող անդլիացու խոստովանութիւնները» նշանավոր գիրքը: Վերցրեք ձեզ հետ ու կարդացեք: Նշածս հատվածում ասվում է, որ երբ զը Կուշկին մեծ քանակութեամբ ափիոն էր ընդունում՝ զնում էր օպերա երաժշտութիւն վայելելու, կամ էլ շաբաթ երեկոյան շրջում էր Լոնդոնի շուկաներում ու հետաքրքրութեամբ դիտում իրենց կիրակնօրյա հացը վաստակելու շքավորների ջանքերը: Այսպիսով, ափիոնի ազդեցութեան տակ զտնվող մարդը կարող է ակտիվ գործողութիւններ կատարել և անցնել տեղից-տեղ:

— Դուք ինձ պատասխանեցիք,— ասացի ևս,— բայց ոչ լրիվ. ինձ դեռ չեք բացատրել ափիոնի՝ ինձ վրա ունեցած ներգործութիւնը:

— Կաշխատեմ ձեզ պատասխանել մի քանի խոսքով,— սոսայ էզրա Զենինգսը:— Ափիոնի ներգործութիւնը մեծ մասամբ լինում է երկակի. նախ՝ գրգռող, հետո՝ հանգստացնող: Գրգռող ազդեցութեան դեպքում ձեր գիտակցութեան մեջ մնացած ամենավերջին և առավել վառ տպավորութիւնները (տվյալ դեպքում՝ ալմաստին վերաբերող տպավորութիւնները), Լրնի, ձեր հիմանդագին-զգայական նյարդային վիճակում իրենց են ենթարկել ձեր բանականութիւնն ու ձեր կամքը այնպես, ինչպես սովորական քունն է իրեն ենթարկում ձեր բանականութիւնն ու ձեր կամքը: Դրա ազդեցութեամբ ալմաստի ապահովութեան համար բոլոր երկյուղները, որ դուք կարող էիք ունենալ ցերեկը, պետք է կամաց-կամաց կասկածի վիճակից անցնեն վստահութեան վիճակի, պետք է ձեզ մղեն ալմաստը պահպանելու գործնական մտադրութեան, այդ նպատակով ձեր քայլերն ուղղեն դեպի այն սենյակը, որտեղ դուք մտել եք, և ձեր ձեռքը ղեկավարեն այնքան ժամանակ, մինչև որ պահարանիկում կգտնեիք այն դաբակը, որի մեջ դրված էր քարը: Դուք ամեն ինչ արել եք ափիոնով հարբած վիճակում: Հետո, երբ հանգստացնող ազդեցութիւնն սկսել է գերակշռել գրգռող ազդեցութեան նկատ-

Ճամբ, դուք աստիճանաբար ավելի ու ավելի և բնույացնել և ի վերջո ընկել ընդարմացման մեջ: Դրան հաջորդել է խոր չունը: Երբ լույսը բացվել է և ամփոռնի ներգործությունն. անցել է, դուք արթնացել եք բոլորովին անտեղյակ, թե ինչ և բարեկ զիջեցը: Այս բոլորը պարզ է ձեզ համար:

— Այն աստիճան պարզ, — պատասխանեցի հս, — որ ուզում եմ շարունակեք: Դուք ինձ ցույց տվիք, թե ինչպես եմ մտել սենյակ և ինչպես եմ վերցրել ավմաստը: Բայց միսս Վերինդերը տեսել է, թե ինչպես ես նորից ավմաստը ձեռքիս դուրս եմ եկել սենյակից: Կարո՞ղ եք այդ պահից սկսած հետևել իմ արարքներին: Կարո՞ղ եք կռահել, թե հետո ինչ եմ արել:

— Հիմա անցնում եմ հենց այդ կետին, — պատասխանեց նա: — Հույս ունեմ, որ իմ առաջարկած փորձը ոչ միայն կապացուցի ձեր անմեղությունը, այլև կօգնի գտնելու կորած ավմաստը: Երբ դուք ավմաստը բռնած դուրս եք եկել միսս Վերինդերի հյուրասենյակից, ամենայն հավանականությամբ, վերադարձել եք ձեր սենյակը...

— Այո: Հետո ի՞նչ եմ արել:

— Հնարավոր է, միտքը բլեկ (հաստատապես չեմ պրնդում), որ ավմաստը փրկելու ձեր միտքը բնականորեն հանգեցրել է ավմաստը թաքցնելու մտադրության և դուք այն պահել եք ձեր ննջասենյակում ինչ-որ տեղ: Այս դեպքում ձեզ հետ կարող է կատարվել նույնը, ինչ որ կատարվել է իուանչացի բեռնակրի հետ: Երկրորդ անգամ ամփոռն ընդունելուց նետո, դուք, թերևս, հիշեք այն տեղը, որտեղ ավմաստը թաքցրել եք առաջին անգամ ամփոռնի ազդեցությամբ:

Այս անգամ արդեն իմ հերթն էր մի նոր բան հաղորդելու էզրա Զենինգսին: Նախքան նա կհասցնեք շարունակել իր խոսքը, ես կանգնեցրի նրան.

— Վերջինը անհնարին է. այս պահին ավմաստը գտնվում է կոնդոնում:

Նա մեծ զարմանքով նայեց ինձ.

— Կոնդոնո՞ւմ, — կրկնեց նա: — Ինչպե՞ս է լեզի Վերինդերի տնից կոնդոն ընկել:

— Դա ոչ ոք չգիտե:

— Դուք ավմաստը միսս Վերինդերի սենյակից դուրս եք

բերել ձեր սևփական ձեռքերով: Ինչպե՞ս է այն ձեռնից վերց-  
վել:

— Բոլորովին գաղափար չունեմ:

— Առավոտյան, երբ արթնացել եք, ալմաստը տեսե՞լ եք:

— Ոչ:

— Այն դարձյալ վերադարձվել է միսս Վերինգերի՞ն:

— Ոչ:

— Միստր Ռլեկ: Այստեղ բացատրություն պահանջող բա-  
ներ կան: Կարո՞ղ եմ հարցնել, թե ինչ ձևով է ձեզ հայտնի  
դարձել, որ ալմաստն այս պահին գտնվում է Լոնդոնում:

Ծս նույն հարցը տվել էի միստր Բրեֆին, երբ Լոնդոն  
վերադառնալուց հետո հարցուփորձում էի Լուսնաքարի մա-  
սին: Հզրա Ջենինգսին պատասխանելիս կրկնեցի այն, ինչ  
ինքս լսել էի փաստաբանից և ինչ արդեն հայտնի է այս  
էջերն ընթերցողին: Նա պարզորոշ ցույց տվեց, որ իմ պա-  
տասխանն իրեն չի գոհացնում:

— Ձեր փաստաբանի և ձեր հանդեպ ունեցածս ամենայն  
հարգանքով հանդերձ, — ասաց նա, — ես մնում եմ իմ առա-  
ջին կարծիքին: Ինձ քաջ հայտնի է, որ այն հիմնվում է միայն  
ենթադրության վրա: Բայց, ներեցեք, եթե ձեզ հիշեցնեմ,  
սր ձեր կարծիքն էլ է միայն ենթադրության վրա հիմնվում:

Նրա տեսակետը բոլորովին նոր էր ինձ համար: Ծս ան-  
հանգիստ սպասում էի, թե ինչպես է նա պաշտպանելու այն:

— Ծս ենթադրում եմ, — շարունակեց հզրա Ջենինգսը, —  
որ դուք ափիոնի ազդեցությամբ ամլաստը վերցրել եք, որ-  
պեսզի պահեք ապահով տեղում. այդ նույն ազդեցությամբ  
դուք կարող էիք այն պահած լինել որևէ տեղ ձեր սենյակում:  
Դուք ենթադրում եք, որ հնդիկները չէին կարող սխալվել:  
Նրանք ալմաստի համար գնացել են Լյուկեբրի տունը. հետե-  
վաբար ալմաստը պետք է գտնվի միստր Լյուկեբրի մոտ: Որևէ  
ապացույց ունե՞ք, որ Լուսնաքարը տարվել է Լոնդոն: Ձե՞ որ  
դուք ի վիճակի չեք նույնիսկ կռահելու, թե ով և ինչպես է  
այն տարել լեդի Վերինգերի տնից: Ապացույցներ ունե՞ք, որ  
ալմաստը զրավ է զրվել Լյուկեբրի մոտ: Նա հստատացնում  
է, թե երբեք չի լսել Լուսնաքարի մասին, իսկ նրա բանկիրի  
ստացականում հիշատակվում է միայն մի թանկարժեք իր:

Հնդիկները ենթադրում են, թե միստր Լյուկերը ստում է, և դուք դարձյալ ենթադրում եք, որ հնդիկներն իրավացի են: Ի պաշտպանութուն իմ կարծիքի, կարող եմ միայն ասել, որ դու հնարավոր է: Իսկ դուք, միստր Բլեկ, տրամաբանորեն կամ իրավաբանորեն դատելով, ի՞նչ կարող եք ասել ի պաշտպանութուն ձեր կարծիքի:

Խիստ էր ասված, բայց չէր կարելի ժխտել, որ իրավացի էր ասված:

— Խոստովանում եմ, դուք ինձ վարանման մեջ գցեցիք, — պատասխանեցի ես: — Թույլ կտա՞ք միստր Բրեֆին գրել այն, ինչ ձեզնից լսեցի:

— Ընդհակառակը, ես ուրախ կլինեմ, եթե դուք գրեք միստր Բրեֆին: Այդքան փորձառու մարդու հետ խորհրդակցելով, մենք, թերևս, այդ գործը տեսնենք մի նոր լույսի տակ: Իսկ առայժմ դառնանք ափիոնով կատարելիք մեր փորձին: Որոշված է, որ դուք ծխելը թողնում եք անմիջապե՞ս:

— Անմիջապես:

— Սա առաջին քայլն է: Հաջորդ քայլը պետք է լինի այն, որ հնարավորին չափ ճշգրտորեն վերստեղծվի այն իրադրուհյունը, որի մեջ եղել էք անցյալ տարի:

Ինչպե՞ս կարելի էր դա անել: Լեդի Վերինդերը մտնել էր Ուելչն ու ես, քանի դեռ իմ վրայից չէր հանված գողության կասկածանքը, բաժանված էինք անվերադարձ կերպով: Գող-Ֆրի էր լուսյթը ճանապարհորդում էր մայր ցամաքում: Պարզապես հնարավոր չէր հավաքել այն մարդկանց, որոնք տանն էին եղել, երբ ես վերջին անգամ գիշերել էի այնտեղ:

Այս առարկությունները շփոթեցրին էգրա Ջենինգսին: Նա ասաց, որ շատ քիչ նշանակություն է տալիս նույն մարդկանց հավաքելուն, քանի որ անտեղի կլինեի սպասել, թե նրանք նույն դիրքը կգրավեն իմ նկատմամբ, ինչ դիրք որ զբաղել էին այն ժամանակ:

Մյուս կողմից, նա փորձի հաջողության համար անհրաժեշտ էր համարում, որ ես շուրջս տեսնեի այն նույն առարկաները, որոնք ինձ շրջապատել էին, երբ ես վերջին անգամ Լոլել էի տանը:

— Իսկ ամենակարևորն այն է, — ավելացրեց նա, — որ դուք քնեք նույն սենյակում, որտեղ քնել եք ծննդյան օրվա

գիշերը, և կահավորանքն էլ ճիշտ նույն ձևով լինի: Աստի-  
ճանները, միջանցքները և միսս Վերինդերի հյուրասենյակը  
նույնպես պետք է վերականգնվեն այն տեսքով, ինչ տեսքով,  
որ դուք տեսել եք վերջին անգամ: Վճռականապես անհրա-  
ժեշտ է, միստր Բլեկ, կահույքը նույն ձևով դնել տան այն  
մասում, որտեղից, թերևս, այժմ դուրս է բերված այն: Դուք  
ձեր սիգարները դոհաբերելու կարիք չեք ունենա, եթե միսս  
Վերինդերի տանը համապատասխան վերադասավորում անե-  
լու համար նրա թույլտվությունը չստանանք:

— Իսկ ո՞վ նրան կդիմի այդ թույլտվության համար,—  
հարցրի ես:

— Դուք չե՞ք կարող դիմել:

— Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող: Ալմաստի  
անհետացման պատճառով մեր միջև տեղի ունեցածից հետո  
ես չեմ կարող ոչ տեսնվել նրա հետ, ոչ էլ գրել նրան:

էլբրա Զենինգսը լռեց և մի պահ մտածմունքի մեջ ըն-  
կավ:

— Կարո՞ղ եմ մի փափկանկատ հարց տալ ձեզ,— հարց-  
րեց նա: (Ես գլխով արեցի):— Ձեր բերնից թռած երկու-ե-  
րեք նախադասությունից ճի՞շտ եմ եզրակացրել, որ անցած  
ժամանակներում դուք ոչ այնքան սովորական հետաքրքրու-  
թյուն եք ցուցաբերել միսս Վերինդերի նկատմամբ:

— Միանգամայն ճիշտ է:

— Դա փոխադա՞րձ է եղել:

— Փոխադարձ է եղել:

— Ի՞նչ եք կարծում, միսս Վերինդերին կհետաքրքրի՞ այն  
փորձը, որը կարող է ապացուցել ձեր անմեղությունը:

— Ես դրանում հավատացած եմ:

— Այդ դեպքում ինքս կգրեմ միսս Վերինդերին, եթե դուք  
թույլ տաք:

-- Եվ նրան կպատմեք այն առաջարկի մասին, որ արել եք  
ի՞նձ:

— Նրան կպատմեմ այն ամենը, ինչ այսօր եղել է մեր  
միջև:

Ավելորդ է ասելը, որ ես ոգևորվածամբ ընդունեցի ինձ  
առաջարկված ծառայությունը:

— Ես դեռ կհասցնեմ ուղարկել այսօրվա փոստով,— նա-

յելով ժամացույցին՝ ասաց նա:— Չմոռանաք, հյուրանոց վերադառնալուց հետո, փակի տակ դնել ձեր սիգարները: Վաղն առավոտ կգամ իմանալու, թե ինչպես եք անցկացրել գիշերը:

Ես վեր կացա, որպեսզի հրածեղտ տամ նրան. աշխատում էի իմ խորին երախտադիտությունը հայտնել նրա բարության համար: Նա կամացուկ սեղմեց ձեռքս:

— Հիշո՞ւմ եք, ձեզ ինչ ասացի ցախիի հարթավայրում, — պատասխանեց նա:— Միտոր Բլեկ, եթե կարողանամ այս փոքրիկ ծառայությունը մատուցել ձեզ, դա ինձ կթվա արևի լույսի վերջին շողը, որ ընկնում է երկար ու մառախլապատ շրվա երեկոյի վրա:

Մենք բաժանվեցինք: Դա հունիսի տասնհինգին էր: Հաջորդ տասը օրերի դեպքերը (դրանցից յուրաքանչյուրը քիչ թե շատ վերաբերում է այն փորձին, որին ես պասսիվ կերպով եմ մտսնակցել), ինչպես որ դրանք կատարվել են, բառ առ բառ գրանցվել են միտոր Կանդիի օգնականի օրագրում: Նրա էջերում ոչինչ չի թաքնված և ոչինչ չի մոռացված: Բող էզրա Ջենինգսը պատմի, թե ինչպես կատարվեց ափիոնով փորձը և ինչով այն վերջացավ:



## ՉՈՐՐՈՐԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

ուր վերցվել է էգրա Ձեռնագրի օրագրից

1849, հունիսի 15: Թեև ինձ ընդհատում էին իմ հիվանդ-ներն ու իմ ցավը, ես ավարտեցի միսս Վերինդերին ուղղված նամակս և հաջողությամբ ուղարկեցի այսօրվա փոստով: Ինձ շհաջողվեց ուղածիս պես կարճ դրել: Բայց, կարծում եմ, պարզ եմ գրել: Նամակը նրան կատարյալ ազատություն է տալիս որոշելու այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Եթե նա համաձայնվի աջակցել փորձին՝ կհամաձայնվի կամավոր կերպով և ոչ թե միտքով Ֆրենկլին Բլեկի կամ իմ հանդեպ ունեցած սղորմածությունից:

Հունիսի 16: Ահավոր գիշերից հետո ուշ վեր կադա. երեկ ընդունա՞ս ափիոնից հետո ինձ տանջում էին մղձավանջ-ները: Մերթ պատվում էի դատարկ տարածության մեջ՝ շրթ-ջապատված բարեկամների ու թշնամիների ուրվականներով.



մերթ այն սիրելի դեմքը, որը երբեք չեմ տեսնի, կանգնում էր իմ անկողնու գլխավերևում՝ ֆոսֆորափայլ գիշերվա խավարում, ծամածուծությունների անհլուփ ու ծաղրելով ինձ։ Սովորական ցավի թևքն նոպան՝ սովորական ժամին, վաղ առավոտյան, նույնիսկ հաճելի էր ինձ որպես փոփոխություն։ Ցավը ցրեց անսիրտները և միանգամայն տանելի էր։

Վատ անցկացրած գիշերից հետո ես ուշ վեր կացա և այդ պատճառով էլ ուշացա միստր Ֆրենկլին Բլեկի մոտ գնալուց։ Նրան գտա բազմոցի վրա պառկած. ջրի հետ խառնած կոնյակ էր խմում և պաքսիմատ կրծում։

— Սկսում եմ այնքան լավ, որքան դա հնարավոր է, — ասաց նա. — ծանր, անհանգիստ գիշեր. ախորժակի լիակատար բացակայություն այսօր առավոտյան։ Ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես եղել է անցյալ տարի, երբ թողել էի ծխելը։ Որքան շուտ պատրաստ լինեմ երկրորդ անգամ ափիոն ընդունելու, այնքան հաճելի կլինի ինձ համար։

— Դուք դա կստանաք հնարավորին շափ շուտ, — ասացի ես. — Իսկ առայժմ մենք պետք է բոլոր ուժերով պահպանենք ձեր առողջությունը։ Եթե ձեր ուժերը ջլատվեն, ապա փորձից ոչինչ չի ստացվի։ Փորձեք բանալ ձեր ախորժակը. նախաճաշից առաջ շրջեք ձիով կամ ուղղակի զբոսներ լճարմ օդում։

Հիվանդներին ստուգայցի գնալու ժամանակն էր, և ես հրաժեշտ տվի միստր Բլեկին. բայց թե նրա հետ ունեցած այդ կարճատև տեսակցությունից հետո էլ ես լավ ու երջանիկ էի զգում ինձ։

Ո՞րն է այդ մարդու գրավչության պատճառը։ Թե՞ դա լիայն նշանակում է, որ ես զգում եմ ասարբերությունը անկեղծ սիրալիրության, որով նա ինձ թույլ տվեց ծանոթություն հաստատել իր հետ, և այն անողոք զգվանքի ու անվստահության միջև, որով ինձ վերաբերվում են մնացած մարդիկ։ Թե՞ իրոք նրա մեջ կա մի բան, որը համապատասխանում է մարդկային կարեկցանքի նկատմամբ իմ ձգտումին, ձգտում, որը ապրել է շատ տարիների մենակություն ու հալածանք և գնալով ավելի ու ավելի է ուժեղանում, որքան ավելի ու ավելի է մոտենում այն ժամանակը, երբ՝ ես կղաղարեմ և՛ զգալուց, և՛ հանդուրժելուց, ինչքան անօգուտ են

այս հարցերը: Միստր Բլեկն իմ մեջ նոր հետաքրքրութիւն առաջացրեց կյանքի նկատմամբ: Թող դա բավական լինի. ինչո՞ւ փորձել հասկանալ, թե որն է այդ նոր հետաքրքրութիւնը:

Հունիսի 17: Այսօր առավոտյան նախաճաշից առաջ միստր Կանդին ինձ ասաց, թե երկու շաբաթով հյուր է գնում Անգլիայի հարավում ապրող իր ընկերոջ մոտ: Հիվանդներին վերաբերող մասնավոր շատ խորհուրդներ տվեց, կարծես հիմա շատ ավելի մեծ փորձ ունեւր, քան հիվանդութունից առաջ էր ունեցել:

Միստր Կանդիի մեկնելուց հետո փոստը բերեց միսս Վերինդերի պատասխանը:

Մքանչելի նամակ էր: Դրանով ես շատ մեծ կարծիք կազմեցի նրա մասին: Նա չի աշխատում թաքցնել, որ մեր փորձն իրեն հետաքրքրում է. նա ամենայն սիրալիրութեամբ ասում է, որ իմ նամակն իրեն համոզել է միստր Բլեկի անմեղութեան մեջ և ամենևին հարկ չկա այն նաև ապացուցելու նա նույնիսկ իրեն կշտամբում է (միանգամայն անհիմն կերպով), որ ժամանակին չի իմացել գաղտնիքը: Այդ բոլոր հավաստիացումների պատճառը, ըստ՝ երևույթին, ո՛չ միայն այն անարդարութունը հնարավորին շփոշուտ շտկելու մեծահոգի ցանկութունն էր, որ ինքն ակամայից ցուցաբերել էր մեկ ուրիշ մարդու նկատմամբ: Պարզ էր, որ նա այդ մարդուն սիրելուց չէր դադարել նաև իրենց անջատման ամբողջ ժամանակամիջոցում: Աղջկա ուրախութունը, որ նա՝ միստր Բլեկը, արժանի է սիրված լինելու, նամակի շատ հստակօրէն երևում շատ անմեղ ձևով դուրս է գալիս ընդունված պայմանականութուններից, հակառակ այն զսպվածութեան, որ պահանջում է կողմնակի մարդուն ուղղված նամակը: Հնարավոր է, արդյոք (հարցնում եմ ինքս ինձ՝ այդ զմայլելի նամակը կարդալով), որ աշխարհի բոլոր մարդկանցից հենց ես եմ նախանշված միջոց լինելու այդ երիտասարդ մարդկանց նորից միավորելու համար: Իմ երջանկութունը ոտնակոխ է արվել, իմ սերը հափշտակվել է: Մի՞թե ես կապրեմ մինչև այն օրը, որ տեսնեմ ուրիշ մարդկանց՝ իմ ձևորոշումով ստեղծած երջանկութունը, նրանց վերածնված սերը:

Նամակում երկու խնդրանք կար: Դրանցից առաջինն էր՝

այս նամակը ցույց շտալ միտոր Ֆրենկլին Բլեկին: Ես իրավունք ունեմ միայն նրան ասելու, որ միաս Վերինդերը սիրով իր տունը դնում է մեր լիակատար սրամադրության տակ. քայց միայն այսքանը:

Այս խնդրանքը կատարելը հեշտ է: Սակայն նրա երկրորդ խնդրանքը լուրջ դժվարություններ է պատճառում ինձ:

Միսս Վերինդերը, շոտհանալով միտոր Բետտերեջին տված այն ցուցումով, որ ես կատարի իմ բոլոր կարգադրությունները, խնդրում է թույլ տալ, որ ինքն ինձ օգնի անձամբ հրահեղով, թե ինչպես է նախկին տեսքին բերվելու իր հյուրասենյակը: Նա իմ պատասխանին է սպասում, որպեսզի մեկնի Յորքշիր և որպես վկաներից մեկը ներկա լինի այն գիշեր, երբ փոխնի օդնությամբ փորձը կկատարվի երկրորդ անգամ:

Այստեղ դարձյալ ինչ-որ մի պատճառ կա, և ինձ թվում է՝ ես կարող եմ այն իմանալ:

Այն, ինչ միսս Վերինդերն ինձ արգելեց ասել միտոր Ֆրենկլին Բլեկին (այդպես եմ ես դա բացատրում), շտուպում է նրան ասել անձամբ, նախքան կկատարվի այն փորձը, որը միտոր Բլեկի վարկը վերահանգնելու է մնացած մարդկանց աչքում: Ես հասկանում եմ և հիանում նրան հնարավորին չափ շուտ արդարացնելու մեծահոգի ցանկությամբ, լսպասելով՝ կապացուցվի՞, թե չի ապացուցվի նրա անմղությունը: Ռեչելը, խեղճը, ուզում է շեղոբացնել նրան հասցրած վիրավորանքը: Բայց դա անել հնարավոր չէ: Ես չնչին իսկ կասկած չունեմ, որ հանդիպման հարուցած երկուստեք հուզմունքը, հին զգացմունքները, որ այն կարթնացնի, նոր հույսերը, որ այն կվերակենդանացնի, միտոր Բլեկի ուղեղի վրա իրենց ներգործությամբ կործանարար կլինեն մեր փորձի հաջողության համար: Արդեն հիմա էլ բավականին դժվար է նրա մեջ վերստեղծել այն նույն սրամադրությունները, որպիսիք նա ունեցել է անցյալ տարի: Իսկ եթե նոր հետաքրքրություններ ու նոր զգացումներ հուզեն նրան, ապա փորձն ուղղակի ապարդյուն կլինի:

Գրանով հանդերձ, թեև ես դա գիտեմ, այնուամենայնիվ, չեմ համարձակվում հիասթափություն պատճառել նրան: Ես պետք է աշխատեմ այնպիսի մի միջոց գտնել, որն ինձ թույլ կտար «այո» ասել միսս Վերինդերին, ինձ շղրկելով միտոր

Ֆրենկլին Բլեկին ծառայութիւն մատուցելու հնարավորութիւնից:

Փամբ երկուսն է: Հենց նոր վերադարձա հիվանդներին կատարած ստուգայցից, անշուշտ նախապես լինելով հյուրանոցում:

Միստր Բլեկն այս գիշեր, իր ասածի համաձայն, անցկացրել է այնպես, ինչպես և նախորդը: Նա անընդհատ արթնացել է, սակայն այսօր ավելի լավ է զգում իրեն, որովհետև քնել է երեկ ճաշից հետո: Ստճաշյա այդ քունը, անտարակույս, եղել է ձիով կատարած այն զբոսանքի արդյունքը, որ ես էի խորհուրդ տվել նրան: Վախենում եմ, որ պետք է դադարեցնել այդ կենարար մոցիոնը թարմ օդում: Նա չպետք է լրիվ առողջ լինի, ինչպես որ չպետք է նաև լրիվ հիվանդ լինի:

Նա դեռ լուր չի ստացել միստր Բրեֆից: Նա անհամբերութեամբ ուզում էր իմանալ՝ ես միսս Վերինդերից պատասխան ստացել՞ էմ, թե ոչ:

Ես նրան պատմեցի միայն այն, ինչ ինձ թույլ էր տրված, և ոչ ավելին: Բոլորովին անօգուտ է պատրվակներ հորինել այդ նամակը նրան ցույց շտալու համար: Նա, խեղճ մարդ, ցավով ինձ ասաց, որ հասկանում է այն նրբանկատութիւնը, որն ինձ խանգարում է ցույց տալու նամակը:

— Հասկանալի է, նա համաձայնվում է՝ ելնելով քաղաքավարութիւնից և արդարամտութեան զգացումից,— ասաց միստր Բլեկը:— Բայց նա մնում է նույն կարծիքին իմ մասին և սպասում է արդյունքին:

Ես շատ էի ուզում նրան ակնարկել, որ հիմա ինքը նույնքան անարդար է Ռեչելի նկատմամբ, որքան սա է անարդար եղել նրա նկատմամբ: Բայց, խորհրդածելուց հետո, չուզեցի Ռեչելին զրկել կրկնակի հաճույք վայելելուց՝ միստր Բլեկին զարմացնելուց ու ներելուց:

Իմ այցելութիւնը շատ կարճ տեւեց: Անցած գիշերից հետո ես հարկադրված էի եղել հրաժարվել ավիոն ընդունելուց: Եվ, իհարկե, նորից տանջալից ցավեր էին սկսվել: Ես զգացի, որ նույն մոտենում է, և հապշտապ գնացի, որպեսզի չվախեցնեմ ու չվշտացնեմ միստր Բլեկին: Այս անգամ նույն տասնհինգ րոպե տեւեց և բավական ուժ թողեց իմ մեջ աշխատանք՝ շարունակելու համար:

Ժամը հիօնզն է: Պատասխան գրեցի միսս Վերինդերին:

Իմ առաջարկած ծրագիրը, եթե նա համաձայնվի դրան, հաշվի է առնում երկու կողմի շահերը: Նախ՝ բերեցի փորձից առաջ միստր Բլեկի հետ նրա հանդիպման դեմ խոսող փաստարկներ, իսկ հետո խորհուրդ տվի թաքուն գալ այն էրեկո, երբ բուն փորձն ենք կատարելու: Ծածաշյա գնացքով դուրս գալով Լոնդոնից, նա կարող է ժամանել Էրեկոյան ժամը իննին: Ես որոշեցի մինչ նրա գալը միստր Բլեկին տանել իր ննջասենյակը և այդպիսով միսս Վերինդերին հնարավորութուն տալ իր սենյակները մտնել նախօրան փորձն սկսելու: Երբ այդ արդին կարվի, նա կարող է արդյունքին հետևել բոլորիս հետ մեկտեղ: Հաջորդ օրն առավոտյան նա միստր Բլեկին ցույց կտա (եթե կամենա) իր նամակագրութունն ինձ հետ և այդպիսով նրան կհամոզի, որ նա իր աչքում արդարացիվ է նախօրան փաստերով նրա անմեղութունն ապացուցելը:

Այսպիսի բովանդակությամբ նամակ գրեցի նրան: Ահա այն ամենը, ինչ որ կարող էի անել այսօր: Վաղը կտեսնվեմ միստր Բեստերեջի հետ և կասեմ, թե ինչպես կարգավորել տունը:

Հունիսի 18: Նորից ուշ գնացի միստր Ֆրենկլին Բլեկի մոտ: Ահավոր ցավեր՝ վաղ առավոտյան և դրանից հետո՝ սարսափելի թուլութուն: Տեսնում եմ, որ, չնայած ափիոնի հարուցած մղձավանջներին, ստիպված պիտի լինեմ դրան վերադառնալ հարյուրերորդ անգամ: Եթե ես միայն իմ մասին մտածելիս լինեի, ապա սուր ցավը կգերադասեի ահավոր երազներին: Բայց ֆիզիկական տառապանքը հյուծում է ինձ: Եթե ես ինձ թույլ տամ հասնել լիակատար ուժասպառման, ապա դա կավարտվի նրանով, որ ես անդոր կլինեմ միստր Բլեկին օգնել այնպիսի մի ժամանակ, երբ ամենից շատ հարկավոր կլինեմ իրեն:

Արդեն ժամը մոտավորապես մեկն էր, երբ վերջապես այսօր եկա հյուրանոց: Այս այցելութունը, ես այնպիսի իմ հիվանդ վիճակում, շատ զվարճալի և զամ Պարբիել Բեստերեջի և Էրկայության շնորհիվ:

Նա արդեն սենյակում էր, երբ ես ներս մտա: Պատուհանին մոտենալով, նա սկսեց դուրս նայել, մինչ ես սովորա-

կան հարցեր էի տալիս իմ հիվանդին: Միստր Բլեկը դարձյալ վատ էր քնել և այսօր առավոտյան առաջվանից շատ ավելի տանջված էր զգում իրեն: Հարցրի, լուրեր չի՞ ստացել միստր Բրեֆից:

Նամակ էր ստացել առավոտյան: Միստր Բրեֆը բոլորովին հավանություն չէր տալիս ծրագրին, որին իմ խորհրդով դիմում էր իր բարեկամն ու հաճախորդը: Մրագիրը վատն էր, որովհետև հարուցում էր այնպիսի հույսեր, որոնք կարող էին շիրականանալ: Բացի դրանից, այն բոլորովին անհասկանալի էր և թվում էր շառլատանություն, մեսմերիզմի, պայծառատեսություն նման ինչ-որ բան: Դա տակնուվրա կանի միսս Վերինդերի տունը և կավարտվի նրանով, որ կզցի հենց միսս Վերինդերի տրամագրությունը:

Նա այդ մասին (առանց անունների տալու) պատմել էր մի նշանավոր բժշկի, և նշանավոր բժիշկը ժպտացել էր, գլուխըն օրորել ու ոչինչ չէր ասել: Այս բոլոր պատճառների վրա հիմնվելով, միստր Բրեֆը բողոքում էր մեր ծրագրի դեմ:

Իմ հաջորդ հարցը վերաբերում էր ալմաստին: Փաստաբանը որևէ ասպացույց ներկայացրե՞լ է, որ ալմաստը լոնդոնում է:

Ոչ, Փաստաբանը պարզապես հրաժարվել էր այդ հարցը ըննարկելուց: Նա հավատացած էր, որ Լուսնաբարդ գրավ է դրված միստր Լյուկերի մոտ: Նրա բացակայող նշանավոր ընկեր միստր Մերտուետը (ոչ ոք չէր կարող ծխտել, որ նա հրաշալի գիտեր հնդիկների բնավորությունը) նույնպես հավատացած էր դրանում: Տվյալ հանգամանքներում և ծայր աստիճան զբաղված լինելով, նա պետք է հրաժարվի ասպացույցների հետ կապված որևէ վեճի մեջ մտնելուց: Ժամանակն ինքը ցույց կտա, և միստր Բրեֆը սիրով կսպասի:

Եթե նույնիսկ միստր Բլեկն էլ դա է՛լ ավելի պարզ չլարձեներ, նամակի ընթերցումը փոխարինելով նրա բովանդակության շարադրումով, միանգամայն պարզ էր, որ այդ ամենի տակ թաքնված էր անվստահությունը անձամբ իմ նկատմամբ: Դրան պատրաստ լինելով, ես ոչ վշտացա, ոչ էլ զարմայա: Ես միստր Բլեկին հարցրի, թե իր վրա ինչ ազդեցություն է գործել իր ընկերոջ բողոքը: Նա եռանդագին պատասխանեց,

որ ոչ մի: Դրանից հետո ես իրավունք ստացա մտքիցս հանելու միտքը Բրեքֆին, և հանեցի:

Լուսնուն տիրեց, և Քաբրիել Բետտերեջը հեռացավ լուսամուտից:

— Կարո՞ղ եք ինձ պատիվ անել ձեր ուշադրությամբ, սըր,— դիմեց նա ինձ:

— Ես ամբողջովին ձեր տրամադրության տակ եմ,— պատասխանեցի ես:

Բետտերեջը վերցրեց աթոռն ու նստեց սեղանի մոտ: Նա հանեց իր հին հսկայական ծոցատետրը՝ համապատասխան շափի մատիտի հետ: Ակնոցը դնելով՝ բացեց ծոցատետրի մի մաքուր էջ և նորից դիմեց ինձ:

— Ես,— ասաց Բետտերեջը, խստորեն նայելով ինձ,— ապրել եմ՝ գրեթե հիսուն տարի ծառայելով հանգուցյալ միլիդի մոտ: Դրանից առաջ որպէս պաժ ծառայել եմ նրա հոր՝ ծեր լորդի մոտ: Հիմա մոտավորապէս ութսուն տարեկան եմ. թե կոնկրետ ինչքան՝ դա կարևոր չէ: Գտնում եմ, որ ես ուրիշներից ոչ պակաս գիտելիքներ ու փորձ ունեմ: Իսկ ինչո՞վ է դա վերջանում: Վերջանում է, միտք էզրա Զենինգս, միտք Չրենկլին Բլեկի նկատմամբ աճպարարություններով, որ կատարելու է բժշկի օգնականը՝ լաուդանի սրվակի օգնությամբ, իսկ ինձ, իմ զառամյալ տարիքում, ստիպում են դառնալ աճպարարի օգնական:

Միտք Բլեկը քմբջաց: Ես ուզում էի խոսել: Բետտերեջը ձեռքը բարձրացրեց, ցույց տալով, որ դեռ չի վերջացրել:

— Ոչ մի խոսք, միտք Զենինգս,— ասաց նա:— Ես չեմ ուզում որևէ խոսք լսել ձեզնից, սըր: Ես իմ օրենքներն ունեմ, փառք ասածու: Եթե ես նույնիսկ Բեթդեհեմից եկած հրամանի նման հրաման էլ ստանամ, դա ոչինչ չի նշանակում: Քանի դեռ ես այն ստանում եմ իմ պարոնից կամ տիրուհուց՝ ենթարկվում եմ: Բայց ես կարող եմ իմ սեփական կարծիքն ունենալ, որը, նեղություն քաշեք հիշել, համընկնում է նաև միտք Բրեքֆի, նշանավոր միտք Բրեքֆի կարծիքին,— ասաց Բետտերեջը, ձայնը բարձրացնելով, գլուխը հանդիսավոր տարուբերելով և ինձ նայելով:— Միևնույն է, այնուամենայնիվ. ես ետ եմ վերցնում իմ կարծիքը: Իմ օրիորդն ասում է՝ «Արեք այս բանը»,— և ես ասում եմ. «Կարվի, միտք»: Ահա

ես այստեղ եմ, ծոցատետրով ու մատիտով. մատիտն այն-  
քան էլ լավ չի սրված, ինչպես որ ես կուզեի, բայց, եթե  
քրիստոնյաները բանականությունից զրկվում են, ո՞վ կարող  
է սպասել, որ մատիտները սուր կմնան: Տվեք ինձ ձեր հրա-  
մանները, միտքը Զենինգս: Ես կգրառեմ դրանք, սրբ: Որո-  
շել եմ մազաչափ անգամ շահահանջել դրանցից: Ես կույր կա-  
տարող եմ՝ ահա թե ով եմ ես, կույր կատարող.— կրկնեց  
Բետտերեջը, արտակարգ հաճույք գտնելով իր այդ բնորոշ-  
ման մեջ:

— Շատ եմ ափսոսում,— սկսեցի ես,— որ ես և դուք  
համաձայնություն չենք գալիս...

— Ինձ մի խառնեք այդ գործին,— ընդհատեց Բետտե-  
րեջը:— Խոսքը ոչ թե համաձայնվելու, այլ ենթարկվելու մա-  
սին է: Արեք ձեր կարգադրությունները, սրբ, արեք ձեր կար-  
գադրությունները:

— Ես ուզում եմ, որպեսզի որոշ սենյակներ նորից բաց-  
վեն,— սկսեցի ես,— և կահավորվեն ճիշտ և ճիշտ այնպես,  
ինչպես եղել են անցյալ տարի:

Բետտերեջը լեզվով թրջեց մատիտի ծայրը:

— Թվարկեք այդ սենյակները, միտքը Զենինգս,— ամ-  
բարտավանդորեն ասաց նա:

— Նախ՝ ներքևի սրահը:

— «Նախ՝ սրահը»,— գրեց Բետտերեջը:— Սրբ, դա հնա-  
րավոր չէ կահավորել այնպես, ինչպես կահավորված է եղել  
անցյալ տարի...

— Ինչո՞ւ

— Որովհետև անցյալ տարի, միտքը Զենինգս, այնտեղ  
դրված էր մորաճուռակի խրտվիլակը: Երբ սյուրոնները մեկնե-  
ցին՝ խրտվիլակն էլ տարան մյուս իրերի հետ: Երբ խրտվի-  
լակը տանում էին՝ այն քանդվեց-թափվեց:

— Եթե այդպես է՝ խրտվիլակը հանում ենք:

Բետտերեջը գրառեց հանելը:

— «Ներքևի սրահը պետք է կահավորվի այնպես, ինչպես  
անցյալ տարի: Միայն բացառել քանդված-թափված մորա-  
ճուռակը»: Խնդրեմ, շարունակեք, միտքը Զենինգս:

— Առաջվա պես գորգ փռել աստիճանների վրա:

— «Առաջվա պես գորգ փռել աստիճանների վրա»: Շատ



եմ ափսոսում, որ դարձյալ պետք է ի դերև հանեմ ձեր սպասումները, սրբ: Դա էլ հնարավոր չէ անել: ☩

— Իսկ ինչո՞ւ:

— Որովհետև գորգեր փող մարդը մեռել է, միստր: Զեմինգս, իսկ գորգեր փռելու արվեստի մեջ նրա նմանը ամբողջ Անգլիայում չես գտնի:

— Շատ լավ: Մենք պետք է աշխատենք գտնել նրանից հետո Անգլիայի ամենալավ վարպետին:

Բևտտերեջը գրառեց, իսկ ես շարունակեցի կարգադրութուններ անել:

— Միսս Վերինդերի հյուրասենյակը պետք է վերականգնելի ճիշտ նույն տեսքով, ինչպիսի տեսք որ ունեցել է անցյալ տարի: Նույն ձևով՝ նաև այն միջանցքը, որը հյուրասենյակից տանում է դեպի առաջին հարթակ: Նույն ձևով՝ նաև երկրորդ միջանցքը, որը երկրորդ հարթակից տանում է տերերի ննջասենյակը: Նաև անցյալ տարի հունիսին միստր Ֆրենկլին Բլեկի զբաղեցրած ննջասենյակը:

Բևտտերեջի բուժ մատիտը բարեխղճորեն հետևում էր իմ յուրաքանչյուր խոսքին:

— Շարունակեք, սրբ,— շարախինդ հանդիսավորությամբ ասաց ծերուկը:— Մատիտս դեռ այնքան էլ շատ չի բթացել:

Ես նրան պատասխանեցի, որ այլևս ոչ մի կարգադրութուն չունեմ:

— Այդ դեպքում, սրբ,— ասաց Բևտտերեջը,— թույլ տվեք ինքս իմ կողմից մեկ կամ երկու կետ ավելացնեմ:

Նա բացեց ծոցատետրի մի նոր էջ և մեկ անգամ ես լեզվի ծայրով թրջեց անսպառ մատիտը:

— Կամենում եմ իմանալ,— սկսեց նա,— կարո՞ղ եմ ձեռքերս լվանալ, թե ոչ:

— Իհարկե, կարող եք,— ասաց միստր Բլեկը:— Ես կղանգա՛տարեմ ծառային:

— ... Վրայիցս գցել պատասխանատվությունը,— շարունակեց Բևտտերեջը, նախկին անհանգստությամբ շարունակելով սենյակում շտեմնել ոչ ոքի, բացի ինձնից:— Սկսեմք միսս Վերինդերի հյուրասենյակից: Երբ անցյալ տարի հանում էինք գորգը, միստր Զեմինգս, մեծ քանակությամբ բորոցներ գտանք: Արդյո՞ք ես պետք է նորից բորոցներ դնեմ:

— Իհարկե, ոչ:

Բեատեերեջն անմիջապէս գրառեց այդ զիջումը:

— Հիմա առաջին միջանցքի մասին,— շարունակեց նա—  
Երբ տան այդ մասի զարդարանքները հանում էինք՝ տարանք  
հաստամարմին մերկ երեխայի արձանը, որը տան քարտա-  
րանում աստվածանարգորեն նշված է որպէս «Կուպիդոն, սի-  
րո աստված»: Անցյալ տարի նա երկու թև ուներ ուսերի  
մտտ մասում: Ես ուշադիր շեղա, և նա կորցրեց մի թևը: Ես  
պե՞տք է պատասխան տամ կուպիդոնի թևի համար:

Ես դարձյալ զիջում արեցի նրան, իսկ Բեատեերեջը նորից  
գրառեց:

— Անցնենք երկրորդ միջանցքին,— շարունակեց նա—  
Անցյալ տարի, դռներից բացի, ուրիշ ոչինչ չկար այնտեղ,  
և ես խոստովանում եմ, որ սիրտս հանգիստ է տան միայն  
այդ մասի նկատմամբ: Ինչ վերաբերում է միստր Ֆրենկ-  
լինի ննջասենյակին, ապա, եթե իր նախկին տեսքը պետք է  
տալ նրան, կկամենայի իմանալ, թե ով պետք է իր վրա  
պատասխանատու լուծյուն վերցնի այն բանի համար, որպեսզի  
մշտապէս անկարգություն պահպանի այնտեղ, որքան էլ որ  
հաճախ վերականգնվի կարգուկանոնը. այստեղ՝ շալվար,  
այնտեղ՝ սրբիչ, այս ու այնտեղ՝ ֆրանսիական վեպեր. Ես  
ասում եմ՝ ո՞վ պետք է թափթփված պահի միստր Ֆրենկլինի  
սենյակը՝ նա՞, թե ես:

Միստր Բլեկը հայտարարեց, որ ինքը մեծագույն հա-  
ճույքով իր վրա կվերցնի այդ բանի համար պատասխանատու-  
լությունը: Բեատեերեջը համառորեն հրաժարվում էր լսել այդ  
տեսակետից եղած դժվարության լուծումը, մինչև որ ստացավ  
իմ համաձայնությունն ու հավանությունը: Ես ընդունեցի  
միստր Բլեկի առաջարկը, և Բեատեերեջը վերջին գրառումը կա-  
տարեց իր ծոցատետրում:

— Միստր Զենինզս, վաղվանից սկսած եկեք մեզ մոտ,  
երբ կկամենաք, վեր կենալով ասաց նա— Դուք ինձ կգտնեք  
անհրաժեշտ օգնականների հետ աշխատելիս: Ես հարգանքով  
շնորհակալ եմ, սրբ, այն բանի համար, որ դուք անուշադ-  
րության մատնեցիք մորաճուռակի խրտվիլակը և Կուպիդո-  
նի թևը, նաև այն բանի համար, որ ինձ թույլ տվիք ձեռքերս  
լվանալ և վրայիցս վերցնել գորգի վրայի քորոցների հա-

մար և միստր Ֆրենկլինի սենյակի թափթփվածության համար ամեն մի պատասխանատվություն: Որպես ծառա ես խորապես պարտական եմ ձեզ: Որպես մարդ ես դա համարում եմ քմահաճույք ձեր կողմից և ըմբոստանում եմ ձեր փորձի դեմ, որը համարում եմ զգացմունքների խաբեություն ու որոգայթ: Չվախենաք, թե իմ զգացմունքները որպես մարդու կխանգարեն իմ պարտքի կատարմանը որպես ծառայի: Ձեր կարգադրությունները կկատարվեն, սբբ, կկատարվեն: Եթե դա ավարտվի տանը տեղի ունեցած հրդեհով, ես մարդ չեմ ուղարկի հրշեջներ կանչելու, մինչև դուք զանգակը չհընչեցնեք և չհրամայեք մարդ ուղարկել նրանց ետևից:

Հրաժեշտի այս հավաստիացումով նա խոնարհվեց ու դուրս եկավ սենյակից:

— Ինչ եք կարծում, կարո՞ղ ենք հույս գնել նրա վրա, — հարցրի ես:

— Անպայման, — պատասխանեց միստր Բլեկը: — Տուն մտնելիս կտեսնեք, որ նա ոչինչ չի մոռացել և ոչ մի բան չի անտեսել:

Հունիսի 19: Եվս մի բողոք մեր ծրագրի դեմ: Այս անգամ տիկնոջից:

Առավոտյան փոստով երկու նամակ ստացվեց իմ անունով: Մեկը միսս Վերինդերից, որը ամենայն սիրալիրությամբ համաձայնվում էր իմ առաջարկած ծրագրին: Մյուսը այն տիկնոջից, որի տանը նա ապրում է. միսիս Մերիդջուից:

Միսիս Մերիդջուն ողջունում է և չի հավակնում գիտական առումով հասկանալու այն առարկան, որի շուրջը ես նամակներ եմ փոխանակում միսս Վերինդերի հետ: Սակայն, ըստ ընդունված տեսակետի, նա համարում է, որ իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը: Ինձ, գտնում է միսս Մերիդջուն, հավանաբար, հայտնի չէ, որ միսս Վերինդերն ընդամենը տասնինը տարեկան է: Թույլ տալ, որ երիտասարդ աղջիկն այս տարիքում առանց ընկերակցողի գտնվի տղամարդկանցով լիքը տան մեջ, որոնք բժշկական փորձ են կատարելու, ապա դա կլինի պատշաճության խախտում, ինչը չիսիս Մերիդջուն իր վրա վերցնել չի կարող: Նա զգում է, որ իր պարտքն է զոհարերել իր անձնական հարմարությունները և միսս Վերինդերի հետ մեկինել Յորքշիր: Մերիդջուն

խնդրում է, որ ես մտածեմ այդ մասին, քանի որ միաս Վերինդերը չի ուզում ղեկավարվել որևէ մեկի կարծիքով, իմ կարծիքից բացի: Գուցե Մերիդջուի ներկայությունն այնքան էլ անհրաժեշտ չէ, և իմ մի հատիկ խոսքը միսիս Մերիդջուին և ինձ կազատեր բավականաչափ տհաճ պատասխանաժուժյունից:

Հասարակ անգլիերենի թարգմանած՝ այդ քաղաքավարի պայմանականությունները նշանակում են, որքան ես հասկանում եմ, որ միսիս Մերիդջուն սաստիկ վախենում է շրջապատի կարծիքից: Դժբախտաբար, նա իր խնդրանքով դիմել է այնպիսի մի մարդու, որն աշխարհում բոլորից քիչ է հարգում այդ կարծիքը: Ես ի դերև չեմ հանի միսս Վերինդերի սպասումները, ես կաշխատեմ շհետաձգել երիտասարդների հանդիպումն ու հաշտեցումը, երիտասարդներ, որոնք սիրում են իրար և չափից դուրս երկար բաժանված են հղել: Եթե անգլերեն այս հասարակ արտահայտությունները թարգմանենք քաղաքավարի պայմանականությունների լեզվի, ապա այսպիսին կլինի իմաստը. միստր Ջենինգսը պատիվ ունի ողջունելու միսիս Մերիդջուին և ափսոսում է, որ դրանից ավելի ոչինչ չի կարող անել այդ գործում:

Այսօր առավոտյան միստր Բլեկն իրեն զգում է առաջվա պես: Որոշեցինք շխանգարել Բետտերեշին և այսօր դեռևս շմեկնել կալվածք: Կհասցնենք զննում կատարել նաև վաղը:

Հունիսի 20: Անքնությունն սկսում է ազդել միստր Բլեկի առողջության վրա: Որքան ավելի շուտ նախկին տեսքին բերվեն սենյակները, այնքան լավ:

Այսօր առավոտյան, երբ ես ու նա կալվածք էինք մեկնում, նա որոշ անվճռականությունը ու նյարդային անհամբերությունը ինձ հետ խորհրդակցեց այն նամակի առթիվ (իր անունով Լոնդոնից ստացված), որ եկել էր խուզարկու Կաֆից:

Խուզարկուն գրում է Իռլանդիայից: Նա հաղորդում է, որ ստացել է (իր տնտեսուհուց) մի այցետոմս՝ գրությունը հանդերձ, որը միստր Բլեկը թողել է Դորկինգի մոտերքում գտնվող իր տանը, և տեղեկացնում է, որ ամենայն հավանականությունը Անգլիա կվերադառնա մեկ շաբաթ հետո և նույնիսկ ավելի շուտ: Իսկ մինչ այդ նա խնդրում է, որպեսզի միստր Բլեկն իրեն բացատրի, թե ինչ առիթով է ուզում իր հետ խո-

եւ լուսնաբարից: Եթե միստր Բլեկը կարող է իրեն համոզել, որ ինքը՝ Կաֆր, լուրջ սխալ է թույլ տվել անցյալ տարվա հետաքննություն ժամանակ, ինքն իր պարտքը կհամարի (հանգուցյալ լեդի Վերինդերից ստացած առատ վարձատրությունից հետո) իրեն դնել այդ ջենտլմենի տրամադրություն առկա: Եթե ոչ, ապա ինքը թույլատվություն է խնդրում մնալու իր առանձնության մեջ, իր խաղաղ ծաղկանոցում:

Այդ նամակը կարդալով, ես առանց փոքր-ինչ տատանվելու միստր Բլեկին խորհուրդ տվի՝ խուզարկու Կաֆին հարգել այն ամենը, ինչ տեղի էր ունեցել անցյալ տարի հետաքննությունը դադարեցնելուց հետո, և թողնել, որ նա Լգրակացության հանգի այդ փաստերի հիման վրա:

Մի փոքր մտածելով, ես նաև խորհուրդ տվի հրավիրել խուզարկու Կաֆին՝ ներկա գտնվելու փորձին, եթե մինչ այդ նա կհասցնի վերադառնալ Անգլիա: Նա, համենայն դեպս, շատ արժեքավոր վկա կլիներ և, եթե իմ այն կարծիքը, որ արձատր պահված է միստր Բլեկի սենյակում, սխալ չիներ, խուզարկուի խորհուրդը կարող էր շատ կարևոր լինել հետագա այն գործողությունների համար, որոնց ես արդեն չէի կարող մասնակցել: Այս վերջին նկատառումը, ըստ երեւոյթին, միստր Բլեկին ստիպեց դիմելու այդ քայլին: Նա խոստացավ հետևել իմ խորհրդին:

Երբ մենք մոտեցանք շքամուտքին՝ մրճիկի թակոցը մեզ ազդարարեց, որ դորժը ետում է:

Բևտտերեջը, որ այդ առիթով ձկնորսի կարմիր թասակ էր դրել և բյազից կարված կանաչ գոգնոց կապել, մեզ դիմավորեց նախասրահում: Ինձ տեսնելով, նա հանեց ծոցատետրն ու մատիտը և այնուհետև սկսեց համառորեն գրանցել այն ամենը, ինչ ես ասում էի նրան: Ուր էլ որ նայում էինք, գտնում էինք, ինչպես և միստր Բլեկն էր ենթադրում, որ աշխատանքը ցանկացածի շափ արագ և խելացի է ընթանում: Բայց թե ներքևի սրահում և միսս Վերինդերի սենյակում դեռ շատ անելու բան կար: Կասկածելի էր. թվում, թե արդյո՞ք տունը պատրաստ կլինի շաբաթվա վերջին:

Ձեռք բերած հաջողությունների առթիվ Բևտտերեջին շնորհավորելով (հենց որ բերանս բաց էի անում՝ նա անմիջապես մատիտը ձեռքն էր առնում, միևնույն ժամանակ հրաժարվելով

Յեկուզ փոքր-ինչ ուշադրություն դարձնել միստր Բլեկի ասածներէի վրա) և խոստանալով մի երկու օր հետո նորից գալ մենք արդէն պատրաստովում էինք տնից դուրս գալ ետեի մուտքից: Բայց, նախքան դուրս կգալինք ներքեի միջանցքից, Բետտերեշն ինձ կանգնեցրեց, երբ ես անցնում էի իջ սենյակի դռան մոտով:

— Կարո՞ղ եմ ձեզ մի երկու խոսք ասել առանձին,— խորհրդավոր շշնջոցով հարցրեց նա:

Սա, հասկանալի է, համաձայնվեցի: Միստր Բլեկը դուրս եկավ՝ այդում ինձ սպասելու, իսկ ես Բետտերեշի հետ մտա նրա սենյակը: Սա սպասում էի, որ մորաճուռակի խրտվիչակից և Կուպիգոնի թևից հետո նա որևէ նոր զիջում կխնդրի: Բայց, ի դարձանս իմ, Բետտերեշը ձեռքը դրեց սեղանին և մի տարօրինակ հարց տվեց ինձ.

— Միստր Զենինգս, դուք ծանոթ եք «Ռոբինզոն Կրուզոյին»:

Սա պատասխանեցի, որ «Ռոբինզոն Կրուզոն» կարդացել եմ փոքր ժամանակ:

— Եվ այդ օրից ի վեր չե՞ք կարդացել,— հարցրեց Բետտերեշը:

— Դրանից հետո չեմ կարդացել:

Նա մի քանի քայլ ետ գնաց և կարեկցական հետաքրքրասիրության ու սնահավատ վախի արտահայտությամբ նայեց ինձ:

— Նա «Ռոբինզոն Կրուզոն» չի՞ կարդացել փոքր հասակից ի վեր,— ինքն իր հետ խոսելով, ասաց Բետտերեշը:— Տեսնե՞ք, թե հիմա նրա վրա ինչ ապավորություն կթողէի Ռոբինզոն Կրուզոն:

Նա բացեց անկյունում զրված պահարանը և հանեց մի բրքրված կեղտոտ գիրք, որից, երբ սկսեց թերթել էջերը, թունդ ծխախոտի հոտ եկավ: Անհրաժեշտ տեղը գտնելով, ըթի տակ նույն խորհրդավոր ձայնով փնթփնթալով, ինձ խնդրեց, որ մոտենամ իրեն:

— Ինչ վերաբերում է ձեր այդ լաուզանումի և միստր Ֆրենկլին Բլեկի հետ կապված աճալարարություններին,— սկսեց նա,— քանի ղեռ բանվորները տանն են, ծառայի պարտականություններն իմ հոգում վեր են դասվում մարդու զգաց-

Ճանքներից: Երբ բանվորները գնում են՝ մարդու զղացմունքները վեր են կանգնում ծառայի պարտականություններից: Շատ լավ: Անցած գիշեր, միստր Ջենինգս, զլխումս ամուր ևստեց, որ ձեր այդ բժշկական նոր ձեռնարկումը վատ է վերջանալու: Եթե ես ենթարկվեի գաղտնի ներշնչմանը, ապա ես իմ ձեռքերով նորից կահույքը դուրս կրերեի սենյակներից և հաչորդ առավոտյան ազատ կարձակեի բանվորներին:

— Վերևում տեսածիցս հաճույքով իմանում եմ, — ասացի ես, — որ դուք կարողացել եք ընդգիմանալ գաղտնի ներշնչմանը:

— «Ընդգիմանալը» այն արտահայտությունը չէ, — պատասխանեց Բետտերեջը: — Ես, սըր, կովել եմ հոգուս անձայն մղումների դեմ, որոնք ինձ մղել են մի կողմ, և իմ ծոցատետրում գրանցված հրամանների դեմ, որոնք ինձ մղել են մեկ ուրիշ կողմ, մինչև որ, թույլ տվեք ասել, սառը քրտինքըն է պատել ինձ: Հողեկան այս տհավոր խանդարվածության և մարմնական այս թուլության մեջ ի՞նչ միջոցի դիմեցի ես: Մի այնպիսի միջոցի, սըր, որն այս վերջին երեսուն և նույնիսկ ավելի տարիներին դեռ երբեք ոչ մի անգամ չի դավաճանել ինձ: Այս Գրքին:

Նա ավո՞վ խփեց գրքին, և այդ անելիս սենյակում տալբաժվեց ծխախոտի է՛լ ավելի ուժեղ հոտը:

— Ի՞նչ եմ գտել այստեղ, — շարունակեց Բետտերեջը, — առաջին իսկ բացածս էջի վրա: Մի տարօրինակ տեղ, սըր, հարյուր յոթանասունութերորդ էջում. «Այս և նման շատ խորհրդածություններով հետագայում ես ինձ համար օրենք դարձրի, որ երբ էլ իմ Հոգում գտնեմ այդ խորհրդավոր Ակնարկումները կամ Ցուցումները, որոնք ինձ ներշնչում են անել, թե չանել իմ առաջիկա որևէ գործ, զնալ, թե չզնալ իմ առաջիկա ճանապարհը, ես երբեք առիթը քաջ չեմ թողնի ևնթարկվելու իմ խորհրդավոր ներշնչմանը»: Մեռնեմ, թե ճիշտ չեմ ասում, միստր Ջենինգս, սրանք առաջին բառերն էին, որ աչքովս ընկան հենց այդ ժամանակ, երբ հակառակ էի գնում խորհրդավոր ներշնչմանը: Սըր, դուք ոչ մի արտասովոր բան չե՞ք տեսնում սրանում:

— Տեսնում եմ հանգամանքների պատահական զուգահեռություն, և ուրիշ ոչինչ:

— Դուք ամենևին չե՞ք տատանվում ձեր այդ ձեռնարկման հարցում, միստր Զենինգս:

— Ամենևին:

Բետտերեջը սևեռուն ու լուռ նայեց ինձ: Նա շրխկոցով ծածկեց գիրքը, շատ մեծ խնամքով նորից փակեց պահարանում, շրջվեց ու դարձյալ սևեռուն նայեց ինձ: Հետո խոսեց:

— Սըր,— լուրջ ասաց նա,— շատ բան կարելի է ներել այն մարդուն, որը մանուկ հասակից ի վեր չի կարողացել «Ռոբինզոն Կրուզոն»: Հաջողութուն եմ ցանկանում ձեզ:

Նա, խոր գլուխ տալով, բացեց դուռը և թողեց, որ ես մենակ գտնեմ այգի տանող ճանապարհը: Հանդիպեցի միստր Բլեկին, որը տուն էր վերադառնում:

— Կարող եք չպատմել, թե ինչ է պատահել ձեզ,— ասաց նա:— Բետտերեջը գործի է դրել իր վերջին հաղթաթուղթը. նա մարգարեական նոր հայտնություն է արել «Ռոբինզոն Կրուզոնում»: Հարգեցի՞ք նրա սիրելի երևակայությունը... Ո՞չ: Դուք նրան ցույց տվիք, որ չե՞ք հավատում «Ռոբինզոն Կրուզոնին»: Միստր Զենինգս, դուք այնքան եք ընկել Բետտերեջի աչքից, որքան դա հնարավոր է: Հիմա կարող եք ասել և անել՝ ինչ ուզում եք. կտեսնեք, որ նա մի խոսք անգամ չի կամենա փոխանակել ձեզ հետ:

Հունիսի 21: Այսօր բավականաչափ հակիրճ դրառումներ կլինեն իմ օրագրում:

Միստր Բլեկը դեռ երբեք այսքան վատ դիշեր չէր անդկացրել: Ես, կամքիս հակառակ, ստիպված էի դեղ նշանակել նրա համար: Բայց նրա նման զգայուն կազմվածքով մարդկանց վրա դեղերը, բարեբախտաբար, շատ արագ են ներգործում: Հակառակ դեպքում՝ կվախենայի, որ նա բոլորովին ուժասպառված կլինի այն ժամանակ, երբ փորձի ժամը հասնի:

Ինչ վերաբերում է անձամբ ինձ, ապա վերջին երկու օրում ցավերը մի փոքր դաղարեղուց հետո այսօր առավոտյան նորից նույն ունեցա, որի մասին ոչինչ չեմ կարող ասել, բացի այն, որ դա ինձ ստիպեց նորից դիմել ավիոնին: Փակում եմ այս տետրը և մի լրիվ դեղաբաժին շափում ինձ համար՝ հինգ հարյուր կաթիլ:



Հունիսի 22: Մեր հուշերն այսօր ավելացան: Միստր Բլեկի նյարդային լարվածությունը նկատելիորեն պակասել է: Անցած գիշեր նա մի քիչ քնել է: Իմ գիշերը՝ ափիոնի ողորմածությամբ, շմած մարդու գիշեր էր: Չեմ կարող ասել, թե ես արթնացա այսօր առավոտյան. ավելի հարմար կլինի ասել՝ ես ուշքի եկա:

Մենք մոտեցանք տանը տեսնելու՝ արդյո՞ք ամեն ինչ էախկին տեսքին է բերված: Վաղը, շաբաթ օրը, ամեն ինչ կավարտվի: Ինչպես միստր Բլեկն էր կանխագուշակել, Բետտերեջն այլևս ոչ մի նոր խոչընդոտ չհարուցեց: Նա սկզբից մինչև վերջ շարագուշակ քաղաքավարություն ու լուսթյուն պահպանեց:

Այժմ իմ բժշկական ձեռնարկումը (ինչպես Բետտերեջն է այն անվանում) անխուսափելիորեն պետք է հետաձգվի մինչև երկուշաբթի: Վաղը երեկոյան աշխատողները տանը կպահվեն մինչև գիշեր: Կիրակի օրվա համար սահմանված օրենքը, այդ ազատ երկրի սահմանադրումներից մեկը, հաջորդ օրն այնպես էր բաշխել գնացքները, որ հնարավոր չէր որևէ մեկին լոնդոնից հրավիրել մեզ մոտ: Մնում է միայն մինչև երկուշաբթի ուշադիր հետևել միստր Բլեկին և, եթե հնարավոր է, նրան պահել ճիշտ այն վիճակում, ինչ վիճակում ես նրան գտա այսօր:

Ես նրան համոզեցի գրել միստր Բրեֆին և պնդել, որ աեսզի նա ներկա գտնվի որպես վկա: Ես դիտավորյալ ընտրեցի փաստաբանին, որովհետև նա հույժ կանխակալ կարծիք ունի մեր նկատմամբ: Եթե մեզ հաջողվի նրան համոզել, ապա մենք մեր հաղթանակն անվիճելի կդարձնենք:

Միստր Բլեկը գրեց նաև խուզարկու Կաֆին, իսկ ես մի քանի տող ուղարկեցի միսս Վերինդերին: Հանձինս նրանց և ծեր Բետտերեջի, որը շատ կարևոր դեմք է ընտանիքում, մենք բավականաչափ վկաներ կունենանք և յուրա կգնանք սոսանց միսիս Մերիդյուեի, եթե միսիս Մերիդյուն պնդի իրեն հասարակության կարծիքին զոհաբերելու վրա:

Հունիսի 23. Անցած գիշեր ևս նորից ստիպված եղա հատուցել ափիոն ընդունելու համար: Միևնույն է, ես պետք է դիմանամ դրան մինչև կգա ու կանցնի երկուշաբթին:

Միստր Բլեկն այսօր դարձյալ այնքան էլ առողջ չէ: Նա

ինձ խոստովանեց, որ առավոտյան ժամը երկուսին բացել է դարակը, որտեղ սիգարներն է պահել: Միժ ջանքեր է գործարել դրանք նորից տեղը դնելու և փակելու համար: Դրանից հետո բանալին դուրս է շարտել լուսամուտից: Այսօր առավոտյան պահակը բերեց այն, գտած լինելով դատարկ ցիտեռնի մեջ: Ես այդ բանալին վերցրի, որպեսզի ինձ մտ պահեմ մինչև եկող երեքշաբթի:

Հունիսի 24: Միստր Բլեկն ու ես երկար դրոսնեցինք բաց կառքով: Երկուսս էլ զգացինք ամառվա մեղմ օդի բարերաբ ազդեցությունը: Ես նրա հետ ճաշեցի հյուրանոցում: Ի թեթևություն ինձ, նա, որ այսօր առավոտ վատ տրամադրության մեջ էր ու հուզված, ճաշից հետո երկու ժամ խոր թեց բազմոցի վրա: Հիմա, եթե ևս մի գիշեր էլ վատ անցկացնեի, ես այլևս չեմ վախենա հետևանքներից:

Հունիսի 25, երկուշաբթի: Փորձի օրն է: Ետկեսօրյա ժամը հինգը: Հենց նոր տուն հասանք:

Գլխավոր և ամենակարևոր հարցը միստր Բլեկի առջջությունն է:

Որքան կարող եմ դատել, նա խոստանում է (ֆիզիկական տեսակետից) ափիռնի ներգործության նկատմամբ նույնքան ընկալունակ լինել այսօր, որքան եղել է մեկ տարի առաջ: Այժմ նա գտնվում է նյարդային դյուրազգայնության վիճակում, որը մոտ է նյարդային խանգարվածության: Գեմբի գույնը անընդհատ փոխվում է, ձևերը զոդում են: Հանկարծակի աղմուկի ժամանակ և որեէ բանի անսպասելիորեն հայտնվելու դեպքում ցնցվում է:

Այս բոլորը հետևանք են անընություն, որը, իր հերթին, զալիս է նյարդային վիճակից. իսկ սրա պատճառն էլ այն է, որ նա հանկարծ թողեց ծխելը՝ ծայրահեղության հասցրելով այդ սովորությունը: Ներգործում են նույն պատճառները. ինչ և անցյալ տարի, և հետևանքներն էլ, ըստ երևույթի, նույնը կլինեն: Արդյո՞ք այսպես կշարունակվի մինչև փորձի ավարտվելը: Գիշերվա դեպքերը պետք է վճռեն այս հարցը:

Մինչ ես դրում եմ այս տողերը, միստր Բլեկը զվարճանում է ներքևի սրահում, վարժվում է բլյաթոկ խաղալու մեջ՝ բազմատեսակ հարվածներ կատարելով, ինչպես հաճախ արել է անցյալ տարի հունիսին այստեղ հյուր եղած ժամանակ:

Հետս վերցրել էի օրագիրս՝ մասամբ գիշերվա ազատ ժամերը որևէ բանով լցնելու նպատակով, մասամբ էլ հուսալով, որ կարող է նշվելու արժանի որևէ բան պատահել:

Արդյո՞ք ամեն ինչ հիշատակել եմ մինչև հիմա: Երեկվա նոթերն աչքի անցկացնելիս տեսնում եմ, որ մոռացել եմ առավոտյան փոստի մասին գրել: Այս բացը կլրացնեմ նախյան միտքը Բլեկի մոտ գնալը:

Այսպես, ուրեմն, ես մի քանի տող ստացա միսս Վերինգերից: Նա պատրաստվում է, իմ խորհրդի համաձայն, գալ էրեկոյան գնացքով: Միսիս Մերիդյուն պնդել է, որ ուղեկցի նրան: Նամակում մի թեթև ակնարկ կա հարգարժան տիկնոջ որոշ սրտնեղության մասին, մի տիկին, որը սովորաբար գեթազանց տրամադրովյան մեջ է լինում, որի պատճառով և նա կարիք ունի ամենայն ներողամտության, ինչպես այն պահանջում են նրա տարիքն ու սովորությունները: Ես կաշխատեմ միսիս Մերիդյունի հետ վարվելակերպի մեջ նմանվել Բետտերեյի զսպվածությանը՝ ինձ հետ ունեցած վարվելակերպի մեջ: Այսօր նա մեզ դիմավորեց հանդիսավորությամբ, հագած իր ամենալավ սև սերթուկը, կապած օսլայած սպիտակ փողկապը: Երբ իմ կողմն է նայում՝ անմիջապես հիշում է, որ ես մանուկ հասակից ի վեր չեմ վերընթերցել «Ռոբինզոն Կրուզոն», և նրա դեմքը հարգալից խղճահարություն է արտահայտում:

Միտքը Բլեկը նույնպես երեկ պատասխան է ստացել իր փաստաբանից: Միտքը Բրեֆն ընդունում է հրավերը, սակայն վերապահությամբ: Նա հրամայական անհրաժեշտություն է տեսնում այն բանում, որպեսզի, ինչպես ինքն է արտահայտվել, ենթադրվելիք ներկայացման ժամանակ բավականաչափ ողջամտություն ունեցող մի մարդ լինի միսս Վերինգերի մոտ: Այդպիսի մարդ, քանի որ մեկ ուրիշը չկա, համաձայն է լինելու միտքը Բրեֆը: Այսպես ուրեմն, խեղճ միսս Վերինգերը լինելու է կրկնակի հսկողության տակ: Ուրախալի է մտածել, որ հասարակության կարծիքը դրանով, հավանաբար, լիուլի կբավարարվի:

Խուզարկու Կաֆից ոչ մի լուր չկա: Նա, անկասկած, դեռ Իռլանդիայում է: Մենք չենք կարող հույս ունենալ, որ նա այսօր կգա:

Հիմա հկաՎ Բիտտերեջը՝ ինձ միստր Բլեկի մոտ կանչելու: Ես պետք է ժամանակավորապես մի կողմ դնեմ գրիչս:

Ժամը յոթն է: Մենք նորից աչքի անցկացրինք հարգարված բոլոր սենյակներն ու աստիճանները: Նաև հաճելի գրասանք կատարեցինք թփուտներում, որոնք միստր Բլեկի սիրած վայրն են հղել, երբ նա անցյալ տարի հյուրընկալվել է այստեղ: Այսպիսով, ես հույս ունեմ, որքան դա հնարավոր է, նրա մտքում վերակենդանացնել տեղանքից և իրադրությունից ստացած նախկին տպավորությունները:

Հիմա նստում ենք ճաշելու այն ժամին, երբ ճաշել ենք միսս Վերինդերի ծննդյան օրը: Այստեղ իմ նպատակը, անշուշտ, զուտ բժշկական է. լաուդանումը պետք է խմել նույն հանգամանքներում, ինչպես անցյալ տարի:

Ճաշից հետո որոշ ժամանակ անց ես պատրաստվում էմ շատ բնական կերպով խոսել ավամասից և այն գողանալու հնդիկների մտադրությունից: Իսկ երբ միստր Բլեկի մտերբը բեռեմ այդ առարկայի վրա, ապա իմ կողմից արված կլիների ինձնից կախված ամեն ինչ մինչև այն պահը, երբ պետք կլինի ավիտն տալ նրան:

Ութն անց կես է: Միայն հիմա կարողացա մի փոքր ազատ ժամանակ գտնել ամենակարևոր պարտականություններից մեկի համար՝ տան դեղարկղում գտնել այդ լաուդանումը, որից միստր Կանդին էր օգտվել:

Մի տասը րոպե առաջ, երբ Բիտտերեջը ոչ մի բանով դբաղված չէր, ես ժամանակ գտա և իմ այդ ցանկությունը հաղորդեցի նրան: Ոչ մի բառ չառարկելով, նույնիսկ առանց ծոցատետրը դրպանից հանելու շնչին իսկ փորձ կատարելու, նա, չուրաքանչյուր քայլափոխի ճանապարհն ինձ զիջելով, ինձ տարավ մթերանոց, որտեղ տնային դեղարկղն էր գրտնրվում:

Ես գտա խնամքով խցանված սրվակը, որի բերանը կապված էր նաև կաշվի կտորով: Գրեթե լիքը սրվակի մեջ, ինչպես և հնթադրում էի, սովորական լաուդանում էր լցված: Ես որոշեցի դա գերադասել ավիտնի այն երկու դեղամիջոցներից, որոնք ինձ հետ վերցրել էի անհրաժեշտ պարագայի համար:

Որոշ դժվարութիւնն էր ներկայացնում դեղաշափի հարցը և նորհետև հետո որոշեցի դեղաշափն ավելացնել:

Իմ գրառումներն ասում են, որ միստր Կանդին ընդամենը քսանհինգ գրան էր տվել: Այդ դեղաշափը շատ քիչ է այն հետևանքների համար, որ այն ունեցավ նույնիսկ միստր Բլեկի ցնկալունակութեան առկայութեամբ: Իմանալով, թե ինչքան է միստր Կանդին սիրում լավ ճաշել և նկատի առնելով, որ նա լաուդանումը շափել է հրավիրովի ճաշկերույթից հետո, ես շատ հավանական եմ համարում, որ տվիլ է ավելին, քան մտադիր է եղել տալ: Ինչ ուզում է լինի, ես կհամարձակվեմ ավելացնել դեղաշափը, հասցնելով քառասուն գրանի: Հիմա միստր Բլեկը նախազգուշացված է, որ լաուդանում է ընդունելու, իսկ դա նշանակում է, որ նա անգիտակցաբար կփորձի պայքարել թմրագեղի ազդեցութեան դեմ: Հետևաբար, անհրաժեշտ է մեծ դեղաշափ, կրկնելու համար այն հետևանքները, որ անցյալ տարի հարուցվել են ավելի պակաս դեղաշափի ժամանակ:

Ժամը տասն է: Վկաները, թե հյուրերը, չգիտեմ ինչ ավելի լավ անուն կարելի է տալ նրանց, եկան մեկ ժամ առաջ:

Ժամը ինը վերջանալուն մոտ ես միստր Բլեկին համոզեցի ինձ հետ գնալ իր ննջասենյակը, պատճառաբանելով, թե իբր ես կուզեի, որ նա մի վերջին անգամ զններ այն և անձամբ ստուգեր՝ արդյոք նախկին կահավորանքից որևէ բան մոռացված չէ: Ես նախապես միստր Բետտերեջի հետ պայմանավորվել էի, որպիսի միստր Բրեֆին ննջասենյակ հատկացնեին միստր Բլեկի սենյակի կողքին և որպեսզի փաստաբանի ժամանման մասին ինձ տեղեկացվեր դրան թե՛յե թաղոցով: Երբ նախասենյակի ժամացույցը խփել էր ժամը ինը, գրանից հինգ բոպե անց ես լսեցի այդ թակոցը, անմիջապես դուրս եկա միջանցք և հանդիպեցի միստր Բրեֆին:

Արտաքինա, ինչպես միշտ, ոչ դուրեկան տպավորութիւն գործեց: Բացահայտ անվստահութիւն արտահայտվեց միստր Բրեֆի հայացքի մեջ: Ես գիտեի, թե ինչ տպավորութիւն եմ գործում անձանոթ մարդկանց վրա և առանց տատանվելու նրան ասացի այն, ինչ անհրաժեշտ էի գտնում ասել, նախքան նա միստր Բլեկի մոտ կմտներ:

— Դուք այստեղ եք ժամանել, ինչպես ենթադրում եմ,

միսիս Մերիդյուի և միսս Վերինդերի հե՞տ,— հարցրի ես:  
— Այո,— չափազանց շոր պատասխանեց միստր Բրեֆը:  
— Միսս Վերինդերը, հավանաբար, ձեզ հաղորդել է իմ  
ցանկությունը, որպեսզի իր այստեղ գտնվելը (նաև, հասկա-  
նալի է, միսիս Մերիդյուի այստեղ գտնվելը) գաղտնի մնա  
միստր Բլեկի համար, քանի դեռ նրա վրա փորձ չի կա-  
տարվել:

— Ես գիտեմ, որ պետք է լեզուս ինձ քաշած պահեմ,  
սրբ,— անհամբերությամբ ճշաց միստր Բրեֆը:— Սովորու-  
թյուն ունենալով լռել մարդկային ցեղի խելահեղության մա-  
սին ընդհանրապես, ես առավել ևս տրամադրված եմ բերա-  
նքս շքացել տվյալ դեպքում: Սա ձեզ բավարարո՞ւմ է:

Ես գլուխ տվի և թողեցի, որ Բետտերիչը նրան տանի իր  
համար նախատեսված սենյակը: Գնալիս Բետտերիչը մի  
այնպիսի հայացք գցեց ինձ վրա, որն ամեն մի խոսքից ավելի  
պարզ ասում էր. «Ահա, միստր Զենինգս, կուղբ ենք բռնել  
և այդ կուղբի անունը Բրեֆ է»:

Այժմ ես պետք է հանդիպեի կանանց հետ: Չեմ թաքցնում,  
աստիճաններից իջա փոքր-ինչ հուզված և գնացի դեպի միսս  
Վերինդերի հյուրասենյակը:

Առաջին հարկի միջանցքում իմ դեմ ելավ այդեպանի կի-  
նը (նրան հանձնարարված էր հոգալ կանանց հարմարավե-  
տության մասին): Այդ բարի կինը շափից դուրս հարգանք է  
ցուցաբերել իմ հանդեպ, հարգանք, որի անմիջական ակուն-  
քը անհաղթահարելի սարսափն է: Նա աչքերը շուտ է վրաս,  
դողում է և պզզում՝ հենց որ ես սկսում եմ խոսել հետո: Իմ  
այն հարցին, թե որտեղ է միսս Վերինդերը, նա աչքերը հա-  
ռուց վրաս, դողաց և, անտարակույս, կպպզեր, եթե ինքը  
միսս Վերինդերը չընդհատեր այդ արարողությունը՝ հանկար-  
ծակի բացելով իր հյուրասենյակի դուռը:

— Դո՞ւք եք, միստր Զենինգս,— հարցրեց նա:

Պատասխանելու ժամանակ շտալով, նա հապշտապ դուրս  
եկավ միջանցք: Մենք հանդիպեցինք պատվանդանին դրված  
լամպի մոտ, որի լույսն ընկնում էր մեզ վրա: Ինձ նայելուն  
պես միսս Վերինդերը կանգ առավ անվճռական: Սակայն  
անմիջապես տիրապետեց իրեն, թեթևակի կարմրեց և հմա-  
յիչ շիտակությամբ ձեռքը մեկնեց ինձ:

— Ես չեմ կարող ձեզ հետ վերաբերվել որպես կողմնակի մարդու, միատր Ջենինգս,— ասաց նա:— Եթե իմանա՛ւայիք, թե ինչպիսի՛ ուրախություն են պատճառել ինձ ձեր եամակաները:

Նա իմ կնճռոտ, տզեղ Երեսին նայեց անկեղծ երախտազիտությամբ, որն այնքան նոր էր ինձ համար, որ շիմացա, թե ինչ պատասխանեմ նրան: Ես ամենևին նախապատրաստված չէի նրա բարությանն ու քնքշանքին: Բազում տարիների տառապանքները, փառք աստծու, չէին քարացրել իմ սիրտը: Ես տասնհինգ տարեկան տղայի պես անհարմար էի զգում՝ և ամաչում էի նրա ներկայությամբ:

— Որտե՞ղ է հիմա,— հարցրեց միսս Վերինդերը, չթաքցնելով, որ իր մտքերն զբաղված են միտար Բլեկովի:— Ի՞նչ է անում: Իմ մասին հարցրե՞լ է: Լա՞վ է տրամադրությունը: Ինչպե՞ս է այս տան տեսքը նրա վրա ներգործում այն ամենից հետո, ինչ կատարվեց անցյալ տարի: Ծ՞րր եք լաուդա՛նում տալու նրան: Ես կարո՞ղ եմ տեսնել, թե ինչպես եք լցնելու այն: Ես այնքան եմ շահագրգռված այս ամենով, ես այնքան եմ հուզված... ես հազար ու մի բան եմ ուզում ասել ձեզ, և այդ բոլորն էլ միանգամից խոնվում են գլխու՛մբ, այնպես որ չզիտեմ, թե ինչից սկսեմ: Դուք չե՞ք զարմանում ձեր փորձի նկատմամբ ցուցաբերածս հետարբերության համար:

— Ամենևին,— պատասխանեցի ես:— Ինձ թվում է, որ ես այն լրիվ հասկանում եմ:

Միսս Վերինդերը հեռու էր շփոթություն խաղալուց: Եվ ինձ պատասխանեց այնպես, ինչպես կարող էր պատասխանել եղբորը կամ հորը:

— Դուք ինձ ազատեցիք անասելի տառապանքից, դուք նոր էլանք տվիք ինձ: Ինչպե՞ս կարող եմ անշնորհակալ լինել և որևէ բան թաքցնել ձեզնից: Ես սիրում եմ նրան,— շատ պարզ ձևով ասաց նա,— սիրել եմ սկզբից մինչև վերջ, նույնիսկ այն ժամանակ, երբ իմ մտածումներում անարդարացի էմ եղել նրա նկատմամբ, նույնիսկ այն ժամանակ, երբ շատ դաժան, շատ խիստ խոսքեր եմ ասել նրան: Կարո՞ղ է, արդյոք, սա ներումն ծառայել ինձ համար: Հուսով եմ, որ այո. վախենում եմ, որ միայն սա է ներումն հանդիսանում

ինձ համար: Երբ նա վաղն իմանա, որ ես գտնվում եմ այս տանը, ինչ եք կարծում...

Նա խոսքը շափարտեց և շատ լրջորեն նայեց հրեսիս:

— Վաղը ձեզ մնում է միայն նրա ներկայութեամբ կրկնել այն, ինչ հիմա ասացիք ինձ,— պատասխանեցի ես:

Նրա դեմքը փայլեց. նա մի քայլ մոտեցավ ինձ և ակնհայտ հուզմունքով սկսեց խաղալ ծաղկի թերթերի հետ, որը ես քաղել էի այգում և մտցրել իմ սերթուկի մերակի մեջ:

— Դուք և նա հաճախ եք տեսնվել վերջին ժամանակ: Ներս,— հարցրեց միսս Վերինդերը,— և դուք, իրոք, այդ բանը տեսե՞լ եք նրա մեջ:

— Իրոք,— պատասխանեցի ես:— Ես չնչին իսկ կասկած չունեմ նրանում, ինչ տեղի կունենա վաղը: Ես կուզեի նույնպիսի վստահութուն ունենալ այս գիշերվա դեպքերի նկատմամբ:

Այստեղ մեր խոսակցությունն ընդհատվեց. հայտնվեց Բետտերեջը՝ թեյի սպասքով:

Մենք ծառայապետի հտնից մտանք հյուրասենյակ: Ծառայակով հագնված փոքրիկ պառավ լեղին նստած էր մի անկյունում, ամբողջությամբ տարված ինչ-որ մի գեղեցիկ ասեղնագործությամբ: Դեմքիս գնչուական գույնը և խայտարղետ մազերս տեսնելով՝ նա ձեռքից բաց թողեց իր աշխատանքը և թեթևակի ճչաց:

— Միսիս Մերիդյու, սա միստր Զենինգսն է,— ասաց միսս Վերինդերը:

— Ներողություն եմ խնդրում միստր Զենինգսից,— ասաց հարգարժան տիկինը, նայելով, սակայն, միսս Վերինդերին:— Երկաթուղային ճանապարհորդությունը միշտ էլ քալքայում է նյարդերս: Ես աշխատում եմ դրանք կարգի բերել՝ զրազվելով իմ սովորական աշխատանքով: Զգիտեմ, թե որքանով է այս աշխատանքը տեղին ներկայիս, շափից դուրս արտակարգ այս դեպքում: Եթե այն խանգարում է ձեր բժշկական նպատակներին, ապա ես, իհարկե, հաճույքով մի կողմ կզնեմ այն:

Ես շտապեցի ասեղնագործելու թույլտվություն տալ ճիշտ և ճիշտ, ինչպես թույլտվություն էի տվել քանդված խրտվիլակի և Կուպիդոնի ջարդված թևի բացսկայության համար:



Միսիս Մերիդջունը շանք գործադրեց իր վրա և երախտազի-  
տությունից փորձեց նայել ինձ: Բայց ոչ: Նա շկարողացավ  
իբ հայացքը պահել ինձ վրա և նորից այն ուղղեց միսս վե-  
րինդերին:

— Միստր Զենինգսի թույլտվությամբ, — շարունակեց այդ  
հարգարժան տիկինը, — ես կխնդրեի շնորհ անել ինձ: Միստր  
Զենինգսը մտադիր է իր գիտական փորձը կատարել այսօր  
գիշեր: Դեռևս պանսիոնում սովորելիս ներկա եմ եղել այդ-  
պիսի փորձերի: Դրանք միշտ ավարտվել են պայթյունով:  
Միստր Զենինգսն այնքան սիրալիք չի՞ լինի, որպեսզի ժա-  
մանակին ինձ նախազգուշացնի, թե այս դեպքում երբ պետք  
է պայթյունի սպասել: Ես կուզեի, եթե հնարավոր է, դա կա-  
տարվեր նախքան իմ քնելու գնալը:

Ես փորձեցի միսիս Մերիդջունին հավատացնել, որ այս  
փորձի դեպքում ծրագրով պայթյուն չի նախատեսվում:

— Զի՞ նախատեսվում, — կրկնեց հարգարժան տիկինը: —  
Ես շնորհապարտ եմ միստր Զենինգսին և շատ լավ հաս-  
կանում եմ, որ նա ինձ խաբում է հենց իմ հանգստության  
համար: Բայց ես գերադասում եմ անկեղծությունը: Ես միան-  
գամայն հաշտվել եմ պայթյունի մտքի հետ, բայց շատ կու-  
զեի այդ պայթյունը լսել, եթե հնարավոր է, նախքան ան-  
կողին մտնելս:

Այդ պահին դուռը բացվեց, և միսիս Մերիդջունը նորից  
թեթևակի ճշաց: Զլինի՞ պայթյունն սկսվում է: Ոչ, պարզա-  
պես Բևտտերեջը ներս մտավ:

— Ներողություն եմ խնդրում, միստր Զենինգս, — շատ  
բարեկիրթ ձայնով ասաց Բևտտերեջը, — միստր Ֆրենկլինը  
կամենում է իմանալ, թե որտեղ եք դուք: Ձեր հրամանով  
երանից թաքցնելով, որ օրիորդը տանն է, ես նրան ասացի,  
որ չգիտեմ, թե որտեղ եք դուք: Դա, եթե ձեզ հաճո է նկատել,  
ուղղակի կեղծիք է: Քանի որ իմ մի ոտքը գերեզմանում է,  
ապա որքան ավելի քիչ այդպիսի կեղծիք պահանջեք ինձ-  
նից, այնքան ես ավելի պարտական կլինեմ ձեզ, երբ իմ  
ամբ հասնի և ես խղճի խայթ դգամ:

Բևտտերեջի խղճի առիթով խորհրդածելու վրա ոչ մի  
րոպե չէր կարելի կորցնել: Ինձ փնտրելիս ամեն րոպե կարող  
էր սենյակ մտնել միստր Բլեկը. այս պատճառով անմիջա-

պես գնացի նրա մոտ: Միսս Վերինդերն ինձ հետ դուրս եկավ միջանցք:

— Նրանք, կարծես, պայմանավորվել են, որ ինձ տանջեն,— ասաց նա:— Սա ի՞նչ է նշանակում:

— Սոսկ բողոք հասարակայնության կողմից ընդդեմ ամենայն նորի, միսս Վերինդեր, թեև փոքր մասշտաբի:

— Իսկ ինչպե՞ս վարվենք միսիս Մերիդյուի հետ:

— Նրան ասացեք, որ պայթյունը կլինի վաղն առավոտյան ժամը իննին:

— Որպեսզի նրան ուղարկենք քնելո՞ւ:

— Այո: Որպեսզի նրան ուղարկենք քնելու:

Միսս Վերինդերը վերադարձավ հյուրասենյակ, իսկ ես բարձրացա վերև՝ միստր Բլեկի մոտ:

Ի զարմանս իմ՝ նրան մենակ գտա: Նա անհանդիստ քայլում էր սենյակի մի անկյունից մյուսը, ըստ երևույթին՝ ջղայնացած, որ մենակ է մնացել:

— Իսկ որտե՞ղ է միստր Բրեֆը,— հարցրի ես:

Նա մատնացույց արեց փաստաբանի զբաղեցրած կից սենյակի վրակ գուռը: Միստր Բրեֆը մեկ ընկած մտել էր նրա մոտ, փորձել էր նորից առարկել մեր մտադրությունների դեմ և նորից լիակատար անհաջողության էր մատնվել. նա ոչնչի չէր հասել: Իրանից հետո փաստաբանը զբաղվել էր կաշվե սև պայուսակով, որը լիցքը լցված էր գործարար թղթերով:

«Լուրջ գործերը,— եզրակացրեց նա,— բոլորովին անտեղի են տվյալ դեպքում. բայց, այնուամենայնիվ, դրանք պետք է ընթանան ինչպես որ պետքն է»: Միստր Բլեկը, գուցե, դործարար մարդուն ներքի նրա հնաոճ սովորությունները ժամանակը փող է: Իսկ միստր Զենինդսը կարող է հույս դնել նրա ներկայության վրա, հենց որ դա անհրաժեշտ լինի իրեն:

Այս ասելով, փաստաբանը վերադարձավ իր սենյակը և համառորեն խորասուզվեց իր սև պայուսակի մեջ:

Ես հիշեցի միսիս Մերիդյուին՝ իր ասիզնագործությամբ. և Բևատիբեջին՝ իր խղճով: Զարմանալի նմանությունը անդլիական բնավորության հիմքում է, ինչպես որ այն զրսեորվում է անգլիացու դեմքի արտահայտության մեջ ևս:

— Ե՞րբ եք լաուզանում տալու ինձ,— անհամբերութեամբ հարցրեց միստր Բլեկը:

— Դուք պետք է մի քիչ սպասեք,— ասացի ես:— Մինչև այդ ժամանակ ես ձեզ հետ կլինեմ:

Գեռ ժամը տասն էլ չկար: Բետտերեջին ու միստր Բլեկին հարցուփորձելուց հետո եկա այն եղրակացութեան, որ միստր Կանդիի տված լաուզանումը խմվել է ժամը տասնմեկից ոչ շուտ: Այս իսկ պատճառով որոշեցի այս անգամ էլ միստր Բլեկին ափիոն տալ նույն ժամին:

Մենք մի քիչ զրուցեցինք, բայց մեր մտքերն զբաղված էին առաջիկա փորձով: Խոսակցությունը չէր ստացվում և շուտով բոլորովին դադարեց: Միստր Բլեկն անտիտիտըն թերթում էր սեղանին ընկած գրքերը: Երբ մենք սենյակ մտանք՝ ես շրջահայաց կերպով աչքի անցկացրի բոլորը: Ռիչարդսոնի «Հովանավորը», «Բամբասողը», «Պամեկան», Մեկենսի «Զգայուն մարդը», Ռոսկոյի «Լորենցո Մեդիչին» և Ռոբերտսոնի «Կառլոս Հինգերորդը», բոլորն էլ դասական գործեր. բոլոր գործերն էլ, անշուշտ, դերագանացում են այն ամենը, ինչ որ գրվել է ավելի ուշ ժամանակներում. և բոլոր գործերն էլ, այսօրվա մեր տեսանկյունից, մի մեծ արժանիք ունեն՝ չգամել ոչ մեկի ուշադրությունը և շնուզել ոչ մեկի մտքերը: Ես միստր Բլեկին հանձնեցի դասական գրականության հանձնարարությունիչ ներգործությանը և այս գրառումներն արեցի իմ օրագրում:

Ժամացույցն ինձ ասում է, որ շուտով ժամը տասնմեկը կլինի: Ես դարձյալ պետք է ծածկեմ իմ տետրը:

Պիշուվա ժամը երկուսն է: Փորձը կատարված է: Հիմա մանրամասն հաշվետվություն եմ տալիս արդյունքի մասին:

Ժամը տասնմեկին հնչեցրի Բետտերեջի դասն զանգը և միստր Բլեկին ասացի, որ վերջապես իր պառկելու ժամանակն է:

Ես դուրս եայեցի լուսամուտից: Տաք ու անձրևոտ գիշեր էր, նման անցյալ տարվա հունիսի քսանմեկի գիշերվան: Զհագատարով նշաններին, հս, այնուամենայնիվ, ուրախացա, որ Էյարքային համակարգի վրա ուղղակիորեն ներգործող ոչինչ չէր մթնոլորտում, որ չկա էլեկտրականության չափից դուրս ելուտակում, չկան մոտեցող ամպրոպի նշաններ: Բետտերեջը

մտացալ ինձ և խորհրդավոր կերպով մի թուղթ մտքրեց ձեռքիս մեջ: Խղթում գրված էր հետևյալը.

«Միսիս Մերիդյուն քնելու գնաց իմ այն հաստատ համաստիացումից հետո, որ պայթյունը տեղի կունենա վաղև առավոտյան ժամը իննին, և որ ես տան այդ հատվածից դուրս չեմ գա, մինչև ինքն անձամբ չգա և ազատություն շտա ինձ: Նա չի կասկածում, որ գործողության գլխավոր վայրը իմ սեփական հյուրասենյակն է, հակառակ դեպքում՝ նա ամբողջ գիշեր կմնար այստեղ: Ես մենակ եմ և շատ անհանգիստ եմ, հնարավորություն տաք ինձ տեսնելու, թե ինչպես եք շարժվելու լատիանումը. ես անպայման ուզում եմ ինչ-որ կերպ մասնակցել դրան, գոնե որպես համեստ հանդիսատեսուհի: Ի. Վ.»:

Բևտտերեջից անմիջապես հետո ես դուրս եկա սենյակից և նրան հրամայեցի զեղարկզը փոխադրել միսս Վերինդերի հյուրասենյակը:

Հրամանը, ըստ երևույթին, խիստ անակնկալի բերեց նրան: Նա ինձ նայեց, կարծես կասկածելով, որ ես մտադիր եմ բժշկական խորհրդավոր փորձ կատարել միսս Վերինդերի վրա:

— Համարձակվում եմ հարցնել, թե ի՞նչ ընդհանուր բան կա իմ երիտասարդ օրիորդի և զեղարկզի միջև, — ի վերջո հարցրեց նա:

— Մնացեք հյուրասենյակում, և կտեսնեք, — եղավ պատասխանը:

Երբ բանը հասավ զեղորայքով արկղին, Բևտտերեջը, կարծես, սկսեց կասկածել առանց կողմնակի օգնության հաջողություններ ինձ հետևելու իր ունակության վրա:

— Զի՞ կարելի միտոր Բրեֆին էլ հրավիրել ներկա գտնվելու այն բանին, ինչ որ դուք ուզում եք անել, — հարցրեց նա:

— Ոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է: Ես գնում եմ միտոր Բրեֆին խնդրեմ, որ ինձ հետ ներքև իջնի:

Բևտտերեջը, այլևս առանց որևէ խոսք ասելու, գնաց զեղարկզը բերելու: Ես վերադարձա միտոր Բլեկի սենյակը և թակեցի փաստաբան Բրեֆի դուռը: Նա անմիջապես բացեց՝

ձեռքին բռնած թղթեր, ամբողջովին կլանված իրավարանությամբ և բոլորովին անմատչելի բժշկության համար:

— Շատ եմ ափսոսում, որ պետք է ձեզ անհանգստացնեմ,— ասացի ես,— բայց ես գնում եմ միստր Բլեկի համար լաուզանում պատրաստելու և հարկադրված եմ խնդրել, որ ներկա լինեք ու հետևեք իմ գործողություններին:

— Ըհը,— նկատեց միստր Բրեֆը, դժկամորեն ինձ հակացնելով իր ուշադրության մեկ տասնորդական մասը և դրա ինքն-տասնորդականը թողնելով թղթերի վրա կենտրոնացած: Ուրիշ ոչի՞նչ:

— Ես ձեզ պետք է խնդրեմ ինձ հետ վերադառնալ այստեղ և ներկա գտնվել դեղորայքն ընդունելուն:

— Ուրիշ ոչի՞նչ:

— Եվս մի բան: Հարկադրված եմ ձեզ անհանգստացնել խնդրելով, որ փոխադրվեք միստր Բլեկի սենյակը և այնտեղ սպասեք դեղն ընդունելու հետևանքներին:

— Շատ լավ,— ասաց միստր Բրեֆը:— Իմ սենյակն է, թե միստր Բլեկինը՝ տարբերությունը մեծ չէ. ես իմ թղթերով կարող եմ զբաղվել որտեղ ասես, թերևս միայն դուք եք, միստր Զենինգս, հարկ համարում ընդդիմանալ ձեր պրոցեդուրայի մեջ մի քիչ ողջամտություն խառնելուն:

Մինչ ես կհասցնեի պատասխանել՝ միստր Բլեկն. անկողնուց ձայն սվեց նրան.

— Մի՞թե դրանով ուզում եք ասել, թե ամենևին շահագրքողված չեք մեր փորձով: Միստր Բրեֆ, ձեր երևակայությունը կովի երևակայությունից ավելի չէ:

— Կովը շատ օգտակար կենդանի է, միստր Բլեկ,— պատասխանեց փաստաբանը:

Այս ասելով, նա ինձնից անմիջապես հետո դուրս եկավ՝ Եենյակից, շարունակելով ձեռքին պահել իր թղթերը:

Երբ մենք ներս մտանք, միսս Վերինդերը՝ գունատ ու տազնապած, անհանդիստ գնում-գալիս էր իր հյուրասենյակում: Սեղանի մոտ կանգնած էր Բետտերեջը՝ հսկելով զեզարկոր:

Միստր Բրեֆը նստեց առաջին խսկ պատահած աթոռին և, աշխատելով օգտակար լինել, անհապաղ նորից խորասուզվեց իր թղթերի մեջ:

Միսս Վերինդերն ինձ մի կողմ տարավ և անմիջապես սկսեց խոսել այն բանից, ինչն ամբողջովին կլանել էր իր մտքերը. միսոր Բլեկից:

— Ինչպե՞ս է նա հիմա,— հարցրեց օրիորդը:— Ձի՞ ջղայնանում: Ձի՞ բարկանում: Ինչ եք կարծում, փորձը կհաջողվի՞: Հավատացա՞՞ծ եք, որ դա նրան չի վնասի:

— Միանգամայն հավատացած եմ: Գնանք, ես հիմա շափելու եմ լաուդանումը:

— Եվս մեկ բույս: Հիմա ժամը տասնմեկն անց է: Ինչքա՞ն պետք է սպասել արդյունքին:

— Դժվար է ասել... Թերևս՝ մեկ ժամ...

— Կարծում եմ, սենյակը պետք է մութ լինի, ինչպես անցյալ տարի էր:

— Անպայման:

— Ես կսպասեմ իմ ննջասենյակում, ճիշտ և ճիշտ՝ ինչպես անցած անգամ: Դուրը կիսաբաց կթողնեմ: Անցյալ տարի նույնպես մի փոքր բաց էր: Ես կհետևեմ հյուրասենյակի դռանը և, հենց որ բացվի, մոմը կհանգցնեմ: Ամեն ինչ ճիշտ այդպես էլ եղել է այն գիշեր: Եվ հիմա էլ ամեն ինչ պետք է կրկնվի ճիշտ նույն ձևով, ճիշտ չէ՞:

— Հավատացա՞՞ծ եք, որ կկարողանաք ձեզ տիրապետել, միսս Վերինդեր:

— Նրա համար ես պատրաստ եմ ամեն ինչի,— կրքոտությամբ պատասխանեց նա:

Նրա դեմքին նայելով, ես համոզվեցի, որ նրա վրա կարելի է հույս դնել: Նորից դիմեցի միսոր Բրեֆին:

— Ես ստիպված եմ ձեզ խնդրել, որ մեկ բույսով մի կողմ դնեք ձեր թղթերը,— ասացի ես:

— Օ՛, իհարկե:

Նա ցրված ինձ նայեց, ասես նրան ընդհատել էի ամենահետաքրքիր տեղում, ինձ հետ մեկտեղ մոտեցավ դեղարեղին: Հետո, իր հետաքրքիր զբաղմունքին անձնատուր լինելու հնարավորություն չունենալով այլևս, նայեց Բետտերեչին և հոգնածորեն հորանջեց:

Միսս Վերինդերը մոտեցավ ինձ՝ սեղանի վրայից վերցնելով սառը ջրի գրաֆինը:

— Թույլ տվեք ես լցնեմ ջուրը,— շնչաց նա:— Ես պետք է ձեռքս դիպցնեմ դրան:

Սրվակից քառասուն գրան շափեցի և լաուդանումը լցրի բաժակի մեջ:

— Սրա երեք քառորդը լցրեք ջրով,— ասացի ես, բաժակը տալով միսս Վերինդերին:

Հետո Բեստերեջին կարգադրեցի փակել դեղարկղը, ավելացնելով, որ այն այլևս պետք չի գա: Մեր ծառայի դեմքը փայլեց անասելի թեթևացումից: Նա, անշուշտ, կասկածում էր, թե ես մտադիր եմ բժշկական փորձ կատարել նաև իր երիտասարդ տիրուհու վրա:

Իմ ցուցումով ջուր լցնելիս միսս Վերինդերը հարմար պահ գտավ և, երբ Բեստերեջը արկղն էր փակում, իսկ միստր Բրեֆը նորից իր թղթերով էր զբաղված, թաքուն համբուրեց բաժակի եզրը:

— Երբ մատուցեք նրան,— շնչաց գեղանի աղջիկը,— մատուցեք այս կողմով:

Գրպանիցս հանեցի այն բյուրեղիկը, որ ներկայացնելու էր ալմաստը, և տվի միսս Վերինդերին՝ ասելով.

— Սրան էլ պետք է դիպչի ձեր ձեռքը: Գրեք այնտեղ, որտեղ անցյալ տարի կուսնաքարն էիք դրել:

Նա մոտեցավ հնդկական պահարանիկին և ալմաստի գիր կատարող բյուրեղիկը դրեց այն դարակի մեջ, որտեղ իսկական ալմաստն էր դրված իր ծննդյան օրը: Միստր Բրեֆն այս ամենին նայում էր այնպես, ինչպես մնացած բոլոր բաներին. ամեննին հավանություն չտալով:

Բայց ծերունի Բեստերեջի ինքնատիրապետումը, ի մեծ լավասանություն իմ, դիմացավ այդ պահի դրամատիզմին: Երբ նա լուսավորում էր միսս Ռեչելի համար՝ նրա ձեռքը զոզում էր, և նա մտահոգ տեսքով շնչաց օրիորդին.

— Դուք հավատացած եք, միսս, որ սա հենց նույն դավակն է:

Լաուդանումն ու ջուրը ձեռքիս բռնած՝ նորից ուղղվեցի ղեպի դուռը: Շեմին կանգ առա վերջին հրահանգները միսս Վերինդերին տալու համար:

— Չմոռանաք ժամանակին հանգցնել մոմերը,— ասացի նրան:

— Կհանդցնեմ անմիջապես, — պատասխանեց նա, — և իմ ննջարանում կսպասեմ միայն մեկ մոմով:

Նա մեր ետևից փակեց հյուրասենյակի դուռը: Միստր Բրեֆի և Բետտերեջի ուղեկցութեամբ ես վերադարձա միստր Բլեկի սենյակը:

Նա շատ անհանգիստ շուռումուռ էր գալիս անկողնում և ջղայնացած հարցնում՝ ի վերջո այս գիշեր լաուդանում կտա՞ն իրեն, թե ոչ: Երկու վկաների ներկայութեամբ նրան տվի անհրաժեշտ շափի լաուդանում, շտկեցի նրա բարձերը և խորհուրդ տվի հանգիստ պառկել ու սպասել:

Բաց գույնի վարագույրներով մահճակալը դրված էր գլխի կողմով դեպի պատը, այնպես որ երկու կողմից բավականաչափ ազատ տեղ կար: Ես իջեցրի մահճակալի մի կողմի և սենյակի այն մասի վարագույրները, որ նա չէր կարող տեսնել, տեղավորեցի միստր Բրեֆին ու Բետտերեջին, որոնք պետք է սպասեին լաուդանումի ներգործութեանը: Մահճակալի թոնամասում կիսով չափ իջեցրի վարագույրը և ինձ համար աթոռ դրի այնպիսի դիրքով, որպեսզի հնարավորություն ունենամ լինելու նրա աչքի առաջ, եթե հարկ լինի՝ աննկատելիորեն հեռանալ նրա մոտից, թույլ տալ կամ թույլ չտալ, որ նա կարողանա խոսել ինձ հետ, նայած հանգամանքներին: Նախապես իմանալով, որ նա միշտ գիշերանոցով է քնել, մի մոմ դրի նրա գլխի մոտ՝ սեղանիկի վրա, բայց այնպես, որ լույսը աչքերի մեջ չընկնի: Մեկ ուրիշ մոմ տվի միստր Բրեֆին. սրա լույսը մեղմացնում էին մահճակալի իջեցված վարագույրները: Լուսամուտը կիսով չափ բացված էր օդափոխության համար: Տանը լուսություն էր տիրում: Իրսից միայն անձրևի մեղմ ձայնն էր գալիս:

Երբ բոլոր նախապատրաստություններն ավարտված էին, ես տեղ գրավեցի մահճակալի թոնամասում դրված աթոռի վրա: Ժամացույցս ցույց էր տալիս տասնմեկն անց քսան բոպե:

Միստր Բրեֆը դարձյալ զբաղվեց իր թղթերով և, կարծես, առաջվա պես խորասուղվեց նրանց մեջ: Բայց, հիմա նրան նայելով, նկատեցի որոշ նշաններ, որոնք ասում էին, թե իրավաբանությունն սկսում է կորցնել իր իշխանությունը նրա նկատմամբ: Մեր դրություն գրավյալ հետաքրքրությունն



աստիճանաբար իր գործն անում էր և ազդեցութիւնն էր գործում նույնիսկ նրա սթափ մտքի վրա: Իսկ ինչ Բեստերեջի անսասան սկզբունքների և վարվելաձևի մեջ նրա արժանապատվութեանն է վերաբերում, ապա դրանցից ոչինչ չէր մնացել: Նա մոռացել էր, որ ես «շառլատանական աճաբարութիւն» եմ անում միտքը Բլեկի նկատմամբ. մոռացել էր, որ ես ամբողջ տունը տակնուվրա եմ արել. մոռացել էր, որ ես մանուկ հասակից ի վեր «Ռոբինզոն Կրուզոն» շեմ կարգացել:

— Ի սեր աստծու, սըր,— հազիվ լսելի շշնջաց նա ինձ,— ասացեք, ե՞րբ կսկսվի ներգործութիւնը:

— Կեզդիշերից ոչ շուտ,— նույնպես շշնջոցով պատասխանեցի ես.— Մի խոսեք և հանգիստ նստեք:

Բեստերեջն ինձ հետ անպատշաճ մտերմութեան վերջին աստիճանին իջավ առանց իր արժանապատվութեան համար շնչին իսկ պայքարի. նա, ի պատասխան, աչքով արեց ինձ:

Աչքերս միտքը Բլեկի վրա փոխադրելով, տեսա, որ նա նույն ձևով շուռումուռ է գալիս անկողնում, փնթփնթալով հարցնում է, թե ինչու դեռ ոչ մի ազդեցութիւն չի գործում լաուզանումը: Նրա այդ վիճակում նրան ասելը, թե ինչքան շատ անհանգստութիւն և անհամբերութիւն ցուցաբերի, այնքան ավելի ուշ կսկսվի լաուզանումի ցանկալի ներգործութիւնը, ոչնչի չէր հանգեցնի: Ավելի լավ կլինէր աշխատել նրա մտքերը հեռացնել ամփոռնից, դրանք բեռնել որևէ այլ բանի վրա:

Այս նպատակով, նրան ներքաշեցի խոսակցութեան մեջ, աշխատելով նորից կենտրոնացնել այն առարկայի վրա, որը մեր խոսակցութեան թեման էր եղել երեկոյի սկզբում, ալմաստի վրա: Աշխատում էի նրա մտքերն ուղղել դեպի Լուսնաբարի պատմութեան այն հատվածը, որը վերաբերում էր Լուսնաբարը Լոնդոնից Յորքշիր հասցնելուն, դեպի այն վտանգը, որին նա ենթարկվել էր՝ թանկարժեք իրը Ֆրիդրիկ Նոլի բանկից վերցնելով, և դեպի հնդիկների անակնկալ հայտնու-վելը լեդի Վերինդերի տանը՝ աղջկա ծննդյան օրը: Այս դեպ-էրը հիշատակելով, ես դիտավորյալ ձևացրի, թե իբր շատ բան սխալ եմ հասկացել միտքը Բլեկի մի քանի ժամ առաջ ինձ պատմածից: Այսպիսով ես նրան ստիպեցի խոսել հենց

ներանից, ինչով որ մեզ հարկավոր էր զբաղեցնել նրա մրտա-  
քերը, իհարկե, չթողնելով, որ նկատի, թե միտումնավոր  
կերպով եմ անում դա: Կամաց-կամաց նա այնքան տարվեց  
իմ սխալ պատկերացումներն ուղղելով, որ դադարեց մահ-  
ճակալի վրա շուռումուռ գալուց: Նա ամփոփումս մասին բոլո-  
րովին մոռացել էր այն կարևոր պահին, երբ ես նրա աչքե-  
րից առաջին անգամ տեսա, որ ամփոփունն սկսում է ներգործել  
նրա ուղեղի վրա:

Նայեցի ժամացույցին: Տասներկուսից հինգ ըրպե էր պա-  
կաս: Անսովոր աչքը դեռ ոչ մի փոփոխություն չէր նկատի  
նրա մեջ: Բայց լաուդանումի ազդեցության արագ, թեև հա-  
զիվ նկատելի հաջողություններն սկսում էին ավելի ու ավելի  
պարզորոշ երևալ: Նրա աչքերը տեսողորեն փայլեցին, դեմքի  
վրա թեթև քրտինք հայտնվեց: Հինգ ըրպե հետո նա սկսեց  
խոսել կցկտուր. մենք դեռ շարունակում էինք մեր խոսակ-  
ցությունը: Նա համառորեն շարունակում էր արմատից խո-  
սել, բայց իր նախադասությունները չէր ավարտում: Հետ-  
մի պահ լուծյուն տիրեց: Հանկարծ նստեց անկողնում: Շա-  
րունակելով արմատի մասին մտածել, նորից սկսեց խոսել,  
բայց ոչ թե ինձ հետ, այլ ինքն իր հետ: Այդ փոփոխությունն  
ինձ ցույց տվեց, որ փորձի առաջին փուլը ձեռք է բերված:  
Միտար Բլեկն ամբողջովին ամփոփումս ազդեցության տակ էր,  
որը զրգռող ներգործություն էր ունեցել նրա վրա:

Արդեն տասներկուսն անց երեսուներեք ըրպե է: Հաջորդ  
կես ժամը վճռական էր մեզ համար. արդյո՞ք նա անկող-  
նուց կելնի, որպեսզի դուրս գա սենյակից:

Լարված ուշադրությամբ նրան հետևելով (անշափ ուրախ,  
որ փորձի առաջին արդյունքը և՛ ըստ էության, և՛ նույնիսկ  
գրեթե ճշգրտորեն ըստ ժամանակի համընկել էր իմ նա-  
խատեսվածի հետ), ես բոլորովին մոռացել էի գիշերային  
հսկումի գծով երկու բնկերներին: Այժմ նրանց նայելով, տե-  
սա միտար Բրեֆի թղթերով ներկայացված իրավադիտություն-  
նը անփութորեն թափված հատակին: Միտար Բրեֆն ինքը  
ազահորեն նայում էր մահճակալի ոչ կիսյ քաշված վարա-  
զույրների արանքով: Իսկ Բետտերեջը, դասային ամեն մի  
տարբերություն մոռացած, նայում էր միտար Բրեֆի ուսի  
վրայով:

Նկատելով, որ ես իրենց հմ նայում, հրկուսն էլ անմիջապես ետ քաշվեցին հրկու փոքրիկ տղաների նման, որոնց հարողոցի ուսուցիչը բռնել էր հանցանքի վայրում: Նշան անելով, նրանց հրավիրեցի հետևելու իմ օրինակին և կամացուկ հանեցի կոշիկներս: Եթե հարկ չինի գնալ միստր Բլեկի հոսից, ապա մեզ անհրաժեշտ կլինի այդ անել անաղմուկ:

Անցավ տասը բուպե՝ և ոչինչ չպատահեց: Հանկարծ նա վրայից մի կողմ գցեց վերմակը: Մի ոտքն իջեցրեց մահճակալից: Նստել ու տատանվում էր...

— Իզուր դա վերցրի բանկից,— փնթփնթաց նա ինքն իրեն: Այնտեղ ավելի ապահով էր:

Սիրտս սկսեց ուժգին խփել, ասես մուրճով թակեցին քունքերիս մեջ: Նա դարձյալ վախենում էր արմատի ամբողջականութան համար: Դրա վրա էր կենտրոնացած փորձի ամբողջ հաշտությունը: Ինձ հանկարծակի համակած հույսը շափից դուրս ուժեղ ցնցում եղավ իմ քայքայված նյարդերի համար: Ես ստիպված էի աչքերս հեռացնել նրանից, հակառակ դեպքում, կարծում եմ, ինձ չէի տիրապետի: Դարձյալ լուսթյուն տիրեց:

Երբ ես ինձ թույլ տվի նորից նայել նրան, նա արդեն կանգնած էր մահճակալի մոտ: Այժմ նրա բիբերը փոքրացած էին. աչն ժամանակ, երբ նա դանդաղորեն գլուխն էր տարուբերում՝ աչքերը փայլում էին սեղանիկի վրա վառվող մոմի լույսի տակ: Նա մտածմունքի մեջ էր, նա տարակուսում էր. նա նորից սկսեց խոսել.

— Ի՛նչ իմանաս... հնդիկները, գուցե, թաքնված են տառեր, ինչ-որ տեղ:

Նա լռեց և դանդաղորեն գնաց դեպի սենյակի մյուս ծայրը, կանգ առավ, մի քիչ սպասեց և ետ վերադարձավ մահճակալի մոտ, ինքն իրեն խոսելով.

— Այն նույնիսկ փակի տակ չէ՛ նրա հնդկական պահալանիկում է: Եվ դարակն էլ չի փակվում:

Նա նստեց մահճակալին:

— Ով ասես կարող է վերցնել,— շարունակեց նա:

Եվ նա նորից անհանգիստ վեր կացավ ու կրկնեց քիչ և ուղիղ ասածները.

— Ի՞նչ իմանաս... հնդիկները, գուցե, թաքնված են տանը, ինչ-որ տեղ:

Նա նորից մտածմունքի մեջ է: Ես թաքնվեցի մահճակալի վարագույրների հտևում: Նա անիմաստ, փայլկտուն հայացքով շափեց սենյակը: Ես շունչս պահեցի: Նորի՞ց ուշացում. լաուդանումի՞ ներգործության, թե՞ ուղեղի գործունեության մեջ՝ ո՞վ կարող է դա որոշել: Ամեն ինչ կախված էր նրանից, թե ինչ կանի նա այնուհետև:

Նա անկողին մտավ:

Մի ահալոր կասկած անցավ մտքովս: Գուցե ափիոնի քնեցնող ներգործությունը հիմա՞ է սկսվում: Դա հակասում էր իմ բոլոր հաշվարկներին. բայց ի՞նչ է հաշվարկը, երբ խոսքը ափիոնի մասին է: Աշխարհում հազիվ թե գտնվի երկու մարդ, որոնց վրա միանման ներգործի այն: Արդյո՞ք միտքը Բլեկի մարմնի մեջ շկար այնպիսի մի առանձնահատկություն, որի սյուտճառով լաուդանումի ներգործությունը նրա վրա նույնպես պետք է առանձնահատուկ լինի: Մի՞թե վերջնական հաջողության պահին անհաջողության պիտի մատնվենք մենք:

Ոչ, նա նորից հանկարծակի վեր կացավ:

— Ինչպե՞ս կարող եմ քնել՝ այս բանը հոգուս վրա ծանրացած:

Նա մի հայացք գցեց մահճակալի զլխամասում սեղանիկի վրա վառվող մոմին: Մի պահ անց վերցրեց մոմակալը:

Ես հանգրթի երկրորդ մոմը, որը վառվում էր վարագույրի մյուս կողմում, և միտքը Բրեքի ու Բետտերեջի հետ թաքնվեցի մահճակալի ետևում, ամենահեռավոր անկյունում: Նո՛ւշան արեցի նրանց, որպեսզի լուռ մնան, կարծես դրանից կախված լիներ նրանց կյանքը:

Մենք, վարագույրների հտևում թաքնված, սպասում էինք ուշինչ շտեմնելով ու ուշինչ շտեմնելով:

Մոմը, որ նա բռնել էր ձեռքում, հանկարծ տեղից շարժվեց: Առանց մոմը ձեռքից բաց թողնելու, նա արագ և անձայն քայլերով անցավ մեր մոտով:

Բացեց դուռը և դուրս եկավ ննջասենյակից: Մենք մեջանցքով հետևեցինք նրան: Նրա ետևից ներքև գնացինք...

աիճաններով: Նա ոչ մի անգամ ետ չնայեց, ոչ մի անգամ կանգ չառավ:

Նա բացեց հյուրասենյակի դուռը ու ներս մտավ առանց այն ծածկելու: Տան բոլոր դռների նման այս դուռը ևս կախված էր հին մեծ ծխնիների վրա: Դռան և կողագիստի միջև մի մեծ արանք էր մնում: Ես ձեռքով ուղեկիցներիս կանչեցի այդ անցքի մոտ, որպեսզի նա չկարողանա մեզ նկատել: Ինքս նույնպես կանգնեցի դռան հոտում, բայց սրտ մյուս կողմում: Իմ ձախ թևում խորան կար պատի մեջ: Եթե նա մտածեր միջանցքը նայել, ապա ես անմիջապես կարող էի թաքնվել այնտեղ:

Նա, մոմը ձեռքին բռնած, հասավ սենյակի մեջտեղը, նույն շուրջը, բայց ոչ մի անգամ ետ չնայեց:

Միտս Վերինդերի ննջասենյակի դուռը մի փոքր բացված էր: Օրիորդը հանգցրեց իր մոտի մոմը: Նա արիարար տիրակետում էր իրեն: Նրա սպիտակ թեթև շրջազգեստի աղոտ գծագրումները՝ ահա այն ամենը, ինչ ես կարող էի տեսնել: Ոչ ոք չէր կարող կասկածել, որ սենյակում մարդ կա: Օրիորդը կանգնած էր ստվերում, նրա բերանից ոչ մի բառ դուրս չի՞րավ, նա ոչ մի շարժում չարեց:

Ժամը մեկն անց էր տասը րոպե: Ես մեռելային լուսնյան մեջ լսում էի տեղացող անձրևի կամացուկ ձայնը և գիշերային մեղմ քամուց օրորվող ծառերի շրշումը:

Սենյակի մեջտեղում մի պահ անվճռական կանգնելուց հետո միտքը Բլեկը գնաց դեպի այն անկյունը, որտեղ հրեղական պանարանիկն էր գտնվում:

Նա մոմը դրեց պահարանիկի վրա և սկսեց իրար ետևից դուրս բաշել ու տեղը դնել դարակները, մինչև որ հասավ այն դարակին, որտեղ այժմաստի դեր կատարող բյուրեղիկն էր դրված: Նա մի պահ նայեց դարակին, հետո աջ ձեռքով այնտեղից հանեց բյուրեղիկը, իսկ ձախ ձեռքով պահարանիկի վրայից վերցրեց մոմը: Դրանից հետո վերադարձավ սենյակի մեջտեղն ու կանգ առավ:

Մինչև այստեղ նա ճշգրտությամբ կրկնեց այն ամենը, ինչ արել էր ծննդյան օրվա գիշերը: Արդյո՞ք նրա հետագա հորժոգություններն էլ կլինեն անցյալ տարի արածի ճշգրիտ էրկնությունը: Արդյո՞ք նա սենյակից դուրս կգա: Արդյո՞ք

կվերտդառնա իր ննչատենյակը, ինչպես որ, իմ ենթադրությամբ, այն ժամանակ էր վարվել: Արդյո՞ք նա մեղ ցույց կտա, թե ինչ էր արել ալմաստը իր սենյակը վերադառնալուց հետո:

Նրա առաջին շարժումը այն չէր, ինչ նա արել էր առաջին անգամ լատդանում ընդունելուց հետո: Նա մոժը դրեց սեղանին և մի քանի քայլ գնաց դեպի հյուրասենյակի հեռավոր անկյունը: Այնտեղ գտնվում էր բազմոցը: Չախ ձեռքով ծանրորեն հենվեց նրա թիկնակին, հետո շտկվեց ու նորից վերադարձավ սենյակի մեջտեղը: Այժմ ես տեսա նրա աչքերը: Դրանք խամրած էին ու կոպերն էլ ծանրացած:

Այդ պահին լարվածությունն անզգեց միսս Վերինդերի նյարդերի վրա: Նա մի քանի քայլ արեց ու կանգ առավ: Միստր Բրեֆն ու Բետտերեջը դուռն ետևից առաջին անգամ ինձ նայեցին: Նրանց, ինչպես և ինձ, համակեց այն նախազդացումը, թե մեր սպասումներն ի դերե են հլնելու: Բայց, այնուամենայնիվ, քանի դեռ նա կանգնած էր սենյակի մեջտեղում, հույս կար: Մենք ահավոր անհամբերությամբ սպասում էինք, թե ինչ կլինի հետո:

Այն, ինչ տեղի ունեցավ հետո, վճռեց ամեն ինչ: Նա բյուրեղիկը բաց թողեց ձեռքից: Այն ընկավ հատակին՝ դուռն մոտ, և մնաց աչքի առաջ ընկած: Նա բյուրեղիկը բարձրացնելու ոչ մի ճիգ չգործադրեց. բյուրեղիկին էր նայում պրդտոր հայացքով, և հանկարծ նրա գլուխն իջավ կրծքին: Նա հրերաց, դարձյալ մի պահ ուշքի եկավ, անհաստատ քայլերով դնաց դեպի բազմոցն ու նստեց: Մի վերջին ջանք էլ գործադրեց իր վրա, փորձեց վեր կենալ, ու նորից իջավ բազմոցին: Գլուխն ընկավ բարձերի վրա: Ժամը մեկն անց էր բեանհինգ րոպե: Ես դեռ չէի հասցրել ժամացույցը նսվիջ գրպանս դնել, երբ նա արդեն քնած էր:

Ամեն ինչ ավարտված էր: Այժմ նա գտնվում էր լատդանում: Ես մի քանի քայլ արեցի դեպի սենյակի մեջտեղը, որտեղ նա կանգնած էր: Մենք կարող էինք ազատ շարժվել ու խոսել:

Ես սենյակ մտա և միստր Բրեֆին ու Բետտերեջին ասացի, որ նրանք կարող են գալ իմ ետևից: Այժմ արդեն կարելի էր շվախենալ, որ նրան կանհանգստացնենք: Մենք կարող էինք ազատ շարժվել ու խոսել:

— Ամենից առաջ պետք է որոշել, — ասացի ես, — թե հիմա ինչպես վարվենք նրա հետ: Նա, հավանաբար, առնր-վազն վեց կամ յոթ, ժամ կքնի: Նրան նորից ննջասենյակ տանել հնարավոր չէ, շատ հեռու է: Եթե ես ավելի երիտա-տարզ լինեի, մենակ կանեի դա, բայց հիմա առողջութունս ուժերս այլևս առաջվանը չեն, և վախենում եմ, որ ստիպ-ված կլինեմ ձեր օգնությունը խնդրել:

Նրանք չէին հասցրել պատասխանել, երբ միսս Վերին-գիբը ցածր ձայնով կանչեց ինձ: Նա կանգնել էր իր ննջա-սենյակի դռան մեջ, ձեռքում բռնել թեթև շալն ու սեփական մահճակալի ծածկոցը:

— Դուք պետք է նստեք նրա մոտ մինչև օրթնա-նա՞լը, — հարցրեց նա:

— Այո, ես չեմ ուզում նրան մենակ թողնել, քանի որ ախքան էլ հավատացած չեմ նրա վրա ամբողջի ներգործու-թյան մեջ:

Օրիորդն ինձ տվեց շալն ու ծածկոցը:

— Ինչո՞ւ նրան անհանգստացնենք, — շնչաց նա: — Նրա համար անկողին սարքեք սազմոցի վրա: Ես դուռը կփակեմ ու կմնամ իմ սենյակում:

Դա, անկասկած, շատ ավելի հեշտ էր և ապահով: Օրիոր-դի առաջարկությունը հաղորդեցի միստր Բրեֆին ու Բետտե-րեչին. երկուսն էլ հավանություն տվին: Հինգ լույսի անց միստր Բլեկն արդեն հարմար պառկած էր բազմոցին, շա-լով ծածկված: Միսս Վերինգերը բարի զիշեր մաղթեց մեզ և իր ետևից փակեց դուռը: Փաստաբանին և ավագ ծառայա-պետին առաջարկեցի նստել սեղանի մոտ, որի վրա վառվում էր մոմը և գրենական պիտույքներ էին դրված:

— Նախքան մեր ցրվելը, — սկսեցի ես, — պետք է մի երկու խոսք ասեմ այսօր կատարված փորձի մասին: Մենք Երկու նպատակ էինք առաջադրել. նախ, պետք էր ապացու-ցել, որ անցյալ տարի միստր Բլեկը այս սենյակն է մտել ու լուսնաբարբ վերցրել՝ գործելով անգիտակցաբար և իրենից անկախ, ամբողջի ազդեցությամբ: Այն բոլորից հետո, որ դուք տեսաք, այժմ, հավանաբար, համոզված եք դրանում:

Երկուսն էլ, առանց տատանվելու, զրական պատասխան տվին:

— Երկրորդ նպատակն էր, — շարունակեցի ես, — իմ նալ, թե ինչ արեց նա Լուսնաբարը, երբ Մենդյան օրվա գիշերը միսս Վերինդերի աչքի առաջ այն վերցրած դուրս եկավ հյուրասենյակից: Այդ նպատակի հասնելն, իհարկե, կախված էր այն բանից, թե ինչպիսի ճշգրտությամբ նա կկրկնի իր անցյալ տարվա բոլոր գործողությունները: Նա այդ շաբաթ, և փորձի երկրորդ նպատակը ձեռք չբերվեց: Չեմ կարող ասել, թե ես շվշտացա դրանից, բայց ազնվորեն կասեմ, որ ես ամենևին չզարմացա դրանից: Ես հենց սկզբից միստր Բլեկին ասել էի, որ այդ գործում մեր լիակատար հաջողությունը կախված է այն ֆիզիկական ու բարոյական պայմանների ճշգրիտ վերարտագրությունից, որոնցում նա եղել է անցյալ տարի, և նրան նախադրուշացրել էի, որ դրան հասնել գրեթե հնարավոր չէ: Մենք այդ պայմանները վերարտագրեցինք միայն մասամբ, փորձն էլ, իհարկե, միայն մասամբ հաջողվեց: Գուցե ես չափից ավելի շատ լաուդանում տվի նրան: Բայց, իմ կարծիքով, նշածս պատճառներից հենց առաջինն է այն իսկական պատճառը, որին մենք պարտական ենք և՛ մեր հաջողությամբ, և՛ մեր անհաջողությամբ:

Այս ասելով, ես միստր Բրեֆի առջև դրեցի գրենական արխիվները և հարցրի, չի՞ համաձայնվի, արդյոք, հանգամանորեն շարադրել այն ամենը, ինչին որ ականատես եղավ, և զա կնքել իր ստորագրությամբ: Նա անմիջապես ձեռքն առավ գրիչը և արոֆեսիոնալ արագությամբ հաշվետվություն կազմեց:

— Սրանով ևս կարող եմ մասամբ շտկել այն, ինչ մեր միջև տեղի ունեցավ երեկոյան, — թուղթը ստորագրելով՝ աւաց նա: — Ներողություն եմ խնդրում ձեզնից, միստր Զենինգս, ձեր նկատմամբ ցուցաբերածս անվստահության համար: Գուք անգնահատելի ծառայություն մատուցեցիք Ֆրենկլին Բլեկին: Մեր իրավաբանական լեզվով ասած՝ դուք շահեցիք ձեր գութը:

Բետաերեջի ներողությունը բնորոշ էր նրա համար:

— Միստր Զենինգս, — ասաց նա, — երբ դուք վերստին կարգաք «Մորինդոն Կրուզոն», մի բան, որ ևս անպայման լուրհուրդ եմ տալիս ձեզ, կտեսնեք, որ նա երբեք չի հրաժարվում իր մոլորությունները իոսստովանելուց: Խնդրում եմ,



որք, հաշվեք, որ այս դեպքում ես գնում եմ Ռորլինզոն Կրու-  
զայի ոտնահետքերով:

Այս ասելով, նա իր հերթին ստորագրեց թուղթը: Երբ  
վեր կացանք սեղանի մոտից, միստր Բրեֆը մի կողմ տա-  
րավ ինձ:

— Մի խոսք արմաստի մասին, — ասաց նա: — Ձեր կար-  
ծիքով Ֆրենկլին Բլեկը լուսնաքարը պահել է իր սենյակում: Ի՞նչ  
կարծիքով, լուսնաքարը գտնվում է լոնդոնում՝ միստր  
Լյուկերի բանկիրների մոտ: Չվիճենք, թե ով է մեզնից իրա-  
վացի: Սահմանափակվենք հետևյալ հարցով. մեզնից ո՞վ  
առաջինը կկարողանա գործնականում ստուգել իր տեսու-  
թյունը:

— Իմ ստուգումն այսօր գիշեր արդեն կատարվեց և հա-  
ջողություն չունեցավ, — պատասխանեցի ես:

— Իսկ իմ ստուգումը, — առարկեց միստր Բրեֆը, — դեռ  
էոր-նոր է կատարվում: Ահա արդեն երկու օր է, ինչ ես խու-  
զարկունք եմ կանգնեցրել բանկի մոտ՝ միստր Լյուկերին  
հետևելու համար, և նրանց ետ չեմ կանչի մինչև ամսվա վեր-  
ջը: Ես գիտեմ, որ միստր Լյուկերը արմաստը պետք է ետ  
գնի անձամբ, և հույս ունեմ, որ լուսնաքարը գրավ դրած  
մարդը, այն ետ գնելիս, կստիպի արմաստը վերցնել բանկից:  
Այդ դեպքում ես կկարողանայի իմանալ, թե ով է այդ մար-  
դը: Եվ այդ ժամանակ մենք զաղտնիքը կբացահայտենք հենց  
այն տեղից, որտեղ այն մեզ համար անթափանցելի դարձավ  
այսօր: Համաձայն եք սրան:

Ես, անշուշտ, համաձայնվեցի:

— Ես առավոտյան զննաքով վերադառնում եմ լոնդոն, —  
շարունակեց փաստաբանը: — Կարող է պատահել, որ վերա-  
դառնալիս օրեկ նոր բան լսեմ, և շափաղանց կարևոր է, որ  
այդ դեպքում Ֆրենկլին Բլեկը մոտերքում լինի: Ես մտազիր  
եմ. հենց որ արթնանա, նրան ասել, որ ինքը պետք է ինձ  
հետ լոնդոն դա: Այն ամենից հետո, որ կատարվեց, կարո՞ղ  
եմ հույս ունենալ, որ դուք ձեր ազդեցությունը կգործադրեք  
այս հարցում ինձ պաշտպանելու համար:

— Անպայման, — պատասխանեցի ես:

Միստր Բրեֆը սեղմեց ձեռքս ու դուրս եկավ սենյակից:  
Բետտերեջը հետևեց նրան:

Ես միտոր Բլեկին նայելու համար մոտեցա բաղմոցին։ Պառկեցրածս պահից ի վեր նա չէր շարժվել։ Ընկղմված էր խոր ու հանգիստ քնի մեջ։

Մինչ նրան էի նայում՝ ննջասենյակի դուռը կամացուկ բացվեց։ Շեմի վրա նորից երևաց միսս Վերինդերը իր ամառային շքեղ շրջազգեստով։

— Վերջին ծառայութիւնը մատուցեք ինձ, — շշնջոցով ասաց նա. — Թույլ տվեք ձեզ հետ մեկտեղ նստել նրա մոտ։

Ես որոշ ժամանակ տատանվում էի, նկատի ունենալով ոչ թե պատշաճութիւնը, այլ օրիորդի գիշերային հանգրստութիւնը։ Նա բուրբովին մոտեցավ ինձ ու բռնեց ձեռքս։

— Ես չեմ կարող քնել, ես նույնիսկ չեմ կարող հանգիստ նստել իմ սենյակում, — ասաց միսս Վերինդերը։ — Օ՛, միտոր Ջենինգս։ Եթե դուք իմ տեղը լինեիք, հապա մի պատկերացրեք, ինչպե՞ս կուզեիք նստել նրա մոտ ու նայել նրան։ Խրնդրում եմ, համաձայնվեք։

Հարկ կա՞ ասելու, որ ես չկարողացա դիմադրել։ Իհարկե, ոչ։

Նա աթոռը մոտեցրեց բաղմոցին։ Անձայն հիացմունքով միտոր Բլեկին նայեց այնքան ժամանակ, մինչև որ անսասման երջանկութիւնից արցունքներ երևացին աչքերում։ Նա արցունքները սրբեց և ասաց, որ գնում է իր ձեռագործը բերի։ Ձեռագործը բերեց, բայց ոչ մի կութ չտվեց։ Ձեռագործն ընկած էր ծնկների վրա, նա անկարող էր մի ակնթարթ անգամ աչքը հեռացնել նրանից, որպեսզի թևերը ասեղը։ Ես հիշեցի իմ երիտասարդութիւնը, հիշեցի մի ժամանակ սիրով ինձ հառված հեզ աչքերը։ Ճմլվող սրտով դիմեցի օրագրիս, որպեսզի թեթևանամ, գրառեցի այն, ինչ որ այստեղ գրված է։

Այդպես լուռ նստեցինք երկուսով։ մեկը խորասուղված իր օրագրի մեջ, մյուսը՝ տարված իր սիրով։

Անցնում էին ժամերն իրար ետևից, իսկ Ֆրենկլին Բլեկը դեռ խոր քնի մեջ էր։ Օրը բացվում էր և ավելի ու ավելի էր լուսանում, իսկ նա դուրս չէր գալիս իր ընդարմացումից։

Ժամը վեցի մոտերքում զգացի, որ սովորական ցավերս սկսվում են։ Ստիպված էի ժամանակավորապես օրիորդին մենակ թողնել նրա հետ, պատճառաբանելով, թե գնում եմ վերև ննջասենյակից նրա համար ևս մի բարձր բերելու։ Այս

անգամ իմ նուպան երկար շտեկեց: Շուտով ի վիճակի եղա՝  
վերադառնալու:

Օրիորդին գտա Բլեկի գլխավերևում: Ներս մտնելուս ուս-  
հին նա շուրթերը դիպցրեց նրա ճակատին: Ես շատ խիստ  
տեսքով տարուբերեցի գլուխս: Եվ նրան մատնացույց արի  
աթուր: Ի պատասխան՝ նա ինձ նայեց դեմքի պարզ ժպիտով  
ու հմայիչ շառագունումով:

— Գուք էլ իմ փոխարեն նույնը կանեիք, — շշջոցով ա-  
սաց նա:

Ժամը ճիշտ ութն է: Նա առաջին անգամ շարժվեց:

Միսս Վերինդերը շոքել է բազմոցի մոտ: Այնպիսի տեղ է  
ընտրել, որպեսզի Բլեկի աչքերը, հենց որ բացի, ուղիղ էնկ-  
նեն իր դեմքին:

Մենա՞կ թողնեմ նրանց:

Իհարկե:

Ժամը տասնմեկն է: Տունը նորից դատարկվել է: Նրանք  
բոլորը հաշտվել են իրար հետ և ամեն ինչ կարգավորել.  
նրանք բոլորը ժամը տասի գնացքով մեկնել են Լոնդոն: Եր-  
ջանկության իմ կարճատև երազն ավարտվեց: Ես նորից արթ-  
նանում եմ և գնում դեպի իմ տխուր ու միայնակ կյանքի  
իրականությունը:

Զեմ համարձակվի այստեղ գրառել այն սիրալիր խոսքե-  
րը, որ ասացին ինձ, հատկապես միսս Վերինդերն ու միստր  
Բլեկը: Եվ հետո՝ դա անօգուտ է: Ես այլ խոսքերը միշտ  
կհիշեմ իմ մենակության պահերին, դրանք ինձ կօգնեն տա-  
նելու այն, ինչ դեռևս վիճակված է տանել ինձ՝ վախճանից  
առաջ: Միստր Բլեկը խոստացավ գրել ու հաղորդել այն, ինչ  
տեղի կունենա Լոնդոնում: Միսս Վերինդերը Յորքշիր կվերա-  
դառնա աշնանը (հավանաբար՝ իր հարսանիքի ժամանակ)  
և ես պետք է արձակուրդ վերցնեմ ու հյուրընկալվեմ նրանց  
մոտ: Աստված իմ, որքան ուրախ էր սիրտս, և որ Թեչելի  
երջանկությամբ ու երախտագիտությամբ լի աչքերն ինձ էին  
եայում, և նրա ձեռքի ջերմ սեղմումն ինձ ասում էր. «Սա  
գուք եք ավել ինձ»:



## ՀԻՆԳԵՐՈՐԳ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

որ գրել է Ֆրենկլին Բլեկը

### Գ Լ ու խ I

Իմ կողմից մի քանի խոսք ավելացնեմ, որպեսզի լքացնեմ էզրա Ջենինգսի օրագրում եղած պատմությունը:

Իմ մասին միայն այսբանը կարող եմ ասել, որ արթնացա քսանվեցի առավոտյան, ամենևին շիմանալով, թե ինչ եմ ասել կամ ինչ եմ արել ավիտնի ազդեցությամբ, այն պահից, երբ սկսվել է նրա ներգործությունը, և մինչև այն պահը, երբ աչքերս բացել եմ Ռեչելի հյուրասենյակի բազմոցի վրա:

Թե ինչ եղավ, երբ արթնացա, այդ մասին մանրամասն հաշիվ տալու իրավունք չեմ վերապահում ինձ: Միայն ասեմ, որ Ռեչելն ու ես իրար հասկացանք, նախքան բացատրության որևէ խոսք կասվեր մեկ կամ մյուս կողմից:

Բայց ես պատրաստ եմ ավելացնելու, որ միսիս Մերիդ-

յուն, հավանաբար, մեզ անակնկալի կբերեր, եթե շիհներ Ռե-  
շիի հոգու արիությունն: Նա լսեց հարգարժան տիկնոջ շքե-  
շագգեստի շքշյունը միջանցքում և անմիջապես ընդառաջ վա-  
զեց նրան: Ես լսեցի, թե ինչպես միսիս Մերիդյուն ասաց.  
«Ի՞նչ է պատահել», և Ռեշիի պատասխանը. «Հիմա պայ-  
թյուն կլինի»: Միսիս Մերիդյուն անմիջապես թույլ տվեց բռ-  
նել իր ձեռքը և տանել այգի, առաջիկա ցնցումներից հեռու  
Տուն վերադառնալիս նա ինձ դիմավորեց նախասրահում և  
հայտարարեց, թե իրեն ուղղակի անպշտեղեղ էն գիտության  
հաջողությունները այն ժամանակից ի վեր, որ ինքը սովորել  
է դպրոցում:

— Պայթյունները, միսսր Բլեկ, անհամեմատ ցածրա-  
ձայն են, քան եղել են առաջներում: Հավատացնում եմ ձեզ,  
ես այդուց գրեթե չեմ լսել միսսր Ջենինգսի կատարած պայ-  
թյունը: Եվ հիմա, երբ մենք տուն ենք վերադարձել, ես հոտ  
չեմ առնում ամենեկին: Ես, հիրավի, պետք է ներողություն  
խնդրեմ ձեր բժշկ բարեկամից: Արդարությունը պահան-  
ջում է տեսլ, որ նա հոյակապ է անցկացրել դա:

Եվ այսպես, Բեստերեջին ու միսսր Բրեֆին հաղթելով,  
էդրա Ջենինգսը հնազանդեցրել էր նաև միսիս Մերիդյունին:

Նախաճաշի ժամանակ միսիս Բրեֆը շթաքցրեց, թե ինչ  
պատճառով է ինքն ուզում, որ ես իր հետ լոնդոն գնամ առա-  
վոտյան գնացքով: Բանկի մոտ հսկողությունը և դրա արդ-  
յունքը, որ կարող էր ստացվել, այնպիսի մի անորոշ հետա-  
բորբություն էին հարուցել Ռեշիի մեջ, որ նա անմիջապես  
որոշեց (եթե միսիս Մերիդյուն չառարկի) մեզ հետ լոնդոն  
մեկնել՝ մեր գործողությունների վերաբերյալ ամենաթարմ  
տեղեկություններն ստանալու համար:

Միսիս Մերիդյուն դիջող ու ներողամիտ էր դարձել այն  
հիրավի քաղաքավարի եղանակից հետո, որով կատարվել էր  
պայթյունը. Բեստերեջին հաղորդել էին, որ մենք չորսով վե-  
րադառնում ենք առաջնության գնացքով: Ես սպասում էի, որ  
նա մեզ հետ մեկնելու թույլտվություն կխնդրի: Բայց Ռեշիլը  
խելամտորեն այնպիսի մի զրաղմունք տվեց ծեր ծառային,  
որը հետաքրքիր էր նրա համար: Նրան հանձնարարվեց ավար-  
տել տան կահավորումը, և նա այնքան շատ էր կլանված իր  
ծառայողական պատասխանատվությամբ, որ չէր կարող

«խուզարկուական տենդ» ղգալ, ինչպես որ կզգար այլ հանգամանքներում:

Միակ բանը, որի համար ափսոսում էինք Լոնդոն մեկնելով, այն էր, որ պետք է ավելի շուտ բաժանվեինք էդրա Ջենինգսից, քան այդ ուզում էինք: Հնարավոր չէր նրան համոզել, որ մեզ հետ գա: Ես միայն կարող էի նրան խոստանալ, որ կզրեմ, իսկ Ռեչելը կարող էր միայն պնդել, որ նա հյուրընկալվեր իր մոտ, երբ ինքը Յորքշիր վերադառնար: Մենք հաստատ հույս ունեինք նրա հետ տեսնվել մի քանի ամիս հետո, և, այնուամենայնիվ, մեկ համար խորապես տխուր ինչ-որ բան կար նրանում, որ, երբ գնացքը շարժվեց, մեր ամենալավ ու թանկ բարեկամը միայնակ կանգնած մնաց կառամատուլյուն:

Մենք դեռ նոր էինք Լոնդոն հասել, երբ միտար Բրեֆին մոտեցավ բաճկոնակով ու մաշված սև մահուդից կարված շալվարով մի տղա, որը ուշադրութուն էր գրավում արտասովոր աչքերով: Դրանք այնքան ուռուցիկ էին և այնքան լայն բացված, որ թվում էր, թե ոչ մի կերպ չեն կարող մնալ իրենց կապիճներում: Տղային լսելուց հետո միտար Բրեֆը կանանց խնդրեց ներևլ մեզ, և՛ թե մենք իրենց շուղեկցենք Պորտլենդի հրապարակ: Ես հաղիվ էի հասցրել Ռեչելին խոստանալ, որ կվերադառնամ ու կպատմեմ այն ամենը, ինչ որ կլինի, երբ միտար Բրեֆը թափով բռնեց ձեռքս և արագորեն քաշեց դեպի կառքը: Արտասովոր և ուռուցիկ աչքերով տղան նստեց կառապանի մոտ, և կառքը զրորվեց դեպի Լոմբարդյան Վոլոջը:

— Լուրեր բանկի՞ց, — հարցրի ես, երբ շարժվեցինք:

— Լուրեր միտար Լյուկերի մասին, — պատասխանեց միտար Բրեֆը:— Մեկ ժամ առաջ տեսել են, թե ինչպես նա կառքով դուրս է եկել Լամբեթի իր տնից, երկու մարդու հետ, հանձինս որոնց իմ մարդիկ ճանաչել են զգեստափոխված ոստիկաններին: Եթե հնդիկների հանդիպ սարսափը միտար Լյուկերին ստիպել է նախազդուշական միջոցներ ձեռնարկել, ապա եզրակացությունը բավականաչափ սլարզ է: Նա գնում է բանկից արմատը վերցնելու:

— Իսկ մենք գնում ենք բանկ՝ տեսնելու, ինչ ինչ կստացվի էրանից:

— Այո, կամ լսելու, թե ինչ է ստացվել, եթե մինչ այդ

ամեն ինչ ավարտված լինի: Ուշագրություն դարձրե՞լ եք այն տղայի վրա, որը նստած է կառապանի տեղում:

— Իմ ուշագրությունը գրավել են նրա աչքերը:

Միստր Բրեֆը ծիծաղեց.

— Իմ գրասենյակում այդ խեղճի անունը դրել են Հուսեֆի՝ նա ինձ մոտ թղթատար է աշխատում, և ես կուղևի, որպեսզի իմ գրասենյակի ծառայողներին, որոնք այդ մականունն են տվել տղային, կարելի լիներ վստահել այնպես, ինչպես նրան: Հուսեֆին, շնայած իր աչքերին, լոնդոնի ամենաճարպիկ տղաներից է:

Հինդից քսան ըոպե էր սլակաս, երբ մենք մոտեցանք Լոմբարդյան փողոցին: Հուսեֆին, կառքի զուռը բացելով, աղերսական նայեց իր տիրոջը:

— Գո՛ւ էլ ես ուզում ներս մտնել,— սիրալիք հարցրեց միստր Բրեֆը:— Լավ, միայն թե ինձնից չհեռանաս մինչև նոր կարգադրություն անելա... Նա կայծակի պես արագաշարժ է,— ականջիս շնչաց միստր Բրեֆը:— Հուսեֆիի համար Երկու խոսքն էլ է բավական այնտեղ, որտեղ մեկ ուրիշ տղայի համար քսանն էլ հերիք չի անի:

Մենք ներս մտանք: Առաջին գրասենյակը՝ իր երկար անջրբակտով, որի ետևում գանձապահներն էին նստած, լիքն էր մարդկանցով. բոլորն էլ իրենց հերթին էին սպասում, որպեսզի մինչև ժամը հինգին բանկի փակվելը փող վերցնեն կամ դնեն:

Հենց սր միստր Բրեֆը ներս մտավ՝ բաղձությունից Երկու հոգին մոտեցան նրան:

— Գե՞, — հարցրեց փաստաբանը:— Տեսա՞ք նրան:

— Կես ժամ առաջ, սրբ, մեր մոտով անցավ գնաց ներքին գրասենյակը:

— Դեռ դուրս չի՞ եկել:

— Դեռ ոչ, սրբ:

Միստր Բրեֆը շրջվեց իմ կողմը:

— Սպասենք, — ասաց նա:

Իզուր էի ես բազմության մեջ աչքերով փնտրում երեք հնդիկներին: Նրանք ոչ մի տեղ չէին երևում: Թուխ դեմքով

միակ մարդը լոցմանի՝ բաճկոնակով և լայնեզր կլոր զլխարկով բարձրահասակ տղամարդն էր, որ նավաստու էր նման: Մի՞թե սա նրանցից մեկն է՝ նավաստու հագուստով: Չի՞ կարող պատահել: Այդ տղամարդը բոլոր հնդիկներից բարձրահասակ էր, իսկ նրա դեմքը, այնտեղ, որտեղ թավ ու սև մազերով ծածկված չէր, երկու անգամ ավելի լայն էր, քան նրանցից յուրաքանչյուրի դեմքը:

— Դավաղիրներից որևէ մեկն այստեղ պետք է լինի,— ասաց միստր Բրեֆը, իր հերթին նայելով թխադեմ նավաստուն,— և, գուցե, հենց սա է, որ կա:

Մինչ նա որևէ ուրիշ բան կհասցնեի տեսել, ուռուցիկ աչքերով տղան հարգալից քաշեց նրա սերթուկի փեշը: Միստր Բրեֆը նայեց այնտեղ, որտեղ տղան էր նայում:

— Սո՛ւ,— ասաց նա:— Ահա միստր Լյուկերը:

Բանկի ներքին բաժանմունքից դուրս եկավ վաշխառուն, իսկ նրա ետևից՝ նրան պահպանող երկու ոստիկանները՝ քաղաքացիական հագուստով:

— Նրան աչքից բաց չթողնենք,— շնչաց Բրեֆը:— Եթե նա ալմաստը հանձնելու է որևէ մեկին, ապա հանձնելու է այստեղ:

Մեզնից ոչ մեկին չնկատելով, միստր Լյուկերը մերթ խիտ, մերթ նոսրացող բազմության միջով գնաց դեպի դուռը: Ես պարզորոշ տեսա, թե ինչպես նրա ձեռքը շարժվեց, երբ նա անցավ մուգ-մոխրագույն վայելուչ կոստյումով մի ցածրահասակ, պնդակազմ մարդու մոտով: Այս մարդը թեթևակի ցնցոլեց ու նայեց նրա ետևից: Միստր Լյուկերը զանդադորեն շարունակեց ճանապարհը: Դուան մեջ ոստիկանները կանգնեցին նրա երկու կողմում, նրանց ետևից գալիս էր միստր Բրեֆի երկու խուզարկուներից մեկը: Մի րոպե անց՝ բոլորն էլ աչրից չբացան:

Ես նայեցի փաստարանին, իսկ հետո բազմանշանակ մի հայացք զցեցի մուգ-մոխրագույն կոստյումով մարդու վրա:

— Այո,— ականջիս շնչաց միստր Բրեֆը,— Լս էլ եմ նկատել:

Նա շրջվեց՝ փնտրելով իր մյուս խուզարկուին: Բայց սա ոչ մի տեղ չէր երևում: Նա ետ նայեց, կամենալով մոտ կանչել տղային: Բայց Հուսթերին նույնպես անհետացել էր:



— Գրողը տանի: Սա ի՞նչ է նշանակում,— ջղտյնացած ասաց միստր Բրեֆը:— Երկուսն էլ մեղ լքեցին հենց այն ժամանակ, երբ ամենից շատ էին պետք...

Այդ պահին մոտեցավ մուգ-մոխրագույն կոստյումով մարդու հերթը: Նա շեկը մեկնեց գանձապահին, վերցրեց ստացականն ու շրջվեց, որ գնա:

— Ի՞նչպես վարվե՞նք հիմա,— հարցրեց միստր Բրեֆը:— Մենք չենք կարող մեզ նվաստացնել այդ աստիճան, որ գնանք նրա ետևից:

— Ես կարող եմ,— պատասխանեցի:— Ես մարդուն աչքիցս չեմ կորցնի նույնիսկ տասը հազար ֆունտի դնով:

— Այդ դեպքում,— պատասխանեց միստր Բրեֆը,— ես էլ ձեզ աչքիցս չեմ կորցնի, թեկուզ երկու անգամ ավելի մեծ գումար տան ինձ: Հրաշալի դբազմունք է իմ վիճակում գտնվող մարդու համար,— փնթփնթաց նա քթի տակ, երբ անծանոթի ետևից երկուսով դուրս եկանք բանկից:— Ի սեր աստծու, այս մասին ոչ ոքի չասեք: Եթե սա հայտնի դառնա՝ ես կղրկվեմ իմ գործից:

Մոխրագույն կոստյումով մարդը նստեց Օմնիբուս, որը լոնդոնի արևմտյան մասն էր մեկնում:

Մենք հետևեցինք նրան: Միստր Բրեֆը դեռ պահպանել էր սլառանեկան հոգին: Ես հաստատապես պնդում եմ դա, երբ նա Օմնիբուս նստեց՝ կարմրեց:

Մոխրագույն կոստյումով մարդը Օքսֆորդի փողոցում կանգնեցրեց Օմնիբուսն ու իջավ: Մենք նորից գնացինք նրա Լտեից: Նա մտավ դեղատուն:

Միստր Բրեֆը ցնցվեց:

— Իմ դեղագործն է,— ասաց նա:— Վախենում եմ, որ սխալ ենք արել:

Մտանք դեղատուն: Միստր Բրեֆը ցածրածայն մի քանի խոսք փոխանակեց նրա տիրոջ հետ և հիասաթափված ու զարմացած դեմքով նորից մոտեցավ ինձ:

— Սա մեծ պատիվ է մեզ համար,— ասաց նա, ձեռքս լռած՝ դեղատնից դուրս բերելով ինձ:— Գոնե սա միթիսուրու թյուն է:

— Ի՞նչն է պատիվ մեզ համար,— հարցրի ես:

— Այն, միստր Բլեկ, որ մենք երկուսս այս ասպարեզում

հրբևէ հղած ամենավատ սիրող-խուզարկուններն ենք: Գորշ կոստյումով մարդը հրեսուն տարի է դեղագործի մոտ է աշխատում: Նա բանկ է ուղարկվել իր տիրոջ հաշվին փող մուծելու համար, և լուսնաքարի մասին գիտե՞լ այնքան, որքան նորածին երեխան:

Հարցրի, թե ինչ անենք հիմա:

— Վերադառնանք իմ գրասենյակը,— ասաց միստր Բրեֆը:— Հուսերի՞ն և իմ մյուս տղան, հավանաբար, գնացել են ինչ-որ մեկի հետեից... Հուսանք, որ գոնե նրանք սուր աչք կունենան:

Երբ հասանք միստր Բրեֆի գրասենյակը, նրա երկրորդ խուզարկուն արդեն այնտեղ էր: Արդեն տասնհինգ ըրպեից ավելի նա մեզ էր սպասում:

— Դե,— հարցրեց միստր Բրեֆը,— ի՞նչ նորություններ ունեք:

— Ափսոսանքով պետք է ասեմ, սըր, որ ես սխալ եմ կատարել: Ես պատրաստ էի երգվելու, որ տեսա, թե ինչպե՞ս միստր կյուկերն ինչ-որ բան տվեց բաց գուլնի վերակուով ձեր ջենտլմենին: Բայց պարզվեց, որ ձեր ջենտլմենը, սըր, երկաթի իրերի շատ հարգարժան առևտրական է Իստչիպում:

— Որտե՞ղ է Հուսերի՞ն,— անարտունջ հարցրեց միստր Բրեֆը:

Խուզարկուն աչքերը շոհց:

— Չգիտեմ, սըր: Բանկից դուրս գալուց հետո նրան չեմ տեսել:

Միստր Բրեֆը բաց թողեց նրան:

— Երկուսից մեկն է,— ասաց նա ինձ.— կամ Հուսերի՞ն փախել է, կամ սեփական նախաձեռնությամբ հետևում է որևէ մեկին... Ի՞նչ կասեք ինձ հետ այստեղ ճաշելու համար, այն դեպքում, եթե տղան մեկ կամ երկու ժամ հետո վերադառնա: Նկուղում լավ գինի ունեմ, և կարող ենք մեկին սըրճարան ուղարկել՝ թակովի կտալետ բերելու:

Ճաշեցինք միստր Բրեֆի գրասենյակում: Մինչ կհասցընեինք սփուսը վերցնել, մեզ զեկուցեցին, որ ինչ-որ մեկն ուզում է խոսել փաստաբանի հետ: Արդյո՞ք Հուսերի՞ն էր: Ոչ, այն խուզարկուն էր, որին ուղարկել էինք միստր կյուկերին հետևելու սրա բանկից դուրս գալուց հետո:

Հաղորդած տեղեկություններն այս անգամ էլ ոչ մի հետաքրքրություն չէին ներկայացնում: Միստր Էյուկերը վերադարձել էր տուն և այնտեղ բաց թողել իր պահապաններին: Նա այլևս դուրս չէր եկել: Մութն ընկնելուն պես նրա տան լուսամուտափեղկերը ծածկվել էին և դուռը փակվել էր սողնակով: Տան առջևի փողոցին և տան ետևի նրբանցքին ուշադիր հետևել են: Ոչ մի տեղ հնդիկների ոչ մի հետք չի եղել, տան մոտերքում ոչ ոք թրև չի եկել: Այս փաստերը հաղորդելուց հետո խուղարկուն ուղեց իմանալ, թե ինչ նոր հրահանգներ կլինեն: Միստր Բրեֆը գիշերն աղատ թողեց նրան:

Մենք դեռ մի կես ժամ էլ սպասեցինք տղային, և իզուր սպասեցինք: Ժամանակն էր, որ միստր Բրեֆը Հեմփստեդ մեկներ, իսկ ես վերադառնալի Պորտլենդի հրապարակ՝ Ռեչելի մոտ: Այցետոմսս թողեցի գրասենյակի պահակի մոտ, վրան գրելով, որ իմ բնակարանում կլինեմ տասն անց կեսին: Հանձնարարեցի այցետոմսը հանձնել Հուսբերիին, երբ վերադառնա:

Կան մարդիկ, որոնք կարողանում են նշանակված ժամից շուշանալ հրեք, իսկ մարդիկ էլ կան, որ ուշանալու հատկություն ունեն: Ես պատկանում եմ վերջիններիս թվին: Սրան ավելացրեք, որ ես երեկոն անցկացրի Պորտլենդի հրապարակում, Ռեչելի հետ բազմոցի վրա նստած՝ քառասուն ոտնաչափ երկարությամբ սենյակում, որի հեռավոր անկյունում բազմած էր միսիս Մերիդյուն: Արդյո՞ք որևէ մեկին կզարմացնի, որ ես տասն անց կեսի փոխարեն տուն վերադարձա տասներկուսն անց կեսին: Եթե այո, ապա սլոյպիսին անսիրտ մարդ է: Եվ շատ մեծ հույս ունեմ, որ երբևէ այդպիսի մարդու չեմ հանդիպի:

Մտառս, դուռն իմ առջև բացելով, մի թուղթ մեկնեց ինձ: Ես կարդացի իրավաբանի հստակ ձեռագրով գրվածը.

«Ներեցեք, սրբ, սաստիկ քնել եմ ուզում: Նորից կգամ վաղը առավոտ ժամը տասին»:

Հարցովորձ անելուց պարզվեց, որ եկել է ուռուցիկ աչքերով տղան, ցույց տվել իմ այցետոմսը, սպասել մոտ մեկ ժամ, անընդհատ քնել է, արթնացել, հետո մի քանի խոսք գրել ինձ համար ու դնացել տուն, հանդիսավորությամբ ժա-

ռային հալորպել, որ «եթե ինքը գիշերը չքնի՝ բանի պետք չի լինի»:

Հաջորդ առավոտ ժամը տասին ես պատրաստ էի ընդունելու իմ այցելուին: Ժամը ինն անց կեսին ոտնաձայներ լսեցի դռան ետևից:

— Մտեք, Հուսբերի,— գոռացի ես:

— Շնորհակալ եմ, սըր,— պատասխանեց լուրջ ու մեղամաղձոտ ձայնը:

Դուռը բացվեց: Ես վեր թռա տեղիցս և դեմ առ դեմ հանդիպեցի... խուզարկու Կաֆին:

— Որոշեցի, միստր Բլեկ, նախքան ձեզ՝ Յորքշիր նամակ գրելը, այստեղ անցնել, մտածելով, որ կարող է պատահել Լոնդոնում եք:

Առաջարկեցի նախաճաշել: Դյուղի բնակիչը պարզապես վիրավորվեց: Նա նախաճաշել էր վեցն անց կեսին, իսկ անկողին էր մտել հավերի ու աքաղաղների հետ:

— Ես երեկ երեկոյան եմ վերագարծել Իռլանդիայից,— ասաց խուզարկուն, սովորական անվրդով տեսքով, անցնելով իր այցելուից զործնական նպատակին:— Եվ քնելուց առաջ կարդացի ձեր նամակը, որն ինձ պատմեց այն ամենի մասին, ինչ կատարվել է արմաստի հետ կապված իմ հետաքրննություններն անցյալ տարի ընդհատվելուց հետո: Ինձ մնում է միայն մի բան ասել: Ես գործն ամենևին չեմ հասկացել: Չեմ ուզում պնդել, թե մեկ ուրիշն իմ փոխարեն կկարողանար իրերը տեսնել իսկական լույսի տակ: Բայց դա փաստերը չի փոխում: Խոստովանում եմ, որ ես շփոթեմ եմ: Դա, միստր Բլեկ, առաջին շփոթությունը չէր իմ ոստիկանական աշխատանքում: Միայն գրքերում է, որ խուզարկուները Երբեք սխալ չեն գործում:

— Դուք եկել եք ճիշտ ժամանակին, որպեսզի վերականգնեք ձեր համբավը,— ասացի ես:

— Ներեցիք, միստր Բլեկ,— առարկեց խուզարկուն,— հիմա, երբ ես պաշտոնաթող եմ եղել, մի գորշի չափ անգամ չեմ մտածում իմ համբավի մասին: Սըր, ես այստեղ եմ եկել՝ հարգելով հիշատակը լեդի Վերինդերի, որն այնքան առատաձեռն է եղել իմ հանդեպ: Ես իմ նախկին մասնագիտությունը կվերադառնամ, եթե պետք լինեմ ձեզ ու եթե դուք

ինձ ապավինում եք հենց այդ և ոչ մեկ այլ պատճառով: Ես ձեզնից ոչ մի ֆարտի չեմ ուզում: Դա պատվի հարց է ինձ համար... Այժմ ասացեք, միստր Բլեկ, ի՞նչ վիճակում է գործը հիմա, այն բանից հետո, որ ինձ գրել եք:

Ես նրան պատմեցի ափիոնով կատարված փորձի և այն մասին, որ տեղի էր ունեցել Լոմբարդյան փողոցում գտնվող բանկում: Փորձը նրան ապշեցրեց. դա բոլորովին նոր բան էր նրա աշխատանքում: Նա հատկապես հետաքրքրվեց էզրա Զենինգսի այն ենթադրությամբ, թե ես ինչ եմ արել այժմաստը Ռեչելի հյուրասենյակից դուրս գալուց հետո:

— Ես միստր Զենինգսի հետ համաձայն չեմ, որ դուք եք պահել Լուսնաբարը, — ասաց խուզարկու Կաֆը, — բայց ես նրա հետ համաձայն եմ, որ դուք պետք է այն տանեիք ձեր սենյակը:

— Լավ: Իսկ ի՞նչ է կատարվել հետո, — հարցրի ես:

— Ոչ մի բացատրություն չի՞ անցել ձեր մտքով:

— Բացարձակապես ոչ մի:

— Միստր Բրեֆի մտքով նույնպե՞ս:

— Ոչ ավելի, քան իմ:

Խուզարկու Կաֆը վեր կացավ ու մոտեցավ իմ գրասեղանին: Վերադարձավ կնքված նամակով: Վրան գրված էր՝ «Դադարի», և հասցեագրված էր ինձ, իսկ անկյունում գրված էր խուզարկուի ստորագրությունը:

— Ես անցյալ տարի կասկածել եմ ո՛չ այն անձնավորության վրա, — ասաց նա, — թերևս հիմա էլ կասկածում եմ ո՛չ նրա վրա, ում որ պետք է: Միստր Բլեկ, ծրարը չբացեք, մինչև չիմանաք ճշմարտությունը. դրանից հետո մեղավորի անունը համեմատեցեք այն անվան հետ, որ ես գրել եմ այս կնքված նամակում:

Նամակը դրեցի գրպանս, իսկ հետո հարցրի նրա կարծիքը բանկում մեր ձեռնարկած միջոցների մասին:

— Հոյակապ միջոցառումներ են, սրբ, — պատասխանեց Կաֆը, — դա հենց այն է, ինչ պետք էր անել: Բայց, Լյուկերից բացի, աշխարհող չպետք է անեիք նաև մյուս մարդուն:

— Որի անունը տրված է ինձ հանձնված նամակո՞ւմ:

— Այո, միստր Բլեկ, այն մարդու, որի անունը տրված է այս նամակում: Հիմա արդեն ոչինչ անել հնարավոր չէ:

Երբ ժամանակը դա, սըր, ես մի երկու բան կառաջարկեմ ձեզ ու միտոր Բրեքին: Իսկ հիմա սպասենք ու տեսնենք, թե արդյո՞ք որևէ նոր բան չի ասի տղան:

Ժամը մոտավորապես տասն էր, չսկ Հուսրերին դեռ չէր երևում: Կաֆն սկսեց ուրիշ բաներից խոսել: Նա հարցրեց իր հին բարեկամ Բեստերեջի և այգեպանի մասին: Մեկ րոպե հետո նա սրանցից իր սիրելի վարդերին կանցներ, եթե մեզ չընդհատեր իմ ծառան, հաղորդելով, որ տղան սպասում է ներքևում:

Երբ Հուսրերին սենյակ բերեցին՝ նա կանգ առավ շեմիև և անվստահորեն աչքերը հառեց անծանոթ մարդուն: Ծառանը մոտ կանչեցի տղային:

— Կարող ես խոսել այս պարոնի ներկայությամբ, — ասացի ես, — նա այստեղ է հենց նրա համար, որպեսզի օգնի ինձ, և նա գիտե, թե ինչ է կատարվել: Միտոր Կաֆ, — ավելացրի ես, — սա միտոր Բրեքի գրասենյակի թղթատարն է:

Ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում նշանավոր դեմքը, ինչ ցեղից էլ որ նա լինի, ամենայն ինչ շարժող լծակ է: Նշանավոր Կաֆի հոշակը հասել էր նույնիսկ փոքրիկ Հուսրերիի ականջին: Երբ ես այդ հոշակավոր անունը տվի՝ տղայի առանց այն էլ ուռուցիկ աչքերն ամբողջովին դուրս թռան ականակապիճներից, այնքան, որ ես վախեցա՝ չլինի՞ թե գլորվեն ընկնեն գորգի վրա:

— Մոտեցիր, սիրելիս, — ասաց խուզարկուն, — արի տեսնենք, թե ինչ պիտի պատմես մեզ:

Լոնդոնի ամեն մի փաստաբանի գրասենյակում աղմուկ հանած բազմաթիվ պատմությունների հերոսի, մեծ մարդու ուշադրությունն ասես կախարդել էր տղային: Նա ձգված կանգնեց խուզարկու Կաֆի առջև և քննություն հանձնող աչակերտի պես ձեռքերը զրեց ետևը:

— Անո՞ւնդ, — առաջին հարցը տվեց խուզարկուն:

— Օկտավիուս Գայ, — պատասխանեց տղան: — Աչքերիս պատճառով գրասենյակում ինձ Հուսրերի են ասում:

— Օկտավիուս Գայ, այլ կերպ՝ Հուսրերի, — շափազանց լուրջ շարունակեց խուզարկուն: — Քեզ փնտրել են բանկում: Գու որս:ե՞ղ ևս եղել:

— Չեր թույլտվությամբ, սըր, հետևել եմ մի մարդու:



— Մոռեցիր, սիրելիս,— սուս ց խուզարհուն.— արի տես՛ն էք, թե  
45: Կիտի պատմես մեզ:

— Ո՞ւմ:

— Մի բարձրահասակ մարդու, սըր, որ մեծ մորուք ուներ և նավաստու պես էր հագնված...

— Հիշում եմ այդ մարդուն,— ընդհատեցի ես— Ես ու միստր Բրեֆը նրան համարեցինք հնդիկների կողմից ուղարկված լրտես:

Մեր ենթադրությունները, ըստ երևույթին, մեծ տպավորություն չէին թողել խուզարկու Կաֆի վրա: Նա շարունակում էր հարցուփորձել Հուսբերին:

— Ինչո՞ւ ես հետևել այդ նավաստուն,— հարցրեց նա:

— Ձեր թույլտվությամբ, սըր, միստր Բրեֆը կամենում էր իմանալ՝ միստր Լյուկերը բանկից դուրս գալիս ինչ-որ բան չի՞ հանձնի որևէ մեկին: Ես տեսա, թե ինչպես միստր Լյուկերը ինչ-որ բան տվեց սև մորուքով նավաստուն:

— Ինչո՞ւ տեսածդ միստր Բրեֆին շասացիր:

— Չհասցրի այդ որևէ մեկին ասել, սըր, նավաստին շատ արագ դուրս եկավ:

— Իսկ դու վաղեցիր նրա ետևի՞ց:

— Այո, սըր:

— Հուսբերի,— նայելով նրա մազերին՝ ասաց խուզարկուն,— գլխումդ ինչ-որ բան կա, և դա բամբակ չէ: Առայժմ ես շատ գոհ եմ քեզնից:

Տղան գոհունակությունից կարմրեց: Խուզարկու Կաֆը շարունակեց.

— Կամ, իսկ ի՞նչ արեց նավաստին փողոց դուրս գալուց հետո:

— Կտոք վերցրեց, սըր:

— Իսկ դու ի՞նչ արեցիր:

— Ետևից վաղեցի:

Մինչ խուզարկուն կհասցնեի ևս մի հարց տալ՝ ներս մտավ մի նոր այցելու՝ միստր Բրեֆի գլխավոր գրագիրը:

Հասկանալով, որ չպետք է խանդարել միստր Կաֆին, էս գրագրին ընդունեցի հարևան սենյակում: Նա վատ լուրեր էր բերել իր տիրոջից: Վերջին երկու օրվա հուղումներն ու իրաբանցումը միստր Բրեֆի ուժերից վեր էին եղել: Նա այդ առավոտ արթնացել էր հողատափի նոպայով ու չէր կարող



գուրս գալ Հեմփստեդի իր սենյակից, և շատ էր անհանդըստանում, որ մեր գործերի այս տազնապալի վիճակում ինձ թողել է առանց փորձառու մարդու խորհրդի ու օգնութեան: Գլխավոր գրագիրն իմ տրամադրութեան տակ մնալու կարգադրութուն էր ստացել և պատրաստ էր բոլոր ջանքերը գործադրել միստր Բրեֆին փոխարինելու համար:

Սերուկին հանգստացնելու համար նրան անմիջապես գրեցի, որ ժամանել է խուզարկու Կաֆր, որ այս պահին նա հարցուփորձում է Հուսերիին, և խոստացա անձամբ կամ նա՝ մեկով միստր Բրեֆին հաղորդել այն, ինչ որ կկատարվի ցերեկը: Գլխավոր գրագիրն իմ նամակով Հեմփստեդ ուղարկելուց հետո ես վերադարձա սենյակ ու տեսա, որ խուզարկու Կաֆր, բուխարու մոտ կանգնած, պատրաստվում է զանգը հնչեցնելու:

— Ներեցեք, միստր Բլեկ,— ասաց խուզարկուն,— ես հենց նոր ուզեցի ծառային ուղարկել ձեզ մոտ՝ հաղորդելու, որ ուզում եմ ձեզ հետ խոսել: Իմ մեջ ոչ մի կասկած չմնաց, որ այս տղան... լավ տղան,— Հուսերիի գլուխը շոյելով՝ ավելացրեց նա,— հետևել է հենց նրան, ում որ պետք էր հետևել: Թանկագին ժամանակ կորսվեց այն պատճառով, որ դուք, սրբ, երեկ երեկոյան ժամը տասն անց կեսին, դժբախտաբար, տանը չեք եղել: Հիմա մնում է միայն անմիջապես մարդ ուղարկել կառք կանչելու:

Հինգ բոպե անց խուզարկու Կաֆն ու ես (Հուսերին նրստեց կառապանի կողքին՝ ճանապարհը ցույց տալու համար) գնում էինք Սիտի:

— Այս տղան,— ասաց խուզարկուն, մասնացույց անելով կառքի առչևի լուսամուտը,— մի օր նշանակալի հաջողութեան կհասնի իմ նախկին մասնագիտութեան ասպարեզում: Վաղուց այսքան աշխույժ ու խելացի տղայի շեմ հանդիպել: Չեզ, միստր Բլեկ, ասեմ այն ամենի էութունը, ինչ էա ինձ պատմեց, երբ դուք սենյակում չէիք: Կարծեմ, դեռ ձեր ներկայութեամբ նա հիշատակեց, որ վաղել է կառքի էտեկից:

— Իկու:

— Կառքը, սրբ, կամբարդյան փողոցից զնայել է Թոուեթի նավահանգիստը: Սև մորուքով նավաստին իջել է կառքից

ու խոսել Ռոտերդամի շոգենափի ստյուարդի հետ. այդ նա-  
վը մեկնելու էր հաջորդ առավոտ: Նավաստին հարցրել է՝  
կարո՞ղ է, արդո՞ք, գիշերել շոգենափի իր սենյակում: Ստյուա-  
րդն ասել է՝ ոչ: Այդ երեկո նավասենյակներն ու մահճա-  
կաները մաքրելու են, և ուղևորներին էլ մինչև առավոտ չի  
թույլատրվում տեղ գրավել շոգենավում:

Նավաստին ետ է դարձել ու զնացել նավահանգստից:  
Փողոցով քայլելիս տղան առաջին անգամ հակառակ կողմում  
նկատել է արհեստավորի նման հագնված մի մարդու, որը,  
ըստ երևույթին, հետևել է նավաստուն: Նավաստին կանգ է  
առել պանդոկի մոտ ու ներս մտել: Տղան չի իմացել ինչ  
անի, և այլ տղաների հետ կանգնել ու նայել է պանդոկի պա-  
տուհանում ցուցադրված ուտելիքներին: Նա նկատել է, որ  
արհեստավորը սպասում է, ինչպես որ ինքն էր սպասում,  
բայց առաջվա պես՝ փողոցի մյուս կողմում: Մեկ րոպե անց  
դանդաղ մտեցել է մի կառք ու կանգ առել այնտեղ, որտեղ  
արհեստավորն էր կանգնած: Տղան կարող էր կառքի մեջ պար-  
զորոշ տեսնել միայն մի մարդու, որը գլուխը լուսամուտից  
հանել էր արհեստավորի հետ խոսելու համար... Նա ինձ հա-  
զորգեց, միտքը թլկկ, առանց իմ կողմնորոշող հարցերի, որ  
այդ մարդը շատ-շատ թուխ է եղել և նման է եղել հնդիկի:

Պարզ էր, որ այս անգամ էլ ես ու միտքը Բրեֆը սխալվել  
էինք: Սև մորուքով նավաստին ամենևին էլ հնդիկների լըր-  
տեսը չէր եղել: Մի՞թե արմատը նրա մոտ է գտնվում:

— Որոշ ժամանակ անց, — շարունակեց խուզարկուն. —  
կառքը հեռացել է: Արհեստավորն անցել է փողոցն ու մտել  
պանդոկ: Տղան սպասել է մինչև որ քաղցն ու հոգնածություն-  
նը հաղթել են իրեն, և հետո ինքն էլ է պանդոկ մտել: Գրպա-  
նում մի շիլինգ է եղել. հավատացնում է, որ շատ լավ ճաշել  
է, կերել է սև պուդինգ, ձկնով կարկանդակ և խմել մի շիշ  
իմբիրյան գարեջուր: Ինչև՛ր ասես որ չի մարսի ջահել տղայի  
ստամոքսը: Այն ամենը, ինչ որ կարելի է ուտել:

— Իսկ ի՞նչ է տեսել պանդոկում, — հարցրի էս:

— Տեսել է նավաստուն, որը մի սեղանի մոտ նստած  
թերթ է կարդացել, և արհեստավորին, որը թերթ է կարդա-  
ցել մեկ ուրիշ սեղանի մոտ նստած: Մինչև որ նավաստին  
վեր է կացել ու դուրս եկել՝ արդեն մթնել է: Փողոցում կառ-

կածանքով նայել է շուրջը: Տղայի վրա (չէ որ դա սոսկ փոքր աղա էր) ուշադրություն չի դարձրել: Արհեստավորը դեռ դուրս էր եկել: Նավաստին քայլել է՝ շուրս կողմը նայելով, ըստ երևույթին, դեռ չիմանալով, թե ուր գնա: Արհեստավորը դարձյալ հայտնվել է փողոցի հակառակ կողմում: Նավաստին քայլել է, մինչև որ հասել է Ստորին Թեմզա փողոցը տանող Առափնյա նրբանցքին: Այստեղ կանգ է առել «Փորտունայի անիվ» ցուցանակով հյուրանոցի առջև և, շուրջ-բոլորը նայելով, ներս մտել: Հուսերին նույնպես ներս է մտել: Բուֆետի մոտ շատ ծոզովորդ է եղել, մեծ մասամբ միանգամայն բարեկիրթ ծոզովորդ: «Փորտունայի անիվ» շատ օրինավոր հյուրանոց է, միասր Բլեկ, հայտնի իր սլոբոտեր գարեջրով և խոզամսով պատրաստված կարկանդակներով...

Նուզարկուրի շեղումները չղայնացնում էին ինձ: Նա այդ բանը նկատեց և իր պատմության շարու-



նակության մեջ սկսեց շարադրել միայն Հուսեբրիից ստացած տեղեկությունները:

Նավաստին հարցրել է՝ կարո՞ղ է ինքը քնելու մի տեղ ստանալ: Հյուրանոցատերը պատասխանել է՝ «Ոչ, բոլորը զբաղված են»: Բուֆետապանուհին առարկել է նրան, թե տասներորդ համարն ազատ է: Ուղարկել են ծառային կանչելու, որպեսզի նավաստուն ուղեկցի տասներորդ համարը: Գրանից անմիջապես առաջ Հուսեբրին արհեստավորին տեսել է բուֆետի մոտ կանգնած մարդկանց մեջ: Մինչ կանչված ծառան հայտնվել է՝ սա անհետացել է: Զիմանալով ինչ անել հետո, Հուսեբրին որոշել է սպասել ու տեսնել, թե ուրիշ էլ ինչ է լինելու: Եվ ինչ-որ բաներ եղել են: Հյուրանոցատիրոջը կանչել են: Վերևում բարկացած ձայներ են լսվել: Հանկարծ նորից է հայտնվել արհեստավորը. հյուրանոցատերը, նրա օձիքից բռնած, քարշ է տվել նրան, իսկ սա, ի զարմանս Հուսեբրիի, հարբածության լուրջ նշաններ է ցույց տվել: Հյուրանոցատերը դունից դուրս է գցել նրան, սպառնալով ոստիկանութուն կանչել, եթե նա վերադառնա: Մինչ նրանք վիճել են, պարզվել է, որ այդ մարդը հայտնաբերվել է տասներորդ համարում և հարբածի համառությամբ հայտարարել է, թե ինքն է զբաղեցրել այդ սենյակը: Հուսեբրին այնքան է զարմացել դեռ մի քիչ առաջ սթափ այդ մարդու հանկարծակի հարբածության վրա, որ չի համբերել և նրա հտեվից վաղել է փողոց: Քանի դեռ արհեստավորը հյուրանոցի մոտերքում է եղել՝ օրորվել է շատ անվայելուչ ձևով: Բայց հենց որ թեքվել է փողոցի անկյունը՝ անմիջապես վերագտել է իր հավասարակշռությունը և դարձել հասարակության այնպիսի մի սթափ անդամ, որից լավը լինել չէր կարող. Հուսեբրին, հույժ տարակուսած, վերադարձել է «Ֆորտունայի անիվ»: Դարձյալ սպասել է՝ գուցե որևէ բան պատահի: Բայց այլևս ոչինչ չի պատահել և այլևս ոչինչ հայտնի չի եղել նավաստու մասին: Հուսեբրին որոշել է վերադառնալ գրասենյակ: Բայց այս մասին մտածելուն պես նորից փողոցի հակառակ կողմում հայտնվել է նույն արհեստավորը: Նա նայել է հյուրանոցի լուսամուտներից մեկին, այն միակին, որտեղ լույս է երևացել: Այդ լույսն ասես հանդստացրել է նրան: Նա անմիջապես հեռացել է: Տղան վերադարձել է

գրասենյակ, ստացել ձեր այցեւորմանը, գնացել ձեզ մոտ, բայց ձեզ տեղում չի գտել: Ահա թե այժմ ինչ վիճակում է գործը, միտք Բլեկ...

— Դուք ի՞նչ եք մտածում այս մասին:

— Կարծում եմ, որ գործը լուրջ է, սրբ, դատելով ըստ աղայի տեսածի՝ այստեղ գործում են հնդիկները:

— Այո: Իսկ նավաստին ակնհայտորեն այն մարդն է, որին միտք կյուկերը հանձնել է արմաստը: Տարօրինակ չէ՞, որ միտք Բրեֆը, ես և միտք Բրեֆի վարձած խուզարկուն. բոլորս սխալվել ենք այն հարցում, թե նա կոնկրետ ում է հանձնել թահկարժեք քարը:

— Բոլորովին էլ տարօրինակ չէ, միտք Բլեկ: Նկատի ունենալով վտանգը, որին ենթարկվում է այդ մարդը, միտք կյուկերը, հավանաբար, միտումնավոր կերպով, նրա հետ պայմանավորվելով, ձեր ուշադրութունը շեղել է ուրիշ կողմ:

— Ինչպե՞ս հասկանալ այն, ինչ կատարվել է հյուրանոցում, — հարցրի ես: — Արհեստավորի պես հագնված մարդուն, անշուշտ, վարձել են հնդիկները: Բայց ես էլ Հուսթոնի նման չեմ կարող բացատրել նրա հանկարծակի հարբելը:

— Կարծում եմ, որ կարող եմ կուահել, թե դա ինչ է նշանակում, սրբ, — պատասխանեց խուզարկուն: — Եթե լավ մտածեք՝ կհասկանաք, որ այդ մարդը շատ խիստ հրահանգներ է ստացել հնդիկներից: — Նրանք իրենք չափից ավելի են նկատելի բանկում կամ հյուրանոցում հայտնվելու համար, և ստիպված են եղել այդ բոլորը հանձնարարել իրենց հանցակցին: Շատ լավ: Այդ հանցակցից բուֆետի մոտ լսել է այն սենյակի բարձրաձայն ասված համարը, որ նավաստին գրադեցնելու էր գիշերը. այդ սենյակում, եթե մենք չենք թխալվում, այդ գիշեր պետք է գտնվեր նաև արմաստը: Կարող եք հավատացած լինել, որ հնդիկներն անպայման կպահանջեին այդ սենյակի ճշգրիտ նկարագրությունը, տան որ մասում է գտնվում և հնարավոր է, արդյոք, դրսից թափանցել նրա մեջ և այլն, և այլն: Ի՞նչ պետք է աներ այդպիսի առաջադրանք ստացած մարդը: Հենց այն, ինչ որ արել է: Իսկ վագել է վերև՝ աչքի անցկացնելու սենյակը, նախքան այնտեղ կբերեին նավաստուն: Նրան գտել են սենյակը զրննելիս, և նա հարբած է ձևացել. դժվարին կացությունից դուրս

գալու ամենահեշտ եղանակը: Ահա թե ես ինչպես եմ լուծում այս հանելուկը: Հյուրանոցից դուրս գալուց հետո նա, հավանաբար, իր ձեռք բերած լուրերով գնացել է այնտեղ. որտեղ նրան սպասել են հնդիկները: Իսկ սրանք, անկասկած, նրան ետ են ուղարկել հավաստիանալու՝ իրո՞ք նավաստին մնացել է հյուրանոցում գիշերելու: Իսկ թե «Ֆորտունայի անիվում» ինչ է կատարվել տղայի հեռանալուց հետո՝ մենք պետք է իմանայինք դեռ երեկ երեկոյան: Հիմա առավոտյան ժամը տասնմեկն է: Կաշխատենք իմանալ այն բոլորը, ինչ որ հնարավոր է:

Քառորդ ժամ անց կառքը կանգ առավ Առափնյա ներբանցքում, և Հուսբերին դռնակը բացեց:

— Ամեն ինչ կարգի՞ն է, — հարցրեց խուզարկուն:

— Ամեն ինչ կարգին է, — պատասխանեց տղան:

Բայց այն պահին, երբ «Ֆորտունայի անիվն» էինք մտնում, նույնիսկ իմ անփորձ աչքի համար պարզ դարձավ, որ ամենևին էլ ամեն ինչ չէ, որ կարգին է տանը:

Վաճառասեղանի ետևում կանգնած միակ անձնավորութունը շփոթված սպասուհին էր, որը բոլորովին չէր հասկանում, թե ինչ է անում: Երկու այցելուներ, որ առավոտյան խմելուն էին սպասում, անհամբեր վաճառասեղանն էին թակում մետաղադրամով: Բուֆետապանուհին հայտնվեց ներսի սենյակներից՝ հուզված ու մտահոգ: Հյուրանոցատիրոջ վերաբերյալ խուզարկու Կաֆի հարցին նա խիստ պատասխանեց, որ տերը վերևում է և հիմա չի կարող որևէ մեկի հետ խոսել:

— Եկեք ինձ հետ, սըր, — ասաց ինձ խուզարկու Կաֆը, սառնասրտորեն բարձրանալով աստիճաններով և տղային նշան անելով, որ հետևի իրեն:

Բուֆետապանուհին դռնալով ձայնեց տիրոջը, թե տուն են խուժում ինչ-որ անձանոթ մարդիկ: Ներքևի հարկի հարթակում մեզ հանդիպեց հյուրանոցատերը, որը, խիստ ջղայնացած, շտապում էր իմանալ, թե ինչ է պատահել:

— Դուք ո՞վ եք, սատանան տանի: Ձեզ ի՞նչ է հարկավոր այստեղ, — հարցրեց նա:

— Հանգստացե՛ք, — անվրդով ասաց խուզարկուն: — Ես ձեզ կասեմ, թե ով եմ. ես խուզարկու Կաֆն եմ:

Հանրահայտ անունն անմիջապես իր ներդրածությունն ունեցալ: Բարկացած հյուրանոցատերը բացեց հյուրասենյակի դուռը և ներողութուն խնդրեց խուզարկուից:

— Բանն այն է, որ ես ջղայնացած եմ ու հուզված, սրբ,— ասաց նա:— Այսօր առավոտ անախորժություն տեղի ունեցալ մեր տան մեջ: Իմ մասնագիտության տեր մարդուն շատ բան կարող է հունից հանել, միստր Կաֆ:

— Դրանում կասկած չկա,— ասաց խուզարկուն:— Եթե թույլ տաք՝ ես անմիջապես կշարադրեմ այն, ինչը մեզ այստեղ է բերել: Ես ու այս ջենտլմենն ուղում ենք ձեզ անհանգրստացնել՝ մի քանի բան հարցնելով երկուսիս հետաքրքրող ինչ-որ մի մարդու մասին:

— Իսկ ո՞ւմ մասին,— հարցրեց հյուրանոցատերը:

— Նավաստու շորերով մի թուխ մարդու մասին, որն այս գիշեր ձեզ մոտ է գիշերել:

— Տե՛ր աստված, ախր հենց նրա պատճառով է, որ այսօր ամեն ինչ տակնուվրա է տանը,— բացականչեց պանդոկապանը:— Դուք կամ այս պարոնը որևէ բան գիտե՞ք նրա մասին:

— Երևի չենք կարող ասել, մինչև նրան շտեմենք,— պատասխանեց խուզարկուն:

— Մինչև նրան շտեմեն՞ք,— կրկնեց հյուրանոցատերը:— Առավոտյան ժամը յոթից սկսած ոչ ոքի չի հաջողվում տեսնել նրան: Երեկ նա պատվիրեց իրեն արթնացնել այդ ժամին: Նրա դուռը թակել են՝ և ոչ մի պատասխան: Իսկ դուռը փակ է և հնարավոր չէ տեսնել, թե ինչ է պատահել: Ժամը ութին նորից փորձեցինք, հետո փորձեցինք իննին: Իզո՞ւր: Դուռն առաջվա պես փակ է, և սենյակից ոչ մի ձայն չի դալիս: Ես առավոտից տանը չեմ եղել. ընդամենը տասնհինգ րոպե առաջ եմ վերադարձել: Ես անձամբ եմ դուռը թակել, և բոլորովին իզուր: Ուղարկել եմ հյուանին կանչելու: Եթե մի քանի րոպե սպասեք՝ դուռը կբացենք ու կտեսնենք:

— Այդ մարդը երեկ հարբած չի՞ եղել,— հարցրեց խուզարկուն:

— Նա միանգամայն սթալի էր, սրբ, հակառակ դեպքում՝ ևս նրան չէի թույլ տա իմ տանը գիշերել:

— Նա իր սենյակի համար նախապես վճարե՞լ էր:

— Ոչ:

— Զի՞ կարող իր սենյակից դուրս եկած լինել՝ դուռը շրջանցելով:

— Այդ սենյակը ձեզնահարկ է,— ասաց պանդոկապանը,— դեպի կտուրը տանող անցք կա առաստաղի մեջ, իսկ մի փոքր այն կողմ փողոցում կա մի դատարկ տուն, որն այժմ նորոգում են: Դուք, միստր Կաֆ, մտածում եք, որ սրիկան փախել է առանց վճարելո՞ւ:

— Նավաստին,— պատասխանեց միստր Կաֆը,— հեշտությամբ կարող էր այդ անել վաղ առավոտյան, քանի դեռ փողոցում մարդիկ չկային: Նա վարժվել է բարձրանալ—իջնելու, և տան կտուրի վրա նրա գլուխը շի պտտվի:

Մինչ նա խոսում էր՝ հյուսնը եկավ: Բոլորս անմիջապես բարձրացանք վերևի հարկը: Ես նկատեցի, որ խուզարկոն սովորականից ավելի լուրջ էր: Ինձ տարօրինակ թվաց նաև, որ նա տղային, որին առաջ թույլ էր տրվել հետևել մեզ, կարգադրեց սպասել ներքևում, մինչև մենք կվերադառնայինք:

Հյուսնի մուրճն ու դուրը դռան հարցը լուծեցին մի քանի րոպեում: Բայց դուռը ներսից բարիկադավորված էր ինչոր բանով: Հրելով՝ շուռ տվինք այդ արգելքն ու մտանք սենյակ: Հյուրանոցատերը ներս մտավ առաջինը, խուզարկուն՝ երկրորդը, ես՝ երրորդը: Մնացածները հետևեցին մեզ: Բոլորս նայեցինք անկողնուն ու ցնցվեցինք:

Նավաստին սենյակից դուրս չէր եկել. նա շորերով պառկած էր անկողնու վրա, դեմքը ծածկված էր բարձով:

— Սա ի՞նչ է նշանակում,— բարձրաձայն ասաց հյուրանոցատերը, մատնացույց անելով բարձը:

Նուզարկու Կաֆը առանց պատասխանելու, մոտեցավ անկողնուն ու մի կողմ գցեց բարձը:

Նավաստու թուխ դեմքն անվրդով էր ու անշարժ: Սև մազերն ու մորուքը թեթևակի խառնված էին: Հայն բացված անփաչ աչքերը հառված էին առաստաղին: Ես շրջվեցի ու գնացի դեպի լուսամուտը: Մնացած բոլորը խուզարկու Կաֆի հետ կանգնած էին անկողնու մոտ:

— Նա ուշաթափված է,— ասաց հյուրանոցատերը:



— Նա մեռած է,— առարկեց Կաֆր:— Մարդ ուղարկեք կանչելու մոտակա բժշկին ու ոստիկանին:

Այդպես էլ արվեց: Ասես ինչ-որ տարօրինակ հմայություններ խուզարկու Կաֆին պահում էին անկողնու մոտ: Կարծես ինչ-որ մի տարօրինակ հետաքրքրասիրություն մնացած բոլորին ստիպում էր սպասել ու տեսնել, թե ինչ էր անելու խուզարկուն:

Ես դարձյալ շրջվեցի դեպի լուսամուտը: Մեկ րոպե անց զգացի, թե ինչպես մեկը կամացուկ քաշեց փեշիցս ու մի բարակ ձայն շշնջաց.

— Նայեցեք, սրբ:

Հուսերին մտավ սենյակ: Նրա ուռուցիկ աչքերը դարձյալ ճակատին էին թռել. ո՛չ վախից, այլ՝ հիացմունքից: Նա նույնպես հայտնագործություն էր կատարել:

— Նայեցեք, սրբ,— կրկնեց նա և ինձ տարավ սենյակի անկյունում գտնվող սեղանի մոտ:

Սեղանի վրա փայտե մի փոքրիկ տուփ կար՝ բաց ու դատարկ: Տուփի մի կողմում դրված էր բամբակ, որի մեջ ոսկերիչը թանկարժեք իրերն է փաթաթում: Մյուս կողմում՝ սպիտակ թղթի մի պոկված թերթ՝ մասամբ կոտրված կնիքով և հեշտ ընթեռնելի այսպիսի մակագրությամբ:

«Լամբեթի Միդլսեկլան հրապարակում ասլրող Սեսլտիմուս Լյուկերի կողմից պարոնայք Բուշի, Լայստտի ու Բուշի պահպանությանն է հանձնվել փայտե մի փոքրիկ տուփ, որ դրված է այս ծրարի մեջ և պարունակում է շատ մեծ արժեքի իր: Բուշ և Մ<sup>o</sup>-ի պարոններն այս տուփը վերադարձնելու են միայն ու միայն անձամբ միասին Լյուկերին»:

Այս տողերը վերացնում էին ամեն մի կասկած՝ առնվազն մեկ տեսակետից. նախօրյակին, երբ նավաստին դուրս էր եկել բանկից, լուսնաքարը եղել էր մոտը:

Ես զգացի, որ փեշս նորից քաշեցին: Հուսերին ինձնից պոկ շէր գալիս:

— Գողությո՛ւն,— հիացմունքով շշնջաց տղան, մատնացույց անելով դատակ տուփը:

— Ձեզ կարգադրվել էր սպասել ներքևում,— ասացի ես,— և ներքև իջեք:

— Եվ սպանությո՛ւն,— ավելացրեց Հուսերին, էլ ավելի

մեծ բավականությամբ մատնացուցց անկողով անկողնու վրա պառկած մարդուն:

Այն գոհունակության մեջ, որ տղային պատճառում էր այդ սարսափազդու տեսարանը, այնքան զզվելի մի բան կար, որ ես ճանկեցի նրա օսն ու դուրս գցեցի սենյակից:

Այն պահին, որ ես շեմին էի, լսեցի, թե ինչպես խուզարկու Կաֆն իմ մասին էր հարցնում: Երբ սենյակ վերադարձա՝ նա դիմավորեց ինձ ու ստիպեց իր հետ մեկտեղ մոտենալ անկողնուն:

— Միտար Բլեկ,— ասաց նա,— նայեցեք այս մարդու դեմքին: Այս դեմքը շպարված է, և ահա ձեզ ապացուցրու:

Նա ցույց տվեց հանգուցյալի թուխ ճակատի վերևում դտնրվող կապտաճերմակ բարակ շերտը, որտեղ սկսվում էին զգզված սև մազերը:

— Տեսնե՞ք, թե ինչ պիտի հայտնվի սրա տակ,— ասաց խուզարկուն, հանկարծ ձեռքով ամուր բռնելով սև մազերից:

Նյարդերս շղիմացան, ես նորից շրջվեցի անկողնուց:

Առաջին բանը, որ տեսա սենյակի մյուս ծայրին՝ անդադրում Հուսերին էր, որ բարձրացել էր աթոռի վրա և, հետաքրքրութունից շունչը պահած, մեծերի զլուխների վրայով հետևում էր խուզարկուի բոլոր գործողություններին:

— Հանում է նրա կեղծամը,— փսփսում էր Հուսերին իմ հանդեպ ունեցած կարեկցանքից, որովհետև սենյակում ես միակ մարդն էի, որ ոչինչ չէի կարողանում տեսնել:

Լուսնյամ տիրեց, իսկ հետո դարմանքի ճիչ դուրս թռավ անկողնու մտ հավաքված մարդկանց բերանից:

— Պոկե՞ց նրա մարտքը,— բացականչեց Հուսերին:

Դարձյալ լուսնյամ տիրեց: Խուզարկու Կաֆն ինչ-որ բան խնդրեց: Հյուրանոցատիրը դնաց դեպի լվացարանը և անկողնու մոտ վերադարձավ ջրով լիքը թասով ու սրբիչով:

Հուսերին հուշմունքից պար եկավ աթոռի վրա:

— Այստեղ եկեք, սրբ, ինձ մոտ: Նա նավաստու դեմքի ներկն է լվանում:

Հանկարծ խուզարկուն մի կողմ հրեց իրեն շրջապատող մարդկանց ու սարսափած եկավ դեպի ինձ:

— Մոտեցե՞ք անկողնուն, սրբ,— սկսեց նա:— Կամ էլ՝

չէ...— Նա սկեռուն նայեց ինձ ու շարունակեց:— Նախ քացեք՝  
այն նամակը, որ առաւիտոյան տվեցի ձեզ:

Ես բացեցի նամակը:

— Միստր Բլեկ, կարդացեք մեջը գրված անունը:

Ես կարդացի նրա դրած անունը՝ Գողֆրի էբլուայթ:

— Հիմա,— ասաց խուզարկուն,— եկեք ինձ հետ ու տեսեք  
անկողնու վրա պառկած մարդուն:

Ես գնացի նրա հետ ու նայեցի անկողնու վրա պառկած  
մարդուն. Գողֆրի էբլուայթն էր:



## ՎԵՅՆԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

որ գրել է խուզարկու Կաֆը

### I

Գորկինգ, Սեբեյ, հուլիսի 30, 1849: Էսկվայր Ֆրենկլին  
Քլեկին: Սըր, ես պետք է ձեզնից ներողութիւն խնդրեմ, որ  
ուշացրել եմ այն զեկույցը, որը պարտաւորվել էի ձեզ հասց-  
նել: Ես կամեցել եմ այն դարձնել առավել լրիվ, և այս ու  
այնտեղ ինձ հանդիպել են խոչընդոտներ, որոնք կարելի էր  
հաղթահարել միայն որոշ համբերութիւն ու ժամանակ ծախ-  
սելով:

Նպատակը, որ դրել եմ իմ առջև, հույս ունեմ, որ արդեն  
ձեռք է բերված: Գուր այս էջերում կգտնեք հանդուցյալ միտաբ  
Գոդֆրի էրլաայթին վերաբերող այն հարցերի մեծ մասի  
պատասխանը, որոնք ձեր մտքով անցել են, երբ ես վերջին  
անգամ ձեզ տեսնելու պատիվն եմ ունեցել:

Այսպես ուրեմն, նախ և առաջ ձեր զարմիկի մահվան մասին:

Ինձ թվում է, անվիճելիորեն այսպես ցված է, որ նրան խեղդել են (մինչ քնած է եղել կամ արթնանալուց անմիջապես հետո) իր իսկ անկողնու բարձով. որ նրան սպանելու մեջ մեղավորները երեք հնդիկներն են. և որ տվյալ հանցագործության նպատակը «Լուսնաբար» կոչվող ալմաստին տիրելն է:

Փաստերը, որոնց հիման վրա արվել է այս հետևությունը, մասամբ պարզվել են հյւրանոցի սենյակները զննելիս, մասամբ էլ՝ նախնական քննության ժամանակ տրված ցուցմունքներից:

Երբ սենյակի դուռը կոտրեցին՝ տուժածին գտան մեռած՝ բարձր երեսին սեղմած: Նրան զննող բժիշկը որոշեց, որ մահվան պատճառը խեղդվելն է, այսինքն՝ հանգուցյալին սպանել է որևէ մարդ կամ մարդիկ՝ բարձի օդնությամբ, որը զուհի դեմքի վրա պահել են այնքան, մինչև որ մահը վրա է հասել թոքերի մեջ արյուն լցվելուց:

Այժմ անցնենք հանցագործության շարժառիթին:

Այդ սենյակում սեղանի վրա գտնվեց բաց և դատարկ մի տուփ: Միստր Լյուկերը ճանաչեց տուփը, կնիքն ու ստորագրությունը: Նա հայտարարեց, որ այդ տուփի մեջ եղել է Լուսնաբար կոչվող ալմաստը, և որ ինքը այդ տուփը, այս ձևով կնքված, միստր Գոդֆրի էբլուայթին (այդ ժամանակ՝ ղղևատափոխված) է հանձնել հուլիսի քսանվեցին: Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ հանցագործության պատճառը եղել է Լուսնաբարը հափշտակելու դանկությունը:

Հիմա քննության առնենք, թե ինչ ձևով է կատարվել հանցագործությունը:

Ընդամենը չոթ ոտնաչափ բարձրություն ունեցող սենյակի առաստաղի՝ դեպի ձեղնահարկ տանող մտոցադռնակը բաց էր: Կարճիկ սանդուղքը, որով բարձրացել են ձեղնահարի և որը սովորաբար մահճակալի տակ ընկած էր լինում, կանգնեցված էր մտոցի մոտ, այնպես, որ ամեն մի մարդ, կամ մարդիկ հեշտությամբ կարող էին դուրս գալ այս սենյակից: Մտոցի դռնակի մեջ, մտոցը ներսի կողմից փակող սողնակի

մոտ հայտնարերվեց մի քառակուսի անցք, բացված, ըստ երևույթին, ինչ-որ մի արտակարգ սուր գործիքով: Այսպիսով, ամեն մի մարդ կարող էր դրսի կողմից ետ քաշել սողնակը, բացել մտոցադոնակը և իջնել (հնարավոր է՝ որևէ հանցակցի օգնութչամբ) սենյակ, որի բարձրութչունը, ինչպես արդեն նշվել է, ընդամենը յոթ ոտնաչափ է: Որ որևէ մարդ կամ մարդիկ պետք է հենց այդ ձևով մտած լինեին՝ պարզ երևում է բացված անցքի առկայութչունից: Ինչ վերաբերում է այն եղանակին, որով նա կամ նրանք մուտք են գործել հյուրանոցի կտուրը, պետք է նկատել, որ հարևան շենքը դատարկ էր ու նորոգվում էր. սրա պատին դեմ են արել այն երկար սանդուղքը, որ նախորդ օրը թողել էին բանվորները. քսանյոթի առավոտյան նորից աշխատանքի գալիս բանվորները տեսել են, որ սանդուղքի վրայից պոկված ու ավազների վրա է շարտված այն տախտակը, որ իրենք կապել են սանդուղքին, որպեսզի իրենց բացակայութչան ժամանակ ոչ ոք չօտադորժեր այն: Հերթապահ ոստիկանի (որը գիշերը ժամում միայն երկու անգամ է անցնում Առափնյա նրբանցքով) ցուցմունքներից երևում է, որ միանգամայն հնարավոր է եղել բարձրանալ այդ սանդուղքով, անցնել տների կտուրներով և աննկատելիորեն իջնել հյուրանոցի ձեղնահարկը:

Շրջակա տների բնակիչների ցուցմունքները նույնպես հաստատում են, որ Առափնյա նրբանցքը կեսգիշերից հետո լոնդոնի ամենախաղաղ ու մեկուսի փողոցներից մեկն է: Հետևաբար, դարձյալ կարելի է միանգամայն իրավացիորեն եզրակացնել, որ սանդուղքով աննկատելիորեն բարձրանալ և իջնել կարող էր ցանկացած մարդը (կամ մարդիկ), դրսևորելով անհրաժեշտ զգուշութչուն և արիութչուն:

Վերջապես անցնենք այն անձնավորութչանը կամ անձնավորութչուններին, որ կատարել են հանցադործութչունը:

Հայտնի է. 1) որ հնդիկները շահագրգռված են կղև ալմաստին տիրանալու մեջ. 2) շատ Քավանական է, որ հրեգիկի նման մարդը, որին Օկտավիոս Գայր կառքի լուսամուտի մեջ տեսել է արհեստավորի հետ զրուցելիս, եղել է հնդիկ երեք դավադիրներից մեկը. 3) կասկածից վեր է, որ արհեստավորի նման հագնված մարդը քսանվեցի ամբողջ երևկոն հետևել է Գողֆրի էրլուայթին և նրա ննջասենյա-

կում հայտնաբերվել է (մինչ միստր էբլուայթին սղեկցել են այնտեղ) այնպիսի հանգամանքներում, որոնք ստիպում են կասկածել, որ նա ներս է խցկվել սենյակը զննելու համար. 4) ննջասենյակում հատակին ընկած է եղել ոսկեգույն գործվածքից պոկված մի կտոր, և գործազետները պնդում են, որ դա հնդկական գործվածք է և որ այդ տեսակ ոսկեգույն գործվածք Անգլիայում չի արտադրվում. 5) քսանյոթի առավոտյան երեք հոգի, որոնց արտաքինը համապատասխանում էր երեք հնդիկների նշաններին, նկատվել են Ստորին Քեմբա փողոցում և հսկողութայն տակ եղել մինչև Քուեերի նավահանգիստը. ավելի ուշ նրանց տեսել են, երբ նրանք Լոնդոնից մեկնել են Ռոտերդամ ուղևորվող շոգենավով:

Այսպիսին են փաստական, եթև ոչ իրավաբանական ապացույցներն այն բանի, որ սպանությունը գործել են հնդիկները:

Արհեստավորի նման հազնված մարդը այդ հանցագործությանը մասնակից եղել է, թե ոչ, դժվար է ասել:

Նախնական քննության Լզրակացությունն է՝ դիտավորյալ սպանություն, որ գործել են մեկ կամ մի քանի անհայտ անձնավորություն: Միստր էբլուայթի գերզաստանը պարզե է առաջարկել (և գործադրվել են բոլոր ջանքերը) հանցագործներին գտնելու համար: Արհեստավորի շորերով մարդն անհետացել է: Հնդիկների ճանապարհը պարզվել է: Թե նրանց բռնելու ինչ հույս կա՝ այդ մասին մի քանի խոսք կա՝ սեմ զեկույցիս վերջում:

Իսկ առայժմ, միստր Գոդֆրի էբլուայթի մահվան մասին ամենայն անհրաժեշտը գրելուց հետո, կարող եմ անցնել նրա արարքներին՝ ձեզ հետ հանդիպումից առաջ, հանդիպման ժամանակ և այն բանից հետո, որ դուք նրա հետ տեսնուվել եք հանգուցյալ լեդի Վերինգերի տանը:

### III

Միստր Գոդֆրի էբլուայթի կյանքը ունեցել է երկու կողմ.

Մի կողմից (ցուցադրովի)՝ դա բարեգործական ժողովներում փայլուն հոնետորի արժանի համբավ վայելող ջանալմենն էր, օժտված վարչական ընդունակությամբ, որ նա զնում էր զանազան, մեծ մասամբ կանանց, բարեգործական

ընկերությունների տրամադրութեան տակ: Մյուս կողմից (հասարակութեանն անհայտ)՝ այդ ջենտլմենը ներկայանում էր բոլորովին այլ տեսքով՝ այսինքն որպէս մի մարդ, որն անձնատուր էր լինում հաճույքներին, քաղաքից դուրս ունէր, ոչ իր անունով, շքեղ առանձնատուն, որտեղ բնակեցրել էր իր ազգանունը շիրող մի տիկնոջ: Այդ առանձնատունը խուզարկելու ժամանակ ես տեսա նկարներ ու արձաններ, ճաշակով ընտրված ու հրաշալի պատրաստված կահույք, հազվագյուտ ծաղիկներով պարտեզ, որպիսիք դժվար է գտնել ամբողջ Լոնդոնում: Տիկնոջ անձնական գույքը ստուգելիս հայտնաբերվեցին իրենց եզակիութեամբ ծաղիկներին չզիջող աղամանդներ, կառքեր ու ձիեր, որոնք միանգամայն արժանի կերպով տպավորութեան էին գործում Հայդ-պարկում՝ թե այս, թե այն մասին դատելու ունակ մարդկանց վրա:

Այդ բոլորն առայժմ բավականաչափ սովորական էր: Քաղաքից դուրս գտնվող շքեղ առանձնատունը և կինը այնքան սովորական բաներ են լոնդոնյան կյանքում, որ ես պետք է ներողութեան խնդրեմ դրանք հիշատակելու համար: Բայց, ինչպէս ինձ թվում է, այնքան էլ սովորական չէ այն հանգամանքը, որ այդ բոլոր իրերը ոչ միայն պատվիրվել էին, այլև դրանց համար վճարվել էր: Հետաքննութեանն ապացուցեց, ի աննկարագրելի զարմանս իմ, որ նկարների, արձանների, ծաղիկների, աղամանդների, կառքերի ու ձիերի համար նույնիսկ վեց պենսի պարտք չկար: Իսկ շքեղ առանձնատունը գնված էր, և գնված էր տիկնոջ անունով:

Ես կարող էի երկար փնտրել այդ զաղտնիքի լուծումը, փնտրել ու չգտնել, եթե միստր Գոդֆրի էբլուայթի մահը շտիպեր այդ բոլոր իրերին վերաբերող քննութեան կատարել:

Հետաքննութեանը հայտնաբերեց հետևյալ փաստերը:

Միստր Գոդֆրի էբլուայթին հանձնարարվել էր հոգալ քսան հազար ֆունտ գումարի մասին որպէս խնամակալ ոմն ջահել ջենտլմենի, որը հազար ութ հարյուր քսոսսոնութի վաճառքին դեռևս անչափահաս էր: Խնամակալութեան ժամկետը լրանում էր, և երկատարող ջենտլմենը պետք է քսան հազար ֆունտն ստանար իր ծննդյան օրը՝ հազար ութ հարյուր հիսուն թվականի փետրվարին: Իսկ մինչ այդ նրա խնա-



ժակալները պետք է ամեն անգամ Քրիստոսի ծննդյան օրը և ուրբ Հովհաննեսի օրը նրան վճարեին երեք հարյուր ֆունտ: Այդ եկամուտը կանոնավոր կերպով վճարում էր գլխավոր խնամակալ Գոդֆրի էբլուայթը: Քսան հազար ֆունտը (որից, իբր, վճարվում էր այդ եկամուտը), պետական արժեթղթերով, մինչև վերջին ֆարտինգը ամբողջությամբ ծախսվել էր տարբեր ժամանակներում, դեռևս մինչև հազար ութ հարյուր քառասունյոթ թվականը: Հավատարմատարի լիազորությունը, որը բանկիրներին իրավունք էր տալիս վաճառել արժեթղթերը, և զանազան գրավոր հրամանները, որոնք հազորդում էին, թե ինչ գնով պետք է վաճառել, պատշաճ կերպով ստորագրված էին երկու խնամակալների կողմից: Բայց երկրորդ խնամակալի՝ գյուղում ապրող բանկային պաշտոնաթող սպայի, ստորագրությունը մշտապես կեղծում էր գլխավոր խնամակալը, այլ խոսքով՝ միստր Գոդֆրի էբլուայթը:

Ահա թե ինչով էր բացատրվում ազնիվ վարմունքը Գոդֆրիի, որը վճարում էր ինչպես տիկնոջ, այնպես էլ շքեղ առանձնատան բոլոր ծախսերը և, ինչպես կտեսնեք, էլի շատ ուրիշ բաների համար:

Այժմ մենք կարող ենք անցնել միսս Վերինդերի ծննդյան օրվան, որը նշվեց հազար ութ հարյուր քառասունութ թվականի հունիսի քսանմեկին:

Նախորդ օրը միստր Գոդֆրի էբլուայթը եկել էր հոր մոտ և նրանից պարտք խնդրել երեք հարյուր ֆունտ (դա ևս իմացա հենց միստր էբլուայթ ավագից): Նկատի ունեցեք գուժարը և միաժամանակ հիշեցեք, որ երիտասարդ ջենտլմենի կիսամյա վճարումը կատարվում էր այդ ամսի քսանչորսին, ինչպես նաև այն, որ երիտասարդ ջենտլմենի ամբողջ կապիտալը նրա խնամակալը ծախսել էր դեռևս քառասունյոթ թվականի վերջերին:

Միստր էբլուայթ ավագը հրաժարվել էր նույնիսկ մի ֆարտինգ պարտքով տալ որդուն:

Հաջորդ օրը միստր Գոդֆրի էբլուայթը ձեռք հետ մեկնեց լեդի Վերինդերի մոտ: Մի քանի ժամ հետո միստր Գոդֆրին, ինչպես ինքներդ եք ինձ ասել, առաջարկություն արեց միսս Վերինդերին: Նա, անկասկած, դրանում տեսնում էր (և թեև առաջարկն ընդունվեր) իր բոլոր՝ ներկա և ապագա, գրամա-

կան դժվարութիւններ լերջը: Բայց միսս Վերինդերը մեր-  
ժեց նրան:

Այսպիսով, միստր Գոդֆրի էբլուայթի ֆինանսական դու-  
թիւնը հետեւյալ տեսքն ուներ միսս Վերինդերի ծննդյան  
օրով երեկոյան. նա պետք է երեք հարյուր ֆունտ վճարեր  
ամսի քսանչորսի համար և քսան հազար ֆունտ՝ հազար ութ  
հարյուր հիսուն թվականի փետրվարի համար: Եթէ նա չհասց-  
ներ ճարել այդ գումարները՝ հետևանքները շատ ծանր կլի-  
նեին:

Իսկ ի՞նչ կատարվեց նման հանգամանքներում:

Դուք միստր Կանդիին՝ բժշկին, վիրավորեցիք, անհար-  
գալից արտահայտվելով նրա մասնագիտութեան մասին, և  
նա ձեզ վարձահատուց եղավ որոշակի շափի լաուդանում  
տալով: Նա միստր Գոդֆրի էբլուայթին հանձնարարեց փոք-  
րիկ սրվակի մեջ պատրաստված այդ դեղաչափը տալ ձեզ, և  
միստր Գոդֆրին ինքը դա խոստովանեց այնպիսի հանգ-  
մանքներում, որոնք հիմա կշարադրվեն: Միստր Գոդֆրին  
շատ ավելի սիրով համաձայնվեց դրան, որովհետև այդ երեկո  
նա ինքն էլ էր տուժել ձեր սուր լեզվից: Նա միացավ Բեռ-  
տերեջին, որը ձեզ համոզում էր քնելուց առաջ մի քիչ ջրա-  
խառն կոնյակ խմել: Նա թարուն լաուդանում լցրեց սառը  
փունջի մեջ: Եվ դուք այն խմեցիք:

Այժմ, ձեր թուլութեամբ, տեսարանը փոխադրենք  
լամբեթ՝ միստր Կլուկերի տունը: Եվ թույլ տվեք ինձ, սրբա-  
նախաբան, նկատել, որ միստր Բրեֆն ու էս գտանք մի եղա-  
նակ, որով վաշխառուին ստիպեցինք արտահայտվել: Մենք  
հանգամանորեն քննութեան ենթարկեցինք այն ցուցմունքը,  
որ նա տվեց մեզ, և ահա այն ներկայացվում է ձեր ուշադ-  
րութեանը:

#### IV

Քառասունութ թվականի հունիսի քսաներեքի ուրբաթ օրը,  
ուշ երեկոյան միստր Կլուկերին զարմացրեց միստր Գոդֆրի  
էբլուայթի այցելութիւնը: Նա է՛լ ավելի զարմացավ, երբ  
միստր Գոդֆրին նրան ցուցց տվեց կուսնաքարը: Այդպիսի

ալմաստ, որքան որ գիտեր միստր Լյուկերը, Եվրոպայում ոչ մեկը չուներ:

Միստր Գոդֆրի էբլուայթը այդ հոյակապ թանկարժեք քարին վերաբերող երկու համեստ առաջարկութիւնն արեց: Առաջինը, այն չի՞ գնի միստր Լյուկերը: Երկրորդ, չի՞ համաձայնվի միստր Լյուկերը, եթե ինքը չկարողանա գնել, վաճառակատարման վերջնել և փողի մի մասը վճարել նախապես:

Միստր Լյուկերը պատասխանելուց առաջ երկար զննել է ալմաստը, կշռել և արժեքավորել: Ուշադրութեան առնելով քարի վրայի բիծը, նա այն գնահատել է երեսուն հազար ֆունտ:

Այս եզրակացութեանը հագնելով, միստր Լյուկերը հարցրել է.

— Սա ձեզ որտեղի՞ց:

Ընդամենը երեք բառ, բայց ինչքան մեծ նշանակութիւն է պարունակում:

Միստր Գոդֆրի էբլուայթն սկսել է ինչ-որ մի պատմութիւն: Միստր Լյուկերը նորից խոսել է և այս անգամ միայն երկու բառ է արտաբերել.

— Համոզիչ չէ:

Միստր Գոդֆրին մեկ ուրիշ պատմութիւն է սկսել: Այժմ միստր Լյուկերը ոչ մի խոսք չի փոխանակել նրա հետ: Վեր է կացել ու կանչել ծառային, որ սա ճանապարհի ջենտլմենն է:

Այդ ժամանակ միստր Գոդֆրին ստիպված է եղել զործը ներկայացնել մի նոր և ավելի վատահելի լույսի տակ, այսինքն.

Լաուդանումը ձեր փունջի մեջ լցնելուց հետո նա բարի գիշեր է մաղթել ձեզ ու գնացել իր սենյակ: Նրա ննջատեղակը եղել է ձերի մոտ և գոնով հաղորդ: Դիւ է նրա հետ իր սենյակը մտնելով՝ միստր Գոդֆրին, ինչպես իրեն թվացել է, իր Լաուդա ծածկել է գուռը: Գրամական գծվարին կատարողներ երկար ժամանակ չի թողել, որ ընի: Մոտ մեկ ժամ նստել է խալաթով ու կոշիկներով և մտածել իր վիճակի մասին: Իսկ երբ պատրաստվել է պառկելու՝ հանկարծ

լսել է, թե ինչպես դուք ձեր սենյակում խոսում եք ինքնեքդ ձեզ հետ, և, դուանը մոտենալով, նկատել է, որ այն շի ծածկել, ինչպես որ ենթադրում էր:

Նա մտել է ձեր սենյակը, որպեսզի իմանա, թե ինչ է կատարվում ձեզ հետ: Տեսել է, որ դուք մոմը բռնած դուրս եք գալիս ննջասենյակից և լսել է, թե ինչպես դուք ձեր սովորական ձայնին բուրբուրով շնամանվող ձայնով ասել եք ձեզ.

— Ի՞նչ իմանամ: Գուցե հնդիկները թաքնված են տանը:

Մինչ այդ պահը նա պարզապես մտածել է, որ, ձեզ լսուղանում տալով, մասնակցում է ձեր նկատմամբ կատարվող անմեղ կատակին: Այժմ հանկարծ նրա մտքով անցել է, որ լսուղանումը այնպիսի ներգործություն է ունեցել ձեզ վրա, որպիսին ոչ բժշկի, ոչ առավել ևս իր մտքով շի անցել: Վախենալով, որ կարող է որևէ փորձանք պատահել, նա կամացուկ գնացել է ձեր ետևից, տեսնելու, թե ինչ պետք է անեք դուք:

Նա ձեր ետևից շարժվել է մինչև միսս Վերինդերի հյուրասենյակը և տեսել է, թե ինչպես դուք մտել եք այնտեղ. դուք ձեր ետևից բաց եք թողել դուռը: Նա նայել է կողափայտի և դռան արանքով:

Այսպիսով նա ոչ միայն տեսել է, թե ինչպես դուք ամաստը հանել եք պահարանից, այլև տեսել է բաց դռնից անձամբ ձեզ հետևող միսս Վերինդերին: Նա տեսել է, որ միսս Վերինդերը նույնպես նկատեց, որ դուք վերցրիք ամաստը:

Հյուրասենյակից դուրս գալիս դուք փոքր-ինչ դանդաղել է: Միստր Գոդֆրին օգտվել է անվճարահանությունից և մինչ դուք դուրս կգալիք միջանցք ու կտեսնեիք նրան, վերադարձել է իր սենյակը: Նա հազիվ է հասցրել վերադառնալ, երբ դուք նույնպես վերադարձել եք: Գուք, թերևս, նրան նկատել էք այն ժամանակ, երբ նա մտել է կից դռնով: Համենայն դեպս տարօրինակ, բնկոտ ձայնով կանչել եք նրան:

Նա մտաեցել է ձեզ: Գուք բութ ու քնկոտ հայացքով նայել եք նրան: Այժմաստը խոթել եք նրա բուռը: Ասել եք նրան.

— Ետ տարեք սա ձեր հոր բանկը, Գողթրի: Այնտեղ ա-  
զահով կլինի, այստեղ՝ ոչ:

Գուք անհաստատ՝ քայլերով հեռացել եք նրանից ու խա-  
լթ հագել: Իջել եք ձեր սենյակում դրված բազկաթոռի մեջ:  
Գուք ասել եք.

— Ինքս չեմ կարող բանկ տանել սա: Գլուխս ծանրացել  
է արճճի պես, ոտքի վրա կանգնել չեմ կարողանում:

Ձեր գլուխն ընկել է բազկաթոռի թիկնակին, դուք ծան-  
րորեն շնչել եք ու քնել:

Միտք Գողթրի էբլուայթը արմատը վերցրած վերադար-  
ձել է իր սենյակը: Նա հավատացրել է, որ ինքը այդ ժամա-  
նակ ոչ մի որոշում չի ընդունել, բացի այն, որ կսպասի ու  
կտեսնի, թե ինչ տեղի կունենա առավոտյան:

Երբ լույսը բացվել է, ձեր խոսքերն ու արարքները ցույց  
են տվել, որ դուք գիշերն ասածից ու արածից ոչինչ չեք հի-  
շում: Միևնույն ժամանակ միսս Վերինդերի խոսքերն ու վար-  
վելակերպը ցույց են տվել, որ նա, օրիորդը, իր կողմից որո-  
շել է ոչինչ չասել (ձեր նկատմամբ ունեցած կարեկցանքից):  
Էթե միտք Գողթրի էբլուայթի մտքով անցներ արմատը  
զահել իր մոտ, ապա նա այդ կարող էր անել անսպասիժ  
էերպով: Լուսնաբարը նրան փրկում էր սնանկացումից: Նա  
լուսնաբարը դրել է իր գրպանը:

## V

Ահա այն պատմությունը, որ ձեր զարմիկը անհրաժեշ-  
տության ճնշման ներքո հաղորդել է միտք կյուկերին:

Միտք կյուկերը հավատացել է պատմածին, որովհետև  
միտք Գողթրի էբլուայթը, ինչպես նա ասաց, բավականա-  
շափ հիմար է և չի կարող այդպիսի պատմություն հորինել:  
Միտք Բրեֆն ու նա համաձայնվեցինք միտք կյուկերի այս  
զատողությանը:

Հաջորդ հարցն այն էր, թե միտք կյուկերն ինչ աներ  
! : Նաքարը: Նա առաջարկել է հետևյալ պայմանը, միակ  
ուրեք, որով համաձայնվում էր խառնվել նույնիսկ պրոֆեսիո-  
նալ տեսանկյունից կասկածելի ու վտանգավոր այդ գործին:

Միստր Լյուկերը պատրաստ է եղել պարտքով երկու հազար ֆունտ տալ միստր Գոդֆրի Էբլուայթին այն պայմանով, որպեսզի Լուսնարարը որպես գրավ տրվեն իրեն: Եթե մի տարի անցնելուց հետո միստր Գոդֆրի Էբլուայթը երեք հազար ֆունտ վճարի միստր Լյուկերին, ապա այժմաստը ևս կստանա որպես ետ գնված գրավ: Եթե տարին լրանալուց հետո նա փողը չվճարի, ապա գրավը, այլ խոսքով՝ Լուսնաբարը, կդառնա միստր Լյուկերի սեփականությունը, որը, այս վերջին դեպքում մեծահոգաբար միստր Գոդֆրիին կնվիրի նրա բոլոր պարտամուրհակները, որ առաջներում նա տվել է վաշխատուին:

Անօգուտ է ասել, որ միստր Գոդֆրին զայրույթով մերժել է այս հրեշավոր պայմանները: Այդ ժամանակ միստր Լյուկերը ալմաստը վերադարձրել է նրան ու բարի դիշեր մաղթել:

Չէր դարձիկը գնացել է դեպի դուռն ու ետ դարձել: Ինչպե՞ս կարող է ինքը հավատացած լինել, որ իրենց միջև տեղի ունեցած խոսակցությունը խիստ գաղտնի կմնա:

Միստր Լյուկերը ոչնչով չէր կարող օգնել նրան: Եթե միստր Գոդֆրին համաձայնվեր իր՝ Լյուկերի պայմաններին, ապա նա իրեն կդարձներ իր գործակիցը և կարող էր հույս գնել իր լուռ մնալու վրա: Մինչդեռ հիմա միստր Լյուկերը զեկավարվելու է միայն իր սեփական շահերով: Եթե փափկանկատ հարցեր տրվեն՝ իրեն՝ նա հո իրեն չի՞ վարկարկի լեկով հանուն այն մարդու, որը հրաժարվել է իր հետ գո՞ծ ունենալուց:

Այս պատասխանը լսելով, միստր Գոդֆրի Էբլուայթը արժ է այն, ինչ անում են բոլոր կենդանիները (վն երկօտանի, թե մնացածը), երբ թակարդն են ընկնում: Նա հուսամատ նաչել է շուրջը և վաշխատուի բուխարու թարեթի վրա տեսել մի արկղիկ՝ քարտով, որի վրա խնամքով գրված է եղել այդ օրվա ամսաթիվը՝ հունիսի քսաներեք: Քսանչորսին նա պետք է երեք հարյուր ֆունտ վճարեր այն երիտասարդ ջեյարմենին, որի խնամակալն էր ինքը, և այդ փողը ձեռք բերելու: Ել մի հնարավորություն չկար, բացի այն մեկից, որ ինչև առաջարկում էր միստր Լյուկերը: Եթե չլիներ այդ ուղի, նա խոչընդոտը, նա կարող էր ալմաստը տանել Լուսնաբարում:

առանձին կտորների բաժանելով, ծախել շահավետորեն: Մինչդեռ հիմա նրան ոչինչ չէր մնում անել, քան համաձայնվել միստր Լյուկերի պայմաններին: Առջևում, այնուամենայնիվ, իս մեկ տարի ուներ երեք հազար ֆունտը ճարելու համար, իսկ մեկ տարին շատ երկար ժամանակ է:

Միստր Լյուկերն անմիջապես կազմել է անհրաժեշտ փաստաթղթերը: Երբ դրանք ստորագրվել են, նա երկու շնկ է տվել միստր Գոդֆրի էբլուայթին: Մեկը հունիսի քսաներեքի ամսաթվով՝ երեք հարյուր ֆունտի, մյուսը մեկ շարաթով ավել: ու շարաթով՝ մնացած հազար չոթ հարյուր ֆունտի:

Թե լուսնաբարն ինչ ձևով է հանձնվել բանկ՝ դա արդեն գիտեք:

Ձեր դարմիկի կյանքի հետագա դեպքերը դարձյալ միստր Վերինդերի հետ են կապված: Նա երկրորդ անգամ առաջարկություն է արել նրան և, այն բանից հետո, երբ առաջարկությունն ընդունված է եղել, համաձայնվել է, միստր Վերինդերի խնդրանքով, շեղյալ հայտարարել նշանադրությունը: Պատճառներից մեկը, որը նրան մղել է այդ բանն անելու, կոհակց միստր Բրեֆը: Միստր Վերինդերը միայն ցմահ իրավունք է ունեցել մոր կալվածքի նկատմամբ և, այդ պատճառով Գոդֆրին չէր կարող ձեռք բերել իրեն անհրաժեշտ քսան հազար ֆունտը:

Ինք կարող եք ասել, եթե ամուսնանար՝ կարող էր կուտակել ավաստը հոս ցնելու համար անհրաժեշտ երեք հազար ֆունտը: Նա, իհարկե, կարող էր այդ տնել, եթե նրա կինն ու կնոջ խնամակալները չընդգրկումնային այն բանին, որ նա, շղիտես ինչի համար, ամուսնության առաջին իսկ տարում նախապես վերջներ եկամտի կեսից ավելին: Բայց եթե նույնիսկ այդ խոչընդոտն էլ հաղթահարեր՝ մեկ ուրիշ բան էր սպասում նրան: Քաղաքամերձ առանձնատան օֆիկինը լսել էր նրա ամուսնության մասին: Դա, միստր Բլեկ, հպարտ կին էր, այն ցեղատեսակից, որի հետ կառավել չի կարելի. դեմքի նուրբ զույնով ու հոտմեակուն բլթով կանանց ցեղատեսակից: Նա շափից գուրա ատելություն էր զգում միստր Գոդֆրի էբլուայթի նկատմամբ: Այդ ատելությունը խոստանալով էր լոխն լինել, եթե միստր Գոդֆրին լավ ապահովեր նրան:

Հակառակ դեպքում, այդ ատելությունը լեզու կունենար: Միսս Վերինդերի ֆինանսական դրությունը նույնքան քիչ հույս էր տալիս միսսր էբլուայթին կուտակելու այդ «ապահովությունը», որքան և հավաքելու քսան հազար ֆունտը: Նա չէր կարող ամուսնանալ. նման հանգամանքներում նա ոչ մի կերպ չէր կարող ամուսնանալ:

Իսկ այն, որ նա բախտը փորձել էր մեկ ուրիշ օրիորդի հետ և որ այդ հարսանիքը նույնպես խափանվել էր փողի պատճառով, ձեզ արդեն հայտնի է: Ձեզ հայտնի է նաև, որ նա ստացավ հինգ հազար ֆունտի ժառանգություն, որ շուտով նրան թողեց այն բազմաթիվ երկրպագուհիներից մեկը, որոնց համակրանքը կարողանում էր շահել այդ հմայիչ տղամարդը: Հենց այս ժառանգությունն էլ, ինչպես դեպքերն են ապացուցում, եղավ նրա մահվան պատճառը:


Ես իմացա, որ նա, իր հինգ հազար ֆունտն ստանալով, մեկնել էր Ամստերդամ: Այստեղ նա կատարել էր այն բոլոր նախապատրաստությունները, որոնք անհրաժեշտ էին ալմաստն առանձին կտորների բաժանելու համար: Նա վերադարձել էր (զգեստափոխված) և նշանակված օրը ետ գնել կուսնաբարը: Նախքան ալմաստը բանկից հանելը՝ բաց էին թողել մի քանի օր (երկու կողմն էլ համաձայնվել էին այս նախազգուշությունը): Եթե նա, ալմաստն առած, բարեհաջող հասներ Ամստերդամ, ապա քառասունինը թվահանի հուլիսի և հիսունի փետրվարի միջև (երբ երիտասարդ ջենտլմենը դառնում էր չափահաս) բավականաչափ ժամանակ կունենար, որպեսզի հասցներ ալմաստը կտորների բաժանել և վտճառել առանձին-առանձին: Ուստի դատեցեք, թե ինչ պատճառներ էին նրան մղում դիմելու այդ վտանգավոր գործին: Հաղթանակ կամ մահ, ահա, ինչպիսին էր իրավիճակը նրա համար:

Նախքան զեկույցս ավարտելը, ինձ մնում է միայն ձեռնհիշեցնել, որ հնդիկներին բռնելու և կուսնաբարը գանձելու հնարավորությունը դեռևս կորած չէ: Հիմա նրանք, ինչպես բոլոր հիմքերը կան ենթադրելու, գտնվում են Արևելա-բնակական ընկերության նավերից մեկով Բոմբեյ մեկնելու ճա-



նապարհին: Այդ նավը, Լթե շնախատեսված որևէ բան չպատահի, ոչ մի ուրիշ նավահանգիստ չի մտնի, իսկ Բոմբեյի ոստիկանությունը, որն արդեն նախազգուշացված է ցամաքային ճանապարհով ուղարկված նամակով, պատրաստ կլինի հայտնվելու շոգենավում, հենց որ սա նավահանգիստ մտնի:

Ռիչարդ Կաֆ (խուզարկու ոստիկանության նախկին գործակալ, Սֆոթլանդ-Ֆարդ, Լոնդոն):



### ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,

միստր Կանդից ստացված նամակի ձևով

Յժիզիհնույ, չորեքշաբթի, սեպտեմբերի 26, 1849: *Միստր լի միստր Ֆրենկլին, դուք կկռահեք իմ հաղորդելիք տխուր լուրերը՝ տեսնելով էգրա Չենինգսին հասցեազրկած ձեր նամակը, որ շքեղված վիճակում ձեզ է վերադարձվում իմ այս նամակի մեջ դրված:*

*Ինձ մի կշտամբեք, որ ձեզ չեմ տեղեկացրել նրա մտաւրտ վախճանի մասին: Նա ինձ կտրականապէս արգելեց ձեզ գրել:*

*Սա միստր Ֆրենկլին Բլեկին պարտական եմ մի բանի նրջանիկ օրերով, — սասց նա: — Մի վշտացրեք նրան, միստր Կանդի, մի վշտացրեք նրան»:*

*Մեռնելուց մեկ օր առաջ ինձ ինզրեց, որ իրեն տամ ի բոլոր ըզթերը: Անկողնում նրան սովի ինչ-որ մեկի զեղծ ճամակների կապոցը, իր անավարտ զիրքը, իր օրագրի բանի տետրերը: Նա բացեց այս տարվան վերաբերող տետրը և միջոց իրար հակից պոկեց այն ժամանակին նվիրված*

չչերը, երբ դուք միասին եք եղել: «Սա հանձնեք միտք  
Ֆրենկլին Բլեկին,— ասաց նա,— գուցե, ժամանակին նրա  
համար հետաքրքիր կլինի, աչքի անցկացնել այս էջերը»:  
Մնացած բոլորը նրա խնդրանքով հավաքեցի մի փաթեթի  
մեջ և կնքեցի իմ սեփական կնիքով: «Խոստացեք ինձ,— ասաց  
նա,— որ սա ձեր ձեռքով կդնեք իմ դագաղի մեջ, և որ  
ոչ մի ուրիշ ձեռք չի դիպչի սրան»: Ես խոստացա: Եվ խոստումս  
կատարեցի: Նա մեկ ուրիշ բան էլ խնդրեց. որ իր գե-  
րեզմանը մոռացվի: Փորձեցի նրա հետ վիճել, բայց նա (ա-  
ռաջին և վերջին անգամ) ահավոր կերպով բարբոթեց: Ես չէի  
կարող դիմանալ դրան և զիջեցի: Միայն կանաչ ճիւմն է ցույց  
տալիս նրա հանգչելու տեղը: Փամանակի ընթացքում շիրմա-  
բարերը շորս կողմից կշրջապատեն այն: 'Եվ մեղնից հետո  
ապրող մարդիկ կզարմանան անանուն գերեզմանը տեսնե-  
լով: Այսպես նա հեռացավ մեզնից: Նա, կարծում եմ, մեծ  
մարդ էր, թեև աշխարհն այնպես էլ չճանաչեց նրան: Նա ա-  
րիաբար դիմացավ իր ծանր բախտին: Նա շատ քնքուշ հոգի  
ունիր. այդպիսին ես չեմ տեսել: Նրան կորցնելով՝ ես շատ  
մենակ զգացի ինձ: Հնարավոր է, որ իմ հիվանդությունից  
հետո ես արդեն առաջվանը չեմ: Արդեն մտածում եմ թող-  
նել աշխատանքս, մեկնել այստեղից, ինձ վրա փորձել ար-  
տասահմանյան լողանքների ու ջրերի ազդեցությունը:

Այստեղ խոսում են, թե ձեր և միսս Վերինգերի հարսա-  
նիքը կլինի հաջորդ ամսին: Խնդրում եմ ընդունել իմ անկեղծ  
շնորհավորանքները:

Իմ խեղճ ընկերոջ օրագրի թերթիկները ձեզ են սուսուում  
իմ տանը, կնրված և ձեր անունը ծրարի վրա դրված: Վա-  
խենում եմ դրանք փոստին վատահել:

Իմ բարի ցանկությունները հաղորդեցեք միսս Վերինգե-  
րին: Մնամ, թանկագին միսս ֆրենկլին Բլեկ, անկեղծորեն  
ձեր

Քոմաս Կանգի:



## ՈՒՔԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒՅՈՒՆԸ,

որ ավելացրել է Գարեիկ Քետտեբեջը

Սա այն անձնավորութիւնն էմ (ինչպես դուք, անկասկած, հիշում եք), որը բացեց այս էջերը, սկսելով պատմել: Սա էլ կլինեմ այն անձնավորութիւնը, որը կփակի դրանք, ավարտելով պատմութիւնը:

Չկարծեք, թե ես պատրաստվում եմ որևէ բան հրապարակել հնդկական ալմաստի մասին: Սա ատել էմ այդ շարաբաստիկ քորը, և թող մեկ ուրիշը դրա մասին պատմի այն ամենը, ինչ դուք ուզում եք իմանալ: Իսկ ես մտադիր եմ այստեղ ձեզ հաղորդել այն փաստը, որի մասին ոչ ոք չի հիշատակել մինչև հիմա և որի նկատմամբ այդրան անհարգալից լինել էս շեմ թույլ տա: Փաստը, որը ակնարկում էմ, միաս Ռեշեյի և միստր Բլեկի հարսանիքն է: Այդ հիանալի

իրադարձութիւնը տեղի ունեցավ Յորքշիրի մեր տանը, հազար ութ հարյուր քառասունինը թվականի հոկտեմբերի իննին, երեքշաբթի օրը: Այդ առիթով ես մի սերթուկ ստացա: Իսկ երիտասարդ զույգը մեղրամիսն անցկացնելու մեկնեց Շոտլանդիա:

Քանի որ իմ խեղճ տիրուհու մահվանից ի վեր ընտանեկան տոնախմբութիւնները հազվադեպ էին դարձել մեր տանը, ես ամուսնութեան օրը, պետք է խոստովանեմ, մի քիչ ավելի խմեցի:

Եթե դուք երբևէ այդպիսի բան արել եք՝ ապա ինձ կհասկանաք: Եթե չեք արել, շատ հնարավոր է, ասեք. «Զգվելի ծերուկ, ինչո՞ւ է այդ մասին խոսում»:

Այսպես ուրեմն, մի կաթիլ բերանս առնելուց հետո (աստված ձեզ հետ, կարծես դուք թուլութիւն չունեք. միայն թե ձեր թուլութիւնը իմը չէ, իսկ իմն էլ՝ ձերը չէ) ես անմիջապէս դիմեցի իմ մշտական դեղամիջոցին, իսկ իմ դեղամիջոցը, ինչպէս գիտեք, «Ռոբինզոն Կրուզոն» է: Թե իրեն հավասարը չունեցող այդ գիրքը, որ էջում բացեցի՝ ճիշտ չեմ կարող ասել. բայց, ի վերջո, աչքերիս առջև երկարող տողերը ճշգրիտ գիտեմ. դրանք երեք հարյուր տասնութերորդ էջում են, տեղն էլ վերաբերում է Ռոբինզոն Կրուզոնի ընտանեկան գործերին ու նրա ամուսնութեանը: Ահա դրանք. «Այսպիսի մտածումներով ես քննութեան առա իմ նոր կացութիւնը. ևս կին ունեի (ուշադրութիւն դարձրեք, միստր Տրենկլին Բլեկը՝ նույնպէս) և նորածին. Լրեխա (դարձյալ ուշադրութիւն դարձրեք: Դա կարող է լինել նաև միստր Տրենկլին Բլեկի հետ): Եվ այդ ժամանակ կինս...» Թե «այդ ժամանակ» ինչ արեց կամ չարեց Ռոբինզոն Կրուզոնի կինը, ես արդեն իմանալու ոչ մի տրամադրութիւն չունեի: Ես ընդգծեցի նորածինն վերաբերող տեղը և էջի արանքը թուղթ դրեցի: Ե՞րբ այստեղ մնա, — դիմեցի նրան, — մինչև որ միստր Տրենկլին ու միսս Ռեչլի ամուսնութիւնը մի քանի ամսվա կշռեն, իսկ հետո կտեսնենք»:

Անցան ամիսներ (ավելի, քան ես մտածում էի), մինչդեռ գրեթէ մէջդիրին դիմելու առիթ դեռ չէր ներկայանում: Սկսվեց

հազար ութ հարյուր հիսուն թվականի նոյեմբերը, երբ վերջապես միտար Ծրենկլիներ շատ ուրախ տրամադրությամբ մտաւ իմ սենյակն ու ասաց.

— Բետտեռեչ, ձեզ համար նորություն ունեմ: Այս օտանեջ մի բան կկատարվի, երբ ես ու զուգ մի քանի ամսով ավելի մեծ կլինենք:

— Դա ընտանիքի՞ն է վերաբերում, սրբ,— հարցրի ես:

— Դա որոշակիորեն վերաբերում է ընտանիքին,— ասում է միտար Ծրենկլիներ:

— Արդո՞ք ձեր կինը որևէ կապ ունի դրա հետ, բարի եզեր պատասխանել, սր:

— Նա շատ մեծ կապ ունի դրա հետ,— ասում է միտար Ծրենկլիներ, սկսելով զարմանքի որոշ նշաններ ցույց տալ:

— Ավելի ոչ մի խոսք չեմ ուզում, սրբ: Թող աստված օրհնի երկուսիդ էլ, ուրախ եմ սա լսելուս համար,— պատասխանում եմ ես:

Միտար Ծրենկլիներ շանթահարվածի պես կանգ առավ:

— Թույլ տվեք իմանալ, որտեղի՞ց գիտեք այդ տեղեկությունները,— հարցրեց նա:— Ծս ինքս այդ մասին որպես հույժ գաղտնիք, ընդամենը հինգ րոպե առաջ իմացա:

Հասել էր «Ռոբինզոն Կրուզոն» հանելու ժամանակը: Դա առիթ էր, կարդալու նորածնին վերաբերող այն կտորը, որ նշել էի միտար Ծրենկլիների հարսանիքի օրը: Հրաշագործ խոսքերը կարգացի դրանց նշանակությանը համապատասխանող արտահայտությամբ, իսկ հետո խիստ նայեցի նրա երեսին:

— Դե, սրբ, հիմա հավատո՞ւմ եք «Ռոբինզոն Կրուզոն»-ին,— առիթին վայել հանդիսավորությամբ հարցրի ես:

— Բետտեռեչ,— արտաբերեց միտար Ծրենկլիներ նույնքան հանդիսավոր,— վերջապես հավատացի:


Մենք իրար ձեռք սեղմեցինք, և ես զգացի, որ դարձի եմ բերել նրան:

Այս արտակարգ դեպքի մասին հաղորդելով, ես հեռանում եմ գրքի էջերից: Լեդիներ ու ջենտլմեններ, խոնարհաբար հրածեշտ եմ տալիս և ավարտում:

ՎԵՐՋԱԲԱՆ



ԻՆՉՊԵՍ  
ԳՏԵՎԵՂ  
ԱՆՍԱՍՏԸ



# I

## ԽՈՒՉԱՐԿՈՒ ԿԱՅԻ ԵՆԹԱԿԱՅԻ ՅՈՒՑՄՈՒՆՔԸ (1849)

Հունիսի քսանյոթին խուզարկու Կաֆից հրահանգ ստացա հետևելու սպանություն մեջ մեղադրվող երեք հոգու, դատելով ըստ նկարագրության՝ հնդիկների նրանց այդ առավոտ տեսել էին Ռոտերի նավահանգստում. նրանք գնում էին Ռոտերգամ մեկնող շոգենավը նստելու:

Ես լոնդոնից դուրս եկա մեկ ուրիշ ընկերության պատկանող շոգենավով, որը մեկնեց քսանյոթին, հինգշաբթի առավոտյան:

Ժամանելով Ռոտերգամ, փնտրեցի գտա շորքշաբթի մեկնած շոգենավի նավաստիներին: Նա ինձ հաղորդեց, որ հնդիկներն իրոք իր նավի ուղևորներ եղել են, բայց միայն մինչև Գրեյվսենդ: Այդտեղ հասնելով, երեքից մեկը հարցրել է, թե երբ են մտնելու Կալիս Իմանավով, որ շոգենավը մինչև Ռոտերգամ է գնում, հնդիկը շատ մեծ զարմանք ու ափսոսանք է հայտնել. պարզվում է, որ նա և իր ընկերները սխալ



են գործել: Իրենք պատրաստ են, ասել է նա, զոհաբերելու երթևեկության համար վճարած փողը, եթե նավապետը համաձայնվի ափ իջնեցնել իրենց: Օտարերկրացիների վիճակի մեջ մտնելով և նրանց պահելու պատճառ շունենալով, նավապետը ազդանշանել է առափնյա նավակին, և երեքն էլ թողել են շոգենավը:

Հնդիկները վազօրոք էին որոշել այդ քայլը կատարել՝ հետքերը խճճելու համար, և ես, առանց ժամանակ կորցնելու, վերադարձա Անգլիա: Շոգենավից իջա Գրեյվսենդում և իմացա, որ հնդիկները մեկնել են Լոնդոն: Այստեղ պարզեցի, որ նրանք մեկնել են Պլիմուտ: Պլիմուտում կատարածս որոնումները ցույց տվին, որ նրանք ճանապարհ են ընկել քառասուն ժամ առաջ, ուղիղ Բոմբեյ մեկնող «Բյուլի Քեստլ» հնդկական նավով, որը պատկանում է Արևելա-հնդկական ընկերությանը:

Այս լուրն ստանալով, Խուզարկու Կաֆր ջամաքային փոստով տեղեկացրել է Բոմբեյի իշխանություններին, որպեսզի շոգենավը նավահանգիստ հասնելուն պես ոստիկանությունը խուզարկի այն: Այս քայլից հետո ես արդեն կապ չեմ ունեցել այդ գործի հետ: Եվ նրա մասին այլևս ոչինչ չեմ լսել:

## II

### ՆԱՎԱՊԵՏԻ ՅՈՒՑՄՈՒՆՔԸ

(1849)

Խուզարկու Կաֆրն ինձ խնդրում է գրավոր շարադրել այն երեք անձնավորություններին (ենթադրաբար՝ հնդիկներին) վերաբերող որոշ հանգամանքներ, որոնք անցած ամառ ուղևոր են եղել իմ հրամանատարությամբ Բոմբեյ մեկնող «Բյուլի Քեստլ» նավում:

Հնդիկները նավ նստեցին Պլիմուտում: Ճանապարհին նրանց վարքագծի վերաբերյալ ոչ մի բողոք չստացի: Նրանք տեղավորված էին նավի քթամասում: Նրանց անձամբ հետևելու քիչ առիթ եմ ունեցել:

Ճանապարհորդության վերջում, հնդկական ափի մոտ,

մենք, դժբախտաբար, մատնվեցինք կատարյալ անշարժության, որը տեեց երեք օր: Նավամատյանը ձեռքիս տակ չէ, և այժմ չեմ կարող վերհիշել լայնությունն ու երկարությունը: Ընդհանրապես մեր դրության մասին միայն հետևյալը կարող եմ ասել՝ հոսանքը մեզ տանում էր դեպի ցամաք, իսկ երբ նորից քամի բարձրացավ, քսանչորս ժամ անց մենք հասանք նավահանգիստ:

Կարգապահությունը նավում, ինչպես հայտնի է բազմաթիվ ագնացներին, երկարատև անշարժության ժամանակ թուլանում է: Այդպես եղավ նաև իմ նավում: Որոշ ուղևորներ խընդրում էին իջեցնել նավակները և զվարճանում էին թիավարելով ու լողանալով, երբ իրիկնային զովը թույլ էր տալիս այդ անել: Դրանից հետո հարկ էր նավակները տեղը դնել: Սակայն դրանք թողնում էին ջրի վրա՝ նավի մոտ. շողի պատճառով և եղանակից սրտենդած, ոչ սպաները, ոչ էլ նավատիրները իրենց պարտականությունները կատարելու տրամադրություն չունեին, քանի դեռ ծովային անշարժությունը շարունակվում էր:

Երբորդ գիշերը տախտակամածի հերթապահը ոչ մի արտակարգ բան չէր տեսել ու չէր լսել: Երբ լույսը բացվեց՝ անհայտացել էր ամենափոքր նավակը, անհայտացել էին նաև երեք հնդիկները:

Եթե այդ մարդիկ նավակը զողացել էին մութն ընկնելուց անմիջապես հետո (մի բան, որի վրա չեմ կասկածում), ապա մենք այնքան մոտիկ էինք ավիին, որ իզուր էր հետապնդել նրանց: Չեմ տարակուսում, որ նրանք այդ խաղաղ եղանակին ավի էին հասել (չնայած հողնածությանն ու թիավարել չիմանալուն) լույսը բացվելուց առաջ:

Մեր նավահանգիստը հասնելով՝ առաջին անգամ իմացա, թե ինչն էր ստիպել իմ երեք ուղևորներին անհետանալ նավից: Իշխանություններին էլ նույն ցուցմունքներն եմ տվել, ինչ որ այստեղ, նրանք ինձ մեղավոր ճանաչեցին նավի վրա կարգապահության թուլացում թույլ տալու մեջ: Ես ավստասանք հայտնեցի և՛ նրանց, և՛ իմ տերերին: Այդ ժամանակից ի վեր, որքան ինձ հայտնի է, երեք հնդիկների մասին ոչինչ չի լսվել: Այստեղ գրվածի վրա ավելացնելու ես ուրիշ ոչինչ չունեմ:

ՄԻՍՏՐ ՄԵՐՏՈՒՆԵՏԻ ՑՈՒՅՄՈՒՆՔԸ  
(1850)

(միտառ Ռեւիին ուղղված նամակում)

Հիշո՞ւմ եք, արդյոք, սիրելի սրբ, այն կիսավայրենուն, որին հանդիպեցիք քառասուն ութը թվականի աշնանը Լոնդոնում, ճաշկերույթի ժամանակ: Թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ այդ մարդու անունը Մերտունտ է, և որ ճաշկերույթից հետո դուք երկար խոսակցութիւն ունեցաք նրա հետ: Խոսակցութիւնը գնում էր Լուսնաքար կոչվող հնդկական արձաստի և դրան տիրանալու փորձերի շուրջը:

Այդ ժամանակից սկսած ես ճանապարհորդել եմ Կենտրոնական Ասիայում: Այնտեղից վերադարձա իմ նախկին արկածների վայրը, Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան: Մոտավորապես երկու շաբաթ առաջ հայտնվեցի մի շրջանում կամ գավառում, որը քիչ է հայտնի եվրոպացիներին և կոչվում է Կատտիվար:

Այստեղ ինձ հետ մի դեսպալ պատահեց, որը ինչքան էլ անհավատալի թվա, ձեզ համար անձնական հետաքրքրութիւն ունի:

Կատտիվարի վայրենի մարդերում (իսկ թե նրանք ինչ աստիճանի են վայրենի, կհավատաք, երբ ձեզ ասեմ, որ այստեղ գյուղացիներն անգամ հողը վարում են ոտքից-գլուխ դիմված) բնակչութիւնը մոլեռանդութեամբ նվիրված է հին հնդկական կրոնին՝ Բրահմայի և Վիշնայի հին պաշտամունքին:

Կատտիվարի սահմաններում են գտնվում հնդիկ կրոնապաշտների ուխտագնացութեան երկու ամենահայտնի վայրերը, որտեղ բորբոքվում է ժողովրդի կրոնական մոլեռանդութիւնը: Դրանցից մեկը Դվարկան է, Կրիշնա աստծու ծննդավայրը: Մյուսը Սոմնաթ սրբազան քաղաքն է, որ տասնամեկերորդ դարում կոռուպտել ու ոչնչացրել է նվաճող Մահմուդ Ղազնևին:

Երկրորդ անգամ այդ ումանտիկ վայրերում հայտնվելով,

որոշեցի Կատտիվարից Ղհեռանալ առանց ևս մեկ անգամ Սոմնաթի հոշակապ ավերակները դիտելու: Այն տեղը, որտեղ ես այս որոշումն ընդունեցի, իմ հաշվումներով գտնվում էր սրբազան քաղաքից ոտքով երեք օրվա հեռավորութան վրա:

Ես դեռ չէի հասցրել ճանապարհ ընկնել, երբ նկատեցի, որ շատերը, երկու կամ երեք հողով խոնմբ կազմած, ճանապարհորդում են ինձ հետ նույն ուղղությամբ:

Նրանց, ովքեր խոսակցության էին բռնվում ինձ հետ, ես ներկայանում էի որպես հեռավոր գավառից եկած և ուխտավայր գնացող բուդդայական հնդիկ: Անօգուտ է ասել, որ հագուստս համապատասխանում էր դրան: Ավիլացրեք, որ ես լեզուն գիտեմ նույնքան լավ, որքան և իմ մայրենին, և որ ես բավականաչափ նիհարակազմ եմ ու թխադեմ և այնքան էլ հեշտ չէ հայտնաբերել իմ եվրոպական ծագումը, այս պատճառով էլ այդ մարդիկ, թեև ինձ իրենց հայրենակիցը չէին համարում, հավատացին, որ ես իրենց երկրի մարդ եմ:

Ինձ հետ նույն ուղղությամբ գնացող հնդիկների թիվը երկրորդ օրը հասավ մի քանի հարյուրի: Երրորդ օրն արդեն հազարներ էին գնում: Բոլորը դանդաղ գնում էին դեպի մի կետ՝ Սոմնաթ քաղաքը:

Այն շնչին ծառայությունը, որ ճանապարհի երրորդ օրն ինձ հաջողվեց մատուցել իմ ուխտավոր ընկերներից մեկին, ինձ հնարավորություն տվեց ծանոթանալու բարձր կաստայի հնդիկների հետ: Այդ մարդկանցից ես իմացա, որ բազմությունը գնում է մասնակցելու կրոնական այն մեծ արարողությունը, որ կատարվելու է Սոմնաթի մոտերքում գտնվող բլրի վրա: Այդ արարողությունը նվիրվում էր Լուսնի աստծուն և տեղի էր ունենալու գիշերը:

Երբ մենք մոտեցանք տոնակատարության վայրին՝ բազմությունը մեզ պահեց: Իմ հնդիկ բարեկամներն օգտվում էին ինչ-որ հատուկ արտոնություններից, որոնք կուռքին մոտենալու իրավունք էին տալիս նրանց: Նրանք սիրով ինձ թույլ տվին, որ ուղեկցեմ իրենց: Տեղ հասնելով՝ տեսանք, որ կուռքը մեր հայացքից ծածկված է երկու փարթամ ծառերի միջև ձգված վարագույրով: Այդ ծառերի տակին երևում էր մի ասփակ ժայռ, որը պարզապես բնական բնմահարթակ էր: Դրաներքևում էլ կանգնեցի իմ հնդիկ բարեկամների հետ:

Քլրի ստորոտում բացվում էր այնպիսի մի վեհաշուք տեսարան, որպիսին ես դեռ չէի տեսել: Մարդն իրենով լրացնում էր բնության գեղեցկութիւնը: Բլրալանջերը գնալով աննկատելիորեն ձուլվում էին դաշաի հետ, որտեղ երեք գետ էր իրար խառնվում: Մի կողմից տարածվում էին գետերի գեղատեսիլ ոլորանները, մյուս կողմից հանդարտ օվկիանոսն էր հանգչում գիշերային լուսնի մեջ: Այս սքանչելի տեսարանը լրացրեք բլրի լանջերին, դաշտում և ոլորապտույտ գետերի ափերին տեղավորված տասնյակ հազարավոր սպիտակազգեստ մարդկանցով: Այդ ուխտավորներին լուսավորեք անհամար բազմութիւնների վրա իրենց ցուլք սփռող ջահերի խելահեղ բոցով, արեւելքում պատկերացրեք լիալուսինը, որն իր մեղմ շողերով ողողում է այդ հիասքանչ պատկերը, և դուք հեռավոր պատկերացում կկազմեք բլրի գագաթից իմ առջև բացվող տեսարանի մասին:

Լարային գործիքների ու սրնգի թախծոտ երաշտութիւնն իմ ուշադրութիւնը բնեռնց վարագույրով ծածկված կուռքի վրա:

Ես շրջվեցի և ժայռահարթակի վրա տեսա երեք հոգու՝ Հանձին դրանցից մեկի եւ ճանաչեցի այն մարդուն, որի հետ խոսել էի Անգլիայում, երբ հնդիկները հայտնվել էին լեզի Վերինդերի տան սանդղավանդում: Մյուս երկուսը, որ այն ժամանակ նրա ընկերներն էին, անկասկած, նրա ընկերներն էին նաև այստեղ:

Հնդիկներից մեկը, որի մոտ ես կազնած էի, նկատեց իմ գարմանքը: Նա շշուկով ինձ բացատրեց երեք հնդիկների՝ ժայռի վրա հայտնվելը:

Դրանք բրահմաններ են եղել, ասում էր նա, որոնք, հանուն աստծուն ծառայելու, զանց են առել կաստայի օրենքները: Աստված հրամայել է, որ նրանք մաքրվեն ուխտագնացութեամբ: Այս գիշեր այս երեք հոգին պետք է բաժանվեն: Նրանք երեք տարբեր ուղղութիւններով, որպէս ուխտավորներ, կգնան Հնդկաստանի սրբազան վայրերը: Նրանք այլևս երբեք չպետք է իրար երես տեսնեն: Նրանք այլևս երբեք չպետք է դադարեն թափառելուց՝ բաժանման օրից սկսած մինչև մահվան օրը:

Մինչ նա այս բոլորն ասում էր ինձ, երաշտութիւնը

դադարեց: Երեք հոգին փովեցին ժայռն վրա, կտորը ծածկող վարագույրի առջև: Նրանք վեր կացան, նրանք իրար նայեցին, նրանք զրկախառնվեցին: Հետո նրանք առանձին-առանձին իջան բազմության մեջ: Մարդիկ մեռելային լուծյամբ ճանապարհ էին տալիս նրանց: Ես տեսա, թե ինչպես բազմությունը հենց նույն պահին ճանապարհ բացեց երեք տարբեր ուղղություններով: Սպիտակագգեստ մարդկանց հսկայական զանգվածը դանդաղորեն նորից իրար եկավ, փակվեց: Թափառումների զատապարտվածների հետքը կորավ: Մենք այլևս նրանց չտեսանք:

Վարագույրի ետևից լավեց բարձրականչ ու զվարթ նոր երաժշտություն: Բազմության միջով դող անցավ:

Մտոերի միջև ձգված վարագույրները ետ քաշվեց, և կտորք բաց էր:

Գահաբարձունքում, իր մշտական այժեղչերուի վրա նստած, աշխարհի շորս կողմերը պարզած շորս ձեռքերով, մեր վերևում սավառնեց Լուսնի աստվածը, երկնային միստիկական լույսի մեջ մոայլ ու սարսափելի: Իսկ աստվածության ճակատին փայլում էր դեղին ալմաստը, որի շողարձակումն առաջին անգամ տեսել էի Անգլիայում, կնոջական զգեստի վրա:

Այու Ութ հարյուր տարի անց Լուսնաբարը վերստին փայլատակում է սրբազան քաղաքի պարիսպների ներսում, որտեղ սկսվել էր նրա պատմությունը: Թե ինչպես էր այն վերադարձել իր վայրենի հայրենիքը, թե ինչ սխրանքների կամ հանցագործությունների շնորհիվ էին հնդիկները նորից տիրացել իրենց սրբազան թանկարժեք զարդին, ավելի շուտ հայտնի է ձեզ, քան ինձ: Դուք գրանից զրկվել եք Անգլիայում, և, եթե ես զոնե ինչ-որ շափով գիտեմ հնդիկ ժողովրդի բնավորությունը, ապա դուք դրանից զրկվել եք ընդմիշտ:

Այսպես անցնում են տարիներն իրար ետևից. միևնույն իրադարձությունները պտտվում են ժամանակի շրջանակներում: Ինչպիսի՞ն է կլինեն Լուսնաբարի հետագա արկածները՞ Ո՞վ կարող է ասել:

Ուիլյամ-Ուիլիի Քուլինզը ծնվել է 1824 թվականի հունվարի 8-ին, Լոնդոնում, հայտնի բնակարիչ Ուիլյամ Քուլինզի ընտանիքում: Տասներկու տարեկանում ընտանիքի հետ երեք տարով մեկնել է Իտալիա: Հետագայում նրա գրքերը կարտացոլեն այդ առաջին իտալական վառ տպավորությունները: Անգլիա վերադառնալուց և միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, հոր կամքին զիջելով, Քուլինզը, անգլիացի բազում երիտասարդների նման, սկսում է «փող շինելով» (to make money) զբաղվել թեյի խոշոր ֆիրմայում: Բայց առևտուրը նրան չի գրավում: Մանկության հիշողություններով Իտալիային սիրահարված, Բոլիվեր Լիտտոնի ընթերցանությամբ ոգևորված, նա գրում է իր առաջին պատմվածքը և այն ցույց տալիս հորը: Նկարիչը, որդու տաղանդն զգալով, նրան հնարավորություն է տալիս կրթությունն ավարտելու Լինկոլն-Իննում<sup>1</sup>, որտեղից Ուիլիի Քուլինզը 1851-ին դուրս է գալիս փաստաբանի կոչումով:

Իրավաբանի մասնագիտությունը ոչ միայն Ուիլիի Քուլինզին, այլև շատ ու շատ ուրիշ անգլիացի գրողների է հսկայական նյութ տվել վեպերի համար: Լինկոլն-Իննում Քուլինզն առաջին անգամ ընդհարվեց անգլիական օրենսդրության առանձնահատկությունների, նրա տարօրինակությունների հետ, մայրաքաղաքի իրավունքի հնացած ձևերի հետ: Նրա օրոք դեռևս լիովին ուժի մեջ էր ու գործում էր այսպես կոչված «շտալանդական ամուսնությունն» իր բոլոր հետևանքներով: Եթե պսակադրությունը կատարվում էր Շտալանդիայում, ապա ամուսնությունն անվավեր էր Անգլիայում. եթե սիրահարվածները մեկնում էին Շտալանդիա, իջևանում նույն հյուրանոցում և գիշերն անցկացնում էին նույն հարկի տակ, ապա նրանք համարվում էին մարդ ու կին: Իր ստեղծագործության համար ինչքան թեմաներ է քաղել Քուլինզը տեղական իրավունքի այս այլանդակ դրսևորումներից: Այստեղ

<sup>1</sup> Իրավաբանների լոնդոնյան շորս հնագույն կորպորացիաներից մեկը, օրոք իրենց անդամներին տեսական ու գործնական պատրաստություն էին տալիս դատական գործեր վարելու համար:

կան և՛ «Երկկնություն», և՛ բռնի կապ շտիրած ու շտիրող մարշալու հետ, և՛ անունից զրկված երեխաների դժբախտ ճակատագրեր... Այս բախումներից յուրաքանչյուրը Քոլինզը մշակել է կատարելապես ու հասցրել դրամատիկական ծայրահեղ սրության:

Հինկոլն-Իննը ավարտելու տարին նա հանդիպել է Չարլզ Դիքենսին, որը նրանից մեծ էր տասներկու՝ տարով: Այդ ծանոթությունն ամրապնդվում է և 1853-ին վերածվում բարեկամության, որը գնալով ավելի ու ավելի սերտ է դառնում: Նախ Դիքենսն ու Քոլինզը միասին ուղևորություն են կատարում Բուլոն, Շվեյցարիա և Իտալիա: Այնուհետև, 1855 և 1856 թվականներին, երկուսով ապրում են Փարիզում. 1857 թվականին Անգլիայի հյուսիսում համատեղ կարճատև ուղևորություն կատարելուց հետո, նրանք միասին գրում են. «Երկու պարապ ենթավարպետների ալարկոտ ճանապարհորդությունը» գիրքը: Պահպանվել են Քոլինզին ուղղված Դիքենսի ջերմ ու սրտագին նամակները, որոնք ցույց են տալիս ոչ միայն նրանց փոխադարձ կապվածությունը, այլև ստեղծագործական համագործակցությունը:

Հետագայում նրանց սրտագին կապը դարձավ նաև ազգակցական: Դիքենսի կրտսեր դուստրը ամուսնացավ Քոլինզի եղբոր հետ:

Դիքենսի հետ հանդիպումը որոշեց Քոլինզի կյանքի ուղին որպես վիպասանի: Ճիշտ է, դեռևս դրանից առաջ, 1848 թվականին, նա հրատարակել էր ոչ մեծ մի աշխատություն՝ իր նոր վախճանված հոր երկու հատորանոց կենսագրությունը: Դրան 1849 թվականին հաջորդեց «Անտոնիան, կամ Հոմի անկումը» պատմավեպը: Բայց թե Դիքենսը նրան օգնեց գտնելու իրեն գրականության մեջ և դառնալու Անգլիայի ինքնատիպ գրողներից մեկը: Դիքենսը հրատարակում է հանդեսներ, որոնց մշտապես մասնակցում է Քոլինզը: Քոլինզի լավագույն վեպերից մի քանիսը, այդ թվում՝ «Սպիրտակազգեստ կինը», տպագրվել է Դիքենսի «Կլոր տարին» և մյուս հանդեսներում: Քոլինզը իր շատ գործեր գրել է Դիքենսի հետ

---

<sup>1</sup> Չարլզ Դիքենսը ծնվել է 1812 թվականին և մեռել 1870 թվականին, Ուիլկի Քոլինզից տասներե տարի շուտ:



համատեղ, սկսած «Փարոս» պիեսից, որը մեծ հաջողություն է ունեցել: Պիեսի նախերգանքը պատկանում է Դիքենսի գրքին: Այդ է ասում Դիքենսի 1862 թվականի հոկտեմբերի 14-ի նամակը: Իմանալով, որ իր ընկերը վատ է զգում (Քոլինզը պատանի հասակից էլ շատ առողջ չի եղել և հաճախ է հիվանդացել), Դիքենսը սրտառուչ հոգատարություն արաջարկում է գալ և նրան օգնել աշխատանքում:

Քոլինզը բազմիցս մասնակցել է Դիքենսի թատերական միջոցառումներին, երիտանների համար պիես է բեմադրել նրատանը: Փարիզում գրել է «Սառած խորք» («Froren Deep») դրաման, որի բեմադրությունը մասնակցում է նաև Դիքենսը: Պահպանվել է առաջին ներկայացման երկար ծրագիրը, որտեղ մասնակիցների թվում նշված է երկու միստր Չարլզ Դիքենս, հայր և որդի: Դիքենսի իսկ խոստովանությունը, «Երկու քաղաքների մասին վիպակը» գրելու միտքը ինքը հղացել է այդ պիեսում խաղալու ժամանակ: Այսպիսով, Քոլինզի համար բնորոշ դրամատիկական լարված բախումը իր արտացոլումն է գտել նաև Դիքենսի ստեղծագործության մեջ:

1860 թվականից սկսած իրար ետևից լույս են տեսնում Ուիլկի Քոլինզի վեպերը: Դրանք հաջողություն են վայելում ո՛չ միայն լայն հասարակության շրջանում, դրանք իրենց երկրպագուներն են գտնում արվեստի վարպետների շրջանում, իրենց լուրջ ու մշտական ընթերցողները՝ գիտնականների մեջ:

«Մսխտակազդեստ կնոջը» (1860)՝ «ապօրինածինի» այդ ահավոր պատմությանը, հաջորդեցին «Սոսանց անունի»-ն (1862)՝ «շոտլանդական ամուսնության» հետևանքների մասին. «Արմեդեզը (1866)՝ մարդու կյանքի վրա «ժառանգականության» և «ճակատագրական կնոջ» ազդեցության մասին. «Լուսնաքար»-ը (1866). «Մարդ ու կին»-ը (1870)՝ «շոտլանդական ամուսնության» թեմայի երկրորդ սարբերակը. «Խեղճ միսս Ֆինչը» (1872)՝ անհուսալի համարվող կույրի հաջող վերահաստության մասին. «Նոր Մագթաղինեն» (1873)՝ «անառակ կնոջ» արարքի ու զղջման պատմություն, որը շատ ուժեղ ու համարձակ մարտահրավեր է անգլիական երեսպաշտությանը. «Օրենքն ու կինը» (1875)՝ վիպակ անարդարացիորեն մեղադրված ամուսնու պաշտպանությամբ հանդես

Նկող կնոջ մասին, և մի շարք այլ զեպեր, որոնց որակը տա-  
րիների հետ նկատելիորեն իջնում է, իսկ ձևը գնալով ավելի  
սխեմատիկ ու անկյանք է դառնում: Գրքենսի մահից հետո  
Ուիլկի Քոլինզը ավելի ու ավելի է մեկուսանում հասարա-  
կությունից, ամիտփվում ինքն իր մեջ: Ուիլկի Քոլինզը մե-  
ռավ 1889 թվականի սեպտեմբերի 23-ին, լոնդոնում:

Չնայած Քոլինզի զեպերի մասսայականությանը՝ նրա մա-  
սին շատ քիչ է գրվել: Բառարաններում մեկ-երկու տասնյակ  
փոքրիկ հոդվածներից բացի, ընթերցողը նրա ստեղծագործու-  
թյան մասին միայն մի բանի էջ կարող է գտնել Սուին-  
բենի գրքում: Ուիլկի Քոլինզին կարելի է անվանել դետեկ-  
տիվ վեպի հիմնադիրը Անգլիայում:

Քոլինզի «Լուսնաքար» վեպը, որ առաջարկում ենք մեր  
ընթերցողին, մեզ համար հետաքրքիր է ոչ միայն իր գրավիչ  
սյուժեով, այլև անգլիական հասարակական կյանքի բացա-  
սական կողմերի ուսուցողական պատկերումով, հյուսիսի հու-  
մորով, անգլիական երեսպաշտության սուր ծաղրով, բուր-  
ժուական կեղծ բարեպաշտական «բարեգործության» սրամիտ  
քննադատությամբ:

«Լուսնաքար»-ը նախահեղափոխական ուսուցողական  
ժանոթ է եղել 80-ական և 90-ական թվականների երկու թարգ-  
մանությամբ: Այս հին թարգմանությունները ճշգրիտ չեն, գի-  
տակցաբար արված աղավաղումներ ու ղգալի բացթողում-  
ներ ունեն: Մեր թարգմանության համար որպես հիմք վերց-  
ված է երկուսից վերջինը, որ լույս է տեսել անցյալ դարի  
90-ական թվականներին որպես «Северное сияние» հան-  
դեսի հավելված: Ես այն համեմատել եմ «Լուսնաքարի»՝  
Թաուլինիտցի անգլիական հրատարակության հետ (Wilkie  
Collins «The Moonstone» in two volumes, Bernard Tauch-  
nitz, 1868), որը 1866 թվականի լոնդոնյան առաջին հրա-  
տարակության ճշգրիտ պատճենն է: Այսպիսով, արդեն  
ընթերցողին է ներկայացվում նոր թարգմանություն. նախկի-  
նից գիտակցաբար պահպանել եմ միայն քերականական որոշ  
հնաոճ ձևեր, որոնք համապատասխանում են անցյալ դարի  
60-ական թվականների անգլերենին:

ՄԱՐԻՆՏԱ, ՇԱՀԻՆՑԱՆ

<sup>1</sup> Swinburne. Studies in Prose and Poetry.

# Յ ա ն կ

## ՆԱՆԵՐԳ

Սերինգապատամի գրոհը (1799)

Նամակ տոճմական արխիվից . . . . . 5

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մասն առաջին

Ալմաստի կորչելը (1848)

Դեպքեր, որ պատմել է Գարրիել Բետտերեչը՝ լեզի Ջուզիա Վերինդերի  
ծառայակետը . . . . . 14

## Մասն երկրորդ

Ճշմարտության քաջահայտումը

Առաջին պատմությունը, որ գրել է միսս Կլակը, հանգուցյալ սըր  
Ջոն Վերինդերի զարմուհին . . . . . 250

Երկրորդ պատմությունը, որ գրել է Մաթ Բրեֆը, Գրեյս-Ինն պուրա-  
կում ապրող փաստաբանը . . . . . 338

Երրորդ պատմությունը, որ գրել է Ֆրենկլին Բլեկը . . . . . 368

Չորրորդ պատմությունը, որ վերցվել է էզրա Ջենինգսի օրագրից . . . . . 492

Հինգերորդ պատմությունը, որ գրել է Ֆրենկլին Բլեկը . . . . . 536

Վեցերորդ պատմությունը, որ գրել է խուզարկու Կաֆը . . . . . 560

Յոթերորդ պատմությունը, միտար Կանդիից ոտացված նամակի ձևով . . . . . 574

Ութերորդ պատմությունը, որ ավելացրել է Գարրիել Բետտերեչը . . . . . 576

## Վերջաբան

Ինչպես գտնվեց արմասը . . . . . 579

Համառոտակի Ուիլկի Քոլինզի մասին. Մ. Շահինյան . . . . . 587

ՌԻՒԿԻ ՌԻԿՏԱՄ ՔՈՍԵՉ

Լուսնաքար

Գլխավոր քարձր տարիի երեխաների նամար

Уилки Уильям Коллинз

ЛУННЫЙ КАМЕНЬ

Для старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Советакан քրոք»

Ереван, 1985

Խմբագիր՝ Հ. Հ. Գանիբյան  
Նկարիչ՝ Ա. Կ. Կարազյան  
Գեղ. Խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան  
Տեխն. Խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան  
Վերատպող սրբագրիչներ՝ Թ. Պ. Պողոսյան,  
Ե. Ա. Ազատյան, Մ. Գ. Սանփանյան

ИБ 5237

Հանձնված է շարվածքի 10, 07, 1985 թ.: Ստորագրված է տպագրության  
26. 11. 85: Յորմատ 84X108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ տպագր. Ն 2: Տարատեսակ  
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 31,08 պայմ. տպ. մամ., 31.29  
պայմ. ներկ. թերթ 26,8 հրատ. մամ.: Տպարանակ 50.000:  
Պատվիր՝ 2311: Գինը՝ 1 ս. 10 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан քրոք», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործակալության կրճատի Ն 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. Ն 67:

Издательство «Советакан քրոք», Ереван—9, ул. Теряна, 91

Типография № 1 Госкомитета по делам издательства, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65